Միսիոներական Ծառայության Ուղեցույց

# «Քարոզիր Իմ Ավետարանը»

(ՎևՈւ 50.14)



«Ապաշխարե՛ք, դու՛ք, աշխարհի բոլոր ծայրեր, և եկեք ինձ մոտ ու մկրտվեք իմ անունով, որպեսզի դուք կարողանաք սրբագործվել՝ ընդունելով Սուրբ Հոգին» (3 Նեփի 27.20):

Անուն՝

Միսիա և ծառայության ամսաթվերը՝

Ծառայության տարածքներ՝

Զուգընկերներ՝

Մկրտված և հաստատված մարդկանց անուններն ու հասցեները՝

# «Քարոզիր Իմ Ավետարանը» (ՎևՈւ 50.14)

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Կազմը. Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին © 1988 Գրեգ Ք. Օլսենի
Տրամադրվել է Mill Pond Press-ի և Dr. Gerry Hooper-ի կողմից: Չբազմացնել:

© 2004 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են:

Printed in the United States of America.
Անգլերենի հաստատումը՝ 11/04
Թարգմանության հաստատումը՝ 11/04
*Preach My Gospel*-ի թարգմանությունը
Armenian
36617 201

# «Քարոզիր Իմ Ավետարանը» (ՎևՈւ 50.14)

Առաջին Նախագահության Ուղերձ . . . v

Ներածություն. Ինչպե՞ս կարող եմ լավագույնս օգտագործել *«Քարոզիր Իմ Ավետարանը»* ձեռնարկը . . . vii

1 Ո՞րն է որպես միսիոներ իմ նպատակը . . . 1

2 Ինչպե՞ս եմ կարող եմ արդյունավետ սովորել և պատրաստվել ուսուցանելուն . . . 19

3 Սովորիր և սովորեցրու . . . 31

- Դաս 1. Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման ուղերձը . . . 33
- Դաս 2. Փրկության ծրագիրը . . . 51
- Դաս 3: Հիսուս Քրիստոսի ավետարանը . . . 66
- Դաս 4: Պատվիրանները . . . 79
- Դաս 5: Օրենքներ և Արարողություններ . . . 91

4 Ինչպե՞ս ես կարող եմ ճանաչել և հասկանալ Հոգին . . . 99

5 Ո՞րն է Մորմոնի Գրքի դերը . . . 115

6 Ինչպե՞ս զարգացնեմ Քրիստոսանման հատկանիշներ . . . 129

7 Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ սովորել իմ միսիայի լեզուն . . . 143

8 Ինչպե՞ս ես կարող եմ իմաստությամբ օգտագործել ժամանակը . . . 153

9 Ինչպե՞ս ես կարող եմ գտնել մարդկանց, որոնց կարող եմ սովորեցնել . . . 171

10 Ինչպե՞ս կարող եմ զարգացնել ուսուցման իմ հմտությունները . . . 197

11 Ինչպե՞ս եմ ես օգնում մարդկանց պահել իրենց պարտավորությունները . . . 219

12 Ինչպե՞ս ես կարող եմ պատրաստել մարդկանց մկրտությանը և հաստատմանը . . . 229

13 Ինչպե՞ս ես պետք է աշխատեմ ցցի և ծխի ղեկավարների հետ . . . 241

Ցուցիչ . . . 253

# Առաջին Նախագահության Ուղերձ

*Սիրելի միսիոներ ընկերներ.*

*Մենք շնորհավորում ենք ձեզ միսիոներ լինելու հրաշալի հնարավորության կապակցությամբ: Չկա ավելի գերող աշխատանք, քան սա, չկա մեկ այլ աշխատանք, որն ավելի մեծ բավարարվածություն է պարգևում:*

«Քարոզիր Իմ Ավետարանը» *նպատակ ունի օգնել ձեզ ավելի լավ պատրաստվել, դառնալ հոգեպես ավելի հասուն միսիոներ և ավելի համոզիչ ձևով ուսուցանել: Մենք խնդրում ենք, որ ամեն օր օգտագործեք այն անհատապես և զուգընկերոջ հետ պատրաստվելիս, ձեր շրջանի ժողովներում և տարածքային համաժողովներում: Ուսումնասիրեք վկայակոչված սուրբ գրությունները, սովորեք վարդապետություններն ու սկզբունքները:*

*Մենք կոչ ենք անում ձեզ նոր, ավելի մեծ պարտավորություններ ստանձնել, որպեսզի օգնեք մեր Երկնային Հորը Իր փառահեղ գործում: Յուրաքանչյուր միսիոներ կարևոր դեր ունի՝ օգնելու «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»* (Մովսես 1.39)*:*

*Տերը կվարձատրի և առատորեն կօրհնի ձեզ, եթե խոնարհաբար և աղոթքով ծառայեք Նրան: Տիրոջ զավակների մեջ աշխատելիս ձեզ ավելի մեծ երջանկություն է սպասում, քան երբևէ ունեցել եք:*

*Առաջին Նախագահություն*

Նշումներ

# Ներածություն. Ինչպե՞ս կարող եմ լավագույնս օգտագործել *«Քարոզիր Իմ Ավետարանը»* ձեռնարկը:

## *«Քարոզիր Իմ Ավետարանը»*




Օգտագործեք «*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկը, որպեսզի բավարարեք որպես միսիոներ ձեր կարիքները: Դուք կարող եք մի ամբողջ ուսումնական դասընթաց նվիրել մի քանի պարբերության կամ մեկ լրիվ գլխի: Դուք կարող եք գլուխներն ուսումնասիրել հերթականությամբ կամ այլ հերթականություն ընտրել, որն ավելի լավ կբավարարի ձեր պահանջները: Այս ճկունությունը թույլ է տալիս ձեզ ուսումնասիրել այն, ինչի կարիքը ունեք,երբ դրա կարիքը ունեք և ինչպես որ ուղղորդում է ձեր միսիայի նախագահը:

«*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկի բոլոր գլուխները կօգնեն ձեզ իրականացնել ձեր նպատակը որպես միսիոներ: Ինչևէ, երբ սկսեք ուսումնասիրել գլուխ 3-ը, դուք տարբերություն կգտնեք մոտեցման մեջ: Գլուխների մեծ մասը հասցեագրված է ձեզ: Իսկ գլուխ 3-ը հասցեագրված է ավելի ընդհանուր լսարանին: Գլուխ 3-ում դուք սովորում եք վարդապետություններ, որպեսզի (ա) ամրապնդեք ձեր ավետարանային գիտելիքները և վկայությունը, (բ) ուսուցանեք ուրիշներին և նրանց պատրաստեք ստանձնել և պահել պարտականություններն ու ուխտերը:

Մյուս գլուխների վարդապետությունները նաև կնպաստեն ուսուցանել ունկնդիրներին և նոր անդամներին: Օրինակ, գլուխ 4-ը՝ «Ինչպե՞ս ես կարող եմ ճանաչել և հասկանալ Հոգին», կօգնի ձեզ որոշ ունկնդիրների սովորեցնել, թե ինչպես Սուրբ Հոգու զորությամբ ձեռք բերեն վկայություն: Գլուխ 5-ը՝ «Ո՞րն է Մորմոնի Գրքի դերը», կօգնի ձեզ փարատել ունկնդրի մտահոգությունները Մորմոնի Գիրքը կարդալու հետ կապված: Գլուխ 2-ում՝ «Ինչպե՞ս ես կարող եմ արդյունավետ սովորել և պատրաստվել ուսուցանելուն», տրված գաղափարները նորադարձներին կօգնեն առաջադիմել Մորմոնի Գրքի ուսումնասիրության մեջ:

«*Քարոզիր Իմ Ավետարանը*» կենտրոնանում է միսիոներական աշխատանքի հիմնախնդիրների վրա: Այն չի պատասխանում բոլոր հարցերին, ոչ էլ լուծում է տալիս հանդիպող բոլոր իրավիճակների համար: Դուք ավելի արդյունավետ կլինեք, եթե հետևեք Հոգուն, քննեք սուրբ գրությունները, պահեք պատվիրանները և կիրառեք այն, ինչ սովորում եք:

Ձեր միսիայի ընթացքում ուսումնասիրեք այս ձեռնարկի գլուխները: Կիրառեք այն, ինչ սովորում եք: Գնահատեք ձեր աշխատանքը: Միսիոներները, որոնք ձգտում են ամեն օր պատրաստվել ու մշտապես աճել, կստանան Սուրբ Հոգու առաջնորդությունը և կօրհնվեն իրենց կյանքում:

## Միսիոներական դասեր

Դուք ազատ եք դասերն ուսուցանելու այնպես, որ լավագույն ձևով օգնեք մարդկանց լիովին պատրաստվել իրենց մկրտությանն ու հաստատմանը: Ձեր նպատակն է ոչ միայն ուսուցանել նյութը, այլև օգնել մարդկանց գալ դեպի Քրիստոսը՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի,

Նշումներ

ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևը ստանալու և մինչև վերջ համբերելու միջոցով: Դասի տևողությունը հազվադեպ պետք է անցնի 45 րոպեից: Դուք հնարավոր է տեսնեք, որ այդ ժամանակը կարելի է տրամադրել ավելի կարճատև ուսուցողական այցերին: Այդ դեպքում, դուք կարիք կունենաք հաճախակի, ավելի կարճ ուսուցողական այցեր կատարել՝ նյութը մատուցելով փոքր մասերով:

Դուք կարող եք ուսուցանել դասերը տարբեր ձևերով: Հոգու առաջնորդությամբ և ունկնդրի կարիքներից ելնելով, լավագույն ձևով պետք է որոշել, թե որ դասը պետք է ուսուցանեք, երբ պետք է ուսուցանեք կամ որքան ժամանակ պետք է տրամադրեք: Անգիր մի արեք ամբողջ դասը:

## Անհատական ուսումնասիրություն, զուգընկերոջ հետ ուսումնասիրություն, շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

Ձեր միսիայի ընթացքում արդյունավետ սովորելը կօգնի որպես միսիոներ իրագործել ձեր նպատակը և ամրապնդել Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին ձեր վկայությունը: Ձեր ամենակարևոր ուսումնական չորս հնարավորություններից են՝ անհատական ուսումնասիրությունը, զուգընկերոջ հետ ուսումնասիրությունը, շրջանի ժողովները և տարածքային համաժողովները: Ձեր օրվա ռեժիմում պետք է ժամանակ տրամադրվի ամեն օր անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրությանը:

Միսիոների օրվա ռեժիմը*

| | |
|---|---|
| 6:30 | Արթնանալ, աղոթել, ֆիզիկական վարժություններ կատարել (30 րոպե) և պատրաստվել ամբողջ օրվա համար: |
| 7:30 | Նախաճաշ |
| 8:00 | Անհատական ուսումնասիրություն Մորմոնի Գրքից, այլ սուրբ գրքերից, միսիոներական դասերի վարդապետություններից և «*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկի այլ գլուխներից: |
| 9:00 | Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն. կիսվեք այն ամենով, ինչ սովորել եք ձեր անհատական ուսումնասիրության ժամանակ, պատրաստվեք ուսուցանել, վարժվեք ուսուցանելուն, ուսումնասիրեք «*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկի գլուխները, վերանայեք օրվա ծրագրերը: |
| 10:00 | Սկսեք աշխատել: Լեզուն սովորող միսիոներները լրացուցիչ 30–60 րոպե են տրամադրում տվյալ լեզուն ուսումնասիրելուն, որի մեջ մտնում է նաև օրվա ընթացքում օգտագործելու նպատակով լեզուն սովորելու վարժություններ պլանավորելը:<br><br>Միսիոներները կարող են մեկ ժամ տրամադրել ճաշին և լրացուցիչ ուսումնասիրությանը, և օրվա ընթացքում մեկ ժամ էլ տրամադրել ընթրիքին, որը լավագույնս կհամապատասխանի իրենց քարոզին: Ընդհանրապես ընթրիքը պետք է ավարտվի երեկոյան 6:00-ից ոչ ուշ: |
| 21:00 | Վերադարձեք ձեր բնակարան (եթե դաս եք ուսուցանում, ապա վերադարձեք մինչև 21:30) և պլանավորեք հաջորդ օրվա գործերը (30 րոպե): Գրեք օրագրում, պատրաստվեք անկողին մտնել, աղոթեք: |
| 22:30 | Անկողին մտեք: |

** Յոթանասունականների Նախագահության կամ Տարածքային Նախագահության հետ խորհրդակցելով ձեր միսիայի նախագահը կարող է փոփոխություններ կատարել այս ռեժիմում՝ հարմարեցնելով այն տեղական պայմաններին:*

Նշումներ

Անհատական ուսումնասիրության ժամանակ սովորածը կօգնի ձեզ զուգընկերոջ հետ ուսումնասիրության, շրջանի ժողովի և տարածքային համաժողովների ժամանակ, որտեղ դուք կարող եք «միմյանց ուսուցանել արքայության վարդապետությունը» (տես ՎևՈւ 88.77): Այն, ինչ սովորում եք ձեր ուսումնասիրությունների և շրջանի ժողովների ժամանակ, կօգնի ձեզ հոգևոր ուժով ուսուցանել:




### Անհատական ուսումնասիրություն

Անհատական ուսումնասիրության նպատակն է ամրապնդել վերականգնված ավետարանի մասին ձեր գիտելիքն ու վկայությունը, և օգնել ձեզ պատրաստվել բավարարելու նրանց կարիքները, ում ուսուցանում եք: Ձեր անհատական ուսումնասիրության ընթացքում կենտրոնացեք կանոնիկ գրքերի և հաստատված միսիոներական գրականության վրա.

- *Jesus the Christ (Հիսուս Քրիստոսը)*
- *Մեր Ժառանգությունը*
- *Our Search for Happiness (Երջանկության մեր որոնումները)*
- *Հավատքին Հավատարիմ*

Դուք կարող եք անհատական ուսումնասիրությունն արդյունավետ դարձնել, եթե.

- Կարդաք Մորմոնի Գիրքը և այլ սուրբ գրքերը:
- Ուսումնասիրեք միսիոներական դասերի վարդապետությունները:
- Ուսումնասիրեք «*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկից այլ գլուխներ:

### Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Զուգընկերոջ հետ ուսումնասիրության նպատակն է՝ (1) միասնություն հաստատել ձեր զուգընկերոջ հետ, որպեսզի Հոգով ուսուցանեք, և (2) ուշադրություն դարձնել նրանց առաջադիմության վրա, ում ուսուցանում եք: Դուք կարող եք զուգընկերոջ հետ ուսումնասիրությունն արդյունավետ դարձնել, եթե՝

- Միմյանց հետ կիսվեք անհատական ուսումնասիրության ժամանակ ունեցած ձեր ներըմբռնումներով:
- Պատրաստվեք հատուկ ուսուցանման պայմանավորվածությունների, անդամներին այցելելու, մարդկանց գտնելու և այլ գործերի համար: Ուսումնասիրեք այնպիսի նյութեր, որոնք օգնում են ձեզ ավելի արդյունավետ ուսուցանել, գտնել և աշխատել: Քննեք մարդկանց, որոնց հետ դուք աշխատում եք: Ծրագրեր կազմեք կիրառելու համար այն, ինչ սովորում եք:
- Օրվա ընթացքում շարունակեք քննարկել զուգընկերոջ հետ ուսումնասիրության սկզբունքները, նպատակները, հմտությունները և ծրագրերը:

### Շրջանի ժողովներ

Շրջանի ժողովների նպատակն է «ուսուցանել միմյանց արքայության վարդապետությունը» (տես ՎևՈւ 88.77):

Նշումներ

- Շրջանի ժողովները տեղի են ունենում ամեն շաբաթ և տևում են 60-ից 90 րոպե:
- Շրջանի ղեկավարը ծրագրում ու վարում է շրջանի ժողովը և կարող է հրավիրել այլ միսիոներների ևս օգնել ուսուցանելիս:
- Շրջանի ժողովներն ընդգրկում են.
  - Անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերած ներըմբռնումներով կիսվելը:
  - Դասեր պարապելը տարբեր իրավիճակների համար:
  - «*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկում ներկայացված սկզբունքներն ու հմտությունները բացատրելը, ներկայացնելը և փորձելը:
  - Ունկնդիրների առաջընթացն ու կարիքները քննարկելը:
  - Շրջանի խնդիրները քննարկելը և դրանց համար լուծումներ գտնելը:
  - Միսիոներական աշխատանքի փորձով և վկայությամբ կիսվելը:
- Շրջանի ղեկավարները կարող են օգտագործել շրջանի ժողովը շրջանում միսիոներական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություններ ստանալու համար: Նրանք չպետք է նպատակներ դնեն մյուս միսիոներների համար, հանձնարարություններ տան նրանց, կամ էլ խնդրեն նրանց ներկայացնել իրենց նպատակները:

**Տարածքային համաժողովներ**

Տարածքային համաժողովները տեղի են ունենում միսիայի նախագահի ղեկավարության ներքո:

## «*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկի առանձնահատկությունները

«*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկի յուրաքանչյուր գլուխ տարբեր առանձնահատկություններ ունի: Այդ առանձնահատկությունները ոչ թե պետք է ստիպեն ձեզ սովորել որոշակի ձևով, այլ պետք է օգնեն ձեզ շատ ավելին սովորել ձեր ուսումնասիրության ժամանակ: Օգտագործեք այդ առանձնահատկությունները ճկուն ձևով՝ համապատասխանեցնելով ձեր կարիքներին:

**Աշխատանքային տետր**

«*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկը հաճախակի է հիշեցնում, որ օգտագործեք աշխատանքային տետր, որը կօգնի ձեզ հասկանալ, պարզաբանել և հիշել այն, ինչ սովորում եք: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը սովորեցրել է. «Խնամքով և մանրամասնորեն գրառված գիտելիքն անհրաժեշտության պահին ձեռքի տակ կլինի: Սիրտը շարժող հոգևոր տեղեկությունը պետք է սրբազան տեղում պահել, ինչը ցույց է տալիս Տիրոջը, թե ինչպես եք գնահատում, կամ փայփայում այն: Այդպիսով, մեծ է հավանականությունը, որ դուք կշարունակեք ստանալ լույս» (“Acquiring Spiritual Knowledge,” *Ensign,* Nov. 1993, 86): Վերանայեք ձեր աշխատանքային տետրը հոգևոր փորձառությունները հիշելու, նոր հասկացողություն ստանալու և ձեր աճը տեսնելու համար:

Ձեր աշխատանքային տետրը կարող է հաստ կազմով տետր կամ նոթատետր լինել: Գրառեք և ձեր մտքերն ու տպավորությունները կազմակերպեք այնպես, որպեսզի դրանք համապատասխանեն ձեր սովորելու ընթացքին: Ձեզ համար գրառումներ կատարելու հարմար տարբերակ գտեք, որը կօգնի հետագայում հեշտությամբ գտնել անհրաժեշտ տեղեկությունը: Հաճախակի օգտագործեք ձեր տետրը ձեր սովորածը վերանայելու և կիրառելու համար: Գրառեք անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրության, շրջանի ժողովների, տարածքային ժողովների և միսիայի նախագահի հետ հարցազրույցի ժամանակ ունեցած ձեր մտքերն ու տպավորությունները:

Նշումներ

**Տնղնկություն պարունակող վանդակներ**

«*Քարոզիր Իմ ավետարանը*» ձեռնարկում տրված վանդակները կօգնեն ձեզ սովորելու ժամանակ: Որոշ վանդակներ ներկայացնում կամ ամփոփում են հիմնական կետերը: Մյուսներն օգնում են կենտրոնանալ ձեր ուսումնասիրության վրա, սովորել սուրբ գրություններից, կիրառել ձեր սովորածը, զարգացնել ձեր ունակությունները և բավարարել նրանց կարիքները, ում ուսուցանում եք: Այդ վանդակները հիմնականում պարզապես մեկնակետ են հանդիսանում: Աղոթքով կիրառեք վանդակներում տրված վարժությունները` մշակելով նոր ուսումնական վարժություններ և քննելով լրացուցիչ սուրբ գրություններ:




**«Մտածեք այս մասին»:** Հիմնականում գլուխները սկսվում են «Մտածեք այս մասին» խորագիրը կրող վանդակում տրված հարցերով: Այդ հարցերը վերաբերվում են տվյալ գլխի հիմնական կետերին և ուղեցույց հանդիսանում ձեր ուսումնասիրության համար: Օգտագործեք այս հարցերը կազմակերպելու, հասկանալու, խորհելու և կիրառելու համար այն, ինչ սովորում եք:




**«Հիշեք սա»:** Հիմնականում գլուխները ավարտվում են «Հիշեք սա» վանդակով, որտեղ ամփոփ ձևով ներկայացվում են տվյալ գլխի ամենակարևոր կետերը: Ավարտելով տվյալ գլխի ուսումնասիրությունը վերանայեք այդ խորհուրդները, որպեսզի հավաստիանաք, որ հասկացել եք հիմնական սկզբունքները: Գնահատեք, թե ինչպես եք կիրառում այդ կետերը, և ծրագրեր կազմեք կիրառելու այն, ինչ սովորել եք:




**«Սուրբ Գրությունների ուսումնասիրություն»:** Այս վանդակները ձեզ ցույց կտան այն վկայակոչումները, որոնք կօգնեն զարգացնել ձեր ըմբռնումն ու վկայությունը: Հիմնվելով այս վկայակոչումների վրա փնտրեք լրացուցիչ սուրբ գրություններ: Ինքներդ ձեզ լրացուցիչ հարցեր տվեք, որոնք կօգնեն ներըմբռնում ձեռք բերել և կիրառել այն, ինչ սովորել եք:




**«Վարժություն»:** Հիմնականում գլուխներում տրված են վարժություններ անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրության համար, որոնք կզարգացնեն ձեր սովորելու և սովորածը կիրառելու ունակությունները: Ձեր միսիայի ընթացքում կրկնեք այդ վարժությունները: Ամեն անգամ դուք նոր ներըմբռնում ձեռք կբերեք, քանի որ կփոփոխվեն ձեր և նրանց կարիքները, ում սովորեցնում եք:




**Կարմիր վանդակներ:** Այս վանդակները տարբեր ուսուցման և դարձի բերելու իրավիճակների համար կարևոր տեղեկություն և առաջարկություններ են պարունակում:

Նշումներ

**Պատմություններ**

«*Քարոզիր Իմ Ավետարանը*» ձեռնարկի բոլոր պատմությունները իրական են, թեև հիմնականում մարդկանց անունները փոխված են: Յուրաքանչյուր պատմություն միսիոներական աշխատանքի հետ կապված տարբեր սկզբունքներ է լուսաբանում: Կարդալով այդ պատմությունները գտեք, թե որ սկզբունքներն են լուսաբանվում:

**Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար**


Մտքեր ուսումնասիրության
և կիրառման համար

Անհատական ուսումնասիրություն

- Կարդացեք ծնողներին ուղարկված միսիոների հետևյալ նամակը. «Ավ
մեջ ես մի հիանալի կնոջ էի ուսուցանում: Մենք վերադառնում էինք շր
ժողովից և գտնելով միակ ազատ նստատեղը, ես տեղավորվեցի և սկս
կարդալ նամակներս: Իհարկե, առաջինը, որ պետք է կարդարցվեր, ձ
փոքրիկ Էվանի նկարներով: Ես նկատեցի, որ կողքս գտնվող աչքերը
նայում են նկարներին, և ես բարձրացրեցի աչքերս և հանդիպեցի մի ծ
աչքերի: Նրա երեսին մի փոքր ժպիտ հայտնվեց, ապա նայեց պատու
Այնուհետև նա փակեց աչքերը, կարծես պատրաստվում էր ննջել: Ես
աղոթեցի. «Երկնային Հայր, ես ուզում եմ խոսել նրա հետ: Խնդրում եմ
ինձ»: Մեկ րոպե անց նա բացեց աչքերը և ուղիղ նստեց, իսկ ես արագ
ասացի. «Չե՞ք կարծում, որ նա լավիկն է»: Ես նրան ցույց տվեցի փոք
Էվանի նկարները և սկսեցի խոսել ընտանիքների մասին: Ես նրան հա
իր երեխաների մասին և նրա աչքերը լցվեցին, երբ նա պատմում էր, թ

Յուրաքանչյուր գլուխ լրացուցիչ մտքեր է պարունակում անհատական ուսումնասիրության, զուգընկերոջ հետ ուսումնասիրության, շրջանի ժողովների և տարածքային համաժողովների համար: Սովորելու նպատակով տրված այս բովանդակալից միջոցը ներկայացնում է նյութը սովորելու արդյունավետ եղանակների օրինակներ: Եղեք ստեղծարար և ոգեշնչում փնտրեք այդ բաժինները ուսումնասիրելիս, կամ դրանք ուսուցանելիս ամեն անգամ հավելյալ վարժություններ ստեղծեք: Մի քանի անգամ կատարեք այդ վարժությունները ձեր միսիայի ընթացքում:

## Ճյուղերում և շրջաններում ծառայող միսիոներները

Ճյուղերում ու շրջաններում շատ միսիոներներ են ծառայում: Թեև այս ձեռնարկը նախատեսված է *ծխերի* ու *ցցերի* համար, նույն սկզբունքներն ու մոտեցումները կարող են կիրառել *ճյուղերն* ու *շրջանները*: Միսիայի նախագահը ձեզ հրահանգներ կտա բոլոր կանոնակարգումների վերաբերյալ, երբ աշխատեք ճյուղի և շրջանի ղեկավարների հետ:

## Կարող են օգտագործել ծխի միսիոներներն ու ղեկավարները

«*Քարոզիր Իմ Ավետարանը*» նախատեսված է Եկեղեցու լիաժամկետ միսիոներների համար: Ինչևէ, այստեղ ուսուցանված սկզբունքներն ու վարդապետությունները նաև կիրառելի են ծխերի միսիոներների և ղեկավարների համար, որոնք փնտրում են կառուցել Սիոնի արքայությունը: Այս ձեռնարկի կանոնավոր ուսումնասիրությունը նրանց հնարավորություն կտա կատարել իրենց պարտականությունները որպես անդամ միսիոներներ, ինչը նաև կխթանի համագործակցությունը լիաժամկետ միսիոներների հետ:



Դեն Ջոնսը, այս ժամանակաշրջանի մեծ միսիոներներից մեկը, ավետարանն է քարոզում Ուելսում:

# Ո՞րն է որպես միսիոներ իմ նպատակը

Նշումներ

## Ձեր նպատակը

Հրավիրել մարդկանց գալ դեպի Քրիստոսը, օգնելով նրանց ստանալ վերականգնված ավետարանը Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով:

## Մտածեք այս մասին

- Ո՞րն է որպես միսիոներ իմ նպատակը:
- Ի՞նչ է ավետարանը:
- Ինչո՞ւ ենք մենք քարոզում ավետարանը:
- Ինչո՞ւ ես պետք է ուսուցանեմ զորությամբ և իշխանությամբ:
- Ո՞րն է Վերականգնման ուղերձը: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր:
- Ո՞րն է ուրիշների դարձի բերելու իմ պատասխանատվությունը:
- Ինչպե՞ս ես կարող եմ իմանալ, թե արդյոք հաջողակ միսիոներ եմ:

## Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը ուսուցանելու ձեր պարտավորությունը

Դուք շրջապատված եք մարդկանցով: Դուք նրանց կողքով եք անցնում փողոցում, այցելում եք նրանց՝ տներում և ճանապարհորդում եք նրանց հետ: Նրանք բոլորը Աստծո զավակներն են, ձեր եղբայրներն ու քույրերն են: Աստված սիրում է նրանց այնպես, ինչպես սիրում է ձեզ: Այդ մարդկանցից շատերը փնտրում են կյանքի նպատակը: Նրանք մտահոգված են իրենց ընտանիքներով: Նրանց անհրաժեշտ է պատկանելիության զգացում ձեռք բերել, որը գալիս է այն բանի գիտակցումից, որ իրենք Աստծո զավակներն են, Նրա հավերժական ընտանիքի անդամները: Նրանք ուզում են իրենց ապահով զգալ անընդհատ փոփոխվող

©1993 Clark Kelley Price. Մի բազմացնեք:

Նշումներ

արժեքների աշխարհում: Նրանք ուզում են «խաղաղություն՝ այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում (ՎևՈւ 59.23), սակայն նրանք «ճշմարտությունից դուրս են մնացել, որովհետև չգիտեն որտեղ գտնել այն» (ՎևՈւ 123.12):

Հիսուս Քրիստոսի ավետարանը, ինչպես որ վերականգնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից, կօրհնի նրանց ընտանիքները, կբավարարի նրանց հոգևոր կարիքները և կօգնի իրականացնել նրանց ամենամեծ ցանկությունները: Թեև նրանք կարող է չիմանան, թե ինչու պետք է ազատվեն մեղավորության զգացումից, որը գալիս է սխալներ ու մեղքեր գործելու հետևանքով: Նրանք պետք է զգան փրկագնման ուրախությունը՝ ստանալով մեղքերի ներում և վայելելով Սուրբ Հոգու պարգևը:



Որպես Հիսուս Քրիստոսի լիազորված ներկայացուցիչ, դուք կարող եք մարդկանց սովորեցնել զորությամբ և իշխանությամբ, որ փրկությունը գալիս է Սուրբ Մեսիայի միջոցով և որ ոչ ոք չի կարող բնակվել Աստծո ներկայության մեջ, եթե դա չլինի Սուրբ Մեսիայի արժանիքներով, ողորմածությամբ և շնորհով (տե՛ս 2 Նեփի 2.6, 8): Երբ մարդիկ ընդունում են Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը և ստանում են մկրտության և քահանայության իշխանությամբ կատարվող հաստատման արարողությունները, նրանք կարող են համոզված լինել, որ չեն կորվի հավերժ (տե՛ս Մորմոնի Գիրք, Տիտղոսաթերթ):

Հիսուս Քրիստոսի Քավության մասին ձեր հասկացողության աճի հետ մեկտեղ կմեծանա ավետարանով ուրիշների հետ կիսվելու ձեր ցանկությունը: Դուք կզգաք, ինչպես զգացել է Լեքին, «որքան մեծ է այս բաները հայտնի դարձնելու կարևորությունը երկրի բնակիչներին» (2 Նեփի 2.8):

Նախագահ Էզրա Թափտ Բենսոնը սովորեցրել է. «Աստված մեզ պատվիրել է՝ տանել այս ավետարանը ողջ աշխարհին: Սա է այն նպատակը, որ պետք է միավորի մեզ բոլորիս այսօր: Միայն ավետարանը կփրկի աշխարհն իր իսկ ինքնակործանման աղետից: Միայն ավետարանը կարող է խաղաղությամբ միավորել բոլոր ազգերի ու ցեղերի մարդկանց: Միայն ավետարանը կարող է ուրախություն, երջանկություն և փրկություն պարգևել մարդկային ընտանիքին» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 167):

Դուք կանչված եք ներկայացնելու Հիսուս Քրիստոսին՝ օգնելու մարդկանց իրենց մեղքերից մաքրվելու գործում: Դուք սա անում եք, նրանց հրավիրելով գալ դեպի Հիսուս Քրիստոսը և դարձի գալ դեպի Նրա վերականգնված ավետարանը: Դեպի Փրկիչը գալու համար նրանք պետք է հավատք ունենան Նրա հանդեպ ապաշխարության համար, կատարելով բոլոր անհրաժեշտ փոփոխությունները, որպեսզի իրենց կյանքը ներդաշնակ դարձնեն Նրա ուսմունքների հետ: Դուք կարող եք օգնել մարդկանց զարգացնել այդպիսի հավատք, Հոգով ուսուցանելով նրանց վերականգնված ավետարանը և հրավիրելով նրանց պարտավորվել ապրելու համաձայն ավետարանի ուսմունքների: Այս պարտավորությանը հավատարիմ մնալը նրանց կպատրաստի մկրտության ուխտերը կապելուն, հաստատումը և Սուրբ Հոգու թանկարժեք պարգևը ստանալուն: Նրանք պետք է հանեն «բնական մարդուն» և դառնան Սուրբ՝ «Տեր Քրիստոսի քավության միջոցով» (Մոսիա 3.19):

Նշումներ

**Վարժություն. անհատական կամ զույգընկերոջ հետ ուսումնասիրություն**

1 Նեփի 8 և 11-ում գրված կենաց ծառի մասին տեսիլքի մասին սովորելիս, ուսումնասիրեք այս էջի վրա տրված կենաց ծառի նկարը: Այդ տեսիլքում կենաց ծառը խորհրդանշում է Աստծո սերը (տե՛ս 1 Նեփի 11.21–22):

- Ի՞նչ ցանկացավ Լեքին, երբ ճաշակեց այդ պտղից: (Տե՛ս 1 Նեփի 8.10–18:)
- Տեսիլքում, ի՞նչ պետք է անեին մարդիկ, որպեսզի կարողանային ճաշակել պտղից: Ի՞նչ մենք պետք է անենք, որպեսզի ստանանք Քավության բոլոր օրհնությունները: Ի՞նչ ճանապարհներով են մեզ օգնում պարտավորություններն ու ուխտերը, որպեսզի մենք կարողանանք ճաշակել այդ օրհնություններից:
- Ո՞րն է որպես միսիոներ ձեր պարտականությունը՝ ուրիշներին օգնելու ավետարանի պտուղները գտնելու և ճաշակելու գործում:

## Ավետարանը օրհնում է ընտանիքներին

Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման ուղերձը օրհնում է ընտանիքներին: Վերականգնման շնորհիվ մենք հասկանում ենք ընտանիքի վերաբերյալ Աստծո նպատակը. «Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար վերադարձը Աստծո ներկայություն, իսկ ընտանիքների համար՝ հավերժորեն միանալը» (Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Ensign,* Nov. 1995, 102):

> *«Ցիրոջ ամենակարևոր գործը, որ դուք երբևէ կանեք, կլինի ձեր սեփական տան պատերի ներսում»*
>
> – ՆԱԽԱԳԱՀ ՀԱՐՈԼԴ Բ. ԼԻ
> *THE TEACHINGS OF HAROLD B. LEE, SEL. CLYDE J. WILLIAMS (1996), 280*

Երկրի վրա, ընտանեկան միությունները կարող են լինել մեր ամենամեծ ուրախության աղբյուրը: Սատանան տարբեր կողմերից հարձակումներ է գործում ընտանիքների վրա և նրա ջանքերի հետևանքով բազմաթիվ ընտանիքներ են կործանվում: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը հնարավոր է դարձնում, որպեսզի ընտանիքները միավորվեն այժմ և հավերժության մեջ: Ավետարանի սկզբունքներով ապրելու արդյունքում ընտանիքները կարող են այս կյանքում ձեռք բերել խաղաղություն, ուրախություն, պատկանելիության և ինքնության զգացում: Ավետարանի լույսի շնորհիվ ընտանիքները կարող են լուծել անհամաձայնությունները, հակառակությունները ու խնդիրները: Անհամաձայնությունների հետևանքով բաժանված ընտանիքները կարող են վերամիավորվել ապաշխարության, ներման և Հիսուս Քրիստոսի Քավության զորության հանդեպ հավատքի շնորհիվ: «Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով» (*Ensign,* Nov. 1995, 102)»:

Ջգտեք գտնել և ուսուցանել ընտանիքներին՝ հորը, մորը և երեխաներին, որոնք կարող են աջակցել միմյանց ավետարանով ապրելու մեջ և, ի վերջո, կնքվել որպես ընտանեկան միավոր՝ վերականգնված քահանայության իշխանությամբ:

Նշումներ

## Ուսուցանել Հոգով

Քանի որ Հիսուս Քրիստոսի ավետարանը «Աստծո զորություն է՝ փրկելու համար ամեն հավատացողին» (Հռովմայեցիս Ա.16), ավետարանի Վերականգնման ուղերձը պետք է ուսուցանվի աստվածային զորությամբ, այսինքն՝ Սուրբ Հոգու զորությամբ, որն Աստվածագլխի երրորդ անդամն է: Նրան հաճախ կոչում են Հոգի և Նրա դերերից մեկը ճշմարտությունը սովորեցնելն ու դրա մասին վկայելն է: Եթե դուք սովորեցնեք այդ զորությամբ, Սուրբ Հոգին.

- Ձեզ կսովորեցնի նոր ճշմարտություններ և ձեր հիշողության մեջ կբերի ձեր սովորած վարդապետությունները (տե՛ս Հովհաննես ԺԴ.26):
- Խոսքեր կտա, որ խոսեք ձեզ անհրաժեշտ պահին (տե՛ս ՎևՈւ 84.85):
- Կհասցնի ձեր ուղերձն այն մարդկանց սրտերին, ում դուք սովորեցնում եք (տե՛ս 2 Նեփի 33.1):
- Կվկայի ձեր ուղերձի ճշմարտացիության մասին և կհաստատի ձեր խոսքերը (տե՛ս ՎևՈւ 100.5–8):
- Կօգնի ձեզ տարբերել այն մարդկանց կարիքները, որոնց դուք ուսուցանում եք (տե՛ս Ալմա 12.7):

Հոգին շատ կարևոր է ավետարանի ճշմարտությունները սովորեցնելու համար այնպես, որ այն հավատք զարգացնի ուրիշների մոտ: Ջգտելով զարգացնել Հոգուն ապավինելու ձեր հավատքը, դուք պետք է.

- Աղոթեք Հոգու համար (տե՛ս ՎևՈւ 42.14):
- Մաքրեք ձեր սիրտը (տե՛ս ՎևՈւ 112.28):
- Պահեք պատվիրանները (տե՛ս ՎևՈւ 20.77, 79):
- Ջանասիրաբար գանձեք Աստծո խոսքը (տե՛ս ՎևՈւ 11.21; 84.85):
- Ուսուցանեք այնպես, որպեսզի մյուսները հասկանան ձեր ուղերձը և լուսավորվեն (տե՛ս ՎևՈւ 50.13–22):
- Հավատք գործադրեք (տե՛ս Մորոնի 10.7):

Դուք ձեր սրբազան կոչման համար կարգվել եք այն խոստումով, որ Հոգին կտրվի ձեզ, եթե կատարեք Տիրոջ կողմից ձեր առջև դրված պահանջները: Հոգու պարգևները վայելելը պետք է լինի ձեր ամենամեծ ցանկություններից մեկը:

## Ձեր կոչման զորությունն ու իշխանությունը

Միսիոներները պետք է «կարգման զորությամբ, որ [նրանք] կարգվել են, հռչակեն մեծ ուրախության ավետիքը, այսինքն՝ հավիտենական ավետարանը» (ՎևՈւ 79.1): Դուք իշխանություն ունեք քարոզելու ավետարանը: Եթե դուք քահանայություն եք կրում, դուք իշխանություն ունեք սպասավորելու դրա արարողությունները: Եթե դուք աղոթքով և արժանավորությամբ գործածեք այդ իշխանությունը, դուք հոգևոր զորություն կստանաք, որը կլինի ձեր կոչման իրական լինելու ապացույցը: Ինչպես Մոսիայի որդիները, դուք պետք է սովորեցնեք Աստծո զորությամբ և իշխանությամբ (տե՛ս Ալմա 17.2–3):

Երբ դուք կարգվեցիք քահանայության իշխանության կողմից, դուք Տիրոջը ներկայացնելու իրավունք և արտոնություն ստացաք: Դուք ստացաք ծառայության վկայագիր, որը հաստատում է աշխարհին, որ դուք ունեք այդ իշխանությունը: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Կարգումը կարող է հասկացվել որպես առանձնացում: Դա նշանակում է առանձնացում մեղքից, առանձնացում մարմնականից, առանձնացում այն ամենից, ինչը դաժան է, ցածր, անմարդկային կամ գռեհիկ: Դա նշանակում է *առանձնացում* աշխարհից դեպի միտքի և գործի ավելի բարձր աստիճան: Այդ օրհնությունը պայմանական է և կախված է հավատարիմ կատարումից» (*The Teachings of Spencer W. Kimball*, ed. Edward L. Kimball [1982], 478):

Նշումներ

Ձեր իշխանության հետ մեկտեղ գալիս է նաև ձեր կոչմանն արժանի ապրելու պատասխանատվությունը: Որպես Տիրոջ ներկայացուցիչ դուք պետք է օրինակ լինեք հավատացյալներին (տե՛ս Ա Տիմոթեոս Դ.12): Ձգտեք ապրել Աստծո պատվիրանների համաձայն և պահել տաճարում կապած ձեր ուխտերը, իմացեք սուրբ գրությունները, եղեք քաղաքավարի և վստահելի, մի ուշացեք, հետևեք միսիոներների վարքի, հագուստի և սանրվածքի չափանիշներին, սիրեք մարդկանց, ում հետ ծառայում և աշխատում եք: Ձեր գործերով հարգեք Քրիստոսի անունը:

Բացի իշխանությունից, դուք զորություն պետք է գործածեք ձեր աշխատանքի ընթացքում: Ձեր ստացած իշխանությունը կարող է դեպի զորություն տանել ձեզ: Իսկապես, հոգևոր զորությունը ձեր իշխանության իրական լինելու մեկ այլ ապացույց է: Հոգևոր զորությունը մի պարգև է, որը ձեզ հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ կատարել ձեր աշխատանքը:

Ձեր զորությունն ու իշխանությունը պետք է ակնհայտ լինեն, երբ դուք աշխատում և սովորեցնում եք: Ձեր աշխատանքի ընթացքում զորությունը կարող է ի հայտ գալ տարբեր ձևերով, օրինակ.

- Առաջնորդվել Հոգով ասելու համար այն, ինչ Տերը ցանկանում է, որ դուք ասեք համապատասխան պահին (տե՛ս ՎևՈւ 84.85):
- Ուղղություն ստանալ այն մասին, թե ուր գնալ և ինչ անել (տե՛ս ՎևՈւ 28.15; 31.11; 75.26–27):
- Ստանալ ձեր վկայության հաստատումը Հոգու վկայությամբ (տե՛ս 2 Նեփի 33.1; ՎևՈւ100.5–8):
- Մասնակցել փրկության արարողություններին (տե՛ս ՎևՈւ 84.19–20):
- Տալ քահանայության օրհնություններ, եթե դուք երեց եք (տե՛ս Հակոբոս Ե.14–15):
- Աղոթել այն մարդկանց հետ կամ այն մարդկանց համար, ում հետ աշխատում եք (տե՛ս Ալմա 6.6; 8.18–22; 10.7–11; 31.26–35; ՎևՈւ 75.19):
- Արտահայտել ձեր սերը Տիրոջ, ձեր ընտանիքի, ընկերակից միսիոներների և այն մարդկանց հանդեպ, ում ծառայում եք:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ինչպե՞ս եք դուք զորություն ստանում:**

Ալմա 17.2–3 ՎևՈւ 53.3 Ա Կորնթացիս Բ.4

### Վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Նայեք Առաքյալներին ձեռնադրող Քրիստոսի նկարին և կարդացեք Հովհաննես ԺԵ.1–16: Ի՞նչ իմաստով է Քրիստոսը որթը: Ի՞նչ իմաստով եք դուք այդ որթի ճյուղերը: Ինչպե՞ս է ձեր ձեռնադրումը կապված այս հարաբերության հետ:

Կրկին կարդացեք ծառայության ձեր վկայագիրը: Գրի առեք կարդացածի մասին ձեր մտքերն ու զգացումները: Այս գլուխը յուրաքանչյուր անգամ կարդալիս, կրկնեք այդ գործընթացը: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես են ժամանակի ընթացքում փոխվում ձեր զգացումները:

Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 109.13–15, 21–30, 38–39, 55–57, որոնք քաղվածքներ են Կիրթլենդի տաճարի նվիրագործման ժամանակ ասված Մարգարե Ջոզեֆ Սմիթի ոգեշնչված աղոթքից: Ի՞նչ օրհնություններ խնդրեց Ջոզեֆ Սմիթը հավատարիմների համար:

Նշումներ



## Հիսուս Քրիստոսի ավետարանը

Հիսուս Քրիստոսի ավետարանը սահմանում է և ձեր ուղերձը, և ձեր նպատակը, այսինքն, այն պատասխանում է միսիոներական աշխատանքին վերաբերող «ի՞նչ» և «ինչո՞ւ» հարցերին: Փրկիչը Իր ավետարանը նախատեսել է կենսական և հիմնական վարդապետությունները ընդգրկելու նպատակով: Նա եկավ աշխարհ Իր Հոր կամքը կատարելու համար, և Նրա Հայրը ուղարկեց Նրան այս աշխարհ խաչի վրա բարձրացվելու: Նրա Քավությամբ և Հարությամբ բոլոր մարդիկ կբարձրանան կանգնելու Քրիստոսի առաջ և դատվելու իրենց գործերի համար, լինեն դրանք բարի, թե չար: Նրանք, ովքեր հավատք են գործադրում Քրիստոսի հանդեպ, ապաշխարում են իրենց մեղքերից և մկրտվում են Քրիստոսի անունով, կարող են սրբագործվել Սուրբ Հոգով: Եթե նրանք դիմանում են մինչև վերջ, ապա անբիծ կկանգնեն Քրիստոսի առաջ վերջին օրը և կմտնեն Տիրոջ հանգիստը: Քրիստոսը նրանց անմեղ կհամարի Հոր առաջ: Նա կլինի նրանց Միջնորդը և Դատապաշտպանը: Նրանք, ովքեր հավատարմորեն չեն համբերում մինչև վերջ, «կտրվելու են և գցվելու կրակի մեջ . . . Հոր արդարադատության պատճառով»: (Տե՛ս 3 Նեփի 27.13–22; համեմատեք 2 Նեփի 31.10–21; 3 Նեփի 11.31–41; ՎևՈւ 76.40–42, 50–53:)

Ավետարանի նպատակն է մաքրել մարդկանց իրենց մեղքերից, որպեսզի դատաստանի օրը նրանք կարողանան ստանալ Փրկչի ողորմածությունը: Հետևաբար, այս գրքի և, որն ավելի կարևոր է, օրեցօր ձեր կատարած աշխատանքի նպատակն է՝ հրավիրել մարդկանց գալ դեպի Քրիստոսը, օգնելով նրանց ստանալ վերականգնված ավետարանը Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ դիմանալու միջոցով:

Անհատներն ու ընտանիքները սկսում են հետևել Քրիստոսին, երբ գործադրում են հավատք Նրա հանդեպ և ապաշխարում են իրենց մեղքերից: Նրանք ստանում են մեղքերի թողություն մկրտության և Սուրբ Հոգու պարգևի միջոցով, որը ստանում են այդ արարողությունները կատարելու համար Աստծո իշխանությունը կրող մարդկանց

> *«Քարոզեք Ավետարանի առաջին սկզբունքները, կրկին ու կրկին դրանք քարոզեք. դուք կհայտնաբերեք, որ օրեցօր դրանց վերաբերյալ նոր մտքեր և լրացուցիչ լույս է բացվում ձեզ: Դուք ավելի լավ կսկսեք հասկանալ դրանք և դրանք ավելի պարզ կլինեն ձեզ համար: Այդ ժամանակ դուք ի վիճակի կլինեք ավելի պարզ բացատրել դրանք նրանց, ում սովորեցնում եք»:*
>
> - ՀԱՅՐՈՒՄ ՍՄԻԹ
> *HISTORY OF THE CHURCH*, 6:323

Նշումներ

կողմից: Ապա, նրանք դիմանում են մինչև վերջ, կամ այլ խոսքերով, շարունակում են կյանքի ընթացքում հավատք գործադրել Հիսուս Քրիստոսի հանդեպ, ապաշխարել և նորացնել իրենց կապած ուխտերը: Սրանք պարզապես քայլեր չեն, որ նրանք պետք է կատարեն իրենց կյանքում, դրանք պետք է կրկնվեն կյանքի ընթացքում, դառնալով ապրելաձև, որն ավելի ու ավելի է վարձատրվում: Իրականում, սա միակ ապրելաձևն է, որը կարող է բանականությանը խաղաղություն պարգևել և հնարավորություն տալ Երկնային Հոր զավակներին վերադառնալ ապրելու Նրա ներկայության մեջ:

Հիսուս Քրիստոսին հնազանդվելը կյանքի տևողություն ունեցող պարտավորություն է: Հավատք գործադրելու, ապաշխարելու, մկրտվելու և Քրիստոսին ծառայելու պարտավորություն վերցնելու, ապա Սուրբ Հոգին ստանալու միջոցով մենք կարող ենք բուժվել, ստանալ մեղքերի ներում և լիակատար դարձի գալ դեպի Փրկիչը և Նրա ավետարանը:

Օգնեք մարդկանց հավատք ձեռք բերել առ Հիսուս Քրիստոսը ի ապաշխարություն, սովորեցնելով և վկայելով, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը և քահանայության իշխանությունը վերականգնվել են, և հրավիրելով նրանց ապրել համաձայն Նրա ուսմունքների:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է Քրիստոսի ավետարանը, կամ վարդապետությունը:**

2 Նեփի 31.10–21 3 Նեփի 11.31–41 3 Նեփի 27.13–22

## Վերականգնման ուղերձը. հավատքի հիմքը

Անկախ նրանից, թե որտեղ եք դուք ծառայում կամ ում եք սովորեցնում, ձեր ուսուցանումը կենտրոնացրեք Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման վրա: «Տերը կօրհնի ձեզ, մինչ դուք ուսուցանում եք Վերականգնման ուղերձը աշխարհին, որը Հիսուս Քրիստոսի ավետարանի չափազանց մեծ կարիքն ունի» (“Statement on Missionary Work,” First Presidency letter, 11 Dec. 2002): Միսիոներական դասերի ժամանակ վարդապետությունները սովորելու ընթացքում դուք կտեսնեք, որ մենք ունենք մեկ ուղերձ. Ժամանակակից մարգարեի միջոցով Աստված վերականգնել է փրկության ծրագրի մասին գիտելիքը, որը կենտրոնանում է Քրիստոսի Քավության վրա և իրականացվում է ավետարանի առաջին սկզբունքներին և արարողություններին համաձայն ապրելու արդյունքում:

Հետևեք, որպեսզի յուրաքանչյուրը, ում դուք սովորեցնում եք, հասկանա հետևյալը.

- Աստված բառացիորեն մեր Երկնային Հայրն է: Երկրի վրա յուրաքանչյուր անձ Աստծո զավակն է և Աստծո ընտանիքի անդամը: Հիսուս Քրիստոսը, Աստծո Որդին, մեր Փրկիչն ու Քավիչն է:
- Մեր սիրող Երկնային Հայրը Իր զավակներին դիմում է աստվածաշնչյան պատմության միջոցով, Իր ավետարանը հայտնելով մարգարեներին: Դժբախտաբար, շատ մարդիկ մերժեցին այդ ավետարանը, անգամ նրանք, ովքեր ընդունեցին այն, փոխեցին ավետարանի վարդապետությունները և արարողությունները, ընկան անհավատության և ուրացության մեջ:
- Մեր Երկնային Հայրը երկիր ուղարկեց Իր սիրեցյալ Որդուն, Հիսուս Քրիստոսին: Նա հրաշքներ գործեց և սովորեցրեց Իր ավետարանը: Նա իրականացրեց Քավությունը և հարություն առավ:
- Առաջին Տեսիլքով Աստված նորից սիրով դիմեց իր զավակներին: Նա վերականգնեց Հիսուս Քրիստոսի ավետարանը և Իր քահանայության իշխանությունը և Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով կազմակերպեց երկրի վրա Իր Եկեղեցին: Մորմոնի Գիրքը այս Վերականգնման համոզիչ վկայությունն է:

Նշումներ



Երբ դուք ունկնդիրներին օգնեք տեսնել ուրացության և վերականգնման օրինաչափությունը, նրանք ավելի պատրաստված կլինեն հասկանալու վերջին օրերի այդ Վերականգնման մեծ անհրաժեշտությունը: Նրանք կտեսնեն վերականգնված ավետարանը ընդունելու, վերականգնված քահանայության իշխանության միջոցով փրկության արարողությունները ստանալու և հետևելու հավիտենական կյանքի ուղիով գնալու անհրաժեշտությունը: Մարդկանց օգնեք հասկանալ, որ Եկեղեցին մեկ այլ կրոն չէ, ոչ էլ Ամերիկյան կրոն: Ընդհակառակը, այն «ավետարանի լրիվության» (ՎևՈւ 1.23) վերականգնումն է, ինչպես այն հայտնվել և ուսուցանվել է ամենասկզբից:

Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին, համոզիչ վկայություն է, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր և, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է: Այն մեր կրոնի պորտաքարն է, այս ուղերձը սովորեցնելու ամենահզոր աղբյուրը: Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված կարևոր ճշմարտություններից մի քանիսը ընդգրկում են այն գիտելիքը, որ Աստված մեր Հայրն է, և մենք Նրա հոգևոր զավակներն ենք, որ մենք Նրա հետ ապրել ենք ծնվելուց առաջ, և որ Քրիստոսի Քավության շնորհիվ ավետարանի օրենքներին ու արարողությունների հնազանդվելու միջոցով, ընտանիքները կարող են հավերժ միասին լինել Աստծո ներկայության մեջ:

Մորմոնի Գիրքը վկայություն է Իր զավակների հանդեպ Աստծո սիրո մասին: Այն ցույց է տալիս, որ Աստված խոսում է Իր զավակների հետ: Երբ դուք ուսուցանում և վկայում եք, մարդկանց հրավիրեք կարդալ Մորմոնի Գիրքը և աղոթել դրանում պարունակվող ուղերձի վերաբերյալ: Յուրաքանչյուր անձ, որին դուք ուսուցանում եք, պետք է որոշի, թե ընդունում է արդյոք Մորմոնի Գիրքը որպես Աստծուց եկած հայտնություն:

Վստահեք Մորոնի 10.3–5-ում տրված նշանավոր խոստմանը: Արեք հնարավորին ամեն ինչ համոզելու համար մարդկանց կարդալ գիրքը, հասկանալ այն և հարցնել Աստծուն, թե արդյոք այն ճշմարիտ է: Սուրբ Հոգու վկայությունը կդառնա նրանց հավատքի պորտաքարը, և նրանք կհավատան, որ Քրիստոսը վերականգնել է Իր Եկեղեցին: Օգնեք նրանց, ում սովորեցնում եք, ստանալ այդ հոգևոր հաստատումը:

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ինչպե՞ս դուք պետք է օգտագործեք Մորմոնի Գիրքը ձեր միսիոներական աշխատանքում:**

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 13.39 | Մորոնի 10.3–5 | ՎևՈւ42.12–14 |
| 2 Նեփի 29.8–10 | ՎևՈւ 20.5–16 | |

## Վարժություն. անհատական ուսումնասիրություն

Պատկերացրեք, որ դուք պատրաստվում եք Վերականգնման ուղերձի մասին հոդված գրել տեղական թերթի համար: Ձեր աշխատանքային տետրում գրի առեք այդ ուղերձի մասին ձեր մտքերը և զգացումները, գրելով նաև այն մասին, թե ինչպես է փոխվում ձեր կյանքը և ձեզ շրջապատող աշխարհի մասին ձեր հայացքները, երբ դուք ավելի լավ եք հասկանում այդ ուղերձը:

Նշումներ

## Օգնել մյուսներին պարտավորություններ ստանձնել. Դուռ դեպի հավատք և ապաշխարություն

Մարդկանց օգնեք արժանի լինել մկրտության և հաստատման համար, սովորեցնելով նրանց ճշմարիտ վարդապետությունը և հրավիրելով ապաշխարել և փոխել իրենց կյանքը, պարտավորվելով և պահելով իրենց պարտավորությունները, որոնք հավատք են կառուցում Հիսուս Քրիստոսի հանդեպ: Այս պարտավորությունները մարդկանց նախապատրաստում են կապել և պահել սրբազան ուխտերը:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը սովորեցրել է. «Առաջին բանը, որ դուք պետք է անեք, երբ ունկնդիրն ասում է, որ չի կարդացել Մորմոնի Գիրքը կամ չի աղոթել դրա համար, հիասթափված լինելն է: . . . Սովորաբար մենք պարզապես շատ սովորական ենք ընդունում սա: Սա հավիտենական կյանքն է: Սա Աստծո զավակների փրկությունն է: Հավերժությունը հավասակշռության վրա է հիմնված: . . . Դա ամենակարևոր ուղին է, որով ունկնդիրը պետք է երբևէ քայլի: Բայց եթե նա չգիտի դա, դուք գիտեք: . . . Տիրապետեք իրավիճակին: Ուսուցանեք զորությամբ և իշխանությամբ, ապա հիասթափված զգացեք, եթե դեպի պատվիրան-պահելը և ուխտ-պահելը տանող առաջին քայլերը հաջողության չեն հասնում» (“Making and Keeping Covenants,” missionary satellite broadcast, Apr. 1997):

Մարդկանց սովորեցնելով ավետարանի լրության Վերականգնման մասին, դուք ապաշխարություն եք հայտարարում (տե՛ս ՎևՈւ 15.6): Ապաշխարությունը դա սրտի փոփոխություն է և մեղքը մոռանալու ու Աստծուն ծառայելու ցանկություն: Այն նաև նշանակում է խոնարհ ենթարկվել Հոգուն և Աստծո կամքին: Այն պահանջում է, որ մարդիկ էլ ավելի մեծ պարտավորությամբ ապրեն Աստծո կամքին համաձայն: Ապաշխարությունը պահանջում է մտքերի, ցանկությունների, սովորությունների և գործողությունների փոփոխության անկեղծ և շարունակական գործընթաց: Դա դրական փորձառություն է, որն ուրախություն և խաղաղություն է պարգևում: Եղեք համարձակ և սիրող, օգնելով մարդկանց հասկանալ, որ նրանք պետք է ապաշխարեն: Մարդկանց հրավիրելով պարտավորություններ ստանձնել, դուք կարող եք արդյունավետությամբ բարձրացնել նախազգուշացման և հույսի ձեր ձայնը:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ են սովորեցնում այս սուրբ գրությունները ապաշխարություն հայտարարելու մասին:**

| | | |
|---|---|---|
| Ալմա 29.1–4 | Ալմա 62.45 | ՎևՈւ 15.6; 16.6 |
| Ալմա 42.31 | ՎևՈւ 14.8 | |

## Մկրտություն և հաստատում

Ձեր հիմնական նպատակն է մկրտել և հաստատել այն մարդկանց, ում ուսուցանում եք: Մկրտությունը կատարվում է մեղքերի թողության համար, իսկ Սուրբ Հոգու պարգևը մի խումբ օրհնություններ է տալիս նրանց, ովքեր ապրում են դրանց արժանի կյանքով: Այդ արարողությունների միջոցով մարդիկ մտնում են դարպասի միջով և շարունակում են հավիտենական կյանքի ուղիով: Երեց Դալին Հ. Օուքսն ասել է. «Մենք չենք սովորեցնում և քարոզում, որպեսզի մարդկանց բերենք Եկեղեցի կամ ավելացնենք Եկեղեցու անդամների թիվը: Մենք չենք քարոզում և սովորեցնում միայն նրա համար, որպեսզի համոզենք մարդկանց ավելի լավ կյանքով ապրել: . . . Մենք բոլորին հրավիրում ենք գալ դեպի Քրիստոսը ապաշխարության և մկրտության և հաստատման միջոցով, որպեսզի բացվեն սելեստիալ արքայության դռները Աստծո որդիների և դուստրերի համար: Ուրիշ ոչ ոք չի կարող անել սա» (“The Purpose of Missionary Work,” missionary satellite broadcast, Apr. 1995):

Երբ սովորեցնում եք վերականգնված ավետարանը, մարդկանց օգնեք հասկանալ մկրտության և հաստատման սուրբ բնույթը: Նրանց օգնեք հասկանալ, որ Սուրբ Հոգու պարգևը ստանալը մեծ

Նշումներ

օրհնություն է իրենց կյանքում և բանալի է իրենց փրկության համար: Սուրբ Հոգին նրանց կսովորեցնի «ամեն բան կսովորեցնի» (Հովհաննես ԺԴ.26): Նախագահ Բոյդ Ք. Փաքերը սովորեցրել է. «Երբ դուք սովորեցնում եք ունկնդիրներին և նախապատրաստում եք նրանց ջրով մկրտությանը, դուք պետք է նաև մտածեք Սուրբ Հոգու պարգևի մասին, որը կրակով մկրտությունն է: Մտածեք դրա մասին որպես մի ասույթի: Նախ գալիս է ջրով մկրտությունը, իսկ հետո կրակով մկրտությունը» (“The Gift of the Holy Ghost: What Every Missionary Should Know—and Every Member As Well,” seminar for new mission presidents, June 2003): Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է. «Ջրով մկրտությունը մկրտության միայն կեսն է, և այն ոչինչ չարժէ առանց մյուս կեսի, որը Սուրբ Հոգով մկրտությունն է» (*History of the Church*, 5:499):

Նրանց, ում սովորեցնում եք, օգնեք հասկանալ, որ մկրտությանը և հաստատմանը արժանի լինելու համար իրենք պետք է բավարարեն Վարդապետություն և Ուխտեր 20.37–ում տրված պայմաններին:

### ՎևՈւ 20.37 Արժանավորություն մկրտության համար

- Խոնարհվել Աստծո առաջ:
- Մկրտվելու ցանկություն:
- Առաջ գալ կոտրված սրտով և փշրված հոգով:
- Ապաշխարություն բոլոր մեղքերից:
- Պատրաստակամորեն վերցնել իր վրա Հիսուս Քրիստոսի անունը:
- Վեռականություն մինչև վերջ ծառայելու Քրիստոսին:
- Գործով ապացուցել, որ ստացել է Քրիստոսի Հոգին մեղքերի թողությամբ:

Նրանից հետո, երբ արժանի նորադարձները մկրտվում են, նրանք հաստատվում են որպես Եկեղեցու անդամներ և նրանց շնորհվում է Սուրբ Հոգու պարգևը: Այս հաստատումը տեղի է ունենում եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի ղեկավարությամբ մկրտությանը հաջորդող հաղորդության ժողովի ժամանակ: Մինչ այդ երկու արարողությունները բաժանված են ժամանակի առումով, հաստատումը լրացնում և ավարտում է մկրտությունը:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչ առումով է Սուրբ Հոգու պարգևը հանդիսանում այն մեծագույն պարգևներից մեկը, որը մենք կարող ենք ստանալ:**

| | | |
|---|---|---|
| 3 Նեփի 19.1–13 | Հովհաննես Գ.5 | Գաղատացիս Ե.22–25 |
| ՎևՈւ 45.56–57 | Հովհաննես ԺԵ.26 | Սուրբ գրքերի ուղեցույց, «Սուրբ Հոգի» |

**Ինչո՞ւ պետք է նորադարձները ցանկանան ստանալ Սուրբ Հոգու պարգևը:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 31.12–17 | Գործք Ը.14–17 | Գործք ԺԹ.1–6 |
| 2 Նեփի 32.1–5 | | |

### Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները և կազմեք մի ցուցակ, ընդգրկելով մկրտության համար անհրաժեշտ արժանիքներն ու մկրտության ուխտերը: Ձեր զուգընկերոջ հետ միասին քննարկեք, թե ինչպես կարելի է այդ պահանջները սովորեցնել ուրիշներին:

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 31.13 | Ալմա 7.14–16 | Մորոնի 6.1–4 |
| Մոսիա 18.8–10 | 3 Նեփի 11.21–41 | ՎևՈւ 20.37 |

Նշումներ

## Հիմնել եկեղեցին

Երբ մարդիկ մկրտվում և հաստատվում են որպես Եկեղեցու անդամ, շարունակեք աշխատել ծխի ղեկավարների և անդամների հետ, որպեսզի նորադարձներին օգնեք ընտելանալ նոր կյանքին և շարունակել իրենց հոգևոր աճը: Եկեղեցին հիմնվում է, երբ վկայություն ունեցող մարդիկ մկրտվում և հաստատվում են, պահում են իրենց ուխտերը, ակտիվորեն պատրաստվում են գնալ տաճար և օգնում են ամրացնել ծուխը կամ ճյուղը:

Այն նորադարձները, որոնք անդամ ընկերներ ունեն, որոնց պատասխանատվություն է տրվում, և որոնք սնվում են Աստծո խոսքով, կառչեն վկայության և հավատքի մեջ: Միսիոներները, ծխի ղեկավարները և Եկեղեցու անդամները չպետք է մոռանան նոր անդամներին սնելու և ամրացնելու իրենց պատասխանատվությունը:

## Հաջողակ միսիոները

Որպես միսիոներ ձեր հաջողությունը չափվում է, հիմնականում, ձեր պարտավորությամբ՝ գտնել, սովորեցնել, մկրտել և հաստատել մարդկանց և օգնել նրանց դառնալ Եկեղեցու հավատարիմ անդամներ, որոնք վայելում են Սուրբ Հոգու ներկայությունը:

Խուսափեք համեմատվել այլ միսիոներների հետ և ձեր արդյունքները համեմատել նրանց արդյունքների հետ: Հիշեք, որ մարդիկ ընտրելու իրավունք ունեն, ընդունել ձեր ուղերձը, թե ոչ: Ձեր պատասխանատվությունն է հստակ և զորությամբ սովորեցնել, որպեսզի նրանք կարողանան ճիշտ ընտրություն կատարել: Ոմանք կարող է չընդունեն ձեր ուղերձը, անգամ եթե հոգևոր վկայություն ունեն դրա ճշմարտացիության վերաբերյալ: Դուք կտխրեք, քանի որ սիրում եք նրանց և ցանկանում եք տեսնել նրանց փրկությունը: Ինչևէ, դուք չպետք է հուսահատվեք: Հուսահատությունը կթուլացնի ձեր հավատքը: Եթե դուք պակասեցնեք ձեր ակնկալիքները, ձեր արդյունավետությունը կնվազի, ձեր ցանկությունը կթուլանա և դուք ավելի մեծ դժվարությամբ կկարողանաք հետևել Սուրբ Հոգուն:

Դուք կարող եք իմանալ, թե արդյոք հաջողակ միսիոներ եք, եթե.

- Զգաք, ինչպես է Հոգին ձեր միջոցով վկայում մարդկանց:
- Սիրեք մարդկանց և ցանկանաք նրանց փրկությունը:
- Ճշգրտությամբ հետևեք միսիայի կանոններին:
- Ապրեք այնպես, որպեսզի կարողանաք ստանալ և իմանալ, թե ինչպես հետևել Հոգուն, որը ձեզ ցույց կտա, թե ուր գնալ, ինչ անել և ինչ ասել:
- Զարգացնեք Քրիստոսանման հատկանիշներ:
- Արդյունավետությամբ աշխատեք ամեն օր, անեք հնարավորին ամեն ինչ, որպեսզի կարողանաք հոգիներ բերել դեպի Քրիստոսը, և ջանասիրաբար սովորեք և կատարելագործվեք:
- Օգնեք կառուցել Եկեղեցին (ծուխը), որտեղ որ դուք նշանակված եք աշխատելու:
- Մարդկանց զգուշացրեք մեղքի հետևանքների մասին: Նրանց հրավիրեք պարտավորություններ ստանձնել և պահել դրանք:
- Սովորեցրեք և ծառայեք այլ միսիոներների:
- Բարիք գործեք և ծառայեք մարդկանց ցանկացած հնարավորության դեպքում, անկախ նրանից, կընդունեն նրանք ձեր ուղերձը, թե ոչ:

Երբ դուք անեք ամեն հնարավորը, դեռևս հնարավոր է հիասթափության պահեր ապրեք, սակայն դուք չեք հիասթափվի ինքներդ ձեզանից: Դուք կարող եք համոզված լինել, որ Տերը գոհանում է, երբ դուք զգում եք, թե ինչպես է Հոգին աշխատում ձեր միջոցով:

Նշումներ

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ինչպե՞ս են Տիրոջ ծառաները զգում իրենց աշխատանքի համար: Ինչպե՞ս են Տիրոջ ծառաները ազդում նրանց վրա, ում ծառայում են:**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 28.3 | 3 Նեփի 28.4–10 | ՎևՈւ 68.2–6 |
| Ալմա 8.14–15 | Եթեր 12.13–15 | |
| Հելաման 10.3–5 | ՎևՈւ 15.4–6; 16.4–6 | |

## Վարժություն. անհատական ուսումնասիրություն

- Կարդացեք Հելաման 10.1–5 և 3 Նեփի 7.17–18: Ի՞նչ է Տերը մտածում այդ միսիոներների և նրանց ծառայության մասին:
- Մտածեք Աբինադիի և Ամոնի միսիոներական ջանքերի մասին (տե՛ս Մոսիա 11–18; Ալմա 17–20, 23–24): Ինչո՞ւ էին այդ երկու միսիոներները հաջողություն ունենում, անգամ, երբ նրանց ջանքերի անմիջական արդյունքները տարբեր էին:
- Ձեր սովորածը գրի առեք ձեր աշխատանքային տետրում:

## Հիշեք սա

- Ձեր նպատակն է հրավիրել մարդկանց գալ դեպի Քրիստոսը, օգնելով նրանց ստանալ վերականգնված ավետարանը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով:
- Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը միակ ճանապարհն է, որով մենք կարող ենք հավերժական երջանկություն գտնել:
- Ձեր կոչումը ձեզ իշխանություն է տալիս, իսկ ձեր ուխտերը պահելը ձեզ ուժ է տալիս:
- Հիսուս Քրիստոսի ավետարանի լրությունը վերականգնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Մորմոնի Գիրքը վկայություն է այն մասին, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է:
- Դուք մարդկանց օգնում եք ապրել ըստ ավետարանի, հրավիրելով նրանց պարտավորություններ ստանձնել և պահել դրանք:
- Դուք ցույց եք տալիս Տիրոջ հանդեպ ձեր հավատքը և Նրա Քավության համար ձեր երախտագիտությունը` Նրա մոտ հոգիներ բերելու միջոցով:
- Դուք հաջողակ եք, երբ հնազանդ եք, ապրում եք արդար կյանքով և անում եք, ինչ կարող եք, օգնելու համար ուրիշներին ապրել ըստ ավետարանի:

Նշումներ

## Միսիոներական աշխատանք

Ստորև տրված են այս վերջին ժամանակաշրջանում Եկեղեցու Նախագահների խոսքերը:

**Նախագահ Ջոզեֆ Սմիթ (1830–1844)**

«Այն ամենից հետո, ինչ ասվել է, ամենամեծ և ամենակարևոր պարտականությունը Ավետարանը քարոզելն է» (*Teachings of the Prophet Joseph Smith*, sel. Joseph Fielding Smith [1976], 113):

«Թող Սրբերը հիշեն, որ մեծ բաները կախված են իրենց անհատական ջանքերից, և որ նրանք կանչված են լինելու այսպես կոչված համագործակիցներ մեր և Սուրբ Հոգու հետ միասին վերջին օրերին այդ մեծ գործը իրականացնելու մեջ» (*Teachings of the Prophet Joseph Smith*, 178–79):

**Նախագահ Բրիգամ Յանգ (1847–1877)**

«Այս Եկեղեցում չկա ոչ մի տղամարդ կամ կին, ով չի գտնվում միսիայում: Այդ միսիան կտևի այնքան ժամանակ, որքան որ նրանք ապրում են, և դա նշանակում է՝ անել բարի գործեր, խրախուսել արդարակեցությունը, սովորեցնել ճշմարտության սկզբունքները և պարտավորվել և իրենց շուրջը գտնվողներին հրավիրել ապրել այդ սկզբունքներին համաձայն, որպեսզի նրանք կարողանան հավերժական կյանք ձեռք բերել» (*Discourses of Brigham Young*, sel. John A. Widtsoe [1954], 322):

**Նախագահ Ջոն Թեյլոր (1880–1887)**

«Մեր պարտականությունն է՝ քարոզել ավետարանը բոլոր մարդկանց: . . . Սա այն է, ինչ Աստված ակնկալում է մեզանից» (*The Gospel Kingdom*, sel. G. Homer Durham [1943], 234–35):

**Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆ (1889–1898)**

«Մենք այս երկիր ենք եկել միսիա կատարելու, . . . որպեսզի զորություն ունենանք առաջ գնալ և ողջունել երկրի ազգերի ժողովուրդներին: . . . Որպես Իսրայելի երեցներ, մեզանից միայն քչերն են լիովին գիտակցում մեր կարգավիճակը, մեր կոչումը, Աստծո հետ մեր հարաբերությունները, կամ այն աշխատանքը, որը Տերը պահանջում է մեզանից» (*The Discourses of Wilford Woodruff*, sel. G. Homer Durham [1946], 124):

**Նախագահ Լորենզո Սնոու (1898–1901)**

«Չկա որևէ մահկանացու մարդ, որն այնքան հետաքրքրված լինի ավետարանը քարոզելու ուղարկված երեցի հաջողությամբ, որքան Տերը, որն ուղարկել է նրան քարոզելու մարդկանց, որոնք Տիրոջ զավակներն են» (*The Teachings of Lorenzo Snow*, comp. Clyde J. Williams [1984], 70):

**Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթ (1901–1918)**

«Աշխարհում մենք մի առաքելություն ունենք. յուրաքանչյուր տղամարդ, յուրաքանչյուր կին, յուրաքանչյուր երեխա, որը աճել է հասկացողության մեջ կամ հասել է պատասխանատվության տարիքին, պետք է . . . . կարողանա քարոզել ճշմարտությունը, ճշմարտության մասին վկայել» (*Gospel Doctrine*, 13th ed. [1968], 251–52):

**Նախագահ Հիբեր Ջ. Գրանտ (1918–1945)**

«Որպես մարդիկ մենք մի մեծագույն գործ ունենք անելու, և դա է՝ կոչ անել աշխարհին ապաշխարել մեղքերից, գալ դեպի Աստված: Եվ մեր բոլոր պարտականություններից ամենակարևորն է՝ առաջ գնալ և հայտարարել Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանը, երկրի վրա կյանքի և փրկության ծրագրի վերականգնման մասին: . . . Ամեն գործում մենք ունենք թանկարժեք մարգարիտ: Մենք ունենք այն, ինչ ավելի արժեքավոր է, քան աշխարհի ողջ հարստությունն ու գիտական տեղեկությունը: Մենք ունենք կյանքի և փրկության ծրագիրը: . . . Աշխարհում մեր մերձավորի հանդեպ սեր ցուցաբերելու լավագույն ճանապարհը առաջ գնալն է և Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանը քարոզելը, որը մեզ տրվել է որպես բացարձակ գիտելիք դրա աստվածային բնույթի վերաբերյալ» (in Conference Report, Apr. 1927, 175–76):

**Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթ (1945–1951)**

«Դա ձեր առաքելությունն է, Եկեղեցու իմ եղբայրներ և քույրեր, դա ձեր պատասխանատվությունն է: Դուք անվճար ստացել եք և մեր Երկնային Հայրը ակնկալում է ձեզանից, որ դուք անվճար կիսվեք Իր մյուս որդիների և դուստրերի հետ, այդ փառավոր ճշմարտություններով» (*Sharing the Gospel with Others*, sel. Preston Nibley [1948], 213):

Նշումներ

«Մենք ձեռք կբերենք Սելեստիալ Արքայությունում մեր վեհացումը միայն այն պայմանով, եթե մեր Հոր մյուս զավակների հետ կիսվենք Հիսուս Քրիստոսի Ավետարանի օրհնություններով և պահենք պատվիրանները, որոնք կհարստացնեն մեր կյանքը այստեղ և հետագայում» (*Sharing the Gospel with Others*, 190):

**Նախագահ Դեյվիդ Օ. ՄակՔեյ (1951–1970)**

«Յուրաքանչյուր անդամ . . . միսիոներ է» (in Conference Report, Apr. 1959, 122):

«Ճշմարիտ Քրիստոնեությունը սեր է գործի մեջ: Չկա Աստծո հանդեպ սեր դրսևորելու ավելի լավ ճանապարհ, քան ձեր մերձավորների հանդեպ անեսասեր սեր ցուցաբերելը: Սա է միսիոներական աշխատանքի ոգին» (*Gospel Ideals* [1954], 129):

**Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ (1970–1972)**

«Մենք լսել ենք, որ բոլորս միսիոներներ ենք: Յուրաքանչյուր անդամ . . . պետք է միսիոներ լինի: . . . Որպես Եկեղեցու անդամ, նվիրաբերելով մեզ Հիսուս Քրիստոսի ավետարանի տարածմանը, մենք միսիոներներ ենք դառնում: Դա Եկեղեցու յուրաքանչյուր անդամի պատասխանատվության մասն է» (*Take Heed to Yourselves* [1971], 27–28):

**Նախագահ Հարոլդ Բ. Լի (1972–1973)**

«Միսիոներական աշխատանքը տնային ուսուցում է նրանց, ովքեր այժմ Եկեղեցու անդամներ չեն, իսկ, Եկեղեցու անդամների կողմից կատարվող տնային ուսուցումը ոչ ավել, ոչ պակաս միսիոներական աշխատանք է» (*Improvement Era*, Dec. 1964, 1078):

**Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ (1973–1985)**

«Այժմ Տիրոջ ժամանակացույցով ավետարանն էլ ավելի հեռուները հասցնելու ժամանակն է: . . . Այս աշխարհում գուցե մեկը խնդրում է, գիտակցաբար, կամ անգիտակցաբար. «Եկ. . . և օգնիր մեզ»: Դա կարող է լինել ձեր ընկերը: Դա կարող է լինել ձեր հարևանը: Դա կարող է լինել ձեր բարեկամը: Դա կարող է լինել մեկը, որին հանդիպել եք երեկ: Բայց մենք ունենք, այն, ինչ պետք է նրանց: Եկեք համարձակություն ձեռք բերենք մեր գիտելիքից և աղոթենք, ինչպես Պետրոսը. «Եվ հիմա, Տեր . . . տուր քո ծառաներին, բոլոր համարձակությունով քո խոսքը խոսել» (Գործք Դ.29» (*Teachings of Spencer W. Kimball* [1982], 546):

**Նախագահ Էզրա Թավտ Բենսոն (1985–1994)**

«Մենք պետք է ավետարանով կիսվենք ուրիշների հետ: Դա է մեր պատասխանատվությունը. յուրաքանչյուր անդամ միսիոներ է: Դա է Աստծո մարգարեների կոչը: . . .

Անդամ-միսիոներ համատեղ աշխատանքը մեր անդամների անհատական աճի ամենամեծ աղբյուրն է: Դա իմ համոզմունքն է, որ անդամ-միսիոներ աշխատանքը, որտեղ որ կիրառվում է, կբարձրացնի ցանկացած ծխի հոգևոր մակարդակը» (*Teachings of Ezra Taft Benson*, 208–9):

**Նախագահ Հովարդ Վ. Հանթեր (1994–1995)**

«Անշուշտ, ավետարանը ամեն տոհմին, լեզվին և ժողովրդին տանելը մեծագույն պատասխանատվություն է, որ մեզ տրված է մահկանացու կյանքում: . . . Մենք պատիվ ենք ունեցել ծնվելու այս վերջին օրերին, ի տարբերություն ավելի վաղ ժամանակաշրջաններին, օգնելու համար տանելու ավետարանը ողջ աշխարհին» (“Walls of the Mind,” *Ensign*, Sept. 1990, 10):

«Ի՞նչ կապ ունի Քավությունը միսիոներական աշխատանքի հետ: Ամեն անգամ, երբ մենք մեր կյանքում զգում ենք Քավության օրհնությունները, մենք չենք կարողանում զսպել ուրիշների բարեկեցության համար մեր մտահոգությունը: . . . Մարդու անձնական դարձի գալու ամենամեծ ցուցանիշը ուրիշների հետ ավետարանով կիսվելու ցանկությունն է» (“The Atonement and Missionary Work,” seminar for new mission presidents, June 1994):

**Նախագահ Գորդոն Բ. Հինքլի (1995– )**

«Մենք այստեղ ենք մեր Հորը Նրա աշխատանքում և Նրա փառքի մեջ աջակցելու համար, որն է՝ իրականացնել մարդու անմահությունը և հավերժական կյանքը (տե՛ս Մովսես 1.39): Ձեր պարտականությունը լուրջ է պատասխանատվությունների ձեր շրջանակում, իսկ իմը՝ իմ շրջանակում» (in Conference Report, Apr. 1995, 94; or *Ensign*, May 1995, 71):

«Թող յուրաքանչյուր անդամի սրտում զարգանա իմացություն մյուսներին ճշմարտության գիտելիքի բերելու իր ներուժի մասին: Թող նա աշխատի այդ ուղղությամբ: Թող նա մեծ ջանասիրությամբ աղոթի դրա համար» (“Find the Lambs, Feed the Sheep,” *Ensign*, May 1999, 106):

# Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

Նշումներ

## Անհատական ուսումնասիրություն

- Պատրաստեք երկու րոպեանոց ելույթ այս գլխի սկզբում տրված հարցերից մեկի շուրջ: Պատրաստ եղեք ձեր ելույթով կիսվելու ձեր զուգընկերոջ կամ շրջանի ժողովի ժամանակ մյուս միսիոներների հետ:

- Վերջերս դարձի նկածներին խնդրեք պատմել դարձի գալու իրենց պատմությունները: Ի՞նչը նրանց օգնեց հավատք ձեռք բերել ի ապաշխարություն (տե՛ս Ալմա 34.17): Ինչո՞ւ նրանք որոշեցին մկրտվել և հաստատվել: Ինչպե՞ս են իրենց զգում Եկեղեցու նոր անդամ դառնալու կապակցությամբ: Ինչպե՞ս կարող էին միսիոներները իրենց ավելի լավ ծառայել:

- Մտածեք, թե ինչ է նշանակում բարձրացնել նախազգուշացման ձայնը (տե՛ս Հակոբ 3.12; ՎևՈւ 1.4; 3.8:41; 63.57–58; 88.81; 112.5; Եզեկիել Գ.17–21; ԼԳ.1–12): Ձեր խոսքերով գրեք, թե ինչ է դա նշանակում և ինչ դուք կարող եք անել դրա համար:

- Կարդացեք Մորմոն 8 և Մորոնի 1 և 10: Կարդալիս ինքներդ ձեզ հարցրեք. «Ո՞րն էր մեր օրերի հետ կապված Մորոնիի հույսը: Ի՞նչ էր նա ցանկանում, որ մենք անեինք Մորմոնի Գրքի հետ: Ի՞նչ են կասեի Մորոնիին, եթե հնարավորություն ունենայի»: Ձեր մտքերը գրեք ձեր աշխատանքային տետրում:

- Մտածեք ձեր կյանքի այն իրադարձությունների մասին, որոնք ամրացրել են ձեր վկայությունը Ջոզեֆ Սմիթի և Վերականգնման մասին: Այնուհետև գրեք այս հարցի պատասխանը. Ի՞նչը ձեզ օգնեց իմանալ, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին:

## Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Միմյանց հետ կիսվեք այս գլխի սկզբում տրված «Մտածեք այս մասին» բաժնի հարցերի ձեր պատասխաններով:

- Միմյանց հետ կիսվեք միսիայի վերաբերյալ ձեր հույսերի և ցանկությունների մասին նրանից հետո, երբ ստացաք միսիայի կոչը: Որքանո՞վ է մինչ այժմ ձեր փորձը համապատասխանում ձեր սպասումներին: Ինչպե՞ս կարող եք ավելի լիարժեք իրականացնել ձեր ակնկալիքները:

- Կարդացեք և քննարկեք «Ծառայող» բառը Սուրբ Գրքերի Ուղեցույցում:

- Ընտրեք ստորև տրված մեծ միսիոներներից մեկին և կարդացեք նշված հղումները: Կարդալիս, քննարկեք, թե ինչպես է այդ միսիոները (1) հասկացել իր կոչումը և նվիրվել դրան, (2) դրսևորել աշխատանքի հանդեպ իր վերաբերմունքն ու ցանկությունը, և (3) օգնել ուրիշներին ընդունել ավետարանը:

| | | |
|---|---|---|
| Ալմա (Մոսիա 18) | Նեփի և Լեքի (Հելաման 5) | Պողոս (Գործք ԺԲ) |
| Ահարոն (Ալմա 22; 23.1–6) | Պետրոս (Գործք Բ) | |

- Հիմների գրքից ընտրեք երկու օրհներգ «Ավետարանի վերականգնումը» թեմայով (տե՛ս էջ 424): Կարդացեք կամ երգեք այդ հիմները: Քննարկեք բառերի նշանակությունը:

- Սուրբ գրքերի ուղեցույցում միասին կարդացեք «Հավատք», «Ապաշխարել, ապաշխարություն», «Մկրտություն, մկրտվել» և «Սուրբ Հոգի» բացատրությունները: Յուրաքանչյուրի համար կարդացեք և քննարկեք սուրբ գրությունների բոլոր հղումները:

- Սուրբ գրքերի ուղեցույցում միասին կարդացեք «Տնտեսություն»: Կարդացեք և քննարկեք նաև Վարդապետություն և Ուխտեր 136.37:

Նշումներ

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Վերջերս մեկ-երկու մկրտվածների խնդրեք կիսվել դարձի գալու մասին իրենց պատմություններով: Ի՞նչ զգացումներ ունեն նրանք իրենց միսիոներների մասին, այն մասին, ինչ միսիոներները սովորեցնում էին, պարտավորությունները պահելու մասին, այն, թե ինչն է առավել մեծ ազդեցություն գործել իրենց դարձի գալու գործընթացի վրա:
- Քահանայության որևէ ղեկավարի հրավիրեք միսիոներների հետ խոսել ձեր տարածքում Եկեղեցին կառուցելու հնարավորությունների և դժվարությունների մասին:
- Կարդացեք Ալմա 18 և քննարկեք հետևյալ հարցերը. Ինչպիսի՞ն էին Լամոնիի զգացմունքները պատմության սկզբում: Ինչպե՞ս դրանք փոխվեցին: Ինչպիսի՞ զգացմունքներ պետք է ունենալ ավետարանի օրհնությունները ստանալու համար: Կարդացեք Ալմա 34.15–16,և համեմատեք այն Լամոնիի պատմության հետ: Ինչպե՞ս է Քրիստոսի Քավությունը մեզ հնարավորություն տալիս ողորմածություն ձեռք բերել:
- Քննարկեք, թե ինչ է նշանակում լինել հաջողակ միսիոներ: Միսիոներներին խնդրեք բերել հաջողության որոշակի օրինակներ:
- Միսիոներներին բաժանեք երեք խմբի: Խմբերից մեկին հանձնարարեք կարդալ Գործք Բ.36–38 (Պետրոս), մյուսին՝ Գործք ԺԶ.25–33 (Պողոս), և երրորդին՝ Մոսիա 18.8–11 (Ալմա): Յուրաքանչյուր խմբին խնդրեք պատասխանել հարցին. «Ի՞նչ արեց այդ միսիոները օգնելու համար ուրիշներին մեծացնել Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը, ապաշխարել, և ստանալ մկրտություն ու հաստատումը»: Քննարկեք, թե ինչ են միսիոներները սովորում այդ պատմություններից, ինչը կարող է նրանց օգնել հավատք գործադրել, երբ հրավիրում են մարդկանց ապաշխարել, մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը:
- Ժողովից մի քանի օր առաջ մի քանի միսիոների հանձնարարեք խորհել այս գլխի սկզբում «Մտածեք այս մասին» բաժնում տրված որոշ հարցերի շուրջ: Յուրաքանչյուր միսիոների խնդրեք երկու-երեք րոպեանոց ելույթ պատրաստել իրեն հանձնարարված հարցի շուրջ: Շրջանի ժողովի կամ տարածքային համաժողովի ժամանակ միսիոներներին թույլ տվեք ելույթ ունենալ: Ելույթներից հետո քննարկեք այն, ինչ նրանք սովորեցին և թե ինչպես կարող են դա կիրառել իրենց միսիոներական աշխատանքի ընթացքում:
- Միսիոներներին բաժանեք չորս խմբի: Յուրաքանչյուր խմբի խնդրեք թվել որքան հնարավոր է շատ ճշմարտություններ, ուխտեր և արարողություններ, որոնք վերականգնվել և հայտնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Միսիոներներին խնդրեք ասել, թե ինչ ազդեցություն են գործել իրենց կյանքում Վերականգնման միջոցով հայտնված ճշմարտությունները:

## Միսիայի Նախագահ

- Հարցազրույցների ժամանակ միսիոներներին ժամանակ առ ժամանակ խնդրեք ձեզ հետ կիսվել.
  - Հիսուս Քրիստոսի մասին իրենց վկայությամբ:
  - Վերականգնված ավետարանի և Ջոզեֆ Սմիթի առաքելության մասին իրենց վկայությամբ:
  - Մորմոնի Գրքի մասին իրենց վկայությամբ:
  - Որպես միսիոներ իրենց նպատակի մասին իրենց մտքերով:

Նշումներ

- Միսիոներներին խնդրեք իրենց աշխատանքային տետրում գրի առնել այն, թե ինչ են զգում իրենց միսիայի նպատակի մասին: Հարցազրույցի ժամանակ նրանց խնդրեք կիսվել իրենց գրած մտքերով:

- Շնորհավորական նամակ ուղարկեք նոր անդամներին:

Նշումներ



# Ինչպե՞ս ես կարող եմ արդյունավետ սովորել և պատրաստվել ուսուցանելուն

Նշումներ

**Մտածեք այս մասին**

- Ինչո՞ւ է կարևոր ուսումնասիրել ավետարանը:
- Ինչպե՞ս կարող է իմ ուսումնասիրությունը օգնել ուրիշներին:
- Ինչո՞ւ ես պետք է շարունակ զանձեմ Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությունները:
- Ինչպե՞ս կարող եմ արդյունավետ սովորել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի վարդապետությունները և պատրաստվեմ ուսուցանել ուրիշներին:
- Ինչպե՞ս կարող եմ բարելավել անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրությունը:

Տերն ասել է. «Մի փնտրիր հայտարարել իմ խոսքը, այլ, նախ փնտրիր ձեռք բերել իմ խոսքը, և հետո քո լեզուն պիտի արձակվի. հետո, եթե կամենաս, դու կունենաս իմ Հոգին և իմ խոսքը, այո, Աստծո զորությունը՝ մարդկանց համոզելու համար» (ՎևՈւ 11.21): Արդյունավետ ուսուցանելու համար դուք պետք է հոգևոր գիտելիք ձեռք բերեք: Ավետարանի մեջ աճելու և հավերժական կյանք տանող ուղու վրա մնալու համար դուք պետք է ավետարանն ուսումնասիրելու սովորություն զարգացնեք (տե՛ս ՎևՈւ 131.6): Ուսումնասիրելու սովորույթները, որ դուք կզարգացնեք որպես միսիոներ, կօրհնեն ձեզ անձնական կյանքում և կօգնի նրանց, ում դուք սովորեցնում եք, հավատք զարգացնել Փրկչի հանդեպ:

Օրվա արդյունավետ ուսումնասիրությունը պետք է միշտ սկսել աղոթքով: Ուսումնասիրությունը հավատքի գործադրում է, որի համար անհրաժեշտ է կամքի ազատություն դրսևորել: Շատ միսիոներներ դժվարանում են հասկանալ, թե ինչպես կարելի է արդյունավետ սովորել: Ոմանք ամբողջովին վստահում են ուրիշներին կամ մշակված ծրագրերին, որոնք կարող են ասել, ինչ և

Նշումներ

ինչպես սովորել: Թեև լավ ուսուցիչ ունենալը շատ կարևոր է, ավելի կարևոր է նպատակային ուսումնասիրության սեփական փորձ ունենալ: Ձեր ուսուցումից լավ արդյունք ստանալը կախված է սովորելու մեծ ցանկությունից, «անկեղծ միտումով» ուսումնասիրելուց (Մորոնի 10.4), «արդարության համար սոված և ծարավ» լինելուց (Մաթևոս Ե.6) և ձեր ունկնդիրների հարցերի ու մտահոգությունների պատասխանները գտնելուց:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Նայեք նախորդ էջի վրա տրված Ջոզեֆ Սմիթի նկարին: Կարդացեք Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.11–13: Ուսումնասիրության ընթացքում ձեր աշխատանքային տետրում գրեք հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչպե՞ս Ջոզեֆ Սմիթը Հակոբոս Ա.5 հատվածը կարդալով և այդ մասին խորհելով հայտնություն ստացավ:
- Ի՞նչ ազդեցություն գործեց նրա ուսումնասիրությունը ապագա սերունդների վրա:
- Ի՞նչ ազդեցություն գործեց սովորելու և փնտրելու նրա որոշումը ձեր կյանքում:
- Ինչպիսի՞ ազդեցություն է գործում ձեր կյանքում ավետարանն ուսումնասիրելը:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ինչպե՞ս է Տերը ցանկանում, որ մենք մոտենանք ավետարանը ուսումնասիրելուն:**

2 Նեփի 4.15–16 ՎևՈւ 58.26–28 ՎևՈւ 88.118
2 Նեփի 32.3

## Սովորել Սուրբ Հոգով



Ավետարանի ձեր ուսումնասիրությունը առավել արդյունավետ կլինի, եթե դուք սովորեք Սուրբ Հոգով: Ավետարանի ձեր ուսումնասիրությունը միշտ սկսեք աղոթքով, որպեսզի Սուրբ Հոգին օգնի ձեզ սովորել: Նա գիտելիք և հաստատում կտա, ինչը կօրհնի ձեր կյանքը և թույլ կտա օրհնել ուրիշների կյանքը: Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատքը կաճի: Ապաշխարելու և կատարելագործվելու ձեր ցանկությունը կաճի:

Այս տեսակի ուսումնասիրությունը ձեզ պատրաստում է ծառայությանը, հանգստություն է պարգևում, լուծում է խնդիրները և ուժ է տալիս մինչև վերջ համբերելու համար: Ավետարանը հաջողությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ցանկություն և գործողություն: «Քանզի նա, ով ջանասիրաբար որոնում է, կգտնի. և Աստծո խորհուրդները հայտնի կդառնան նրանց՝ Սուրբ Հոգու զորությամբ, ինչպես՝ այս ժամանակներում, այնպես էլ՝ ժամանակներում հին» (1 Նեփի 10.19): Ենովսի նման, եթե ծարավ ունեք հավերժական կյանքի խոսքերի համար և եթե թույլ տաք, որ այդ խոսքերը «ընկղմվեն խորը [ձեր] սրտում» (Ենովս 1.3), ապա Սուրբ Հոգին կբացի ձեր միտքը և սիրտը ավելի մեծ լույսի և հասկացողության համար:

Ավետարանի ուսումնասիրությունը նաև հայտնություն ստանալու ընթացք է (տե՛ս Հակոբ 4.8): Օլիվեր Քաուդերիին Տերն ասել է. «Ահա, դու չհասկացար. դու կարծում էիր, որ ես պիտի տայի

Նշումներ

քեզ, երբ դու միտք չարեցիր, այլ միայն խնդրեցիր ինձ: Բայց, ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է քննես այն քո մտքում. հետո դու պետք է հարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է, և եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ կուրծքդ կայրվի քո ներսում. ուստի, դու պիտի զգաս, որ դա ճիշտ է» (ՎևՈւ 9.7–8): Ուսումնասիրության ժամանակ առանձնահատուկ ուշադրություն դարձրեք ձեր մտքերին և սրտի զգացումներին, հատկապես այն մարդկանց վերաբերյալ, ում ուսուցանում եք:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ո՞րն է Սուրբ Հոգու դերը ավետարանը սովորելիս մեզ օգնելու գործում:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 32.5 | ՎևՈւ 11.12–14 | Հովհաննես 16.13 |
| Ալմա 5.45–46 | ՎևՈւ 39.5–6 | Ա Կորնթացիս Բ.9–14 |
| Մորոնի 10.5 | Հովհաննես 14.26 | |

## Ապրեք ըստ նրա, ինչ սովորում եք

Զգալով այն ուրախությունը, որը գալիս է ավետարանը հասկանալուց, դուք կցանկանաք կիրառել ձեր սովորածը: Աշխատեք ապրել ներդաշնակության մեջ այն ամենի հետ, ինչ հասկացել եք: Դա կամրացնի ձեր հավատքը, գիտելիքը և վկայությունը: Գործելով ձեր սովորածի համաձայն, դուք մշտապես խորացող հասկացողություն ձեռք կբերեք (տե՛ս Հովհաննես Է.17):

Եթե դուք ուսումնասիրությամբ և հավատքով գանձեք սուրբ գրությունների և վերջին օրերի մարգարեների խոսքերը, ապա ավետարանով կիսվելու ձեր ցանկությունը կմեծանա: Ձեզ խոստացված է, որ Հոգին կօգնի ձեզ իմանալ, թե ինչ ասել, երբ դուք սովորեցնում եք: Տերն ասել է. «Ոչ էլ նախօրոք հոգ արեք, թե ինչ եք ասելու. բայց շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին ձեզ կտրվի ամեն մարդու համար չափված բաժինը» (ՎևՈւ 84.85):

> *«Ճշմարիտ վարդապետությունը, եթե հասկացվում է, փոխում է մտածելակերպը և վարքը: Ավետարանի վարդապետությունների ուսումնասիրությունը ավելի արագ կբարելավի վարքը, քան վարքի ուսումնասիրությունը կփոխի վարքը»:*
>
> – ՆԱԽԱԳԱՀ ԲՈՅԴ Ք. ՓԱՔԵՐ
> "LITTLE CHILDREN," *ENSIGN,* NOV. 1986, 17

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ են սովորեցնում սուրբ գրությունները ավետարանը սովորելու մասին:**

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 10.17–19 | ՎևՈւ 50.19–22 | ՎևՈւ 88.118 |
| ՎևՈւ 11.21–22 | | |

## Ուսումնասիրել և նախապատրաստվել դասերն ուսուցանելուն

Դասերը (տրված են գլուխ 3-ում) պարունակում են մկրտության հարցազրույցի հարցերը, պարտավորությունները և վարդապետությունները, որոնք դուք պետք է սովորեցնեք: Դասերում դուք ուսուցանման օգտակար մտքեր կգտնեք: Ինչևէ, դասերը ձեզ չեն ասի այն ամենը, ինչ պետք է ասեք, կամ ինչպես պետք է ասեք: Դուք ինքներդ եք պատասխանատու դասերը խորապես հասկանալու և ձեր խոսքերով Սուրբ Հոգու օգնությամբ սովորեցնելու համար:

Նշումներ

Ուսուցանեք այնպես, որպեսզի մյուսները կարողանան ամրացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը, ցանկանան ապաշխարել և ուխտի մեջ մտնել Աստծո հետ:

Արդյունավետ ուսուցիչները միշտ աշխատում են կատարելագործել իրենց գիտելիքն ու ունակությունները: Թեև դուք չեք սովորեցնելու այն ամենը, ինչ գիտեք վարդապետության մասին, ձեր ավելացած գիտելիքը կկառուցի ձեր վկայությունը և կբարելավի հոգևոր զորությամբ ուսուցանելու ձեր կարողությունը: Դուք կիմանաք, որ օգտագործում եք դասերը` ըստ նախատեսվածի, եթե.

- Դասերին նախապատրաստվելիս և ուսուցանելիս փնտրեք և հետևեք Հոգուն:
- Աշխատեք մշտապես ուսումնասիրել, գանձել և ձեր կյանքում կիրառել վարդապետությունները:
- Աշխատեք ձեր զուգընկերոջ հետ որոշակի նպատակներ սահմանել այն բոլոր անձանց համար, ում սովորեցնում եք:
- Ուսուցանելիս, կենտրոնանաք հիմնական ուղերձների և վարդապետությունների վրա:
- Դասերի հերթականությունը, տևողությունը և արագությունը հարմարեցնեք նրանց կարիքներին, ում սովորեցնում եք:
- Հաճախ սովորեցնեք սուրբ գրություններից` պարզությամբ և համոզվածությամբ:
- Հաճախ բերեք ձեր վկայությունը:
- Օգնեք ուրիշներին ստանձնել և պահել պարտավորություններ, որոնք տանում են դեպի մկրտություն և հաստատում:

Այս ամենը ձեզ հնարավորություն կտա օգնել ուրիշներին վկայություն ձեռք բերել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին:

Սկսելով ձեր միսիան դուք կարիք կունենաք սովորել ավետարանի ուղերձի կառուցվածքը և ձեռք բերել ուսուցանելու համար անհրաժեշտ ունակություններ: Այդ փորձը ձեռք բերելով դուք ցանկություն կունենաք խորացնել ձեր գիտելիքը և բարելավել ուսուցանելու ձեր ունակությունը: Պատրաստվելով ուսուցանման հանդիպումներին դուք կարող եք դասերի պլան ունենալ, որը ձեզ կօգնի ուսուցանել Հոգով և օգնել ուրիշներին պարտավորություններ ստանձնել և պահել դրանք: Ստորև տրված առաջարկները դուք կարող եք կիրառել ձեր միսիայի ընթացքում: Ինչևէ, պարտադիր չէ, որ օգտագործեք բոլոր հրահանգները յուրաքանչյուր իրավիճակի համար: Փոխարենը, այդ հրահանգները օգտագործեք ձեր կարիքները բավարարելու և Հոգով առաջնորդվելու համար: Եթե դուք նոր լեզու եք սովորում, կիրառեք այս հրահանգները նախ ձեր մայրենի լեզվով, ապա միսիայի լեզվով:

- **Կենտրոնացեք պարտավորությունների և մկրտության հարցազրույցի հարցերի վրա:** Այնպես ուսուցանեք, որ մարդիկ պարտավորվեն և պատրաստվեն մկրտությանն ու հաստատմանը: Հասկացեք մկրտության հարցազրույցի հարցերը և ամեն դասի պարտավորությունները: Սովորեք, թե ինչ պետք է անձն իմանա, զգա և կատարի ձեր ուսուցման արդյունքում: Աշխատեք ձեր զուգընկերոջ հետ, որպեսզի ձեր խոսքերով պարզությամբ և զորությամբ բացատրեք այդ սկզբունքները:

- **Սովորեք և կիրառեք վարդապետությունը:** Վարդապետությունը դասի հիմքն է: Աղոթքով ուսումնասիրեք սուրբ գրությունները, դասը, գրքույկները, «Մտքեր ուսուցչի համար» բաժինները և միսիոներական գրադարանը` վարդապետությունը խորն ըմբռնելու համար: Գտեք այնպիսի նյութեր, որոնք ամրապնդում են դասերում տրված վարդապետությունը: Հիշողության մեջ պահեք վարդապետությունների սկզբունքների հերթականությունը: Կիրառեք ձեր սովորածը: Ձեր սովորածը գրեք տետրում: Ձեր սովորածով կիսվեք մյուս միսիոներների հետ:

Նշումներ



- **Կազմակերպեք և ամփոփեք այն, ինչ սովորեցնելու եք:** Վարդապետությունը հստակությամբ և հոգևոր ուժով սովորեցնելու համար դասի պլանի տեսքով կազմակերպեք և ամփոփեք այն, ինչ պատրաստվում եք սովորեցնել: Կենտրոնացեք վարդապետության, մկրտության հարցազրույցի հարցերի և դասերի պարտավորությունների վրա: Դասի ձեր պլանը ավելի ընդլայնեք, ընդգրկելով սուրբ գրություններ, հարցեր և օրինակներ: Դրանք պետք է համապատասխանեն ձեր ուսուցման հանդիպումների տևողությանը: Ամեն ունկնդրի համար դուք չպետք է դասի ամբողջովին նոր պլան կազմեք, սակայն պետք է շարունակ շտկեք և հարմարեցնեք դրանք նրանց կարիքներին: Երբ դուք առաջին անգամ դասի պլան եք կազմում, աշխատեք լինել պարզ և հակիրճ: Փորձ ձեռք բերելու հետ մեկտեղ մեծացրեք ձեր դասի պլանը:

- **Կենտրոնացեք կարիքների վրա:** Չնայած ավետարանի վարդապետությունները վերաբերվում են յուրաքանչյուրին, դուք կարող եք ուսուցանման ձեր եղանակները հարմարեցնել ունկնդիրների կարիքներին: Վարդապետությունն ուսումնասիրելիս և դասի պլանը կազմելիս, գտեք այն բնագավառները, որոնք դուք կարող եք հարմարեցնել ապագա կարիքներին: Վերանայեք և փոփոխեք այդ ճշգրտումները, երբ հատուկ հանդիպումների եք պատրաստվում: Մտածեք, թե ինչպիսի կոչեր եք անելու: Կենտրոնացեք վերջնական նպատակի վրա, որն է՝ օգնել ունկնդիրներին ստանալ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը մկրտության և հաստատման միջոցով:

- **Պատրաստվեք պատասխանել հարցերին:** Որպես միսիոներ դուք շատ հարցեր կլսեք: Գրի առեք այդ հարցերը ձեր աշխատանքային տետրում: Ուսումնասիրեք սուրբ գրությունները և այլ նյութեր պատասխաններ գտնելու համար: Աղոթեք հասկանալու համար: Պատասխանները գրի առեք ձեր աշխատանքային տետրում: Ձեր ձեռք բերածով կիսվեք մյուս միսիոներների հետ: Հաճախակի հանդիպող հարցերը և դրանց պատասխանները գրի առեք ձեր տետրի մեջ հետագայում դրանց անդրադառնալու համար:

- **Ուսուցանեք դասը:** Ուսուցանումը զորեղ հնարավորություն է ձեր գիտելիքն ու ունակությունները բարելավելու համար: Սովորելով վարդապետությունն ու կազմելով դասերի պլանը, սովորեցրեք ձեր զուգընկերոջը և մյուս միսիոներներին: Փորձեք նոր բացատրություններ, մոտեցումներ, փորձառություններ, հարցեր և ուղիներ, որոնցով ուրիշներին կարող եք հրավիրել պարտավորությունները կատարել: Խնդրեք նրանց մտքեր արտահայտել և առաջարկություններ կատարել:

- **Գնահատեք ձեր ուսուցումը:** Ուսուցման յուրաքանչյուր փորձից հետո գնահատեք ձեր կատարածը: Արդյո՞ք դուք կենտրոնացել էիք վարդապետության վրա: Արդյո՞ք ունկնդիրներին կոչ արեցիք ապաշխարել, ուխտեր կապել և պարտավորությունները պահել: Արդյո՞ք դուք աշխատեցիք այնպես, որ պատրաստեիք նրանց մկրտությանն ու հաստատմանը: Արդյո՞ք տվեցիք ազդեցիկ հարցեր: Կիսվեցի՞ք ձեր վկայությամբ: Խնդրեցի՞ք ծանոթների անուններ տրամադրել: Ձեր ուսուցումը բարելավելու հետ մեկտեղ փոփոխեք ձեր դասի պլանը:

Նշումներ

Սովորելով դասերը՝ շարունակեք վարդապետության մասին խորը գիտելիք փնտրել: Ակտիվ աշխատեք, որպեսզի ավելի մեծ ուժով սովորեցնեք: Աղոթքով և հավատքով ուսումնասիրելու արդյունքում ձեր գիտելիքն ու վկայությունը կաճեն: Ինչևէ, մի փորձեք սովորեցնել այն ամենը, ինչ գիտեք: Ուղերձը սովորեցրեք հստակ և պարզ, ըստ ունկնդիրների կարիքների, հետևեք Հոգուն և սովորեցրեք այն մասը, որը հասկանալի կլինի ամեն մարդու (տե՛ս ՎևՈւ 84.85):

### Որոշիչ խոսքեր

Մենք զորեղ ուղերձ ունենք առանձնահատուկ բառապաշարով: Այնպես ինչպես բժիշկն է այլ կերպ խոսում ընտանիքի հետ և վիրահատության սենյակում, այդպես էլ դուք պետք է սովորեք խոսել այնպես, որպեսզի նրանք, ովքեր ծանոթ չեն մեր ուղերձին, կարողանան հասկանալ այն, ինչ դուք սովորեցնում եք:

Որպեսզի պատրաստվեք օգնել ուրիշներին՝ հասկանալու անծանոթ բառերը, ուսումնասիրեք հիմնական սահմանումների և տերմինների ցանկը յուրաքանչյուր դասի «Մտքեր ուսուցչի համար» բաժնում: Ծանոթացեք տրված սահմանումներին: Օգտագործեք *Հավատքին Հավատարիմ* ձեռնարկը և Սուրբ Գրքերի Ուղեցույցը այլ բառերի սահմանումները գտնելու համար: Այդ սահմանումները գրի առեք ձեր աշխատանքային տետրում: Այդ սահմանումներով կիսվեք ձեր զուգընկերոջ և ուրիշների հետ, համոզվելու համար, որ դուք հասկանում եք: Եթե այդ սահմանումները մյուսների համար պարզ չեն, վերանայեք դրանք, հիմնվելով ձեր ուսումնասիրած նյութերի վրա:

Ուսուցանելիս, պարզեք, թե արդյոք այդ բառը կամ սկզբունքը անծանոթ է ունկնդրին: Ժամանակ տրամադրեք անծանոթ բառերն ու սկզբունքները բացատրելու համար: Հիշեք, որ պետք է սովորեցնեք հասկանալու համար, որպեսզի դուք և նրանք, ում սովորեցնում եք, սովորեք և միասին ուրախանաք (տե՛ս ՎևՈւ 50:22):

> **Վարժություն. անհատական ուսումնասիրություն**
>
> Բացեք գլուխ 3-ի «Հիսուս Քրիստոսի Ավետարանի Վերականգնման Ուղերձը» դասը: Կարդացեք հիմնական սահմանումների ցանկը «Մտքեր ուսուցչի համար» բաժնում: Դասի մեջ գտեք երեք լրացուցիչ բառ, որոնք կցանկանայիք սահմանել: Հետևեք տրված առաջարկություններին յուրաքանչյուրի սահմանումը տալու համար:

## Ուսումնասիրության մտքեր և առաջարկություններ

Այս բաժնի մտքերից և առաջարկություններից յուրաքանչյուրը ձեր ուսումնասիրության ժամանակն ավելի հատուկ և հզոր կդարձնի: Ձեր ուսումնասիրությունը պլանավորելիս հաշվի առեք հետևյալը.

- Միշտ սկսեք աղոթքից:
- Պլանավորեք ուսումնասիրության այնպիսի վարժություններ, որոնք կկառուցեն Փրկչի հանդեպ ձեր հավատքը և կօգնեն ձեր ժամանակն արդյունավետ օգտագործել:
- Ձեր ուսումնասիրությունը կառուցեք մարդկանց, նրանց կարիքների, մկրտությանը նրանց պատրաստելու, հաստատելու և մինչև վերջ տոկալու վրա: Ուսումնասիրության ձեր պլանը գրեք աշխատանքային տետրում:
- Ուսումնասիրությունը պլանավորեք հետևյալ հարցերի շուրջ. Ի՞նչ եմ ես այսօր սովորեցնելու: Ինչպե՞ս ես կարող եմ պլանավորել իմ ուսուցանումը, որպեսզի լավագույն ձևով օգնեմ նրանց, ում ուսուցանում եմ: Այս բաժնի ո՞ր մտքերն ու առաջարկությունները կարող եմ ներառել իմ ուսումնասիրության մեջ:

Ձեր ուսումնական վարժությունները պլանավորելիս փորձեք ստորև տրված կամ ուրիշներից սովորած մտքերն ու առաջարկությունները:

Նշումներ

### Կիրառենք այն, ինչ սովորում ենք և ապրենք ըստ դրա

- Ձեզ «վերագրեք» այն, ինչ սովորում եք (տե՛ս 1 Նեփի 19.23):
- Նպատակ դրեք ապրելու ըստ ձեր սովորածի:
- Սուրբ գրության հատվածում տրված անունը փոխարինեք ձեր անունով, որպեսզի այն անձնավորեք:
- Ինքներդ ձեզ հարցրեք. «Ինչպե՞ս պետք է ես փոխվեմ իմ սովորածի արդյունքում»: Համապատասխան նպատակներ դրեք:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Ընտրեք հետևյալ վկայակոչումներից որևէ մեկը: Ձեր ընտրած մասը կարդալուց և դրա շուրջ խորհելուց հետո, գտեք երկու-երեք եղանակ ձեր կյանքում այն կիրառելու համար:

- 2 Նեփի 31
- Ալմա 32.26–43
- Մորոնի 7.32–48

Գնահատեք, թե որքան լավ եք դուք ապրում ըստ այն սկզբունքների, որոնք սովորեցնում եք: Ընտրեք մի ճանապարհ, որով կարող եք կատարելագործվել, և դրա հետ կապված ծրագրեր կազմեք:

### Փնտրենք, խորհենք և հիշենք

- Ուշադիր եղեք: Սովորելուց առաջ վարժություններ կատարեք, լոգանք ընդունեք և աղոթեք:
- Սովորեք գրասեղանի կամ սեղանի առաջ, որի վրա կարող եք գրել (մի պառկեք կամ նստեք ձեր անկողնու վրա), դասավորեք ուսումնասիրության նյութերը և միշտ ուշադիր եղեք:
- Աղոթեք և հասկացողություն խնդրեք:
- Ուսումնասիրեք ըստ թեմաների:
- Ինքներդ ձեզ հարցրեք. «Ի՞նչ է ասում հեղինակը: Ո՞րն է հիմնական ուղերձը: Ինչպե՞ս է սա վերաբերվում ինձ»:
- Պատկերացրեք այն, ինչ սովորում եք: Օրինակ, պատկերացրեք, թե ինչ էր նշանակում Ամմոնի համար կանգնել Լամանացիների թագավորի առաջ:
- Ուսումնասիրեք ապրող մարգարեների խոսքերը (միսիոներական թույլատրված գրադարանում կամ Եկեղեցու ամսագրերում):
- Ձեր աշխատանքային տետրի մեջ գրի առեք ձեր հարցերը և օգտագործեք սուրբ գրությունները, վերջին օրերի մարգարեների խոսքերը և ուսումնասիրության այլ նյութերը պատասխաններ գտնելու համար:
- Սուրբ գրության մեկ հատվածը կարող է մի քանի միտք պարունակել: Ընդգծեք կամ նշեք խոսքերը կամ արտահայտությունները, որպեսզի կարողանաք տարբերակել մեկ հատվածի տարբեր մտքերը:
- Ձեր սովորածով կիսվեք մյուս միսիոներների հետ: Կարող եք սովորել, բացատրելով վարդապետությունը կամ սկզբունքը մեկ ուրիշին:
- Նշեք ձեր սուրբ գրությունները և գրառումներ կատարեք դրանցում: Լուսանցքում գրեք սուրբ գրությունների վկայակոչումները, որոնք պարզաբանում են ձեր սովորած հատվածները:
- Անգիր սովորեք սուրբ գրությունների այն հատվածները, որոնք բացատրում կամ հիմնավորում են ձեր սովորեցրած սկզբունքները:

Նշումներ

### Օգտվեք ուսումնասիրության նյութերից

- Օգտագործեք սուրբ գրությունների ՎՕՍ-ի հրատարակչություններում տրված ուսումնասիրության օժանդակ նյութերը (Topical Guide, Bible Dictionary, Joseph Smith Translation, Index to the triple combination, chapter headings, footnotes, and maps):
- Օգտագործեք միսիոներական դասերը, հաստատված միսիոներական գրադարանը, Եկեղեցու ամսագրերը և այս ձեռնարկը:
- Վերանայեք գլուխների վերնագրերը սուրբ գրությունների մեջ: Այս վերանայումը ձեզ կօգնի իմանալ, թե ինչ կարելի է գտնել տվյալ գլխում:
- Օգտագործեք ձեր աշխատանքային տետրը գրի առնելու և կազմակերպելու ձեր սովորածը: Հաճախակի վերանայեք ձեր գրած մտքերը: Կազմակերպեք ձեր տետրն այնպես, որպեսզի հեշտությամբ գտնեք ձեր սովորածը:
- Այս ձեռնարկն օգտագործեք որպես աշխատանքային գիրք: Գրառումների համար հատկացված տեղերում կարող եք գրի առնել ձեր տպավորություններն ու մտքերը:
- Ուսումնասիրեք այս ձեռնարկում թվարկված սուրբ գրությունների հատվածները: Այս ձեռնարկի կամ ձեր աշխատանքային տետրի մեջ գրի առեք ձեր գտած մյուս հատվածները:

### Տեսեք մեծ պատկերը

- Պատկերացում կազմեք, արագ կարդալով գիրքը, գլուխը կամ վերանայելով վերնագրերը: Աշխատեք հասկանալ ենթատեքստը և նախապայմանները:
- Աշխատեք գրել հատվածի հիմնական միտքը մի նախադասությամբ կամ կարճ պարբերությամբ:
- Օգտվեք Աստվածաշնչից և Եկեղեցու պատմության քարտեզներից, աշխարհագրության, հեռավորության, կլիմայի և տարածքի մասին պատկերացում կազմելու համար:
- Վերանայեք իրադարձությունների հերթականությունն ու մշակույթի մասին տեղեկությունը: Կարդացեք պատմական տեղեկությունը Սուրբ Գրքերի Ուղեցույցում և գլուխների և բաժինների ակնարկներում:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Կարդացեք ստորև տրված գրքերի գլուխների ամփոփումները և գրեք մի ակնարկ, նկարագրելով իրավիճակը, հիմնական իրադարձությունները և յուրաքանչյուր գրքի հիմնական վարդապետությունը:

1 Նեփի　　　Մոսիա　　　Գործք

### Բացահայտեք մանրամասները

- Գտեք հիմնական բառերը և հավաստիացեք, որ հասկանում եք, թե ինչ են դրանք նշանակում: Օգտվեք տողատակի ծանոթագրություններից, Սուրբ Գրքերի Ուղեցույցից կամ մեկ այլ բառարանից սահմանումները գտնելու համար: Քննեք մոտ գտնվող բառերը և արտահայտությունները, գտնելու համար հիմնական բառերի իմաստը:
- Գտեք կապող բառերը, օրինակ, *հետևաբար*, և *կրկին*, *այսպիսով*, *ուստի*, և այլն: Այնուհետև տեսեք, թե ինչով են միմյանց հետ կապված նախորդ և հաջորդ պարբերությունները:
- Օգտվեք Սուրբ Գրքերի Ուղեցույցից, տեսնելու համար, թե ինչպես է նույն բառն օգտագործվում մեկ այլ ենթատեքստում կամ ինչպես են մյուս մարգարեները օգտագործում նույն բառը:
- Գտեք անծանոթ բառերը կամ արտահայտությունները, և հավաստիացեք, որ հասկանում եք դրանք:

Նշումներ

#### Նշումներ սուրբ գրություններում

Սուրբ գրություններում նշումներ կատարելը կարող է ձեզ օգնել ավելի խորը մտածել հատվածի կամ ավետարանի վարդապետության մասին: Դուք կարող եք ձեր սուրբ գրություններում տարբեր նշումներ կատարել: Գտեք ձեզ համար աշխատող լավագույն եղանակը: Ստորև տրվում են հրահանգներ սուրբ գրություններում նշումներ կատարելու համար:

- Օգտագործեք մատիտներ կամ գունավոր մարկերներ: Մի օգտագործեք այնպիսի մատիտներ, որոնք հետք են թողնում թղթի հակառակ կողմում:
- Մգացրեք, ընդգծեք, շրջանակի մեջ վերցրեք կամ ուրվագծեք հատվածի մի մասը կամ հատվածների խումբը:
- Խուսափեք չափից շատ նշումներից: Դրա օգուտը կնվազի, եթե դուք չկարողանաք հասկանալ ձեր նշումները չափազանց շատ գրառումների, տողերի և գույների պատճառով:
- Ընդգծեք միայն մի քանի կարևոր բառեր տվյալ հատվածը, բաժինը կամ գլուխը նշելու համար:
- Շրջանակի մեջ վերցրեք կամ ընդգծեք հիմնական բառերը, ապա ուղիղ գծերով իրար միացրեք կապակցված բառերը:
- Երբ մի հատվածում մի քանի կետեր կապված են միմյանց հետ, դրանք համարակալեք էջաեզրում կամ տեքստի մեջ:
- Օգտագործեք ծանուցումները սուրբ գրությունները նշելու և մեկնաբանելու համար:
- Որևէ նշան (օրինակ ստուգման նշան) արեք լուսանցքում այն հատվածների համար, որոնք կարևոր են հիշելու համար:

Սուրբ գրություններում նշումներ կատարելը ձեզ պետք է օգնի կիրառել ձեր սովորածը և սովորեցնել այն ուրիշներին: Մշակեք մի մոտեցում, որը հետևողական կլինի և կօգնի ձեզ իրականացնել միսիոների ձեր նպատակները:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Ո՞ր առաջարկությունը դուք դեռ չեք փորձել: Ընտրեք մի առաջարկություն «Ուսումնասիրության մտքեր և առաջարկություններ» բաժնից, որը կարող եք փորձել անհատական կամ զուգընկերոջ հետ ձեր հաջորդ ուսումնասիրության ժամանակ:

**Հիշեք սա**

- Սովորելու ցանկություն զարգացնելը կարևոր է ձեր փրկության և որպես միսիոներ ձեր հաջողության համար:
- Դուք սովորում եք ավետարանը ուսումնասիրելով, հավատք գործադրելով և Սուրբ Հոգու զորությամբ:
- Սովորելը հաճելի է և շատ օրհնություններ է բերում:
- Անհատական և զուգընկերոջ հետ ամենօրյա ուսումնասիրությունը ամրացնում է ձեր հավատքն ու Հոգով սովորեցնելու ձեր ունակությունը:
- Օգտագործեք ուսումնասիրության բազմազան եղանակներ, որոնք այդ ընթացքը իմաստալից և հաճելի կդարձնեն:

Նշումներ

## Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

### Անհատական ուսումնասիրություն

- Գնահատեք ձեզ հետևյալ կետերով (1=երբեք, 3=երբեմն, և 5=գրեթե միշտ):
  - Ուսումնասիրության ժամանակ ես մտածում եմ այն մարդկանց մասին, ում պետք է սովորեցնեմ:
  - Օրվա ընթացքում ես մտածում եմ առավոտյան սովորածիս մասին:
  - Ուսումնասիրության ժամանակ ինձ մոտ մտքեր են առաջանում, որոնք ես նախկինում չեմ ունեցել:
  - Հոգևոր տպավորություններս և մտքերս ես գրի եմ առնում հատուկ տեղ:
  - Ուսումնասիրության ժամանակ ես քնում եմ:
  - Ես անհամբերությամբ սպասում եմ իմ անհատական ուսումնասիրության ժամերին:
  - Ես անհամբերությամբ սպասում եմ զուգընկերոջ հետ ուսումնասիրության ժամերին:

  Վերանայեք ձեր պատասխանները: Ի՞նչն եք դուք լավ անում: Դուք կուզենայի՞ք, որ ձեր պատասխաններն այլ լինեին: Մեկ-երկու նպատակ դրեք, որոնք կբարձրացնեն ձեր ուսումնասիրության որակը:

- Վերանայեք «Մտածեք այս մասին» խորագրի ներքո տրված հարցերը այս գլխի սկզբում: Ինչպե՞ս են այդ հարցերը օգնում ձեր ուսումնասիրությանը:

- Վերանայեք «Ուսումնասիրության մտքեր և առաջարկություններ» բաժինը: Ընտրեք մեկական առաջարկություն ամեն մի խմբից, որը դուք չեք օգտագործել, և փորձեք այդ մտքերը ձեր անհատական ուսումնասիրության ժամանակ:

- Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 138.1–11: Այս տողերը կարդալիս պատասխանեք հետևյալ հարցերին.
  - Ի՞նչ պետք է աներ Նախագահ Սմիթը իր միտքը բացելու համար:
  - Ի՞նչ էր նա մտածում այն վարդապետության մասին, որի մասին խորհում էր:

- Կարդացեք գիտելիքի սահմանումը Սուրբ Գրքերի Ուղեցույցում և նշված հղումներում: Ձեր աշխատանքային տետրում գրեք այս հարցի պատասխանը. «Ի՞նչ գիտելիք կարող է ինձ օգնել որպես միսիոներ արդյունավետ ծառայելու գործում»:

- Գլուխ 3-ից ընտրեք որևէ վարդապետություն, որը կուզենայիք ավելի լավ հասկանալ: Ձեր աշխատանքային տետրում գրեք այն հարցերը, որոնց պատասխանը կուզենայիք իմանալ: Ուշադիր ուսումնասիրեք վարդապետությունը որոշ ժամանակի ընթացքում (մի քանի օր), և աղոթեք այն ավելի լավ հասկանալու համար: Գրեք այն, ինչ սովորել եք:

- Կարդացեք 1 Նեփի 10.17; 11.1–6: Այս տողերը կարդալիս պատասխանեք հետևյալ հարցին. «Ինչո՞ւ Նեփին կարողացավ իմանալ այն, ինչ գիտեր նրա հայրը»:

### Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Միասին կարդացեք հետևյալ հատվածները: Պատասխանեք «ինչո՞ւ մենք աստվածային լույս պետք է փնտրենք» հարցին:

  ՎևՈւ 11.11–14   Հովհաննես Ը.12   Սաղմոս ԾԺԹ.105

  ՎևՈւ 84.43–47

Նշումներ

- Միասին կարդացեք ստորև տրված մի քանի հատվածներ և քննարկեք այն օրհնությունները, որոնք գալիս են Աստծո խոսքն ուսումնասիրելու արդյունքում: Ո՞ր հատվածները առավել մեծ օգնություն կարող են լինել նրանց համար, ում ուսուցանում եք:

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 10.19 | Ալմա 32.42–43 | ՎևՈւ 130.19 |
| 2 Նեփի 32.3 | Ալմա 37.44–46 | Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Սուրբ Գրքեր», ենթավերնագիր. «սուրբ գրքերի արժեքը», 221–22 |
| Մոսիա 1.6–7 | Ալմա 49.30 | |
| Ալմա 17.2–3 | ՎևՈՒ 90.24 | |

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Ընտրեք մի թեմա միսիոներական դասերից, որը մանրամասն սովորել եք: Կատարեք հետևյալը.
  - Կիսվեք երկու-երեք հիմնական մտքերով, որոնք սովորել եք և որոնք օգտակար կլինեն այդ դասը սովորեցնելիս:
  - Նկարագրեք ուսումնասիրելու ձեր եղանակը, որն օգնեց ձեզ հայտնաբերել այդ մտքերը (ինչպես եք կարդում, ինչ նյութեր եք օգտագործում, ինչ հարցեր եք ուսումնասիրում և այլն):
  - Ցույց տվեք, թե ինչպես եք գրի առնում և ամփոփում ձեր ուսումնասիրության արդյունքները:

  Եթե ժամանակը թույլ է տալիս մի քանի այլ միսիոներների խնդրեք անել նույնը:

- Այս վարժությունը կարելի է անել անհատապես կամ փոքր խմբերով: Միսիոներներին խնդրեք ընտրել ստորև տրված հարցերից մեկը կամ մի քանիսը (կարող եք ինքներդ հարցեր պատրաստել): Նրանց խնդրեք հարցը գրի առնել:
  - Ինչո՞ւ են ընտանիքներն այդքան կարևոր Աստծո ծրագրում:
  - Ինչո՞ւ են մարդիկ փորձություններ ունենում և տառապանքներ կրում:
  - Ո՞րն է Հոգու դերը դարձի գալու ճանապարհին:

  Բացատրեք, որ նրանք ունեն հինգից յոթ րոպե.
  - Գտնելու համար սուրբ գրությունների առնվազն երկու հղում, որոնք պատասխանում են հարցին:
  - Պարզ բացատրություն գրելու, թե ինչու են իրենց ընտրած սուրբ գրությունները պատասխանում տվյալ հարցին:
  - Նկարագրելու համար այն, ինչ իրենք պետք է անեն պատասխանը հիշելու համար:
  - Նկարագրելու համար այն, ինչ իրենք պետք է անեն հարցն ավելի խորն ուսումնասիրելու համար:

  Հրավիրեք մի քանի միսիոներների (կամ յուրաքանչյուր խմբին) կիսվելու իրենց պատասխաններով: Քննարկեք նրանց պատասխանները:

- Միսիոներներին խնդրեք գրել մեկ կամ երկու հարց գլուխ 3-ի դասերից մեկի ավետարանի այն սկզբունքների կամ վարդապետությունների վերաբերյալ, որի պատասխանը նրանք կուզենային գտնել: Հրավիրեք միսիոներներին կիսվել իրենց հարցերով խմբի հետ: Յուրաքանչյուր հարցի համար քննարկեք հետևյալը.
  - Ինչպե՞ս այս հարցի պատասխանը կարող է օրհնել միսիոների կյանքը:
  - Ինչպե՞ս այն կարող է օրհնել ունկնդիրների կյանքը:
  - Ինչպե՞ս կարող է միսիոները գտնել պատասխանը:

Նշումներ

- Մի քանի միսիոներների խնդրեք կիսվել ավետարանի այն սկզբունքով, որն իրենց զուգընկերը սովորեցրել է իրենց: Նրանց խնդրեք բացատրել սկզբունքը և այն, թե ինչպես է զուգընկերը սովորեցրել այն:

- Միսիոներներին բաժանեք զույգերի կամ փոքր խմբերի: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք կարդալ Մորմոնի Գրքից մեկ գլուխ: Յուրաքանչյուր խմբին խնդրեք ընտրել մեկ միտք «Ուսումնասիրության մտքեր և առաջարկություններ» բաժնի խմբերից: Խմբերին խնդրեք կիրառել յուրաքանչյուր առաջարկությունը, երբ միասին կարդում են իրենց գլուխները: Կարդալու և քննարկելու համար տվեք 15–20 րոպե: Թող յուրաքանչյուր խումբը բացատրի իրենց օգտագործած առաջարկությունները, որքանով էին օգտակար դրանք և ինչ իրենք սովորեցին:

- Յուրաքանչյուր միսիոների խնդրեք մտածել սուրբ գրություններից մի պատմության կամ իրադարձության մասին, որը նրանց համար կարևորություն է ներկայացնում (օրինակ, կյանքի ծառի Լեքիի տեսիլքը, Բենիամին թագավորի քարոզը, Լեռան Քարոզը, կամ Քրիստոսի այցը Նեփիացիներին): Միսիոներներին խնդրեք նկարել կամ պատկերել իրենց ընտրած դեպքերը: Երկու կամ երեք միսիոների հրավիրեք կիսվել իրենց նկարներով: Մյուսներին խնդրեք պատմություններ պատմել և կապել դրանք դասերից մեկի վարդապետության հետ: Կարդացեք Մորոնի 10.3 և քննարկեք հոգևոր գիտելիքի մասին խորը մտածելու արժեքը:

## Միսիայի Նախագահը

- Միսիոներներին խնդրեք բերել իրենց աշխատանքային տետրերը հարցազրույցներին: Նրանց խնդրեք ձեզ հետ կիսվել իրենց գրառումներից որևէ մեկով:

- Հարցազրույցների ժամանակ տվեք հետևյալ հարցերը.
  - Ի՞նչ տպավորություններ եք դուք ունեցել սուրբ գրությունների ուսումնասիրության ժամանակ:
  - Ի՞նչ ավետարանական սկզբունք է ձեզ վերջերս սովորեցրել ձեր զուգընկերը:
  - Այս ձեռնարկի ո՞ր բաժինը կամ գլուխն է առավել մեծ օգնություն եղել ձեզ համար վերջին երկու շաբաթների ընթացքում:
  - Ի՞նչ եք դուք անում ձեր անհատական ուսումնասիրության ժամանակ, որը ձեզ օգնում է ավելի լավ սովորել:

- Տարածքային համաժողովների ժամանակ հրավիրեք միսիոներներին կիսվել իրենց փորձով, որն ունեցել են անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրության ժամանակ:

- Տարածքային համաժողովների ժամանակ միսիոներներին հնարավորություն տվեք կիսվել ուսումնասիրության իրենց անձնական մտքերով:

- Միսիոներների հետ կիսվեք անձնական ուսումնասիրության ժամանակ առաջացած մտքերով:

- Հնարավորության դեպքում, միացեք միսիոներներին զուգընկերոջ հետ իրենց ուսումնասիրությունների ժամանակ:

- Հարցազրույցների ժամանակ միսիոներներին հրավիրեք կիսվել միսիոներական որևէ դասի իրենց պլանով: Նրանց հարցրեք, թե ինչ նշանակություն ունեն այդ վարդապետությունները իրենց համար:



# Ի՞նչ եմ ես սովորում և սովորեցնում

Այս գլխի դասերը պարունակում են հիմնական վարդապետությունները, սկզբունքները և պատվիրանները, որոնք պետք է սովորեք, որոնց պետք է հավատաք, սիրեք, ապրեք ըստ դրանց և սովորեցնեք: Դրանք այն բաներն են, որոնք ապրող մարգարեներն ու առաքյալները հրահանգել են սովորեցնել ձեզ: Դրանք այնպես են կազմված, որպեսզի դուք կարողանաք օգնել ուրիշներին հստակորեն հասկանալ Քրիստոսի վարդապետությունները:

Այս գլխի դասերն են՝

- Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման ուղերձը
- Փրկության ծրագիրը
- Հիսուս Քրիստոսի ավետարանը
- Պատվիրանները
- Օրենքներ և արարողություններ

Սովորեցրեք առաջին չորս դասերը մինչև մկրտությունը: Համոզվեք, արդյոք նրանց, ում սովորեցնում եք, պատրաստ են մկրտությանը և հաստատմանը՝ ստանձնելով և պահելով այս դասերում ընդգրկված բոլոր պարտավորությունները:

Լիաժամկետ միսիոներները ղեկավարում են մկրտությունից առաջ դասերի ուսուցումը ծխի միսիոներների և մյուս անդամների օգնությամբ: Մկրտությունից հետո, նոր անդամներին կրկին սովորեցվում են առաջին չորս դասերը, ինչպես նաև «Օրենքներ և արարողություններ»: Ծխի ղեկավարները որոշում են, թե արդյոք ծխի միսիոներները, թե լիաժամկետ միսիոներներն են պատասխանատու այս դասերի ուսուցման համար, և որքան ժամանակ լիաժամկետ միսիոներները պետք է ներգրավված լինեն: Խրախուսեք յուրաքանչյուր նոր անդամի պահել այս դասերում ընդգրկված բոլոր պարտավորությունները:

Դուք պետք է նաև օգտագործեք այս դասերը անհատական և ձեր զուգընկերոջ հետ սովորելիս, շրջանի ժողովներում, և ուսուցման այլ առիթներով: Երբ դուք ուսումնասիրում եք սուրբ գրքերը և ձեր մտքում պահում այս դասերի վարդապետությունները, Հոգին ձեզ ճիշտ պահին կհուշի, թե ինչ պետք է ասեք և անեք ուրիշներին օգնելու՝ այս ուսմունքների ճշմարտացիության մասին վկայություն ստանալու համար:

Նշումներ

*Լեռան Քարոզը*, Կառլ Բլոխ: Բնօրինակը գտնվում է Ֆրեդերիկսբորգ Քնոլ ազգային պատմության թանգարանում, Դանիա: Օգտագործվում է Ֆրեդերիկսբորգյան թանգարանի թույլտվությամբ: Մի բազմացրեք:

Նշումներ

Որպես միսիոներ դուք մեծ պատասխանատվություն եք կրում սովորեցնելու ձեր ողջ սրտով և հոգով: Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը նշել են. «Մեր նպատակն է սովորեցնել վերականգնված ավետարանի ուղերձն այնպես, որպեսզի այն թույլ տա, որ Հոգին առաջնորդի և՛ միսիոներներին, և՛ նրանց, ովքեր ուսուցանվում են: Կարևոր է սովորել այս [դասերի] գաղափարները, բայց դրանք չպետք է ներկայացվեն անգիր: Միսիոները պետք է ազատ զգա Սուրբ Հոգու հուշմամբ օգտագործելու իր սեփական բառերը: Նա չպետք է անգիր արտասանի, այլ պետք է սրտանց խոսի՝ իր իսկ խոսքերով: Նա կարող է հեռանալ դասերի հերթականությունից, տալով այն, ինչ նրան ոգեշնչվում է անել, համաձայն ունկնդրի հետաքրքրությունների և կարիքների: Խոսելով իր իսկ համոզմունքի մասին և իր իսկ խոսքերով, նա պետք է վկայություն բերի իր ուսուցանածի ճշմարտության մասին» (“Statement on Missionary Work,” First Presidency letter, 11 Dec. 2002): Երբ դուք կամ ձեր զուգընկերը սովորում եք այս դասերը և պատրաստվում եք ուսուցանել դրանք, ձեր մտքում միշտ պահեք այս հրահանգները: Աշխատեք սովորեցնել այս դասերի բոլոր վարդապետությունները:

Դուք պետք է ներկայացնեք առաջին երեք դասերից յուրաքանչյուրի լրիվ բովանդակությունը ըստ այն հերթականության, ինչպես որ գրված է, եթե Հոգին այլ բան չի հուշում անել: Մի քանի պատվիրաններ նաև կարելի է ընդգրկել անհրաժեշտության դեպքում կամ ուսուցանել որպես առանձին դասեր:

Յուրաքանչյուր դաս ուրվագծում է մկրտության հարցազրույցի հարցերը, պարտավորությունները և վարդապետությունները, որոնք դուք պետք է սովորեցնեք: Վարդապետությունները սովորեք խորապես: Հետևողականորեն ուշադրության կենտրոնում պահեք օգնելու նրանց, ում սովորեցնում եք՝ պարտավորություններ ստանձնել և պահել դրանք: Օգտագործեք մկրտության հարցազրույցի հարցերը նախապատրաստելու նրանց, ում դուք սովորեցնում եք մկրտության և հաստատման համար: Դասերը պարունակում են նաև գաղափարներ ուսուցման համար: Օգտագործեք այս առաջարկները նախապատրաստումը և ուսուցումն ամրապնդելու համար:

**Մտապահելու դերը**

Մտապահեք սուրբ գրքի հատվածները՝ ուսուցանման ժամանակ օգտագործելու համար: Մտապահեք յուրաքանչյուր միսիոներական դասի վարդապետական կետերի հերթականությունը: Միսիոներները, ովքեր սովորում են երկրորդ լեզու, պետք է կենտրոնացնեն իրենց լեզվի յուրացումը նախապատրաստվելով սովորեցնելու միսիոներական դասերը: Նրանք պետք է մտապահեն բառապաշարը, արտահայտությունները, նախադասության կառուցվածքները և վարդապետության համառոտ դրույթները, երբ դրանք պատահում են դասում, բայց միայն այն բանից հետո, երբ դրանք անձնապես իմաստալից են դարձել: Ամբողջ դասեր անգիր մի սովորեք:

**Սովորեցրեք հստակորեն**

Առաջին երեք դասերի վերջում կա բառացուցակ, որը կարող է անծանոթ լինել նրանց համար, ում դուք ուսուցանում եք: Սովորեք, թե ինչպես բացատրեք այդ բառերը պարզ ձևով: Երբ սովորեցնում եք, արեք այն ամենը, ինչ կարող եք՝ դարձնելով ուղերձը հեշտ հասկանալի:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է ձեզ պատվիրված ուսուցանել:**

Մոսիա 18.18–20 | ՎևՈւ 43.15–16 | ՎևՈւ 52.9

**Ինչո՞ւ դուք պետք է սովորեք դասերի վարդապետությունները:**

Ալմա 17.2–3 | ՎևՈւ 84.85

Նշումներ

# Հիսուս Քրիստոսի Ավետարանի վերականգման ուղերձը



© 1991 Greg K. Olsen. Մի բազմացրեք:

**Ձեր նպատակը**

Սովորեցնելիս նախապատրաստեք ձեր ունկնդիրներին բավարարել մկրտության համար անհրաժեշտ պատրաստության այն աստիճանը, որը ուսուցանվում է Վարդապետություն և Ուխտեր 20.37 հատվածում և մկրտության հարցազրույցի հարցերում: Այն իրականացվում է լավագույն ձևով, երբ հրավիրում եք ձեր ունկնդիրներին ստանձնել և պահել ներքևում նշված պարտավորությունները:

**Մկրտության հարցազրույցի հարցեր**

- Դուք հավատու՞մ եք, որ Աստված մեր Երկնային Հայրն է:
- Դուք հավատու՞մ եք, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է՝ աշխարհի Փրկիչն ու Քավիչը:
- Դուք հավատու՞մ եք, որ Եկեղեցին և Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:
- Դուք հավատու՞մ եք, որ [Եկեղեցու ներկայիս Նախագահը] Աստծո մարգարե է: Ի՞նչ է նշանակում դա ձեզ համար:

**Պարտավորություններ**

- Կկարդա՞ք և կաղոթե՞ք իմանալու համար, թե արդյոք Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է:
- Կաղոթե՞ք իմանալու համար, թե Ջոզեֆ Սմիթը մարգարե է:
- Այս կիրակի մեզ հետ կայցելե՞ք եկեղեցի:
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել մեր հաջորդ հանդիպման համար:
- Այլ պատվիրաններ դաս 4–ից, որոնք դուք կնախընտրեիք ընդգրկել:

## Աստված մեզ սիրող Երկնային Հայրն է

Աստված մեր Երկնային Հայրն է: Մենք Նրա զավակներն ենք: Նա ունի մսից և ոսկորից մարմին, որը փառավորված է և կատարելագործված: Նա սիրում է մեզ: Նա արտասվում է մեզ հետ, երբ մենք տանջվում ենք և հրճվում է, երբ անում ենք այն, ինչ ճիշտ է: Նա ուզում է հաղորդակցվել մեզ հետ և մենք կարող ենք հաղորդակցվել Նրա հետ անկեղծ աղոթքի միջոցով:

Նշումներ

Նա տվել է մեզ երկրի վրա այս փորձառությունը, որպեսզի մենք կարողանանք սովորել և աճել: Մենք կարող ենք ցույց տալ մեր սերը Նրա հանդեպ մեր ընտրություններով և Նրա պատվիրաններին մեր հնազանդությամբ:

Երկնային Հայրն ապահովել է մեզ՝ Իր զավակներին, հաջողակ լինելու և Իր ներկայության մեջ վերադառնալու և ապրելու մի ուղի: Սակայն մենք պետք է անարատ և մաքուր լինենք հնազանդության միջոցով, որպեսզի անենք այդ: Անհնազանդությունը մեզ հեռու է վանում Նրանից: Մեր Հոր ծրագրում կենտրոնական տեղ է գրավում Հիսուս Քրիստոսի Քավությունը: Քավությունը ներառում է Նրա չարչարանքները Գեթսեմանի այգում, ինչպես նաև Նրա չարչարանքը խաչի վրա: Քավության միջոցով մենք կարող ենք ազատվել մեր մեղքերի բեռից և զարգացնել հավատք և ուժ դիմակայելու մեր փորձություններին:

### Հավատք Աստծո հանդեպ

Պարզեք, թե յուրաքանչյուր մարդ, որին դուք սովորեցնում եք, ինչ է հասկանում Աստծո մասին քրիստոնեական հավատալիքների վերաբերյալ: Այսօր շատ մարդիկ կամ գաղափար չունեն Աստծո մասին կամ Աստվածության մասին ունեն տարբեր գաղափարներ:

Մորմոնի Գրքի երկու միսիոներներ՝ Ամոնն ու Ահարոնը սովորեցնում էին մարդկանց, ովքեր չունեին քրիստոնեական պատկերացումներ: Նրանք սովորեցնում էին պարզ ճշմարտություններ և առաջարկում իրենց ունկնդիրներին աղոթել: Լամոնին և նրա հայրը դարձի եկան: Կարդացեք Ալմա 18.24–40 և 22.4–23 և պատասխանեք ներքևում տրված հարցերին:

- Ի՞նչ էին սովորեցնում այս միսիոներներն Աստծո էության մասին:
- Ինչպե՞ս կարող եք հետևել նրանց օրինակին:

### Սուրբ գրքերի ուսումնասիրություն

**Ինչպիսի՞ն է Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի էությունը:**

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 17.36 | 3 Նեփի 27.13–22 | Հովհաննես Գ.16–17 |
| 2 Նեփի 9.6 | Վ և Ու 38.1–3 | Գործք ԺԷ.27–29 |
| Մոսիա 4.9 | ՎևՈւ 130.22 | Հռովմայեցիս Ը.16 |
| 3 Նեփի 12.48 | Մովսես 1.39 | Եբրայեցիս ԺԲ. 9 |
| 3 Նեփի 14.9–11 | Մատթեոս Ե.48 | Ա Հովհաննես Դ. 7–9 |

## Ավետարանն օրհնում է ընտանիքները

Վերականգնված ավետարանն օրհնում և օգնում է ամուսիններին և կանանց, ծնողներին և երեխաներին, երբ նրանք ջանում են զարգացնել ավելի սերտ հարաբերություններ և հոգևոր ուժ իրենց ընտանիքներում: Այս օրհնությունները մատչելի են այժմ և հավերժության մեջ: Հիսուս Քրիստոսի ավետարանն ապահովում է օգնություն առկա մտահոգությունների և դժվարությունների համար:

Քանի որ ընտանիքները կարգված են Աստծո կողմից, դրանք ամենակարևոր հասարակական միավորներն են ժամանակի և հավերժության մեջ: Աստված հիմնել է ընտանիքներ երջանկություն բերելու Իր զավակներին, թույլ տալու նրանց սովորել ճիշտ սկզբունքներ սիրո մթնոլորտում և պատրաստել նրանց հավերժական կյանքի համար: Սովորելու, սովորեցնելու Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները կիրառելու համար, տունը լավագույն վայրն է: Տունը, որը հիմնված է ավետարանի սկզբունքների վրա, կլինի ապաստանի և ապահովության վայր: Այն կլինի մի վայր, որտեղ կարող է բնակվել Տիրոջ Հոգին, օրհնելով ընտանիքի անդամներին խաղաղությամբ, ուրախությամբ և երջանկությամբ: Բոլոր դարերում մարգարեների միջոցով՝ ներառյալ մերը, Աստված բացահայտել է անհատների և ընտանիքների համար երջանկության Իր ծրագիրը:

## Երկնային Հայրն Իր ավետարանը հայտնի է դարձնում յուրաքանչյուր ժամանակաշրջանում

Նշումներ

Կարևոր մի ուղի, որով Աստված ցույց է տալիս Իր սերը մեր հանդեպ, մարգարեներ կանչելն է, որոնց տրվում է քահանայություն՝ Իր զավակների փրկության համար Աստծո անունից գործելու մարդուն տրվող զորություն և իշխանություն: Մարգարեները սովորում են Հիսուս Քրիստոսի ավետարանը հայտնության միջոցով: Նրանք իրենց հերթին սովորեցնում են ավետարանն ուրիշներին և վկայում Հիսուս Քրիստոսի մասին՝ որպես Փրկիչ և Քավիչ: Մարգարեների ուսմունքները գտնվում են սրբազան գրքերում, որոնք կոչվում են սուրբ գրքեր:

Այս կյանքում մեզ համար երջանիկ լինելու և Նրա մոտ վերադառնալու և ապրելու մեր Երկնային Հոր ծրագիրը կոչվում է Հիսուս Քրիստոսի ավետարան, և այդ ծրագրի կենտրոնում Հիսուսի Քավությունն է: Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք ստանալ հավերժական կյանք, եթե գործադրենք հավատք առ Հիսուս Քրիստոս, ապաշխարենք, ընկղմամբ մկրտվենք՝ մեղքերի թողության համար, ստանանք Սուրբ Հոգու պարգևը և համբերենք մինչև վերջ: «Այս է ճանապարհը. և չկա ոչ մի այլ ճանապարհ, ոչ էլ անուն՝ տրված երկնքի տակ, որով մարդ կարողանա փրկվել Աստծո արքայությունում: Եվ այժմ, ահա, այս է Քրիստոսի վարդապետությունը» (2 Նեփի 31.21): Բոլոր մարդիկ ունեն ազատ կամքի պարգևը, որը ներառում է ազատություն՝ ընդունելու կամ մերժելու մարգարեների և առաքյալների կողմից ուսուցանվող ավետարանը: Նրանք, ովքեր ընտրում են հնազանդվել՝ օրհնվում են, բայց նրանք, ովքեր անտեսում են, մերժում կամ փոխում ավետարանը, չեն ստանում Աստծո կողմից խոստացված օրհնությունները:

Երբ մարդիկ ընտրում են անտեսել, չհնազանդվել կամ փոխել որևէ ավետարանական սկզբունք կամ արարողություն, երբ նրանք մերժում են Տիրոջ մարգարեներին կամ երբ չեն համբերում մինչև վերջ, նրանք հեռանում են Աստծուց և սկսում ապրել հոգևոր խավարում: Ի վերջո դա հասցնում է մի վիճակի, որը կոչվում է ուրացություն: Երբ համատարած ուրացություն է տեղի ունենում Աստված վերցնում է ավետարանը սովորեցնելու և արարողությունները սպասավորելու Իր քահանայության իշխանությունը:



Կան աստվածաշնչյան պատմության բազմաթիվ արձանագրված դեպքեր, որտեղ Աստված խոսում է մարգարեների հետ և դրանք պատմում են նաև ուրացության բազմաթիվ դեպքեր: Աստված ցույց է տվել Իր սերը Իր զավակների հանդեպ կանչելով մեկ այլ մարգարեի և տալով նրան քահանայության իշխանություն կրկին վերականգնելու և ուսուցանելու Հիսուս Քրիստոսի ավետարանը: Ըստ էության մարգարեն գործում է որպես խնամակալ՝ այստեղ երկրի վրա վերահսկելու Աստծո ընտանիքը: Մարգարեների պատասխանատվությամբ ղեկավարվող այդպիսի ժամանակահատվածները կոչվում են ժամանակաշրջաններ:

Աստված հայտնի է դարձրել Հիսուս Քրիստոսի ավետարանն Ադամին և տվել նրան քահանայության իշխանություն: Ադամն առաջին մարգարեն էր երկրի վրա: Հայտնությամբ Ադամն իմացավ Հայր Աստծո, Նրա Որդի Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ մարդկության ճիշտ փոխհարաբերության մասին, Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության, ավետարանի առաջին սկզբունքների և արարողությունների մասին: Ադամն ու Եվան սովորեցրեցին այս ճշմարտություններն իրենց զավակներին և հորդորեցին նրանց հավատք զարգացնել և ապրել

Նշումներ

ավետարանով իրենց կյանքի բոլոր ժամանակներում: Ադամին հետևեցին ուրիշ մարգարեներ, բայց ժամանակի ընթացքում Ադամի սերունդն ուրացավ ավետարանը և ընկավ ուրացության մեջ, ընտրելով լինել ոչ արդարակյաց:

Այսպիսով, սկսվեց մարգարեական ժամանակաշրջանների ձևը, որից բաղկացած է Հին Կտակարանում արձանագրված պատմության մեծ մասը: Երկնային Հայրն Իր ավետարանը հայտնում էր մարգարեներին ուղիղ հաղորդակցության միջոցով, ինչպես օրինակ՝ Նոյին, Աբրահամին և Մովսեսին: Յուրաքանչյուր մարգարե կանչվում է Աստծո կողմից՝ սկսելու ավետարանի նոր ժամանակաշրջան: Այս մարգարեներից յուրաքանչյուրին Աստված շնորհում էր քահանայության իշխանություն և բացահայտում հավերժական ճշմարտություններ: Դժբախտաբար, յուրաքանչյուր ժամանակաշրջանում մարդիկ ի վերջո օգտագործում էին իրենց ազատ կամքը՝ մերժելով ավետարանը և հետո ուրացության մեջ ընկնում:

**Մարգարեներ**

Պարզեք թե այն մարդը, որին սովորեցնում եք, ինչպես է ընդունում մարգարեներին: Որոշ մշակույթներում կան մարդիկ, ովքեր հավատում են, որ կան սուրբ կամ ոգեշնչված մարդիկ, ովքեր ստանում են ինչ որ առաջնորդություն և ուղղություն Աստվածությունից: Սակայն ոչ բոլոր ոգեշնչված մարդիկ են, որ Աստծո մարգարեներ են, ըստ վերականգնված ավետարանի սահմանման: Հստակորեն բացատրեք, որ Աստված հիմնում է Իր արքայությունը երկրի վրա՝ կանչելով մարգարե նոր ժամանակաշրջան հիմնադրելու համար: Նա տալիս է այդ մարգարեին քահանայության իշխանություն: Հետո մարգարեն օգնում է մարդկանց հասկանալ Աստվածության հետ իրենց փոխհարաբերությունը, ներառյալ, թե ինչպես ստանալ հավերժական կյանք Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով:

Ձեզ համար կարող է զարմանալի թվալ, թե ինչպես կարող են ավետարանական ժամանակաշրջանները կարևոր լինել, երբ ուսուցանում ենք մարդկանց, ովքեր չունեն քրիստոնեական ծագում կամ մշակույթ: Բայց դուք կտեսնեք, որ համառոտ պատմելով ավետարանական ժամանակաշրջանների պատմությունը, դուք կարող եք օգնել մարդկանց հասկանալ, որ Աստված սիրում է Իր զավակներին և որ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյանս:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Մարգարեներ**

| | | |
|---|---|---|
| Հակոբ 4.4,6<br>Մոսիա 8.13–18 | Գործք Ժ. 34–43 | Ամովս Գ. 7 |

**Տնտեսություններ**

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 136.36–38<br>Մովսես 5.4–12, 55–59 | Մովսես 8.19–30 | Սուրբ Գրքերի Ուղեցույց՝ «Տնտեսություններ» |

## Փրկչի երկրային ծառայությունը

Հիսուս Քրիստոսի ծնունդից հարյուրավոր տարիներ առաջ մարդիկ կրկին ընկան ուրացության մեջ: Բայց երբ Փրկիչը սկսեց Իր մահկանացու ծառայությունը, Նա կրկին հիմնեց Իր Եկեղեցին երկրի վրա:

Երկնային Հայրը երկիր ուղարկեց Իր Որդուն, քավելու ողջ մարդկության մեղքերը և հաղթելու մահին. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը որ իր միածին Որդին տվեց. . . որ աշխարհը նրանով փրկվի»: (Հովհ. Գ.16–17) Մեր Երկնային Հայրն ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին Իր չարչարանքի միջոցով Իր վրա վերցնելու բոլորի մեղքերը, ովքեր երբևէ կապրեն այս աշխարհում և հաղթելու ֆիզիկական մահին: Փրկիչը կատարեց մի անսահման

Նշումներ

զոհաբերություն, որպեսզի, եթե մենք հավատանք Նրան, ապաշխարենք, մկրտվենք, ստանանք Սուրբ Հոգին և դիմանանք մինչև վերջ, կարողանանք ներում ստանալ մեր մեղքերին և մտնել ու հետևել այն ուղուն, որը կտանի մեզ դեպի հավերժական կյանք Աստծո ներկայության մեջ: (տե՛ս 2 Նեփի 31.13–21)



Իր երկրային ծառայության ընթացքում Փրկիչը սովորեցրեց Իր ավետարանը և գործեց բազմաթիվ հրաշքներ: Նա կանչեց տասներկու մարդկանց լինելու Իր Առաքյալները և դրեց Իր ձեռքերը նրանց գլխին տալով քահանայության իշխանություն: Նա կազմակերպեց Իր Եկեղեցին, իրագործեց մարգարեությունը և մերժվեց ու խաչվեց: Ամենակարևորը, Նա ավարտի հասցրեց Քավությունը: Աստծո Որդին՝ Տեր Հիսուս Քրիստոսը, ավարտեց այն բոլորը, ինչի համար Նրա Երկնային Հայրն ուղարկել էր Նրան կատարել:

Նախքան Փրկչի մահն ու հարությունը, Նա Իր Առաքյալներին Իր ավետարանը սովորեցնելու, փրկության արարողությունները կատարելու և Իր Եկեղեցին աշխարհում հիմնադրելու իշխանություն տվեց:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| | | |
|---|---|---|
| Հավատո Հանգանակներ 1.5 | Ղուկաս Զ.13 | Եբրայեցիս Ե.4 |
| Մատթեոս Ժ.1–10 | Հովհաննես ԺԵ.16 | |

## Մեծ ուրացություն

Հիսուս Քրիստոսի մահից հետո, ամբարիշտ մարդիկ հալածեցին Առաքյալներին և Եկեղեցու անդամներին և սպանեցին նրանցից շատերին: Առաքյալների մահվան հետ քահանայության բանալիները և նախագահող քահանայության իշխանությունը վերցվեցին երկրի վրայից: Առաքյալները ավետարանի վարդապետությունները պահել էին մաքուր և պահպանել էին Եկեղեցու անդամների արժանավորության կարգն ու չափանիշները: Առանց Առաքյալների, ժամանակի ընթացքում վարդապետությունները աղավաղվեցին և անթույլատրելի փոփոխություններ կատարվեցին Եկեղեցու կազմակերպության և քահանայության արարողությունների մեջ, ինչպես օրինակ՝ մկրտությունը և Սուրբ Հոգու պարգևը շնորհելը:

Առանց հայտնության և քահանայության իշխանության սուրբ գրքերը և Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներն ու արարողությունները մեկնաբանելիս, մարդիկ ապավինում էին մարդկային իմաստությանը: Կեղծ գաղափարները սովորեցվում էին որպես ճշմարտություն: Հայր Աստծո, Նրա Որդի Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու հատկանիշների և էության վերաբերյալ գիտելիքի մեծ մասը կորավ: Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգու պարգևի վերաբերյալ վարդապետությունները աղավաղվեցին կամ մոռացվեցին: Քրիստոսի Առաքյալներին տրված քահանայության իշխանությունը այլևս գոյություն չուներ երկրի վրա: Այս ուրացությունն ի վերջո հանգեցրեց բազմաթիվ եկեղեցիների առաջացմանը:

Հոգևոր խավարի դարերից հետո ճշմարտություն որոնող տղամարդիկ և կանայք բողոքեցին առկա կրոնական կարգերի դեմ: Նրանք հասկացան, որ ավետարանի շատ վարդապետություններ և արարողություններ փոխվել էին կամ կորել: Նրանք ավելի մեծ հոգևոր լույսի էին ձգտում

Նշումներ

և շատերը խոսում էին ճշմարտության վերականգնման մասին: Բայց նրանք չէին պնդում, որ Աստված է կանչել իրենց լինելու մարգարե: Ընդհակառակը, նրանք փորձում էին փոխել ուսմունքներն ու կարգերը, որ նրանք համարում էին, որ փոփոխվել էին կամ աղավաղվել: Նրանց ջանքերը բերեցին Բողոքական բազմաթիվ եկեղեցիների կազմավորմանը: Բարեփոխումը առաջացրեց ավելի մեծ շեշտադրում կրոնական ազատության վրա, որը ճանապարհ բացեց վերջնական Վերականգնման համար:

Փրկչի Առաքյալները կանխագուշակել էին համընդհանուր ուրացության մասին: Նրանք նաև կանխագուշակել էին, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը և Նրա Եկեղեցին կրկին կվերականգնվեն երկրի վրա:

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 13 | Գործք Ի.28–30 | Սուրբ Գրքերի Ուղեցույց՝ «Ուրացություն» |
| 2 Նեփի 26.20–21 | Գաղատացիս Ա.6–9 | *Հավատքին հավատարիմ,* «Ուրացուցություն», էջ 13–14 |
| 2 Նեփի 28 | Բ Թեսաղոնիկեցիս Բ. 1–12 (ՋՍԹ հատվածներ 2, 3, 7–9) | *Our Search for Happiness,* pages 23–32 |
| 4 Նեփի 1.27 | Ա Տիմոթեոս Դ.1–3 | *Jesus the Christ,* գլուխ 40, “The Long Night of Apostasy |
| ՎևՈւ 86.1–3 | Բ Տիմոթեոս Դ.3–4 | |
| Մատթեոս ԻԴ. 9–11 | Բ Պետրոս Բ.1–2 | |
| Մարկոս ԺԲ.1–9 | Ամովս Ը.11–12 | |
| Գործք Գ.19–21 | | |

## Մեծ Ուրացություն

Ունկնդիրները պետք է հասկանան, որ համընդհանուր ուրացություն է տեղի ունեցել Հիսուս Քրիստոսի և Նրա Առաքյալների մահից հետո: Եթե ուրացություն տեղի ունեցած չլիներ, չէր լինի նաև Վերականգնման անհրաժեշտություն: Ինչպես ադամանդը, երբ դրվում է սև թավշի վրա ավելի փայլուն է թվում, այնպես էլ Վերականգնումը ցնցող հակադրության մեջ է Մեծ Ուրացության սև ֆոնի վրա: Առաջնորդվելով հոգով, սովորեցրեք ունկնդիրներին Մեծ Ուրացության մասին մանրամասների այնպիսի մակարդակով, որը համապատասխանում է նրանց կարիքներին և հանգամանքներին: Ձեր նպատակն է օգնել նրանց հասկանալ Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման անհրաժեշտությունը:

### Կարևոր կետեր

- Հիսուս Քրիստոսի Եկեղեցին կառուցված է առաքյալների և մարգարեների հիմքի վրա: (տե՛ս Եփեսացիս Բ.19–20, Դ.11–14) Այս առաջնորդները ունեն աստվածային քահանայության իշխանություն: Նրանք հայտնության միջոցով են ղեկավարում Եկեղեցու գործերը: Նրանք պահպանում են վարդապետության մաքրություն, լիազորում են արարողությունների սպասավորումը և կանչում են և ուրիշներին շնորհում քահանայության իշխանություն:
- Մարդիկ մերժեցին և սպանեցին Հիսուս Քրիստոսին և Առաքյալներին (տե՛ս Մատթեոս ԻԴ.9, 1 Նեփի 11.32–34, 2 Նեփի 27.5): Առաքյալների մահվան հետ վերացավ նախագահող քահանայության իշխանությունը: Հետևաբար, այլևս գոյություն չուներ Սուրբ Հոգին շնորհելու կամ այլ փրկարար արարողություններ կատարելու իշխանություն: Հայտնությունը դադարեց և վարդապետությունն աղավաղվեց:
- Նույնիսկ մինչև Առաքյալների մահը վարդապետությունների վերաբերյալ ծագեցին բազմաթիվ հակասություններ: Հռոմեական կայսրությունը, որը սկզբում հալածում էր քրիստոնյաներին, հետագայում ընդունեց քրիստոնեություն: Կարևոր կրոնական հարցերը լուծվում էին խորհուրդների միջոցով: Փրկչի կողմից ուսուցանված պարզ վարդապետություններն ու արարողությունները քննարկվում էին, փոխվում՝

Նշումներ

հաստատելու աշխարհիկ փիլիսոփայություններ (տե՛ս Եսայիա ԻԴ.5): Նրանք փոխում էին սուրբ գրքերի բովանդակությունը դրանցից հանելով պարզ և արժեքավոր վարդապետություններ (1 Նեփի 13.26–24): Նրանք ստեղծում էին դավանանքներ կամ հավատքի դրույթներ, որոնք հիմնված էին կեղծ և փոփոխվող վարդապետությունների վրա (տե՛ս Ջոզեֆ Սմիթ – Պատմություն): Հպարտության պատճառով, ոմանք ձգտում էին ազդեցիկ պաշտոնների (տե՛ս Գ Հովհաննես Ա.9–10): Մարդիկ ընդունում էին այս կեղծ գաղափարները և պատվում կեղծ ուսուցիչներին, ովքեր ավելի շուտ սովորեցնում էին հաճելի վարդապետություններ, քան աստվածային ճշմարտություն (տե՛ս Բ Տիմոթեոս Դ.3–4):

- Պատմության ընթացքում շատերն են անկեղծորեն հավատացել կեղծ դավանանքների և վարդապետությունների: Նրանք պաշտել են համաձայն այն լույսի, որ ունեցել են, և ստացել են պատասխան իրենց աղոթքներին: Սակայն նրանք ճշմարտությունից հեռու են պահվել, որովհետև չեն իմացել որտեղ գտնել այն (ՎևՈւ 123.12):
- Հետևաբար անհրաժեշտ էր վերականգնում և ոչ թե բարեփոխում: Պետրոս Առաքյալից սկսած քահանայության իշխանությունը չշարունակվեց անընդհատ հաջորդականության գծով: Բարեփոխել նշանակում է փոխել այն, ինչ գոյություն ուներ, վերականգնել նշանակում է իր սկզբնական ձևով ետ բերել ինչ որ բան: Այսպիսով Մեծ Ուրացությունը հաղթահարելու համար քահանայության իշխանության վերականգնումը աստվածային սուրհանդակների միջոցով միակ հնարավոր ուղին էր:

## Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը Ջոզեֆ Սմիթի միջոցով

Երբ բարեբար պայմաններ էին, Երկնային Հայրը ևս մեկ անգամ սիրով հասավ Իր զավակներին: Նա կանչեց Ջոզեֆ Սմիթ անունով մի երիտասարդի որպես մարգարե: Նրա միջոցով վերականգնվեց Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը երկրի վրա:

Ջոզեֆ Սմիթն ապրում էր Միացյալ Նահանգներում, որն այդ ժամանակ հավանաբար միակ երկիրն էր, որն ուներ կրոնական ազատություն: Միացյալ Նահանգների արևելյան շրջաններում մեծ կրոնական հուզումների մի ժամանակաշրջան էր: Նրա ընտանիքի անդամները խորապես կրոնասեր էին և անընդհատ որոնում էին ճշմարտությունը: Բայց շատ քահանաներ պնդում էին, որ ունեն ճշմարիտ ավետարանը: Ջոզեֆը ցանկանում էր «իմանալ թե աղանդներից որն էր ճիշտ» (Ջոզեֆ Սմիթ– Պատմություն 1.18): Աստվածաշունչը սովորեցնում էր, որ կար «մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն» (Եփեսացիս Դ.5): Ջոզեֆը հաճախում էր տարբեր եկեղեցիներ, բայց շփոթության մեջ էր, թե որ եկեղեցուն միանար: Ավելի ուշ նա գրեց.

«Այնքան մեծ էր խառնաշփոթությունն ու պայքարը տարբեր աղանդների միջև, որ այնպիսի երիտասարդ մի անձնավորության համար ինչպիսին ես էի, անհնարին էր. . . մի որոշակի եզրակացության գալ, թե ով էր ճիշտ և ով էր սխալ. . . Խոսքերի և հակասական կարծիքների այդ պատերազմի մեջ ես հաճախ ասում էի ինքս ինձ. Ի՞նչ անել: Այս բոլոր խմբերից ո՞րն է ճիշտը կամ մի՞թե բոլորը միասին սխալ են: Եթե նրանցից մեկը ճիշտ է, ո՞րն է դա և ինչպե՞ս կարող եմ իմանալ այդ» (Ջոզեֆ Սմիթ– Պատմություն 1.8,10):

Երբ Ջոզեֆը որոնում էր ճշմարտությունը տարբեր հավատքների մեջ, առաջնորդության համար նա դիմեց Աստվածաշնչին: Նա կարդաց. «Եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի թող խնդրի Աստծանից, որ ամենքին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան» (Հակոբոս Ա.5): Այս հատվածի պատճառով Ջոզեֆը որոշեց հարցնել Աստծուց, թե ինչ պետք է աներ: 1820թ. գարնանը նա գնաց մոտակա ծառերի պուրակը և ծնկի իջավ աղոթելու: Նա նկարագրում է իր զգացումները.

«Ես տեսա արևի պայծառությունից ուժեղ լույսի մի սյուն ուղիղ իմ գլխավերևում, որն աստիճանաբար իջավ մինչև ընկավ ինձ վրա. . . Երբ լույսն ընկավ ինձ վրա, ես տեսա երկու Անձնավորությունների, որոնց պայծառությունն ու փայլը վեր են ամեն նկարագրությունից,

Նշումներ

կանգնելով վերևում՝ օդի մեջ: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, կոչելով ինձ անունով և ասաց, ցույց տալով մյուսին. *Այս է Իմ Սիրելի Որդին: Լսիր Նրան*» (Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.16–17):



Այս տեսիլքում Հայր Աստվածն ու Իր Որդին՝ Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին: Փրկիչն ասաց Ջոզեֆին չմիանալ եկեղեցիներից ոչ մեկին, քանի որ դրանք «բոլորը սխալ էին» և «բոլոր նրանց դավանանքները նողկալի են»: Նա նշեց. «Նրանք իրենց շրթունքներով են մոտենում ինձ, բայց նրանց սրտերը հեռու են ինձանից: Որպես վարդապետություններ նրանք սովորեցնում են մարդկանց պատվիրանները, ունենալով աստվածային երևույթ, սակայն նրանք ուրանում են Աստծո զորությունը» (Ջոզեֆ Սմիթ – Պատմություն, 1.19): Չնայած բազմաթիվ լավ մարդիկ հավատում էին Քրիստոսին և փորձում հասկանալ և սովորեցնել Նրա ավետարանը, նրանք չունեին ճշմարտության լրիվությունը կամ քահանայության իշխանություն՝ մկրտելու և կատարելու մյուս փրկարար արարողությունները: Նրանք ժառանգել էին ուրացության մի վիճակ, քանի որ յուրաքանչյուր սերունդ կրում էր անցած նախորդ սերնդի ազդեցությունը, ներառյալ այն փոփոխությունները, որոնք արվել էին վարդապետությունների և արարողությունների մեջ, ինչպես օրինակ մկրտությունը: Ինչպես Աստված արել էր Ադամի, Նոյի, Աբրահամի, Մովսեսի և մյուս մարգարեների հետ, Նա կանչեց Ջոզեֆ Սմիթին լինելու մարգարե, որի միջոցով ավետարանի լրիվությունը վերականգնվեց երկրի վրա:

Հոր և Որդու հայտնվելուց հետո, ուրիշ երկնային սուրհանդակներ կամ հրեշտակներ ուղարկվեցին Ջոզեֆ Սմիթի և նրա ընկերոջ՝ Օլիվեր Քաուդերիի մոտ: Հովհաննես Մկրտիչը հայտնվեց և շնորհեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Ահարոնյան Քահանայություն, որը ներառում է մկրտության արարողություն կատարելու իշխանությունը: Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը (Քրիստոսի առաջին Առաքյալներից երեքը) հայտնվեցին և շնորհեցին Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Մելքիսեդեկյան Քահանայություն՝ վերականգնելով նույն իշխանությունը, որը տրված էր Քրիստոսի հնագույն Առաքյալներին: Քահանայության այս իշխանությամբ Ջոզեֆ Սմիթին հրահանգվեց կրկին կազմակերպել Հիսուս Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա: Նրա միջոցով Հիսուս Քրիստոսը կանչեց տասներկու Առաքյալներ:

Այն ժամանակը, որում ապրում ենք մենք, աստվածաշնչյան մարգարեների կողմից կոչվում են վերջին օրեր, ժամանակակից օրեր կամ ժամանակների լրության ժամանակաշրջան: Դա հենց Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին նախորդող ժամանակահատվածն է: Ահա թե ինչու Եկեղեցին անվանվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:

Այսօր Եկեղեցին ղեկավարվում է մարգարեի կողմից: Այս մարգարեն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահը, Ջոզեֆ Սմիթի իրավահաջորդն է: Նա և ներկա Առաքյալները Ջոզեֆ Սմիթի միջոցով կարգումների չընդհատվող շղթայով հետագծում են իրենց իշխանությունը մինչև Հիսուս Քրիստոսը:

### Անգիր սովորեք Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.16–17 համարները

Անգիր սովորեք Հորը և Որդուն տեսնելու Ջոզեֆ Սմիթի նկարագրությունը (Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.16–17), և միշտ պատրաստ եղեք նկարագրել Առաջին Տեսիլքը՝ օգտագործելով նրա իսկ խոսքերը: Մի շտապեք այդ անելիս: Անկեղծ վկայություն բերեք, որ գիտեք, որ այն ճիշտ է: Մի վարանեք բացատրել, թե ինչպես եք իմացել դրա ճշմարտացիության մասին: Առաջարկեք ձեր զուգընկերոջն անել նույնը:

Նշումներ

**Բերեք վկայություն**

Միսիոներական պարտականության կարևոր մասն է կազմում ներկա մարգարեի և Եկեղեցու Նախագահի մասին վկայություն բերելը:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 3 | Եփեսացիս Դ.5 | Գրքույկ՝ Ջոզեֆ Սմիթ Մարգարեի Վկայությունը |
| ՎևՈւ 112.30 | Հակոբոս Ա.5 | |
| Եփեսացիս Ա.10 | | |

## Մորմոնի Գիրքը՝ եվս Մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին



Գիտենալով, որ կասկածը, անհավատությունը և տեղեկությունների խեղաթյուրումը կմնան խավարի դարերից հետո, մեր սիրառատ Երկնային Հայրն առաջ բերեց Աստվածաշնչի նման սուրբ գրքի մի հնագույն հատոր, որը պարունակում է Հիսուս Քրիստոսի հավիտենական ավետարանի լրիվությունը: Սուրբ գրքի այս հատորը տալիս է համոզիչ ապացույց, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո ճշմարիտ մարգարեն է: Այդ հիշատակարանը Մորմոնի Գիրքն է՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին:

Ջոզեֆ Սմիթն առաջնորդվեց Մորոնի անունով երկնային մի սուրհանդակի կողմից դեպի մի բլուր, որտեղ ոսկե թիթեղները թաքցված էին եղել դարեր շարունակ: Այդ ոսկե թիթեղները պարունակում էին մարգարեների գրվածքները՝ տալով Աստծո և Ամերիկաների հնադարյան բնակիչների փոխհարաբերությունների մասին մի պատմություն: Ջոզեֆ Սմիթը թարգմանեց այդ թիթեղների բովանդակությունն Աստծո զորությամբ: Մորմոնի Գրքի մարգարեները գիտեին Փրկչի առաքելության մասին և սովորեցնում էին Նրա ավետարանը: Իր հարությունից հետո, Քրիստոսը հայտնվեց այդ ժողովրդին: Նա սովորեցրեց նրանց Իր ավետարանը և հիմնեց Իր Եկեղեցին: Մորմոնի Գիրքն ապացուցում է, որ Աստված իսկապես ոգեշնչում է մարդկանց և կանչում նրանց իր սուրբ գործին ինչպես այս դարում և այս սերնդում, այնպես էլ հին սերունդներում (ՎևՈւ 20.11): Իմանալու համար, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, մարդ պետք է կարդա, խորհի և աղոթի նրա մասին: Ճշմարտության ազնիվ որոնողը շուտով կսկսի զգալ, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է:

Մորմոնի Գիրքը կարդալը, խորհելը և դրա վերաբերյալ աղոթելը էական է լիակատար դարձի համար: Նրանք, ովքեր սկսում են կարդալ Մորմոնի Գիրքն առաջին անգամ, կատարեք այդ կարևոր քայլերը, որպեսզի իմանաք, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է և որ ճշմարիտ Եկեղեցին վերականգնվել է երկրի վրա:

Դաս 1. Վերականգնում

Նշումներ

## Օգտագործեք Մորմոնի Գիրքը՝ հաստատելու վերականգնման ճշմարտությունը

Հետևյալը մի օրինակ է, թե դուք ինչ կարող եք ասել, երբ ներկայացնում եք Մորմոնի Գիրքը.

«Աստված սիրում է Իր զավակներին, հետևապես, Նա տվել է ճշմարտությունը հաստատելու մի ուղի, այն ամենի մասին, ինչ մենք ասացինք: Դա Մորմոնի Գիրքն է: Եթե խնդրեինք չէի՞ք կարդա գրքի նախաբանի վերջին երկու պարբերությունները»: Եթե Մորմոնի Գրքի ներկայիս թարգմանության մեջ չի ընդգրկվել նախաբանը, ապա կարդացեք Մորմոնի Գրքի անգլերեն տարբերակի նախաբանը և համառոտ ներկայացրեք այդ պարբերությունները:

Խմամբով բացատրեք երկու պարբերություններում պարունակվող յուրաքանչյուր գաղափարի իմաստը և առաջարկեք ունկնդրին հանձն առնել կարդալ Մորմոնի Գրքից հատվածներ և կիրառել այս երկու պարբերություններում նկարագրվող սկզբունքները:

---

Երբ ներկայացնում եք Մորմոնի Գիրքը որևէ անձնավորության, օգտակար կլինի ցույց տալ նրան մի օրինակ, հակիրճ ներկայացնել բովանդակությունը և կիսվել մեկ կամ երկու հատվածներով, որոնք անհատապես իմաստալի են ձեզ կամ կարող են իմաստալի լինել նրա համար:

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը | ՎևՈւ 1.17–23 | Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.27–67 |
| Մորմոնի Գրքի նախաբան, պարբերություններ 1–7 | ՎևՈւ 20.5–12 | |

## Աղոթեք Սուրբ Հոգու միջոցով՝ ճշմարտությունն իմանալու համար

Վերականգնման ուղերձը կամ ճիշտ է կամ ոչ: Մենք կարող ենք իմանալ, որ այն ճիշտ է Սուրբ Հոգու միջոցով, ինչպես խոստացված է Մորոնի 10.3–5: Մորմոնի Գրքի ուղերձը կարդալուց և խորհելուց հետո, բոլոր նրանք ովքեր ցանկանում են իմանալ ճշմարտությունը, պետք է մեր Երկնային Հորը խնդրեն աղոթքով, Հիսուս Քրիստոսի անունով, թե արդյո՞ք այն ճշմարիտ է: Որպեսզի անենք այդ, մենք դիմում ենք մեր Երկնային Հորը: Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր օրհնությունների համար և խնդրում իմանալու, թե արդյոք Մորմոնի Գրքի ուղերձը ճշմարի՞տ է: Ոչ ոք առանց աղոթքի չի կարող իմանալ հոգևոր ճշմարտությունների մասին:

> **Աղոթք**
>
> - Դիմեք մեր Երկնային Հորը («Հայր մեր, որ երկինս ես. . .»):
> - Արտահայտեք ձեր սրտի զգացումները (երախտագիտություն, հարցեր, խնդրանքներ հաստատելու, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է և այդպես շարունակ):
> - Փակեք («Հիսուս Քրիստոսի անունով»):

Ի պատասխան մեր աղոթքների Սուրբ Հոգին մեզ կսովորեցնի ճշմարտությունը մեր զգացումների և մտքերի միջոցով: Սուրբ Հոգուց եկող զգացումները զորավոր են, բայց դրանք նաև սովորաբար նուրբ են և մեղմ: Երբ սկսում ենք զգալ, որ այն ինչ սովորում ենք, ճշմարիտ է, մենք կցանկանանք Վերականգնման մասին իմանալ այն ամենը, ինչ կարող ենք:

Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին գիտենալը կբերի իմացության, որ Ջոզեֆ Սմիթը կանչվել է որպես մարգարե և որ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվեց նրա միջոցով:

Նշումներ

## Աղոթք

Ընկալած աղոթքը իր դերն ունի շատ կրոնների և մշակույթների մեջ, այն հազվադեպ է համարվում Աստծո և մարդու միջև երկկողմանի հաղորդակցություն: Օգնեք նրանց, ում դուք սովորեցնում եք, հասկանալ, որ նրանք աղոթքի ընթացքում կարող են խոսել իրենց սրտի զգացումների մասին: Ցույց տվեք, թե ինչպես եք աղոթում, երբ սկսում եք կամ վերջացնում դասը: Օգտագործեք պարզ լեզու, որ նրանք նույնպես կարողանան օգտագործել այն, երբ աղոթեն: Օգնեք նրանց հասկանալ, որ մեր Երկնային Հայրը կպատասխանի նրանց աղոթքներին, իրենց սրտերին և իրենց մտքերին յուրահատուկ զգացումներ հաղորդելով: Եթե նրանք անկեղծ են և իսկապես ուզում են իմանալ, թե Աստված այնտեղ է, Նա կպատասխանի նրանց: Առաջարկեք ընտանիքի ղեկավարին դասի վերջում ծնկաչոք աղոթք անել:

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

Ալմա 5.45–46
ՎևՈւ 8.2–3
Հովհաննես ԺԴ.26
Մորմոնի Գրքի նախաբան, պարբերություններ 8–9

## Մկրտվելու հրավեր

Այս կամ մեկ այլ դասի ընթացքում մի վարանեք հրավիրել մարդկանց մկրտվել և հաստատվել:

Մարդկանց մկրտվելու և հաստատվելու հրավերին նախապատրաստելու համար , հաճախ վկայեք բոլոր մարդկանց համար իշխանությամբ մկրտվելու, մեղքերի թողության և Սուրբ Հոգու սքանչելի պարգևը ստանալու կարևորության մասին: Դուք կարող եք ասել. «Քանի որ Տերը պատասխանում է ձեր աղոթքներին և դուք զգում եք, որ այս ուղերձը ճշմարիտ է, կկամենայի՞ք մկրտվել հետևելով Հիսուս Քրիստոսի օրինակին»:

Մկրտվելու և հաստատվելու հրավերը պետք է լինի որոշակի և ուղիղ. «Կկամենայի՞ք հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին մկրտվելով մեկի կողմից, որը կրում է Աստծո քահանայության իշխանությունը: Մենք կնշանակենք մկրտության ծառայություն (ամսաթիվը): Կպատրաստվե՞ք մկրտվելու այդ օրը»:

Նշումներ

# Գաղափարներ ուսուցման համար

Այս բաժինը պարունակում է գաղափարներ, որոնք դուք կարող եք օգտագործել դասը նախապատրաստելիս և ուսուցանելիս: Աղոթքով հետևեք Հոգուն, երբ որոշում եք, թե ինչպես օգտագործել այդ գաղափարները: Ավելացրեք ձեր ընտրած գաղափարները դասի ձեր ծրագրին: Հիշեք, որ այդ գաղափարները առաջարկներ են, ոչ թե պահանջներ, որպեսզի օգնեք բավարարել նրանց կարիքները, ում սովորեցնում եք:

## Կարճ դասի ծրագիր (3–5 րոպե)

Հիսուս Քրիստոսի ավետարանը երկար դարեր կորած լինելուց հետո վերականգնվել է երկրի վրա մեր սիրառատ Երկնային Հոր կողմից ապրող մարգարեի միջոցով: Մորմոնի Գիրքը դրա ապացույցն է: Դուք կարող եք բռնել այն ձեր ձեռքում: Դուք կարող եք կարդալ այն, խորհել թե ինչպես գրքի ուղերձը կարող է բարելավել ձեր կյանքը, և աղոթել իմանալու, արդյո՞ք այդ ուղերձը Աստծո խոսքն է:

- Աստված մեր սիրառատ Երկնային Հայրն է
- Ավետարանն օրհնում է ընտանիքները
- Երկնային Հայրը հայտնի է դարձնում Իր ավետարանը յուրաքանչյուր ժամանակաշրջանում
- Փրկչի երկրային ծառայությունը
- Մեծ ուրացությունը
- Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը Ջոզեֆ Սմիթի միջոցով
- Մորմոնի Գիրքը՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին
- Աղոթքը իմանալու ճշմարտությունը Սուրբ Հոգու միջոցով

### Պարտավորություններ

- Կկարդա՞ք և կաղոթե՞ք իմանալու համար, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է:
- Կաղոթե՞ք իմանալու համար, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր:
- Այս կիրակի մեզ հետ կայցելե՞ք եկեղեցի:
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել հաջորդ հանդիպման համար:
- Պատվիրաններ 4րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

## Միջին դասի ծրագիր (10–15 րոպե)

Մեր ուղերձն ուշագրավ է և պարզ: Աստված մեր Հայրն է: Մենք Նրա զավակներն ենք: Մենք Նրա ընտանիքի մի մասն ենք: Նա սիրում է մեզ: Աշխարհի սկզբից ի վեր, Նա սիրո և հոգածության օրինակ է դրսևորել: Շատ անգամներ է Նա հասել սիրով՝ հայտնելով Հիսուս Քրիստոսի ավետարանը, որպեսզի Իր զավակները կարողանան իմանալ ինչպես վերադառնալ Իր մոտ: Նա այն հայտնեց մարգարեներին, ինչպես օրինակ՝ Ադամին, Նոյին, Աբրահամին և Մովսեսին: Բայց մարդիկ անընդհատ ուրացել են այդ ավետարանը: Երկու հազար տարի առաջ Հիսուս Քրիստոսն Ինքը սովորեցրեց Իր ավետարանը և հիմնեց Իր Եկեղեցին: Անհրնակայելի էր, բայց մարդիկ ուրացան, նույնիսկ, Հիսուսին: Երբ մարդիկ անտեսում են կամ աղավաղում ճշմարիտ վարդապետությունները ու արարողությունները, Աստված ետ է վերցնում Եկեղեցին կառավարելու Իր իշխանությունը:

Նշումներ

Մեր հրավերն է բոլոր մարդկանց և ձեզ՝ հավելել այն ճշմարտություններին, որոնք արդեն բարձր եք գնահատում: Հաշվի առեք մեր վկայությունը, որ մեր Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը կրկին ձգտում են սիրով հասնել Աստծո զավակներին և հայտնի են դարձրել ավետարանի լրիվությունը մարգարեին: Այս մարգարեի անունը Ջոզեֆ Սմիթ է: Այս փառահեղ ճշմարտության վկայությունը գտնվում է մի գրքում՝ Մորմոնի Գրքում, որը կարող եք կարդալ, դրա մասին խորհել և աղոթել: Եթե դուք աղոթեք անկեղծ սրտով, ճշմարիտ միտումով և հավատքով առ Քրիստոս, Աստված կասի ձեզ Սուրբ Հոգու զորությամբ, որ այն ճշմարիտ է:

Պարտավորություններ

- Կկարդա՞ք և կաղոթե՞ք իմանալու համար, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է:
- Կաղոթե՞ք իմանալու համար, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր:
- Այս կիրակի մեզ հետ կայցելե՞ք եկեղեցի:
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել հաջորդ հանդիպման համար:
- Պատվիրաններ 4 –րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

## Լրիվ դասի ծրագիր (30–45 րոպե)

- Աստված մեր սիրառատ Երկնային Հայրն է:
  - Մենք Աստծո զավակներն ենք: (տե՛ս Գործք 17.29)
  - Աստված սիրում է մեզ և կօգնի մեզ կատարել ճիշտ ընտրություններ:
  - Հիսուս Քրիստոսի միջոցով մենք կարող ենք կրկին ապրել Աստծո հետ: (տե՛ս Հովհաննես Գ.16–17)
- Ավետարանն օրհնում է ընտանիքները:
  - Հիսուս Քրիստոսի ավետարանն օգնում է ընտանիքներին զարգացնել ավելի սերտ փոխհարաբերություններ:
  - Ընտանիքները կարգված են Աստծո կողմից, դրանք ամենակարևոր հասարակական միավորներն են ժամանակի և հավերժության համար: (տե՛ս ՎևՈւ 49.15–16)
  - Ընտանիքը սովորելու և սովորեցնելու և ավետարանի սկզբունքները կիրառելու լավագույն տեղն է : (տե՛ս ՎևՈւ 68.25, Ծննդոց ԺԴ. 19, Երկրորդ Օրինաց Զ.7)
  - Ընտանիքը կարող է լինել ապահովության, խաղաղության և երջանկության վայր:
- Երկնային Հայրը հայտնի է դարձնում Իր ավետարանը յուրաքանչյուր ժամանակաշրջանում:
  - Աստված կանչում է մարգարեներ՝ սովորեցնելու Իր ավետարանը: (տե՛ս Ամովս Գ.7)
  - Ուրացությունը նշանակում է մերժել մարգարեներին և ավետարանը:

**Դաս 1.**
**Վերականգնում**

Նշումներ

- ժամանակաշրջանները ժամանակահատվածներ են, երբ մարգարեները ուսուցանում են ավետարանը: Նախորդ ժամանակաշրջաններն ավարտվել են ուրացությամբ: (տե՛ս ՎևՈւ 136. 36–38)
- Ադամը, Նոյը, Աբրահամը, Մովսեսը և մյուս հնադարյան մարգարեները բոլորը սովորեցրել են ավետարանը: (տե՛ս Մովսես 5.4–12)

• Փրկչի երկրային ծառայությունը:
  - Աստծո Որդին վերականգնեց և սովորեցրեց ավետարանը: Նա բազմաթիվ հրաշքներ գործեց (տե՛ս Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Հրաշք», 165):
  - Նա Առաքյալներ կանչեց և տվեց նրանց քահանայության իշխանություն քարոզելու ավետարանը և կատարելու փրկարար արարողություններ, ինչպես օրինակ՝ մկրտություն: (տե՛ս Հովհաննես ԺԵ.16)
  - Քրիստոսը հիմնեց Իր Եկեղեցին:
  - Քրիստոսը խաչվեց և Նրա Առաքյալները մերժվեցին և սպանվեցին: (տե՛ս Մատթեոս ԻԷ.35, Մարկոս ԺԵ.25)
  - Քրիստոսն իրականացրեց Քավությունը: (տե՛ս Սուրբ Գրքերի Ուղեցույց, Քավություն, 22–23)

• Մեծ Ուրացություն
  - Առանց մարգարեի միջոցով տրված հայտնության մարդիկ ընկնում են հոգևոր խավարի մեջ: (տե՛ս Ամոս Ը.11–12)
  - Մարգարեներն ու Առաքյալները կանխագուշակել են Մեծ Ուրացությունը: (Բ Թեսաղոնիկեցիս Բ.1–3 )

• Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը Ջոզեֆ Սմիթի միջոցով:
  - Ջոզեֆը որոնում էր ճշմարտությունը: (տե՛ս Ջոզեֆ Սմիթ – Պատմություն, 1.8,10)
  - Աստված և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին: (տե՛ս Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.16–17)
  - Ավելի վաղ ժամանակաշրջանների մարգարեների նման Ջոզեֆ Սմիթը կանչվեց որպես մարգարե այս վերջին ժամանակաշրջանի համար:
  - Աստված վերականգնեց ավետարանի լրիվությունը Ջոզեֆ Սմիթի միջոցով: (տե՛ս ՎևՈւ 35.17, 135.3)
  - Այլ երկնային սուրհանդակներ վերականգնեցին քահանայությունը և կազմակերպվեց Քրիստոսի Եկեղեցին (տե՛ս ՎևՈւ 13, 27.12):
  - Ապրող մարգարեն ղեկավարում է Եկեղեցին այսօր:

• Մորմոնի Գիրքը՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին:
  - Մորմոնի Գիրքը համոզիչ վկայություն է, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր:

Նշումներ

– Ջոզեֆը թարգմանեց թիթեղներն Աստծո զորությամբ (տե՛ս Մորմոնի Գրքի նախաբան, պարբերություն 5)։

– Մորմոնի Գիրքն ապացուցում է, որ Աստված ոգեշնչում է մարգարեններին մեր օրերում, ինչպես Նա արել է յուրաքանչյուր ժամանակաշրջանում (տե՛ս ՎևՈւ 20.5–12)։

– Մորմոնի Գիրքը պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը։ (տե՛ս ՎևՈւ 20.8–9)

- Աղոթեք իմանալու ճշմարտությունը Սուրբ Հոգու միջոցով։
  - Դուք կարող եք իմանալ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է։ (տե՛ս Մորոնի 10.3–5, Մորմոնի Գրքի նախաբան, պարբերություն 1, 8–9)
  - Սուրբ Հոգին կսովորեցնի ձեզ ձեր մտքերի և զգացումների միջոցով։ (տե՛ս ՎևՈւ 8.2–3)

Պարտավորություններ

- Կկարդա՞ք և կաղոթե՞ք իմանալու, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է։
- Կաղոթե՞ք իմանալու համար, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր։
- Այս կիրակի մեզ հետ կայցելե՞ք եկեղեցի։
- Կարո՞ղ ենք նշանակել ժամ հաջորդ հանդիպման համար։
- Պատվիրաններ 4 –րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել։

## Ուսուցումից հետո տրվող հարցեր

- Ի՞նչ հարցեր ունեք սովորացրածի վերաբերյալ։
- Եթե այսօր երկրի վրա մարգարե լինեն, ի՞նչ կհարցնեիք նրան։
- Դուք զգու՞մ եք, որ Աստված լսում է ձեր աղոթքները։ Ինչո՞ւ։
- Կկամենայի՞ք պարզել, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է։ Ինչո՞ւ։

## Հիմնական սահմանումներ

- **Ազատ կամք.** Աստծո կողմից մարդկանց տրված ընտրելու և ինքնուրույն գործելու ունակությունն ու արտոնությունը։

- **Բարենփոխող.** Բարենփոխել նշանակում է ինչ-որ բանի փոփոխություն կատարել, որպեսզի այն բարելավվի։ Բարենփոխողներ տերմինը վերաբերվում է այն տղամարդկանց և կանանց (ինչպես օրինակ՝ Մարտին Լյութեր, Ջոն Կալվին, Ուիլյամ Թինդեյլ և Ջոն Ուիկլիֆ), ովքեր բողոքեցին գոյություն ունեցող եկեղեցու կարգերի դեմ, որոնք, ինչպես նրանք զգում էին, անհրաժեշտ էր բարենփոխել։

- **Հայտնություն.** Որպես Աստծո և Իր զավակների միջև երկրի վրա հաղորդակցություն, Հայտնությունը կարող է գալ Հիսուս Քրիստոսի Լույսի միջոցով և Սուրբ Հոգու միջոցով՝ ոգեշնչմամբ, տեսիլքների, երազների կամ հրեշտակների այցելությամբ։ Հայտնությամբ ապահովվում է առաջնորդություն, որը կարող է տանել հավատարիմներին հավերժական փրկության՝ սելեստիալ արքայություն։ Տերը հայտնի է դարձնում Իր գործը Իր մարգարեններին և հաստատում հավատացյալներին, որ մարգարեններին տրված հայտնությունները ճշմարիտ են (տես Ամովս Գ.7)։ Հայտնության

Նշումներ

միջոցով Տերն ապահովում է անհատական առաջնորդություն յուրաքանչյուր անհատի համար, ով որոնում է այն և որը հավատք ունի, ապաշխարում է և հնազանդ է Հիսուս Քրիստոսի ավետարանին:

- **Մարգարե.** Մարդ, որը կանչվել է և խոսում է Աստծո կողմից: Որպես Աստծո սուրհանդակ մարգարեն ստանում է քահանայության իշխանություն, պատվիրաններ, մարգարեություններ և հայտնություններ Աստծո կողմից: Նրա պարտականությունն է հայտնի դարձնել Աստծո կամքը և ճիշտ էությունը մարդկությանը և ցույց տալ Նրա գործերը նրանց հետ: Մարգարեն դատապարտում է մեղքը և կանխագուշակում դրա հետևանքները: Նա արդարության քարոզիչ է: Առիթի դեպքում մարգարեն կարող է ոգեշնչվել կանխագուշակելու ապագան՝ ի օգուտ մարդկության: Այնուամենայնիվ, Նրա հիմնական պարտականությունն է վկայություն բերել Քրիստոսի մասին:

- **Վերականգնում.** Վերականգնել նշանակում է ետ բերել կամ վերադարձնել նախկին վիճակին: Վերականգնումը Վերջին Օրերի Սրբերի օգտագործմամբ նշանակում է, որ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին, որը վերացել էր ուրացության պատճառով, ետ բերվեց ինչպես որ այն սկզբում գոյություն ուներ, երբ կազմակերպվել էր Հիսուս Քրիստոսի կողմից: Ի տարբերություն Բարենորոգման (Ռեֆորմացիայի), Վերականգնումը իրականացվեց աստվածային իշխանությամբ, հայտնության միջոցով:

- **Տնտեսություն.** Մի ժամանակահատված, որի ժամանակ Տերն առնվազն ունի մեկ լիազորված ծառա երկրի վրա, որը կրում է սուրբ քահանայության բանալիները: Հիսուս Քրիստոսից բացի, այնպիսի մարգարեներ, ինչպիսիք են՝ Ադամը, Ենովքը, Նոյը, Աբրահամը, Մովսեսը և Ջոզեֆ Սմիթը, յուրաքանչյուրը սկսել են ավետարանի նոր ժամանակաշրջան: Երբ Տերը կազմակերպում է որևէ տնտեսություն, ավետարանը նորից է հայտնի դարձվում, որպեսզի այդ ժամանակաշրջանի մարդիկ կախված չլինեն անցյալ ժամանակաշրջաններից՝ փրկության ծրագրի գիտելիքի համար: Տնտեսությունը, որը սկսվեց Ջոզեֆ Սմիթի կողմից, հայտնի է որպես «ժամանակների լրության տնտեսություն»:

- **Ուրացություն.** Անհատների, Եկեղեցու կամ ողջ ազգերի կողմից ճշմարտությունից հեռանալը: Այն ընդգրկում է ապստամբություն իշխանության դեմ և մարգարեների մերժում: Ուրացության փաստը ներառում է Աստծո օրենքների զանց առնելը, ավետարանական արարողությունների փոփոխումը և ուխտերի խախտումը (տես՝ Եսայիա ԻԴ. 5):

- **Քահանայություն.** Այն իշխանությունն ու զորությունը, որն Աստված տալիս է մարդուն՝ գործելու Հիսուս Քրիստոսի անունով բոլոր բաներում, մարդկության փրկության համար:

- **Քավիչ.** Հիսուս Քրիստոսը մարդկության մեծ Քավիչն է, որովհետև Նա, Իր Քավության միջոցով, վճարեց գինը մարդկության մեղքերի համար և հնարավոր դարձրեց բոլոր մարդկանց հարությունը: Փրկագնել նշանակում է ազատել, գնել, փրկանք տալով ազատել, ինչպես օրինակ՝ մարդուն ազատել գերությունից վճարով: Փրկագնումը վերաբերվում է Հիսուս Քրիստոսի Քավությանը և մեղքից ազատմանը: Հիսուսի Քավությունը փրկագնում է ողջ մարդկությանը ֆիզիկական մահից: Նրա Քավության միջոցով, որը ներառում է Նրա չարչարանքները Գեթսեմանում և խաչի վրա, ինչպես նաև Նրա Հարությունը, նրանք, ովքեր հավատք ունեն Նրա հանդեպ և ովքեր ապաշխարում են, փրկագնվում են հոգևոր մահից:

Նշումներ

Այլ տերմիններ, որոնք կարիք կունենան հետագա սահմանման՝ նրանց համար, ում ուսուցանում եք:

- Առաքյալ
- Աստվածաշունչ
- Համբերել մինչև վերջ
- Սուրբ Հոգու պարգև
- Ավետարան
- Հնազանդություն և անհնազանդություն պատվիրաններին
- Փրկության արարողություններ
- Աղոթք
- Վերադառնալ ապրելու Նրա ներկայության մեջ
- Փրկիչ
- Սուրբ գրքեր
- Մեղք
- Լիազորությունների հանձնում

## Բարենորոգիչներ և համաշխարհային կրոնական առաջնորդներ

**Հետնյալը լրացուցիչ տեղեկություններ են, որոնք պետք է օգտագործվեն միայն անհրաժեշտության դեպքում**

**Ջոն Ուիկլիֆ.** Ծնվել է 14-րդ դարում Անգլիայում: Օքսֆորդի համալսարանում աստվածաբանության գիտնական էր: Սովորեցրել է, որ Կաթոլիկ Եկեղեցին չունի քահանայության բանալիները, որ Սուրբ Հաղորդությունը Քրիստոսի իսկական մարմինը չէ և որ եկեղեցին չպետք է գործադրի քաղաքական իշխանություն մարդկանց վրա: Թարգմանել է Աստվածաշունչն անգլերեն: Մահացել է դեկտեմբերի 31-ին, 1384թ.:

**Մարտին Լյութեր.** Ծնվել է 1483թ. նոյեմբերի 10-ին, Գերմանիայում: Սովորել է Էրֆուրտի համալսարանում և Վիտենբերգում: Փակցրել է 95 թեզիսներ ամրոցի եկեղեցու պատին՝ մրցահրավեր նետելով հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու գոյություն ունեցող ուսմունքներին, ներառյալ մարդկանց ստիպելը փող վճարել իրենց մեղքերի ներման համար: Մահացել է փետրվարի 18-ին, 1546թ.

**Ուիլյամ Թինդեյլ.** Ծնվել է 1494թ. Ուելսում: Սովորել է Օքսֆորդում և Քեմբրիջում: Նոր Կտակարանը թարգմանել է անգլերեն: Դարձրել է սուրբ գրքերը հասարակ մարդկանց համար մատչելի՝ մերկացնելով կեղծ վարդապետություններն ու կրոնական առաջնորդների անբարոյականությունը: Նա մահվան դատապարտվեց 1536թ. հոկտեմբերի 6-ին:

**Ջոն Կալվին.** Ծնվել է 1509թ. Ֆրանսիայում: Քահանա դառնալու համար սովորել է Փարիզում: Կաթոլիկ Եկեղեցու բարենորոգման շարժման հիմնական առաջնորդներից է: Իր կյանքի մեծ մասը անցկացրել է Շվեյցարիայում: Նա սովորեցրել է, որ մարդիկ իրենց էությամբ փչացած են և որ միայն Աստծո շնորհը կարող է փրկել նրանց: Գրել է բազմաթիվ մեկնաբանություններ Աստվածաշնչի վերաբերյալ: Մահացել է 1564թ. մայիսի 27-ին:

Բարենորոգիչների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ միսիոներական գրադարանի հետնյալ աղբյուրները՝ James E. Talmage, *Jesus the Christ,* 692–703; M. Russell Ballard, *Our Search for Happiness,* 26–32):

Նշումներ

Ճիշտ ինչպես Քրիստոնեական աշխարհը օրհնվեց բարենփոխողների խիզախությամբ և հեռատեսությամբ, բազմաթիվ այլ ազգեր և մշակույթներ օրհնվել են նրանց կողմից, ում տրվել է այն բաժինը, «որ [Աստված] հարմար է տեսնում, որ նրանք ունենան» (Ալմա 29.8)։ Այլ կրոնական առաջնորդների ուսմունքներն օգնել են շատ մարդկանց դառնալ ավելի քաղաքակիրթ և բարոյական։

**Բուդդա (Գոթամա).** Ծնվել է Նեպալում 563 տարի Ք.Ա. Հինդու առաջնորդի ընտանիքում։ Մտահոգված էր այն չարչարանքների պատճառով, որ գոյություն ունեին իր շրջապատում։ Հեռացավ իր հոր շքեղ պալատից, հրաժարվեց աշխարհից և ապրեց աղքատության մեջ։ Զգտնելով լուսավորման, նա հայտնագործեց «ազատման ուղին»։ Պնդում էր, որ հասել է նիրվանային՝ հոգսից, ցավից, կամ արտաքին իրականությունից մոռացության մի վիճակի։ Դարձավ վանականների մի համայնքի ուսուցիչ։

**Կոնֆուցի.** Ծնվել է 551 տարի Ք.Ա.։ Մանուկ հասակում որբ է մնացել։ Չինաստանի առաջին մասնագետ ուսուցիչն է։ Չինաստանի ամենամեծ բարոյական և հասարակական մտածողը։ Քիչ բան է ասել հոգևոր էակների կամ աստվածային ուժերի մասին։ Հավատում էր, որ երկինքը, վստահել է իրեն, որպես բարու և ճշմարտության մարտիկի, մի սրբազան առաքելություն։

**Մուհամմեդ.** Ծնվել է մ.թ. 570թ. Մեքքայում։ Մանուկ հասակում որբ է մնացել։ Ապրել է աղքատության մեջ։ Զնռք է բերել վստահելի խաղաղություն հաստատողի համբավ։ Ամուսնացել է 25 տարեկանում։ 610թ. աղոթել է և մտածել Հիրա սարի վրա։ Ասել է, որ Գաբրիել հրեշտակը հայտնվել է իրեն և պատգամ բերել Ալլահից (Աստծուց)։ Պնդում էր, որ հաղորդակցություն է ստացել Աստծուց 620–632թ. Գաբրիելի միջոցով։ Այս հաղորդակցությունները, որոնք նա պատմել է իր աշակերտներին, ավելի ուշ գրվել են Ղուրանում՝ Իսլամի սրբազան գրքում։

# Փրկության ծրագիրը



Նշումներ

## Ձեր նպատակը

Երբ սովորեցնում եք, նախապատրաստեք ձեր ունկնդիրներին բավարարել մկրտության համար պատրաստվածության աստիճանը, որը սովորեցվում է Վարդապետություն և Ուխտեր 20.37–ում և մկրտության հարցազրույցի հարցերում: Դա իրականացվում է լավագույն ձևով՝ ստանձնելով և պահելով ներքևում նշված պարտավորությունները:

**Մկրտության հարցազրույցի հարցեր**

- Դուք հավատո՞ւմ եք, որ Աստված մեր Երկնային Հայրն է:
- Դուք հավատո՞ւմ եք, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է:
- Դուք կկամենա՞ք կիրակին սուրբ պահել, ներառյալ՝ ամեն շաբաթ հաղորդությունը ճաշակելը և ընկերակից անդամներին ծառայություն մատուցելը:

**Պարտավորություններ**

- Կաղոթե՞ք իմանալու համար, որ այն ինչ մենք սովորեցրել ենք ճշմարիտ է:
- Կապաշխարե՞ք ձեր մեղքերից:
- Այս կիրակի մեզ հետ կհաճախե՞ք եկեղեցի:
- Կհետևե՞ք Փրկչի օրինակին և կմկրտվե՞ք (ամսաթիվ):
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել հաջորդ այցելության համար:
- Պատվիրաններ 4-րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

## Օգնելով ուրիշներին սովորել Հիսուս Քրիստոսի մասին

Միսիոներները պետք է վկայեն Հիսուս Քրիստոսի մասին և բոլորին հրավիրեն գալ դեպի Նա, որպեսզի կարողանան փրկվել: Կարևոր է Փրկչի վերաբերյալ որոշակի ցուցումներ տալ նրանց, ովքեր քիչ բան գիտեն կամ ոչինչ չգիտեն Նրա մասին: Մորմոնի Գիրքը՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի մասին, նախատեսված է օգնել բոլոր մարդկանց՝ իմանալու, որ «Հիսուսը Քրիստոսն է . . . որը հայտնվում է բոլոր ազգերին» (Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ): Ուսուցանելու և Փրկչի մասին վկայելու ամենաարդյունավետ ուղիներից մեկը Մորմոնի Գրքից միասին կարդալն է: Այլ կանոնիկ գրքերից հատվածների ընթերցումը կարող է նույնպես օգտակար լինել:

Դաս 2՝
Փրկության ծրագիրը

Նշումներ

Մտածեք ստորև բերված առաջարկների մասին: Սա կարելի է անել որպես այս կամ մյուս դասերի մի մաս կամ որպես առանձին դաս: Օգտակար լինելու դեպքում, կրկնեք այս վարժությունը մի քանի անգամ մկրտությունից և հաստատումից հետո:

| | |
|---|---|
| Տիտղոսաթերթ և նախաբան | Պարզաբանեք գրքի նպատակը: |
| 1 Նեփի 10–11 | Լեքին և Նեփին վկայում են Փրկչի մասին: |
| 1 Նեփի 19 | Նեփին պատմում է Փրկչի ծառայության և Քավության վերաբերյալ մարգարեությունների մասին: |
| 2 Նեփի 2 | Լեքին վկայում է Փրկչի մասին որպես Քավիչի: |
| 2 Նեփի 9 | Հակոբը վկայում է Քավության մասին: |
| 2 Նեփի 31–33 | Նեփին ուսուցանում է Քրիստոսի վարդապետությունը: |
| Ենովս | Ենովսը զգում է Քավության զորությունը: |
| Մոսիա 2–5 | Թագավոր Բենյամինը ուսուցանում է Քրիստոսի մասին: |
| Մոսիա 12–16 | Աբինադին տալիս է իր կյանքը վկայելով Հիսուս Քրիստոսի մասին: |
| Ալմա 5, 7 | Ալման վկայում է Փրկչի մասին: |
| Ալմա 17–22 | Լամանացիները ստանում են Հիսուս Քրիստոսի վկայությունը: |
| Ալմա 34 | Ամուղեկը վկայում է Քավության մասին: |
| Ալմա 36 | Ալման զգում է Հիսուս Քրիստոսի Քավության զորությունը: |
| Ալմա 40–42 | Ալման վկայում է հարության և Քավության մասին: |
| Հելաման 5 | Նեփին և Լեքին գործիքներ են Աստծո ձեռքում՝ վկայելով Փրկչի մասին: |
| 3 Նեփի 9–10 | Փրկիչը հրավիրում է մարդկանց գալ Իր մոտ: |
| 3 Նեփի 11–18 | Փրկիչը Նեփիացիներին ուսուցանում է Հոր և Նրա վարդապետության մասին: |
| 3 Նեփի 27 | Փրկիչը սովորեցնում է Իր ավետարանը: |
| Եթեր 3 | Հարեդի եղբայրը տեսնում է Փրկչին: |
| Եթեր 12 | Եթերը և Մորոնին վկայում են Փրկչի և Նրա Քավության զորության մասին: |
| Մորոնի 7–8 | Մորմոնը ուսուցանում է Քրիստոսի մաքուր սիրո և Նրա Քավության մասին: |
| Մորոնի 10 | Մորոնին հրավիրում է բոլորին գալ դեպի Քրիստոս և կատարելագործվել Նրանում: |
| The Living Christ (Կենդանի Քրիստոսը) | Մարգարեները և առաքյալները վկայում են Փրկչի մասին: |

## Նախանրկրային կյանք՝ Աստծո նպատակը և ծրագիրը մեզ համար

Շատ մարդիկ հետաքրքրված են. «Որտեղի՞ց ենք եկել մենք: Ինչու՞ ենք այստեղ: Ու՞ր ենք գնում»: Փրկության ծրագիրը պատասխաններ է տալիս մեր այս հարցերին:

Աստված մեր հոգիների Հայրն է: Մենք իսկապես Նրա զավակներն ենք և Նա սիրում է մեզ: Մենք ապրում էինք որպես մեր Երկնային Հոր հոգևոր զավակներ, նախքան այս երկրի վրա ծնվելը: Բայց մենք նման չէինք մեր Երկնային Հորը ոչ էլ երբևէ կկարողանայինք Նրա նման դառնալ և վայելել բոլոր օրհնությունները, որոնք Նա է վայելում, առանց ֆիզիկական մարմնում մահկանացու կյանքով ապրելու փորձառության:

Աստծո ողջ նպատակը, Նրա գործն ու փառքն է՝ մեզանից յուրաքանչյուրի համար հնարավոր դարձնել վայելելու բոլոր Նրա օրհնությունները: Նա ապահովել է մի կատարյալ

Նշումներ

ծրագիր Իր նպատակն իրականացնելու համար: Մենք հասկացել ենք և ընդունել այս ծրագիրը նախքան երկիր գալը: Սուրբ գրքերում Աստծո ծրագիրը կոչվում է ողորմածության ծրագիր, երջանկության ծրագիր, փրկագնման ծրագիր և փրկության ծրագիր:

Հիսուս Քրիստոսը Աստծո ծրագրում կենտրոնական տեղ է գրավում: Իր Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը իրականացրեց Իր Հոր նպատակը և հնարավոր դարձրեց մեզանից յուրաքանչյուրի համար վայելել անմահություն և հավերժական կյանք: Սատանան կամ դևը Աստծո ծրագրի թշնամին է:

Ազատ կամքը կամ ընտրելու ունակությունը, Իր զավակներին Աստծո կողմից տրված ամենամեծ պարգևներից է: Մեր հավերժական առաջընթացը կախված է նրանից, թե ինչպես ենք օգտագործում այս պարգևը: Մենք պետք է ընտրենք հետևե՞լ Հիսուս Քրիստոսին, թե հետևել սատանային:

Երկրի վրա մեր կյանքի ընթացքում մենք ֆիզիկապես առանձնացված ենք Աստծուց, բայց Նա ուզում է, որ Իր զավակներից ամեն մեկը խաղաղություն գտնի այս կյանքում և լիակատար ուրախություն Իր ներկայության մեջ այս կյանքից հետո: Նա ուզում է, որ մենք դառնանք այնպիսին, ինչպիսին Ինքն է:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| **Աստծո զավակներ** | **Աստծո նպատակը** | | |
|---|---|---|---|
| ՎևՈւ 93.29<br>Գործք ԺԷ.29 | Եբրայեցիս ԺԲ. 9 | Մովսես 1.39 | Հովհաննես ԺԷ.3 |

**Նախաերկրային կյանք**

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 138. 53–56<br>Մովսես 3.5 | Աբրահամ 3.22–26<br>Երեմիա Ա.5 | Սուրբ Գրքերի ուղեցույց, «Նախաերկրային կյանք» |

## Արարում

Հոր ղեկավարությամբ Հիսուս Քրիստոսն արարեց երկիրը, որպես մեզ համար ապրելու և փորձառություն ձեռք բերելու մի վայր: Որպեսզի առաջադիմենք և դառնանք Աստծո նման, մեզանից յուրաքանչյուրը պետք է ձեռք բերի մարմին և ստուգվի երկրի վրա փորձաշրջանի մի ժամանակահատվածի ընթացքում: Քանի դեռ երկրի վրա ենք, մենք Աստծո ֆիզիկական ներկայությունից դուրս ենք: Մենք չենք հիշում մեր նախաերկրային կյանքի մասին: Մենք ավելի շուտ պետք է քայլենք հավատքով, այլ ոչ թե երևույթով:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 17.36<br>Ալմա 30.44<br>ՎևՈւ 88.41–47 | Մովսես 2.1<br>Մովսես 6.63<br>Աբրահամ 3.24–25 | ՋՍԹ, Հովհ. Ա.1–3<br>Բ Կորնթացիս Ե.6–7 |

## Ազատ կամքն ու Ադամի և Եվայի անկումը

Ադամն ու Եվան Աստծո երկիր եկած առաջին զավակներն էին: Աստված ստեղծեց Ադամին ու Եվային և դրեց նրանց Եդեմի պարտեզում: Ադամն ու Եվան ստեղծվել էին Աստծո պատկերով՝ մսից ու ոսկորից մարմիններով: Երբ Ադամն ու Եվան պարտեզում էին, նրանք դեռևս Աստծո ներկայության մեջ էին և կկարողանային ապրել հավերժ: Նրանք անմեղության մեջ էին ապրում և Աստված հոգում էր նրանց կարիքները:

Եդեմական պարտեզում Աստված տվեց Ադամին ու Եվային նրանց ազատ կամքը: Նա պատվիրեց նրանց չուտել արգելված պտղից կամ չարի և բարու գիտության ծառից:

Նշումներ

Հնազանդվելով այս պատվիրանին նշանակում էր, որ նրանք պետք է մնային պարտեզում, բայց նրանք մահկանացու կյանքում չէին կարող առաջադիմել չզգալով հակադրություն: Նրանք չէին կարող իմանալ ուրախություն, որովհետև չէին կարող զգալ վիշտ և ցավ:

Սատանան գայթակղեց Ադամին ու Եվային ուտել արգելված պտղից և նրանք ընտրեցին այդպես անել: Դա Աստծո ծրագրի մի մասն էր: Այս ընտրության պատճառով նրանք վտարվեցին պարտեզից և Աստծո ֆիզիկական ներկայությունից: Այս իրադարձությունը կոչվում է անկում: Աստծո ներկայությունից մեկուսացումը հոգևոր մահ է: Ադամն ու Եվան դարձան մահկանացու՝ ենթակա ֆիզիկական մահի կամ մարմնի և հոգու առանձնացման: Այժմ նրանք կարող էին տանել հիվանդություն և ամեն ծևի տառապանք: Նրանք ունեին բարոյական ազատ կամք կամ ունակություն ընտրելու բարու և չարի միջև: Սա հնարավոր դարձրեց նրանց համար սովորել և առաջադիմել: Այն նաև հնարավոր դարձրեց նրանց համար կատարել սխալ ընտրություններ և մեղանչել: Բացի այդ, այժմ նրանք կարող էին երեխաներ ունենալ, որպեսզի Աստծո հոգևոր զավակների մնացած մասը կարողանային երկիր գալ, ստանալ ֆիզիկական մարմիններ և ստուգվել: Միայն այս ուղով Աստծո զավակները կկարողանային սովորել ու առաջադիմել և դառնալ Նրա նման:

## Ուսուցանել անկման մասին

Երբ առաջին անգամ սովորեցնենք այս վարդապետությունը, մի սովորեցրեք այն ամենը, ինչ գիտեք դրա մասին: Բացատրեք շատ պարզ ձևով, որ Աստված ընտրեց Իր զավակներից նրկուսին՝ Ադամին ու Եվային երկրի վրա դառնալ առաջին ծնողները: Իրենց օրինազանցությունից հետո նրանք ենթակա դարձան ինչպես մեղքին, այնպես էլ մահվան: Ինքնուրույն նրանք չէին կարող վերադառնալ ապրելու Երկնային Հոր հետ: Տերը խոսեց Ադամի հետ և նրան սովորեցրեց Հիսուս Քրիստոսի միջոցով փրկության և փրկագնման ծրագրի մասին: Հետևելով այդ ծրագրին, Ադամն ու իր ընտանիքը կկարողանային ունենալ ուրախություն այս կյանքում և վերադառնալ ապրելու Աստծո հետ (տես Ալմա 18.36, 22.12–14):

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Պարտեզում**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 2 | Մովսես 5.11 | Ծննդոց Ա.26–31 |
| Մովսես 2.26–31 | Մովսես 3.15–17 | Ծննդոց Բ.15–17 |

**Անկում**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 2.25 | Մովսես 4 | Ծննդոց Գ |
| Ալմա 12.22–34 | Մովսես 5.10–12 | |

## Մեր կյանքը երկրի վրա

Կյանքը երկրի վրա հնարավորություն է և օրհնություն: Այս կյանքում մեր նպատակն է ունենալ ուրախություն և պատրաստվել վերադառնալ Աստծո ներկայության մեջ: Մահկանացու կյանքում մենք ապրում ենք մի վիճակում, որտեղ ենթակա ենք ֆիզիկական և հոգևոր մահվան: Աստված ունի կատարյալ, փառավորված, անմահական մսից և ոսկորներից մարմին: Որպեսզի նմանվենք Աստծուն և վերադառնանք Նրա ներկայության մեջ, մենք էլ պետք է ունենանք կատարյալ, մսից և ոսկորներից անմահ մարմին: Սակայն Ադամի ու Եվայի անկման պատճառով երկրի վրա ամեն մարդ ունի ոչ կատարյալ, մահկանացու մարմին և ի վերջո կմահանա: Եթե չլիներ Փրկիչ Հիսուս Քրիստոսը, մահը վերջ կդներ Երկնային Հոր հետ ապագա գոյության ամեն հույսի:

Ֆիզիկական մահն ու մեղքը մեծ խոչընդոտ են, որոնք խանգարում են մեզ դառնալ մեր Երկնային Հոր նման և վերադառնալ Նրա ներկայության մեջ: Մեր մահկանացու վիճակում

Նշումներ

մենք հաճախ տեղի ենք տալիս գայթակղությանը, խախտում ենք Աստծո պատվիրանները և մեղանչում: Երկրի վրա մեր կյանքի ընթացքում մեզանից յուրաքանչյուրը սխալներ է գործում: Չնայած դա երբեմն այլ կերպ է երևում, մեղքը միշտ տանում է դեպի դժբախտություն: Մեղքը առաջացնում է հանցանքի և ամոթի զգացումներ: Մեր մեղքերի պատճառով, մենք անկարող ենք վերադառնալ ապրելու Երկնային Հոր հետ, մինչև նախ չներվենք և չմաքրվենք:

Մինչ մահկանացու կյանքում ենք, մենք ունենում ենք փորձառություններ, որոնք մեզ բերում են երջանկություն: Մենք ունենում ենք նաև փորձառություններ, որոնք բերում են մեզ ցավ ու վիշտ, որոնցից մի քանիսն առաջանում են ուրիշների մեղսավոր արարքներից: Այս փորձառությունները տալիս են մեզ սովորելու և աճելու, բարին չարից զանազանելու և ընտրություններ կատարելու հնարավորություններ: Աստված ազդում է մեզ վրա, որպեսզի բարիք անենք, սատանան գայթակղում է մեզ, որպեսզի մեղք գործենք: Ինչպես ֆիզիկական մահվան դեպքում, մենք չենք կարող ինքնուրույն հաղթահարել մեղքի հետևանքները: Մենք անօգնական ենք առանց Հիսուս Քրիստոսի Քավության:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Փորձաշրջան կամ ստուգման ժամանակահատված**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 2.21 | Ալմա 12.21–24 | Աբրահամ 3.25–26 |
| 2 Նեփի 9.27 | Ալմա 34.31–35 | |
| Մովսես 3.19 | Ալմա 42.2–10 | |

**Ընտրություն**

2 Նեփի 2.26–29 Հեսու ԻԴ.15

*Երիտասարդներին զորացնելու համար,* «Գործելու Ազատություն և Պատասխանատվություն»

**Չարը և բարին**

Մորոնի 7.12–19

**Մեղք**

| | | |
|---|---|---|
| Հռովմայեցիս Գ.23 | Ա Հովհաննես Ա.8–10 | Ա Հովհաննես Գ.4 |

**Անմաքուրները չեն կարող լինել Աստծո հետ**

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 10. 20–21 | 3 Նեփի 27.19 | Մովսես 6.57 |
| Ալմա 41.10–11 | | |

## Քավություն



Նախքան աշխարհի կազմավորումը, մեր Երկնային Հայրն ընտրեց Հիսուս Քրիստոսին լինելու մեր Փրկիչն ու Քավիչը: Հիսուս Քրիստոսի քավությունը հնարավոր դարձրեց մեզ համար հաղթահարել անկման հետևանքները: Բոլոր մարգարեները աշխարհի սկզբից ի վեր վկայել են Հիսուս Քրիստոսի մասին որպես Քավիչ:

Մենք բոլորս տանում ենք ֆիզիկական մահ, բայց Հիսուս Քրիստոսը հաղթեց ֆիզիկական մահվան խոչընդոտը մեզ համար: Երբ Նա մահացավ խաչի վրա, Նրա հոգին բաժանվեց Իր մարմնից: Երրորդ օրը, Նրա հոգին և Նրա մարմինը հավերժորեն վերամիավորվեցին, երբեք այլևս չբաժանվելու: Նա հայտնվեց բազմաթիվ մարդկանց, ցույց

Նշումներ

տալով նրանց, որ Ինքն ուներ մսից և ոսկորից անմահ մարմին: Մարմնի և հոգու վերամիավորումը կոչվում է հարություն և խոստացված պարգև է մեզանից յուրաքանչյուրին: Հիսուս Քրիստոսի հարության շնորհիվ, մենք բոլորս հարություն կառնենք, անկախ նրանից մենք բարիք ենք արել, թե չարիք այս կյանքում: Մենք կունենանք կատարյալ, անմահ մսից և ոսկորից մարմին, որը երբեք կրկին ենթակա չի լինի հիվանդության, ցավի կամ մահվան: Հարությունը հնարավոր է դարձնում վերադառնալ Աստծո ներկայության մեջ՝ դատվելու, բայց այն չի երաշխավորում, որ մենք կկարողանանք ապրել Նրա ներկայության մեջ: Այդ օրհնությունը ստանալու համար, մենք պետք է նաև մաքրվենք մեղքից:

Աստված ուղարկեց Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, հաղթահարելու մեղքի խոչընդոտը ի լրումն ֆիզիկական մահվան խոչընդոտի: Մենք պատասխանատու չենք Ադամի և Եվայի անկման համար, բայց մենք պատասխանատու ենք մեր սեփական մեղքերի համար: Աստված չի կարող հանդուրժել կամ թույլատրել մեղքի նույնիսկ ամենաչնչին դրսևորում: Մեղքը խանգարում է մեզ ապրել Նրա ներկայության մեջ: Միայն Փրկչի շնորհի և ողորմածության միջոցով կարող ենք մաքուր դառնալ մեղքից, որպեսզի կրկին կարողանանք ապրել Աստծո հետ: Սա հնարավոր է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելու միջոցով, ապաշխարելով, մկրտվելով, ստանալով Սուրբ Հոգին և դիմանալով մինչև վերջ:

Փրկության ծրագիրն իրականացնելու համար Քրիստոսը վճարեց տույժը մեր մեղքերի համար: Միայն Նա կարող էր անել այդ: Նա կանչվել էր և պատրաստվել նախաերկրային կյանքում: Նա տառացիորեն Աստծո Որդին էր՝ մարմնում: Նա անմեղ էր և լիովին հնազանդ Իր Հորը: Չնայած փորձվեց, Նա երբեք տեղի չտվեց գայթակղությանը: Երբ Հայրը խնդրեց Իր Սիրելի Որդուն վճարել գինը աշխարհի մեղքերի համար, Հիսուսը պատրաստված էր և հոժարակամ: Քավությունը ներառում էր Նրա տառապանքը Գեթսեմանի պարտեզում և Նրա չարչարանքը և մահը խաչի վրա և այն ավարտվեց Նրա Հարությամբ: Չնայած Նրա տառապանքը վեր է մեր հասկացողությունից, այնքան սաստիկ, որ Նա արնահոսեց յուրաքանչյուր ծակոտիից և խնդրեց, որ եթե հնարավոր էր այդ բեռը վերցվեր Իրենից՝ Նա ենթարկվեց Հոր կամքին՝ Իր Հոր և մեր հանդեպ ցուցաբերելով գերագույն սիրո օրինակ: Հոգևոր մահվան վրա՝ Իր չարչարանքով և ֆիզիկական մահվան վրա՝ Իր Հարությամբ, Հիսուս Քրիստոսի այս հաղթանակը կոչվում է Քավություն:

Քրիստոսը խոստանում է ներել մեր մեղքերը այն պայմանով, որ մենք ընդունենք Նրան՝ գործադրելով հավատք Իր հանդեպ, ապաշխարելով, ստանալով ընկղմամբ մկրտություն և ձեռնադրում՝ Սուրբ Հոգու պարգևի համար և ձգտելով հավատարմորեն պահել Նրա պատվիրանները մինչև մեր կյանքի վերջը: Շարունակելով ապաշխարել, մենք կարող ենք ձեռք բերել ներում և մաքրվել մեր մեղքերից Սուրբ Հոգու զորությամբ: Մենք ազատվում ենք հանցանքի և ամոթի բեռից և Հիսուս Քրիստոսի միջոցով արժանի դառնում վերադառնալ Աստծո ներկայության մեջ:

Երբ մենք ապավինում ենք Հիսուս Քրիստոսի Քավությանը, Նա կարող է օգնել մեզ դիմանալ մեր փորձությունններից, հիվանդություններից և ցավից: Մենք կարող ենք լցված լինել ուրախությամբ, խաղաղությամբ և մխիթարությամբ: Այն ամենը, ինչ անարդար է կյանքում, կարող է դառնալ ճիշտ՝ Հիսուս Քրիստոսի Քավությամբ:

Վճարելով մեր մեղքերի համար տույժը, այնուամենայնիվ, Հիսուսը չվերացրեց մեր անձնական պատասխանատվությունը: Մենք պետք է ցույց տանք, որ մենք ընդունում ենք Նրան և որ մենք կհետևենք Նրա պատվիրաններին: Միայն Քավության պարգևի միջոցով մենք կարող ենք վերադառնալ ապրելու Աստծո հետ:

Նշումներ

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Հարություն**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 9.6–7 | ՎևՈւ 88.27–32 | Սուրբ Գրքերի ուղեցույց «Մահ՝ ֆիզիկական», «Մահ՝ հոգևոր», «Հարություն» |
| Ալմա 11.42–45 | Ղուկաս ԻԴ.1–10, 36–39 | |
| Ալմա 40.23 | Ա Կորնթացիս ԺԵ. 20–23 | |
| Հելաման 14.15–19 | ՋՍԹ՝ Ա Կորնթացիս 15. 40 | Ա Կորնթացիս ԺԵ.41–42 |

**Քավություն**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 2.6–8 | ՎևՈւ 19.15–19 | Ա Հովհաննես Ա.7 |
| Ալմա 7.11–13 | ՎևՈւ 45.3–5 | Սուրբ Գրքերի ուղեցույց «Քավել, Քավություն» |
| Ալմա 34.8–10 | Հովհաննես Գ. 16–17 | |

**Ավետարանն է ուղին**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 9.1–24 | Ալմա 11.40 | 3 Նեփի 27 |
| 2 Նեփի 31 | 3 Նեփի 11.31–41 | Մորոնի 7.27–28 |

## Հոգևոր աշխարհ

Չնայած Քրիստոսը հաղթեց ֆիզիկական մահին, բոլոր մարդիկ պետք է մահանան, քանի որ մահը մահկանացու վիճակից անմահության անցման ընթացքի մի մասն է կազմում: Մահվան ժամանակ մեր հոգիները գնում են հոգևոր աշխարհ: Մահը չի փոխում մեր անձնավորությունը կամ մեր ցանկությունները բարու կամ չարի հանդեպ: Նրանք, ովքեր ընտրում են հնազանդվել Աստծուն այս կյանքում, ապրում են երջանկության, խաղաղության վիճակում և հանգստանում են նեղություններից և հոգսից: Նրանք, ովքեր ընտրում են չհնազանդվել այս կյանքում և չեն ապաշխարում, ապրում են ապերջանիկ վիճակում: Հոգևոր աշխարհում ավետարանը քարոզվում է նրանց, ովքեր չեն հնազանդվել ավետարանին կամ չեն ունեցել հնարավորություն լսելու այն, երբ երկրի վրա էին: Մենք մնում ենք հոգևոր աշխարհում, մինչև որ հարություն ենք առնում:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ավետարանը քարոզվում է մահացածներին**

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 138 | Ա Պետրոս Գ. 19–20 | Ա Պետրոս Դ.6 |

**Մահը և հոգևոր աշխարհը**

| | | |
|---|---|---|
| Ալմա 34.34 | Ալմա 40.11–14 | Ժողովող ԺԲ.7 |

## Հարություն, դատաստան և անմահություն

Երբ հարության միջոցով մեր մարմինները և հոգիները վերամիավորվեն, մենք կբերվենք դատվելու Աստծո ներկայության մեջ: Մենք կատարելապես կհիշենք մեր արդարությունը և մեր հանցանքը: Եթե ապաշխարած լինենք, մենք կստանանք ողորմածություն: Մենք կպարգևատրվենք համաձայն մեր գործերի և մեր ցանկությունների:

Հարության միջոցով բոլոր մարդիկ կդառնան անմահ, նրանք կապրեն հավերժ: Անմահությունը ծրի պարգև է բոլոր մարդկանց, անկախ նրանից, թե նրանք արդար են, թե ամբարիշտ: Սակայն հավերժական կյանքը նույնը չէ, ինչ անմահությունը: Հավերժական կյանք տրվում է միայն նրանց,

Նշումներ

ովքեր հնազանդվում են Նրա ավետարանին: Դա բարձրագույն վիճակն է, որին կարող ենք հասնել: Այն գալիս է նրանց, ովքեր ազատված են մեղքից և տառապանքից՝ Քրիստոսի Քավության միջոցով: Դա վեհացում է, որը նշանակում է ապրել Աստծո հետ հավիտյան հավերժական ընտանիքներով: Դա նշանակում է գիտենալ Աստծուն և Հիսուս Քրիստոսին և ապրել այն կյանքով, որ նրանք են վայելում:

### Հարություն և վերամարմնավորում

Որոշ մարդիկ կարող են շփոթել հարության վարդապետությունը վերամարմնավորման գաղափարի հետ: Վերամարմնավորման գաղափարը նշանակում է նորից ծնվել աշխարհում այլ կերպարանքով, որը կեղծ վարդապետություն է: Հարության վարդապետությունը նշանակում է մսից և ոսկորից անմահ մարմնի ստացումը որպես հավերժական պարգև: Սա է ճշմարիտ վարդապետությունը: Հավաստիացեք, թե արդյոք նրանք, ում սովորեցնում եք, հստակորեն հասկանու՞մ են հարության վարդապետությունը:

## Փառքի արքայությունները

Մեր մահկանացու կյանքի ընթացքում մենք ընտրություններ ենք կատարում բարու և չարի միջև: Աստված պարգևատրում է մեզ համաձայն մեր գործերի և ցանկությունների: Քանի որ Աստված պարգևատրում է յուրաքանչյուրին ըստ մարմնում արված գործերի, կան փառքի տարբեր աստիճաններ, որոնք մեզ կարող են նշանակվել Դատաստանից հետո: Նրանք, ովքեր ապաշխարել են իրենց մեղքերից և ստացել ավետարանի արարողությունները և պահել դրանց հետ կապված ուխտերը, կմաքրվեն Քրիստոսի Քավությամբ: Նրանք կստանան վեհացում բարձրագույն արքայությունում, որը նաև հայտնի է որպես սելեստիալ արքայություն: Նրանք կապրեն Աստծո ներկայությամբ, կդառնան Նրա նման և կստանան լիակատար ուրախություն: Նրանք միասին կապրեն հավերժության ընթացքում իրենց ընտանիքի այն անդամների հետ, ովքեր արժանի են: Սուրբ գրքերում այս արքայությունը համեմատվում է արևի փառքի կամ պայծառության հետ:

Մարդիկ, ովքեր չեն ընդունում Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը, բայց ապրում են պատվավոր կյանքով, կստանան տեղ թերեստրիալ արքայությունում: Այս արքայությունը համեմատվում է լուսնի փառքի հետ:

Նրանք, ովքեր շարունակել են իրենց մեղքերի մեջ և չեն ապաշխարել այս կյանքում, կստանան իրենց պարգևն ամենացածր արքայությունում, որը կոչվում է թելեստիալ արքայություն: Այս արքայությունը համեմատվում է աստղերի փառքի հետ:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Հարություն և վերականգնում**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 9.14–15 | Հալմը 6.8–9 | Ալմա 42.13–15, 22–23 |

**Դատաստան**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 28.23 | Ալմա 5.15–21 | ՎևՈւ 132.12, 137.9 |
| Մոսիա 3.23–25 | Ալմա 12.12–14 | Հովհաննես Ե.22 |

**Փառքի արքայությունները**

| | | |
|---|---|---|
| 3 Նեփի 28.10 | ՎևՈւ 76 | Մատթեոս Ե.48 |
| ՎևՈւ 76 Նախաբան | ՎևՈւ 137 | ՁՍԹ՝ Ա Կորնթացիս 15.40 |
| | | Ա Կորնթացիս ԺԵ.41–42 |

**Հավերժական կյանք**

2 Նեփի 31.17–21
ՎևՈւ 14.7
ՎևՈւ 29.43–44
ՎևՈւ 45.8
ՎևՈւ 93.19
Հովհաննես Գ.16
Հովհաննես ԺԷ.3

## Փրկության ծրագիր




Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր է դարձնում փրկությունը:

## Մկրտվելու հրավեր

Մկրտվելու և հաստատվելու հրավերը պիտի ուղիղ և որոշակի լինի: «Կհետևե՞ք Հիսուս Քրիստոսի օրինակին մկրտվելով մեկի կողմից, որը կրում է Աստծո քահանայության իշխանությունը: Մենք մկրտության ծառայություն ունենք [ամսաթիվ]»: Կպատրաստվե՞ք մկրտվելու այդ օրը:

Դաս 2՝
Փրկության ծրագիրը

Նշումներ

# Գաղափարներ ուսուցման համար

Այս բաժինը պարունակում է գաղափարներ դասը պատրաստելիս և ուսուցանելիս օգտագործելու համար: Աղոթքով հետևեք Հոգուն, երբ որոշեք թե ինչպես օգտագործել այս գաղափարները: Ձեր ընտրած գաղափարներն ավելացրեք դասի ծրագրին: Հիշեք, որ այս գաղափարները առաջարկներ են՝ ոչ թե պահանջներ, որպեսզի օգնեք բավարարել նրանց պահանջները, ում դուք սովորեցնում եք:

## Կարճ դասի ծրագիր (3–5 րոպե)

Փրկության ծրագիրը սովորեցնում է մեզ, թե որտեղից ենք եկել, ինչու՞ ենք այստեղ՝ երկրի վրա և ուր ենք գնալու այս կյանքից հետո: Այն քարտեզագրում է մեր հավերժական ճանապարհորդությունը նախաերկրային կյանքում, մահկանացու կյանքում, մահվան, հարության ընթացքում և մեր կյանքը հավերժության մեջ: Ծրագիրը նաև բացատրում է, թե ինչ է անում մեր սիրառատ Երկնային Հայրը՝ մեզ օգնելու այս ճանապարհորդությունը բարեհաջող կատարելու և Իր մոտ վերադառնալու և Իր նման դառնալու համար: Ծրագիրը կենտրոնացած է Անկման հետևանքները հաղթահարելիս և հավերժական կյանքը մեզ համար հնարավոր դարձնելիս Հիսուս Քրիստոսի առաքելության և Քավության վրա: Մենք հրավիրում ենք ձեզ խորհել և աղոթել այս ուղերձի մասին:

- Նախաերկրային կյանք՝ մեզ համար Աստծո նպատակը և ծրագիրը
- Արարում
- Ազատ կամքը և Ադամի ու Եվայի անկումը
- Մեր կյանքը երկրի վրա
- Քավություն
- Հոգևոր աշխարհ
- Հարություն, դատաստան և անմահություն
- Փառքի արքայություններ

### Պարտավորություններ

- Կաղոթե՞ք իմանալու համար, որ այն ինչ մենք սովորեցրել ենք ճշմարիտ է:
- Կապաշխարե՞ք ձեր մեղքերից:
- Մեզ հետ կհաճախե՞ք եկեղեցի այս կիրակի:
- Կհետևե՞ք Փրկչի օրինակին և կմկրտվե՞ք (ամսաթիվ):
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել հաջորդ այցելության համար:
- Պատվիրաններ 4-րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

## Միջին դասի ծրագիր (10–15 րոպե)

Մեր ուղերձն օգնում է հասկանալ կյանքի իմաստը և թե ով ենք մենք: Այն մեզ հույս է տալիս և օգնում մեզ գտնել խաղաղություն, ուրախություն և երջանկություն: Այն ասում է մեզ, թե մենք որտեղից ենք եկել, ինչու ենք այստեղ երկրի վրա և ու՞ր ենք գնալու այս կյանքից հետո: Աստված մեր Հայրն է և Նա սիրում է մեզ: Մենք Նրա զավակներն ենք: Մենք Նրա ընտանիքի մի մասն ենք և մենք ապրում

Նշումներ

էինք Նրա հետ նախքան այս երկրի վրա մեր ծնվելը: Նա ունի երջանկության մի ծրագիր, որը հնարավոր է դարձնում մեզ համար վերադառնալ Նրա ներկայության մեջ այս կյանքից հետո: Մեր առաջընթացը կախված է նրանից, թե ինչպես ենք օգտագործում Աստծո տված ազատ կամքը կամ ընտրելու ունակությունը: Որպես այդ ծրագրի մի մաս, Ադամի անկումը հնարավոր դարձրեց մեզ համար երկիր գալ, ստանալ ֆիզիկական մարմին, կյանքի փորձ ձեռք բերել և մեր սեփական ընտանիքներն ունենալ: Բայց անկումը բերեց նաև ֆիզիկական մահ, որը հոգու անջատումն է մարմնից և հոգևոր մահ, որն առանձնացումն է Աստծուց:

Հիսուս Քրիստոսը կենտրոնական տեղ է գրավում Աստծո ծրագրում: Քրիստոսի քավող զոհաբերությունը հաղթեց և ֆիզիկական և հոգևոր մահվան հետևանքները: Մենք բոլորս հարություն կառնենք և հավերժ կապրենք ֆիզիկական մարմիններով՝ ցավից և հիվանդություններից զերծ: Քրիստոսը նաև հնարավոր դարձրեց հաղթել հոգևոր մահին: Երբ ապրենք Նրա ավետարանով, Նա ողորմածաբար կների մեր մեղքերը: Նա կբժշկի մեզ և կփոխարինի հանցանքն ու ամոթը խաղաղությամբ և երջանկությամբ այս կյանքում:

Որպես Աստծո ողորմած ծրագրի մի մաս մենք բոլորս կտանենք ֆիզիկական մահ: Մեր հոգիները կառանձնանան մեր մարմիններից և որոշ ժամանակ կապրեն հոգևոր աշխարհում: Հետո մենք հարություն կառնենք անմահ մարմնով՝ մեր հոգու և մարմնի հավերժական միավորմամբ: Մենք կդատվենք ըստ մեր գործերի և ցանկությունների: Նրանք, ովքեր ապրել են ավետարանով, կստանան մեր Երկնային Հոր մեծագույն պարգևը՝ հավերժական կյանքի պարգևը՝ Իր ներկայության մեջ:

Մեր Երկնային Հայրը կրկին սիրով հասել է Իր զավակներին՝ հայտնելով երջանկության Իր ծրագիրը: Մենք այս սքանչելի ծրագրի մասին իմանում ենք Մորմոնի Գրքից, որի մասին դուք կարող եք կարդալ, խորհել և աղոթել: Մենք հրավիրում ենք ձեզ հաճախել եկեղեցի և երկրպագել մեզ հետ:

Պարտավորություններ

- Կաղոթե՞ք իմանալու համար, որ այն ինչ մենք սովորեցրել ենք ճշմարիտ է:
- Կապաշխարե՞ք ձեր մեղքերից:
- Այս կիրակի մեզ հետ կհաճախե՞ք եկեղեցի:
- Կհետևե՞ք Փրկչի օրինակին և կմկրտվե՞ք (ամսաթիվ):
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել հաջորդ այցելության համար:
- Պատվիրաններ 4-րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

## Լրիվ դասի ծրագիր (30–45 րոպե)

- Նախաերկրային կյանք: Մեզ համար Աստծո նպատակն ու ծրագիրը:
  – Աստված մեր Երկնային Հայրն է և մենք Նրա զավակներն ենք: (տե՛ս Գործք Է.16–34, Եբրայեցիս ԺԲ.9)

Դաս 2՝
Փրկության ծրագիրը

Նշումներ

- Աստված ծրագիր ունի մեր երջանկության համար: Հիսուս Քրիստոսն այդ ծրագրում կենտրոնական տեղ է գրավում:
- Աստծո երջանկության ծրագիրը հնարավոր է դարձնում վերադառնալ Նրա մոտ: (տե՛ս Մովսես 1.39)
- Մեր հավերժական առաջընթացը կախված է նրանից, թե ինչպես ենք օգտագործում մեր ազատ կամքը: (տե՛ս 2 Նեփի 2.27–29)

• Արարում

- Հոր ղեկավարության ներքո Հիսուս Քրիստոսը ստեղծեց երկիրը: (տե՛ս Եբրայեցիս Ա.1–3)

• Ազատ կամքը և Ադամի ու Եվայի անկումը:

- Ադամն ու Եվան ստեղծվել են Աստծո պատկերով: (տե՛ս Ծննդոց Ա.26–27)
- Եդեմական պարտեզում նրանք անմեղ էին և ապրում էին Աստծո ներկայության մեջ:
- Արգելված պտղից ճաշակելու պատճառով նրանք վտարվեցին պարտեզից: (տե՛ս Մովսես 4.19–31) Սա կոչվում է անկում:
- Նրանք դարձան մահկանացու, կարողացան զավակներ ունենալ ու ենթակա էին մեղքի և մահվան: (տե՛ս 2 Նեփի 2.22–25, Մովսես 5.11)

• Մեր կյանքը երկրի վրա:

- Կյանքում մեր նպատակն է տևական խաղաղություն, ուրախություն և երջանկություն գտնել որպես ընտանիքներ և պատրաստվել վերադառնալու Աստծո հետ ապրելու:
- Մենք եկել ենք երկիր ստուգվելու համար: (տե՛ս Աբրահամ 3.24–25)
- Մենք ձեռք ենք բերում մսից և ոսկորներից մարմին, բայց մենք ենթակա ենք ֆիզիկական մահվան:
- Աստված տալիս է պատվիրաններ: Եթե մենք հնազանդվում ենք, մենք օրհնվում ենք: Եթե մենք չենք հնազանդվում, մենք մեղանչում ենք և կրում հետևանքները:
- Բոլոր մեղքերի համար պետք է վճարել, կամ ինքներս կամ Քրիստոսի միջոցով:
- Մենք կատարում ենք ընտրություններ և մենք բոլորս մեղքեր ենք գործում: (տե՛ս Հռովմայեցիս Գ.23)
- Մենք ունենում ենք փորձառություններ, որոնք բերում են երջանկություն և նաև վիշտ:
- Մենք չենք կարող հաղթել ոչ ֆիզիկական ոչ էլ հոգևոր մահին առանց Քրիստոսի:

• Քավությունը

- Քանի որ Հիսուս Քրիստոսը հաղթեց ֆիզիկական մահին, մենք բոլորս հարություն կառնենք: (տե՛ս Ալմա 11.41–43)

Նշումներ

- Քրիստոսի Քավությամբ մենք կարող ենք մաքուր դառնալ մեղքից, որպեսզի վերադառնանք ապրելու Աստծո մոտ: (տե՛ս 2 Նեփի 9.8–9)
- Քրիստոսը կների մեզ մեր մեղքերը, երբ մենք հավատք ունենանք առ Նա, ապաշխարենք, ստանանք մկրտություն և Սուրբ Հոգու պարգևը և համբերենք մինչև վերջ:

• Հոգևոր աշխարհ
- Բոլոր մարդիկ պետք է մահանան:
- Մահվան ժամանակ մեր հոգիները գնում են հոգևոր աշխարհ:
- Մենք ապրում ենք կամ թշվառության վիճակ կամ էլ խաղաղության և հանգստի վիճակ, կախված նրանից, թե ինչպես ենք ապրել այս կյանքում:

• Հարություն, Դատաստան և Անմահություն
- Մեր հոգիները և մարմինները կվերամիավորվեն հարության ժամանակ: (տե՛ս Ալմա 11.42–45, 40.23)
- Մենք կվերադառնանք Աստծո մոտ՝ դատվելու ըստ մեր գործերի և ցանկությունների:
- Եթե մենք ապաշխարել ենք, կարժանանանք ողորմածության:
- Հավերժական կյանքը Աստծո պարգևն է նրանց, ովքեր լիովին հնազանդվում են Հիսուս Քրիստոսի ավետարանին: (տե՛ս ՎևՈւ 14.7)

• Փառքի արքայությունները: (տե՛ս ՎևՈւ 76, 137, Ա Կորնթացիս ԺԵ.40–42)
- Մենք պարգևներ ենք ստանում համաձայն մեր գործերի և ցանկությունների: (տե՛ս ՎևՈւ 137.9)
- Նրանք, ովքեր ստանում են ավետարանը և ըստ նրա քաջաբար ապրում ողջ իրենց կյանքի ընթացքում, կստանան սելեստիալ արքայություն: (տե՛ս ՎևՈւ 76.50–70)
- Պատվավոր մարդիկ, ովքեր «կուրացած են մարդկանց խորամանկությամբ» և նրանք, ովքեր «քաջ չեն եղել Հիսուս [Քրիստոսի] վկայության մեջ» ստանում են թերեստրիալ արքայություն: (տե՛ս ՎևՈւ 76.75, 79)
- Նրանք, ովքեր մեղանչում են և չեն ապաշխարում, կստանան թելեստիալ փառք՝ իրենց մեղքերի համար տառապելուց և դրանց համար վճարելուց հետո:

## Պարտավորություններ

- Կաղոթե՞ք իմանալու համար, որ այն ինչ մենք սովորեցրել ենք ճշմարիտ է:
- Կապաշխարե՞ք ձեր մեղքերից:
- Այս կիրակի մեզ հետ կհաճախե՞ք եկեղեցի:
- Կհետևե՞ք Փրկչի օրինակին և կմկրտվե՞ք (ամսաթիվ):
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել հաջորդ այցելության համար:
- Պատվիրաններ 4-րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

Դաս 2՝
Փրկության ծրագիրը

Նշումներ

## Ուսուցումից հետո տրվող հարցեր

- Ի՞նչ հարցեր ունենք մեր սովորացրածի վերաբերյալ:
- Ի՞նչ ենք հասկանում ձեր և ձեր ընտանիքի վերաբերյալ Աստծո ծրագրի մասին:
- Մեր սովորացրածից ի՞նչ հասկացաք Հիսուս Քրիստոսի դերի մասին: Ի՞նչ է դա նշանակում ձեզ համար:

## Հիմնական սահմանումներ

Հետևյալ տերմինները հաճախ չեն հասկացվում: Զգտեք դրանք բացատրել հստակորեն և պարզեք, թե նրանք, ում սովորեցնում եք, հասկանու՞մ են:

- **Անկում (Ադամի և Եվայի).** Երբ Ադամն ու Եվան կերան արգելված պտուղը, նրանք մահկանացու դարձան, այսինքն մեղքի և մահվան ենթակա: Ադամը դարձավ երկրի վրա առաջին մարմինը: (Մովսես 3.7) Վերջին օրերի հայտնությունը հստակեցնում է, որ Անկումը օրհնություն է և որ Ադամն ու Եվան պետք է հարգվեն որպես ողջ մարդկության առաջին ծնողներ:
- **Անմահություն.** Հարություն առած վիճակում հավերժ ապրելու վիճակը, որը ենթակա չէ ֆիզիկական մահի:
- **Դատաստան.** Աստված Հիսուս Քրիստոսի միջոցով կդատի մեզ անհատապես՝ որոշելու այն հավերժական փառքը, որ մենք կստանանք: Այս դատաստանը հիմնված կլինի Աստծո պատվիրաններին մեր հնազանդության վրա, ներառյալ՝ Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության ընդունումը: Մենք կստանանք մեր հավերժական պարգևը՝ կախված նրանից, թե մեր գործերն ու ցանկությունները բարի են եղել, թե չար:
- **Հարություն.** Մահից հետո հոգևոր մարմնի միացումը մսից և ոսկորներից կազմված ֆիզիկական մարմնի հետ: Հարությունից հետո հոգին և մարմինը այլևս երբեք չեն բաժանվի և մարդն անմահ է: Երկրի վրա ծնված յուրաքանչյուր մարդ հարություն կառնի, որովհետև Հիսուս Քրիստոսը հաղթեց մահին:
- **Հոգևոր մահ**. Առանձնացում Աստծուց և Նրա ազդեցությունից, մահանալ կապված այն բաների հետ, որոնք վերաբերվում են արդարությանը: Հոգևոր մահը աշխարհ մտավ Ադամի անկումով (տե՛ս Ալմա 42.6–7): Չար մտքերով, խոսքերով և գործերով մահկանացու մարդիկ հոգեպես մահացած են, մինչ երկրի վրա կենդանի են (տե՛ս 2 Նեփի 9.39): Հիսուս Քրիստոսի Քավությամբ և ավետարանի սկզբունքներին և արարողություններին հնազանդվելով տղամարդիկ և կանայք կարող են դառնալ մեղքից մաքուր և հաղթել հոգևոր մահվանը:
- **Մահկանացու կյանք.** Ծննդից մինչև ֆիզիկական մահն ընկած ժամանակահատվածը:
- **Նախաերկրային կյանք (նախամահկանացու, նախաերկրային կյանք).** Որպես մեր Երկնային Հոր հոգևոր զավակներ մենք ապրում էինք Նրա ներկայության մեջ նախքան այս երկրի վրա մեր ծնվելը: Նախաերկրային կյանքում մենք չունեինք ֆիզիկական մարմիններ:
- **Վեհացում**. Հավերժական կյանք Աստծո ներկայության մեջ, դառնալու մեր Երկնային Հոր նման և ապրելու Նրա մոտ: Աստծո պարգևներից մեծագույնը: Վեհացումը գալիս է Քրիստոսի Քավության միջոցով և ավետարանի օրենքներին և արարողություններին հնազանդվելու միջոցով:
- **Փրկագնում.** Ազատել, գնել, փրկանք վճարել, ինչպես օրինակ՝ մարդուն ճորտությունից ազատել վճար տալով: Փրկագնումը վերաբերվում է Հիսուս Քրիստոսի Քավությանը և մեղքից ազատագրմանը: Հիսուսի Քավությունը փրկագնում է ողջ մարդկությանը ֆիզիկական մահից: Նրա Քավության միջոցով, նրանք, ովքեր հավատք ունեն Նրա հանդեպ և ապաշխարում են, փրկագնվում են նաև հոգևոր մահից:

Նշումներ

- **Փրկություն.** Փրկվել ֆիզիկական և հոգևոր մահից: Բոլոր մարդիկ կփրկվեն ֆիզիկական մահից Աստծո շնորհով՝ Հիսուս Քրիստոսի մահվան և հարության միջոցով: Յուրաքանչյուր անձնավորություն կարող է փրկվել նաև հոգևոր մահից՝ կրկին Աստծո շնորհով՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով: Այս հավատքը դրսևորվում է ավետարանի օրենքներին և արարողություններին հնազանդվելու և Քրիստոսին ծառայելու միջոցով:
- **Քավություն**. Ինչպես սուրբ գրքերում է օգտագործվում, քավել նշանակում է կրել տույժ գործած մեղքի համար, դրա միջոցով վերացնելով մեղքի հետևանքները ապաշխարող մեղավորներից և թույլ տալով նրանց հաշտվել Աստծո հետ: Հիսուս Քրիստոսը տառապեց Գեթսեմանում և խաչի վրա: Նա միակն էր, որը կարողացավ իրականացնել կատարյալ Քավություն ողջ մարդկության համար: Գեթսեմանում Նա կրեց տույժը մեր մեղքերի համար և մահացավ խաչի վրա: Նա Իր վրա վերցրեց մեր բոլորի ցավերը, հիվանդությունները, գայթակղությունները, չարչարանքներն ու թուլությունները: (տե՛ս Ալմա 7.11–12)
- **Ֆիզիկական մահ.** Մեր ֆիզիկական մարմնից մեր հոգու անջատումը, որն ապրում է հավերժ և չի կարող մեռնել:

Այլ տերմիններ, որոնք կարիք կունենան հետագա սահմանման՝ նրանց համար, ում ուսուցանում ենք

- Ընկղմամբ մկրտություն
- Սեղեստիալ
- Մաքրված մեղքից
- Արարում
- Հավերժական առաջընթաց
- Հավերժական կյանք
- Հավատք
- Արգելված պտուղ
- Ներված [մեղքը]
- Եդեմի պարտեզ
- Փառքի արքայություններ
- Հակադրություն
- Ֆիզիկական մահ
- Փրկության ծրագիր
- Փորձաշրջան
- Ապաշխարել
- Մեղք
- Հոգևոր աշխարհ
- Թելեստիալ
- Թերեստրիալ
- Բարու և չարի գիտության ծառ

Նշումներ

# Հիսուս Քրիստոսի ավետարանը



### Ձեր նպատակը

Երբ սովորեցնում եք, պատրաստեք ձեր ունկնդիրներին, որպեսզի բավարարեն մկրտության համար պահանջները, որոնք տրված են Վարդապետություն և Ուխտեր 20.37–ում և մկրտության հարցազրույցի հարցերում: Սա կարելի է լավագույն ձևով իրականացնել հրավիրելով ունկնդիրներին պարտավորություններ ստանձնել և պահել դրանք:

**Մկրտության հարցազրույցի հարցեր**

- Դուք հավատու՞մ եք, որ Աստված մեր Երկնային Հայրն է:
- Դուք հավատու՞մ եք, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, աշխարհի Փրկիչն ու Քավիչը:
- Դուք հավատու՞մ եք, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին և ավետարանը վերականգնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

**Պարտավորություններ**

- Կշարունակե՞ք զարգացնել հավատք առ Հիսուս Քրիստոս շարունակելով սովորել Նրա ավետարանը:
- Կապաշխարե՞ք և կաղոթե՞ք մեղքերի ներման համար:
- Կմկրտվե՞ք որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ (ամսաթիվ): Կհաստատվե՞ք և կստանա՞ք Սուրբ Հոգու պարգևը:
- Այս կիրակի մեզ հետ կհաճախե՞ք եկեղեցի:
- Կարող ենք ժամ նշանակել հաջորդ հանդիպման համար:
- Պատվիրաններ 4-րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

## Քրիստոսի միջոցով մենք կարող ենք մաքրվել մեղքից:

Աստված աշխարհ ուղարկեց Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որպեսզի Աստծո բոլոր զավակները իրենց մահից հետո հնարավորություն ունենան վերադառնալ՝ ապրելու Նրա ներկայության մեջ: Միայն Փրկչի շնորհի և ողորմածության միջոցով մենք կարող ենք մեղքից մաքրվել, որպեսզի կարողանանք ապրել մեր Երկնային Հոր ներկայության մեջ: Մաքուր դառնալ մեղքից նշանակում է հոգեպես ապաքինված լինել: (տե՛ս 3 Նեփի 9.13, 18.32)

Նշումներ

Քրիստոսի Քավության և Հարության շնորհիվ, բոլոր մարդիկ ետ կբերվեն Տիրոջ ներկայության մեջ՝ դատվելու ըստ իրենց գործերի և իրենց ցանկությունների: (տե՛ս 2 Նեփի 9.10–16, Հելաման 14.15–18, 3 Նեփի 27.14–22, ՎևՈւ 137.9) Մենք կդատվենք ըստ արդարադատության և ողորմածության օրենքների:

Արդարադատությունը չփոփոխվող օրենք է, որը բերում է գործողությունների հետևանքներ՝ օրհնություններ Աստծո պատվիրաններին հնազանդվելու համար և տույժեր անհնազանդության համար: Մենք բոլորս մեղանչում ենք: Մեղքը մեզ դարձնում է անմաքուր, իսկ Աստծո ներկայության մեջ ոչ մի անմաքուր բան չի կարող ապրել: (տե՛ս 1 Նեփի 10.21, 3 Նեփի 27.19, Մովսես 6.57)

Փրկիչը բավարարեց արդարադատության պահանջները նրանց համար, ովքեր ապաշխարում են իրենց մեղքերից և ջանում պահել բոլոր Նրա պատվիրանները, երբ Նա կանգնեց մեր փոխարեն և կրեց տույժը մեր մեղքերի համար: Այս արարքը կոչվում է Քավություն: Այս ինքնազոհ արարքի համար, Քրիստոսը մեզ համար կարող է միջնորդել Հորը: Երկնային Հայրը ողորմածություն է հանդես բերում, երբ Նա ներում է մեզ մեր մեղքերը և օգնում է մեզ վերադառնալ և կենալ Իր ներկայության մեջ:

Սակայն Հիսուսը չվերացրեց մեր անձնական պատասխանատվությունը: Նա ներում է մեր մեղքերը, երբ մենք ընդունում ենք Նրան, ապաշխարում և հնազանդվում ենք Նրա պատվիրաններին: Քավության և ավետարանի համաձայն ապրելու միջոցով մենք արժանի ենք դառնում մշտապես մտնելու մեր Երկնային Հոր ներկայության մեջ: Մենք պետք է ցույց տանք, որ ընդունում ենք Քրիստոսին և որ մենք հավատք ունենք Նրա հանդեպ՝ պահելով Նրա պատվիրանները և հնազանդվելով ավետարանի առաջին սկզբունքներին և արարողություններին:

### Մեղք

Մեղք հասկացությունը տարբեր մշակույթներում տարբեր իմաստներ ունի: Որոշ մշակույթներում այն սերտորեն կապված է հանցագործություն կատարելու գաղափարի հետ: Մյուսներում այն կապված է միայն այն դեպքերի հետ, երբ որևէ մեկը բռնվում է ինչ որ սխալ բան անելիս և դրանով ամոթ է բերում ընտանիքին կամ հասարակությանը: Բացատրեք, որ մեղքը անհնազանդություն է Աստծո պատվիրաններին և արդյունքում տեղի է ունենում մեկուսացում Աստծուց: Աստված գիտի բոլոր բաները, որ մենք կատարում ենք ու մտածում և մենք բարկացնում ենք Նրան, երբ մեղք ենք գործում: Մի քննարկեք ձեր անցյալ օրինազանցությունները: Թույլ մի տվեք կամ մի խնդրեք ունկնդիրներին քննարկել իրենց օրինազանցությունները:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Աստված ուղարկեց Իր Որդուն**

Ալմա 11.40 — Հովհաննես 3.16–17

**Քրիստոսը մեր Բարեխոսն է**

ՎևՈւ 45.3–5

**Փրկություն Քրիստոսի միջոցով**

2 Նեփի 2.6–8 — Ալմա 34.8–9, 14–16 — 2Նեփի 9.21–24

**Ողորմածություն և Արդարադատություն**

Մոսիա 15.9 — Ալմա 42.22–25

## Հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ

Ավետարանի առաջին սկզբունքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքն է: Քրիստոսի հանդեպ հավատք ունենալ նշանակում է անսասան հավատալ, որ Նա է Աստծո Միածին Որդին և աշխարհի Փրկիչն ու Քավիչը: Մենք ընդունում ենք, որ կարող ենք վերադառնալ ապրելու մեր Երկնային Հոր հետ՝ ապավինելով միայն Նրա Որդու շնորհին և ողորմածությանը: Երբ հավատում ենք Քրիստոսին, մենք ընդունում ենք, կիրառում Նրա Քավությունը և Նրա

Նշումներ

ուսմունքները: Մենք վստահում ենք Նրան և Նրա ասածներին: Մենք գիտենք, որ Նա ունի զորություն պահելու Իր խոստումները: Երկնային Հայրն օրհնում է նրանց, ովքեր Իր Որդուն հնազանդվելու հավատք ունեն:



Քրիստոսի հանդեպ հավատքը մղում է գործի: Այն մղում է անկեղծ և տևական ապաշխարության: Հավատք ունենալը ստիպում է մեզ փորձել այնքան ջանասիրաբար, որքան կարող ենք, սովորել Նրա մասին և ավելի նմանվել մեր Փրկչին: Մենք ուզում ենք սովորել, թե որոնք են Նրա պատվիրանները և հետո հնազանդվել դրանց: Չնայած մենք դեռ կկատարենք սխալներ, մենք ցույց ենք տալիս Նրան մեր սերը՝ ձգտելով պահել Նրա պատվիրանները և խուսափելով մեղքից:

Մենք հավատում ենք Քրիստոսին և մենք հավատում ենք, որ Նա ցանկանում է, որ մենք պահենք բոլոր Նրա պատվիրանները: Մենք ուզում ենք ցույց տալ մեր հավատքը՝ Նրան հնազանդվելով: Մենք աղոթում ենք հավատքով՝ գայթակղությանը հաղթելու ուժ ունենալու համար: Մենք կարող ենք նաև հավատք զարգացնել որոշակի մի սկզբունքի հանդեպ, ինչպես օրինակ՝ Իմաստության Խոսքի կամ տասանորդի, առաջինը՝ անսասան հավատալով Հիսուս Քրիստոսին, որպեսզի հնազանդվենք Նրա պատվիրաններին: Երբ ապրում ենք ըստ որոշակի պատվիրանի, մենք դրա ճշմարտացիության մասին իմանում ենք փորձառության միջոցով: (տե՛ս Հովհաննես Է.17) Մեր հավատքն աճում է նաև լսելով Աստծո խոսքը (տե՛ս Հռովմայեցիս Ժ.17) և կարդալով Աստծո խոսքը: (տե՛ս Հելաման 15.7–8)

Երբ մենք հնազանդվում ենք Աստծուն, Նա օրհնում է մեզ: Նա մեզ ուժ է տալիս դիմանալու կյանքի դժվարություններին: Նա օգնում է մեզ փոխել մեր սրտի ցանկությունները: Նա կարող է բժշկել մեզ և՛ ֆիզիկապես և՛ հոգեպես՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

***Հավատք, զորություն և փրկություն***

1 Նեփի 7.12
2 Նեփի 9.23
2 Նեփի 25.23
Մորոնի 7.33–34
Մորոնի 10.7

***Հավատքի վարդապետությունը***

Ալմա 32
Եփեսացիս Բ.8
Սուրբ գրքերի ուղեցույց, «Հավատք»

***Հավատքի օրինակներ***

Եթեր 12
Եբրայեցիս ԺԱ

***Գործեր և հնազանդություն***

1 Նեփի 3.7
ՎևՈւ 130.20–21
Հակոբոս Բ.17–26

***Հավատքի ապաշխարություն***

Ալմա 34

## Ապաշխարություն

Ավետարանի երկրորդ սկզբունքը ապաշխարությունն է: Քրիստոսի հանդեպ մեր հավատքը և Նրա հանդեպ մեր սերը մղում է մեզ ապաշխարության, կամ փոխելու մեր մտքերը, հավատալիքները և վարքագիծը, որոնք ներդաշնակության մեջ չեն Նրա կամքի հետ: Ապաշխարությունը ներառում է Աստծո, մեր և աշխարհի մասին նոր տեսակետի ձևավորում: Երբ մենք ապաշխարում ենք , զգում ենք աստվածավախ տրտմություն, այդ ժամանակ մենք դադարում ենք անել այն բաները, որոնք սխալ են, և շարունակում ենք անել այն բաները, որոնք ճիշտ են: Ապաշխարության միջոցով մեր կյանքն Աստծո կամքի հետ ներդաշնակության բերելը մեր կյանքի հիմնական նպատակն է: Մենք կարող ենք վերադառնալ ապրելու Հայր Աստծո հետ միայն Քրիստոսի ողորմածության միջոցով, իսկ մենք ստանում ենք Քրիստոսի ողորմածությունը միայն ապաշխարության պայմանով:

Նշումներ

Ապաշխարելու համար մենք ընդունում ենք մեր մեղքերը և զգում խղճի խայթ կամ աստվածավախ տրտմություն: Մենք խոստովանում ենք Աստծուն մեր մեղքերը: Մենք նաև խոստովանում ենք շատ լուրջ մեղքերը Աստծո կողմից լիազորված Եկեղեցու ղեկավարներին, ովքեր կարող են օգնել մեզ ապաշխարել: Մենք խնդրում ենք Աստծուն աղոթքով ներել մեզ: Մենք անում ենք այն ամենը, ինչ կարող ենք, մեր արարքների պատճառով առաջացած խնդիրներն ուղղելու համար, որը կոչվում է փոխհատուցում: Երբ ապաշխարում ենք, մեր տեսակետը աշխարհի և մեր մասին փոխվում է: Երբ փոխվում ենք, մենք հասկանում ենք, որ մենք Աստծո զավակներն ենք և որ մենք չպետք է անենք նույն սխալները կրկին ու կրկին: Եթե անկեղծորեն ապաշխարում ենք, մենք շրջվում ենք մեր մեղքերից և այլևս չենք անում: Մենք դիմադրում ենք մեղք գործելու որևէ ցանկության դեմ: Աստծուն հետևելու մեր ցանկությունը դառնում է ավելի ուժեղ և ավելի խորը:

Անկեղծ ապաշխարությունը տալիս է մի շարք արդյունքներ: Մենք զգում ենք Աստծո ներումը և Նրա խաղաղությունը մեր կյանքում: Մեր հանցանքն ու տրտմությունը հեռու է վանվում: Մենք ավելի առատորեն ենք զգում Հոգու ազդեցությունը: Եվ երբ այս կյանքից հեռանանք, մենք ավելի լավ պատրաստված կլինենք մեր Երկնային Հոր և Նրա Որդու հետ ապրելու համար:

Նույնիսկ, երբ մենք ընդունում ենք Քրիստոսին և ապաշխարում մեր մեղքերից, մենք հավանական է սխալվենք և կրկին մեղանչենք: Մենք շարունակաբար պետք է փորձենք ուղղել այդ օրինազանցությունները: Բացի դրանից, մենք պետք է անընդհատ բարելավվենք՝ զարգացնենք Քրիստոսանման հատկանիշներ, մեծացնենք մեր գիտելիքները և ավելի արդյունավետորեն ծառայենք: Երբ մենք ավելի լավ ենք հասկանում, թե Փրկիչն ինչ է ակնկալում մեզանից, ցանկանում ենք ցույց տալ մեր սերը՝ Նրան հնազանդվելով: Այսպիսով, երբ ամեն օր ապաշխարում ենք, մենք տեսնում ենք, որ մեր կյանքը փոխվում է և բարելավվում: Մեր սրտերը և վարքը ավելի է դառնում Քրիստոսանման: Ամեն օր ապաշխարելով մենք կսկսենք զգալ ավելի մեծ ուրախություն:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Մենք բոլորս մեղանչում ենք**

Հռովմայեցիս Գ.23    Ա Հովհաննես Ա.7–8

**Փրկագնում և ներում**

Հելաման 5.10–11

**Ապաշխարություն**

Ալմա 34. 8–17
Վ ևՈւ 58.42–43
ՎևՈւ 61.2
Բ Կորնթացիս Է.9–10
Սուրբ գրքերի ուղեցույց, «Ապաշխարել, Ապաշխարություն»

**Ողորմածությունը հայց է ներկայացնում զղջացողի համար**

Ալմա 12.32–35
Ալմա 42.13, 21–24
Վ ևՈւ 18.10–13

## Մկրտություն՝ մեր առաջին ուխտը



Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքն ու ապաշխարությունը նախապատրաստում են մեզ մկրտության և հաստատման արարողությունների համար: Արարողությունը սրբազան հանդիսակարգ է կամ ծես, որը ցույց է տալիս, որ մենք ուխտի մեջ ենք մտել Աստծո հետ:

Աստված միշտ պահանջել է Իր զավակներից ուխտ կապել: Ուխտը պարտավորեցնող և հանդիսավոր համաձայնություն է Աստծո և մարդու միջև: Աստված խոստանում է օրհնել մեզ և մենք խոստանում ենք հնազանդվել Նրան: Աստված սահմանում է ավետարանական ուխտերի պայմանները, որոնք մենք կամ ընդունում ենք կամ մերժում: Պատվիրանները պահելը բերում է օրհնություններ այս կյանքում և վեհացում գալիք կյանքում:

Նշումներ

Ուխտերը դնում են մեզ Աստծո հանդեպ մեր պարտականությունները հարգելու խիստ պարտավորության տակ: Մեր ուխտերը պահելու համար, մենք պետք է հրաժարվենք այն միջոցառումներից կամ հետաքրքրություններից, որոնք խանգարում են մեզ հարգել այդ ուխտերը: Օրինակ՝ մենք կիրակի օրը հրաժարվում ենք գնումներից և զվարճալի միջոցառումներից, որպեսզի կարողանանք հանգստյան օրը սուրբ պահել: Մենք պետք է ցանկանանք արժանիորեն ստանալ ուխտերը, որոնք Աստված առաջարկում է մեզ և հետո աշխատենք պահել դրանք: Մեր ուխտերը հիշեցնում են մեզ, որ մեր կյանքի յուրաքանչյուր օր պետք է ապաշխարենք: Պատվիրանները պահելով և ուրիշներին ծառայելով մենք ստանում և պահպանում ենք մեր մեղքերի թողությունը:

Ուխտերը սովորաբար կապվում են սրբազան արարողությունների միջոցով, ինչպես օրինակ՝ մկրտությունը: Այդ արարողությունները կատարվում են քահանայության իշխանությամբ: Օրինակ՝ մկրտության արարողության միջոցով մենք ուխտում ենք վերցնել մեզ վրա Հիսուս Քրիստոսի անունը, միշտ հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները: Երբ մենք պահում ենք ուխտի մեր մասը, Աստված խոստանում է՝ Սուրբ Հոգու մշտական ուղեկցությունը, մեր մեղքերին թողություն և կրկին վերածնունդ:

Սրբազան արարողությունների միջոցով, ինչպես օրինակ՝ մկրտությունը և հաստատումը, մենք իմանում ենք Աստծո զորության մասին և զգում ենք այն (տե՛ս ՎևՈւ 84.20): Հիսուսը սովորեցրել է, որ մենք պետք է մկրտվենք ընկղմամբ՝ մեր մեղքերի թողության կամ ներման համար: Մկրտությունը փրկության հիմնական արարողությունն է: Ոչ մի մարդ չի կարող մտնել Աստծո արքայությունն առանց մկրտվելու: Քրիստոսը մեզ օրինակ է տվել՝ մկրտվելով:

Ընկղմամբ մկրտությունը Փրկչի մահվան, թաղման և հարության խորհրդանիշն է: Նույն ձևով այն ներկայացնում է մեր մեղավոր հին կյանքի ավարտը և պարտավորություն՝ ապրել նոր կյանքով որպես Քրիստոսի աշակերտ: Փրկիչը սովորեցնում էր, որ մկրտությունը վերածնունդ է: Երբ մենք մկրտվում ենք, մենք սկսում ենք վերածնման գործընթացը և դառնում Քրիստոսի հոգևոր որդիներն ու դուստրերը (տե՛ս Մոսիա 5.7–8, Հռովմայեցիս Ը.14–17):

Մենք պետք է մկրտվենք վերականգնված Եկեղեցու՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ դառնալու և ի վերջո երկնքի արքայությունը մտնելու համար: Այս արարողությունը Աստծո օրենքն է և պետք է ի կատար ածվի Նրա իշխանությամբ: Եպիսկոպոսը կամ միսիայի նախագահը պետք է քահանայություն կրողին թույլտվություն տան մկրտություն կամ հաստատում կատարելու համար:

Փոքր երեխաները մկրտվելու կարիքը չունեն և փրկագնվում են Հիսուս Քրիստոսի ողորմածության միջոցով: (տե՛ս Մորոնի 8.4–24) Նրանք չպետք է մկրտվեն մինչև հասնեն պատասխանատվության տարիքի, որը ութ տարեկանն է: (տե՛ս ՎևՈւ 68.27)

Մինչև մկրտությունը մենք ցույց ենք տալիս ուխտի մեջ մտնելու մեր պատրաստակամությունը ՝ բոլոր պատվիրանները մեր մնացած կյանքի ընթացքում պահելու համար: Մկրտությունից հետո մենք ցույց ենք տալիս մեր հավատքը՝ պահելով մեր ուխտերը: Հաղորդությունը ճաշակելով մենք կանոնավորապես նորոգում ենք մկրտության ժամանակ կապած ուխտերը: Հաղորդությունն ամեն շաբաթ ճաշակելը պատվիրան է: Այն օգնում է մեզ արժանի մնալ և Հոգին միշտ մեզ հետ ունենալ: Այն ամենշաբաթյա հիշեցում է մեր ուխտերի մասին: Հիսուս Քրիստոսը այս արարողությունը բացատրեց Իր Առաքյալներին հենց Իր Քավությունից առաջ: Նա վերականգնեց այն Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Փրկիչը պատվիրեց, որ քահանայություն կրողները սպասավորեն հաղորդությունը ի հիշատակ Իր մարմնի և Իր արյան, որը հեղվել էր մեզ համար: Հաղորդությունը արժանի ճաշակելով մենք խոստանում ենք միշտ հիշել Նրա զոհաբերությունը, մենք նորոգում ենք մեր խոստումները և մենք կրկին ստանում ենք խոստում, որ Հոգին միշտ մեզ հետ կլինի:

Նշումներ

## Նախքան մկրտությունը

Հավաստիացեք, որ [ունկնդիրները] հավատք են զարգացրել Քրիստոսի հանդեպ, ապաշխարել են օրինազանցություններից և կատարել բավականաչափ փոփոխություններ իրենց կյանքում՝ համաձայն Վարդապետություն և Ուխտեր 20.37 հատվածում պատվիրվածի: Ունկնդիրները պետք է ապրեն ըստ բարոյական արժանավորության սկզբունքների, ըստ Իմաստության Խոսքի և պարտավորվեն տասանորդ վճարել: Եթե միսիոներները զգում են, որ անհրաժեշտ է լրացուցիչ պատրաստություն, նրանք պետք է հետաձգեն մկրտությունը, մինչև ունկնդիրը համապատասխանի չափանիշին:

«Մինչև մկրտությունը ունկնդիրը պետք է ստանա բոլոր միսիոներական [դասերը], հանդիպի եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին և հաճախի մի քանի հաղորդության ժողովների» ("Statement on Missionary Work," First Presidency letter, 11 Dec. 2002):

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Քրիստոսի օրինակը**

| | |
|---|---|
| 2 Նեփի 31.4–18 | Մատթեոս Գ.13–17 |

**Մկրտության ուխտը**

| | |
|---|---|
| Մոսիա 5.8–10 | ՎևՈւ 20.37 |
| Մոսիա 18.8–10 | |

**Մկրտության համար պատրաստվածության աստիճանը**

| | |
|---|---|
| 2 Նեփի 9.23 | Մորոնի 6.1–4 |
| Մոսիա 18.8–10 | ՎևՈւ 20.37 |
| Ալմա 7.14–15 | Գործք Բ.37–39 |
| 3 Նեփի 11.23–27 | |

**Տերը հաստատում է հաղորդությունը**

| | |
|---|---|
| 3 Նեփի 18.1–18 | Ղուկաս ԻԲ.15–20 |

**Մկրտության խոստացված օրհնությունները**

| | |
|---|---|
| Մոսիա 4.11–12 | Հովհաննես Գ.5 |
| Մորոնի 8.25–26 | Հռովմայեցիս Զ.4 |

**Հաղորդության աղոթքները**

| | |
|---|---|
| Մորոնի 4 և 5 | ՎևՈւ 20.75–79 |

**Հաղորդությունը ճաշակելը**

| | |
|---|---|
| ՎևՈւ 27.2 | Ա Կորնթացիս ԺԱ.23–29 |

**Իշխանության անհրաժեշտությունը**

| | |
|---|---|
| ՎևՈւ 22 | Եբրայեցիս Ե.4 |

## Սուրբ Հոգու պարգևը

Հիսուսը սովորեցնում է, որ մենք պետք է մկրտվենք ջրով և նաև Հոգով: Ջրով մկրտությանը պետք է հետևի Հոգով մկրտությունը, հակառակ դեպքում այն ոչ լրիվ է: Միայն, երբ մենք ստանում ենք մկրտություն և Սուրբ Հոգու պարգևը, այդ ժամանակ կարող ենք ստանալ մեր մեղքերին թողություն և դառնալ լիովին հոգեպես վերածնված: Այդ ժամանակ մենք սկսում ենք նոր հոգևոր կյանք, որպես Քրիստոսի հետևորդներ:

Մարդուն ջրով մկրտելուց հետո, մեկ կամ մի քանի լիազորված քահանայություն կրողներ դնում են իրենց ձեռքերը այդ անձնավորության գլխին և հաստատում նրան Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: Նրանք այդ ժամանակ շնորհում են նրան Սուրբ Հոգին:

Նրանք, ովքեր ստանում են Սուրբ Հոգու պարգևը և մնում արժանի, կարող են վայելել Նրա ընկերակցությունը իրենց ողջ կյանքի ընթացքում: Սուրբ Հոգին սրբագործող, մաքրագործող ազդեցություն ունի մեզ վրա: Սուրբ Հոգին վկայում է Քրիստոսի մասին և օգնում մեզ ճանաչել ճշմարտությունը: Նա տալիս է հոգևոր ուժ և օգնում է մեզ անել այն, ինչ ճիշտ է: Նա սփոփում է մեզ փորձության և տրտմության պահերին: Նա զգուշացնում է հոգևոր կամ ֆիզիկական վտանգից: Սուրբ Հոգին տալիս է զորություն, որով մենք սովորեցնում ենք և սովորում: Սուրբ Հոգու պարգևը Երկնային Հոր ամենաթանկարժեք պարգևներից մեկն է: Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք զգալ մեր հանդեպ Աստծո սերը և առաջնորդությունը: Այս պարգևը հավերժական ուրախության և հավերժական կյանքի խոստման կանխավայելումն է:

Նշումներ

Քահանայության իշխանությունը, որն անհրաժեշտ էր այս արարողությունը կատարելու համար, ուրացության հետևանքով վերցվել էր դարեր առաջ և այն վերականգնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Միայն Եկեղեցու անդամակցության միջոցով մարդ կարող է ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Այս իշխանությունը Եկեղեցուն դարձնում է տարբեր աշխարհում գոյություն ունեցող որևէ այլ կրոնից: Համաձայն Տիրոջ իսկ հայտարարության, այն միակ ճշմարիտ և կենդանի Եկեղեցին է ողջ աշխարհի երեսին: (ՎևՈւ 1.30)

**Առաջնորդություն Սուրբ Հոգուց**

Բացատրեք նրանց, ում սովորեցնում եք, որ սատանան ընդդիմանում է Աստծուն և գայթակղում է մարդկանց մեղք գործել: Այն բարի զգացումները պահպանելու համար, որ նրանք ունեցել են, երբ հանդիպում էին միսիոներներին, նրանք պետք է կարդան Մորմոնի Գիրքը, աղոթեն, հաճախեն Եկեղեցի և հնազանդվեն պատվիրաններին: Բացատրեք, որ Սուրբ Հոգու մշտական ուղեկցությունն ունենալը մկրտվելու և հաստատվելու առավելություններից մեկն է:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Սուրբ Հոգու բնույթը**

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 130.22–23 | Գաղատացիս Ե.22–23 | Սուրբ գրքերի ուղեցույց, «Սուրբ Հոգի» |
| Հովհաննես Գ.1–8 | | |

**Սուրբ Հոգու օրհնություններն ու ազդեցությունը**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 32.1–5 | Մովսես 6.61 | Սուրբ գրքերի ուղեցույց, «Սուրբ Հոգի» |
| 2 Նեփի 33.1–2 | Հովհաննես ԺԴ.26 | |

**Սուրբ Հոգու պարգևի կարևորությունը**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 31.11–12, 18, 21 | 3 Նեփի 27.19–20 | ՎևՈւ 33.15 |
| 3 Նեփի 18.36–37 | ՎևՈւ 19.31 | Գործք ԺԹ.1–6 |
| 3 Նեփի 19.13 | | |

## Համբերել մինչև վերջ

Երբ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքով, ապաշխարությամբ, և մկրտությամբ ու հաստատման արարողություններով մտնում ենք նեղ և անձուկ արահետը, մենք պետք է ամեն ջանք գործադրենք մնալու այդ արահետի վրա: Մենք դա անում ենք շարունակելով հավատք գործադրել Հիսուս Քրիստոսի հանդեպ, ապաշխարելով, ստանձնելով պարտավորություններ և հետևելով Հոգուն:

Երբ մեզ ներվել են մեր մեղքերը, մենք պետք է փորձենք ամեն օր զերծ մնալ մեղքից, որպեսզի կարողանանք միշտ Սուրբ Հոգին մեզ հետ ունենալ: Մկրտության ուխտով մենք խոստանում ենք մեր Երկնային Հորը, որ մենք կհնազանդվենք Նրա պատվիրաններին մեր մնացած կյանքի ընթացքում: Եթե սխալվում ենք, մենք պետք է ապաշխարենք, որպեսզի պահպանենք ուխտի օրհնությունները: Մենք խոստանում ենք կատարել բարի գործեր, ծառայել ուրիշներին և հետևել Փրկչի օրինակին: Սուրբ գրքերում ողջ կյանքի ընթացքում տևող այս պարտավորությունը հաճախ կոչվում է «համբերել մինչև վերջ»:

Հետևելով ավետարանի ուղուն, մենք կարող ենք մոտենալ Աստծուն, հաղթել գայթակղությանը և մեղքին ու վայելել Սուրբ Հոգու պարգևն ավելի առատորեն: Երբ ողջ մեր կյանքի ընթացքում համբերատար, հավատարմորեն և հետևողականորեն հետևում ենք այս ուղուն, մենք արժանանում ենք հավերժական կյանքի:

Նշումներ

Քրիստոսի հանդեպ հավատքը, ապաշխարությունը, ուխտեր կապելը, նորոգելն ու պահելը և Հոգով մաքրվելը դառնում է ապրելաձև: Մեր գործողություններն ամենօրյա կյանքում ձևավորվում են և ղեկավարվում այս սկզբունքներով: Խաղաղություն և ուրախություն է գալիս՝ հետևելով այդ ուղուն և մենք աստիճանաբար Քրիստոսանման հատկանիշներ ենք զարգացնում: Ի վերջո, երբ հետևենք այս ուղուն և «առաջ մղվենք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ. . . և համբերենք մինչև վերջ» մեզ խոստացված է՝ «Դուք կունենաք հավերժական կյանք: (2 Նեփի 31.20):

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Համբերել մինչև վերջ**

2 Նեփի 9.24
3 Նեփի 27.16–17
Մատթեոս Ժ.22
2 Նեփի 31.14–20

**Օրհնություններ նրանց համար, ովքեր համբերում են**

1 Նեփի 13.37
3 Նեփի 15.9
ՎևՈւ 14.7

## Մկրտվելու հրավեր

Մկրտվելու և հաստատվելու հրավերը պետք է լինի որոշակի և ուղղակի՝ «Կհետևե՞ք Հիսուս Քրիստոսի օրինակին մկրտվելով մեկի կողմից, որը կրում է Աստծո քահանայության իշխանությունը: Մենք մկրտության ծառայություն ունենք [ամսաթիվ]: Կպատրաստվե՞ք մկրտվելու այդ օրը»:

Նշումներ

## Գաղափարներ ուսուցման համար

Այս բաժինը պարունակում է գաղափարներ, որոնք դուք կարող եք օգտագործել այս դասը պատրաստելիս և ուսուցանելիս: Աղոթքով հետևեք Հոգուն, երբ որոշում եք, թե ինչպես օգտագործել այս գաղափարները: Ավելացրեք ձեր ընտրած գաղափարները դասի ծրագրին: Հիշեք, որ այս գաղափարները առաջարկներ են, ոչ թե պահանջներ, որպեսզի օգնեք բավարարել նրանց կարիքները, ում սովորեցնում եք:

### Կարճ դասի ծրագիր (3–5 րոպե)

Հիսուս Քրիստոսի ավետարանը միակ ճանապարհն է դեպի հավերժական կյանք: Նրա ավետարանի առաջին սկզբունքներն ու արարողություններն են՝ ապաշխարություն, ընկղմամբ մկրտություն և Սուրբ Հոգու պարգևը: Հետո մենք պետք է համբերենք մինչև վերջ: Այս սկզբունքները կիրառելով մեր ողջ կյանքում, մենք հետևում ենք Փրկչի օրինակին, սովորում ենք ապրել Նրա պատվիրաններով և զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ: Մենք կարող ենք ներվել մեր մեղքերի համար և կկարողանանք վերադառնալ ապրելու մեր Երկնային Հոր ներկայության մեջ:

- Քրիստոսի միջոցով մենք կարող ենք մաքրվել մեղքից
- Հավատք ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ
- Ապաշխարել
- Մկրտվել
- Ստանալ Սուրբ Հոգու պարգևը
- Համբերել մինչև վերջ

#### Պարտավորություններ

- Կշարունակե՞ք զարգացնել հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ շարունակելով սովորել Նրա ավետարանի մասին:
- Կապաշխարե՞ք և կաղոթե՞ք մեղքերի ներման համար:
- Կմկրտվե՞ք որպես Հիսուս Քիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: [ամսաթիվ]: Կհաստատվե՞ք և կստանա՞ք Սուրբ Հոգու պարգևը:
- Այս կիրակի կհաճախե՞ք եկեղեցի մեզ հետ:
- Կարո՞ղ ենք նշանակել ժամ մեր հաջորդ հանդիպման համար:
- Պատվիրաններ 4-րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

### Միջին դասի ծրագիր (10–15 րոպե)

Մեր ուղերձը մեկն է՝ հավատք և հույս: Մենք սիրում և պաշտում ենք Հիսուս Քրիստոսին: Մեր երջանկության համար Աստծո ծրագրում Նա կենտրոնական տեղ է գրավում: Քրիստոսի քավող զոհաբերությունը մեզ համար հնարավոր է դարձնում հավերժական կյանք ունենալ Աստծո ներկայության մեջ: Եթե ապրենք Իր ավետարանով, Նա ողորմածաբար կների մեզ մեր մեղքերը: Նա կապաքինի մեզ և կփոխարինի այս կյանքում հանցանքն ու ամոթը խաղաղությամբ և երջանկությամբ:

Հիսուս Քրիստոսի ավետարանը պարզ է: Այն սկսվում է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով: Մենք հավատում ենք Նրան,

Նշումներ

վստահում ենք Նրան և կախված ենք Նրանից: Այդպիսի հավատքն առաջնորդում է մեզ ապաշխարելու, դադարելու անել սխալ բաներ և շարունակելու անել այն բաները, որոնք ճիշտ են: Նրա հանդեպ մեր հավատքը մեզ նաև մղում է ցանկանալ ցույց տալ մեր սերը՝ պահելով Նրա պատվիրանները, ներառյալ մկրտության պատվիրանը: Մկրտությունից հետո, Նա խոստանում է մեզ տալ Սուրբ Հոգու պարգևը: Սուրբ Հոգին կառաջնորդի մեզ, կմխիթարի մեզ և կօգնի մեզ գիտենալ ճշմարտությունը: Մենք կարող ենք մեր սրտում և մեր մտքում իմանալ, թե երբ է Սուրբ Հոգին մեզ հետ: Մենք կունենանք խաղաղության, սիրո և ուրախության զգացումներ: Մենք կցանկանանք ծառայել ուրիշներին: Մենք կձգտենք մեր ողջ կյանքում գոհացնել Աստծուն:

Հիսուս Քրիստոսը վերականգնել է Իր ավետարանը վերջին օրերի մարգարեի միջոցով: Մենք իմանում ենք ավետարանի մասին Մորմոնի Գրքից, որը կարող եք կարդալ, նրա մասին խորհել և աղոթել: Աստված կասի ձեզ Սուրբ Հոգու զորությամբ, որ այն ճիշտ է: Երբ իմանաք, որ այն ճիշտ է, դուք կցանկանաք ապաշխարել և մկրտվել, որպեսզի կարողանաք ստանալ ձեր մեղքերին թողություն և Սուրբ Հոգու պարգևը:

Պարտավորություններ

- Կշարունակե՞ք զարգացնել հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ շարունակելով սովորել Նրա ավետարանի մասին:
- Կապաշխարե՞ք և կաղոթե՞ք ձեր մեղքերի ներման համար:
- Կմկրտվե՞ք որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: [ամսաթիվ]: Կհաստատվե՞ք և կստանա՞ք Սուրբ Հոգու պարգևը:
- Այս կիրակի կհաճախե՞ք եկեղեցի մեզ հետ:
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել մեր հաջորդ հանդիպման համար:
- Պատվիրաններ 4-րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

**Լրիվ դասի ծրագիր (30–45 րոպե)**

- Քրիստոսի միջոցով մենք կարող ենք մաքրվել մեղքից
  - Աստված աշխարհ ուղարկեց Իր Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: (տե՛ս Հովհաննես Գ.16–17)
  - Միայն Քրիստոսի շնորհով և ողորմածությամբ մենք կարող ենք մաքուր դառնալ մեր մեղքերից: (տե՛ս 2 Նեփի 2.6–8)
  - Մենք պարտավոր ենք ընդունել Քրիստոսին, ապաշխարել և հնազանդվել:
- Հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ
  - Մենք պետք է հավատանք Քրիստոսին որպես աշխարհի Փրկչի:
  - Նա ցանկանում է, որ մենք ընդունենք և հետևենք Իր ուսմունքներին:
  - Մենք օրհնություններ ենք ստանում, երբ հնազանդվում ենք (տե՛ս ՎևՈւ 130.20–21):

Նշումներ

- Ապաշխարություն
  - Քրիստոսի հանդեպ հավատքը տանում է ապաշխարության (տե՛ս Բ Կորնթացիս Է.9–10):
  - Մենք զգում ենք աստվածավախ տրտմություն (տե՛ս Բ Կորնթացիս Է.9–10):
  - Մենք դադարում ենք անել այն բաները, որոնք սխալ են, և շարունակում ենք անել այն բաները, որոնք ճիշտ են:
  - Մենք խոստովանում ենք մեր մեղքերը, իսկ լուրջ մեղքերը խոստովանում ենք Եկեղեցու ղեկավարներին, ովքեր կարող են օգնել մեզ ապաշխարել (տե՛ս ՎևՈւ 58.43):
  - Մենք ստանում ենք ներում, հանցանքը և տրտմությունը փոխարինվում են խաղաղությամբ (տե՛ս Ալմա 36.17–21):
- Մկրտություն՝ մեր առաջին ուխտը
  - Արարողությունը սրբազան ծես է, որով մենք ուխտ ենք կապում Աստծո հետ:
  - Ուխտը հանդիսավոր համաձայնություն է Աստծո և Իր զավակների միջև:
  - Ուխտերն օրհնություններ են բերում:
  - Մենք մկրտվում ենք ընկղմամբ՝ մեղքերի թողության համար (տե՛ս Հավատո Հանգանակներ 1.4):
  - Երբ մկրտվում ենք, սկսում ենք Քրիստոսին նվիրված նոր կյանք (տե՛ս Հռովմայեցիս Զ.3–8):
  - Մկրտությունը պետք է կատարվի մեկի կողմից, որն ունի քահանայության իշխանություն:
  - Մենք նորոգում ենք մեր ուխտերը ամեն շաբաթ ճաշակելով հաղորդությունը (ՎևՈւ 20.77, 79):
- Սուրբ Հոգու պարգևը
  - Ընկղմամբ մկրտությանը հետևում է Հոգու մկրտությունը, այդ երկուսն անբաժանելի են:
  - Քահանայություն կրողները շնորհում են Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրմամբ:
  - Սուրբ Հոգին ուսուցանում է մեզ, մաքրում, սփոփում, վկայում ճշմարտության մասին, ջերմացնում և ուղղություն տալիս մեզ: (տե՛ս 2 Նեփի 32.1–5, Մոսիա 5.1–6, Մորոնի 10.5, ՎևՈւ 36.2)
- Համբերել մինչև վերջ
  - Մենք պետք է շարունակենք մնալ այդ նույն արահետի վրա, երբ մկրտվում ենք և հաստատվում:
  - Մենք անում ենք, ինչ մեզանից կախված է, մեղքից զերծ մնալու համար, որպեսզի կարողանանք վայելել Սուրբ Հոգու պարգևը:
  - Հավատարմորեն հետևելով հավատքի ավետարանական արահետին, ապաշխարությանը, կապելով և պահելով ուխտեր և ստանալով Սուրբ Հոգին, մենք կարող ենք պատրաստվել հավերժական կյանքի համար: (տե՛ս 2 Նեփի 31.14–20)
  - Մենք անընդհատ պետք է ապաշխարենք մեր ողջ կյանքի ընթացքում: (տե՛ս ՎևՈւ 19.15–20)

Նշումներ

Պարտավորություններ

- Կշարունակե՞ք զարգացնել հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ շարունակելով սովորել Նրա ավետարանի մասին:
- Կապաշխարե՞ք և կաղոթե՞ք ձեր մեղքերի ներման համար:
- Կմկրտվե՞ք որպես Հիսուս Քիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: [ամսաթիվ]: Կհաստատվե՞ք և կստանա՞ք Սուրբ Հոգու պարգևը:
- Այս կիրակի կհաճախե՞ք եկեղեցի մեզ հետ:
- Կարո՞ղ ենք ժամ նշանակել մեր հաջորդ հանդիպման համար:
- Պատվիրաններ 4-րդ դասից, որոնք կնախընտրեիք ներառել:

## Ուսուցումից հետո տրվող հարցեր

- Ի՞նչ հարցեր ունեք մեր սովորացրածի մասին:
- Ի՞նչ է նշանակում ապաշխարել:
- Ինչո՞ւ է Սուրբ Հոգու պարգևը հանդիսանում ավետարանի գլխավոր մասը:
- Ինչո՞ւ է ձեզ համար կարևոր մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը:
- Կա՞ն բաներ մեր Եկեղեցու ժողովներում, որոնք դուք չհասկացաք:
- Ի՞նչը ձեզ դուր եկավ մեր Եկեղեցու ժողովների ժամանակ:

## Հիմնական սահմանումներ

- **Ավետարան.** Աստծո փրկության ծրագիրը, որը հնարավոր է դառնում Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Ավետարանը պարունակում է հավերժական ճշմարտություններ կամ օրենքներ, ուխտեր և արարողություններ, որոնք անհրաժեշտ են մարդկությանը՝ Աստծո ներկայության մեջ վերադառնալու համար:

- **Համբերել մինչև վերջ.** Հավատարիմ մնալ Աստծո պատվիրաններին չնայած գայթակղությանը, ընդդիմությանը և կյանքի ընթացքում գոյություն ունեցող ձախորդությանը:

- **Հաստատում.** Մելքիսեդեկյան Քահանայություն կրողների կողմից ձեռնադրում, Եկեղեցու անդամ դառնալու և Սուրբ Հոգու պարգևը շնորհելու համար:

- **Հավերժական կյանք.** Ընտանիքներով հավերժ ապրել Աստծո ներկայության մեջ: (տե՛ս ՎևՈւ 132.19–20) Հավերժական կյանքը մարդուն տրված մեծագույն պարգևն է:

- **Շնորհ.** Հիսուս Քրիստոսի զորությունից եկող իրավունքը, որը մեզ թույլ է տալիս ձեռք բերել օրհնություններ այս կյանքում և հասնել հավերժական կյանքի և վեհացման՝ հավատք գործադրելով, ապաշխարելով և պատվիրանները պահելու համար մեծագույն ջանք գործադրելով: Այսպիսի աստվածային օգնություն կամ ուժ տրվում է Հիսուս Քրիստոսի ողորմածության և սիրո միջոցով: Մենք բոլորս աստվածային շնորհի կարիքն ունենք՝ Ադամի անկման և նաև մեր թուլությունների պատճառով:

- **Ողորմածություն.** Կարեկցանքի, գորովանքի և ներման հոգին: Ողորմածությունն Աստծո հատկանիշներից է: Հիսուս Քրիստոսը Իր քավող զոհաբերության միջոցով առաջարկում է մեզ ողորմածություն՝ ապաշխարության պայմանով:

Նշումներ

- **Վերահաստատում.** Վերադարձնել մի բան, որը վերցվել էր կամ կորել:

- **Ուխտ.** Համաձայնագիր Աստծո և Իր զավակների միջև: Մենք համաձայնագրի մեջ չենք գործում որպես հավասար կողմեր: Աստված տալիս է ուխտի պայմանները և մենք համաձայնվում ենք անել այն, ինչ Նա խնդրում է մեզ անել: Հետո, Աստված մեր հնազանդության դեպքում, մեզ խոստանում է որոշակի օրհնություններ: Մենք արարողություններ ենք ստանում ուխտի միջոցով: Երբ կապում ենք այդպիսի ուխտեր, խոստանում ենք հարգել դրանք: Օրինակ՝ Եկեղեցու անդամները ուխտ են կապում Տիրոջ հետ մկրտության ժամանակ և նորոգում են այդ ուխտերը՝ ընդունելով հաղորդությունը: Մենք հետագա ուխտեր ենք կապում տաճարում: Տիրոջ ժողովուրդը ուխտի ժողովուրդ է: Մենք մեծապես օրհնվում ենք, երբ Տիրոջ հետ պահում ենք մեր ուխտերը:

Այլ տերմիններ, որոնց համար կարող է հետագա սահմանման անհրաժեշտություն ծագել նրանց համար, ում ուսուցանում եք:

- Մեղքից մաքուր
- Խոստովանություն
- Ներում
- Աղոթք
- Հաղորդություն
- Անձնվեր և նեղ արահետ
- Գայթակղություն

# Պատվիրանները

*Պատրաստվել մկրտության և հաստատման համար*

Նշումներ



## Սովորեցնելով այս դասը

Այս դասում կան պատվիրանները սովորեցնելու բազմաթիվ ուղիներ: Օրինակ՝ դուք կարող եք այս դասից սովորեցնել պատվիրաններից մի քանիսը որպես առաջին երեք դասերի մաս կամ կարող եք սովորեցնել մի քանի պատվիրաններ որպես մեկ դաս: Ինչ էլ որ անեք, պետք է որոշեք՝ ելնելով ունկնդիրների կարիքներից, առաջնորդվելով Հոգու կողմից:

## Պատրաստվեք սովորեցնել

Պատվիրանները սովորեցնելու ձեր նպատակն է՝ մարդկանց օգնել ըստ ավետարանի ապրել, գործադրելով հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ և ապաշխարելով պատրաստվել մկրտությանը և հաստատմանը: Պատվիրաններին հնազանդվելով մարդիկ կաճեն իրենց վկայության մեջ, ցույց կտան, որ նրանք ունեն «կոտրված սիրտ և ապաշխարող հոգի» և կսկսեն ապաշխարել բոլոր իրենց մեղքերից (տե՛ս Մորոնի 6.1–4, ՎևՈւ 20.37):

Այս դասը տարբերվում է առաջին երեք դասերից: Առաջին երեք դասը բացատրում են Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետական հիմքը: Այս դասը բացատրում է որոշակի պատվիրաններ, որոնք Աստված տվել է, որպեսզի մեզ օգնի կիրառել ավետարանական սկզբունքները մեր կյանքում:

Այս դասը սովորեցնելու համար կան բազմաթիվ եղանակներ: Մոտեցումը, որը կընտրեք դուք, որոշվում է ունկնդիրների կարիքներով և Հոգու առաջնորդությամբ: Անընդհատ մտածեք և աղոթեք, թե ինչպես օգնեք ունկնդիրներին ապրել ավետարանով: Այդ գաղափարներն են՝

- Մեկ կամ մեկից ավելի պատվիրաններ սովորեցնել որպես առաջին երեք դասերի մաս: Երբ այդ անեք, հաշվի առեք սկզբունքը, որը սովորեցվում է Ալմա 12.32 հատվածում. «Աստված տվեց նրանց պատվիրաններ՝ փրկագնման ծրագիրը նրանց հայտնի դարձնելուց *հետո*» (շեղագիրն ավելացված է): Որոշ պատվիրաններ, ինչպես օրինակ՝ աղոթքը և սուրբ գրքերի ուսումնասիրությունը լավ կլինի սովորեցնել որպես առաջին երեք դասերի մաս: Մյուս պատվիրանները լավ կլինի սովորեցնել առաջին երեք դասերում գտնվող ավետարանի վարդապետական հիմքը դնելուց հետո:
- Սովորոցնել երկու կամ երեք պատվիրան մեկ դասի ընթացքում:

Նշումներ

- Սովորեցնել մեկ պատվիրան մեկ դասի ընթացքում:
- Սովորեցնել պատվիրանները ավետարանի ենթատեքստում: Համառոտ ամփոփեք Հիսուս Քրիստոսի ավետարանի վերաբերյալ դասը, նախքան մեկ կամ մի քանի պատվիրաններ սովորեցնելը: Այդ անելիս դուք կարող եք օգնել ունկնդիրներին տեսնել, թե ի պատրաստություն մկրտության և հաստատման ինչպես են պատվիրանները համապատասխանում Փրկչի հանդեպ հավատք գործադրելու ավելի մեծ հեռանկարի և ապաշխարության հետ: Նրանց կյանքը կարող է օրհնվել, երբ տեսնեն Հիսուս Քրիստոսի ավետարանը որպես ապրելաձև:

Դուք որոշ ունկնդիրների գուցե կարողանաք սովորեցնել մի քանի այցելությամբ, իսկ ուրիշներին գուցե անհրաժեշտ լինի ավելի շատ այցելություններ: Դուք ազատ եք սովորեցնել դասերն այն ձևով, որը լավագույնը կհամարեք՝ օգնելու մարդկանց լիովին պատրաստվել իրենց մկրտության և հաստատման համար: Ձեր նպատակը միայն նյութը մատուցելը չէ, այլ ուրիշներին օգնելն է գալ դեպի Քրիստոս՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևը ստանալու և մինչև վերջ համբերելու միջոցով:

Դասերը հազվադեպ պետք է տևեն 45 րոպեից ավելի: Դուք հնարավոր է պարզեք, որ ժամանակը կարող է թույլ տալ միայն ավելի կարճ ուսուցողական այցելություններ: Այդ դեպքում, ձեզ գուցե անհրաժեշտ լինի հաճախակի, կարճ այցելություններ կատարել՝ ընդգրկելով նյութի ավելի փոքր ծավալ:

Կան շատ ուղիներ որոնցով դուք կարող եք մոտենալ այս դասի ուսուցմանը: Ո՞ր պատվիրանն եք սովորեցնում, ե՞րբ եք սովորեցնում, որքա՞ն ժամանակ եք տրամադրում դրան, լավագույնս որոշվում է ելնելով ունկնդիրների կարիքներից և Հոգու առաջնորդությունից:

## Սովորնք պատվիրանների և պարտավորությունների մասին

Այս դասը սովորելիս հետևեք ներքոհիշյալ օրինակներին՝

- Սովորեք այն մասը, որը նկարագրում է պատվիրանը և գրեք երեք կամ հինգ հիմնական կետերով դասի հստակ պլան:
- Ձեր ընկերակցին սովորեցրեք երկու կամ երեք րոպեանոց տարբերակ: Փորձեք, թե ինչպես պիտի ներկայացնեք պարտավորություն ստանձնելու յուրաքանչյուր առաջարկը և ինչպես պիտի լուծեք հարցերը:
- Քննարկեք ուղիներ, որպեսզի հետևեք յուրաքանչյուր պարտավորության կատարմանը, որոնք ունկնդիրները ստանձնել են:

## Հնազանդություն

Աստված մեզ պատվիրաններ է տալիս մեր օգտի համար: Դրանք հրահանգներ են սիրառատ Երկնային Հորից՝ մեզ օգնելու համար երջանիկ կյանք ունենալ: Նա նաև տալիս է մեզ ազատ կամք կամ բարու և չարի միջև ընտրություն կատարելու ունակություն և հնարավորություն: Երբ հնազանդվում ենք Աստծուն, մենք հետևում ենք Հոգու ազդեցությանը և ընտրում ենք ենթարկվել Նրա կամքին: Պատվիրաններին հնազանդվելը բերում է մեզ խաղաղություն այս կյանքում և հավերժական կյանք գալիք աշխարհում: Հնազանդությունը ցույց է տալիս մեր սերն Աստծո հանդեպ: Անհնազանդությունը բերում է մեզ տրտմություն:

Երկնային Հայրը գիտի մեր թուլությունները և համբերատար է մեր հանդեպ: Նա օրհնում է մեզ, երբ մենք ձգտում ենք հնազանդվել Նրա պատվիրաններին: Նա ակնկալում է մեզանից հնազանդվել Իրեն, որպեսզի Նա կարողանա օրհնել մեզ:

Նշումներ

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ազատ կամք**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 2.26–29 | ՎևՈւ 58.26–29 | Սուրբ գրքերի ուղեցույց, «Ազատ կամք» |
| Ալմա 12.31 | ՎևՈւ 82.8–10 | |

**Հնազանդություն**

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 130.20–21 | Հովհաննես ԺԴ.15, 21 | Ժողովող ԺԲ.13 |

### Պարտավորություն

- Կհնազանդվե՞ք Աստծո օրենքներին:

## Հաճախ աղոթենք

Աստված պատվիրել է մեզ աղոթել Իրեն: Դուք կարող եք աղոթել ցանկացած ժամանակ և ինչ պայմաններում էլ որ լինեք: Տերը սովորեցրել է մեզ առավոտյան և երեկոյան ծնկի իջնել և աղոթել անհատապես և մեր ընտանիքների հետ: Մեր Երկնային Հայրը լսում և պատասխանում է մեր աղոթքներին: Ամենօրյա աղոթքի միջոցով մենք աստվածային առաջնորդություն և օրհնություններ ենք ստանում: Մենք միշտ պետք է անկեղծորեն աղոթենք: Պետք է նաև աղոթենք «անկեղծ միտումով», որը նշանակում է, որ մենք պարտավոր ենք գործել ըստ այն պատասխանի, որը մենք կստանանք:

Մենք աղոթում ենք հավատքով մեր Երկնային Հորը՝ Հիսուս Քրիստոսի անունով (տե՛ս Մովսես 5.8): Քանի որ Նա մեր Հայրն է և մենք Նրա զավակները, Նա կպատասխանի մեր աղոթքներին: Աղոթքները սկսում ենք դիմելով մեր Երկնային Հորը: Ավարտում ենք մեր աղոթքները ասելով. «Հիսուս Քրիստոսի անունով, ամեն»:

Մեր սիրառատ Երկնային Հոր հետ մենք խոսում ենք աղոթքով՝ անկեղծորեն և ազնվորեն: Մենք երախտագիտություն ենք հայտնում և շնորհակալություն մեր օրհնությունների համար: Մենք կարող ենք խոստովանել մեր սերը Նրա հանդեպ: Մենք նաև օգնություն, պաշտպանություն և ուղղություն ենք խնդրում ըստ մեր կարիքների:

Երբ հավատքով աղոթենք, սրտաբացությամբ և անկեղծ միտումով, կտեսնենք Աստծո ազդեցությունը մեր կյանքում: Նա կառաջնորդի մեզ մեր ամենօրյա կյանքում և կօգնի մեզ ճիշտ որոշումներ ընդունել: Նա կօրհնի մեզ հանգստի և խաղաղության զգացումներով: Նա կնախազգուշացնի մեզ վտանգի դեպքում և կուժեղացնի մեզ՝ դիմակայելու գայթակղությանը: Նա կների մեզ մեր մեղքերը: Մենք ավելի մոտիկ կզգանք Նրան: Մենք պետք է սովորենք ճանաչել Նրա ազդեցությունը մեր կյանքում: Պետք է սովորենք լսել Հոգու հանդարտ և մեղմ ձայնը:

Մենք կարող ենք զգալ, երբ Սուրբ Հոգին մեզ սովորեցնում է ճշմարտությունը: Մեր միտքը լցված կլինի ոգեշնչող և վեհացնող մտքերով: Մենք կլուսավորվենք և մեզ կտրվի նոր գիտելիք: Մեր սրտերը կունենան խաղաղության, ուրախության և սիրո զգացումներ: Կցանկանանք բարիք անել և օգտակար լինել ուրիշներին: Այս զգացումները դժվար է նկարագրել, բայց կարող ենք ճանաչել դրանք, երբ ինքներս զգանք:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 32.8–9 | ՎևՈւ 6.22–23 | ՎևՈւ 19.28 |
| Ենովս 1.1–12 | ՎևՈւ 8.2–3 | Գ Թագավորաց ԺԹ. 11–12 |
| Ալմա 34.17–28 | ՎևՈւ 9.7–9 | Սուրբ գրքերի ուղեցույց, «Աղոթք» |
| Մորոնի 10.3–5 | | |

Նշումներ

**Պարտավորություն**

- Անհատապես և որպես ընտանիք ծնրադիր կաղոթե՞ք ամեն օր:

## Ուսումնասիրենք սուրբ գրքերը

Սուրբ գրքերը Իր զավակների հետ Աստծո գործերի մասին գրված հիշատակարաններն են, որոնք գրվել են մարգարեների կողմից Սուրբ Հոգու ազդեցության տակ: Մենք ցույց ենք տալիս մեր հավատքը՝ սովորելով, հավատալով և հնազանդվելով Աստծո հայտնած խոսքին: Մենք ջանասիրաբար հետազոտում ենք սուրբ գրքերը՝ ճշմարտությունը հասկանալու համար: Մենք սնվում ենք դրանցով, որովհետև դրանք բացում են դեպի հայտնություն տանող դուռը և ցույց տալիս մեզ, թե ինչ պետք է մենք անենք և ինչպիսին պետք է դառնանք: Մենք հետազոտում ենք սուրբ գրքերը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին իմանալու համար: Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը պարգև է Աստծուց և գալիս է Նրա խոսքը սովորելու և Նրա ավետարանով ապրելու միջոցով: Եկեղեցու կողմից ընդունված սուրբ գրքերն են, որոնք նաև կոչվում են կանոնիկ գրքեր՝ Սուրբ Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը: Մենք պետք է ամեն օր ուսումնասիրենք այս սրբազան գրքերը:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 19.22–23 | 2 Նեփի 31.19–20 | Հովհաննես Ի.31 |
| 2 Նեփի 9.50–51 | 2 Նեփի 32.3–5 | Բ Տիմոթեոս Գ.14–17 |
| 2 Նեփի 25.26 | Ալմա 32.28–30 | Բ Պետրոս Ա.20–21 |
| 2 Նեփի 29.1–13 | Հովհաննես Ե.39 | |

**Պարտավորություն**

- Ամեն օր, անհատապես և որպես ընտանիք կուսումնասիրե՞ք սուրբ գրքերը:

## Սուրբ պահեք հանգստության օրը

Հանգստության օրվա մեր վարքը Աստծուն պատվելու և պաշտելու մեր պարտավորության արտացոլումն է: Հանգստության օրը սուրբ պահելով, մենք ցույց ենք տալիս Աստծուն մեր ուխտերը պահելու հոժարակամությունը: Ամեն հանգստյան օր մենք գնում ենք Տիրոջ տունը Նրան երկրպագելու: Երբ այնտեղ մենք ճաշակում ենք հաղորդությունը՝ հիշելով Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությունը, մենք նորոգում ենք մեր ուխտերը և ցույց տալիս, որ հոժար ենք ապաշխարել մեր մեղքերից և սխալներից:

Այդ օրը մենք հանգստություն ենք առնում մեր գործերից: Երբ հաճախում ենք Եկեղեցու ծառայություններին և միասին երկրպագում, միմյանց զորացնում ենք: Մենք վերահաստատում ենք մեր կապերը ընկերների և ընտանիքի հետ: Մեր հավատքը զորանում է, երբ ուսումնասիրում ենք սուրբ գրքերը և ավելի շատ բան սովորում վերականգնված ավետարանի մասին:

Երբ հասարակությունը կամ ազգը անփույթ է դառնում հանգստյան օրվա գործերի հանդեպ, նրա կրոնական կյանքը խաթարվում է և կյանքի բոլոր կողմերի վրա այն բացասական ազդեցություն է թողնում: Հանգստյան օրը սուրբ պահելու հետ կապված օրհնությունները ետ են պահվում: Հանգստյան օրը մենք պետք է խուսափենք գնումներ անելուց և այլ առևտրական և սպորտային միջոցառումների մասնակցելուց, որոնք այժմ համատարած սրբապղծում են հանգստության օրը:

Վերջին Օրերի Սրբերը պետք է խուսափեն այս սուրբ օրը աշխարհիկ գործերից՝ տոգորվելով հանգստյան օրվանը համապատասխանող պաշտամունքի, գոհաբանության,

ծառայության, և ընտանիքի վրա կենտրոնացած գործերի ոգով: Երբ Եկեղեցու անդամները ձգտում են իրենց հանգստյան օրվա գործերը համապատասխանեցնել Տիրոջ Հոգու կամքի հետ, նրանց կյանքը կլցվի ուրախությամբ և խաղաղությամբ:

Նշումներ

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| 3 Նեփի 18.1–25 | Ելից Ի.8–11 | Եսայիա ԾԸ.13–14 |
| ՎևՈւ 59.9–15 | Ելից ԼԱ.12–17 | |

### Նստեք ունկնդիրների կամ Եկեղեցու անդամների հետ

Երբ հաճախում եք հաղորդության ժողովների կամ ցցի համաժողովների, միսիոներական զույգերը պետք է նստեն ունկնդիրների, նորադարձների կամ անդամների հետ: Նրանք չպետք է նստեն մյուս միսիոներների հետ:

### Պարտավորությունները

- Հանգստյան օրը սուրբ կպահե՞ք:
- Կպատրաստվե՞ք հաղորդությունը արժանիորեն ընդունել:

**Մկրտության հարցազրույցի ժամանակ տրվող հարցեր**

- Ի՞նչ եք հասկանում հանգստության օր ասելով, ներառյալ` ամենշաբաթյա հաղորդությունը ճաշակելը և ուրիշներին ծառայություն մատուցելը: Կամենու՞մ եք հնազանդվել այս օրենքին [նախքան մկրտությունը]:

## Մկրտություն և հաստատում

Աստծո ուղուն հետևելու մեր ցանկությունը դրսևորելու մի ձև է մկրտվելը և հաստատվելը: Երբ մկրտվում ենք և հաստատվում, մենք մտնում ենք ուխտի մեջ Աստծո հետ, որ մենք կվերցնենք մեզ վրա Հիսուս Քրիստոսի անունը և միշտ կհիշենք Նրան և կպահենք Նրա պատվիրանները: Մենք նաև խոստանում ենք կանգնել որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում և օգնել նրանց, ովքեր կարիքի մեջ են (տե՛ս Մոսիա 18.8–9): Իր հերթին Աստված խոստանում է Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը, մեղքերին թողություն և կրկին վերածնունդը:

### Պարտավորությունները

- Կմկրտվե՞ք և կհաստատվե՞ք:
- Ունկնդիրներին կհրավիրե՞ք մասնակցելու մկրտության արարողությանը:
- Եթե հնարավոր է ունկնդիրներին հրավիրեք հաղորդության ժողովի, երբ որևէ մեկին հաստատում են:

**Մկրտության հարցազրույցի ժամանակ տրվող հարցեր**

- Մկրտության հարցազրույցի բոլոր հարցերը:

### Մկրտվելու հրավեր

Մկրտվելու և հաստատվելու հրավերը պետք է լինի որոշակի և ուղղակի. «Կհետևե՞ք Հիսուս Քրիստոսի օրինակին` մկրտվելով մեկի կողմից, որը կրում է Աստծո քահանայության բանալիները: Մենք մկրտության արարողություն ունենք [ամսաթիվ]: Կնախապատրաստվե՞ք այդ օրը մկրտվելու համար»:

Նշումներ

## Հետևենք մարգարեին

Ճշմարտությունը գիտություն է բաների մասին, ինչպես դրանք իրականում կան, կային և կլինեն: Այն չի փոփոխվում պայմանների կամ ժամանակի հետ: Ճշմարտությունը նույնն է բոլոր դարերում և մշակույթներում: Ողջ ճշմարտության աղբյուրն Աստված է: Մենք կարող ենք հավատք ունենալ Նրա հանդեպ, որովհետև մենք գիտենք, որ Նա մեզ կսովորեցնի միայն ճշմարտությունը: Աստված ցանկանում է, որ բոլոր Իր զավակներն իմանան ճշմարտությունը: Այդ պատճառով, մարգարեների և առաքյալների միջոցով Նա հայտնում է փրկության համար անհրաժեշտ ճշմարտությունները: Նա մեզ հայտնում է ճշմարտությունը՝ անհատապես, սուրբ գրքերի միջոցով և անձնական հայտնությամբ:

Մարգարեն կանչվում է և ընտրվում Աստծո կողմից և նա մեծ հավատքով արդարակյաց մարդ է: Տերը նրան է հայտնում ճշմարտությունը Սուրբ Հոգու միջոցով: Նա պատվիրում է Իր մարգարեին բոլոր մարդկանց սովորեցնել ճշմարտությունը: Օրհնված են նրանք, ովքեր հավատում են Աստծո խոսքին, երբ այն հայտնի է դարձվում Իր մարգարեի միջոցով:

Քրիստոսի Եկեղեցին կառուցված է առաքյալների և մարգարեների հիմքի վրա, ովքեր հայտնությամբ ղեկավարում են Եկեղեցին: Տերը կանչեց Ջոզեֆ Սմիթին որպես այս վերջին ժամանակաշրջանի առաջին մարգարե և առաջնորդ: Նրա իրավահաջորդները, ովքեր այսօր ղեկավարում են Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին նույնպես առաքյալներ ու մարգարեներ են: Եկեղեցու Նախագահը այսօր ապրող մարգարե է: Մենք պետք է հավատք ունենանք Աստծո ընտրյալ մարգարեի հանդեպ, ձեռք բերենք համոզվածություն նրա աստվածային կոչման հանդեպ և հետևենք նրա ուսմունքներին:

Մեզ պարբերաբար Եկեղեցու առաջնորդներին հրապարակավ հաստատելու հնարավորություններ են տրվում: *Հաստատել* նշանակում է աջակցել: Մենք պետք է պատրաստվենք, որպեսզի, երբ մարգարեներն ու առաքյալները խոսում են, Սուրբ Հոգին կարողանա հաստատել այն ճշմարտությունները, որոնք նրանք սովորեցնում են, և մենք այդ ժամանակ կարող ենք վճռել հետևել այն խորհրդին, որ նրանք մեզ տալիս են:

Նրանք, ովքեր լսում և հետևում են ապրող մարգարեների և առաքյալների խորհրդին, չեն մոլորվի: Ապրող մարգարեների ուսմունքներն ապահովում են հավերժական ճշմարտության խարիսխ փոփոխվող արժեքների աշխարհում և օգնում մեզ խուսափել թշվառությունից և տրտմությունից: Աշխարհի խառնաշփոթությունն ու պայքարը չեն ճնշի մեզ, և մենք կարող ենք վայելել Աստծո կամքի հետ ներդաշնակության մեջ լինելու համոզվածությունը:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| Մոսիա 15.11–12 | ՎևՈւ 21.1–7 | Եփեսացիս Բ.19–20 |
| Ալմա 13.1–6 | ՎևՈւ 136.37–38 | Եփեսացիս Դ.11–14 |
| 3 Նեփի 12.1–2 | Հովհաննես ԺԵ.16 | Եբրայեցիս Ե.4 |
| ՎևՈւ 1.37–38 | Գործք Ժ.34–44 | Ամովս Գ.7 |

### Պարտավորություններ

- Կհանդիպե՞ք եպիսկոպոսին:
- Կհաստատե՞ք և կհետևե՞ք Եկեղեցու առաջնորդների խորհրդին:

**Մկրտության հարցազրույցի ժամանակ տրվող հարցեր**

- Հավատու՞մ եք որ [ներկա Եկեղեցու Նախագահը] Աստծո մարգարեն է: Ի՞նչ է դա նշանակում ձեզ համար:

Նշումներ

## Պահինք տաս պատվիրանները

Երկնային Հայրը մեզ պատվիրաններ է տալիս, որպեսզի մենք իմանանք ինչ անել և ինչից խուսափել, որպեսզի ստանանք այն օրհնությունները, որոնք Նա կամենում է տալ մեզ (ուրախություն, խղճի խաղաղություն, տևական երջանկություն): Աստված Մովսեսին հայտնեց Տասը Պատվիրանները իր ժողովրդին առաջնորդելու համար:

- «Բացի ինձանից ուրիշ աստվածներ չունենաս» (Ելից Ի.3): Ուրիշ «աստվածները» կարող են ներառել ունեցվածք, իշխանություն կամ հանրաճանաչություն:
- «Քեզ համար կուռք չշինես» (Ելից Ի.4):
- «Քո Եհովա Աստծո անունը դատարկ տեղը չհիշես» (Ելից Ի.7):
- «Հիշիր հանգստության օրը նրան սուրբ պահելու համար» (Ելից Ի.8):
- «Պատվիր քո հորը և քո մորը» (Ելից Ի.12):
- «Սպանություն մի անիր» (Ելից Ի.13):
- «Շնություն մի անիր» (Ելից Ի. 14):
- «Գողություն մի անիր» (Ելից Ի.15):
- «Քո դրացու դեմ սուտ վկայություն մի անիր» (Ելից Ի.16):
- «Մի ցանկանար» (Ելից Ի.17):

Այսօր Տասը պատվիրանները դեռ ուժի մեջ են: Դրանք սովորեցնում են մեզ պաշտել և ակնածանք ցույց տալ Աստծուն: Դրանք նաև սովորեցնում են մեզ, թե ինչպես վարվենք միմյանց հետ:

### Ոչ մի ուրիշ աստվածներ

Մարդիկ շատ մշակույթներում ընդունում են կամ հարգանք ցույց տալիս առարկաների հանդեպ, որոնք նրանց հիշեցնում են Աստվածության կամ նախնիների մասին: Երբեմն այդ առարկաները, ինչպիսիք են՝ քանդակները, կրոնական խորհրդանշանները կամ պաշտամունքի փոքրիկ առարկաները նույնպես կարող են լինել նրանց նրկրպագության կենտրոնում: Օգնեք նրանց հասկանալ, որ Տերը պատվիրել է մեզ չպաշտել կուռքերի: Խրախուսեք, որ նրանք իրենց տնից հեռացնեն որևէ իր, որ նրանք պաշտում են կամ որին նրանք աղոթում են: Օգնեք նրանց կենտրոնացնել իրենց հավատքը և պաշտամունքը իրենց Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի վրա: Սովորեցրեք նրանց, որ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը կենտրոնացած է կենդանի Քրիստոսի վրա:

Վերականգնված ավետարանում Տերը սովորեցրել է մեզ ինչպես հիշել իրեն: Մենք հիշում ենք Նրան աղոթքով, հաղորդությամբ, և տաճարային պաշտամունքով: Առանձնահատուկ դեպքերում ձեր միսիայի նախագահը կտա ուղղություն:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| Մոսիա 13 | Մատթեոս ԻԲ. 36–40 | Երկրորդ Օրինաց Ե.6–21 |
| ՎևՈւ 59.5–6 | Ելից Ի.1–17 | |

### Պարտավորություն

- Կպահե՞ք տասը պատվիրանները:

Նշումներ

## Ապրենք մաքրաբարոյության օրենքով

Աստված հրճվում է մաքրաբարոյությամբ և ատում է սեռական մեղքը: Մաքրաբարոյությունը ներառում է խստորեն խուսափել սեռական հարաբերություններից մինչև ամուսնությունը և լիակատար հավատարմություն և նվիրվածություն պահպանել կողակցի հանդեպ ամուսնությունից հետո: Նրանք ովքեր ապրում են մաքրաբարոյության օրենքով, վայելում են ինքնատիրապետումից եկող ուժը: Նրանք վայելում են համարձակություն և վստահություն իրենց ընտանեկան հարաբերություններում: Նրանք ավելի առատորեն են վայելում Սուրբ Հոգու ազդեցությունն իրենց կյանքում: Նրանք, ովքեր խախտում են այս օրենքը, ենթակա են ամոթի և հանցանքի երկարատև զգացման, որը ծանրաբեռնում է նրանց կյանքը:

Մաքրաբարոյությունը պահանջում է հավատարմություն մտքերի և գործերի մեջ: Մենք պետք է մաքուր պահենք մեր մտքերը և համեստ լինենք մեր հագուստներում, խոսքերում և գործերում: Մենք պետք է խուսափենք որևէ ձևի պոռնոգրաֆիայից: Մենք պետք է որպես սրբություն վերաբերվենք աստվածատուր ծնունդ տվող ուժին և մեր մարմիններին: Մկրտության թեկնածուները պետք է ապրեն մաքրաբարոյության օրենքով, որն արգելում է տղամարդու և կնոջ միջև օրինական ամուսնությունից դուրս որևէ սեռական հարաբերություն: Նրանք չպետք է մասնակցեն արհեստական վիժման կամ միասեռական հարաբերությունների: Նրանք ովքեր, սեռական մեղք են գործել, կարող են ապաշխարել և ներվել:

### Միասին ապրող զույգեր

Տղամարդիկ և կանայք, ովքեր ապրում են միասին, բայց ամուսնացած չեն, չեն կարող մկրտվել առանց ամուսնանալու կամ միմյանցից բաժանվելու: Նրանք, ովքեր միևնույն ժամանակ ամուսնացած են մեկից ավելի մարդկանց հետ, չեն կարող մկրտվել: Խորհուրդ հարցրեք, միսիայի նախագահից, որը որոշակի ուղղություն կտա յուրաքանչյուր դեպքի համար:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| Հակոբ 2.28 | 3 Նեփի 12.27–30 | Մատթեոս Ե.27–28 |
| Մոսիա 13.22 | ՎևՈւ 42.22–24 | Հռովմայեցիս Ա.26–32 |
| Ալմա 39.3–5 | ՎևՈւ 63.16 | Եփեսացիս Ե.3–5 |

### Պարտավորություն

- Կապրե՞ք մաքրաբարոյության օրենքով:

**Մկրտության հարցազրույց**

- Ի՞նչ եք հասկանում մաքրաբարոյության օրենք ասելով, որն արգելում է տղամարդու և կնոջ միջև օրինական ամուսնությունից դուրս որևէ սեռական հարաբերություն: Դուք կամենու՞մ եք հնազանդվել այս օրենքին [նախքան մկրտությունը]:
- Դուք երբևէ կատարե՞լ եք արհեստական վիժեցում: Իսկ համասեռ հարաբերության մեջ մտե՞լ եք: [Հիշեցում՝ այն մարդը, որը պատասխանում է՝ այո, այս երկու հարցերից որևէ մեկին, պետք է հարցազրույց անցնի միսիայի նախագահի մոտ նախքան մկրտվելը]:

## Հնազանդվեք իմաստության խոսքին

Տերը հայտնել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին առողջության մի օրենք, որը կոչվում է Իմաստության Խոսք: Այս օրենքը սովորեցնում է մեզ, թե ինչ ուտելիք կամ նյութեր մենք պետք է և չպետք է օգտագործենք, որպեսզի պահպանենք մեր մարմինների առողջությունը և զերծ պահենք մեզ չարի ազդեցություններից: Տերը խոստանում է առողջության օրհնություններ, ուժ, չարի դեմ պաշտպանություն և ավելի մեծ ընկալունակություն հոգևոր ճշմարտությունների հանդեպ:

Նշումներ

Հիշեք, որ մեր մարմինները սուրբ են: Մենք պետք է նրանց վերաբերվենք հարգանքով և ակնածանքով: Իմաստության Խոսքը սովորեցնում է, որ մենք պետք է ընդունենք առողջարար սնունդ: Այն խիստ որոշակիորեն սովորեցնում է, որ մենք պետք է խուսափենք վնասակար նյութերից, ներառյալ ալկոհոլը, ծխախոտը, թեյը և սուրճը: Մենք պետք է նաև խուսափենք որևէ տեսակի վնասակար թմրադեղերից: Մկրտվելու և հաստատվելու համար, նրանք, ում սովորեցնում եք, պետք է հրաժարվեն այդ նյութերից: Մարդիկ, ովքեր հնազանդվում են Իմաստության Խոսքին, ավելի ընկալունակ են հոգևոր ճշմարտությունների հանդեպ:

Ձեր միսիայի նախագահը կպատասխանի այն հարցերին, թե ձեր մշակույթում օգտագործվող որոշակի նյութեր ընդգրկված են Իմաստության Խոսքում, թե ոչ:

### Հաղթահարել հակումները

Սովորեցնելով հետևել այս սկզբունքներին, դուք կարող եք լավագույնս օգնել նրանց, ովքեր պայքարում են ծխելը, ոգելից խմիչքները և այլ սովորույթները թողնելու համար: Ստորև բերված առաջարկները վերաբերում են հատկապես Իմաստության Խոսքին, բայց կարող են հարմար լինել այլ հակումների դեպքում ևս:

1. Օգնեք մարդկանց նպատակներ դնել, թե ե՞րբ և ինչպե՞ս ապրեն Իմաստության Խոսքով:
2. Աղոթեք նրանց համար ձեր անձնական աղոթքներում և երբ դուք նրանց հետ եք:
3. Եղեք դրական և աջակցող, եթե նույնիսկ նրանք վերադառնում են վատ սովորույթին:
4. Շարունակեք նրանց սովորեցնել ավետարանը: Սովորեցրեք նրանց ինչպես օգտագործել աղոթքն ու հավատքը որպես ուժի աղբյուրներ:
5. Օգնեք նրանց կանոնավոր եկեղեցի հաճախել և ընկերական հարաբերություններ զարգացնել Իմաստության Խոսքով ապրող մարդկանց հետ, ովքեր հաղթահարել են նույն հակումը:
6. Հարկ եղած դեպքում առաջարկեք նրանց ստանալ քահանայության օրհնություն:
7. Խրախուսեք նրանց հեռացնել վնասակար նյութերն իրենց տնից:

Հակումները հաղթահարելիս մարդկանց օգնելու նպատակով լրացուցիչ հրահանգների համար տես գլուխ 10:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

ՎևՈւ 89 | Ա Կորնթացիս Գ.16–17 | Ա Կորնթացիս Զ.19–20

### Պարտավորություն

- Կապրե՞ք Իմաստության Խոսքով:

**Մկրտության հարցազրույցի ժամանակ տրվող հարցեր**

- Ի՞նչ եք հասկանում Իմաստության Խոսքի վերաբերյալ: Կամենու՞մ եք հնազանդվել այս օրենքին [մինչև ձեր մկրտությունը]:

## Պահեք տասանորդի օրենքը

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամության մեծագույն օրհնություններից մեկն է՝ տասանորդ վճարելու միջոցով, Աստծո արքայության աճի համար ներդրում կատարելու արտոնությունը: Տասանորդը հնադարյան, աստվածային օրենք է: Օրինակ Հին Կտակարանի մարգարե Աբրահամը վճարեց տասանորդ այն ամենից, ինչ ուներ: (տես՝ Ալմա 13.15)

Նշումներ

Նրանց, ովքեր տասանորդ են վճարում Տերը խոստանում է, որ Նա «կբացի. . . երկնքի պատուհանները և . . . օրհնություն կթափի մինչև որ նրա համար տեղ չլինի»: (Մաղաքիա Գ.10) Այդ օրհնությունները կարող են լինել աշխարհիկ և հոգևոր, բայց դրանք կգան նրանց, ովքեր հնազանդվում են այս աստվածային օրենքին:

Տասանորդ նշանակում է մեկ տասներորդը և Տերը պատվիրել է մեզ տալ մեկ տասներորդը մեր հասույթի, որը հասկացվում է եկամուտ իմաստով, որպեսզի մենք կարողանանք օրհնվել: Տասանորդի օրենքը մեզ հնարավորություն է տալիս օգնել Նրա արքայության կառուցմանը: Մեր տասանորդները սուրբ են Տիրոջ համար և մենք տասանորդ վճարելով պատվում ենք Նրան: Աստված խոստանում է առատորեն օրհնել նրանց, ովքեր ազնիվ տասանորդ են վճարում: Նրանք, ովքեր տասանորդ չեն վճարում, կողոպտում են Աստծուն (տե՛ս Մաղաքիա Գ.8): Նրանք իրենց են պահում մի բան, որը արդարացիորեն պատկանում է Նրան: Մենք պետք է առաջինը դրոնենք Աստծո արքայությունը և տասանորդը այդ անելու կարևոր ուղի է: Տասանորդ վճարելը մեր հավատքի արտահայտությունն է: Այն Աստծո և Նրա գործի հանդեպ մեր հավատքի դրսևորումն է:

Տասանորդի ֆոնդերն օգտագործվում են օժանդակելու Եկեղեցու գործունեությանը, ինչպես օրինակ՝ տաճարների և ժողովատների կառուցմանն ու վերանորոգմանը, ավետարանը ողջ աշխարհին հասցնելուն, տաճարային և ընտանեկան աշխատանքի իրականացմանը և այլ աշխարհասփյուռ գործունեությանը: Տասանորդից չի վճարվում եկեղեցու տեղական ղեկավարներին, ովքեր ծառայում են, առանց որևէ վարձատրություն ստանալու:

Եկեղեցու տեղական ղեկավարները ուղարկում են ամեն շաբաթ ստացված տասանորդը ուղիղ Եկեղեցու գլխավոր վարչություն: Խորհուրդը, որը կազմված է Առաջին Նախագահությունից և Տասներկուսի Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից, որոշում է հատուկ ուղիներ տասանորդի սրբազան ֆոնդերի օգտագործման համար:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Տասանորդ**

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 119 | Եբրայեցիս Է.1–2 | Ղևտացոց ԻԷ.30–33 |
| ՎևՈւ 120 | Ծննդոց ԺԴ.18–20 | Մաղաքիա Գ.7–12 |

**Հավատք**

| | |
|---|---|
| 3 Նեփի 13.33 | Եթեր 12.6 |

**Պարտավորություն**

- Երբ մկրտվեք, կապրե՞ք տասանորդի օրենքով:

**Մկրտության հարցազրույցի ժամանակ տրվող հարցեր**

- Ի՞նչ եք հասկանում տասանորդի օրենքի մասին: Կամենու՞մ եք հնազանդվել այս օրենքին:

## Պահք ծոմի օրենքը

Նրանց, ովքեր հնազանդվում են ծոմապահության Աստծո պատվիրանին, հասանելի են մեծ օրհնություններ: Ծոմ պահել նշանակում է առանց ուտելու և խմելու ապրել մի որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Սովորաբար յուրաքանչյուր ամսվա առաջին կիրակին իր երկու ճաշերի հետ միասին հատկացվում է որպես ծոմ պահելու, աղոթելու և վկայություն բերելու հատուկ օր: Ծոմապահությունն ու աղոթքն արվում են միասին: Երբ ծոմ ենք պահում և հավատքով

Նշումներ

աղոթում, ավելի ընկալունակ ենք դառնում Տիրոջից մեր աղոթքներին պատասխաններ և օրհնություններ ստանալուն: Նա խոստանում է մեզ, որ անընդհատ կառաջնորդի մեզ: Մենք պետք է ծոմ պահենք և աղոթենք հատուկ նպատակներով: Ծոմն անձնական է և հոգևոր և մենք չպետք է ուշադրություն հրավիրենք այն փաստին, որ մենք ծոմ ենք պահում:

Ճշմարիտ կրոնը ներառում է աղքատների մասին հոգ տանելը: Մենք պետք է օգնենք նրանց բավարարել իրենց ֆիզիկական և հոգևոր կարիքները: Երբ մենք ծոմ ենք պահում, Եկեղեցուն փող ենք նվիրաբերում աղքատներին ու կարիքավորներին հոգ տանելու համար: Մենք դա անվանում ենք ծոմի նվիրատվություն: Մենք տալիս ենք առնվազն փողի այն գումարը, որ խնայում ենք երկու ճաշի ընթացքում ծոմ պահելով: Սակայն մենք չպետք է սահմանափակենք մեր նվիրատվությունը երկու ճաշի արժեքով: Մեզ քաջալերվում է առատաձեռն լինել, որքանով որ մեր հնարավորությունները թույլ են տալիս: Աղքատներին հոգ տանելով մենք կատարում ենք մեր մկրտության ուխտերը և պահպանում մեր մեղքերի թողությունը:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ծոմապահություն**

| | | |
|---|---|---|
| Օմնի 1.26 | Ալմա 17.2–3 | ՎևՈւ 88.76 |
| Ալմա 5.45–46 | Մորոնի 6.5 | Մատթեոս Զ.1–4, 16–18 |
| Ալմա 6.6 | ՎևՈւ 59.12–16 | Եսայիա ԾԸ.6–11 |

**Աղքատներին հոգ տանելը**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 4. 16–27 | Ալմա 4.12–13 | Հակոբոս Ա.27 |
| Մոսիա 18.8–10 | Մատթեոս ԻԵ.34–46 | Եսայիա ԾԸ.3–12 |

**Պարտավորություններ**

- Հաջորդ ծոմի կիրակի ծոմ կպահե՞ք և կաղոթե՞ք հատուկ նպատակի համար:
- Կնվիրաբերե՞ք առատ ծոմի նվիրատվություն [մկրտվելուց հետո]:

## Ինչպե՞ս նվիրաբերել տասանորդներ և նվիրատվություններ

Տասանորդներն ու նվիրատվությունները վճարվում են կամավոր և գաղտնի: Անդամները կարող են տասանորդներ և նվիրատվություններ վճարել ցանկացած ժամանակ, բայց սովորաբար ավելի լավ է եկամտի տասանորդը վճարել, երբ այն ստանում եք և ծոմի նվիրատվությունը՝ ծոմի օրը: Անդամները նվիրատվություն են անում լրացնելով նվիրատվության թերթիկ, որը վերցնում են եպիսկոպոսությունից: Անդամը պահում է դեղին օրինակը և սպիտակ օրինակը նվիրատվության հետ դնում իրեն տրված ծրարի մեջ և փակում: Ծրարը տրվում է եպիսկոպոսի կողմից: Այս նվիրատվությունները համարվում են սրբազան և պատկանում են Տիրոջը: Եպիսկոպոսության մի անդամ և գործավարը պահում են բոլոր նվիրատվությունների մանրամասն, գաղտնի հաշվետվություն:

Ամեն տարվա վերջին անդամները ներկայանում են եպիսկոպոսի մոտ՝ տասանորդի կարգավորման զրույցի, հայտարարելու իրենց տասանորդի վճարման հավատարմության մասին: Այդ առանձնազրույցի ժամանակ անդամները ստանում են բոլոր իրենց նվիրատվությունների տարեվերջյան ստացականը: Բոլոր ֆինանսական տեղեկությունները պահվում են խիստ գաղտնի:

Նշումներ

### Սովորեցրեք ինչպե՞ս նվիրաբերել տասանորդներ և նվիրատվություններ

Ցույց տվեք նվիրատվության ձևը և բացատրեք, թե ինչպես օգտագործել այն: Նորադարձների մկրտությունից հետո, ձեզ գուցե անհրաժեշտ լինի օգնել նրանց լրացնել այդ ձևը:

## Հնազանդվեք և հարգեք օրենքը

Վերջին Օրերի Սրբերն ամենուր հավատում են այն երկրի օրենքներին հնազանդվելուն, որտեղ որ ապրում են: Եկեղեցու անդամներին խորհուրդ է տրվում լինել լավ քաղաքացիներ, մասնակցել քաղաքացիական կառավարմանն ու քաղաքական գործընթացներին և մատուցել հասարակական ծառայություն: Սակայն նրանք այդ անում են, որպես շահագրգռված քաղաքացիներ և ոչ թե որպես Եկեղեցու ներկայացուցիչներ:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 58.21 | ՎևՈւ 130.20–21 | Հավատո Հանգանակներ 1.12 |
| ՎևՈւ 98.5 | ՎևՈւ 134 | |

### Պարտավորություն

- Կհնազանդվե՞ք այն երկրի օրենքին, որտեղ ապրում եք:

**Մկրտության հարցազրույցի ժամանակ տրվող հարցեր**

- Երբևէ կատարե՞լ եք լուրջ իրավախախտումներ: Եթե այդպես է, փորձնական ն՞ք ազատվել, թե՞ ազնիվ խոսք տալով: [Ծանոթություն՝ Այն մարդը, որն այո է պատասխանում այս հարցերից որևէ մեկին, պետք է նախքան մկրտվելը հարցազրույց անցնի միսիայի նախագահի մոտ:]

### Գործնական աշխատանք

Այս դասում ընդգրկված յուրաքանչյուր պատվիրանի համար, ցուցակագրեք Տիրոջ կողմից սուրբ գրքերում տրված խոստումները նրանց, ովքեր պահում են պատվիրանները: Ձեր տետրում գրանցեք այն խոստումները, որոնք իրականացել են ձեր կյանքում:

# Օրենքներ և արարողություններ

*Մկրտությունից և հաստատումից հետո*

Նշումներ



© 1998 Del Parson. Մի բազմացրեք:

## Պատրաստվեք սովորեցնել

Նորադարձների մկրտությունից և հաստատումից հետո, ծխի առաջնորդները որոշում են, թե արդյոք ծխի միսիոներները պետք է անցկացնեն ուսուցումը, թե լիաժամկետ միսիոներները և թե որքա՞ն ժամանակ են ներգրավված լինելու լիաժամկետ միսիոներները: Այս դասը պետք է ուսուցանվի նոր անդամներին անմիջապես մկրտությունից և հաստատումից հետո: Դուք կարող եք սկսել նրանց սովորեցնել այդ օրենքների ու արարողությունների մասին մկրտության և հաստատման միջև ընկած ժամանակահատվածում կամ նույնիսկ նախքան մկրտությունը: Մկրտության թեկնածուները պետք է առնվազն տեղյակ լինեն այս օրենքներին և արարողություններին նախքան մկրտությունը:

Այս դասը շատ նման է 4-րդ դասին: Մոտեցումը, որը դուք ընտրում եք, պետք է որոշվի նոր մկրտված նորադարձների կարիքներից ելնելով և Հոգու առաջնորդությամբ: Միշտ մտածեք և աղոթեք, թե ինչպես օգնեք նոր մկրտված նորադարձներին ապրել ավետարանով: Գաղափարները ներառում են՝

- Սովորեցնել նոր անդամին այս դասի օրենքներից և արարողություններից յուրաքանչյուրը, մինչ ամփոփում եք «Վերականգնման ուղերձը», «Փրկության ծրագիրը», և «Հիսուս Քրիստոսի Ավետարանը» դասերը: Օրինակ՝ ամփոփելով Վերականգնման ուղերձը, դուք կարող եք սովորեցնել քահանայության և միսիոներական աշխատանքի մասին, երբ ամփոփեք փրկության ծրագիրը դասը, կարող եք սովորեցնել հավերժական ամուսնության, տաճարների և ընտանեկան պատմության աշխատանքի և Եկեղեցում ուսուցանելու և սովորելու մասին: Երբ ամփոփեք Հիսուս Քրիստոսի ավետարանը դասը, կարող եք սովորեցնել նեղ և անձուկ արահետի և Եկեղեցում ծառայելու մասին:
- Ուսուցանել օրենքներից և արարողություններից երկուսը կամ երեքը որպես մեկ դաս:
- Ուսուցանել մեկ օրենք կամ արարողություն որպես մեկ դաս:

Աշխատեք անդամների հետ՝ օգնելու նոր անդամներին ընդունել և սկսել ապրել ըստ այս օրենքների ու արարողությունների: Օգնեք նոր անդամներին հասկանալ, որ պահելով Աստծո օրենքները, նրանք կպահպանեն իրենց մեղքերի թողությունը և կմնան հավերժական կյանքի արահետի վրա: Նրանք կզգան ավելի մեծ խաղաղություն և ուրախություն: Նրանք կգտնեն պատասխաններ կյանքի հարցերին և ապահովություն այն գիտակցությամբ, որ իրենք պատկանում են Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցուն: Օրենքներն ու արարողությունները հանդիսանում են որպես ուղեցույց՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով և Երկնային Հոր հետ հավերժական կյանք ստանալու ամուր հույսով ուրախ ապրելու համար:

Նշումներ

## Սովորեք օրենքների, արարողությունների և պարտավորությունների մասին

Երբ սովորում եք «Օրենքների և Արարողությունների» մասին, օգտակար է հետևել ստորև բերված հետևյալ կարգին`

- Ուսումնասիրեք բաժինը, որը նկարագրում է վարդապետությունը և գրեք դասի պարզ ծրագիր երեքից հինգ հիմնական կետերով:
- Սովորեցրեք երկուսից երեք րոպեանոց տարբերակ ձեր ընկերակցի համար: Փորձեք, թե ինչպես պետք է ներկայացնեք յուրաքանչյուր պարտավորության առաջարկը և ինչպես պետք է լուծեք հուզող հարցերը:
- Քննարկեք նոր մկրտված նորադարձի ստանձնած յուրաքանչյուր պարտավորությանը հետևելու արդյունավետ ուղիներ:

## Քահանայությունը և օժանդակ կազմակերպությունները

Քահանայությունը Իր զավակների փրկության համար մարդուն տրված Աստծո անունով գործելու զորությունն ու իշխանությունն է: Քահանայության միջոցով մենք ստանում ենք փրկության արարողությունները, ինչպես նաև բժշկման, սփոփանքի և խորհրդի օրհնություններ:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին առաջնորդվում է Հիսուս Քրիստոսի կողմից առաքյալների և մարգարեների միջոցով: Նրանք Աստծո կողմից կանչված արդարակյաց մարդիկ են, որոնց տրված է քահանայություն: Հին ժամանակներում Քրիստոսը կարգեց Իր Առաքյալներին և տվեց նրանց իշխանություն: Այդ իշխանությունը վերցվեց, երբ մարդիկ ուրացան ավետարանը և սպանեցին Քրիստոսին և Առաքյալներին:

Քահանայության իշխանությունը վերականգնվեց 1829թ., երբ Հովհաննես Մկրտիչը հայտնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին: Նա դրեց իր ձեռքերը նրանց գլխին և նրանց շնորհեց Ահարոնյան Քահանայությունը: (տե՛ս ՎևՈւ 13) Կարճ ժամանակ անց առաջին Տասներկու Առաքյալներից` Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը դրեցին իրենց ձեռքերը Ջոզեֆ Սմիթի և Օլիվեր Քաուդերիի վրա և շնորհեցին Մելքիսեդեկյան Քահանայությունը, որը Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը ստացել էին Հիսուս Քրիստոսից: (տե՛ս ՎևՈւ 27.12–13)

Մարդը կարող է ստանալ քահանայության իշխանությունը միայն համապատասխան կարգման միջոցով` մեկի ձեռնադրմամբ, որն իշխանություն ունի: Քահանայություն ստացած մարդուն տրվում է սքանչելի հնարավորություն: Նա մտնում է սրբազան պարտականություններ կատարելու, ուրիշներին ծառայելու, Եկեղեցու կառուցմանն օժանդակելու ուխտի մեջ: Նա պետք է ցանկություն ունենա ծառայելու Աստծուն և պետք է կարգվի այդ իշխանությամբ (տե՛ս ՎևՈւ 4.3, 63.57): Քահանայություն կրողների համար կարևոր է կատարել սրբազան արարողություններ, ինչպես օրինակ` մկրտություն և հաստատում: Երբ քահանայության իշխանությունը արժանիորեն է օգտագործվում, դրսևորվում է Աստծո զորությունը: Քահանայության իշխանությունն օգտագործվում է միայն արդարությամբ, սիրով և համբերությամբ:

Ողջ քահանայությունը գալիս է Աստծուց: Եկեղեցում կան երկու քահանայություններ` Ահարոնյան քահանայություն և Մելքիսեդեկյան Քահանայություն: Ահարոնյան Քահանայությունը սպասավորում է այնպիսի արարողություններ, ինչպիսիք են` մկրտությունը և հաղորդությունը: Արժանի 12 տարեկան և 12-ից անց արական սեռի ներկայացուցիչները ստանում են Ահարոնյան Քահանայություն` մկրտությունից և հաստատումից անմիջապես հետո:

Արժանի չափահաս արական սեռի ներկայացուցիչները ի վեջո ստանում են Մելքիսեդեկյան կամ բարձրագույն Քահանայություն: Այս Քահանայության զորությամբ Եկեղեցու անդամները ստանում են հոգևոր և աշխարհիկ օրհնություններ: Արժանի Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները կարող են շնորհել Սուրբ Հոգու պարգևը, ուրիշներին ձեռնադրել քահանայությամբ ըստ հանձնարարության, օծել հիվանդներին սրբագործված յուղով և տալ բուժման և սփոփանքի օրհնություններ: Արժանի ամուսիններն ու հայրերը, ովքեր կրում են Մելքիսեդեկյան

Նշումներ

Քահանայություն, կարող են իրենց կողակիցներին, երեխաներին ընտանիքի մյուս անդամներին հատուկ օրհնություններ տալ: Տնային ուսուցիչներն այցելում են Եկեղեցու անդամների տները և հոգ տանում անհատների և ընտանիքների մասին: Եպիսկոպոսներն ու ցցի նախագահները դատավորներ են Եկեղեցում: Նրանք լիազորություն ունեն օգնելու Սրբերին, ովքեր մեղանչել են, ապաշխարելու և վայելելու Եկեղեցու անդամակցության լրիվ օրհնությունները: Նրանք հարցազրույց են անցկացնում մարդկանց հետ՝ տաճար մտնելու նրանց արժանավորության մասին երաշխավորելու համար:

Քահանայության ղեկավարության ներքո, օժանդակ կազմակերպություններն օգնում են զորացնել անդամներին: Նրանք մեծ ուժ են միսիոներական աշխատանքի համար, քանի որ նրանք օգնում են գտնել և սովորեցնել ունկնդիրների և ընկերակցել նոր մկրտված նորադարձներին: 18 տարեկան և ավելի բարձր տարիքի կանայք Սփոփող Միության անդամներ են, որոնք ծառայություններ են մատուցում ընտանիքներին, անհատներին և համայնքին: 12–18 տարեկան երիտասարդ կանայք Երիտասարդ կանանց ծրագրի անդամներ են: Նույն տարիքի Երիտասարդ տղամարդիկ մասնակցում են Երիտասարդ Տղամարդկանց ծրագրին: Բոլոր 3–11 տարեկան երեխաները մասնակցում են Երեխաների Միության կազմակերպությանը: Բոլոր 12 տարեկանից բարձր անդամները ցուցակագրված են կիրակնօրյա դպրոցի դասերին:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 18.17 | ՎևՈւ 84.19–20 | Ղուկաս 9.1–6 |
| Ալմա 13.1–19 | ՎևՈւ 107 | Հովհաննես ԺԵ.16 |
| ՎևՈւ 20.38–65 | ՎևՈւ 121. 34–36 | Հակոբոս Ե.14–15 |

**Պարտավորություններ**

- Կպատրաստվե՞ք ստանալ Ահարոնյան Քահանայություն (կամավոր և արժանի 12 տարեկան և բարձր արական սեռի ներկայացուցիչներ):
- Կպատրաստվե՞ք ստանալ Մելքիսեդեկյան Քահանայություն (կամավոր և արժանի չափահաս արական սեռի ներկայացուցիչներ):
- Կմասնակցե՞ք համապատասխան օժանդակ կազմակերպության գործունեությանը:

## Միսիոներական աշխատանք

Այն անդամները, ովքեր կիսվում են ավետարանական փորձառության ուրախությամբ ավելի առատորեն են ունենում Տիրոջ Հոգին: Երբ մենք կիսվում ենք ավետարանով, գնահատում ենք, թե որքան այն թանկ է և իմաստալի մեզ համար և մենք ավելի մեծ սեր ենք զգում Աստծո և ուրիշների հանդեպ: Տերը պատվիրել է Իր հետևորդներին քարոզել ավետարանը ողջ աշխարհում՝ յուրաքանչյուր մարդու հնարավորություն տալով ընդունել կամ մերժել այն: Երբ մարդիկ մկրտվում են, նրանք ուխտի մեջ են մտնում միշտ կանգնել որպես Աստծո վկաներ: Նրանց պատվիրված է կիսվել ավետարանով նրանց հետ, ովքեր դեռ չեն ընդունել այն: Երբ նրանք հավատարմորեն ապրում են ավետարանով, օրինակ են դառնում՝ ցույց տալով իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին այն մեծ օրհնությունները, որոնք գալիս են ավետարանով ապրելիս: Նրանք նաև պետք է օգտվեն հնարավորությունից հարցերի պատասխանելու, կիսվելու տպագրված կամ տեսաձայնագրված նյութերով և հրավիրելու ուրիշներին իմանալ ավելի շատ բան վերականգնված ավետարանի ուղերձի մասին: Անդամները պետք է աղոթեն նրանց համար, ովքեր Եկեղեցու անդամ չեն: Նրանք պետք է աղոթեն միսիոներական հնարավորությունների համար՝ ծառայելու նրանց, ովքեր մեր հավատքից չեն և կիսվեն այն բաների մասին, որոնց իրենք հավատում են: Տերը խոստացել է օգնել անդամներին գիտենալ, թե ավետարանով կիսվելիս ինչ ասեն կամ անեն:

Դաս 5. Օրենքներ և արարողություններ

Նշումներ

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

| | | |
|---|---|---|
| Հակոբ 5.70–75 | ՎևՈւ 19.29 | ՎևՈւ 84.74–76,88 |
| Մոսիա 28.3 | ՎևՈւ 33.8–11 | ՎևՈւ 88.81 |
| ՎևՈւ18.10–16 | ՎևՈւ 38.40–42 | ՎևՈւ 100.5–8 |

## Պարտավորություններ

- Կպատրաստվե՞ք հրավիրել ընկերների և բարեկամների, ովքեր չեն պատկանում Եկեղեցուն, հանդիպելու միսիոներների հետ, ավետարանն ուսումնասիրելու համար:
- Կաղոթե՞ք միսիոներների համար և ավետարանով կիսվելու հնարավորությունների համար:
- Կպատրաստվե՞ք միսիայում ծառայելու համար:

## *Հավերժական ամուսնություն*

Եկեղեցու հիմնական միավորը ընտանիքն է: Ընտանիքում մարդիկ զգում են կյանքի ամենամեծ ուրախություններն ու տխրությունները: Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից և կենտրոնական տեղ է գրավում Նրա զավակների փրկության ծրագրում: Միջոցները, որոնք նշանակված են աստվածությունից մահկանացու կյանքի ստեղծման համար, ապահովվում են ամուսնության միջոցով: Երջանկության աստվածային ծրագիրը հնարավոր է դարձնում ընտանեկան հարաբերությունները շարունակել գերեզմանից այն կողմ: Այնուամենայնիվ ամուսնությունը կարող է լինել հավերժական միայն այն դեպքում, երբ լիազորված քահանայություն կրողները կատարում են կնքման արարողությունը սրբազան տաճարներում և երբ ամուսինններն ու կանայք, ովքեր կնքվել են միասին, պահում են այն ուխտերը, որոնք նրանք արել են: Ամուսիններն ու կանայք պետք է սիրեն միմյանց: Երբ նրանք պահում են պատվիրանները և ապրում ավետարանական սկզբունքներով, նրանք պետք է հարգեն իրենց ամուսնական խոստումները լիակատար հավատարմությամբ: (տե՛ս Ընտանիք: Հայտարարություն Աշխարհին, տե՛ս նաև ՎևՈւ 42.22):

Ընտանեկան կյանքում երջանկության ամենայն հավանականությամբ կարելի է հասնել, երբ այն հիմնված է Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա և երբ ծնողները իրենց ընտանիքը դարձնում են բարձրագույն առաջնահերթությունը: «Ըստ աստվածային ծրագրի հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով և առաքինությամբ և պատասխանատու են ապահովել ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը» (Ընտանիք: Հայտարարություն աշխարհին): Ծնողները միասին պետք է սովորեցնեն Հիսուս Քրիստոսի ավետարանն իրենց երեխաներին և օգնեն նրանց ապրել ըստ այդմ:

Սատանան խստացրել է իր հարձակումը ընտանիքների վրա: Տարիներ առաջ Եկեղեցու ղեկավարները երկուշաբթի երեկոն առանձնացրեցին ընտանեկան երեկոյի համար: Ծնողները պետք է օգտագործեն այս ժամանակը իրենց երեխաներին ավետարանը սովորեցնելու, իրենց հարաբերությունները նրանց հետ ամրացնելու և միասին հաճելի ժամանակ անցկացնելու համար: Ընտանիքը զորացնելու մյուս ուղիներն են՝ ընտանեկան ամենօրյա աղոթքը և սուրբ գրքերի ուսումնասիրությունը, եկեղեցում ընտանիքով երկրպագելը և ուրիշներին ծառայելը: Երկինքը իդեալական տան շարունակությունն է: Քահանայության արարողությունների և արդար ապրելաձևի միջոցով, մենք կարող ենք հավերժ ապրել որպես ընտանիքներ Աստծո ներկայության մեջ:

Նշումներ

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ամուսնություն**

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 42.22 | ՎևՈւ 132.7 | «Ընտանիք: Հայտարարություն աշխարհին» |
| ՎևՈւ 49.15 | Ծննդոց Բ.24 | |
| ՎևՈւ 131.1–4 | Եփեսացիս Ե.25 | |

**Ընտանիք**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 4.14–15 | ՎևՈւ 130.2 | «Ընտանիք: Հայտարարություն Աշխարհին» |
| 3 Նեփի 18.21 | Ա Տիմոթեոս Ե.8 | |

**Սովորեցրեք նրանխանցրին**

| | | |
|---|---|---|
| Ալմա 56.47 | Մովսես 6.55–62 | Եփեսացիս Զ.4 |
| Ալմա 57.21 | ՎևՈւ 68.25–30 | Առակաց ԻԲ.6 |

## Պարտավորություններ

- Ամեն շաբաթ կանցկացնե՞ք ընտանեկան երեկո, ամենօրյա ընտանեկան աղոթք, ամենօրյա սուրբ գրքերի ընթերցանություն և այլ ընտանեկան միջոցառումներ:
- Կպատրաստվե՞ք մտնելու տաճար (1) ստանալու ձեր օժտումը (2) ամուսնանալու ժամանակի և հավերժության համար (3) եթե ամուսնացած եք կնքվելու որպես ամուսին և կին հավերժության համար (4) կնքվելու ձեր երեխաների հետ:
- Հանգստյան օրը կերկրպագե՞ք որպես ընտանիք:
- Կծառայե՞ք ուրիշներին:

## Տաճարներ և ընտանեկան պատմություն

Աստված պատվիրել է Իր ժողովրդին տաճարներ կառուցել: Տաճարում մենք կապում ենք սրբազան ուխտեր և մենք օժտվում ենք կամ մեզ տրվում է զորության պարգև և գիտելիք վերից: Այս զորությունը օգնում է մեզ մեր ամենօրյա կյանքում և հնարավորություն է տալիս մեզ կառուցելու Աստծո արքայությունը: Տաճարում մենք կարող ենք նաև ամուսնանալ ժամանակի և հավերժության համար, այսպիսով հնարավոր դարձնելով ընտանիքների համար հավերժ միասին լինելն Աստծո ներկայության մեջ: Առնվազն մեկ տարվա անդամակցությունից հետո, արժանի չափահասները իրավունք ունեն իրենց եպիսկոպոսից երաշխավորագիր ստանալ իրենց սեփական օժտումը ստանալու համար: Իրենց օժտումները ստանալուց հետո, ամուսնացած զույգերը կարող են կնքվել կամ ամուսնանալ հավերժության համար:

Փրկիչը սիրում է բոլոր մարդկանց և ցանկանում է նրանց փրկությունը: Սակայն միլիոնավոր մարդիկ մահացել են առանց Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը լսելու հնարավորությունն ունենալու կամ ստանալու փրկության արարողություններ: Չնայած Իր սիրառատ շնորհին և ողորմածությանը, Տերը փրկությունը հնարավոր է դարձնում յուրաքանչյուրի համար, ով հնարավորություն չի ունեցել ստանալ, հասկանալ և հնազանդվել ավետարանին իր մահկանացու կյանքի ընթացքում: Ավետարանը քարոզվում է այս մահացած մարդկանց հոգևոր աշխարհում: Եկեղեցու անդամները երկրի վրա կատարում են փրկության արարողություններ իրենց մահացած նախնիների և ուրիշների համար: Հոգևոր աշխարհում ապրող մահացած մարդիկ հնարավորություն ունեն ընդունել կամ մերժել ավետարանը և արարողությունները, որոնք կատարվել են իրենց համար:

Այդ պատճառով, Եկեղեցու անդամներն իրենց նախնիների համար տեղեկություններ են որոնում: Նրանք լրացնում են տոհմաբանական ծառը և ընտանեկան խմբի արձանագրությունները և ներկայացնում մահացած ազգականների անունները, որոնց համար կարիք կա սուրբ

Նշումներ

տաճարներում փրկության արարողություններ կատարել: Սա ընտանեկան պատմության աշխատանք է: 12 տարեկան և 12-ից բարձր արժանի անդամները, ներառյալ նոր անդամները, կարող են իրենց եպիսկոպոսից երաշխավորագիր ստանալ մահացածների համար մկրտություններ կատարելու համար:

**Ընտանեկան պատմություն**

Հրավիրեք նոր անդամներին հանդիպել մի անդամի հետ կամ գնալ տեղի ընտանեկան պատմության կենտրոն (որտեղ մատչելի է) ծանոթացնելու ընտանեկան պատմության կենտրոնին և սկզբնաղբյուրներին, որոնք նրանց համար մատչելի են: Նրանց տվեք ընտանեկան պատմության նյութերի մի օրինակ:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| | | | |
|---|---|---|---|
| ՎևՈւ 43.16 | ՎևՈւ 128 | ՎևՈւ 138 | Ա Կորնթացիս ԺԵ.29 |
| ՎևՈւ 95.8–9 | ՎևՈւ 131 | Սաղմոս ԿԵ.4 | Բրոշյուր՝ *Բարի գալուստ Ընտանեկան* |
| ՎևՈւ 124.22–24 | ՎևՈւ 132 | Ա Պետրոս Գ.18–21 | *Պատմության Կենտրոն* |

**Պարտավորություններ**

- Կպատրաստվե՞ք ստանալ տաճարային արարողություններ: (Մկրտությունից և հաստատումից անմիջապես հետո, 12 տարեկանից բարձր արժանի անդամները տաճար գնալու երաշխավորագիր են ստանում և մասնակցում մահացածների համար մկրտություններին):
- Կմասնակցե՞ք ընտանեկան պատմության աշխատանքին և կներկայացնե՞ք նախնիների անունները մահացածների փոխարեն տաճարային արարողություններ ստանալու համար:

## Ծառայություն

Եկեղեցու անդամակցության մեծ օրհնություններից մեկը ծառայելու հնարավորությունն է: Երբ մենք սիրո ծառայություն ենք մատուցում ուրիշներին, մենք ծառայում ենք Աստծուն: Երբ մկրտվում ենք, մենք ուխտ ենք կապում այդպիսի ծառայություն մատուցել: (տե՛ս Մոսիա 18.8–10) Մենք պետք է տեղյակ լինենք ուրիշների ֆիզիկական և հոգևոր կարիքներին: Այդ ժամանակ մենք տալիս ենք մեր ժամանակը, տաղանդները և միջոցները, որպեսզի օգնենք բավարարելու այդ կարիքները: Մենք հետևում ենք Փրկչի օրինակին, որը եկել էր փրկելու ուրիշներին: Մենք պետք է անենք այն, ինչ Հիսուսն արեց և դառնանք Նրա նման:

Մկրտությունից հետո, շատ շուտով քահանայության առաջնորդների կողմից նոր անդամները ստանում են Եկեղեցուն օգնելու պատասխանատվության օրհնությունը: Դա համարվում է կոչում: Եկեղեցում ողջ աշխատանքը կամավոր է: Այդ ծառայությունների համար ոչ ոք չի վճարվում: Երբ մենք կոչում ենք ընդունում, հրապարակավ հաստատվում ենք Եկեղեցու ժողովում, որպեսզի մյուս անդամները կարողանան իմանալ մեր կոչումն ու աջակցություն ցույց տան: Մենք նաև ձեռնադրվում ենք քահանայության առաջնորդի կողմից և մեզ տրվում են հատուկ օրհնություններ՝ օգնելու մեզ մեր կոչումները կատարելու համար: Եկեղեցին յուրաքանչյուր անդամի տաղանդների և ունակությունների կարիքն ունի՝ զանազան կոչումներ իրականացնելու համար: Բոլոր կոչումները կարևոր են և օգնում են կառուցել Աստծո արքայությունը: Մենք պետք է ընդունենք այդ կոչումները և ջանասիրաբար աշխատենք սովորել և կատարել մեր պարտականությունները: Երբ այդ անենք, մենք կաճենք հավատքով, կզարգացնենք նոր տաղանդներ ու ծառայելու ավելի մեծ ունակություն և կստանանք բազմաթիվ այլ օրհնություններ:

Նշումներ

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| | | | |
|---|---|---|---|
| **Գթություն** | | | |
| Մորոնի 7.43–48 | ՎևՈւ 88.125 | Մատթեոս ԻԲ.36–40 | Ա Կորնթացիս ԺԳ.1–8 |
| **Հոգ տանել աղքատների համար** | | | |
| Մոսիա 4.26 | Ալմա 34.28–29 | ՎևՈւ 52.40 | Մատթեոս ԻԵ.40 |
| **Մենք պետք է ծառայենք** | | | |
| Մոսիա 2.17 | Մոսիա 18.8–10 | ՎևՈւ 42.29 | ՎևՈւ 107.99–100 |

**Պարտավորություններ**

- Դուք կընդունե՞ք և կկատարե՞ք կոչման պարտականությունները (ներառյալ տնային ուսուցչի կամ այցելող ուսուցչի հանձնարարությունը):
- Կաջակցե՞ք ուրիշներին իրենց կոչումներում:

## Ուսուցանել և սովորել Եկեղեցում

Եկեղեցին կազմակերպվել է անդամների կյանքը կատարելագործելու և օրհնելու համար: Այն հնարավորություն է տալիս սովորեցնել միմյանց և աջակցել փրկության համար մեր զոհաբերություններում: Ընտանիքում և Եկեղեցու միջոցով յուրաքանչյուր անդամ ուսուցանվում է ավետարանի վարդապետությունները: Երբ անդամները կանչվում են ուսուցման հանձնարարություններով, նրանց տրվում են նյութեր և օգնություն՝ նրանց հնարավորություն ընձեռելով հաջողության հասնել:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

| | |
|---|---|
| ՎևՈւ 88.77–79 | Եփեսացիս Դ.11–14 |

**Պարտավորություն**

- Կհաճախե՞ք եկեղեցի:

## Համբերել մինչև վերջ

Երբ շարունակում ենք ապրել ըստ ավետարանի, մենք ավելի ենք մոտենում մեր Երկնային Հորը: Մենք վայելում ենք և ավելի գնահատում Փրկչի Քավությունը: Մեր ընտանիքները ավելի են մերձենում միմյանց: Մենք սիրո, ուրախության և խաղաղության ավելի մեծ զգացումներ ենք ունենում, որը գալիս է Քավությունից: Մեր սրտերը փոխվում են և մենք ապահովություն ենք գտնում՝ ապրելով վերականգնված ավետարանով:

Երբ շարունակում ենք հավատք գործադրել Քրիստոսի հանդեպ, ապաշխարել և նորոգել մեր ուխտերը, մենք վայելում ենք Սուրբ Հոգու մշտական առաջնորդությունը: Եթե համբերենք մինչև մեր կյանքի վերջը՝ հավատարիմ մնալով մեր ուխտերին, մենք կստանանք հավերժական կյանք:

Որոշ անդամներ չեն համբերում կամ մնում լիովին ակտիվ: Սակայն մինչև վերջ համբերելը անձնական պատասխանատվություն է: Մենք «գործում ենք [մեր] սեփական փրկությունը» (Փիլիպպեցիս Բ.12), և մենք ծառայում ենք և սիրում նրանց, ում հավատքը թուլացել է ոչ ակտիվ լինելուց:

Նշումներ

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

2 Նեփի 31.20–21
Մորոնի 6.4
ՎևՈւ 20.37
Հավատո Հանգանակներ 1.3
Հովհաննես ԺԴ.15, 21
Փիլիպպեցիս Բ.12
Եփեսացիս Դ.11–14

## Պարտավորություն

- Կշարունակե՞ք ապրել ըստ ավետարանի՝ պահելով մկրտության ուխտերը ձեր ողջ կյանքի ընթացքում:



# Ինչպե՞ս ես կարող եմ ճանաչել և հասկանալ Հոգին

Նշումներ

**Մտածեք այս մասին**

- Ինչո՞ւ է ինձ հարկավոր անձնական հայտնություն ստանալ:
- Ո՞վ է Սուրբ Հոգին և ինչպե՞ս է Նա գործում:
- Ինչո՞ւ ես պետք է աղոթեմ հավատքով:
- Ո՞րն է Հոգու դերը միսիոներական աշխատանքում:
- Ինչպե՞ս ես կարող եմ հասկանալ Սուրբ Հոգու հուշումները:

## Անձնական հայտնություն

Ջոզեֆ Սմիթն ասել է. «Փրկությունը չի գալիս առանց հայտնության, որևէ մեկի համար ապարդյուն է ծառայել առանց դրա» (*History of the Church*, 3:389): Դուք հաջողություն կունենաք ձեր աշխատանքում, եթե սովորեք ձեր ամենօրյա աշխատանքի համար հայտնություն ստանալ և հետևել դրան: Ջոզեֆ Սմիթը նույնպես սովորեցրել է, որ հայտնությունը կարևոր է ձեր ամենաօրյա աշխատանքի համար. «Սա է այն սկզբունքը, որով ղեկավարվում է երկնքի կառավարումը` հայտնությամբ, հարմարեցված այն համգամանքներին, որոնց մեջ գտնվում են արքայության զավակները» (*History of the Church*, 5:135):

Աստված սիրում է ձեզ և Իր բոլոր զավակներին: Նա ուրախությամբ աջակցում է ձեզ ձեր գործնական և հատուկ խնդիրներում: Ձեզ խոստացվել է ոգեշնչում` իմանալու, թե ինչ անել, և զորություն է տրվել` այն անելու համար (տե՛ս ՎևՈւ 43.15–16): Նա ձեզ կօգնի, եթե դուք փորձեք ճանաչել և հասկանալ Հոգին սուրբ գրությունները ջանասիրաբար ուսումնասիրելու միջոցով: Նա կառաջնորդի ձեզ այն մարդկանց մոտ, ովքեր կընդունեն Վերականգնման ուղերձը: Նա ձեզ զորություն կտա, ուղերձը մատուցելու և Քրիստոսի ու Նրա ավետարանի մասին վկայելու համար: Նա կթափի Իր օրհնությունները ձեզ վրա Սուրբ Հոգու պարգևի միջոցով: Նա խնդրում է, որ դուք արժանի լինեք այդ պարգևին, և նաև խնդրեք, փնտրեք և թակեք (տե՛ս ՎևՈւ 4.7; Մատթեոս Է.7–8):

Նշումներ

Մենք ապրում ենք Մորմոնի Գրքի մարգարեների կողմից մարգարեացված ժամանակներում, այն օրերում, երբ մարդիկ «վիճում են մեկը մյուսի հետ և նրանք պիտի սովորեցնեն իրենց իմաստությամբ և ժխտեն Սուրբ Հոգին, որը խոսել է տալիս» (2 Նեփի 28.4; տես նաև 3 Նեփի 29.6; Մորմոն 9.7–8): Սակայն, շատ մարդիկ հոգևոր բաների կարիք ունեն: Եթե դուք սովորեք անձնական հայտնություն ստանալ, դուք կկարողանաք սովորեցնել զորությամբ և իշխանությամբ (տե՛ս Ալմա 17.3), որովհետև Սուրբ Հոգին ձեզ խոսելու զորություն է տալիս (տե՛ս 1 Նեփի 10.22):

Դուք պետք է անձնական հայտնություն փնտրեք և Սուրբ Հոգու միջոցով ստանաք այն, երբ մարդկանց օգնում եք մկրտվել և հաստատվել: Հավատք ունեցեք, որ անձնական հայտնություն կստանաք, որը ձեզ կառաջնորդի օրեցօր: Սուրբ Հոգին ձեզ կօգնի ձեր աշխատանքի բոլոր բնագավառներում:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Մորոնին իր վերջին վկայության մեջ գրել է հորդորանքի մի քանի խոսքեր (տե՛ս Մորոնի 10.2): Կարդացեք Մորոնի 10 գլուխը և ձեր խոսքերով գրեք, թե ինչ է Մորոնին հորդորում անել Մորմոնի Գրքի ընթերցողին: (*Հորդորել* նշանակում է մեկին խրախուսել կամ կոչ անել ինչ-որ բան անել:)

## Քրիստոսի լույսը

Մարդը կարող է հոգևոր առաջնորդություն ստանալ մկրտվելուց և հաստատվելուց առաջ: Հոգևոր այս ազդեցությունը սկսվում է Քրիստոսի Լույսով, որը «տրվում է ամեն մարդու, որպեսզի նա կարողանա բարին տարբերել չարից» (Մորոնի 7.16; տե՛ս նաև հատվածներ 14–19):

Քրիստոսի լույսը աստվածային էներգիա է, զորություն կամ ազդեցություն, որը Քրիստոսի միջոցով գալիս է Աստծուց և բոլոր բաներին կյանք և լույս է տալիս: Դա այն օրենքն է, որով ղեկավարվում են բոլոր բաները երկնքում և երկրի վրա: Այն նաև մարդկանց օգնում է հասկանալ ավետարանի ճշմարտությունները և օգնում է նրանց դնել ավետարանի այդ ուղու վրա, որը տանում է դեպի փրկություն:

«Քրիստոսի լույսը չպետք է շփոթել Սուրբ Հոգու հետ: Քրիստոսի լույսը անձնավորություն չէ: Դա ազդեցություն է, որը գալիս է Աստծուց և մարդուն նախապատրաստում է Սուրբ Հոգին ստանալուն: Այն բոլոր մարդկանց կյանքում լավ ազդեցություն է:

Քրիստոսի լույսի դրսևորումներից մեկը խիղճն է, որը մարդուն օգնում է տարբերել ճիշտը սխալից: Երբ մարդիկ ավելի շատ են սովորում ավետարանի մասին, նրանց խիղճը դառնում է ավելի զգայուն: Մարդիկ, ովքեր ուշադրություն են դարձնում Քրիստոսի լույսին, գնում են դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը» (տե՛ս The Guide to the Scriptures, “Light, Light of Christ;” տե՛ս նաև ՎևՈւ 84.46–47):

Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ասել է. «Միսիոների համար . . . կարևոր է . . .. իմանալ, որ Սուրբ Հոգին կարող է աշխատել Քրիստոսի Լույսի միջոցով: Ավետարանի ճշմարտությունների ուսուցիչը չի սերմանում ինչ-որ օտար կամ նոր բան մեծահասակի կամ երեխայի մեջ: Ավելի շուտ, միսիոները կամ ուսուցիչը կապի մեջ է մտնում Քրիստոսի Հոգու հետ, որն արդեն այնտեղ է: Ավետարանը նրանց համար ծանոթ ձայն կլինի» (“The Light of Christ,” address delivered at the seminar for new mission presidents, 22 June 2004, 2):

## Սուրբ Հոգին

**Սուրբ Հոգու անձը:** Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է: Նա հոգևոր անձ է և չունի մսից ու ոսկորից մարմին (տե՛ս ՎևՈւ 130.22): Նա Մխիթարիչն է, որը, ինչպես խոստացել է Փրկիչը, պետք է սովորեցնի Իր հետևորդներին բոլոր բաները և նրանց հիշողության մեջ արթնացնի բոլոր բաները, որոնք Նա նրանց սովորեցրել է (տե՛ս Հովհաննես ԺԴ.26):

Նշումներ

**Սուրբ Հոգու զորությունը.** Այն վկայությունը, որը տրվում է անկեղծ ունկնդիրներին մկրտությունից առաջ, գալիս է Սուրբ Հոգու զորությամբ: «Սուրբ Հոգու զորությունը կարող է տրվել մարդուն մկրտությունից առաջ և վկայել, որ ավետարանը ճշմարիտ է» (Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Սուրբ Հոգի»): Այն մարդուն վկայություն է տալիս Հիսուս Քրիստոսի, նրա աշխատանքի և երկրի վրա նրա ծառաների աշխատանքի մասին: Բոլոր մարդիկ կարող են իմանալ Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին Սուրբ Հոգու զորության միջոցով: «Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.5):

**Սուրբ Հոգու պարգևը.** Ունկնդիրները, որոնք վկայություն են ստանում, դեռ չեն ունենում Սուրբ Հոգու մշտական ընկերակցության խոստումը: Ջոզեֆ Սմիթն ասել է. «Կա տարբերություն Սուրբ Հոգու և Սուրբ Հոգու պարգևի միջև: Կոռնելիոսը ստացավ Սուրբ Հոգին մկրտվելուց առաջ, որը Աստծո համոզիչ զորությունն էր Ավետարանի ճշմարտացիության մասին, սակայն նա չէր կարող ստանալ Սուրբ Հոգու պարգևը, մինչև չմկրտվեր: Եթե նա իր վրա չվերցներ նշանը կամ արարողությունը, Սուրբ Հոգին, որը հավաստել էր Նրան Աստծո ճշմարտության մասին, կթողներ նրան» (*History of the Church*, 4:555):

«. . . Սուրբ Հոգու մշտական ընկերակցության իրավունքը, եթե մարդն արժանի է, պարգև է, որը կարող է ստացվել միայն Մելքիսեդեկյան Քահանայություն կրողի կողմից` ձեռնադրությամբ, նրանից հետո, երբ կատարվել է լիազորված մկրտությունը Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցում» (The Guide to the Scriptures, “Holy Ghost”):

Որպես Եկեղեցու անդամ, դուք ստացել եք Սուրբ Հոգու պարգևը քահանայության իշխանությամբ: Այդ պարգևը ձեզ հնարավորություն է տալիս մշտապես ունենալ Սուրբ Հոգին որպես ձեր ուղեկիցը, եթե դրան արժանի մնաք: Աղոթեք Հոգու առաջնորդության համար և համարձակ հետևեք ձեր ստացած հուշումներին:

> *«Սուրբ Հոգու պարգևը գալիս է միայն, երբ անձն ապաշխարում է և արժանի է լինում: . . . Սուրբ Հոգին վկայություն է տալիս ճշմարտության մասին և հոգու մեջ կնքում է Հայր Աստծո և Որդի Հիսուս Քրիստոսի իրականությունն այնքան խորը, որ ոչ մի երկրային ուժ չի կարող բաժանել նրան այդ գիտելիքից»:*
>
> – ՆԱԽԱԳԱՀ ՋԵՅՄՍ Ի. ՖԱՈՒՍՏ
> “THE GIFT OF THE HOLY GHOST—A SURE COMPASS,” *ENSIGN*, APR. 1996, 4:

**Խոստումի Սուրբ Հոգին.** Սուրբ Հոգին կոչվում է նաև Խոստումի Սուրբ Հոգի (տե՛ս ՎևՈւ 88.3): Խոստումի Սուրբ Հոգով կնքվել նշանակում է, որ Սուրբ Հոգին հաստատում է, որ արդար գործողությունները, արարողությունները և ուխտերը ընդունելի են Աստծո կողմից: Խոստումի Սուրբ Հոգին վկայում է Հորը, որ փրկող արարողությունները պատշաճ ձևով կատարվել են և, որ դրանց հետ կապված ուխտերը պահվել են: Խոստումի Սուրբ Հոգով կնքվածները ստանում են այն ամենը, ինչ ունի Հայրը (տե՛ս ՎևՈւ 76.51–60; Եփեսացիս Ա.13–14): Բոլոր ուխտերն ու արարողությունները պետք է կնքված լինեն Խոստումի Սուրբ Հոգով, որպեսզի գործեն այս կյանքից հետո (տե՛ս ՎևՈւ 132.7, 18–19, 26): Ուխտերի խախտումը կարող է վերացնել կնքումը:

**Հոգու պարգևները.** Հոգու պարգևները հոգևոր հատուկ օրհնություններ են, որոնք Տերը տալիս է արժանի անձանց նրանց սեփական օգտի և ուրիշներին օրհնելու համար: Օրինակ, միսիոներները, որոնք պետք է նոր լեզու սովորեն, կարող են ստանալ լեզուների պարգևը, որն աստվածային օգնություն է լեզու սովորելու գործում: Հոգու մի քանի պարգևներ նկարագրված են Մորոնի 10.8–18-ում, Վարդապետություն և Ուխտեր 46.11–33-ում և Ա Կորնթացիս ԺԲ.1–12-ում: Սրանք միայն Հոգու բազմաթիվ պարգևներից մի քանիսի օրինակներն են: Տերը կարող է օրհնել ձեզ այլ ձևով, կախված ձեր հավատարմությունից, ձեր կարիքներից և նրանց

Նշումներ

կարիքներից, ում դուք ծառայում եք: Դուք պետք է ցանկանաք հոգևոր պարգևները և ջանասիրաբար խնդրեք դրանք (տե՛ս ՎևՈւ 46.8; Ա Կորնթացիս ԺԲ.31; 14.1, 12): Այս պարգևները գալիս են աղոթքի, հավատքի և գործի արդյունքում համաձայն Աստծո կամքի (տե՛ս ՎևՈւ 63.9–12; 84.64–73):

**Վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Կարդացեք ստորև տրված հղումները.

- Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Սուրբ Հոգի», «Լույս, Քրիստոսի լույսը» և «Հոգի»:
- *Our Search for Happiness*, 84–86, 91–92.
- *Հավատքին Հավատարիմ*, «Սուրբ Հոգի», 81–84, և «Հոգևոր պարգևներ»,165–67:

Գրեք Սուրբ Հոգու էության և դերի մասին:

Կարդացեք Գործք Դ.23–33:

- Ինչպե՞ս էին Պետրոսն ու Հովհաննեսը հոգևոր պարգևներ փնտրում:
- Ինչպե՞ս Տերը պատասխանեց նրանց աղոթքներին:
- Ի՞նչ կարող եք սովորել այդ փորձից ձեր աշխատանքի մասին:

## Հոգու զորությունը դարձի ընթացքում

Սուրբ Հոգու զորությունն էական դեր է խաղում դարձի գալու ընթացքում: Աշխատեք հասկանալ դարձի գալու վարդապետությունը և նաև դարձի գալու փորձ ունենալ: Երեց Բոյդ Ք. Փաքերը բացատրել է դարձի ընթացքում Հոգու ունեցած կենտրոնական դերի մասին.

«Երբ տեղի է ունենում դարձը, այն կատարվում է Հոգու զորությամբ: Միսիոներական աշխատանքում հաջողություն ունենալու համար պետք է տեղի ունենան հետևյալ երեք բաները.

Մենք պետք է հասկանանք, թե ինչ պետք է զգա ունկնդիրը դարձի գալու համար:

Մենք պետք է հասկանանք, թե ինչ պետք է զգա միսիոները, որպեսզի սովորեցնի Հոգու դարձի բերող զորությամբ:

Եվ այնուհետև, մենք պետք է հասկանանք, թե ինչ պետք է զգա անդամը, դարձի ժամանակ հաջողության հասնելու համար» (միսիաների նախագահների համաժողով, 3 ապր. 1985):

Որքան լավ եք դուք հասկանում ունկնդիրների, միսիոներների և անդամների զգացումները, երբ նրանք ստանում են Հոգու վկայությունը, այնքան լավ դուք կհասկանաք ձեր սեփական դերը, որն է.



- Հոգեպես ամրանալ և լուսավորված միտք ունենալ, սուրբ գրություններն ուսումնասիրելիս և վարդապետությունը սովորեցնելիս:
- Ստեղծել ուսուցանման այնպիսի մթնոլորտ, որտեղ Սուրբ Հոգին կարող է վկայություն տալ: Դուք սա անում եք սովորեցնելով Վերականգնման ուղերձը և վկայելով դրա մասին: Սովորեցրեք, ղեկավարվելով Հոգով, և վկայեք այն մասին, որ Սուրբ Հոգու զորությամբ գիտեք, որ այն, ինչ սովորեցնում եք, ճշմարիտ է:

Նշումներ

- Հետևեք Սուրբ Հոգու առաջնորդությանը, հարմարեցնելով ուղերձը յուրաքանչյուր անձի կարիքներին:
- Մարդկանց հրավիրեք գործելու: Հավատքը կաճի, եթե նրանք ապաշխարեն, հնազանդվեն պատվիրաններին և կապեն ու պահեն ուխտերը:

Երեց Մ. Ռասել Բալլարդն այսպես էր խոսում Հոգու զորության մասին. «Իրական դարձի գալը տեղի է ունենում Հոգու զորությամբ: Երբ Հոգին դիպչում է սրտին, սրտեր են փոխվում: Երբ անհատները . . . զգում են, որ Հոգին աշխատում է իրենց հետ, կամ երբ նրանք տեսնում են իրենց կյանքում Տիրոջ սիրո և գթության վկայությունը, նրանք հոգեպես ամրանում են և Նրա հանդեպ նրանց հավատքը մեծանում է: Հոգու հետ այդ փորձառությունները բնականորեն են առաջանում, երբ անձը պատրաստ է փորձարկելու խոսքը: Այսպես ենք մենք սկսում զգալ, թե արդյոք ավետարանը ճշմարիտ է» ("Now Is the Time," *Ensign*, Nov. 2000, 75):

Սուրբ Հոգին աշխատում է մարդկանց սրտերում այդ փոփոխություններն առաջացնելու ուղղությամբ: Երբ մարդիկ որոշում են պահել պատվիրանները, նրանք ավելի ուժեղ են զգում Սուրբ Հոգու զորությունը և հավատք են զարգացնում Քրիստոսին հնազանդվելու համար: Այսպիսով, դուք պետք է մարդկանց, որոնց հետ աշխատում եք, օգնեք զարգանալ հավատքի մեջ, հրավիրելով նրանց ապաշխարել և վերցնել ու պահել պարտավորություններ:

## Վարժություն. անհատական ուսումնասիրություն

- Կարդացեք հետևյալ հատվածներից մեկ-երկուսը և խորհեք այն մասին, թե ինչ պետք է զգա ունկնդիրը դարձի գալու համար: Ձեր զգացողություններն ու տպավորությունները գրի առեք ձեր աշխատանքային տետրում: Ձեր մտքերը քննարկեք մյուս միսիոներների և անդամների հետ:

  2 Նեփի 4.16–35; Ենովս 1; Մոսիա 4–5; 18.7–14; 27–28; Ալմա 5; 17–22; 32; 36; 38
- Կարդացեք հետևյալ հատվածներից մեկ-երկուսը և խորհեք այն մասին, թե ինչ պետք է զգաք դուք որպես միսիոներ և անդամ դարձի բերելու զորությամբ սովորեցնելու համար: Ձեր զգացողություններն ու տպավորությունները գրի առեք ձեր աշխատանքային տետրում: Ձեր մտքերը քննարկեք մյուս միսիոներների և անդամների հետ:

  1 Նեփի 8.11–12; Մոսիա 28.1–4; Ալմա 26; 29; 31.26–38; 32; Մորոնի 7.43–48; ՎևՈւ 4; 18.10–16; 50.21–22

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչ են այս սուրբ գրությունները սովորեցնում ձեր աշխատանքում Սուրբ Հոգու զորության մասին:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 33.1–2 | ՎևՈւ 50.13–22 | Ա Կորնթացիս Բ.11–14 |
| ՎևՈւ 42.11–17 | Գործք Բ.37–38 | Սուրբ Գրքի Ուղեցույց, «Դարձ, նորադարձ» |

**Ի՞նչ կարող եք անել ձեր աշխատանքում Սուրբ Հոգու զորությունը վայելելու համար:**

| | | |
|---|---|---|
| Ալմա 32.27–28 | ՎևՈւ 42.14 | Հովհաննես Է.17 |

**Ինչո՞ւ է կարևոր սովորեցնել այն, ինչը դուք գիտեք և ինչին դուք հավատում եք:**

| | | |
|---|---|---|
| Ալմա 5.43–47 | ՎևՈւ 52.9 | ՎևՈւ 80.4 |

Նշումներ

## Հավատով աղոթքը

Տիրոջ ճանապարհով դուք կարող եք սովորեցնել միայն Հոգու զորությամբ, իսկ Հոգին դուք ստանում եք միայն հավատով աղոթելու միջոցով: Տերն ասել է, որ Հոգին պետք է տրվի ձեզ հավատքի աղոթքով, և եթե դուք չեք ստանում Հոգին, դուք չպետք է սովորեցնեք (տե՛ս ՎևՈւ 42.14): Երբ դուք ուսուցանման համար աղոթում եք, որպեսզի օգնություն ստանաք, Սուրբ Հոգին ձեր սովորեցրածը կհասցնի մարդկանց զավակների սրտերին (տե՛ս 2 Նեփի 33.1):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին այս սկզբունքի օրինակն է բերում իր միսիայի փորձից.

«Ես միշտ հիշում եմ իմ միսիայում ծառայող երկու երիտասարդ տղաների: Մեկը գերաստղ էր: Նա կրթված էր: Նա խելացի էր: Նա եռանդուն էր: Նա մի փոքր ինքահավան էր: Մյուսը նշաններ նկարող էր: Նա նշանների խանութից էր և շատ քիչ էր կրթված, բայց նա գիտեր իր թուլությունները և ապավինում էր Տիրոջը: Երբ նա աղոթում էր, դու գիտեիր, որ նա խոսում է Տիրոջ հետ: Դրանք անգիր արած բառեր չէին, այլ հաղորդակցում և այդ երիտասարդ տղան հրաշքներ գործեց, մինչ մյուս երիտասարդը պարզապես անում էր այն, ինչ պահանջվում էր: Մեկի մեջ եղած զորությունը և մյուսի մեջ բացակայող զորությունն այնքան ակնհայտ էին: Կանչեք առ Տերը: Նա է ուղարկել հրավերը և Նա կպատասխանի» (*Teachings of Gordon B. Hinckley* [1997], 469):

Աշխատեք անկեղծ աղոթել, իրական մտադրությամբ և «սրտի ողջ կորովով» (Մորոնի 7.48): Արդյունավետ աղոթքը մեծ ջանք է պահանջում (տե՛ս Մորոնի 10.3–4; ՎևՈւ 8.10; 9.7): Լրջորեն մտածեք ձեր վերաբերմունքի և ձեր օգտագործած խոսքերի մասին: Աղոթելիս մտածեք հետևյալի մասին.



- Օգտագործեք աղոթքի լեզուն, որը ցույց է տալիս, որ դուք սիրում և հարգում եք ձեր Երկնային Հորը: Օգտագործեք պատշաճ և հարգալից խոսքեր, անկախ նրանից, թե ինչ լեզվով եք խոսում:
- Միշտ շնորհակալություն հայտնեք ձեր օրհնությունների համար: Գիտակցելով շնորհակալություն հայտնելը ձեզ կօգնի հասկանալ, թե որքան գթասիրտ է եղել Տերը ձեր կյանքում:
- Հատուկ աղոթեք Սուրբ Հոգու առաջնորդության և օգնության համար: Ցույց տվեք, որ դուք գնահատում եք այս օրհնությունը, լինելով զգայուն և տեղյակ հոգևոր հուշումների նկատմամբ: Ապա համարձակ հետևեք այդ հուշումներին:
- Աղոթեք սիրով և գթությամբ: Աղոթեք մարդկանց համար անվանապես: Ոգեշնչում խնդրեք, որպեսզի այն օգնի ձեզ՝ հասկանալ և բավարարել նրանց կարիքները: Աղոթեք ծանոթների, նորադարձների, ունկնդիրների և քիչ ակտիվ անդամների համար: Աղոթեք ձեր տարածքի անդամների, քահանայության և օժանդակ ղեկավարների համար: Աղոթեք ձեր ընտանիքի անդամների համար: Աղոթեք ձեր զուգընկերոջ, մյուս միսիոներների և ձեր միսիայի նախագահի համար: Աղոթեք իմանալու համար, թե ինչպես օգնել ուրիշներին, ապա պատրաստ եղեք զոհողություն կատարելու ի օգուտ նրանց:
- Աղոթեք, որպեսզի իմանաք, թե ուր գնաք և ինչ անեք: Աղոթեք, որպեսզի գնաք նրանց մոտ, ովքեր պատրաստ են ստանալու Վերականգնման ուղերձը: Աղոթեք, որ ճանաչեք նրանց:
- Հասկացեք, որ ձեր Երկնային Հայրը ձեզանից լավ գիտի ձեր կարիքների մասին: Ապավինեք Հոգուն իմանալու համար, թե ինչի համար աղոթել (տե՛ս 3 Նեփի 19.24; ՎևՈւ 46.28, 30):

Նշումներ

- Երեկոյան ձեր աղոթքներում Տիրոջը հաշվետվություն տվեք ձեր օրվա կատարածի մասին: Ապա Նրա հետ միասին վերանայեք հաջորդ օրվա ձեր ծրագիրը: Լսեք Հոգու հուշումները:
- Աղոթեք գայթակղությունը հաղթահարելու համար: Գայթակղությանը տեղիք տալը խանգարում է Հոգուն:
- Աղոթեք, և երբ նպատակահարմար է, ծոմ պահեք հատուկ օրհնությունների համար:
- Աղոթեք և խորհեք սուրբ գրությունների մասին: Սուրբ գրությունները բացում են հայտնության պատուհանները:
- Հավատացեք, որ Աստված կպատասխանի ձեր աղոթքներին: Հասկացեք, որ Աստծո մտքերը ձեր մտքերը չեն (տե՛ս Եսայիա ԾԵ.8–9), և վստահեք Աստծուն, որը կպատասխանի ձեր աղոթքներին Իր եղանակով և Իր ժամանակ:

> *«Ամեն առավոտ . .. միսիոներները պետք է ծնկի գան և աղերսեն Տիրոջը, որ Նա արձակի իրենց լեզուները և խոսի նրանց միջոցով այն մարդկանց օրհնության համար, ում նրանք սովորեցնում են: Եթե նրանք անեն դա, մի նոր լույս կծագի իրենց կյանքում: Կլինի ավելի մեծ ոգևորություն աշխատանքում: Նրանք ամենաիրական իմաստով կիմանան, որ Տիրոջ ծառաներն են, որոնք խոսում են Նրա անունով: Նրանք այլ արձագանքներ կստանան նրանցից, ում սովորեցնում են: Եթե անեն դա Հոգով, նրանց ունկնդիրները կպատասխանեն նույն Հոգու ազդեցության ներքո»:*
>
> - ՆԱԽԱԳԱՀ ԳՈՐԴՈՆ Բ. ՀԻՆՔԼԻ
>
> «ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, *ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԱՔԸ*, 11 ՀՈՒՆ. 2003,20

## Վարժություն. անհատական ուսումնասիրություն

Խորհեք անկեղծ աղոթքի մասին հետևյալ արտահայտությունների շուրջ.

«Մեր աղոթքների հետ կապված հիմնական խնդիրն այն է, որ մենք դրանք ասում ենք այնպես, կարծես վերցնում ենք հեռախոսի լսափողը և խանութից մթերքներ ենք պատվիրում. մենք կատարում ենք մեր պատվերը և կախում լսափողը: Մենք պետք է կենտրոնանանք, խորհենք, մտածենք, թե ինչի մասին և ինչի համար ենք աղոթում, ապա խոսենք Տիրոջ հետ, ինչպես մի մարդ խոսում է մեկ ուրիշի հետ» (Gordon B. Hinckley, *Teachings of Gordon B. Hinckley*, 469):

«Եթե աղոթքը միայն հանկարծակի ծնված աղաչանք է նեղնաժամի պահին, ապա այն միանշանակ եսասեր է, և մենք մտածում ենք Աստծո մասին ինչպես մի վերանորոգողի կամ ծառայողական գործակալության, որը մեզ օգնում է միայն ծայրահեղ պահերին: Մենք պետք է հիշենք Բարձրյալին օր ու գիշեր, միշտ, ոչ միայն այն ժամանակ, երբ օգնության մնացած բոլոր աղբյուրները սպառված են, և մենք ծայրահեղ կարիքի մեջ ենք» (Howard W. Hunter, *The Teachings of Howard W. Hunter*, ed. Clyde J. Williams [1997], 39):

---

Օգտագործելով հետևյալ սանդղակը, առանձին գնահատեք ձեր աղոթքները: Ձեր տետրում գրի առեք հարցերի պատասխանները, ինչպես օրինակ. Որտե՞ղ դուք կլինեիք այս սանդղակի վրա: Որտե՞ղ դուք կցանկանայիք լինել այս սանդղակի վրա: Ինչպե՞ս եք դուք պատրաստվում փոխվել:

| | Վատ | Ոչինչ | Լավ | |
|---|---|---|---|---|
| Թույլ հավատք Քրիստոսի հանդեպ | ◄ | | ► | Ուժեղ հավատք Քրիստոսի հանդեպ |
| Անշնորհակալ | ◄ | | ► | Շնորհակալությամբ լի |
| Միտքը կենտրոնացված չէ աշխատանքի վրա | ◄ | | ► | Միտքը կենտրոնացված է աշխատանքի վրա |

Նշումներ

| | |
|---|---|
| Աղոթքները կապված չեն գործերի հետ | Գործերը իրականացնում են աղոթքները |
| Կրկնություններ | Կենտրոնացում առօրյա կարիքների վրա |
| Խավար մտքեր | Հոգեպես ամրացնող, թարմացնող |
| Կենտրոնացում կեղտոտ մտքերի վրա | Կենտրոնացում մաքուր մտքերի վրա |
| Ինքնակենտրոնացում | Մտահոգություն մյուս մարդկանց համար |
| Ընդհանուր, ոչ կոնկրետ | Կոնկրետ, ոչ ընդհանուր |
| Հոգին բացակայում է | Հոգին առաջնորդում է աղոթքը |
| Չեմ հասկանում պատասխանները | Վստահ եմ, որ Աստված կպատասխանի աղոթքներին |

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ինչո՞ւ դուք պետք է աղոթեք Հոգու համար:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 32.8–9 | ՎևՈւ 42.14 | ՎևՈւ 50.13–22 |

**Ինչի՞ համար դուք պետք է աղոթեք:**

| | | |
|---|---|---|
| Ալմա 6.6 | Ալմա 37.36–37 | ՎևՈւ 50.29–30 |
| Ալմա 13.28 | 3 Նեփի 18.20 | Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Աղոթք» |
| Ալմա 34.17–27 | 3 Նեփի 19.9 | |

## Սովորեք ճանաչել Հոգու հուշումները

Հոգին միշտ պատրաստ է առաջնորդելու և ուղղություն ցույց տալու ձեզ: Ինչևէ, Հոգին շատ լուռ է խոսում, ձեր զգացողությունների միջոցով, ինչպես նաև ձեր մտքի միջոցով: Ձեր և նրանց համար, ում հետ աշխատում եք, մի մեծ խնդիր կա ճանաչելու Սուրբ Հոգու այդ լուռ, նուրբ հուշումները:

Երեց Բոյդ Ք. Փաքերը սովորեցրել է. «Հոգու ձայնը սուրբ գրություններում չի նկարագրվում որպես բարձր կամ կոպիտ: Այն որոտի ձայն չէ, ոչ էլ . . . . մեծ աղմուկի ձայն: Ընդհակառակը, այն ցածր ձայն է, կատարյալ մեղմության, ինչպես շշնջոց, և այն կարող է ներթափանցել հոգու խորքը և այրել սիրտը (տե՛ս 3 Նե. 11.3; Հել. 5.30; ՎևՈւ 85.6–7:) Հիշեք, Եղիան լսեց Տիրոջ ձայնը ոչ թե քամու, ոչ թե երկրաշարժի, կամ կրակի մեջ, այլ իմացավ, որ այն ցածր մեղմ ձայն էր (տե՛ս Գ Թագավորաց ԺԹ.12):

Հոգին չի գրավում մեր ուշադրությունը գոչելով կամ ցնցելով մեզ ծանր ձեռքով: Փոխարենը, այն շշնջում է: Այն դիպչում է այնքան մեղմորեն, որ եթե մենք զբաղված լինենք ուրիշ բաներով, մենք կարող ենք չզգալ այն ընդհանրապես: (Զարմանալի չէ, որ Իմաստության Խոսքը տրվել է մեզ, հակառակ դեպքում ինչպես կարող էր հարբեցողը կամ թմրամոլը զգալ նման ձայն:)

Երբեմն, այն այնքան ուժեղ կլինի, որպեսզի գրավի մեր ուշադրությունը: Սակայն, հիմնականում, եթե մենք ուշադրություն չենք դարձնում մեղմ զգացողություններին, Հոգին ետ կքաշվի և կսպասի, մինչև մենք փնտրենք, լսենք և ասենք մեր ձևով և արտահայտությամբ, ինչպես հնում Սամուելը. «Խոսիր, որովհետև քո ծառան լսում է» (Ա Թագ. Գ.10) (“The Candle of the Lord,” *Ensign*, Jan. 1983, 53):

Աշխարհում շատ ձայներ են մրցակցում ձեր ուշադրությունը գրավելու համար, և դրանք հեշտությամբ կարող են ցրել հոգևոր տպավորությունները, եթե ուշադիր չլինենք:

Նշումներ

## Վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Ուսումնասիրենք հետևյալ աղյուսակը: Մտածեք այն պահերի մասին, երբ ունեցել եք այդ տողերում նկարագրված զգացումները, մտքերը կամ տպավորությունները: Ուսուցման և փորձ ձեռք բերելու հետ մեկտեղ այս ցանկին ավելացրեք այլ հատվածներ: Մտածեք, թե ինչպես կարող եք օգտագործել այդ սկզբունքները օգնելու համար ուրիշներին զգալ և ճանաչել Հոգին:

| | |
|---|---|
| ՎևՈւ 6.23; 11.12–14; Հռովմայեցիս ԺԵ.13; Գաղատացիս Ե.22–23 | Տալիս է սիրո, ուրախության, խաղաղության, համբերության, խոնարհության, մեղմության, հավատքի և հույսի զգացումներ: |
| ՎևՈւ 8.2–3 | Առաջացնում է մտքեր գլխում, զգացումներ սրտում: |
| ՎևՈւ 128.1 | Զբաղեցնում է միտքը և ազդում զգացումների վրա: |
| Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.11–12 | Օգնում է, որպեսզի սուրբ գրությունները ուժեղ ազդեցություն գործեն: |
| ՎևՈւ 9.8–9 | Տալիս է լավ զգացողություն սովորեցնելու մի բան, որը ճշմարիտ է: |
| Ալմա 32.28; ՎևՈւ 6.14–15; Ա Կորնթացիս Բ.9–11 | Լուսավորում է միտքը: |
| Ալմա 19.6 | Խավարը փոխում է լույսով: |
| Մոսիա 5.2–5 | Ամրացնում է չարից խուսափելու և պատվիրաններին հնազանդվելու ցանկությունը: |
| Հովհաննես ԺԴ.26 | Սովորեցնում է ճշմարտությունը և հիշեցնում է այն: |
| Հովհաննես ԺԴ.27 | Տալիս է խաղաղության և հանգստության զգացում: |
| Հովհաննես ԺԶ.13 | Առաջնորդում է դեպի ճշմարտություն և ցույց է տալիս գալիք բաները: |
| Մորոնի 10.5 | Հայտնում է ճշմարտությունը: |
| ՎևՈւ 45.57 | Առաջնորդում է և պաշտպանում խաբեությունից: |
| 2 Նեփի 31.18; ՎևՈւ 20.27; Հովհաննես ԺԶ.14 | Փառավորում է Աստծուն և վկայում է Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի մասին: |
| ՎևՈւ 42.16; 84.85; 100.5–8; Ղուկաս ԺԲ.11–12 | Ուղղորդում է խոնարհ ուսուցիչների խոսքերը: |
| Հովհաննես ԺԶ.8 | Ճանաչում և ուղղում է մեղքը: |
| Մորոնի 10.8–17; ՎևՈւ 46.8–26; Ա Կորնթացիս ԺԲ | Տալիս է Հոգու պարգևները: |
| Ալմա 10.17; 12.3; 18.16, 20, 32, 35; ՎևՈւ 63.41 | Օգնում է հասկանալ կամ տարբերել ուրիշների մտքերը: |
| ՎևՈւ 46.30; 50.29–30 | Ասում է, ինչի համար աղոթել: |
| 2 Նեփի 32.1–5; ՎևՈւ 28.15 | Ասում է, ինչ անել: |
| 1 Նեփի 10.22; Ալմա 18.35 | Օգնում է արդարներին խոսել զորությամբ և իշխանությամբ: |
| ՎևՈւ 21.9; 100.8; Հովհաննես ԺԵ.26 | Վկայում է ճշմարտության մասին: |
| 2 Նեփի 31.17; Ալմա 13.12; 3 Նեփի 27.20 | Մաքրագործում է և մեղքերի թողություն է տալիս: |
| 1 Նեփի 2.16–17; 2 Նեփի 33.1; Ալմա 24.8 | Հասցնում է ճշմարտությունը ունկնդրի սրտին: |
| 1 Նեփի 1.1–3; Եթեր ԼԱ.3–5 | Մեծացնում է ունակություններն ու կարողությունները: |
| 1 Նեփի 7.15; 2 Նեփի 28.1; 32.7; Ալմա 14.11; Մորմոն 3.16; Եթեր 12.2 | Դրդում է (առաջ է մղում) կամ զսպում է (ետ է պահում): |
| ՎևՈւ 50.13–22 | Հոգեպես ուժեղացնում է ուսուցիչներին և ուսանողներին: |
| ՎևՈւ 88.3; Հովհաննես ԺԴ.26 | Հանգստություն է տալիս: |
| | |
| | |
| | |
| | |

Նշումներ

«Ինչպե՞ս ենք մենք տարբերում Հոգու հուշումները» հարցին Նախագահ Գորդոն Բ. Հինքլին պատասխանել է, կարդալով Մորոնի 7.13, 16–17 հատվածները, և ապա ասել է. «Սա է ստուգման ձևը, երբ ամեն ինչ ասվել և արվել է: Համոզո՞ւմ է այն արդյոք մարդուն անել բարին, բարձրանալ, հաստատուն կանգնել, անել ճիշտը, լինել բարի, առատաձեռն: Ուրեմն դա Աստծո Հոգին է: . . .

Եթե այն հրավիրում է անել բարին, ապա Աստծուց է: Եթե այն հրավիրում է անել չարը, ապա սատանայից է: . . . Եվ եթե դուք անում եք ճիշտը և ապրում եք ճիշտ ձևով, ապա ձեր սրտում կիմանաք այն, ինչ Հոգին ասում է ձեզ:

Դուք ճանաչում եք Հոգու հուշումները Հոգու պտուղներից, այն, ինչը լուսավորում է, ինչը ամրացնում է, ինչը դրական և վեհացնող է, և մեզ ավելի լավ մտքեր, ավելի լավ խոսքեր, ավելի լավ գործեր է պարգևում, Աստծո Հոգուց է» (*Teachings of Gordon B. Hinckley*, 260–61):

Աստված պատասխանում է մեր աղոթքներին անձնական ներշնչման և հայտնության միջոցով: Սուրբ Հոգու միջոցով նա կառաջնորդի ձեզ ձեր ջանքերում, երբ սովորեցնում եք վերականգնված ավետարանը, երբ ամրացնում եք ոչ ակտիվ անդամներին և նորադարձներին: Ձեր խնդիրն է արժանի ձևով ապրել, ջերմեռանդ աղոթել և սովորել ճանաչել Սուրբ Հոգու առաջնորդությունը և համարձակ հետևել դրան:

## Ապավինել Հոգուն

Որպես Տիրոջ ծառա դուք պետք է անեք Նրա աշխատանքը Նրա ձևով և Նրա զորությամբ: Որոշ միսիոներներ ավելի վստահ են իրենց զգում, իմանալով, թե ինչպես կարող են հաջողակ լինել: Մյուսները չունեն այդ վստահությունը: Ինչևէ հիշեք, որ դուք պետք է վստահեք և հավատաք Քրիստոսին, ոչ թե ձեզ: Ապավինեք Հոգուն ավելի շատ, քան ձեր սեփական տաղանդներին և ունակություններին: Վստահեք Հոգուն, որը կարող է առաջնորդել ձեզ ձեր կյանքի ցանկացած բնագավառում: Նախագահ Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է, որ Հոգին սովորեցնելու և քարոզելու հիմքն է.

«Ոչ ոք չի կարող քարոզել Ավետարանը առանց Սուրբ Հոգու» (*History of the Church*, 2:477):

«Մի քանիսը կանչվեցին և կարգվեցին հայտնության և մարգարեության Հոգու կողմից, և սկսեցին քարոզել, քանզի Հոգին նրանց արտահայտվելու ունակություն տվեց, և թեև թույլ էին, նրանք ամրացվեցին Աստծո զորությամբ» (*History of the Church*, 4:538):

«[Ջոզեֆ Սմիթը] շարունակեց Երեցներին հրահանգներ տալ Ավետարանը քարոզելու վերաբերյալ, և շեշտեց նրանց համար Հոգին ձեռք բերելու անհրաժեշտությունը, որպեսզի նրանք կարողանային քարոզել Սուրբ Հոգով, որն ուղարկվել էր ներքև երկնքից» (*History of the Church*, 4:13):

Ձեր շաբաթական և օրական պլանավորման ժամանակ ամեն օր, երբեմն օրը մի քանի անգամ, պետք է որոշ հիմնական հարցեր տաք (տե՛ս Սուրբ գրությունների ուսումնասիրության վանդակը` հարցերի օրինակներից հետո): Ներշնչում փնտրեք այդ հարցերին պատասխանելու համար այն ձևով, որը համապատասխանում է յուրաքանչյուր իրավիճակին: Պատասխանները այնուհետև պետք է ընդգրկվեն ձեր պլանների մեջ: Սակայն դուք պետք է նաև պատրաստ լինեք հետևել Հոգուն և փոխել ձեր պլանները, երբ անսպասելի հանգամանքներ են ի հայտ գալիս:

Ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները և մտածեք, թե ինչպես են դրանք պատասխանում այդ կարևոր հարցերին, որոնք դուք պետք է տաք ամեն օր: Մտածեք այն մասին, թե ինչ նշանակություն ունեն այդ հատվածները մարդիկ գտնելու ձեր ջանքերում, ծրագերում և անհատական ու զուգընկերոջ հետ ուսումնասիրության ժամանակ: Մտածեք դրանց նշանակության մասին նաև այն ժամանակ, երբ սովորեցնում եք դասերը, մարդկանց հրավիրում եք պարտավորություններ ստանձնել, ամրացնում եք նոր անդամներին և ոչ ակտիվ անդամներին, և աշխատում եք անդամների հետ:

Նշումներ

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ո՞ւր ես պետք է գնամ:**

Հելաման 10.17 — ՎևՈւ 75.26–27
ՎևՈւ 31.11 — ՎևՈւ 79.1–2

**Ի՞նչ ես պետք է անեմ:**

1 Նեփի 4.6 — ՎևՈւ 28.15
2 Նեփի 32.2–5 — ՎևՈւ 52.3–4

**Ի՞նչ ես պետք է ասեմ:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 33.1 | ՎևՈւ 33.8–10 | Մատթեոս Ժ.19–20 |
| Ալմա 5.43–46 | ՎևՈւ 50.13–22 | Մարկոս ԺԳ.11 |
| Ալմա 11.22 | ՎևՈՒ 68.1–4 | Ա Կորնթացիս Բ.4–5, 12–13 |
| Հելաման 5.18 | ՎևՈւ 75.3–11 | Եփեսացիս Դ.10–12 |
| Հելաման 13.3–5 | ՎևՈւ 100.5–8 | |

**Ինչպե՞ս ես իմ ունկնդիրների կարիքներին համապատասխանեցնեմ այն, ինչ սովորեցնում եմ:**

| | | |
|---|---|---|
| ԱԼմա 12.7 | 3 Նեփի 17.2–3 | ՎևՈւ 84.85 |
| Ալմա 41.1 | ՎևՈւ 71.1 | |

**Ի՞նչ սուրբ գրություններ ես պետք է օգտագործեմ և ինչպե՞ս պետք է դրանք օգտագործեմ:**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 18.19–20 | ՎևՈւ 32.4 | ՎևՈւ 71.1 |
| Մոսիա 27.35 | ՎևՈւ 42.11–17 | ՎևՈւ 80.4 |
| ՎևՈւ 18.32–36 | ՎևՈւ 68.1–4 | Ղուկաս Դ.13–32 |

## Զգուշացման խոսք

Ներշնչում ստանալու համար աղոթելիս դուք պետք է նաև հաստատ լինեք ձեր զգացումներում: Օրինակ, համեմատեք, ձեր որոշումները սուրբ գրությունների և ապրող մարգարեների ուսմունքների հետ: Հավաստիացեք, որ ձեր զգացումները ներդաշնակ են ձեր հաճանարարության հետ: Օրինակ, դուք չեք ստանա հայտնություն տեղական եպիսկոպոսին ասելու, թե ինչպես կատարի իր կոչումը: Ձեր որոշումները և եզրակացությունները քննարկեք ձեր զուգընկերոջ, տարածքի ղեկավարի կամ, եթե հարմար եք գտնում, ձեր միսիայի նախագահի հետ:

> *«Արժանի լինելու դեպքում մենք իրավունք ենք ունենում հայտնություններ ստանալ մեր համար, ծնողները՝ իրենց երեխաների համար, իսկ Եկեղեցու անդամները՝ իրենց կոչումների վերաբերյալ: Սակայն մյուսների համար հայտնության իրավունքը չի տարածվում ծառայությունից դուրս»:*
>
> - ՆԱԽԱԳԱՀ ՋԵՅՄՍ Ի. ՖԱՈՒՍՏ
> "COMMUNION WITH THE HOLY SPIRIT," *ENSIGN*, MAR. 2002, 4

Նախագահ Հովարդ Վ. Հանթերը տվել է հետևյալ խորհուրդը. «Թույլ տվեք նախազգուշացման մի խոսք ասել ձեզ: . . . Ես կարծում եմ, որ եթե մենք զգույշ չլինենք, . . . ապա կսկսենք կեղծել Սիրոջ Հոգու ազդեցությունը անարժան և նենգ միջոցներով: Ես մտահոգվում եմ, երբ տեսնում եմ, թե ինչպես են խոր զգացումների արտահայտումը կամ աչքերից հոսող արցունքները կապում Հոգու ներկայության հետ: Անշուշտ, Սիրոջ Հոգին կարող է հզոր հոգևոր զգացումներ առաջացնել, ներառյալ արցունքները, սակայն արտաքին այդ դրսևորումը չպետք է

Նշումներ

շփոթեցվի Հոգու ներկայության հետ» (*The Teachings of Howard W. Hunter*, 184): Տիրոջ Հոգին միշտ հոգեպես լուսավորում է:

Հայտնությունն ու հոգևոր փորձառությունները սուրբ են: Դրանք պետք է նեղ շրջանակում պահվեն և քննարկվեն միայն պատշաճ հանգամանքներում: Որպես միսիոներ դուք, հավանաբար ավելի շատ հոգևոր փորձառություններ կունենաք, քան ունեցել եք նախկինում: Հաղթահարեք այդ փորձառությունների մասին ազատ խոսելու գայթակղությունը:

Երեց Բոյդ Ք. Փաքերը խորհուրդ է տվել. «Ես հասկացել եմ, որ այդ ուժեղ, տպավորիչ հոգևոր փորձառությունները մենք հաճախ չենք ունենում: Իսկ երբ նման փորձառություններ ենք ունենում, ապա մեր սեփական կրթության, հրահանգման կամ ուղղման նպատակով են դրանք տրվում: Եթե մենք կանչված չենք պատշաճ իշխանությամբ, դրանք մեզ իրավունք չեն տալիս խորհուրդ տալ կամ ուղղել ուրիշներին:

Ես նաև համոզվել եմ, որ իմաստուն չէ շարունակաբար խոսել անսովոր հոգևոր փորձառությունների մասին: Դրանք պետք է խնամքով պահպանվեն և կիսվեն ուրիշների հետ միայն այն դեպքում, երբ Հոգին ինքն է հուշում ձեզ օգտագործել դրանք ուրիշներին օրհնելու համար» (*Ensign*, Jan. 1983, 53):

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

Հոգուն ապավինելն այնքան կարևոր է, որ Տերը մեզ խստորեն զգուշացնում է չմերժել կամ չճնշել Հոգին: Ի՞նչ եք դուք սովորում սուրբ գրությունների հետևյալ հատվածներից:

| | | |
|---|---|---|
| Հակոբ 6.8–9 | Մորմոն 9.7–9 | ՎևՈւ 11.25–26 |
| 3 Նեփի 29.5–6 | Մորոնի 10.7–8 | Ա Թեսաղոնիկեցիս Ե.19–20 |

## Հիշեք սա

- Աղոթեք հավատալով, որ ձեր աղոթքները կստանան իրենց պատասխանները:
- Սովորեք հասկանալ, ճանաչել Հոգու հուշումները և հետևել դրանց:
- Սովորեք ապավինել Հոգուն, որը ցույց կտա, թե ուր գնալ, ինչ անել և ինչ ասել:
- Սովորեցրեք ուրիշներին, ինչպես ճանաչել Հոգին:

## Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

Նշումներ

### Անհատական ուսումնասիրություն

- Ձեր աշխատանքային տետրում գրի առեք ձեր հոգևոր փորձառությունները: Օրինակ, պատասխանեք հետևյալ հարցերին. Սուրբ գրությունների ուսումնասիրությունն օգնե՞ց ինձ ինչ-որ բան ավելի լավ հասկանալ: Ունեցա՞ եք արտառոց հնարավորություններ հանդիպելու այնպիսի մարդկանց, ում հետ կարող էի կիսվել ուղերձով: Կարողացա՞ ճիշտ պահին գտնել և ասել խոսքերը: Ունեցա՞ սիրո ուժեղ զգացում այն մարդկանց հանդեպ, ում հանդիպեցի: Ինչպե՞ս իմ աղոթքները պատասխանվեցին:

- Բաժանեք էջը երկու սյունակի: Մի սյունակը վերնագրեք. «Ինչ է արել Տերը», իսկ մյուսը՝ «Ինչ արեց Լեքին կամ Նեփին»: Կարդացեք Լիահոնայի և կոտրված նետի (1 Նեփի 16.9–30) կամ Նեփիի նավ կառուցելու մասին (1 Նեփի 17.7–16; 18.1–6) պատմությունը: Կարդալու ընթացքում պատմության իրադարձությունները գրի առեք համապատասխան սյունակում: Մտածեք, թե ինչ կարող է այդ պատմությունը սովորեցնել ոգեշնչման մասին:

- Ձեր տետրում գտեք դեպքեր, երբ եք առաջնորդվել Հոգով կամ ստացել հայտնություն կամ Հոգու որևէ այլ պարգև: Մտածեք, երբ, որտեղ և ինչու են տեղի ունեցել այդ դեպքերը: Դուք արե՞լ եք որևէ բան այդ դեպքերին պատրաստվելու համար: Ինչպե՞ս է երևացել Տիրոջ ձեռքն այդ դեպքում: Ինչպե՞ս եք դուք զգացել: Ի՞նչ դուք կարող եք անել նման փորձառություն ունենալու համար: Այդ փորձառությունները հիշելը ձեզ կօգնի կրկին անգամ ճանաչել և ստանալ Հոգին:

- Աստվածաշնչի Գործք գիրքը կոչվել է «Առաքյալների միջոցով Սուրբ Հոգու գործերի գիրք»: Կարդացեք Գործք գրքի գլուխների վերնագրերը և բացատրեք, թե ինչու է տվյալ վերնագիրը համապատասխանում բովանդակությանը: Գտեք ձեր բացատրությունների հիմք հիմնավորում:

- Ուսումնասիրեք հետևյալ խորհուրդը և խորհեք դրա մասին: Ինչպե՞ս է այն կապված ձեր ամենօրյա գործողությունների հետ:

  > «Ասա Եղբայրներին լինեն խոնարհ և հավատարիմ, և հետևեն, որ Տիրոջ Հոգին իրենց հետ լինի, որպեսզի տանի ճիշտ ուղով: Եղեք զգույշ և մի հեռացրեք ցածր մեղմ ձայնը: Այն նրանց կսովորեցնի, ինչ անել և ուր գնալ, այն կբերի արքայության պտուղները: Ասա Եղբայրներին իրենց սրտերը բաց պահեն, որպեսզի երբ Սուրբ Հոգին գա նրանց մոտ, նրանց սրտերը պատրաստ լինեն ընդունելու նրան: Նրանք կարող են տարբերել Տիրոջ Հոգին բոլոր մնացած հոգիներից, այն նրանց հոգիներին խաղաղություն և ուրախություն կշշնջա, այն նրանց սրտերից կհանի ողջ դժկամությունը, ատելությունը և չարությունը, և նրանց ամբողջ ցանկությունը կլինի բարին գործելը» (quoted in *Juvenile Instructor*, 19 July 1873, 114):

  Մարգարե Ջոզեֆ Սմիթը տվել է այս խորհուրդը Բրիգամ Յանգին երազում իր մահից մոտ երեք տարի անց: Եթե դուք լինեիք Բրիգամ Յանգը և ստանայիք այս խորհուրդը, ի՞նչ կանեիք:

- Ուսումնասիրեք Ալմա 33.1–12; 34.17–29, 38: Ի՞նչ հարցերի էր պատասխանում Ալման: (Վերնայեք Ալմա 33.1–2:) Ինչպե՞ս Ալման պատասխանեց այս հարցերին: Ինչպե՞ս էր նա հավաստիացնում, որ Աստված լսում և պատասխանում է աղոթքներին:

- Տերը խոսք է տվել, որ Հոգին կառաջնորդի մեզ կարևոր ճանապարհներով: Հետևյալ հատվածները կարդալու ընթացքում գտեք ձեր աշխատանքի այն կողմերը, որոնք Հոգու առաջնորդության կարիքն են զգում: Ի՞նչ նշանակություն ունեն ձեր անհատական և զուգընկերոջ հետ ուսուցման; շրջանի ժողովների, տարածքային համաժողովների, մկրտության

Նշումներ

ծառայությունների և այլ հավաքների համար սուրբ գրությունների հետևյալ հատվածներում պարունակվող պատվիրանները և խոստումները:

**Աղոթել**

| | |
|---|---|
| 3 Նեփի 19.24 | ՎևՈւ 50.30 |
| ՎևՈւ 46.30 | Հռովմայեցիս Ը.26 |

**Ժողովներ վարել**

| | | |
|---|---|---|
| Մորոնի 6.9 | ՎևՈւ 20.45 | ՎևՈւ 46.2 |

**Գրի առնել**

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 9.9 | ՎևՈւ 47.4 | ՎևՈւ 124.4 |
| ՎևՈւ 24.6 | ՎևՈւ 104.81 | Մովսես 6.6 |

- Կարդացեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները (ներառյալ այս բաժինների վերնագրերը):

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 60.1–5 | ՎևՈւ 61.1–4, 21–22 | ՎևՈւ 62.4–8 |

Այս հատվածներում ի՞նչն էր շատ կարևոր Տիրոջ համար:

Ի՞նչը Տիրոջ համար նշանակություն չունի:

Մտածեք Երեց Դալին Հ. Օուքսի հետևյալ խոսքերի մասին.

«[Անձը կարող է ունենալ] Տիրոջ Հոգով առաջնորդվելու ուժեղ ցանկություն, սակայն . . . ոչ իմաստուն ձևով այդ ցանկությունը հասցնում է այն աստիճանին, որ ուզում է առաջնորդվել բոլոր բաներում: Տիրոջ կողմից առաջնորդվելու ցանկությունը զորություն է, սակայն դրա հետ մեկտեղ պետք է հասկանալ, որ մեր Երկնային Հայրը մեզ է թողնում մեր անձնական ընտրությունների շատ որոշումներ: Անձամբ որոշումներ կայացնելը մեր աճի աղբյուրներից մեկն է, որը մենք պետք է ունենանք մահկանացու կյանքում: Այն մարդիկ, ովքեք բոլոր որոշումների կայացումը թողնում են Տիրոջը և ամեն ընտրության համար հայտնություն են խնդրում, շատ շուտով կգտնվեն այնպիսի իրավիճակում, երբ կաղոթեն առաջնորդության համար, սակայն չեն ստանա այն: Օրինակ, դա հավանական է այն բազմաթիվ իրավիճակներում, երբ ընտրությունը հասարակ է կամ ցանկացած ընտրություն ընդունելի է:

«Մենք պետք է մեր մտքում մտածենք բաների մասին, օգտագործելով կշռադատելու այն զորությունները, որ մեր Արարիչը դրել է մեր մեջ: Ապա մենք պետք է աղոթենք առաջնորդության համար և գործենք այդ ուղղությամբ, եթե ստանանք այն: Եթե չենք ստանում առաջնորդություն, մենք պետք է օգտագործենք մեր դատողությունը, ընտրելով, ըստ մեզ, լավագույն տարբերակը: Այն մարդիկ, ովքեք համառորեն հայտնության առաջնորդություն են փնտրում այն հարցերում, որոնցում Տերը որոշել է չօգնել մեզ, կարող են իրենց երևակայության կամ շփոթության արդյունքում պատասխան գտնել, կամ կարող են անգամ ստանալ չար աղբյուրից եկած պատասխան կամ սխալ հայտնություն» (“Our Strengths Can Become Our Downfall,” *Ensign*, Oct. 1994, 13–14):

Ո՞րն է տարբերությունը ձեր սեփական դատողությանը հետևելու և Հոգուն վստահելու միջև:

## Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Խոսեք այն աղոթքների մասին, որոնք դուք ասում եք զուգընկերներով: Արդյո՞ք դրանք առաջնորդվում են Սուրբ Հոգով: Ստացե՞լ եք արդյոք դուք ձեր աղոթքների պատասխանները: Երբ դուք աղոթում եք որպես զուգընկերներ, արդյո՞ք դուք.
  - Հավատում եք, որ Աստված ձեզ կտա այն, ինչի համար դուք խնդրում եք արդարության մեջ:

Նշումներ

– Գնահատում և շնորհակալություն ենք հայտնում ձեր աղոթքների պատասխանների համար:

– Աղոթում ենք մարդկանց համար անվանապես և մտածում ենք նրանց կարիքների մասին:

– Աղոթում ենք միմիանց և Հոգու համար, որը կառաջնորդի ձեզ:

– Ստանում ենք ձեր աղոթքների պատասխանները:

Զուգընկերներով քննարկեք, թե ինչպես կարող եք ավելի ջանասիրաբար փնտրել Հոգին:

- Քննարկեք տարբեր ճանապարհներ, որոնցով մարդիկ նկարագրում են Սուրբ Հոգու ազդեցությունը: Գրի առեք այն նկատառումները, որ ունկնդիրները անում են Սուրբ Հոգու հետ ունեցած իրենց փորձառությունների մասին, ավետարանը սովորելու և պարտավորություն ստանձնելու ընթացքում: Ինչպե՞ս կարող եք ուրիշներին օգնել ճանաչել այդ սրբազան ազդեցությունը: Ինչպե՞ս կարող եք դա անելով խուսափել այլ ազդեցությունների տակ ընկնելուց:

- Մտածեք և քննարկեք, թե ինչպես է հետևյալ խորհուրդը վերաբերվում ձեզ. «Դուք չեք կարող ստիպողաբար առաջացնել հոգևոր բաները: Այնպիսի խոսքեր, ինչպիսիք են՝ *ստիպել, հարկադրել, սահմանափակել, ճնշել, պահանջել,* չեն նկարագրում Հոգու հետ կապված մեր իրավունքները: Դուք չեք կարող ստիպել Հոգուն պատասխանել, ինչպես չեք կարող ստիպել, որ լոբին ծիլ տա, կամ ձուն հասունանա ժամանակից շուտ: Դուք կարող եք միջավայր ստեղծել աճին, սնուցմանը և պաշտպանությանը նպաստելու համար, սակայն չեք կարող ստիպել կամ հարկադրել, դուք պետք է սպասեք, որ այն աճի» (Boyd K. Packer, “The Candle of the Lord,” *Ensign*, Jan. 1983, 53):

- Քննարկեք հետևյալ մտքերը և այն, թե ինչպես կարող են այդ սկզբունքները փոխել ձեր աղոթքներն ու ձեր աշխատանքը: Ինչպե՞ս կարող են ձեր աղոթքները ներգործել ձեր պլանավորման, նպատակներ դնելու, աշխատելու և ամենօրյա այլ գործերի վրա:

  «Մեր գործերը, հիմնականում, մեր աղոթքների պտուղներն են: Աղոթելուց հետո, մենք գործում ենք, իսկ մեր պատշաճ աղոթքները, արդյունքում, առաջնորդվելու համար արդար ուղի են գծում մեզ համար» (Bruce R. McConkie, “Why the Lord Ordained Prayer,” *Ensign*, Jan. 1976, 12):

  «Աղոթքն անկեղծ է, երբ մենք խնդրում ենք մի օրհնություն կամ հատկանիշ, և աղոթելիս միտում ունենք աշխատելու այդ օրհնությունը ձեռք բերելու կամ այդ հատկանիշը զարգացնելու ուղղությամբ» (David O. McKay, *Secrets of a Happy Life*, 114–15):

  «[Աստծուն] խնդրեք ձեզ դնել այնտեղ, որտեղ նա է ուզում, և ասել ձեզ այն, ինչ նա է ուզում, որ անեք, և զգաք, որ ի վիճակի եք դա անել» (Brigham Young, *Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe [1954], 46):

### Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Դաս մատուցեք աղոթքի պատշաճ ու հարգալից լեզվի մասին:

- Եթե հարմար է, միսիոներներին խնդրեք կիսվել մի պատմությամբ կամ փորձառությամբ, որը լսել կամ ունեցել են վկայության վերջին ժողովի, ուսուցման ժամանակ կամ այլ պայմաններում: Մյուս մարդկանց պատմած հոգևոր պատմությունները և փորձառությունները կարող են ձեզ օգնել հավատք զարգացնել և հասկանալ, որ Հոգու ազդեցությունը համատարած և հաճախակի է դրսևորվում:

Նշումներ

- Շնորհակալություն հայտնենք ձեր աշխատանքում Տիրոջ ձեռքի օգնության համար (տե՛ս ՎևՈւ 59.21): Քննարկեք, թե ինչպես է շնորհակալություն հայտնելը ձեզ օգնում տեսնել փոքր, սակայն նշանակալից ճանապարհները, որոնցով Տերն օրհնում է ձեզ (տե՛ս Եթեր 3.5):

- Միսիոներներին խնդրեք ելույթ ունենալ միսիայի և Սուրբ Հոգու զորության մասին:

- Մի նորադարձի խնդրեք պատմել այն մասին, թե ինչպես է նրա վրա ներգործել Սուրբ Հոգին, երբ նա դեռ ունկնդիր էր:

## Միսիայի Նախագահը

- Ժամանակ առ ժամանակ միսիոներներին խնդրեք ձեզ ուղղված իրենց շաբաթական նամակներում ընդգրկել պատշաճ հոգևոր փորձառությունները:

- Հարցազրույցների ժամանակ երբեմն միսիոներներին հարցրեք իրենց առավոտյան և երեկոյան աղոթքների մասին: Նրանց հարցրեք, թե արդյոք զգում են, որ իրենց աղոթքներն իմաստալից են:

- Միսիոներներին հարցրեք, թե ինչպես են իրենք օգնում ունկնդիրներին զգալ և ճանաչել Հոգին:

- Եթե հարմար է, միսիոներներին պատմեք այն մասին, թե ինչպես եք հայտնություն ստանում տեղափոխություններ կատարելու, անհնազանդ կամ օգնության կարիք ունեցող միսիոներների և վարդապետություններ ուսուցանելու վերաբերյալ:



# Ո՞րն է Մորմոնի Գրքի դերը

Նշումներ

## Մտածեք այս մասին

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարը:
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը պատասխանում մարդու հոգու մեծ հարցերին:
- Ինչո՞ւ է Մորմոնի Գիրքը անչափ զորավոր դեր խաղում դարձի գալու գործընթացում:
- Ինչպե՞ս պետք է ես օգտագործեմ Մորմոնի Գիրքը հավատք կառուցելու և մարդկանց օգնելու ավելի մոտենալ Աստծուն:
- Ինչո՞ւ է Մորոնի 10.3–5-ում տրված խոստումը հիմնական դեր խաղում միսիոներական աշխատանքում:

Մորմոնի Գիրքը Քրիստոսի աստվածային էության մասին զորավոր ապացույց է: Այն նաև Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով կատարված Վերականգնման ապացույցն է: Դարձի գալու հիմնական մասը Սուրբ Հոգուց Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին վկայություն ստանալն է: Որպես միսիոներ, դուք նախ պետք է անձնական վկայություն ստանաք, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Նման վկայությունը դարձի գալու գործընթացի ժամանակ կարող է Մորմոնի Գրքի զորության հանդեպ խորը ու մնայուն հավատք արմատավորել: Վստահ եղեք, որ Սուրբ Հոգին կվկայի ցանկացած մարդու, որը կարդում է Մորմոնի Գիրքը, խորհում է այդ մասին և մաքուր սրտով, անկեղծ միտումով և հավատք ունենալով առ Քրիստոս հարցնում է Աստծուն, թե արդյոք այն ճշմարիտ է: Սուրբ Հոգու այդ վկայությունը պետք է ձեր ուսուցման կենտրոնում լինի:

## Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է

Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է, որ Մորմոնի Գիրքը «մեր կրոնի պորտաքարն է» (Մորմոնի Գրքի ներածություն): Մեկ այլ առիթով նա ասել է. «Հեռացրեք Մորմոնի Գիրքը և հայտնությունները, և ո՞ւր է մեր կրոնը: Այն գոյություն չունի» (*History of the Church*, 2:52):




Կամարը ճարտարապետական ամուր կառույց է, որը կազմված է միմյանց ամրացված սեպաձև կտորներից: Մեջտեղի կտորը կամ

Նշումներ

պորտաքարը սովորաբար ավելի լայն է, քան մյուս սեպաձև կտորները, և մյուս բոլոր քարերը պահում է միասին: Երբ Ջոզեֆ Սմիթը Մորմոնի Գիրքն անվանեց «մեր կրոնի պորտաքարը», նա ուսուցանում էր, որ Մորմոնի Գիրքը մեր կրոնը պահում է միասին: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը ասել է, որ Մորմոնի Գիրքը պորտաքար է հանդիսանում առնվազն երեք առումով.

**Քրիստոսի վկայությունը.** «Մորմոնի Գիրքը պորտաքարն է Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության, որն էլ Իր հերթին անկյունաքարն է այն ամենի, ինչ անում ենք: Այն զորությամբ ու հստակորեն վկայում է Նրա իրական լինելու մասին»:

**Վարդապետության ամբողջությունը.** «Տերն Ինքն է ասել, որ Մորմոնի Գիրքը պարունակում է «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» (ՎևՈւ 20.9) . . . Մորմոնի Գրքում մենք կգտնենք մեր փրկության համար անհրաժեշտ վարդապետությունների ամբողջությունը: Եվ դրանք ուսուցանվում են հստակորեն ու պարզորեն, այնպես որ անգամ երեխաները կարող են սովորել փրկության և վեհացման ուղիները»:




**Վկայության Հիմքը.** «Ինչպես կամարն է փլուզվում, երբ պորտաքարը հանվում է, այնպես էլ Մորմոնի Գրքի ճշմարտացիությունից կախված Եկեղեցին կամ կմնա կանգնած կամ կկործանվի: Եկեղեցու քննադատները պարզորոշ հասկանում են դա: Ահա թե ինչու են նրանք ամեն ինչի դիմում՝ փորձելով հերքել Մորմոնի Գրքի ճշմարտացիությունը, քանզի եթե հնարավոր է այն վարկաբեկել, Մարգարե Ջոզեֆ Սմիթն էլ կվարկաբեկվի: Դրա հետ էլ գետնին կհավասարվեն քահանայության բանալիների, հայտնության և վերականգնված Եկեղեցու մասին մեր պնդումը: Սակայն նույնկերպ, եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է և միլիոնավոր մարդիկ վկայել են և վկայում են, որ իրենք ունեն Հոգու վկայությունը, որ այն իրոք ճշմարիտ է, ապա պետք է ընդունել, Վերականգնման և դրա հետ կապված ամեն ինչի մասին պնդումները» (*A Witness and a Warning* [1988], 18–19):

Մորմոնի Գիրքը, Հոգու հետ միասին, ձեր դարձի գալու ամենազորավոր միջոցն է: Այն երկրագնդի վրա գոյություն ունեցող գրքերից ամենաճշմարիտն է (տես Մորմոնի Գրքի նախաբանը): Այն հստակորեն ուսուցանում է Քրիստոսի մասին վարդապետությունը, հատկապես այն դասերում, որոնք ուսուցանում եք ունկնդիրներին: Վերականգնված ավետարանը ուսուցանելիս օգտագործեք այն որպես ձեր հիմնական աղբյուր: Ստորև բերվում են Մորմոնի Գրքում հստակորեն ուսուցանված ճշմարտությունների մասին օրինակներ, ճշմարտություններ, որոնք պետք է ուսուցանեք ունկնդիրներին:

| Միսիոներական դաս | Վարդապետություններ | Վկայակոչումներ |
|---|---|---|
| Հիսուս Քրիստոսի Ավետարանի Վերականգնման Ուղերձը | Ուրացություն, Վերականգնում, Ջոզեֆ Սմիթ, քահանայության իշխանություն | 1 Նեփի 12–14<br>2 Նեփի 3; 26–29<br>Մոսիա 18 |
| Փրկության Ծրագիրը | «Հավերժական Աստծո մեծ ծրագիրը», Նախահայր Ադամի Անկումը, Քավությունը, Հարությունը և Դատաստանը | 2 Նեփի 2, 9<br>Մոսիա 3,15<br>Ալմա 12, 40–42 |
| Հիսուս Քրիստոսի Ավետարանը | Հավատք առ Քրիստոս, ապաշխարություն, մկրտություն, Սուրբ Հոգու պարգև և մինչև վերջ համբերել | 2 Նեփի 31–32<br>3 Նեփի 11, 27 |
| Պատվիրանները, Օրենքներն ու Արարողությունները | Այնպիսի արարողություններ, ինչպիսիք են՝ մկրտությունը, հաստատումը, քահանայության արարողությունը և հաղորդությունը | 3 Նեփի 11.22–28, 18<br>Մորոնի 2–6 |

Նշումներ

### Վարժություն. անհատական ուսումնասիրություն

Ձեր աշխատանքային տետրում գրեք հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչպե՞ս է Մորմոնի Գրքի ուսումնասիրությունն ազդել Հիսուս Քրիստոսի մասին ձեր վկայության վրա:
- Ինչպե՞ս կարող եք Մորմոնի Գիրքն օգտագործել, որպեսզի օգնեք ուրիշներին ամրացնել իրենց վկայությունը:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչ է Փրկիչն ասել Մորմոնի Գրքի մասին:**

Վ&Ու 1.29
Վ&Ու 3.19–20
Վ&Ու 17.6
Վ&Ու 19.26–27
Վ&Ու 20.5–16
Վ&Ու 33.16
Վ&Ու 42.12
Մովսես 7.62



Լուսանկարը տրամադրվել է C. Harrison Conroy Co., Inc.-ի կողմից: Մի բազմացրեք:

## Մորմոնի Գիրքը վկայում է Քրիստոսի մասին

Մորմոնի Գրքի հիմնական նպատակն է հավաստիացնել բոլոր մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է (տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը): Այն վկայում է Քրիստոսի մասին՝ հաստատելով Նրա կյանքի, առաքելության և զորության իրական լինելը: Այն ուսուցանում է Քավության մասին ճշմարիտ վարդապետությունը, Քավություն, որը փրկության ծրագրի հիմքն է: Մորմոնի գրքում պահպանված մի քանի գրվածքների հեղինակները անձամբ են տեսել Քրիստոսին: Հարեդի եղբայրը, Նեփին և Հակոբը տեսել էին նախամահկանացու Քրիստոսին: Մորմոնն ու Մորոնին տեսել էին հարություն առած Քրիստոսին: Ինչպես նաև բազմաթիվ մարդիկ էին ներկա գտնվում Փրկչի Նեփիացիներին մատուցած կարճ, սակայն զորավոր ծառայության ժամանակ (տես 3 Նեփի 11–28): Նրանք, ովքեր շատ քիչ կամ էլ ոչինչ չգիտեն Փրկչի մասին, կիմանան Նրա մասին, կարդալով Մորմոնի Գիրքը, խորհելով իրենց կարդացածի շուրջ և աղոթելով այդ գրքի մասին:

Մորմոնի Գրքի մասին վկայությունը հաստատում է Աստվածաշնչի մասին վկայությունը, որ Հիսուսը Աստծո Միածին Որդին է և աշխարհի Փրկիչը: Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը ուսուցանելիս դուք հաճախ կվկայեք աշխարհի Փրկչի ու Քավիչի մասին: Սուրբ Հոգու զորությամբ դուք կլրացնեք այս ուղերձի ճշմարտացիության մասին ձեր կենդանի վկայությունը:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ինչպիսի՞ պատճառաբանություններ են ընրել Մորմոնի Գրքի մարգարեները իրենց գրառումները կատարելու համար:**

1 Նեփի 6.4–6
1 Նեփի 9.3–5
2 Նեփի 4.15–16
2 Նեփի 25.23–29
2 Նեփի 26.15–16
2 Նեփի 29.11–14
2 Նեփի 33.13–15
Հակոբ 1.4–7
Հակոբ 4.1–6, 12
Ենովս 1.13
Հարոմ 1.2
Օմնի 1.25–26
Մորմոնի Խոսքերը 1.3–8
Ալմա 37.2, 14
3 Նեփի 5.14–15
Մորմոն 8.35
Վ&Ու 3.16–20
Վ&Ու 10.46–48

Նշումներ

## Մորմոնի Գիրքն ու Աստվածաշունչը հաստատում են միմյանց

Մարդկանց հավատը Աստվածաշնչի մասին: Ոմանք հավատում են, որ Աստվածաշունչը բացարձակ կատարյալ է, առանց սխալների, և դա բավական է, որ մենք փրկվենք: Մյուսները կարծում են, թե Աստվածաշունչը ուսումնասիրելու արժանի գրականություն է, սակայն մերժում են, որ այն Քրիստոսի աստվածային էության, հրաշքների կամ Աստծուց ուղղակի հայտնության ապացույց է: Ոմանք անտեսում են Աստվածաշունչը, մյուսները երբեք չեն տեսել կամ առիթ չեն ունեցել կարդալու այն:

Վերջին Օրերի Սրբերը «հավատում են, որ Աստվածաշունչը Աստծո խոսքն է, որքանով որ այն ճիշտ է թարգմանված» (Հավատո Հանգանակ 1.8): Մորմոնի Գիրքը ոչ թե մրցում է Աստվածաշնչի հետ, այլ հաստատում է այն, հորդորում է մեզ կարդալ այն և վկայում է նրա ուղերձի ճշմարտացիության մասին: Դուք պետք է ցույց տաք, որ Մորմոնի Գիրքն ու Աստվածաշունչը հաստատում են միմյանց:

Մորմոնի Գիրքը խոսում է Իր զավակների հետ կապած Աստծո հին ուխտերի մասին. Աստվածաշունչը պատմում է մեծ մարգարեների մասին, որոնք ևս հավատքով ստացել են այդ ուխտերը: Մորմոնի Գիրքը վկայում է Քրիստոսի և Նրա Քավության մասին. Աստվածաշունչը պատմում է Նրա ծննդի, ծառայության, մահվան, Քավության և Հարության մասին: Այսպիսով, Աստվածաշունչն ու Մորմոնի Գիրքը համալրում ու հաստատում են միմյանց:

Աստվածաշնչի ու Մորմոնի Գրքի ՎՕՍ անգլերեն հրատարակչությունը ունի խաչաձև վկայակոչումներ և ուսուցողական օժանդակ նյութեր, որոնք Հուդայի փայտը (Աստվածաշունչը) և Հովսեփի փայտը (Մորմոնի Գիրքը) դարձնում են մեկ մեր ձեռքում (տես Եզեկիել ԼԷ.15–17; տես նաև 1 Նեփի 13.34–41; 2 Նեփի 3.12; 29.8): Առաջնային համարեք Մորմոնի Գիրքը, երբ ուսուցանում եք, սակայն ցույց տվեք նաև, թե ինչպես են Մորմոնի Գիրքն ու Աստվածաշունչը ուսուցանում միևնույն սկզբունքները:

Օգտագործեք Մորմոնի Գիրքը, որպեսզի պարզաբանեք ու բացատրեք Աստվածաշնչի հատվածները: Օրինակ, Նոր Կտակարանը ներկայացնում է, որ Քրիստոսը մկրտվեց, որպեսզի «ամեն արդարություն կատարվեր» (Մատթէոս Գ.14–15): Մորմոնի Գիրքը բացատրում է, թե ինչ է նշանակում կատարել ամեն արդարություն (տես 2 Նեփի 31.5–9):

Եթե դուք օգտագործում եք Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը որպես սուրբ գրքերի զույգ հատորյակներ, դրանք կհաղթահարեն հակառակությունները ու կուղղեն կեղծ վարդապետությունները (տես 2 Նեփի 3.12):

Աստվածաշունչը վկայության օրենքի մասին ուսուցանում է հետևյալը. «երկու և երեք վկաների բերանից ամեն բան կհաստատվի» (Բ Կորնթացիս ԺԳ.1): Այս օրենքին ներդաշնակ, թե Մորմոնի Գիրքը և թե Աստվածաշունչը վկայում են Հիսուս Քրիստոսի մասին:

### Վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Գտեք հետևյալ թեմաների խաչաձև վկայակոչումները Մորմոնի Գրքում և Աստվածաշնչում: Փակագծերում տրված են յուրաքանչյուր թեմայի վկայակոչումների օրինակները: Ձեր ցանկությամբ հատվածներ և թեմաներ ավելացրեք:

- Մարգարեներ (Ամովս Գ.7 և Հակոբ 4.4–6)
- Ուրացություն (Բ Տիմոթէոս Դ.3–4 և 2 Նեփի 28)
- Վերականգնում (Գործք Գ.19–21 և 1 Նեփի 13.34–42)
- Աստծո զավակներ (Գործք ԺԷ.29 և 1 Նեփի 17.36)

Նշումներ

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է Աստվածաշունչն ասում Մորմոնի Գրքի մասին:**

Հովհաննես Ժ.16
Եսայիա ԻԹ.4, 11–18
Եզեկիել ԼԷ.15–17
Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Եփրեմ», ենթավերնագիր՝ Եփրեմի կամ Հովսեփի փայտը

**Ի՞նչ է Մորմոնի Գիրքն ասում Աստվածաշնչի մասին:**

1 Նեփի 13.20–29, 40–41
2 Նեփի 29.3–14
3 Նեփի 23.1
Մորմոն 7.8–9

**Ինչպե՞ս են երկու գրքերն էլ ծառայում որպես Քրիստոսի մասին վկայություն:**

2 Նեփի 29.8
Հովհաննես Ի.31
Գործք Ժ.43

## Մորմոնի Գիրքը պատասխանում է հոգու հարցերին

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է, որ միսիոներները «պետք է ցույց տան, թե ինչպես է [Մորմոնի Գիրքը] պատասխանում հոգու մեծ հարցերին» (“Flooding the Earth with the Book of Mormon,” *Ensign*, Nov. 1988, 5):

«Հոգու մեծ հարցերից» կարող են լինել. Աստված իրո՞ք գոյություն ունի: Արդյո՞ք ես գոյություն եմ ունեցել մինչև իմ ծնվելը: Կապրե՞մ իմ մահից հետո: Ո՞րն է կյանքի իմաստը: Իրո՞ք Հիսուսը Փրկիչն է:



Որոշ հարցեր էլ կարող են վերաբերվել ավելի շատ աշխարհիկ կարիքներին. Ինչպե՞ս կարող եմ բարելավել իմ հարաբերությունը ամուսնուս հետ: Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ անչափահասներին խուսափել թմրանյութերից կամ անբարոյականությունից: Ինչպե՞ս կարող եմ աշխատանք գտնել՝ իմ ընտանիքին օգնելու համար:

Հիսուս Քրիստոսի ավետարանն օգնում է մեզ պատասխանել երկու տեսակի հարցի ևս: Երբ հավատում ենք, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, մենք կարող ենք սկսել պատասխանել կյանքի նպատակի և հավերժական կյանքի հույսի մասին հարցերին: Մորմոնի Գիրքը նկարագրում է երջանկության ծրագիրը, որը իմաստ ու հեռանկար է տալիս կյանքին: Հետևյալ հարցերի պատասխանները հստակորեն ուսուցանվում են Մորմոնի Գրքում:

- Գոյություն ունի՞ Աստված: (Ալմա 22)
- Ի՞նչ է Հիսուս Քրիստոսն ակնկալում ինձանից: (2 Նեփի 9)
- Ինչպե՞ս կարող է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատն օգնել ինձ: (Ալմա 36)
- Գոյություն ունի՞ կյանք մահից հետո: (Ալմա 40)
- Ո՞րն է կյանքի նպատակը: (Ալմա 34)
- Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս, որ չարն ազդի մեզ վրա և մենք տառապենք: (2 Նեփի 2; Ալմա 14.9–11; 60.13)
- Արդյո՞ք իմ նորածինը պետք է մկրտվի: (Մորոնի 8)
- Արդյո՞ք Աստված ինձ ճանաչում է: (Ալմա 5.38, 58)

Նշումներ

- Արդյո՞ք Աստված պատասխանում է աղոթքներին: (Ենովս 1)
- Ինչպե՞ս կարող եմ խաղաղություն ու ուրախություն գտնել: (Մոսիա 2,4)
- Ինչպե՞ս կարող է իմ ընտանիքն ավելի երջանիկ ու համերաշխ լինել: (Մոսիա 2)
- Ինչպե՞ս կարող եմ համատեղել ընտանիքն ու կարիերան: (3 Նեփի 13)
- Ինչպե՞ս կարող եմ ամրապնդել իմ հարաբերությունները ամուսնու հետ: (3 Նեփի 14)
- Ինչպե՞ս կարող եմ խուսափել իմ ընտանիքին սպառնացող չարից: (Ալմա 39)
- Ինչպե՞ս կարող եմ խուսափել մեղքից: (Հելաման 5)

Երբ Հոգու առաջնորդությամբ ենք կարդում Մորմոնի Գիրքը, այն օգնում է մեզ պատասխանել անձնական հարցերին: Այն ուսուցանում է, որ աղոթքը և հայտնությունը օգնում են լուծել որոշակի կամ հատկապես դժվար խնդիրներ: Այն օգնում է հավատալ, որ Աստված կպատասխանի մեր աղոթքներին:

Մորմոնի Գիրքը նաև օգնում է մեզ հասկանալ, որ Աստծո պատվիրանները ոչ թե սահմանափակող ցանկ են, որտեղ տրվում է, թե ինչ կարելի է կամ ինչ չի կարելի անել, այլ երջանիկ ու լիառատ կյանք տանող ցուցածողեր են: Երբ սկսում ենք հասկանալ, որ ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողությունները լիառատ կյանք տանող ճանապարհ են, մենք կզգանք, որ այդ սկզբունքներն օգնում են պատասխանել ցանկացած հարցի և բավարարել ցանկացած կարիք: Օրինակ, մենք հասկանում ենք, որ ապաշխարությունը, ներողամտությունը և ուրիշներին ծառայելու ուխտը կարևոր են ամուսինների հետ մեր հարաբերությունները բարելավելու համար: Մենք տեսնում ենք, որ Քրիստոսի հանդեպ հավատքը, ուխտերը ընդունելու ու պահելու հետ մեկտեղ, և Հոգու հուշումներին հետևելը կարող են օգնել անչափահասներին խույս տալ մեզ շրջապատող ուժեղ գայթակղություններից:

> *«Ավելի ու ավելի վտանգավոր դարձող այս աշխարհում . . . Մորմոնի Գիրքը՝ Եվս մեկ վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին, անուցող զորություն ունի՝ բուժելու աշխարհի քաղցած հոգիներին»:*
>
> – ՆԱԽԱԳԱՀ ԲՈՅԴ Ք. ՓԱՔԵՐ
> "THE BOOK OF MORMON: ANOTHER TESTAMENT OF JESUS CHRIST," *ENSIGN*, ՆՈՅ. 2001, 64

Ավետարանը կարող է լուծել գրեթե բոլոր հարցերը կամ կարիքները: Ահա, թե ինչու դուք պետք է «ուսուցանեք իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի մեջ են, և Մորմոնի Գրքի, որը պարունակում է ավետարանի լրիվությունը» (ՎևՈւ 42.12):

**Վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Թվեք «հոգու մեծ հարցերից» մի քանիսը, որոնք ունկնդիրներն են հարցրել: Մորմոնի Գրքում գտեք հատվածներ, որպեսզի պատասխանեք այդ հարցերին: Պատասխանները գրեք ձեր աշխատանքային տետրում և ուսուցանելիս օգտագործեք դրանք:

## Մորմոնի Գիրքը մարդկանց մոտեցնում է Աստծուն

Մորմոնի Գրքի մասին Մարգարե Ջոզեֆ Սմիթը ասել է, որ «մարդն ավելի կմոտենա Աստծուն ապրելով ըստ դրա ցուցումների, քան ըստ որևէ այլ գրքի» (Մորմոնի Գրքի նախաբան): Մորմոնի Գիրքը ցատկահարթակ է դեպի վկայությունն ու անձնական հայտնությունը: Օգտագործեք Մորմոնի Գիրքը, որպեսզի օգնեք մարդկանց հոգևոր փորձառություններ ունենալ, հատկապես Սուրբ Հոգուց վկայություն, որ գիրքն ինքնին ճշմարիտ է: Աշտապես կոչ անելով մարդկանց

Նշումներ

ապրել ըստ Մորմոնի Գրքում տրված սկզբունքների, դուք օգնում եք նրանց հավատք զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ և ավելի մոտենալ Աստծուն:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Նրանք, ովքեր կարդացել են [Մորմոնի Գիրքը] աղոթքով, լինեն հարուստ թե աղքատ, կրթված, թե անկիրթ, աճել են դրա զորությամբ: . . . Առանց վերապահման ես խոստանում եմ ձեզ՝ եթե աղոթքով կարդաք Մորմոնի Գիրքը, անկախ նրանից, թե քանի անգամ եք նախկինում կարդացել այն . . . Տիրոջ Հոգին կրնակվի ձեր սրտում: Դուք հաստատուն վճռականություն ձեռք կբերեք հնազանդվելու նրա պատվիրաններին և ավելի ամուր վկայություն կունենաք Աստծո Որդու կենդանի իրականության մասին (“The Power of the Book of Mormon,” *Ensign*, June 1988, 6):

## Օգտագործեք Մորմոնի Գիրքը հակաճառություններին պատասխանելու համար

Շատերը չեն հավատա այն ամենին, ինչ դուք կսովորեցնեք: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը ուսուցանել է, թե ինչպես կարող է Մորմոնի Գիրքը նման իրավիճակներում պատասխանելու միջոց հանդիսանալ.

«Մենք պետք է Մորմոնի Գիրքն օգտագործենք Եկեղեցու հասցեին հակաճառություններին պատասխանելու համար: . . .

Բոլոր հակաճառությունները, լինեն դրանք արհեստական վիճեցումների, բազմակի ամուսնությունների, յոթնօրյա երկրպագությունների և այլնի վերաբերյալ, հիմնականում պտտվում են այն բանի շուրջ, թե արդյոք Ջոզեֆ Սմիթն ու նրան հաջորդողները եղել են և կան Աստծո մարգարեները՝ ստանալով աստվածային հայտնություն. . .


*My Servant Joseph* © 2004 Լիզ Լեմոն Սվինդլ: Այս նկարը վերատպվել է Foundation Arts American Fork, Utah 84003 թույլտվությամբ:

. . . Միակ խնդիրն այն է, որ հակաճառողը ինքը պետք է պարզի, թե արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Քանի որ եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա Հիսուսը Քրիստոսն է, Ջոզեֆ Սմիթը նրա մարգարեն էր, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ճշմարիտ է, և այն այսօր ղեկավարվում է հայտնություն ստացող մարգարեի կողմից:

«Մեր հիմնական խնդիրն է՝ հայտարարել ավետարանը և կատարել դա արդյունավետ ձևով: Ամեն ոք ի վերջո դեմ է առնում հավատքի պատին և այդտեղ նա պետք է իր տեսակետն ունենա» (*A Witness and a Warning*, 4–5):

Օրինակ, անկեղծ ունկնդիրները կարող են առարկել Իմաստության Խոսքի վերաբերյալ: Օգնեք նրանց հասկանալ, որ իրականում նրանք պետք է պարզեն, թե արդյոք Ջոզեֆ Սմիթը խոսել է որպես Աստծո մարգարե, երբ այս պատվիրանը նորացվել է այս ժամանակաշրջանում: Դուք պետք է ասեք. «Որպեսզի հավատք ունենաք ընդունելու այս ուսմունքը, պետք է հավաստիանաք, թե արդյոք այս պատվիրանը Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացել է որպես հայտնություն Աստծուց: Որպեսզի համոզվեք, որ Ջոզեֆ Սմիթն Աստծո մարգարեն է, պետք է կարդաք և աղոթեք Մորմոնի Գրքի վերաբերյալ»:

Ունկնդիրները պետք է իրենք լուծեն իրենց մտահոգություններն ու դժգոհությունները: Դուք կարող եք օգնել՝ նրանց ուշադրությունը կենտրոնացնելով Մորմոնի Գիրքը կարդալու և այդ մասին աղոթելու վրա, որը կամրապնդի նրանց հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Երբ նրանք ամրապնդեն Վերականգնման մասին իրենց վկայությունը, նրանք ուժ կունենան հաղթահարելու իրենց առարկություններն ու փարատել մտահոգությունները:

Նշումներ

Երբ դուք փարատեք մտահոգությունները, հիշեք, որ մեր հասկացողությունն ընդլայնվում է ժամանակակից մարգարեների` Ջոզեֆ Սմիթի և նրան հաջորդողների շնորհիվ, որոնք ուղղակիորեն հայտնություններ են ստանում Աստծուց: Ուստի, առաջին հարցը, որ ունկնդիրը պետք է պատասխանի, դա այն է, թե արդյոք Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, իսկ ունկնդիրը կարող է պատասխանել այդ հարցին կարդալով Մորմոնի Գիրքը և աղոթելով այդ մասին:

**Ջոզեֆ Սմիթը և Մորմոնի Գիրքը**

Որպեսզի համոզվեք, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է, պետք է կարդաք Մորմոնի Գիրքը և աղոթեք այդ մասին:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Ձեր աշխատանքային տետրում գրի առեք, թե ինչպես կարող եք վկայակոչել Ջոզեֆ Սմիթին և Մորմոնի Գիրքը, որպեսզի պատասխանեք հետևյալ առարկություններին կամ մտահոգություններին.

- «Ես չեմ հավատում, որ այլևս Աստված խոսում է մարդկանց հետ»:
- «Ես կարծում եմ, որ կարող եմ ինքս երկրպագել Աստծուն, քան ինչ-որ կազմակերպված կրոնի միջոցով»:
- «Ինչո՞ւ պետք է թողնեմ ճաշելիս գինի խմելը, եթե միանամ ձեր եկեղեցուն»:
- «Ինչո՞ւ է ինձ կրոն հարկավոր»:

## Ինչպե՞ս պետք է օգտագործեք Մորմոնի Գիրքը:

Շատ ունկնդիրներ կամ չեն կարդացել Մորմոնի Գիրքը կամ իրենց կարդացածը չեն հասկանում: Նրանց համար, ովքեր չեն կարդում կամ չեն հասկանում Մորմոնի Գիրքը, դժվար կլինի վկայություն ստանալ, որ այն ճշմարիտ է:

**Կարդացեք Մորմոնի Գիրքը ձեր ունկնդիրների հետ**

Միասին կարդալիս աղոթեք, որ Սուրբ Հոգին վկայի ունկնդիրներին, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:



Դուք կարող եք օգնել ունկնդիրներին նրանց հետ Մորմոնի Գիրքը կարդալով: Աղոթեք օգնության համար, երբ ընտրում եք հատվածները, որոնք պատասխանում են նրանց մտահոգություններին կամ խնդիրներին: Դուք կարող եք նրանց հետ կարդալ ուսուցանելիս կամ հերթական այցի ժամանակ: Դուք նաև կարող եք կազմակերպել, որ անդամները կարդան ունկնդիրների հետ:

Մասամբ որոշ կարևոր հատվածներ ընդգրկված են տիտղոսաթերթում, նախաբանում (հատկապես վերջին երկու պարբերությունները) և Մորոնի 10.3–5: Այս հատվածներն օգնում են ունկնդիրներին հասկանալ, թե ինչպես կարող են Մորմոնի Գրքի վերաբերյալ վկայություն ձեռք բերել:

Նշումներ

Խրախուսեք նրանց կարդալ Մորմոնի Գիրքը սկզբից, կարդալով նաև երեք և ութ վկաների վկայությունները և Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը:

Կարդացեք և քննարկեք կարճ հատվածները (ինչպիսիք են՝ 1 Նեփի 3.7 կամ Մոսիա 2.17) և երկար հատվածները կամ գլուխները (ինչպիսիք են՝ 2 Նեփի 31, Ալմա 7 կամ 3 Նեփի 18):

Երբ դուք կարդում եք ունկնդիրների հետ, ժամանակ առ ժամանակ կանգ առեք և քննարկեք ձեր կարդացածը: Մատնանշեք հիմնական ուղերձները կամ կարևոր վարդապետությունները, երբ կարդում եք նրանց հետ: Կիսվեք ձեր ներըմբռնմամբ, զգացումներով, վկայություններով և անձնական փորձառություններով: Օգնեք ուրիշներին զգալ Մորմոնի Գրքի հզոր ուժը: Այդպիսով դուք կարող եք ուղղակիորեն Մորմոնի Գրքից ուսուցանել ճիշտ վարդապետությունը: Շարունակեք այդպես հաջորդ այցելությունների ժամանակ, որպեսզի նրանք, ում ուսուցանում եք, կարողանան ինքնուրույն կարդալու և աղոթելու ունակություններ զարգացնել:

Ուսուցանեք սկզբունքներն ու վարդապետությունները ` օգտագործելով Մորմոնի Գրքի մարգարեների խոսքերը և նրանց մասին հատվածները:

> *«Խնդրում եմ Մորմոնի Գիրքը որպես անառարկելի ճշմարտություն մի ընդունեք: Աղոթեք, որպեսզի իմանաք, թե ինչպես կարող եք Մորմոնի Գիրքը ավելի արդյունավետ օգտագործել ձեր միսիայում: Ես խոստանում եմ, որ եթե այդպես վարվեք, ձեր միտքը կլուսավորվի այն ուղղությամբ, որով պետք է շարժվեք»:*
>
> – ԵՐԵՑ ՋՈԶԵՖ Բ. ՎԻՐԹԼԻՆ
> ՄԻՍԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՍԵՄԻՆԱՐ, 23 ՀՈՒՆԻՍԻ 1999

Ձեզ և ձեր ունկնդիրներին «վերագրեք» այն ամենը, ինչ կարդացել եք՝ գտնելով կիրառելու արժանի բաներ, որոնք վերաբերում են ձեզ և ձեր ունկնդիրներին (տես 1 Նեփի 19.23): «Վերագրել» նշանակում է մտավոր կապ ստեղծել վարդապետությունը հասկանալու և ըստ դրա ապրելու միջև: Անկեղծորեն, սրտի իրական ձգտումով կարդալով դուք և նրանք, ում ուսուցանում եք, պետք է ցանկություն ունենաք գործել ըստ տվյալ վարդապետության, մտցնելով այն ձեր առօրյա կյանք, իսկ անհրաժեշտության դեպքում, ապաշխարեք: Ապրելով ըստ վարդապետության, դուք կհավաստիանաք, որ այն ճշմարիտ է: Օրինակ, դուք կարող եք ունկնդրին ասել.

- «Նեփին, ձեր նման, դժվարության էր հանդիպել: Սակայն հավատք գործադրելով «գնալ և անել» այն, ինչ Տերն է պատվիրել իրեն, նա կարողացավ հաջողության հասնել: (Կարդացեք 1 Նեփի 3.7): Ես գիտեմ, որ Աստված ճանապարհ կպատրաստի ձեզ համար ըստ Իմաստության Խոսքի ապրելու համար»:
- «Հովհաննես, լավ է, որ դուք ուզում եք ազատվել ձեր ունեցած մեղքի զգացումից: Ինչպես Փրկիչն է խոստացել Նեփիացիներին, եթե ապաշխարեք, մկրտվեք և ստանաք Սուրբ Հոգին, դուք «անմեղ կլինեք Հոր առաջ» (Կարդացեք 3 Նեփի 27.16):

Վստահեք Մորոնի 10.3–5-ում տրված խոստմանը: Ամեն ոք, ով անկեղծ սրտով կկարդա և կաղոթի այս գրքի վերաբերյալ, Սուրբ հոգու զորությամբ որոշակիորեն կիմանա դրա ճշմարտացիության մասին: Հնարավորինս ամեն բան արեք, որպեսզի օգնեք ունկնդիրներին.

- Կարդացեք Մորմոնի Գիրքը և խորհեք Հիսուս Քրիստոսի վերաբերյալ դրա ուղերձի շուրջ:
- Աստծուն աղոթեք Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք տածելով, որպեսզի վկայություն ստանաք, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է և Ջոզեֆ Սմիթը Վերականգնման մարգարեն է:
- Անկեղծ աղոթեք և սրտի իրական փափագ ունեցեք, որը նշանակում է, որ նրանք նպատակամղված են գործելու Աստծուց ստացված պատասխանով:

Նշումներ

Դուք նույնպես պետք է մշտապես կիրառեք այս խոստումը, որպեսզի ամրապնդեք ու նորացնեք Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությունը: Այս նորացված վկայությունը կօգնի ձեզ պահպանել հաստատուն վստահություն, որ ամեն ոք, ով կիրառում է այս խոստումը պատասխան կստանա:

### Օգտագործեք Մորմոնի Գիրքը ձեր աշխատանքի ամեն քայլում

Մորմոնի Գիրքը զրույցի ժամանակ հզոր միջոց է հանդիսանում: Օգտագործեք այն որպես ձեր հիմնական միջոց վերականգնված ճշմարտությունը ուսուցանելու համար:

### Հիշեք սա.

- Մորմոնի Գիրքը Քրիստոսի մասին մեր վկայությունների և մեր վարդապետության պորտաքարն է:
- Մորմոնի Գիրքը հստակ ուսուցանում է միսիոներական դասերի վարդապետությունը:
- Օգտագործեք Մորմոնի Գիրքը, որպեսզի պատասխանեք հոգու հարցերին և արձագանքեք Եկեղեցու դեմ հնչած հակաճառություններին:
- Մշտապես կարդացեք Մորմոնի Գիրքը ձեր ունկնդիրների և նորադարձների հետ: Հնարավորինս ամեն ինչ արեք, որպեսզի օգնեք նրանց ինքնուրույն կարդալ և կյանքում կիրառել իրենց սովորածը:
- Վստահեք Տիրոջ խոստումին, որ ամեն մարդ, որը անկեղծ սրտով կարդա Մորմոնի Գիրքը և աղոթի այդ մասին, Սուրբ Հոգու զորությամբ կիմանա դրա ճշմարտացիության մասին:

Նշումներ

## Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

### Անհատական ուսումնասիրություն

- Կարդացեք 2 Նեփի 2, 9, 30, 31, 32 գլուխները և նշեք Հիսուս Քրիստոսին վերաբերող բոլոր վկայակոչումները: Թվարկեք այդ գլուխներում օգտագործված Քրիստոսի տարբեր անուններն ու տիտղոսները: Ընդգծեք Քրիստոսի մասին ասված խոսքերը: Նշեք նրա հատկանիշներն ու գործերը: Դուք գուցե ցանկանաք այսպես շարունակել ամբողջ Մորմոնի Գիրքը կարդալիս:

- Ձեր աշխատանքային տետրում գրեք, թե ինչ էիք զգում, երբ Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին առաջին անգամ հոգևոր վկայություն ստացաք:

- ՎևՈւ 20.17 հատվածում ասվում են հետևյալ խոսքերը՝ «այս բաներով մենք իմանում ենք»՝ ներկայացնելու համար Մորմոնի Գրքի միջոցով ուսուցանված և պարզաբանված վարդապետությունները: Կարդացեք ՎևՈւ 20.15–35 հատվածը և թվարկեք հիշատակված վարդապետությունները: Ընտրեք այդ վարդապետություններից մեկը և օգտագործեք Սուրբ Գրքերի Ուղեցույցը, որպեսզի համեմատեք ձեր թվարկածը և այն, թե ինչ է Աստվածաշունչն ուսուցանում այդ վարդապետությունների մասին:

- Համեմատեք Մատթեոս Ե-Զ գլուխներում տրված Լեռան Քարոզը և 3 Նեփի 12–14 գլուխներում տրված Քրիստոսի քարոզը: Թվարկեք Մորմոնի Գրքի միջոցով վերականգնված պարզ ու արժեքավոր ճշմարտությունները:

- Հերթով գրեք ունկնդիրների կողմից տրված հարցերը: Մորմոնի Գրքում գտեք այն հատվածները, որոնք պատասխանում են այդ հարցերին, և անհրաժեշտության դեպքում ձեր ամենօրյա ուսուցումների ժամանակ օգտագործեք դրանք:

- Մորմոնի Գրքում գտեք մի սուրբ գրվածք, որը փոխել է ձեր կյանքը: Այդ գրության վերաբերյալ գրեք ձեր զգացումները ձեր աշխատանքային տետրում:

- Յուրաքանչյուր դեպքը գտեք Մորմոնի Գրքում, որտեղ ինչ-որ մեկի աղոթքն է արձանագրված: Ձեր աշխատանքային տետրում գրեք այդ աղոթքների ընդհանուր գծերը:

- Կարդացեք 2 Նեփի 33.10–15 և Մորոնի 10.27–29, 34 հատվածները: Ի՞նչ կասեիք Նեփիին ու Մորոնիին դատարանում՝ Մորմոնի Գիրքը օգտագործելու մասին: Գրեք ձեր պատասխանները, և նպատակներ դրեք դա շտկելու համար:

- Մոսիայի 11–16 գլուխների խորագրերից հակիրճ շարադրեք այն, թե ինչ էր ուսուցանում Աբինադին: Կարդացեք այդ գլուխները և բացեք ձեր հակիրճ պատմությունը:

- Մոսիայի 2–5 գլուխների խորագրերից հակիճ շարադրեք այն, թե ինչ էր ուսուցանում Բենիամին Թագավորը:

- Ամեն օր Մորմոնի Գիրքը կարդալիս ձեր ուսուցման օրագրում գրեք ձեր վրա տպավորություն գործած հատվածները: Գրեք, թե ինչպես կկիրառեք դրանք ձեր կյանքում:

### Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Միասին կարդացեք Մորմոնի Գրքից հատվածներ: Կիսվեք այն ամենով, ինչ սովորել և զգացել եք: Ինչպես նաև միմյանց բերեք ձեր վկայությունները:

- Մորմոնի Գրքի ո՞ր մարգարեին կամ միսիոներին կցանկանայիք նմանվել, և ինչո՞ւ: Ձեր զուգընկերոջ հետ կիսվեք ձեր պատասխանով:

Նշումներ

- Ձեր զուգընկերոջ հետ կարդացեք Ալմա 26 և 29: Կիսվեք, թե ինչ եք զգում ձեր միսիայի վերաբերյալ: Գրեք ձեր զգացումները ձեր աշխատանքային տետրում:

- Կարդացեք Ալմա 37.9 հատվածը և քննարկեք, թե որքան վեռական դեր ունեին սուրբ գրքերը Ամմոնի և նրա ընկեր միսիոներների համար: Գտեք վկայակոչումներ, թե ինչպես էին նրանք օգտագործում սուրբ գրքերը:

- Ձեր զուգընկերոջ հետ կարդացեք Ալմա 11–14 գլուխները՝ ձեզանից մեկը թող կատարի Ալմայի կամ Ամուլեկի դերը, իսկ մյուսը՝ չարախոսների դերը: Նշեք, թե ինչպես էին այդ միսիոներները պատասխանում դժվար հարցերին:

- Կարդացեք հետևյալ ճշմարիտ պատմությունը և քննարկեք, թե ինչ եք սովորում Մորմոնի Գրքի կարևորության և զորության մասին (անունները փոխված են):

  «Երբ մենք հրավիրեցինք Շնայդերներին մկրտվել և հաստատվել, քույր Շնայդերը պատրաստ էր, իսկ եղբայր Շնայդերն ասաց. «Մի հուսահատվեք, երեցներ: Ես չգիտեմ, թե արդյոք կկարողանամ երբևէ մկրտվել»: Թեպետ եղբայր Շնայդերը ընդունում էր այն ամենը, ինչ մենք ուսուցանում էինք և միշտ ջերմ ու ընկերական էր մեր հանդեպ, նա խորապես մտահոգված էր, թե ինչպես կընդունեին իր ընտանիքը, եթե ինքը մեկ այլ եկեղեցու միանար:

  Մի քանի ամիս հետևելով եղբայր Շնայդերի պայքարին, ես և իմ զուգընկերը ներշնչվեցինք Շնայդերների հետ կարդալու 3 Նեփի 11 գլուխը: Ես երբեք չեմ մոռանա, թե ինչ տեղի ունեցավ այդ երեկո: Բացելով Մորմոնի Գիրքը, իմ զուգընկերը բացատրեց. «Այս հատվածը, ինչպես և դուք կարող եք հիշել, պատմում է Մորմոնի Գրքի ժողովրդին կատարած Փրկչի այցի մասին: Այստեղ մենք կկարդանք այդ մարդկանց հանդեպ ունեցած Փրկչի սիրո մասին և, թե ինչ էր Նա սովորեցնում նրանց»: Մենք հերթով կկարդանք՝ յուրաքանչյուրս մեկ կամ երկու հատված: Հինգ հատված կարդալուց հետո իմ զուգընկերն ընդհատեց և ասաց. «Ես միշտ ներշնչվել եմ նրանց լսած ձայնի նկարագրությամբ: Այդ ձայնը ոչ կոպիտ, ոչ էլ բարձր էր, ու թեպետ այն մեղմ ձայն էր, սակայն ներթափանցող զորավոր ազդեցություն գործեց նրանց վրա: Այդ ձայնը ոչ միայն ականջով լսվեց, այլ այն խոսեց նրանց սրտում»: Ես նայեցի Շնայդերներին. նրանք ուշադիր լսում էին իմ զուգընկերոջը:

  Աղոթքի և Հոգուն լսելու մասին մի փոքր զրուցելուց հետո, եղբայր Շնայդերի հերթն էր կարդալու: «Եվ ահա, երրորդ անգամ, նրանք հասկացան ձայնը, որ նրանք լսեցին. և այն ասաց նրանց. Ահա՛ իմ Սիրելի Որդին, որից ես շատ գոհ եմ, որով ես փառավորեցի իմ անունը, լսեցե՛ք նրան»: Եղբայր Շնայդերը դադար առավ՝ սևեռուն նայելով իր Մորմոնի Գրքին: Ապա նա նայեց ինձ ու ասաց. «Երկնային Հայրն իրոք հպարտ էր Իր Որդիով, այնպես չէ՞»: «Այո»,- պատասխանեցի ես: Եղբայր Շնայդերը կրկին նայեց իր գրքին և խորը մտքերով տարված աչքերը հառեց բացված էջին: Ի վերջո, նա ասաց. «Ես կցանկանայի, որ Երկնային Հայրն ինձանով նույնպես հպարտանար: Հետաքրքիր է, ինչպե՞ս Նա կներկայացներ ինձ: Կարծում եմ, եթե ես . . . դե, եթե ես ցանկանում եմ, որ Նա հպարտանա ինձանով, ապա լավ կլինի, որ անեմ, այն ինչ Նա է ցանկանում, որ անեմ»: «Այո, կարծում եմ, դա է կարևոր»,- պատասխանեցի ես: «Դե, կարծում եմ, ես շատ էի անհանգստանում, թե ինչ կմտածեն այլոք, ոչ թե ինչ է մտածում Աստված»: Մի փոքր դադարից հետո եղբայր Շնայդերը հավաստիությամբ գլուխը շարժելով և վեռական հայացքով ասաց. «Կարծում եմ, լավ կլինի, որ մկրտվեմ»: Նրա պատասխանն այնքան անակընկալ էր, որ ես և զուգընկերս նայեցինք նրան դատարկ հայացքով: Վերջապես իմ զուգընկերն ասաց. «Այո, ճիշտը դա կլինի: Իրականում, այս գլխի մեջ ավելի ուշ Փրկիչը սովորեցնում է . . . »: Երբ իմ զուգընկերը խոսում էր, ես այրող զգացում ունեի իմ սրտում և երախտագիտություն՝ Մորմոնի Գրքի համար»:

Ինչպե՞ս այդ միսիոներներն օգտագործեցին Մորմոնի Գիրքը: Ինչպե՞ս կարող եք դուք և ձեր զուգընկերն ավելի արդյունավետ օգտագործել այն ձեր միսիոներական աշխատանքում:

Նշումներ

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Վարժվեք օգտագործելու Մորմոնի Գիրքը այս գլխի հիմնական ենթավերնագրերում նշված եղանակներով:
- Գրեք ունկնդիրների կողմից արված առարկությունները կամ տրված հարցերը: Բացատրեք միմյանց, թե ինչպես կպատասխանեիք դուք այդ հարցերին, օգտագործելով Մորմոնի Գիրքը:
- Միասին կարդացեք Մորմոնի Գրքի հատվածները: Կիսվեք ձեր գիտելիքով, զգացումներով և վկայությամբ:
- Վարժվեք օգտագործելու Մորմոնի Գիրքը՝ հաստատելու համար Վերականգնման ուղերձը:
- Ընտրեք Մորմոնի Գրքի հայտնի միսիոներներից մեկին: Քննարկեք և թող միսիոներները թվարկեն այդ միսիոների բնավորության գծերը: Խնդրեք յուրաքանչյուր միսիոների նպատակ դնել կիրառելու այդ գծերից որևէ մեկը: Կրկնեք այդ վարժությունը, միշտ օրինակ բերելով Մորմոնի Գրքի միսիոներներին:
- Խնդրեք միսիոներներին կիսվել իրենց փորձառությամբ, երբ Մորմոնի Գիրքը օգնել է նրանց ունկնդիրներին՝ դարձի գալու ճանապարհին:
- Խնդրեք միսիոներներին կիսվել հոգու հարցին տրված իրենց լավագույն պատասխանով, որը տվել են, օգտվելով Մորմոնի Գրքից:

## Միսիայի Նախագահ

- Սովորեցրեք միսիոներներին ինչպես օգտագործել Մորմոնի Գիրքը, որպեսզի հաստատեն Վերականգնման ուղերձի ճշմարտացիությունը:
- Կարդացեք 1 Նեփի 1 գլուխը և համեմատեք այն Ջոզեֆ Սմիթի ունեցած փորձառության հետ:
- Միսիոներներին տվեք մաքուր Մորմոնի Գիրք, որտեղ նշումներ չկան: Թող նրանք տարբեր գույներով նշեն.
  - Հիսուս Քրիստոսին վերաբերող վկայակոչումները (Նրա անունը կամ նրան հատկանշող դերանունները):
  - Նրա խոսքերը (Նրա կամ մարգարեների կողմից ասված, երբ նրանք ասում են. «Այսպես է ասում Տերը»):
  - Նրա հատկանիշները:
  - Մորմոնի Գրքում պարունակող վարդապետություններն ու սկզբունքները:

  Խնդրեք միսիոներներին յուրաքանչյուր էջի ներքևում գրել վկայակոչումների ամբողջական թիվը: Երկու-երեք ամսից միսիոներներին խնդրեք հարցազրույց-ների և շրջանի ժողովների ժամանակ միմյանց հետ կիսվել իրենց սովորածով: Եթե ցանկանում եք, կարող եք նմանատիպ վարժություն կատարել ամբողջ միսիայով՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրո, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի կամ ավետարանի այլ կարևոր սկզբունքների մասին նշումներ կատարելով:
- Հարցազրույցների ժամանակ միսիոներներին խնդրեք ձեզ հետ կիսվել Մորմոնի Գրքի այն հատվածներով, որոնք փոխել են իրենց կյանքը:
- Օգնեք միսիոներներին տեսնել, թե ինչպես է Մորմոնի Գիրքը ուսուցանում միսիոներական դասերի վարդապետությունները: Օրինակ, եթե քննան

Նշումներ

Քավությունն է, խնդրեք միսիոներներին մի սյունակում գրել Մորմոնի Գրքում ուսուցանվող Քավության յուրաքանչյուր հիմնական տարրը, ինչպես նաև դրան վերաբերող վկայակոչումները: Այնուհետև թող երկրորդ սյունակում կողք-կողքի գրեն, թե ինչպես են այդ նույն տարրերն ուսուցանվում Աստվածաշնչում: Թող միսիոներները դատարկ թողնեն այն տարրերի տեղերը, որոնք բացակայում են կամ չեն ուսուցանվում Աստվածաշնչում: Միսիոներների համար ակնհայտ կդառնա, թե ինչպես է Մորմոնի Գիրքը հանդիսանում մեր վարդապետության պորտաքարը: Այս նույն վարժությունը կարելի է կատարել միսիոներների կողմից ուսուցանվող մյուս վարդապետությունների համար:

- Գտեք, թե որոնք են ձեր միսիայի մարդկանց անհանգստացնող հոգու հարցերը: Խնդրեք միսիոներներին Մորմոնի Գրքում գտնել դրանց պատասխանները:



# Ինչպե՞ս զարգացնեմ Քրիստոսանման հատկանիշներ

Նշումներ

**Մտածեք այս մասին**

- Ինչպե՞ս կարող եմ զարգացնել հատկանիշներ, որոնք ինձ կդարձնեն Հիսուս Քրիստոսի ավետարանի ավելի զորավոր և արդյունավետ ծառայող:
- Ինչպե՞ս կօգնեն ինձ Քրիստոսանման հատկանիշները, որպես միսիոներ իրականացնելու իմ նպատակը:
- Ո՞ր հատկանիշն է ինձ ամենաշատն անհրաժեշտ զարգացնել:

Իր մահկանացու ծառայության սկզբում Հիսուս Քրիստոսը քայլելով Գալիլեայի ծովի ափով կանչեց երկու ձկնորսների՝ Պետրոսին և Անդրեասին: «Իմ ետևից եկեք».- ասաց Նա,- «և ես ձեզ մարդկանց որսորդ կշինեմ»: (Մատթեոս Դ.19, տե՛ս նաև Մարկոս Ա.17) Տերը ձեզ ևս կանչել է Իր գործին և Նա հրավիրում է ձեզ հետևել Իրեն: Քրիստոսին հետևելու հրավերը՝ հրավեր է հետևել Նրա օրինակին և դառնալ Նրա նման:

«*Քարոզեք Իմ ավետարանը*» գրքի որոշ գլուխներ հրավիրում են ձեր ուշադրությունը նրա վրա, թե ինչ պետք է անեք որպես միսիոներ՝ ինչպե՞ս սովորեցնեք, ինչպե՞ս իմաստուն օգտագործեք ժամանակը: Ճիշտ ինչպես որ էական է, թե ինչ եք անում դուք, նույնքան կարևոր է, թե ով եք դուք:

Վերականգնված ավետարանը ձեզ հնարավորություն է տալիս դառնալ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի նման: Փրկիչը ցույց է տվել ուղին: Նա ցույց է տվել կատարյալ օրինակ և Նա պատվիրում է մեզ դառնալ ինչպես Ինքը (տե՛ս 3 Նեփի 27.27): Սովորեք Նրանից և ձգտեք մարմնավորել Նրա հատկանիշները ձեր կյանքում: Նրա Քավության զորությամբ, դուք կարող եք հասնել այդ նպատակին և առաջնորդել ուրիշներին ևս հասնել դրան:

Սուրբ գրքերը նկարագրում են Քրիստոսանման հատկանիշներ, որոնք կարևոր են ձեզ համար՝ վերջնականապես որպես միսիոներ զարգանալու համար և նաև ձեր ողջ կյանքի ընթացքի համար: Ուսումնասիրեք այս գլխում զետեղված սուրբ գրքերից հատվածները և որոնեք Քրիստոսանման հատկանիշների այլ օրինակներ, երբ սովորեք մյուս հատվածները:

Նշումներ

Քրիստոսանման հատկանիշները պարգևներ են Աստծուց: Դրանք գալիս են, երբ դուք արդար ձևով եք օգտագործում ձեր ազատ կամքը: Խնդրեք Երկնային Հորն օրհնել ձեզ այդ հատկանիշներով: Դուք չեք կարող զարգացնել դրանք առանց Նրա օգնության: Աստծուն գոհացնելու ցանկությամբ ընդունեք ձեր թուլությունները և հոժար եղեք ու ձգտեք կատարելագործվել:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ են ասում այս սուրբ գրությունները Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելու մասին**

3 Նեփի 12.48
Հովհաննես ԺԳ.1–16
Ա Պետրոս Բ.21
3 Նեփի 27.21, 27

**Ի՞նչ կապ կա ավետարանական առաջին սկզբունքների և Քրիստոսանման հատկանիշների միջև:**

Մորոնի 8.25–26

## Մտքեր այս գլուխն ուսումնասիրելու համար

Այս գլուխն ուսումնասիրելու համար կան բազմաթիվ մոտեցումներ: Փորձեք հետևյալ մտքերից մեկը:

- Երբ լրացնեք այս գլխի վերջում զետեղված «Աշխատանք հատկանիշների վերաբերյալ» բաժինը, նշեք այն հատկանիշը, որը ձեզ ամենաշատն է անհրաժեշտ կամ կցանկանայիք զարգացնել: Ուսումնասիրեք այդ հատկանիշի վերաբերյալ բաժինը և դրեք նպատակներ՝ այն զարգացնելու համար:
- Առանց սուրբ գրություններն ուսումնասիրելու, ընթերցեք ողջ գլուխը և որոշեք, թե որ հատականիշն եք ցանկանում ավելի մանրամասն ուսումնասիրել: Այնուհետև ուսումնասիրեք սուրբ գրքերի հիմնական հատվածները, որոնք առնչվում են այդ հատկանիշի հետ: Որոնեք լրացուցիչ սուրբ գրքերի հատվածներ, որոնք ընդգրկված չեն այս գլխում, բայց սովորեցնում են այդ հատկանիշի մասին: Այդ հատկանիշը զարգացնելու համար, ձեր աշխատանքային տետրում գրանցեք մտքեր:
- Նշեք մի հատկանիշ, որը դուք ցանկանում եք սովորել: Հետևեք «Զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ» վերնագրի տակ՝ գլխի վերջում զետեղված օրինակին:

## Հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ

Երբ դուք հավատք եք ունենում Քրիստոսի հանդեպ, դուք հավատում եք Նրան որպես Աստծո Որդու՝ Հոր Միածնի, մարմնում: Դուք ընդունում եք Նրան որպես ձեր Փրկիչ և Քավիչ և հետևում եք Նրա ուսմունքներին: Դուք հավատում եք, որ ձեր մեղքերը կարող են ներվել Նրա Քավության միջոցով: Նրա հանդեպ հավատք ունենալ նշանակում է ապավինել Նրան և վստահ լինել, որ Նա սիրում է ձեզ:



© 1989 Conceptions Unlimited Investments, Inc. Մի բազմացրեք:

Հավատքը մղում է գործի, ներառյալ ապաշխարության, հնազանդության և նվիրված ծառայության: Երբ դուք հավատք ունեք Հիսուս Քրիստոսի հանդեպ, դուք Տիրոջը բավականաչափ վստահում եք Նրա պատվիրանները պահելու համար, նույնիսկ, երբ դուք լիովին չեք հասկանում դրանք պահելու պատճառները: Դուք կատարում եք այն, ինչ Տերն է կամենում, որ դուք կատարեք: Դուք օգնում եք, որ բարին կատարվի ձեր սեփական կյանքում և ուրիշների

Նշումներ

կյանքում: Դուք կարողանում եք հրաշքներ գործել Տիրոջ կամքի համաձայն: Ձեր հավատքը կդրսևորվի ջանասիրությամբ և աշխատանքով:

Հավատքը զորության սկզբունք է: Աստված գործում է զորությամբ, բայց Նրա զորությունը սովորաբար գործադրվում է ի պատասխան հավատքի (տե՛ս Մորոնի 10.7): Նա գործում է համաձայն Իր զավակների հավատքի: Կասկածն ու վախը հակադիր են հավատքին:

Ձեր հավատքը կմեծանա` ջանասիրաբար սովորելով, աղոթելով, նվիրված ծառայելով և հնազանդ լինելով Սուրբ Հոգու հուշումներին և պատվիրաններին:

Ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ աճում է, երբ դուք ավելի լավ եք ծանոթանում Նրա և Նրա ուսմունքների հետ: Երբ դուք հետազոտում եք սուրբ գրքերը և ուսումնասիրում դրանք, դուք սովորում եք Նրա ուղիների, բոլոր մարդկանց հանդեպ Նրա սիրո և Նրա պատվիրանների մասին:

Հավատքը ներառում է վստահություն Սուրբ Հոգու առաքելության զորության հանդեպ: Հավատքով եք դուք ստանում ձեր աղոթքների պատասխանները և Տիրոջ գործում առաջնորդվելու անձնական ոգեշնչումը:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է հավատքը:**

Ալմա 32.21
Եթեր 12.6
Եբրայեցիս ԺԱ.1, տես տողատակի ծանոթություն բ
Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Հավատք»
*Հավատքին հավատարիմ*, «Հավատք» 52–54

**Ինչպե՞ս ենք ձեռք բերում հավատք և ի՞նչ կարող ենք անել հավատքի միջոցով:**

2Նեփի 25.29
2 Նեփի 26.13
Մոսիա 4.6–12
Ալմա 32
Հելաման 15.7–8
Եթեր 12.7–22
Մորոնի 7.33
Հռովմայեցիս Ժ.17
Եբրայեցիս ԺԱ

**Ի՞նչ օրհնություններ են գալիս հավատքի միջոցով:**

Մոսիա 3.17
Մոսիա 5.1–15
Հելաման 5.9–12
Հովհաննես ԺԴ. 6

## Հույս

Հույսը կայուն վստահություն է, որ Տերը կիրագործի ձեզ տված Իր խոստումները: Այն դրսևորվում է վստահությամբ, լավատեսությամբ, խանդավառությամբ և համբերատար հաստատակամությամբ: Դա հավատալն է և սպասելը, որ ինչ-որ բան տեղի կունենա: Երբ հույս ունեք, դուք անցնում եք փորձությունների ու դժվարությունների միջով վստահությամբ և համոզվածությամբ, որ բոլոր բաները համատեղ կգործեն ձեր բարօրության համար: Հույսն օգնում է հաղթել հուսահատությանը: Սուրբ գրքերը հաճախ Հիսուս Քրիստոսի հանդեպ հույսը նկարագրում են որպես համոզվածություն, որ դուք կժառանգեք հավերժական կյանք սելեստիալ արքայությունում:

*«Օրհնված լինելով հույսով, եկեք, որպես աշակերտներ հասնենք բոլորին, ովքեր ինչ-որ պատճառներով «շարժվել են ավետարանի հույսիցը» (Կողոսացիս Ա.23): Եկեք հասնենք` բարձրացնելու հուսահատությունից կախ ընկած ձեռքերը»:*

ԵՐԵՑ ՆԻԼ Ա. ՄԱՔՍՎԵԼ
"BRIGHTNESS OF HOPE," *ENSIGN*, NOV. 1994, 36

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստը սովորեցրել է`

«Հույսը մեր հոգու խարիսխն է. . .

Հույսն Աստծո խոստումների հանդեպ վստահությունն է, հավատք, որ եթե մենք գործենք այժմ, ցանկալի օրհնությունները կիրականանան ապագայում. . .

Նշումներ

Մեր հույսի անդավաճան աղբյուրն այն է, որ մենք Աստծո որդիներն ու դուստրերն ենք, և որ Նրա Որդին՝ Տեր Հիսուս Քրիստոսը փրկեց մեզ մահից»: (“Hope, an Anchor of the Soul,” *Ensign*, Nov. 1999, 59–60)

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է հույսը և ինչի՞ համար պետք է մենք հույս ունենանք:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 31.20 | Մորոնի 7.40–48 | Հռովմայեցիս Ը. 24–25 |
| Ալմա 58.10–11 | ՎևՈւ 59.23 | Եբրայեցիս Զ.10–20 |
| Եթեր 12.4, 32 | ՎևՈւ 138.14 | Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Հույս» |

## Գթություն և սեր



© 2001 Simon Dewey. Մի պատճենեք:

Մի մարդ մի անգամ հարցրեց Հիսուսին. «Ո՞ր պատվիրանքն է մեծ օրենքումը»: Հիսուսն էլ ասաց նրան. Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը: Սա է առաջին և մեծ պատվիրանքը: Երկրորդն էլ սրան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պես»: (Մատթեոս ԻԲ.36–39)

Գթությունը «Քրիստոսի մաքուր սերն է»: (Մորոնի 7.47) Այն ներառում է Իր բոլոր զավակների հանդեպ Աստծո հավերժական սերը: Մենք պետք է ձգտենք զարգացնել այդպիսի սեր: Երբ դուք լցված եք գթությամբ, հնազանդվում եք Աստծո պատվիրաններին և անում եք ինչ կարող եք, ծառայելու ուրիշներին և օգնելու նրանց ստանալ վերականգնված ավետարանը:

Գթությունը Աստծո պարգևն է: Մարգարե Մորմոնն ասել է, որ մենք պետք է «աղոթենք Հորը, սրտի ողջ կորովով, որպեսզի [մենք] կարողանանք լցված լինել այդ սիրով» (Մորոնի 7.48): Երբ դուք հետևեք այդ խորհրդին և ձգտեք կատարել արդար գործեր, ձեր սերը բոլոր մարդկանց հանդեպ կմեծանա, հատկապես նրանց հանդեպ, որոնց մեջ դուք գործում եք: Դուք կսկսեք զգալ անկեղծ մտահոգություն ուրիշ մարդկանց հավերժական բարօրության և երջանկության համար: Դուք կտեսնեք նրանց որպես Երկնային Հոր նման դառնալու ներուժով Աստծո զավակներ, և դուք կաշխատեք նրանց համար: Դուք կխուսափեք այնպիսի բացասական զգացումներից ինչպիսիք են՝ բարկությունը, նախանձը, տենչանքը կամ ցանկասիրությունը: Դուք կխուսափեք ուրիշներին դատելուց, նրանց քննադատելուց կամ նրանց մասին բացասական բաներ ասելուց: Դուք կփորձեք հասկանալ նրանց և նրանց տեսակետները: Դուք համբերատար կլինեք նրանց հետ և կփորձեք օգնել նրանց, երբ նրանք մաքառումների մեջ են կամ հուսահատված են: Հավատքի պես գթությունը մղում է գործի: Դուք գթություն կզարգացնեք, երբ առիթներ որոնեք ձեզ նվիրաբերելով ծառայել ուրիշներին:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է գթությունը:**

| | | |
|---|---|---|
| Մորոնի 7.45–48 | Ա Կորնթացիս ԺԳ | Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Գթություն» |

Նշումներ

**Հիսուս Քրիստոսն ինչպե՞ս ցույց տվեց գթություն:**

1 Նեփի 19.9
Եթեր 12. 33–34
Ղուկաս Է. 12–15
Ալմա 7.11–13

**Ի՞նչ են սովորեցնում այս հատվածները գթության մասին:**

2 Նեփի 26.30
Ալմա 7.24
Ա Տիմոթեոս Դ.12
Մոսիա 2.17
Եթեր 12.28
Ա Պետրոս Դ.8, տես տողատակի ծանոթություն *ա*
Մոսիա 28.3
ՎևՈւ 88.125

## Առաքինություն

Առաքինությունը սկիզբ է առնում ձեր ամենախորը մտքերից և ցանկություններից: Այն մտքի և վարքի մի ձև է, որը հիմնված է բարձր բարոյական չափանիշների վրա: Քանի որ Սուրբ Հոգին չի բնակվում անմաքուր տաճարներում, առաքինությունը նախապայման է Հոգու առաջնորդությունը ստանալու համար: Այն ինչ դուք նախընտրում եք մտածել և անել, երբ միայնակ եք և գիտեք, որ ոչ ոք ձեզ չի տեսնում, ճշգրիտ չափանիշ է ձեր առաքինության համար:

Առաքինի մարդիկ մաքուր են և հոգով անարատ: Նրանք կենտրոնանում են արդար, վեհացնող մտքերի վրա և դուրս են մղում իրենց գլխից անարժան մտքերը, որոնք տանում են դեպի անպատշաճ գործերի: Նրանք հնազանդվում են Աստծո պատվիրաններին և հետևում են Եկեղեցու առաջնորդների խորհրդին: Նրանք աղոթում են ուժի համար՝ դիմադրելու գայթակղությանը և անելու այն, ինչ ճիշտ է: Նրանք արագ ապաշխարում են բոլոր մեղքերից և սխալներից: Նրանք ապրում են տաճարային երաշխավորագրին արժանի կյանքով:

Ձեր միտքը նման է թատրոնի բեմի: Այնուամենայնիվ ձեր մտքի թատրոնում, յուրաքանչյուր անգամ բեմի վրա միայն մեկ դերասան կարող է լինել: Եթե բեմը թողնվում է դատարկ, հաճախ բեմ են մտնում, խավար և մեղավոր մտքեր ՝ գայթակղելու համար: Բայց այդ մտքերը զորություն չունեն, եթե ձեր մտքի բեմը զբաղված է առողջ մտքերով, ինչպես օրինակ անգիր սովորած օրհներգը կամ սուրբ գրքի հատվածը, որը դուք կարող եք հիշել, գայթակղության պահին: Վերահսկելով ձեր մտքի բեմը, դուք կարող եք հաջողությամբ դիմադրել գայթակղությանը տեղի տալու համառ մղումներին և անձնատուր չլինել մեղքին: Դուք կարող եք դառնալ մաքուր և առաքինի:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է նշանակում լինել առաքինի:**

ՎևՈւ 4.6
ՎևՈւ 46.33
Բ Պետրոս Ա.3–8
ՎևՈւ 25.2
ՎևՈւ 121. 45–46
Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Առաքինություն»
ՎևՈւ 38.24
Հավատո Հանգանակներ 1.3

## Գիտելիք

Տերը պատվիրել է, որ ձգտենք ուսման, ինչպես սովորելով, այնպես էլ հավատքով»: (տե՛ս ՎևՈւ 88.118) Նա նաև նախազգուշացրել է, որ մարդու համար անհնարին է փրկվել տգիտության մեջ: (տե՛ս ՎևՈւ 131.6) Ձգտեք գիտելիքի, հատկապես հոգևոր գիտելիքի: Ուսումնասիրեք սուրբ գրքերն ամեն օր և ուսումնասիրեք նաև ապրող մարգարեների խոսքերը: Ուսման և աղոթքի միջոցով օգնություն որոնեք ձեր որոշակի հարցերի, դժվարությունների և հնարավորությունների համար: Հատուկ ուշադրություն դարձրեք սուրբ գրքերի այն հատվածների վրա, որոնք կարող եք օգտագործել, երբ սովորեցնում եք և երբ պատասխանում եք վերականգնված ավետարանին վերաբերող հարցերին:

Նշումներ

Մտածեք, թե ինչպես կարող եք կիրառել ավետարանական սկզբունքները ձեր կյանքում: Եթե սովորեք ջանասիրաբար, աղոթքով և անկեղծ միտումով, Սուրբ Հոգին կլուսավորի ձեր միտքը, կսովորեցնի ձեզ և կօգնի ձեզ հասկանալ սուրբ գրքերի իմաստը և ապրող մարգարեների ուսմունքները: Դուք կարող եք ձեռք բերել գիտելիք նաև նայելով և լսելով ուրիշներին, հատկապես Եկեղեցու առաջնորդներին: Նեփիի նման, դուք կարող եք ասել.«Հոգիս հրճվում է սուրբ գրքերով և սիրտս խորհում է դրանք. . . Ահա, հոգիս հրճվում է Տիրոջ բաներով. և սիրտս շարունակ խորհում է այն բաների վրա, որոնք տեսել եմ ու լսել» (2 Նեփի 4.15–16)

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ինչպե՞ս է օգնում գիտելիքը Տիրոջ գործը կատարելիս:**

| | |
|---|---|
| Ալմա 17.2–3 | ՎևՈւ 88.77–80 |

**Ինչպե՞ս կարող եք գիտելիք ձեռք բերել:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 32.1–52 | ՎևՈւ 42.61 | ՎևՈւ 88.118 |
| Մորոնի 10.5 | ՎևՈւ 76.5–10 | Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Գիտելիք» |

## Համբերություն

Համբերությունը, առանց զայրանալու, հուսահատվելու կամ տագնապելու, արգելքի, նեղության, ընդդիմության կամ տառապանքի դիմանալու ունակությունն է: Դա Աստծո կամքն անելու և Նրա ժամանակացույցն ընդունելու մեր ունակությունն է: Երբ դուք համբերատար եք, դիմանում եք փորձություններին և կարողանում եք հանգիստ և հույսով դիմակայել ձախորդությանը: Համբերությունը կապված է հույսի և հավատքի հետ: Դուք պետք է սպասեք Տիրոջ կողմից խոստացված օրհնությունների իրականացմանը:

Ձեզ անհրաժեշտ է համբերություն ձեր ամենօրյա փորձառություններում և հարաբերություններում, հատկապես ձեր զուգընկերոջ հետ: Դուք պետք է համբերատար լինեք բոլոր մարդկանց, ներառյալ ինքներդ ձեզ հետ, երբ դուք հաղթահարում եք ձեր սխալներն ու թուլությունները:

*«Կյանքը լի է դժվարություններով, որոնց մի մասը թեթև, իսկ մյուսներն ավելի լուրջ բնույթ են կրում: Թվում է չվերջացող դժվարությունների մի անսպառ պաշար գոյություն ունի բոլորի համար: Մեր խնդիրը նրանում է, որ հաճախ ակնկալում ենք այսպիսի դժվարությունների համար ակնթարթային լուծումներ, մոռանալով որ հաճախ պահանջվում է համբերության երկնային հատկանիշը»:*

– ՆԱԽԱԳԱՀ ԹՈՄԱՍ Ս. ՄՈՆՍՈՆ
"PATIENCE—A HEAVENLY VIRTUE," *ENSIGN,* NOV. 1995, 59

## Վարժություն. անհատական ուսումնասիրություն

- Ուսումնասիրեք Մոսիա 28.1–9: Որո՞նք էին Մոսիայի որդիների ցանկությունները:
- Ինչ խորհուրդ տվեց Տերը այդ միսիոներներին: (Տե՛ս Ալմա 17.10–11 և 26.27)
- Ինչպիսի՞ն էին նրանց համբերության և ջանասիրության արդյունքներից մի քանիսը (Տե՛ս Ալմա 26):
- Գրեք պատասխանները ձեր աշխատանքային տետրում:

Նշումներ

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ինչո՞ւ է կարևոր համբերությունը: Ինչպե՞ս է կապված համբերությունը հավատքի հետ:**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 23.21 | Ալմա 34.40–41 | Բ Կորնթացիս Զ.1–10 |
| Մոսիա 24.9–16 | ՎնՈւ 101.38 | Հակոբոս Ե.10–11 |
| Ալմա 31.31 | Հռովմայեցիս Ե.3–5 | Սաղմոս ԽԶ.10 |
| Ալմա 32.41–43 | Հռովմայեցիս Ը.24–25 | Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Համբերություն» |

## Համեստություն



Համեստությունը Տիրոջ կամքին ենթարկվելու և ամեն ինչի իրագործման համար Տիրոջը փառք տալու պատրաստակամությունն է: Այն ներառում է երախտագիտություն Նրա օրհնությունների համար և Նրա աստվածային օգնության մշտական անհրաժեշտության գիտակցում: Համեստությունը թուլության նշան չէ, այն հոգևոր ուժի նշան է: Երբ դուք խոնարհաբար վստահում եք Նրան և ընդունում Նրա զորությունն ու ողորմածությունը, դուք կարող եք համոզված լինել, որ Նրա պատվիրանները ձեր բարօրության համար են: Դուք վստահ եք, որ կարող եք անել այն, ինչ Տերը կպահանջի ձեզանից, եթե դուք Նրան ապավինեք: Դուք պատրաստ եք նաև վստահել Նրա ընտրյալ ծառաներին և հետևել նրանց խորհրդին: Համեստությունը կօգնի ձեզ, երբ դուք ձգտեք հնազանդ լինել, շատ աշխատել և անձնվիրաբար ծառայել:

Համեստության հակադիրը հպարտությունն է, որը դատապարտվում է սուրբ գրքերում: Հպարտ լինել նշանակում է ավելի շատ վստահությունը դնել ինքներդ ձեզ վրա, քան Աստծո կամ Նրա ծառաների: Դա նաև նշանակում է աշխարհի բաները վեր դնել Աստծո բաներից: Հպարտ մարդիկ Աստծուն փառք տալու փոխարեն իրենց են վերագրում մեծարանքը: Հպարտությունը մրցակցական է, նրանք ովքեր հպարտ են, ձգտում են ունենալ ավելին և ենթադրում են, որ իրենք ավելի լավն են, քան մյուս մարդիկ: Հպարտությունը սովորաբար առաջացնում է բարկության և ատելության զգացումներ և այն մեծ գայթակղության քար է:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է նշանակում խոնարհ լինել:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 9.28–29 | Ալմա 5.26–29 | Մատթեոս ԻԶ.39 |
| Մոսիա 4.11–12 | Ալմա 26.12 | Սուրբ Գրքերի Ուղեցույց «Խոնարհ, Խոնարհություն» |

**Ի՞նչ օրհնություններ ենք ստանում, երբ խոնարհեցնում ենք ձեզ:**

| | | |
|---|---|---|
| Ալմա 32.1–16 | ՎնՈւ 67.10 | Մատթեոս ԻԳ.12 |
| Եթեր 12.27 | ՎնՈւ 112.10 | |
| ՎնՈւ 12.8 | ՎնՈւ 136.32–33 | |

**Ինչպե՞ս կարող ենք ճանաչել հպարտությունը ձեր մեջ:**

| | | |
|---|---|---|
| 1 Նեփի 15.7–11 | Բ Տիմոթեոս Գ.1–4 | Առակաց ԺԵ.10 |
| 1 Նեփի 16.1–3 | Առակաց ԺԳ.10 | Առակաց ԻԸ.25 |

Նշումներ

## Ջանասիրություն

Ջանասիրությունը Տիրոջ գործն անելիս հաստատուն, հետևողական, անկեղծ և եռանդուն ջանքն է: Տերն ակնկալում է, որ դուք կաշխատեք ջանասիրաբար, մեծ ճիգ գործադրելով և հոգածություն ցուցաբերելով: Ջանասեր միսիոներն արդյունավետ ձևով և հմտորեն է աշխատում: Միսիոներական աշխատանքում ջանասիրություն ցուցաբերելը Տիրոջ և Նրա գործի նկատմամբ ձեր սիրո արտահայտությունն է: Երբ ջանասեր եք, ձեր աշխատանքում ուրախություն և բավարարվածություն եք գտնում:

Շատ բարի գործեր արեք ձեր ազատ կամքով: (տե՛ս ՎևՈւ 58.27) Մի սպասեք, որ ձեր ղեկավարներն ասեն ձեզ ինչ անել: Շարունակեք մինչև անեք այն ամենը, ինչ կարող եք, նույնիսկ, երբ դուք հոգնած եք: Կենտրոնացեք ամենակարևոր բաների վրա և խուսափեք ժամանակ վատնելուց: Աղոթեք առաջնորդության և ուժի համար: Ծրագրեք կանոնավորապես և արդյունավետորեն: Խուսափեք այն ամենից, ինչը շեղում է ձեզ ձեր մտքերից ու գործերից:

*«Ես հաճախ եմ ասել, որ միսիոներական աշխատանքի մեծագույն գաղտնիքներից մեկը, աշխատանքն է: Եթե միսիոներն աշխատում է, նա կստանա Հոգին, եթե նա ստանա Հոգին, նա կսովորեցնի Հոգով, և եթե նա սովորեցնի Հոգով, նա կազդի մարդկանց սրտերի վրա և նա երջանիկ կլինի: Չի լինի տան կարոտ, ոչ էլ անհանգստություն ընտանիքների համար, քանի որ ողջ ժամանակը, տաղանդները և հետաքրքրությունները կենտրոնացած են ծառայության գործի վրա: Աշխատանք, աշխատանք, աշխատանք: Չկա փոխարինող ոչ մի ուրիշ բան, հատկապես միսիոներական աշխատանքում»:*

– ՆԱԽԱԳԱՀ ԷԶՐԱ ԹԱՖԹ ԲԵՆՍՈՆ
*THE TEACHINGS OF EZRA TAFT BENSON* (1988), 200

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչ է նշանակում լինել ջանասեր:**

Մորոնի 9.6
ՎևՈւ 10.4
ՎևՈւ 107.99–100
Սուրբ Գրքերի Ուղեցույց «Ջանասիրություն»

**Ինչո՞ւ է Տերն ակնկալում, որ դուք ջանասեր լինեք:**

ՎևՈւ 75.2–5
ՎևՈւ 123. 12–14
ՎևՈւ 127.4
ՎևՈւ 130. 20–21

**Ինչպե՞ս է ջանասիրությունը կապված ազատ կամքի հետ:**

Մոսիա 4. 26–27
ՎևՈւ 58.26–29

Նշումներ

## Հնազանդություն

Որպես միսիոներ, ձեզանից ակնկալվում է, որ դուք պատրաստակամորեն կպահեք պատվիրանները, հնազանդվելով միսիոներական կանոններին և հետևելով ձեր ղեկավարների խորհրդին: Հնազանդությունը երկնքի առաջին օրենքն է: Այն հավատքի գործ է: Ձեզանից երբեմն կպահանջվի կատարել գործեր, որոնք դուք լիովին չեք հասկանում: Երբ հնազանդվում եք, դուք մեծացնում եք հավատքը, գիտելիքը, իմաստությունը, վկայությունը, պաշտպանվածությունը և ազատությունը: Ձգտեք հնազանդ լինել Տիրոջը, ապրող մարգարեին և ձեր միսիայի նախագահին:

> *«Ամենօրյա հնազանդության մեջ մտնող կարգապահությունը, մաքուր ապրելակերպն ու առողջ կենսաձևը պաշտպանական զրահ և ապահովություն են ստեղծում ձեր շուրջը այն գայթակղություններից, որոնք սպառնում են ձեզ, երբ դուք առաջ եք շարժվում մահկանացու կյանքի միջով»:*
>
> – ԵՐԵՑ Լ. ԹՈՄ ՓԵՐՐ
> “CALLED TO SERVE,” *ENSIGN,* MAY 1991, 39

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչ է նշանակում հնազանդ լինել:**

1 Նեփի 2.3
Մոսիա 5.8
Մոսիա 15.7
ՎևՈւ 82.8–10
Մատթեոս է.24.–27
Հովհաննես է.17
Հովհաննես ԺԴ.15
Սուրբ Գրքերի Ուղեցույց «Հնազանդություն, Հնազանդ, Հնազանդվել»

**Ի՞նչ կարող ենք սովորել հնազանդության մասին սուրբ գրքերի այս հատվածներից:**

1 Նեփի 3.7
ՎևՈւ 105.6
Դ Թագավորաց Ե.1–14

**Ինչու՞ էին Հելամանի բանակի երիտասարդ զինվորները անվերապահորեն հնազանդվում: Ինչպե՞ս նրանք օրհնվեցին:**

Ալմա 56.45–48
Ալմա 57.21–27

## Զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ

Երբ սովորեք և ձգտեք զարգացնել այս գլխում նկարագրված հատկանիշները և սուրբ գրքերում գտնվող այլ հատկանիշներ, հետևյալ օրինակը կարող է օգտակար լինել.

- Նշեք հատկանիշը, որը դուք կամենում եք զարգացնել:
- Գրեք այդ հատկանիշի սահմանումը և նկարագրությունը:
- Սովորելիս գրի առեք հարցեր պատասխանելու համար:
- Գրեք և խորապես ուսումնասիրեք սուրբ գրքերի այն հատվածները, որոնք ուսուցանում են այդ հատկանիշի մասին:
- Գրի առեք ձեր զգացումներն ու տպավորությունները:
- Դրեք նպատակներ և կազմեք ծրագրեր այդ հատկանիշը ձեր կյանքում կիրառելու համար:
- Աղոթեք Տիրոջը, որ օգնի ձեզ այդ հատկանիշը զարգացնելու համար:
- Յուրաքանչյուր հատականիշ զարգացնելիս պարբերաբար գնահատեք ձեր առաջընթացը:

Նշումներ

## Վարժություն. անհատական ուսումնասիրություն

Ընտրեք մի հատկանիշ այս գլխից կամ սուրբ գրքերից: Հետևեք վերևում գտնվող օրինակին, որպեսզի ավելի լավ հասկանաք և այդ հատականիշը զարգացնելու ծրագիր կազմեք:




Նայեք անվանապիտակի պատկերին: Ինչո՞վ է ձեր անվանապիտակը տարբերվում որևէ ընկերության ծառայողի անվանապիտակից: Հիշե՛ք, որ ամենաաչքի ընկնող մասերը դա ձեր անունն է և Փրկչի անունը: Ինչպե՞ս կարող եք համոզել, որ դուք ներկայացնում եք Փրկչին, որպես Նրա աշակերտներից մեկը: Ինչու՞ է մարդկանց համար կարևոր ձեր անունը դրական ձևով կապել Փրկչի անվան հետ: Գրեք ձեր մտքերը ձեր աշխատանքային տետրում:

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Որո՞նք են սուրբ գրքերում նշված հատկանիշներից մի քանիսը:**

Մոսիա 3.19
Ալմա 7.23
ՎևՈւ 4
ՎևՈւ 121.41–45
Հավատո Հանգանակներ 1.13
Փիլիպպեցիս Դ.8
Բ Պետրոս Ա.5–8

## Հիշեք հետևյալը.

- Դուք պետք է *լինեք* Քրիստոսանման միսիոներ և ոչ թե ուղղակի միսիոներական գործեր *անեք*:
- Քրիստոսին նմանվելու նպատակով սովորելը, ողջ կյանքի ընթացքում հետապնդվող նպատակ է:
- Դուք հետևում եք Քրիստոսի օրինակին, զարգացնում եք Նրա հատկանիշները, ամեն անգամ կատարելով մի գործ և ընդունելով մի որոշում:
- Քրիստոսանման դառնալու համար փոխվելը պահանջում է հավատք գործադրել, ապաշխարել, ուխտերը պահել, առատորեն ստանալ Սուրբ Հոգին և համբերել մինչև վերջ:

## Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

Նշումներ

### Անհատական ուսումնասիրություն

- Պատրաստեք հինգ րոպեանոց մի ելույթ այս գլխում քննարկվող հատկանիշներից մեկի վերաբերյալ:
- Օգտագործելով Սուրբ Գրքերի Ուղեցույցը, որոնեք ուղիներ, որոնցով Փրկիչն այս գրքում նկարագրվող հատկանիշների օրինակ է հանդիսացել: Գրի առեք այն, ինչ սովորում եք, ձեր աշխատանքային տետրում:
- Պարբերաբար լրացրեք գլխի վերջում զետեղված «Աշխատանք հատկանիշի վերաբերյալ» բաժինը:
- Աշեք այս գլխի մի հատկանիշ: Հարցրեք ինքներդ ձեզ՝
  - Ինչպե՞ս կարող եմ զարգացնել այս հատկանիշը:
  - Ի՞նչ պետք է փոխվի իմ սրտում, մտքում և գործերում այս հատկանիշը զարգացնելու համար:
  - Ուխտերը պահելը ինչպե՞ս կօգնի ինձ զարգացնել այս հատկանիշը:
  - Այս հատկանիշի զարգացումը ինչպես կօգնի ինձ արժանի լինել Սուրբ Հոգուն և դառնալ Հիսուս Քրիստոսի ավետարանի ավելի զորավոր ծառայող:
- Գտեք սուրբ գրքերի տղամարդկանց և կանանց կյանքում Քրիստոսանման հատկանիշների օրինակներ: Գրի առեք ձեր տպավորությունները ձեր աշխատանքային տետրում:

### Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Միսիոներական գրադարանում ուսումնասիրեք Քրիստոսանման հատկանիշների վերաբերյալ հղագրումները:
- Քննարկեք տարբեր հատկանիշների միջև գոյություն ունեցող կապը: Օրինակ՝
  - Ինչպե՞ս է կապված հավատքը ջանասիրության հետ:
  - Ինչպե՞ս են կապված համեստությունն ու սերը միմյանց հետ:
  - Ինչպե՞ս է գիտելիքը ամրապնդում համբերությունը:

### Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Շրջանի ժողովից կամ տարածքի համաժողովից մի քանի օր առաջ, խնդրեք յուրաքանչյուր միսիոների ընտրել այս գլխում գտնվող կամ սուրբ գրքերից վերցված հատկանիշներից մեկը և պատրաստել հինգ րոպեանոց ելույթ այդ հատկանիշի վերաբերյալ, ներառյալ սուրբ գրքերը, որոնք օգնել են իրեն:

  Ժողովի ընթացքում ժամանակ հատկացրեք մի քանի միսիոներների կիսվելու իրենց ելույթներով:

- Բաժանեք միսիոներներին երեք խմբի և նրանց տվեք հետևյալ հանձնարարությունը՝

  *Խումբ 1*՝ Կարդալ 1 Նեփի17.7–16 և պատասխանել հետևյալ հարցերին՝
  - Ինչպե՞ս Նեփին գործադրեց իր հավատքը:
  - Ի՞նչ արեց Նեփին, որը Քրիստոսանման էր:
  - Ի՞նչ խոստումներ տվեց Տերը Նեփիին, եթե նա հավատարիմ լիներ և պահեր պատվիրանները:
  - Ինչպե՞ս է այս պատմությունն առնչվում միսիոներական աշխատանքի հետ:

Նշումներ

*Խումբ 2*՝ Կարդացեք Հակոբ 7.1–15 և պատասխանեք հետևյալ հարցերին՝

– Ինչո՞ւ էր Հակոբի հավատքը բավականաչափ ուժեղ դիմադրելու Սերեմի հարձակմանը:
– Ինչպե՞ս գործադրեց Հակոբն իր հավատքը, երբ նա խոսում էր Սերեմի հետ:
– Ինչո՞վ էր Հակոբի գործողությունները Քրիստոսանման:
– Ի՞նչ կարող ենք անել Հակոբի հավատքի նման հավատք զարգացնելու համար:

*Խումբ 3*՝ Կարդացեք Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.8–18 և պատասխանեք հետևյալ հարցերին՝

– Ինչպե՞ս էր Ջոզեֆ Սմիթը հավատք գործադրում Հիսուս Քրիստոսի հանդեպ:
– Ինչպե՞ս էր փորձվում նրա հավատքը:
– Ի՞նչ արեց նա, որը Քրիստոսանման էր:
– Ի՞նչ կարող ենք անել հետևելու Ջոզեֆ Սմիթի օրինակին:

Երբ խմբերը կավարտեն, միսիոներներին հավաքեք միասին և խնդրեք նրանց կիսվել իրենց քննարկածի վերաբերյալ:

- Կիսվեք ձեր փորձառությամբ, թե երբ եք դուք օրհնվել կամ ոգեշնչվել մեկ ուրիշ մարդու հավատքի շնորհիվ:

- Միսիոներներին հանձնարարեք նայել «Աշխատանք հատկանիշի վերաբերյալ» բաժինը: Յուրաքանչյուր միսիոների տվեք թուղթ, որի վրա նա պետք է գրի իր պատասխանները:

  Երբ լրացնեն վարժությունների էջը, նրանց առաջարկեք դնել անձնական նպատակներ:

  Խնդրեք միսիոներներից մի քանիսին կիսվել իրենց այն ամենով, ինչ սովորել են և զգացել, երբ նրանք լրացնում էին վարժությունների էջը:

  Կիսվեք Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելու կարևորության վերաբերյալ ձեր վկայությամբ:

## Միսիայի Նախագահ

- Խնդրեք միսիոներներին կարդալ Նոր Կտակարանի չորս ավետարաններից մեկը կամ 3 Նեփի 11–28: Հանձնարարեք նրանց ընդգծել, թե ինչ արեց Փրկիչը, որը նրանք նույնպես կարող են անել:

- Օգտագործեք նպատակներ դնելը և ծրագրելը, որպեսզի միսիոներներին սովորեցնեք ջանասիրության մասին: Ցույց տվեք, թե ինչպես է ջանասիրաբար մարդկանց վրա կենտրոնանալը սիրո արտահայտություն դառնում:

- Հարցազրույցների ժամանակ խնդրեք միսիոներներին խոսել մի հատկանիշի վերաբերյալ, որը նրանք փորձում են զարգացնել:

- Տարածքային համաժողովում, հրավիրեք միսիոներներին պատմել իրենց զուգընկերների Քրիստոսանման հատկանիշների մասին, որոնցով նրանք հիանում են:

# ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուշադիր կարդացեք ներքևի յուրաքանչյուր դրույթը: Որոշեք թե որքանով է այդ դրույթը ճիշտ ձեզ համար և ընտրեք պատասխանների շարքից ամենահարմար պատասխանը: Գրեք յուրաքանչյուր կետի պատասխանը ձեր աշխատանքային տետրում: Հոգևոր աճը աստիճանական պրոցես է և ոչ ոք կատարյալ չէ, այսպիսով դուք հնարավոր է որոշ կետերում ավելի լավ գնահատական տաք ձեզ, քան մյուսներում:

Պատասխանների շարք 1= երբեք 2= երբեմն 3= հաճախ 4= գրեթե միշտ 5 =միշտ

## Հավատք

____ 1. Ես հավատում եմ Քրիստոսին և ընդունում եմ Նրան որպես իմ Փրկիչ: (2 Նեփի 25.29)

____ 2. Ես վստահ եմ զգում, որ Աստված սիրում է ինձ: (1 Նեփի 11.17)

____ 3. Ես բավականաչափ վստահում եմ Փրկչին, որպեսզի ընդունեմ Նրա կամքը և անեմ այն, ինչ որ Նա կխնդրի: (1 Նեփի 3.7)

____ 4. Ես հաստատ հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով կարող եմ ներվել բոլոր իմ մեղքերը: (Ենովս 1.5–8)

____ 5. Ես բավականաչափ հավատք ունեմ Քրիստոսի հանդեպ իմ աղոթքների պատասխանները ստանալու համար: (Մոսիա 27.14)

____ 6. Ես օրվա ընթացքում մտածում եմ Փրկչի մասին և հիշում, թե Նա ինչ է արել ինձ համար: (ՎևՈւ 20.77, 79)

____ 7. Ես ունեմ անհրաժեշտ հավատք օգնելու, որ լավ բաներ իրականանան իմ կամ ուրիշների կյանքում: (Եթեր 12.12)

____ 8. Ես Սուրբ Հոգու զորությամբ գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: (Մորոնի 10.3–5)

____ 9. Ես ունեմ բավականաչափ հավատք Քրիստոսի հանդեպ՝ կատարելու այն ամենը, ինչ Նա ցանկանում է որ անեմ, եթե անհրաժեշտ է, նույնիսկ, հրաշքներ: (Մորոնի 7.33)

## Հույս

____ 10. Իմ ամենամեծ նպատակներից մեկը Աստծո սելեստիալ արքայությունում հավերժական կյանք ժառանգելն է: (Մորոնի 7.41)

____ 11. Ես վստահ եմ, որ կունենամ երջանիկ և հաջող միսիա: (ՎևՈւ 31.3–5)

____ 12. Ես խաղաղություն ունեմ և լավատես եմ ապագայի հանդեպ: (ՎևՈւ 59.23)

____ 13. Ես հաստատ հավատում եմ, որ մի օր ես կբնակվեմ Աստծո հետ և կդառնամ Նրա նման: (Եթեր 12.4)

## Գթություն և սեր

____ 14. Ես անկեղծ ցանկություն ունեմ, որ մարդիկ հավերժական բարօրություն և երջանկություն ունենան: (Մոսիա 28.3)

____ 15. Երբ ես աղոթում եմ, խնդրում եմ գթություն՝ Քրիստոսի մաքուր սերը: (Մորոնի 7.47)

____ 16. Ես փորձում եմ հասկանալ ուրիշների զգացմունքները և տեսնել նրանց տեսակետները: (Հուդա Ա.22)

____ 17. Ես ներում եմ ուրիշներին, ովքեր վիրավորել և չարիք են պատճառել ինձ: (Եփեսացիս Դ.32)

____ 18. Փորձեք օգնել ուրիշներին, երբ նրանք մաքառումների մեջ են կամ հուսահատված են: (Մոսիա 18.9)

____ 19. Հարմար առիթի դեպքում ես ասում եմ ուրիշներին, որ ես սիրում եմ նրանց և մտահոգվում եմ նրանց համար: (Ղուկաս Է.12–15)

____ 20. Ես առիթ եմ որոնում ծառայելու մարդկանց: (Մոսիա 2.17)

____ 21. Ես դրական բաներ եմ խոսում ուրիշների մասին: (ՎևՈւ 42.27)

____ 22. Ես բարի եմ և համբերատար ուրիշների հետ, նույնիսկ երբ նրանց հետ դժվար է ընդհանուր լեզու գտնել: (Մորոնի 7.45)

____ 23. Ես ուրախանում եմ ուրիշների նվաճումներով: (Ալմա 17.2–4)

## Առաքինություն

____ 24. Ես սրտով մաքուր եմ ու անարատ: (Սաղմոս ԻԴ. 3–4)

____ 25. Ես ցանկություն չունեմ չարիք անելու, այլ ցանկանում եմ միայն բարիք գործել: (Մոսիա 5.2)

____ 26. Ես վստահելի եմ: Ես անում եմ այն, ինչ ասում եմ, որ կանեմ: (Ալմա 53.20)

____ 27. Ես կենտրոնանում եմ արդար, վեհացնող մտքերի վրա և դուրս մղում անառողջ մտքերն իմ գլխից: (ՎևՈւ 121.45)

____ 28. Ես ապաշխարում եմ իմ մեղքերից և ձգտում հաղթահարել իմ թուլությունները: (ՎևՈւ 49.26–28)

____ 29. Ես զգում եմ Սուրբ Հոգու ազդեցությունն իմ կյանքում: (ՎևՈւ 11.12–13)

## Գիտելիք

____ 30. Ես վստահ եմ զգում ավետարանի վարդապետությունների և սկզբունքների իմ ըմբռնման մեջ: (Եթեր 3.19–20)

____ 31. Ես ամեն օր ուսումնասիրում եմ սուրբ գրքերը: (Հովհաննես Ե.39)

____ 32. Ես անկեղծորեն ձգտում եմ հասկանալ ճշմարտությունը և գտնել իմ հարցերի պատասխանները: (ՎևՈւ 6.7)

____ 33. Ես գիտելիք և առաջնորդություն եմ ստանում Հոգու միջոցով: (1 Նեփի 4.6)

____ 34. Ես սիրում և փայփայում եմ ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները: (2 Նեփի 4.15)

## Համբերություն

____ 35. Ես համբերությամբ սպասում եմ Տիրոջ օրհնությունների և խոստումների իրականացմանը: (2 Նեփի 10.17)

____ 36. Ես կարողանում եմ սպասել առանց նեղվելու կամ հուսահատվելու: (Հռովմայեցիս Ը.25)

____ 37. Ես համբերատար եմ և երկայնամիտ միսիոներ լինելու դժվարությունների հետ: (Ալմա 17.11)

____ 38. Ես համբերատար եմ ուրիշների մեղքերի և թուլությունների հանդեպ: (Հռովմայեցիս ԺԵ.1)

____ 39. Ես համբերատար եմ ինքս ինձ հետ և ապավինում եմ Տիրոջը, երբ աշխատում եմ հաղթահարել իմ թուլությունները: (Եթեր 12.27)

____ 40. Ես հանգիստ և հույսով եմ դիմակայում ձախորդություններին և վշտերին: (Ալմա 34.40–41)

## Համեստություն

____ 41. Ես հեզ եմ և սրտով խոնարհ: (Մատթեոս ԺԱ.29)

____ 42. Օգնության համար ես ապավինում եմ Տիրոջը: (Ալմա 26.12)

____ 43. Ես անկեղծորեն երախտապարտ եմ Տիրոջը իմ ստացած օրհնությունների համար: (Ալմա 7.23)

____ 44. Իմ աղոթքները ջերմեռանդ են ու անկեղծ: (Ենովս 1.4)

____ 45. Ես շնորհակալ եմ իմ ղեկավարներից և ուսուցիչներից ինձ ուղղություն տալու համար: (2 Նեփի 9.28)

____ 46. Ես ձգտում եմ ենթարկվել Տիրոջ կամքին, ինչ էլ որ այն լինի: (Մոսիա 24.15)

## Ջանասիրություն

____ 47. Ես արդյունավետ եմ աշխատում, նույնիսկ, երբ ենշման կամ խիստ վերահսկողության տակ չեմ գտնվում: (ՎևՈւ 58.26–27)

____ 48. Ես կենտրոնացնում եմ իմ ջանքերը ամենակարևոր բաների վրա: (Մատթեոս ԻԳ.23)

____ 49. Ես առնվազն երկու անգամ անձնական աղոթք եմ անում: (Ալմա 34.18–27)

____ 50. Ես կենտրոնացնում եմ իմ մտքերը միսիոներական իմ կոչման վրա: (ՎևՈւ 4.2, 5)

____ 51. Ես նպատակներ եմ դնում և մշտապես պլանավորում: (ՎևՈւ 88.119)

____ 52. Ես ջանասիրաբար աշխատում եմ մինչև որ հաջողությամբ ավարտում եմ գործը: (ՎևՈւ 10.4)

____ 53. Ես ուրախություն և բավականություն եմ ստանում իմ աշխատանքից: (Ալմա 36.24–25)

## Հնազանդություն

____ 54. Երբ ես աղոթում եմ, խնդրում եմ ուժ՝ դիմադրելու գայթակղությանը և անելու այն, ինչ ճիշտ է: (3 Նեփի 18.15)

____ 55. Ես պահում եմ անհրաժեշտ պատվիրանները՝ արժանի լինելու տաճարային երաշխավորագրին: (ՎևՈւ 97.8)

____ 56. Ես պատրաստակամորեն հնազանդվում եմ միսիոներական կանոններին և հետևում իմ ղեկավարների խորհրդին: (Եբրայեցիս ԺԳ.17)

____ 57. Ես ձգտում եմ ապրել ավետարանի օրենքների և սկզբունքների համաձայն: (ՎևՈւ 41.5)

Նշումներ



# Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ սովորել իմ միսիայի լեզուն

Նշումներ

## Մտածեք այս մասին

- Ինչո՞ւ ես պետք է շարունակ բարելավեմ իմ լեզվական ունակությունները:
- Ինչպե՞ս կարող եմ ես բարելավել իմ խոսելու ունակությունը և ուսուցանել իմ միսիայի լեզվով:
- Ինչպե՞ս կարող եմ լեզուների պարգևը ձեռք բերել:

## Պատրաստվեք հոգևպես

Տերը հայտարարել է. «Ամեն մարդ կլսի ավետարանի լրիվությունն իր լեզվով, այսինքն՝ իր մայրենի լեզվով, նրանց միջոցով, ովքեր կարգված են այդ զորությանը, Մխիթարիչի սպասավորմամբ, Հիսուս Քրիստոսի հայտնության համար նրանց վրա թափված» (ՎևՈւ 90.11): Ամրապնդեք ձեր անձնական վկայությունը, որպեսզի դարձի բերող ուժ հաղորդեք ձեր խոսքերին: Նախ ձեր մայրենի լեզվով սովորեք վարդապետություններն ու դասերը: Այդ հասկացողությունը կամրապնդի ձեր վկայությունը և ուսուցանելու ու համոզիչ վկայելու ունակությունը: Այնուհետև դուք կարող եք Հոգու առաջնորդությամբ սովորել Վերականգնման ուղերձը հայտնել ձեր միսիայի լեզվով:

Ստորև տրված են այն ուղիները, որոնց հետևելով կարող եք ամրապնդել ձեր հավատն առ այն, որ Տերը կօգնի ձեզ ուսուցանել և վկայել ձեր միսիայի լեզվով:

- Ընդունեք, որ դուք կանչվել եք Աստծո մարգարեի կողմից:
- Սուրբ Հոգու ընկերակցությանը արժանի ապրեք:
- Հնազանդվեք պատվիրաններին և միսիոներական չափանիշներին:
- Անկեղծորեն աղոթեք աստվածային օգնության համար:
- Ամեն օր ուսումնասիրեք, վարժվեք և գործածեք միսիայի լեզուն:

Լուսանկարը. GettyImages.com. Մի բազմացրեք:

Նշումներ

## Եղեք նվիրված և ջանասեր

Մեծ ջանքեր են հարկավոր, որպեսզի սովորեք ձեր միսիայի լեզվով արդյունավետ ուսուցանել: Մի զարմացեք, եթե խնդիրը դժվարին թվա: Լեզու սովորելը ժամանակ է պահանջում: Համբերատար եղեք ինքներդ ձեզ հետ: Փնտրեք ձեր զուգընկերոջ, անդամների, ունկնդիրների և այլ միսիոներների օգնությունը:

Մի դադարեք բարելավել ձեր լեզվական ունակությունները, երբ մարդիկ սկսում են հասկանալ ձեզ: Ձեր լեզվական ունակությունների զարգացման հետ մեկտեղ մարդիկ ավելի շատ կլսեն, թե ինչ եք դուք ասում, քան ինչպես եք ասում: Դուք ավելի քիչ կանհանգստանաք, թե ինչպես պետք է հաղորդեք ձեր սրտում ունեցած զգացումները: Դուք ավելի ունակ կլինեք արձագանքելու ունկնդիրների կարիքներին և Հոգու հուշումներին:

Ձեր միսիայի ընթացքում և միսիայից վերադառնալուց հետո ձգտեք վարպետանալ լեզվի մեջ: Տերը մեծապես օրհնել է ձեզ, և Նա հնարավոր է օգտագործի ձեր լեզվական ունակությունները հետագայում ևս: Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդն ասել է. «Մենք . . . հույս ունենք, որ յուրաքանչյուր միսիոներ, սովորելով քարոզի նոր լեզուն, հնարավորինս կիմտանա դրա մեջ: . . . Այդպիսով ձեր քարոզելու և վկայելու հմտությունները կբարելավվեն: Դուք ավելի լավ կընդունվեք ձեր ունկնդիրների կողմից և հոգևոր ավելի լավ ազդեցություն կթողեք նրանց վրա: . . . Մի բավարարվեք միսիոներական բառարանով միայն: Խորացեք լեզվի մեջ, և դուք ավելի լավ կհասնեք մարդկանց սրտերին» (missionary satellite broadcast, Aug. 1998):

Դուք մենակ չեք ձեր միսիայի լեզուն սովորելիս: Երբ Տերը պատվիրան է տալիս, Նա նաև ուղի է տալիս այն իրագործելու համար (տես 1 Նեփի 3.7): Փնտրեք Նրա օգնությունը: Նվիրվեք ձեր ուսմանը: Ժամանակին դուք ձեռք կբերեք լեզվական հմտություններ, որոնք անհրաժեշտ են որպես միսիոներ ձեր նպատակը իրագործելու համար:

## Սովորեք անգլերեն

Եթե դուք անգլերեն չեք խոսում, սովորեք այդ լեզուն որպես միսիոներ: Դա կօրհնի ձեզ՝ ձեր միսիայի և կյանքի ընթացքում: Անգլերեն սովորելով դուք կկարողանաք օգնել կառուցել Տիրոջ արքայությունը հավելյալ ուղիներով, որն օրհնություն կլինի ձեր և ձեր ընտանիքի համար: Այս գլխում տրված առաջարկություններից շատերը կօգնեն ձեզ: Ուշադրությունը կենտրոնացրեք հիմնականում հետևյալ կետերի վրա.

- Նպատակ դրեք անգլերեն խոսել ձեր զուգընկերոջ հետ: Եթե ձեր զուգընկերն արդեն գիտի անգլերեն և փորձում է սովորել ձեր լեզուն, դուք կարող եք անգլերեն խոսել տանը, իսկ դրսում խոսեք ձեր միսիայի լեզվով:
- Ձեր զուգընկերոջ հետ կարդացեք անգլերեն Մորմոնի Գիրքը: Դուք նաև կարող եք հաջորդաբար կարդալ. այսինքն՝ դուք անգլերեն կարդում եք մի հատված, իսկ այնուհետև ձեր զուգընկերը այդ հատվածը կարդում է միսիայի լեզվով: Ուղղեք միմյանց արտասանությունն ու առոգանությունը:
- Ձեր միսիայի նախագահից խնդրեք անգլերենի պարզ քերականական գիրք, եթե չունեք այն:

## Լեզուն սովորելու սկզբունքները

Այս բաժնում տրված են սկզբունքներ, որոնք կօգնեն ձեզ ավելի արդյունավետ ուսումնասիրել լեզուն:

- **Պարտավորվեք:** Կանոնավոր ձևով լեզուն սովորելու նպատակներ դրեք և ուսումնական ծրագիր կազմեք: Ամեն հնարավորության դեպքում ձգտեք լեզուն օգտագործել:
- **Ձեր ուսումը իմաստալից դարձրեք:** Ինքներդ ձեզ հարցրեք՝ ինչո՞ւ եմ սովորում սա: Ինչպե՞ս այն կօգնի ինձ ավելի լավ հաղորդակցվել: Այն, ինչ սովորում եք, կապեք իրական կյանքի իրավիճակների և առօրյա գործերի հետ: Սովորեք լեզվի այն մանրամասները, որոնք

Նշումներ

կօգնեն ձեզ ասել այն, ինչ ցանկանում եք ասել: Օրինակ, եթե կա սուրբ գրության ինչ-որ պատմություն, որը կցանկանայիք ընդգրկել ձեր ուսուցման մեջ, սովորեք այն բառերն ու քերականությունը, որոնք անհրաժեշտ են այն պատմելու համար:

- **Զգտնք հաղորդակցվնլ:** Զգտեք համակշռել քերականությունը, լեզվի կառուցվածքն ու առօրյա գործերի հետ մեկտեղ սովորելը: Ոչինչ չի կարող փոխարինել տվյալ լեզվով խոսող մարդկանց հետ զրուցելը:
- **Հիմնավորապնս սովորնք նոր գաղափարննրը:** Եթե կանոնավոր ձևով վերանայեք այն ամենը, ինչ սովորել եք, և, եթե կրկին վարժվեք նոր իրավիճակներում, ապա կկարողանաք վերհիշել և արդյունավետ օգտագործել լեզվի սկզբունքները:

## Լնզուն սովորնլու ծրագիր կազմնք

Լեզուն սովորելու ծրագիրն օգնում է և նոր, և փորձված միսիոներներին կենտրոնանալ այն ամենի վրա, ինչ կարող են անել ամեն օր միսիայի լեզվով խոսելու ունակությունները բարելավելու համար: Ձեր ծրագիրը պետք է ընդգրկի այն, ինչ պետք է անեք լեզուն ուսումնասիրելիս և ողջ օրվա ընթացքում:

Անհրաժեշտության դեպքում լեզուն ուսումնասիրելու ժամանակի մի մասը տրամադրեք սովորելու ծրագիր կազմելուն կամ այն կանոնավորելուն: Ապա ամեն առավոտ լեզուն ուսումնասիրելու ժամանակ սովորեք լեզվի այն մասերը, որոնք անհրաժեշտ են այդ օրվա գործերում: Հետևյալ ուղեցույցները կօգնեն ձեզ լեզուն սովորելու ծրագիրը կազմելիս:

1. **Նպատակննր դրնք:** Ամենշաբաթյա և ամենօրյա նպատակները կօգնեն ձեր միսիայի լեզուն սովորելուն: Պլանավորած գործերի ընթացքում, օրինակ՝ պայմանավորված ուսուցումների, ունկնդիրներ գտնելու և ծխի խորհրդի ժողովների ժամանակ ձեր նպատակները կենտրոնացրեք հաղորդակցվելու և ուսուցանելու ձեր ունակության բարելավման վրա: Ինքներդ ձեզ հարցրեք, թե ինչ կարող եք անել ձեր պլանավորած գործերի ընթացքում ավելի պարզորեն և զորությամբ հաղորդակցվելու համար:

2. **Ընտրնք, թն ինչպիսի գործիքննր օգտագործնք:** Վերանայեք լեզվի հետևյալ գործիքները և որոշեք, թե որը կարող եք օգտագործել ձեր նպատակներին հասնելու համար.




- Ձեր միսիայի լեզվով հրատարակված կանոնիկ գրքերը:
- Ձեր միսիայի լեզվով դասերը:
- Գրպանի բառարան:
- Փոքր քերականության գիրք:
- ՄՎԿ –ի լեզվական նյութերը:
- Գրառումներով քարտեր:
- Գրպանի նոթատետր:
- Ձեր միսիայի լեզվով հրատարակված Եկեղեցու այլ նյութեր:

3. **Մտապահնք բառնրը և արտահայտությունննրը:** Ընտրեք բառերն ու արտահայտությունները, որոնք կօգնեն ձեզ ձեր նպատակներին հասնելու համար: Ձեր լեզվական ծրագիրը կարող է ներառել հետևյալ գաղափարները.

- Ընտրեք դասերի, բրոշյուրների, սուրբ գրությունների և Եկեղեցու այլ հրատարակությունների բառերը և արտահայտությունները, որոնք կարող եք օգտագործել ուսուցանելիս:
- Նոթատետրում գրառեք ձեր չիմացած բառերը կամ արտահայտությունները: Ձեզ հետ ունեցեք փոքր բառարան, որտեղ կարող եք նայել այդ բառերը:

Նշումներ

- Ձեզ հետ ունեցեք գրառումներով քարտեր, որպեսզի օրվա ընթացքում սովորեք բառերն ու արտահայտությունները: Դրանք գրեք մի կողմում, իսկ թարգմանությունը` մյուս կողմում: Մի կողմ դրեք ձեր սովորած բառերով գրառումները: Աշխատեք մնացած բառերի վրա մինչև որ սովորեք բոլորը:
- Նոր բառեր և արտահայտություններ օգտագործեք անհատական ուսումնասիրության, ուսուցանելու և օրվա ընթացքում:
- Սովորեք արտասանությունը, բարձրաձայն ասելով բառերն ու արտահայտությունները:
- Միսիայի լեզվով մտապահեք հիմնական սուրբ գրությունները:
- Մտապահեք դասերից կամ բրոշյուրներից պարզ խոսքերը, որոնցով հայտնվում են ավետարանի հիմնական սկզբունքները: Այդ մտքերը հայտնելու այլ ճանապարհներ գտեք:

**4. Սովորեք քերականությունը:** Օգտագործեք ձեր լեզվի գործիքները հաստատելու քերականական սկզբունքները, որոնք կօգնեն ձեզ հասնել ձեր նպատակներին: Անհրաժեշտության դեպքում, օգնություն խնդրեք ձեր զուգընկերոջից, փորձառու միսիոներից կամ որևէ անդամից:

- Օգտագործեք ՄՊԿ-ից ստացած քերականության գրքույկը կամ միսիայի նախագահի կողմից հաստատված կանոնները, որոնք կօգնեն ձեզ հասկանալ քերականությունը և դասերում, բրոշյուրներում և սուրբ գրություններում տրված նախադասությունների կառուցվածքը:
- Նախադասություններ կազմեք, որոնք կարող եք օգտագործել վարժությունների ժամանակ, որոնք կիրառում են քերականության այդ սկզբունքները: Վարժվեք նախադասություններ կարդալու և դրանք արտասանելու մեջ:
- Ուշադրություն դարձրեք լեզվի բառերի դասավորության, խոսքի ու նրա մասերի վրա:
- Հնարավորություններ փնտրեք վարժվելու և կիրառելու քերականությունը, որը դուք ուսումնասիրում եք ամեն օր:

**5. Աշտապես լսեք:** Մտածեք հետևյալ մտքերը համադրելու մասին.

- Ուշադիր լսեք տեղացիներին: Ընդօրինակեք ձեր լսածը:
- Երբ լսում եք այն, ինչ չեք հասկանում, գրեք դա և գտեք, թե ինչ է այն նշանակում: Վարժվեք բառերի արտասանության կամ նախադասություններ կազմելու մեջ:
- Լսելիս ընկալեք ձեր լսած բառերն ու ձևերը:
- Երբ լսում եք այլ կերպ արտասանված խոսք, գրեք այն և վարժվեք դրա արտասանության մեջ: Ինչևէ, որպես Տիրոջ ծառա, միշտ պատշաճ լեզվով խոսեք, և ոչ թե ժարգոնով:
- Ձեր ծրագրած վարժությունների ժամանակ գրեք այն բաները, որոնք հնարավոր է մարդիկ ասեն ձեզ: Վերանայեք այդ պատասխանների հետ կապված խոսքերն ու դարձվածքները:

**6. Բարելավեք ձեր կարդալու և գրելու ունակությունը:** Ձեր միսիայի լեզվով կարդացեք Մորմոնի Գիրքը, որպեսզի սովորեք բառերը և արտահայտությունները, վարժվեք քերականության, արտասանության և սահուն խոսելու մեջ: Մեծ զորություն կա, երբ լեզուն ուսումնասիրելիս սուրբ գրություններն են օգտագործվում: Ինչպես նաև ուշադրություն դարձրեք հետևյալ մտքերի վրա.

- Սովորեք կարդալ և գրել ձեր լեզվի այբուբենը, գրելաձևն ու տառերը: Տպատառերով գրելիս ուշադրությունը բևեռեք կարդալու հմտության վրա, օրինակ սուրբ գրությունները կարդալը, որոնք կօգնեն ձեզ ուսուցանելու ժամանակ:
- Ձեր միսիայի լեզվով բարձրաձայն կարդացեք Մորմոնի Գրքից, այլ սուրբ գրություններից կամ Եկեղեցու ամսագրերից: Ուշադրություն դարձրեք անծանոթ բառերի, դարձվածքների և

Նշումներ

քերականության վրա: Եթե ինչ-որ բառ չեք հասկանում, նախքան ստուգելը` փորձեք հասկանալ դրա իմաստը այդ հատվածի ենթատեքստից: Ձեր գրառումների քարտի վրա ավելացրեք այդ բառը: Անհրաժեշտության դեպքում ձեր մայրենի լեզվով գրեք սուրբ գրությունների կողքին:

- Կարդալիս ինչ-որ մեկին խնդրեք ձեզ ուսուցանել կետադրությունը, արտասանությունը և դադարները:
- Վարժվեք ձեր միսիայի լեզվով գրելու մեջ, օրինակ` կատարելով անձնական գրառումներ կամ գրելով հիշեցումներ, նամակներ, շնորհակալական գրառումներ և քաջալերանքի խոսքեր: Երբ որևէ մեկին Մորմոնի Գիրք եք տալիս, գրքի մեջ գրեք ձեր վկայությունը:

**7. Խնդրեք ուրիշներին օգնել ձեզ:** Մտածեք հետևյալ մտքերը համադրելու մասին:



- Եթե ձեր զուգընկերը տեղացի է, առիթից օգտվեք հաճախակի հարցեր տալով նրան:
- Ձեր զուգընկերոջը և տեղացիներին խնդրեք ուղղել ձեզ և բարելավման ուղիներ առաջարկել: Եթե նրանք ձեզ համար ինչ-որ անհասկանալի բառ են ասում, խնդրեք նրանց բացատրել այն: Հաճախ երեխաները և տատիկներն ու պապիկներն են պատրաստակամորեն օգնում:
- Խնդրեք նրանց, ում ուսուցանում եք, օգնել ձեզ: Բացատրեք. «Ես սովորում եմ ձեր լեզուն: Խնդրում եմ օգնեք ինձ: Եթե ես դժվարանում եմ ճիշտ բառը գտնել, խնդրում եմ օգնեք գտնել այն»:
- Մի վարանեք հատուկ օգնություն խնդրելիս. «Ինչպե՞ս կասեիք __________ : Ինչպե՞ս կարտասանեիք __________ : Ի՞նչ է նշանակում __________ : Խնդրում եմ կրկնեք դա: Գրեք պատասխանները և սովորեք դրանք»:
- Խնդրեք անդամներին ստուգել ձեր գիտելիքները ձեր գրառումների քարտով և գրված բառերով, և օգնել սուրբ գրությունները կարդալիս:

**8. Գնահատեք և վերանայեք ձեր ուսումնական ծրագիրը:** Վերանայեք ձեր ուսումնական ծրագիրն ամեն շաբաթ, գնահատելով, թե արդյոք այն օգտակար դեր ունի սովորելիս: Խնդրեք ձեր զուգընկերոջը և միսիայի ղեկավարներին բարելավման առաջարկներ անել:

Ամեն առիթով օգտագործեք ձեր միսիայի լեզուն: Օրվա ընթացքում որքան հնարավոր է ձեր զուգընկերոջ հետ խոսեք միսիայի լեզվով: Առանձին և հրապարակայնորեն աղոթեք այդ լեզվով, որպեսզի սովորեք աղոթքին հատուկ լեզուն և սովորեք ասել այն, ինչ կա ձեր սրտում:

Մի վախեցեք սխալներ անելուց: Ամեն ոք, ով նոր լեզու է սովորում, սխալներ է անում: Մարդիկ կհասկանան, և նրանք կգնահատեն իրենց լեզուն սովորելիս ձեր գործադրած ջանքերը: Դարձվածքներն ու սուրբ գրությունները մտապահելը կօգնի ձեզ խուսափել սխալներ գործելուց, սակայն դուք չպետք է օգտագործեք երկարաշունչ մտապահված կամ պատրաստված սուրբ գրություններ, որպեսզի սխալներից խույս տաք:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Օգտվելով վերը նկարագրված ուղղեցույցներից, ուսումնական ծրագիր կազմեք: Ձեր զուգընկերոջ կամ միսիայի ղեկավարի հետ վերանայեք ձեր ծրագիրը:

Նշումներ

## Սովորենք ձեր զուգընկերոջ հետ

Օգնեք ձեր զուգընկերներին հաջողություն ունենալ և վստահություն ձեռք բերել լեզուն հնարավորինս արագ սովորելիս: Անկեղծորեն և հաճախակի գովաբանեք ձեր զուգընկերներին և մյուս միսիոներներին իրենց առաջադիմության համար: Զգույշ եղեք, որ չասեք կամ անեք այն, ինչը կթուլացնի նրանց վստահությունը, բայցևայնպես մի պաշտպանեք նրանց այնքան, որ նրանք չսովորեն: Մի խուսափեք օգնել, երբ դրա կարիքը կա: Նրանց հաջողությամբ ուսուցանելու և վկայելու շատ հնարավորություններ տվեք: Խորհեք ձեր զուգընկերոջ հետ սովորելու համար տրված հետևյալ մտքերի շուրջ.

- Միմյանց սովորեցրեք քերականությունը և բառերը, որ դուք եք արդեն սովորել:
- Ուսուցանեք միսիայի լեզվով: Նախ, նոր միսիոներները կարող են շատ պարզ ձևով ուսուցանել, պարզ վկայությամբ կիսվել, և ասել մտապահված սուրբ գրությունները: Նրանց վստահության և ունակության աճի հետ միասին նրանք կկարողանան ավելի լիարժեք ձևով մասնակցել ունկնդիրներին ուսուցանելիս:
- Օգտագործեք այդ լեզուն՝ հաղորդակցվելու համար սովորական միսիոներական իրավիճակներում:
- Բարյացակամորեն միմյանց հասարակ և գործնական պատասխաններ տվեք: Նաև կարևոր է, որ դուք ընդունեք պատասխաններն առանց վիրավորվելու:

Տեսեք, թե ավելի փորձառու միսիոներն ինչպես օգնեց իր զուգընկերոջը հետևյալ իրական պատմության մեջ:

*Ես նոր էի ժամանել իմ երկրորդ տարածք, երբ զուգընկերս ասաց, որ ճաշի հրավերի ժամանակ հոգևոր միտք ասելու իմ հերթն է: Ես պարզապես վախեցած էի: Իմ նախորդ զուգընկերը միշտ ուրախ էր ուսուցանելու, և ես սովորաբար ուսուցանում էի դասի իմ փոքր մասը և այնուհետև լռում, ինչպես էր նա բացատրում ու պատասխանում հարցերին:*

*Ես փորձեցի համոզել իմ զուգընկերոջը, որ նա ասի հոգևոր միտքը, սակայն նա խրախուսեց ինձ կատարել հանձնարարությունը: Ես փորձեցի նրա օգնությամբ:*

*Երբ եկավ ժամանակը, ես բացեցի իմ սուրբ գրությունները և կարդացի 3 Նեփի 5 և 7 գլուխները: Դժվարությամբ, սակայն կարողացա բացատրել, թե ինչու եմ իմ ընտրած հատվածները կարևոր համարում, և ես թեթևություն զգացի, երբ կարողացա դա անել: Երբ հարց տրվեց, ես նայեցի իմ զուգընկերոջը, որ պատասխանի, սակայն նա բերանն անգամ չբացեց: Այդ ժամանակ էր, որ ես ապշեցի ինձ վրա, երբ պատասխանը հասկանալի ֆրանսերենով եկավ: Ես ավելի շատ ապշեցի, երբ այդ անդամը կարծես թե չզգաց, որ ես հաղորդակցվելու դժվարություններ ունեի: Ես վստահություն ձեռք բերեցի և հասկացա, որ իմ ֆրանսերենը ավելի լավ էր, քան ես էի կարծում:*

*Շաբաթներ անցան, և զուգընկերս շարունակում էր ուսուցանելու հնարավորություններ տալ ինձ: Եվ քանի որ նա ինձ խրախուսում էր խոսել, լսել և ուսուցանել, իմ լեզվական հմտությունները սկսեցին ավելի արագ բարելավվել, և ես զգացի, որ գործիք եմ դարձել մեր Երկնային Հոր ձեռքում, և ոչ թե պարզապես մեկ այլ երեցի լռակյաց զուգընկեր:*

**Վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

- Եթե դուք նոր միսիոների հետ եք աշխատում, ինչպե՞ս կարող եք ավելի լավ օգնել ձեր զուգընկերոջը լեզուն սովորելու գործում:
- Եթե դուք նոր միսիոներ եք, ինչպիսի՞ օգնություն կարող եք խնդրել ձեր ավագ զուգընկերոջից:

Նշումներ

## Կուլտուրա և լեզվի ուսումնասիրություն

Կուլտուրան և լեզուն սերտորեն կապված են իրար հետ: Կուլտուրան հասկանալը կօգնի բացատրել, թե ինչու է լեզուն այդպես գործածվում: Ջգտեք հասկանալ մարդկանց կուլտուրան, որպեսզի կարողանաք պարզորոշ հաղորդել Վերականգնման ուղերձի եզակի դրույթները:

Մարդկանց վստահությունն ու սերը վայելելու համար պատշաճ ձևով հետևեք նրանց կուլտուրային: Շատ մեծ միսիոներներ են այդպես վարվել (տես Ա Կորքնացիս Թ.20–23): Ջգտեք այնպես անել, որ մարդիկ իրենց հանգիստ զգան ձեզ հետ և հասկանան ձեր լեզուն:

### Վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Պատկերացրեք, որ միսիան ծառայում եք Ասիայում: Դուք պատրաստվում եք ինչ-որ մեկին ուսուցանել հարության մասին, և գիտեք, որ բուդդիստները հավատում են վերամարմնավորմանը: Ինչպե՞ս կուսուցանեք հարության մասին, որպեսզի ունկնդիրները հասկական, որ այս վարդապետությունը նկատելիորեն տարբերվում է վերամարմնավորումից: Ինչպիսի՞ խոսքեր և արտահայտություններ պետք է սովորեք, որպեսզի այս խնդիրը կատարեք:
- Խորհեք այն մարդկանց կուլտուրական և կրոնական հիմքի մասին, ում ուսուցանում եք: Գտեք, թե որն է պատճառը, որի հետևանքով նրանք կարող են չհասկանալ ավետարանի վարդապետությունները: Պլանավորեք, թե ինչպիսի եղանակներով կարող եք այդ վարդապետությունները հստակորեն ուսուցանել:

## Լեզուների պարգևը

Փնտրեք Հոգու պարգևները, ներառյալ լեզուների և լեզուներ թարգմանելու պարգևը: Այն կօգնի ձեզ խոսել ձեր միսիայի մարդկանց լեզվով և հասկանալ այն: Դուք այս պարգևը չեք ստանա, եթե ջանքեր չգործադրեք: Դուք պետք է եռանդուն փնտրեք այն: Լեզուների պարգևը փնտրելիս դուք պետք է այդ լեզուն սովորելու համար աշխատեք, պայքարեք և կատարեք հնարավորինս ամեն ինչ: Վստահ եղեք, որ Հոգին կօգնի ձեզ, եթե ապրեք այնպես, ինչպես հարկն է, և ջանք չխնայեք: Հավատացեք, որ դուք կարող եք ունենալ լեզուների պարգևը՝ ուղղակի և ամենախորը իմաստով:

Երբ զգաք, որ դժվարանում եք այնպես արտահայտվել, ինչպես կցանկանայիք, հիշեք, որ Հոգին կարող է խոսել Աստծո բոլոր զավակների սրտերին: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է. «Կա մեկ լեզու, . . . որն ընդհանուր է յուրաքանչյուր միսիոների համար, դա Հոգու լեզուն է: Այն չի կարելի սովորել գիտակ մասնագետների կողմից գրված դասագրքերից, ոչ էլ կարելի է իմանալ կարդալով ու հիշելով: Հոգու լեզուն բացվում է նրան, ով իր ողջ սրտով ձգտում է ճանաչել Աստծուն և պահել Նրա աստվածային պատվիրանները: Այս լեզվում մասնագիտանալը թույլ է տալիս մարդուն ճեղքել արգելապատերը, հաղթահարել խոչընդոտները և դիպչել մարդու սրտին» (“The Spirit Giveth Life,” *Ensign*, June 1997, 2):

### Հիշեք սա

- Նախ ձեր մայրենի լեզվով ուսումնասիրեք վարդապետություններն ու դասերը, որոնք պետք է ուսուցանեք:
- Սովորեք ձեր միսիայի լեզվով արտահայտել այդ վարդապետություններն ու դրանց հանդեպ ունեցած ձեր զգացմունքները:
- Կազմեք ուսումնական ծրագիր և կանոնավոր ձևով նոր գաղափարներ փորձեք, երբ ձգտում եք բարելավել ձեր միսիայի լեզուն:
- Փնտրեք Հոգու առաջնորդությունը, որը կօգնի ձեզ հասկանալ և հաղորդակցվել ձեր միսիայի մարդկանց հետ:

Նշումներ

# Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

## Անհատական ուսումնասիրություն

- Վերանայեք այս գլխում տրված խորհուրդները: Գտեք այն խորհուրդը, որը դեռևս չեք փորձել, և նպատակ դրեք հաջորդ մի քանի օրվա ընթացքում փորձել այն:
- Շրջանի ձեր հաջորդ ժողովի ժամանակ հարցրեք լեզուն լավ տիրապետող փորձառու մի միսիոների, թե ինչ է նա արել լեզուն տիրապետելու համար:
- Կարդացեք և քննարկեք Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը. «Որտեղ ազգային ավանդույթները կամ սովորույթները հակասում են Աստծո ուսմունքներին, մի հետևեք դրանց: Որտեղ որ ազգային ավանդույթներն ու սովորույթները ներդաշնակ են Նրա ուսմունքների հետ, դրանք պետք է փայփայել» (“Removing Barriers to Happiness,” *Ensign,* May 1998, 87): Խորհեք, թե ձեր ծառայության տարածքում կուլտուրայի առումով ինչ տարբերություններ կան: Գրեք այդ տարբերությունները: Այնուհետև գիծ քաշեք նրանց վրա, որոնք հակասում են ավետարանի ուսմունքներին: Խորհեք մնացած տարբերությունների շուրջ և մտածեք, թե ինչպես կարող եք այդ սովորույթները ձերը դարձնել:
- Ուսումնական ծրագիր կազմեք, որպեսզի կարողանաք ձեր միսիայի լեզվով կատարել հետևյալ առաջարկներից մեկը.
  - Պատմեք Ջոզեֆ Սմիթի պատմությունը:
  - Հակիրճ ներկայացրեք 3 Նեփի 11 գլուխը:
  - Հակիրճ ներկայացրեք Ալմա 32 գլուխը:
  - Պատմեք Նեփիի և արույրե թիթեղների պատմությունը (տես 1 Նեփի 3–5):
  - Բացատրեք ժամանակաշրջանները:
  - Կիսվեք անձնական փորձով:
- Պատրաստեք դասերից մեկում հանդիպող ձեր չիմացած բառերով գրառումների քարտեր: Ձեզ մոտ պահեք այդ քարտերը, մինչև որ բոլորը սովորեք:

## Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Վարժվեք ձեր միսիայի լեզվով միմյանց ուսուցանել միսիոներական դասերը:
- Ձեր զուգընկերոջը խնդրեք ուշադրություն դարձնել ձեր առոգանությանն ու օգնել այն բարելավել:
- Ընտրեք սուրբ գրություններից պատմություններ կամ հատվածներ, որոնք կցանկանայիք օգտագործել ուսուցման ժամանակ: Վարժվեք այն ամփոփ ներկայացնել ձեր խոսքերով:
- Վերանայեք այս գլխում տրված մտքերը: Քննարկեք, թե որ խորհուրդները կցանկանայիք օգտագործել հաջորդ շաբաթ զուգընկերոջ հետ ուսումնասիրության ժամանակ:
- Եթե դուք նոր միսիոների եք ուսուցանում, գրեք այն իրավիճակները, երբ ձեր զուգընկերոջը չեն հասկացել: Գրեք համապատասխան բառերը, արտահայտությունները կամ քերականական սխալները, որոնք գործածել է ձեր զուգընկերը: Ձեր հաջորդ ծրագրված վարժության ժամանակ բացատրեք և պարապեք, թե ինչպես շտկել ձեր ցուցակում գրված նման խնդիրները:

Նշումներ

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Մայրենի լեզվով խոսող տեղացիների հրավիրեք ժողովին: Կազմակերպեք, որպեսզի միսիոներները նրանց ուսուցանեն փոքր խմբերով, իսկ նրանք իրենց կարծիքը հայտնեն միսիոներների լեզվի վերաբերյալ:
- Նախօրոք մեկ կամ երկու միսիոներների հանձնարարեք պատմել այն հաջողությունների մասին, որոնք նրանք ունեցել են լեզուն ուսումնասիրելիս: Խնդրեք նրանց կիսվել իրենց մտքերով:
- Խնդրեք փորձառու միսիոներներից մեկին հակիրճ ներկայացնել լեզվի այն մասերը, որոնք սովորաբար դժվար են տրվում միսիոներներին: Օրինակներ բերեք, թե ինչպես պետք է գործածել դրանք և խնդրեք, որ միսիոներները պարապեն այդ ուղղությամբ:
- Խնդրեք միսիոներներին, որոնք տեղյակ են տեղի կուլտուրային, կիսվել օգտակար խորհուրդներով:

## Միսիայի Նախագահ

- Ժամանակ առ ժամանակ առանձնազրույց անցկացրեք միսիոներների հետ այն լեզվով, որը նրանք սովորում են:
- Հարցրեք քահանայության տեղական ղեկավարներին, թե ինչպես կարող են միսիոներները բարելավել իրենց լեզուն:
- Գտեք ձեր միսիայի լեզուն սովորող միսիոներների կողմից ամենաշատ թույլ տրվող սխալները: Տարածքի համաժողովում հրահանգներ տվեք այդ սխալները շտկելու համար:
- Միսիոներներին ուսուցանեք հոգևոր պարգևների վարդապետությունը:
- Հետևեք ձեր միսիոներներին, երբ նրանք միսիայի լեզվով են ուսուցանում:
- Առիթներ գտեք այդ լեզվով ձեր միսիոներների հետ խոսելու համար:

Նշումներ



# Ինչպե՞ս ես կարող եմ իմաստությամբ օգտագործել ժամանակը

Նշումներ

## Մտածեք այս մասին

- Ինչպե՞ս կարող են նպատակներն ինձ օգնել ավելի արդյունավետ միսիոներ լինել:
- Ո՞րը պետք է լինի իմ նպատակների էությունը:
- Որո՞նք են պլանավորման իմ գործիքներն ու միջոցները, և ինչպես ես պետք է օգտագործեմ դրանք:
- Ինչո՞ւ է կարևոր տարածքի գիրքը:
- Ինչպե՞ս ես պետք է վարեմ շաբաթվա և օրվա պլանավորումը:
- Ինչպե՞ս ես կարող եմ իմանալ, որ իմ ծրագրերն ու նպատակները օգնում են իրականացնել Տիրոջ աշխատանքը:

Ձեզ հանձնարարվել է կատարել Տիրոջ աշխատանքը տվյալ տարածքում: Նա ուզում է, որ դուք հետևեք ձեր տարածքին սիրով և մեծ հոգատարությամբ: Ձեր նպատակն է օգնել ուրիշներին գալ դեպի Նա մկրտության և հաստատման միջոցով:

Արեք հնարավոր ամեն ինչ, որպեսզի ձեր գնալուց հետո այդ տարածքն ավելի ամուր լինի, քան ձեր գալուց առաջ էր: Իմաստալից նպատակները և լավ պլանավորումը կօգնեն ձեզ անել այն, ինչ Տերը պահանջում է ձեզանից: Մինչ դուք հոգ եք տանում ձեզ հանձրարարված տարածքի մարդկանց համար, դուք հաշվետու կլինեք Նրան և միսիայի ձեր ղեկավարներին:

Միսիոներական ձեր կոչման նամակում ասվում է. «Ակնկալվում է նաև, որ ձեր ողջ ժամանակն ու ուշադրությունը կնվիրաբերեք Տիրոջը ծառայելուն, հետևում թողնելով անձնական բոլոր գործերը: Եթե անեք դա, Տերը կօրհնի ձեզ և դուք կդառնաք ճշմարտության արդյունավետ դատապաշտպաններ և միջնորդներ: Մենք ձեզ վրա ենք դնում մեր հույսը և աղոթում, որպեսզի Տերը օգնի ձեզ կատարել ձեր պարտականությունները այս սուրբ հանձնարարությունն իրականացնելիս»: Այս գլուխը ձեզ կօգնի իմանալ, թե ինչպես նպատակներ ունենալը, պլանավորումը և հաշվետու լինելը կարող է օգնել շատերին ստանալ վերականգնված ավետարանը:

Նշումներ

### Վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Կարդացեք Հակոբ 5.11–13, 61–64, 74–75, և պատասխանեք հետևյալ հարցերին.

- Ի՞նչ է Տերը զգում Իր զավակների հանդեպ:
- Ինչպիսի՞ ջանքեր է պահանջում Տերը Իր ծառաներից:

## Դարձի հիմնական ցուցանիշները

Դուք, հավանաբար, մտածել եք այն մասին, թե ձեր բազմաթիվ պարտականություններից որոնք են ամենակարևորները: Այս հարցին պատասխանելու համար դուք պետք է հասկանաք ձեր նպատակը և իմանաք, թե ինչպես կարող է ժամանակի արդյունավետ օգտագործումը ձեզ օգնել իրականացնել այս նպատակը:

Ձեր նպատակն է հրավիրել մարդկանց դեպի Քրիստոսը, օգնելով նրանց ստանալ վերականգնված ավետարանը Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, Նրա Քավության, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով: Հիմնական ցուցանիշները տրվել են Եկեղեցու ղեկավարների կողմից ձեզ օգնելու համար կենտրոնանալ այդ նպատակի վրա: Կենտրոնանալով այդ ցուցանիշների վրա, դուք կօգնեք մարդկանց գնալ դեպի մկրտությունը, հաստատումը, Եկեղեցում շարունակ գործունեությունը և տևական դարձի ընթացքը:

### Գրի առնելու և զեկուցելու հիմնական ցուցանիշները

- Մկրտված և հաստատված ունկնդիրներ:
- Մկրտության ամսաթիվ ունեցող ունկնդիրներ:
- Հաղորդության ժողովին հաճախող ունկնդիրներ:
- Ունկնդիրներին ուսուցանված դասեր անդամի ներկայությամբ:
- Ուսուցանված այլ դասեր:
- Առաջադիմող ունկնդիրներ:
- Ուրիշների կողմից տրված անուններ, որոնց հետ կապ է հաստատվել:
- Նոր ունկնդիրներ:
- Վերջերս նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին ուսուցանված դասեր:

Այս ցուցանիշները ցույց են տալիս այն իրադարձությունները ու պայմանները, որոնք տալիս են տեղեկություն անձի առաջընթացի մասին դեպի տևական դարձի գալը: Հիմնական ցուցանիշներից յուրաքանչյուրի համառոտ նկարագրությունը տրվում է ստորև.

**Մկրտված և հաստատված նորադարձներ.** Ցանկացած նորադարձ, որը ստացել է մկրտության և հաստատման արարողությունները:

**Մկրտության ամսաթիվ ունեցող ունկնդիրներ.** Ցանկացած ունկնդիր, որը համաձայնվել է որոշակի օրը մկրտվել և հաստատվել:

**Հաղորդության ժողովին հաճախող ունկնդիրներ.** Ցանկացած ունկնդիր, որը հաճախում է հաղորդության ժողովին:

**Ունկնդիրներին ուսուցանված դասեր անդամի ներկայությամբ.** Ունկնդիրներին ուսուցանված դասերի ընդհանուր քանակը, որոնց ներկա է եղել որևէ անդամ: Դասը սովորաբար ներառում է

Նշումներ

դասերից ավետարանի մեկ կամ ավելի սկզբունքներ սովորեցնելը, բացիչ և փակիչ աղոթքները, և պարտավորություններ կատարելու հրավերը: Պարտադիր չէ սովորեցնել դասի բոլոր սկզբունքները, որպեսզի դասը ամբողջությամբ ուսուցանված համարվի : Ձեր ուսուցանման արդյունավետությունը կարող է երևալ նրանում, թե արդյոք ունկնդիրները աճում են Փրկչի հանդեպ իրենց հավատքի մեջ, ապաշխարում են իրենց մեղսագործություններից և ջանասիրաբար պատրաստվում են ստանալ մկրտության և հաստատման արարողությունները:

**Ուսուցանված այլ դասեր.** Դասերի ընդհանուր քանակը, որոնք ուսուցանվել են ունկնդիրներին առանց անդամի ներկայության:

**Առաջադիմող ունկնդիրներ.** Ունկնդիրների ընդհանուր քանակը, որոնց ուսուցանվել է երկու կամ ավելի դասեր և, որոնք պահում են պատվիրանները, ինչպիսիք են՝ աղոթելը, Մորմոնի Գիրքը կարդալը, եկեղեցի հաճախելը և մկրտությանն ու հաստատմանը պատրաստվելը: Այն ունկնդիրները, որոնք ցանկություն են հայտնում շարունակել սովորել ավետարանի մասին, սակայն դժվարանում են պահել պատվիրանները, չեն համարվում առաջընթաց ապրող ունկնդիրներ, ինչպես տրվում է այս սահմանման մեջ: Նրանք դասակարգվում են կամ որպես նոր ունկնդիրներ, կամ այլ ունկնդիրներ:

**Ուրիշների կողմից տրված անուններ, որոնց հետ կապ է հաստատվել.** Ծանոթների ընդհանուր քանակը, որոնց հետ դուք կապ եք հաստատել և ուսուցանել եք, կամ պայմանավորվածություն եք ձեռք բերել: Երբ դուք կապ եք հաստատում ծանոթի հետ, նա ծանոթների խմբից տեղափոխվում է նոր ունկնդիրների խումբ, հետագա հանդիպումների նպատակով, կամ դուրս է գալիս ցուցակից: Ծանոթ, որի հետ կապ է հաստատվում, կարող է համարվել նաև այն անձը, որին դուք չեք կարողանում գտնել, սխալ տվյալների կամ հասցեի պատճառով: Այդ անունները ուղարկվում են հետ միսիայի գրասենյակ, հաղորդագրությամբ, թե ինչու այդ անձը չի գտնվում:

Ծանոթների ընդհանուր թիվը վերաբերվում է այն բոլոր ծանոթների անուններին, որոնք դուք ստացել եք, սակայն որոնց հետ դեռ կապ չեք հաստատել (անդամների, ունկնդիրների, Եկեղեցու կենտրոնի կողմից տրված անուններ և այլ ծանոթներ):

**Նոր ունկնդիրներ.** Այն անձնանց ընդհանուր թիվը, որոնց դաս է ուսուցանվել և, որոնք համաձայնվել են կրկին հանդիպել:

**Վերջերս նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին ուսուցանված դասեր.** Դասերի ընդհանուր թիվը, որոնք ուսուցանել են այն նորադարձներին, որոնց անդամության մեկ տարին դեռ չի լրացել կամ ովքեր քիչ ակտիվ անդամներ են:

Երբ դուք նպատակներ եք դնում և ծրագրեր կազմում, գնահատեք ձեր արածը այն առումով, թե ինչպես դրանք կավելացնեն այս հիմնական ցուցանիշները ներկայացնող մարդկանց թիվը: Ձեր նպատակը պետք է լինի շարունակ աճող թվեր ունենալ յուրաքանչյուր հիմնական ցուցանիշի համար:

Դուք կանեք շատ բաներ, որոնք չեն տրվում հիմնական ցուցանիշներում, օրինակ փողոցում կապ հաստատելը կամ անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրությունը: Այս կարևոր գործերը ներդրում ունեն հիմնական ցուցանիշներից մեկի կամ մի քանիսի մեջ: Օրինակ, երբ դուք ուսուցանում եք ձեր սեփական ջանքերի շնորհիվ գտած անձանց, ուսուցանման ձեր խմբին դուք ավելացնում եք նոր ունկնդիրներ: Ձեր անհատական և զուգընկերոջ հետ ուսուցման որակը կբարելավի նաև Հոգով ուսուցանելու ձեր ունակությունը, որը կօգնի ձեր նոր և առաջընթաց ապրող ունկնդիրներին: Ձեր գտնելու և ուսուցանելու զորությունը կազդի յուրաքանչյուր հիմնական ցուցանիշի վրա: Այն ամենը, ինչ անում եք, գնահատեք, հիմնվելով այն փաստի վրա, թե արդյոք այն ավելացնում է տվյալ խմբի մարդկանց թիվը: Եթե դուք և ձեր զուգընկերը չեք տեսնում, թե ինչպես է տվյալ գործողությունը ավելացնում որևէ ցուցանիշի մարդկանց թիվը, ապա մտածեք, թե արժե արդյոք ժամանակ հատկացնել այդ գործողությանը:

Նշումներ

**Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Ձեր աշխատանքային տետրում թվարկեք յուրաքանչյուր գործողություն, որը կատարել եք վերջին երեք օրերի ընթացքում: Յուրաքանչյուր գործողության համար նշեք, թե արդյոք այն ազդել է հիմնական ցուցանիշներից որևէ մեկի վրա: Եթե այո, ապա գրեք *այո* դրա կողքին: Հակառակ դեպքում, գրեք *ոչ*: *Այո* նշված յուրաքանչյուր գործողության համար, նկարագրեք, թե ինչ ազդեցություն է այն գործել: *Ոչ* նշված յուրաքանչյուր գործողության համար որոշեք, թե ինչու դուք դա կատարեցիք և արդյոք կշարունակեք դա ապագայում: Ձեր ցանկը քննարկեք ձեր զուգընկերոջ հետ և բացատրեք, թե ինչու եք որոշ գործողությունների դիմաց նշել *այո*, իսկ մյուսների դիմաց *ոչ*: Քննարկեք, թե որ գործողությունները դուք պետք է դադարեցնեք:

## Տարածքի Գիրք և պլանավորման ու հաշվետվության գործիքներ

Նրանց վերաբերյալ, ովքեր իր օրերին մկրտության և հաստատման միջոցով ընդունվել են եկեղեցի, Մորոնին սովորեցրել է. «Նրանց անունները գրի էին առնվում, որպեսզի նրանք հիշվեին և սնուցվեին Աստծո բարի խոսքով՝ պահելու նրանց ճշմարիտ ուղու վրա» (Մորոնի 6.4):

Ձեզ գործիքներ է տրվել օգնելու համար գրի առնել կարևոր տեղեկություն այն մարդկանց մասին, ում սովորեցնում եք: Այդ գործիքները ձեզ օգնում են նաև տեղեկության համապատասխան մասով կիսվել նրանց հետ, ովքեր դրա կարիքն ունեն, ինչպես նկարագրվում է ստորև.




Այս գործիքները և ձեր աշխատանքի համար պահանջվող ողջ տեղեկությունը պահվում են տարածքի գրքում և Միսիոների օրագրում: Տարածքի գիրքը կազմված է հետևյալ կերպ.

- **Տարածքի քարտեզ**
  - Տարածքի քարտեզը, որում նշված են սահմանները
- **Առաջադիմության գրառումներ**
  - Առաջադիմության գրառումների ձևեր
- **Մկրտության և հաստատման ամսաթիվ ունեցող ունկնդիրներ**
  - Ուսուցման գրառումների ձևեր
- **Առաջադիմող ունկնդիրներ**
  - Ուսուցման գրառումների ձևեր
- **Նոր կամ այլ ունկնդիրներ**
  - Ուսուցման գրառումների ձևեր
- **Հնարավոր ունկնդիրներ**
  - Հնարավոր ունկնդիրների ձևեր
  - Ուրիշների կողմից տրվող անունների ձևեր
- **Նախկին ունկնդիրներ**
  - Ուսուցման գրառումների ձևեր
- **Վերջերս դարձի եկած և ոչ ակտիվ անդամներ**
  - Ուսուցման գրառումների ձևեր
  - Նորադարձի հետ կապված գործողությունների ցանկի ձևեր

Նշումներ

- **Տնղնկություն ծխի և միսիայի մասին**
  - Ծխի տեղեկագիրք
  - Ծխի պաշտոնների ցուցակ
  - Ծխի և միսիոներական ժողովների ժամացուցակ
  - Մասնակի անդամությամբ ընտանիքների ցուցակ
  - Ձեր տարածքում կամ շրջանում միսիոներների տեղեկագիրք
- **Ղնկավարություն**
  - Ամփոփող հաշվետվություն հեռաձայնման միջոցով
- **Տնղնկություն տարածքի մասին**
  - Տեղեկություն բնակարանի մասին
  - Հասարակական տրանսպորտ
  - Վարսավիրանոց
  - Լվացքատուն
  - Գնումներ կատարելու վայրեր
  - Վայրեր, որոնցից պետք է խուսափել
  - Ծանոթություններ

## Տարածքի Գիրք

Յուրաքանչյուր աշխատանքային տարածք վարում է տարածքի գիրք, որտեղ գրառվում են ձեր ամենօրյա ջանքերը: Ամեն օր թարմացրեք կարևոր տեղեկությունը և ամեն շաբաթ վերանայեք այն ձեր շաբաթվա պլանավորման ժամանակ: Պահեք այն մաքուր, վերջին տեղեկություններով համընթաց և եզգրիտ, որպեսզի ապագա միսիոներները կարողանան ավելացնել ձեր ոգեշնչված ծառայության վրա: Հրավերի դեպքում, ձեր տարածքի գիրքը ձեզ հետ տարեք հարցազրույցներին կամ տարածքային համաժողովներին, որտեղ միսիոներների ղեկավարները կարող են վերանայել այն և օգնել ձեզ այն ավելի արդյունավետ օգտագործել:

Ամեն օր ձեր ծրագրերը կազմելիս և փոփոխելիս դուք պետք է անդրադառնաք այդ գրքի որոշ մասերին: Ձեր տարածքի գիրքը ձեզ հետ բերեք տարածքային համաժողովներին և հարցազրույցներին, որպեսզի միսիայի նախագահը վերանայի այն: Այդ գիրքը պետք է միշտ մնա ձեր բնակարանում, ձեր տեղափոխումից հետո, որպեսզի ապագա միսիոներները կարողանան օգտվել այդ տեղեկությունից:

Նշումներ

Ձեր տարածքի գրքում գրի առեք ճշգրիտ, լիարժեք և նորացված տեղեկություն այն բոլոր մարդկանց մասին, ում հետ աշխատում եք: Տրվող գործիքների բացատրությունը թվարկվում է ստորև:

**Ուսուցման գրառում.** Այս ձևը ձեզ օգնում է գրի առնել մանրամասն տեղեկություն ունկնդիրների առաջընթացի, վերջերս մկրտվածների և ոչ ակտիվ անդամների մասին, որոնց դուք ուսուցանում եք:

- Անձնական տեղեկություն:
- Մկրտության և հաստատման ամսաթվեր:



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

**Ուսուցման գրառում**

Միսիոների աշխատանքային տարածք | Ծուխ կամ ճյուղ | Ցից կամ շրջան

**Անձնական տեղեկություն** (Տե՛ս հակառակ կողմը լրացուցիչ անձնական տեղեկության համար:)

| Անձի կամ զույգի անուն(ներ) | *Տեսակ | Տարիք | Առաջին հաղորդակցման ամսաթիվ | Մկրտության նշանակված ամսաթիվ | Մկրտության փաստացի ամսաթիվ | Հաստատման ամսաթիվ | Երեխաների անունները (լրացուցիչ անունները կարող են գրվել հակառակ կողմում Տվյալներ բաժնում:) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Տարիք | Տարիք |
| | | | | | | | Տարիք | Տարիք |

Հասցե | Հեռախոսի համար | Միսիոներներ, որոնք սկսել են ուսուցանումը

| Ընկերակցող անդամների և տնային կամ այցելող ուսուցիչների անունները | Հեռախոսի համար | Հասցե |
|---|---|---|
| | | |
| | | |

*Տեսակ: Ու = Ունկնդիր; ՎՄ = Վերջերս մկրտված նորադարձ; ՈԱ = Ոչ ակտիվ անդամ; Ա = Անդամ; ՄԸ = Մասամբ անդամության ընտանիք

**Ուսուցանված դասերի և սկզբունքների ամսաթվերը** (Շրջանակի մեջ վերցրեք, եթե ուսուցանումը կատարվել է անդամի ներկայությամբ:) | **Ունկնդրի կամ ընտանիքի ընկավարի համար պարտավորությունների կամ գործողությունների կարգավիճակ**

| **Վերականգնման ուղերձը** | Մկրտությունից առաջ | Մկրտությունից հետո | **Պատվիրաններ** | Մկրտությունից առաջ | Մկրտությունից առաջ | Հրավիրված է | Պահում է | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աստված մեր սիրող Երկնային Հայրն է | | | Հնազանդություն | | | | | Կարդում են Մորմոնի Գիրքը |
| Ավետարանը օրհնում է ընտանիքներին | | | Աղոթեք հաճախ | | | | | Աղոթում են Ջոզեֆ Սմիթի և Մորմոնի Գրքի մասին |
| Ավետարանի տնտեսությունները | | | Ուսումնասիրեք սուրբ գրությունները | | | | | Հաճախում են հաղորդության և այլ ժողովներին |
| Փրկչի երկրային ծառայությունը | | | Կիրակին սուրբ պահեք | | | | | Երեխաները հաճախում են Երեխաների Խումբ, Երիտասարդ Կանանց կամ Երիտասարդ |
| Մեծ Ուրացություն | | | Մկրտություն և հաստատում | | | | | Տղամարդկանց դասարաններ |
| Վերականգնում. Ջոզեֆ Սմիթ | | | Հետևեք մարգարեին | | | | | Միսիոներներին ներկայացրել են ընտանիքին և ընկերներին |
| Մորմոնի Գիրք | | | Պահեք Տասը պատվիրանները | | | | | Հաճախում են մկրտության ծառայությանը |
| Աղոթք, Սուրբ Հոգի | | | Ապրեք առաքինության օրենքով | | | | | Հանդիպում են եպիսկոպոսին և ծխի խորհրդի անդամներին |
| **Փրկության ծրագիր** | | | Հնազանդվեք Իմաստության Խոսքին | | | | | Ընկերություն են անում ծխի անդամների հետ |
| Նախաերկրային կյանք | | | Պահեք տասանորդի օրենքը | | | | | Պահում են Տասը Պատվիրանները |
| Արարում | | | Պահեք ծոմի օրենքը | | | | | Ապրում են առաքինության օրենքով |
| Ընտրություն և Անկում | | | Ինչպես տալ տասանորդ և նվիրատվություններ | | | | | Ապրում են Իմաստության Խոսքով |
| Մեր կյանքը երկրի վրա | | | Հնազանդվեք և հարգեք օրենքը | | | | | Ապրում են տասանորդի օրենքով |
| Քավություն | | | **Օրենքներ և արարողություններ** | | | | | Ապրում են ծոմի օրենքով |
| Աշխարհի ոգին | | | Քահանայություն և օժանդակ կազմակերպություններ | | | | | Ապրում են երկրի օրենքներով |
| Հարություն, դատաստան և անմահություն | | | Միսիոներական աշխատանք | | | | | Հարցազրույց են անցնում մկրտության և հաստատման համար |
| Փառքի արքայություններ | | | Հավերժական ամուսնություն | | | | | Ընկերներին և ընտանիքին հրավիրում են իրենց մկրտությանն ու հաստատմանը |
| **Հիսուս Քրիստոսի Ավետարանը** | | | Տաճարներ և ընտանեկան պատմություն | | | | | Մկրտվել և հաստատվել են |
| Մեղքից մաքրված | | | Ծառայություն | | | | | Ամեն օր անձնական աղոթք են անում և սուրբ գրություններ ուսումնասիրում |
| Հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ | | | Ուսուցանում և ուսում | | | | | Ամեն օր ընտանեկան աղոթք են անում և սուրբ գրություններ ուսումնասիրում |
| Ապաշխարություն | | | Համբերել մինչև վերջ | | | | | Ամեն շաբաթ ընտանեկան երեկո են անցկացնում |
| Մկրտություն, մեր առաջին ուխտը | | | **Մկրտության հարցազրույցի հարցերի վերանայում** | | | | | Քահանայություն են ստանում |
| Սուրբ Հոգու պարգևը | | | | | | | | Եկեղեցու կոչում են ստանում |
| Համբերել մինչև վերջ | | | | | | | | |

(Տե՛ս հակառակ կողմը լրացուցիչ անձնական տեղեկության համար)

© 2004 IRI. 7/04. 7/04. Printed in Germany. 36987 201

*(Դիմացի մասում)*

- Գրառում այն մասին, թե երբ եք դուք ուսուցանել հինգ դասերից յուրաքանչյուրի սկզբունքները, և արդյոք որևէ անդամ ներկա է եղել: Այս բաժինը ձեզ թույլ է տալիս ճկուն լինել հետևելով, թե ինչ եք ուսուցանում, անկախ սկզբունքները սովորեցնելու ձեր ընտրած հերթականությունից:
- Դուք կարող եք հետևել, թե մկրտությունից առաջ և հետո որ դասերն են ուսուցանվել:
- Այն պարտավորությունների կարգավիճակի գրառումը, որոնք ունկնդիրները պետք է պահեն: Այս բաժնում դուք գրի եք առնում այն ամսաթիվը, երբ հրավիրել եք ունկնդիրներին և նշում եք, թե արդյոք նրանք հետևողական են իրենց պարտավորությունները կատարելու մեջ:

Նշումներ

- Բաժին, որտեղ դուք նկարագրում եք անձի կամ ընտանիքի մասին տեղեկությունները: Մի ընդգրկեք անձնական կամ բացասական տեղեկություններ:
- Բաժին, որտեղ դուք տալիս եք կարևոր տեղեկություն ուսուցանման այցերի մասին: Դուք կարող եք ներառել այն մտահոգությունները, որ ունեն մարդիկ, նրանց դժվարությունները պարտավորությունները կատարելիս, և հաջողությունները, ընթերցելու և աղոթելու հետ կապված: Կարող եք նաև նշել, որ նրանք այցելում են եկեղեցի և կարդում են Մորմոնի Գիրքը:
- Բաժին, որտեղ դուք կարող եք գրանցել ձեր հետագա այցերը այն անձին կամ ընտանիքին, որոնք այլևս չեն հետաքրքրվում Եկեղեցով:



**Ուսուցանման Գրառում** (շարունակություն)

**Տվյալներ** (Նկարագրեք, թե ինչպես է անձը կամ ընտանիքը ծանոթացել Եկեղեցու հետ, մասնագիտությունը, կրոնական համոզմունքները, հետաքրքրությունները և այլն:)

**Մեկնաբանություններ ուսուցանման այցերի վերաբերյալ**

| Ամսաթիվ | Նկարագրեք, թե ինչպես են նրանք հասկացել կամ ընդունել այն, ինչ ուսուցանվել է, ինչպես են ընդունել պարտավորությունները և այլն: | Հաճախե՞լ է եկեղեցի այդ շաբաթ: Այո/Ոչ | Գրառում Մորմոնի Գրքի նրանց ընթերցանության վերաբերյալ |
|---|---|---|---|

**Նախկին ունկնդրի կարգավիճակը** (Նկարագրեք, թե ինչու այլևս չեն հետաքրքրվում Եկեղեցով: Նկարագրեք բոլոր հետևողական այցերի արդյունքները:)

| Ամսաթիվ | Այցի արդյունքը | Միսիոներներ |
|---|---|---|

*(Հակառակ կողմում)*

Երբ Ուսուցման Գրառումը ստեղծվում է, այն պետք է մնա տարածքի գրքում, քանի դեռ անձը կամ ընտանիքը լիովին ակտիվ է Եկեղեցում, չի տեղափոխվում կամ չի մահացել:



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

**Առաջադիմության Գրառում**

Օգտագործվում է ունկնդիրների, նորադարձների և ոչ ակտիվ անդամների մասին ծխի կամ ցցի ղեկավարներին տեղեկություն տրամադրելու համար:

Միսիոներների անունները

Ծուխ կամ ճյուղ | Ամսաթիվ

| Հատկանշեք* | Անուն | Տարիքը | Սեռը (Ա կամ Ի) | Հասցե | Հեռախոսի համար | Ուսուցանված դասեր (շրջանակի մեջ առեք, եթե ուսուցանվել է անդամի ներկայությամբ) | Ընկերակցող կամ տնային ուսուցիչ | Քանի անգամ է հաճախել եկեղեցի | Մկրտության և հաստատման ամսաթվերը: Մկրտվել է | Մկրտության և հաստատման ամսաթվերը: Հաստատվել է | Քահանայության կարգման ամսաթիվը | Ինչ օգնության կարիք կա |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

*Հատկանշեք. Ու = Ունկնդիր, Ն = Նորադարձ, ՈԱ = Ոչ ակտիվ անդամ, ՄԱ = Մասնակի անդամությամբ ընտանիք

**Հիմնական ցուցանիշները. Շաբաթվա վերջում** ____________

| | Մկրտված և հաստատված ունկնդիրներ: Մկրտվել է | Մկրտված և հաստատված ունկնդիրներ: Հաստատվել է | Ունկնդիրներ, որոնց մկրտության օրը նշանակվել է | կարդում, որոնք հաճախում են հաղորդության ժողովին | Անդամի ունկնդիրներ ունկնդիրներին ուսուցանված դասերը | Ուսուցանված այլ դասեր | Առաջադիմող ունկնդիրներ | Միջնորդներ: Ստացվել է | Միջնորդներ: Կապ է պահվել | Նոր ունկնդիրներ | Նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին ուսուցանված դասերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընթացիկ | | | | | | | | | | | |
| Նպատակ | | | | | | | | | | | |

Առաջադիմող ունկնդիրներ. Ունկնդիրներ, որոնք ուսուցանվել են երկու կամ ավելի անգամներ, և պահում են իրենց ստանձնած պարտավորությունները, այսինքն՝ կարդում են Մորմոնի Գիրքը, աղոթում են այդ գրքի ու Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին, ինչպես նաև հաճախում են եկեղեցի և այլն:

© 2004 IRI. 7/04. 7/04. Printed in the USA. 36985 201

**Առաջադիմության գրառում.** Այս գրառումը ձեզ թույլ է տալիս ամփոփել ունկնդիրների, նոր մկրտվածների և քիչ ակտիվ անդամների առաջընթացը: Այն ձեզ նաև հնարավորություն է տալիս զեկուցել հիմնական ցուցանիշների վերաբերյալ: Դրանք օգտագործեք ձեր ջանքերը համաձայնեցնելու համար ծխի և ցցի ղեկավարների հետ միսիոներական աշխատանքի

Նշումներ

համակարգման և ծխի խորհրդի ժողովների ժամանակ: Դուք կքարմացնեք այս գրառումը շաբաթվա ծրագրման ժամանակ, կամ ծխի խորհրդի ժողովներից առաջ: Հնարավորության դեպքում, այս գրառման օրինակները տվեք եպիսկոպոսին, ծխի միսիայի ղեկավարին կամ ծխի խորհրդի որևէ այլ անդամի՝ ամեն շաբաթ կամ ըստ պահանջի: Հավաստիացեք, որ այն տեղեկությունը, որը դուք ընդգրկում եք Առաջադիմության Գրառման ձևի մեջ, ամբողջական է, ճշգրիտ և մաքուր գրված: Սա կնպաստի, որ դուք ծխի խորհրդի վստահությանն արժանանաք:

**Հնարավոր ունկնդիրներ.** Այս ձևը ձեզ հնարավորություն է տալիս գրի առնել այն մարդկանց մասին տեղեկությունը, որոնք ունկնդիրներ դառնալու հավանականություն ունեն:

- Հնարավոր ունկնդրի կարգավիճակը: (Արդյոք նա հեռացվել է ցուցակից, արդյոք նա ուսուցանվում է, կամ արդյոք դուք հետագա քայլեր կատարելու կարիք ունեք:)
- Անձի հետ ծանոթությունը տեղի է ունեցել այլ անձի օգնությամբ, թե անմիջապես միսիոներների կողմից:
- Այն օրը, երբ անձի հետ կապ հաստատվեց:
- Կարևոր նկատառումներ:




Հնարավոր ունկնդիրներ ձևի վրա կարևոր տեղեկությունը արտագրեք Միսիոների Օրագրի «Հնարավոր Ունկնդիրներ» բաժնից: Այս տեղեկությունն օգտագործեք պլանավորելու համար հետագա այցերը, ծխի միսիայի նախագահի հետ վերանայելու անդամ-միսիոներ աշխատանքը և պլանավորելու այլ միջոցառումներ, որոնք կարող են օգնել այդ մարդկանց սկսել վերականգնված ավետարանի ուսումնասիրությունը: Այս ձևը նաև ծառայում է որպես պատմական գրառում այն միսիոներների համար, ովքեր ապագայում կնշանակվեն ձեր տարածքում: Երբ դուք տեղափոխվում եք մեկ այլ տարածք, մի մոռացեք արտագրել ձեր Միսիոների Օրագրից ողջ տեղեկությունը:


ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

**Ամփոփ հաշվետվություն հեռաձայնման միջոցով**

Շաբաթվա վերջին օրը

| Հաղորդող միավորի անունը (միսիոներներ, շրջան, տարածք) | Մկրտված և հաստատված ունկնդիրներ | | Մկրտության ամսաթիվ ունեցող ունկնդիրներ | Հաղորդության ժողովին հաճախող ունկնդիրներ | Ունկնդիրներին մատուցված դասեր անդամի ներկայությամբ | Մատուցված այլ դասեր | * Առաջադիմող ունկնդիրներ | Ուրիշների կողմից տրված անուններ | | Նոր ունկնդիրներ | Նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին մատուցված դասեր | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մկրտված | Հաստատված | | | | | | Ստացված | Կապ հաստատված | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| **Ընդհանուրներ** | | | | | | | | | | | | |

Շաբաթվա վերջին օրը

| Հաղորդող միավորի անունը (միսիոներներ, շրջան, տարածք) | Մկրտված և հաստատված ունկնդիրներ | | Մկրտության ամսաթիվ ունեցող ունկնդիրներ | Հաղորդության ժողովին հաճախող ունկնդիրներ | Ունկնդիրներին մատուցված դասեր անդամի ներկայությամբ | Մատուցված այլ դասեր | * Առաջադիմող ունկնդիրներ | Ուրիշների կողմից տրված անուններ | | Նոր ունկնդիրներ | Նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին մատուցված դասեր | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մկրտված | Հաստատված | | | | | | Ստացված | Կապ հաստատված | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| **Ընդհանուրներ** | | | | | | | | | | | | |

Շաբաթվա վերջին օրը

| Հաղորդող միավորի անունը (միսիոներներ, շրջան, տարածք) | Մկրտված և հաստատված ունկնդիրներ | | Մկրտության ամսաթիվ ունեցող ունկնդիրներ | Հաղորդության ժողովին հաճախող ունկնդիրներ | Ունկնդիրներին մատուցված դասեր անդամի ներկայությամբ | Մատուցված այլ դասեր | * Առաջադիմող ունկնդիրներ | Ուրիշների կողմից տրված անուններ | | Նոր ունկնդիրներ | Նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին մատուցված դասեր | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մկրտված | Հաստատված | | | | | | Ստացված | Կապ հաստատված | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| **Ընդհանուրներ** | | | | | | | | | | | | |

* Առաջադիմող ունկնդիրներ. Ունկնդիրներ, որոնց ուսուցանվել է երկու կամ ավելի դասեր և, որոնք պահում են Մորմոնի Գիրքը կարդալու և դրա մասին ու Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին աղոթելու, եկեղեցի հաճախելու և այլ պարտավորվածությունները:

© 2004 IRI. 7/04 (7/04) Printed in Germany 36984 201

**Ամփոփ հաշվետվություն հեռաձայնման միջոցով.** Օգտագործեք այս հաշվետվությունը ամեն շաբաթ հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություն հավաքելու համար: Յուրաքանչյուր զուգընկեր միսիոներ օգտագործում է Միսիոների Օրագրի վերջում գտնվող Ամփոփ հաշվետվություն հեռաձայնման միջոցով տեղեկությունը, տալով այն շրջանի ղեկավարին: Շրջանի ղեկավարը գրում է իր շրջանի յուրաքանչյուր միսիոներ-զուգընկերոջ անունը Ամփոփ Հաշվետվություն հեռաձայնման միջոցով ձևի մեջ, գրի առնելով նաև նրանց շաբաթվա ընդհանուրները յուրաքանչյուր ցուցանիշի համար: Այնուհետև նա գումարում է արդյունքները ստորին մասում ողջ շրջանի համար: Տեղեկությունը գնում է վերև: Շրջանի ղեկավարները շրջանի ընդհանուրները տալիս են իրենց տարածքի ղեկավարներին: Տարածքի ղեկավարները տարածքի ընդհանուրները տալիս են նախագահի օգնականներին: Նախագահների օգնականները միսիայի ընդհանուրները տալիս են միսիայի նախագահին:

**Միսիոների օրագիր.** Այս գործիքը ներառում է հետևյալը.

- Օրվա ծրագրերը վեց շաբաթվա համար, և յոթերորդ շաբաթվա ծրագիրը համառոտակի:
- Շաբաթվա նպատակների էջեր:
- Պլանավորման ուղեցույցի ամփոփագիր, այն իրադարձությունների ցանկը, որոնք անհրաժեշտ են մկրտության, հաստատման և Եկեղեցում գործելու համար, միսիոներական դասերի ծրագրերը, ուսուցանման համար մարդկանց գտնելու մտքեր և մկրտության հարցազրույցի հարցեր:
- Բաժին, որտեղ գրվում է ունկնդիրների և անդամների տվյալները, հասցեները և հեռախոսի համարները:
- Ամփոփ հաշվետվություն հեռաձայնման միջոցով ձևը, որտեղ կարող եք պահել ձեր շաբաթվա արդյունքները:

Նշումներ

Նշումներ

Շաբաթվա պլանավորման ժամանակ դուք ձեր շաբաթվա նպատակները կգրեք Միսիոների Օրագրի Շաբաթվա Նպատակներ էջի վրա, ինչպես ցույց է տրվում ստորև:

- Շաբաթվա նպատակ հիմնական յուրաքանչյուր ցուցանիշի համար:
- Շաբաթվա փաստացի արդյունքները: Ամեն օրվա արդյունքները տրվում են օրվա ժամացուցակում: Ամեն շաբաթվա ընդհանուրները տեղափոխվում են այստեղ:




- Մարդկանց անունները, որոնք կարող են ձեզ օգնել հասնել ձեր նպատակին (առաջադիմող ունկնդիրներ, նոր ունկնդիրներ): Նպատակներ դրեք, հաշվի առնելով այն, ինչ կարող է տեղի ունենալ այդ մարդկանց հետ (հաճախեն եկեղեցի, կարդան Մորմոնի Գիրքը, նշանակեն մկրտության օրը, և այլն):
- Դատարկ տեղ, որտեղ կարող եք գրել անձնական կամ զուգընկերոջ հետ կապված այլ նպատակներ:

Նշումներ

Ամեն օր, պլանավորելիս և գործելիս, դուք կօգտագործեք ձեր օրվա ժամացուցակը, ինչպես տրվում է ստորև.

- Օրվա ժամացուցակ, որտեղ դուք կարող եք գրի առնել ուսուցանման նպատակով պայմանավորվածությունները, ժողովները և ունկնդիրներ գտնելու փորձերը: Այնպես պլանավորեք, որպեսզի իմաստալից գործողություններ ունենաք օրվա բոլոր ժամերի համար: Այլընտրանքային ծրագրերը գրի առնելու համար նույնպես տեղ է տրամադրվել:
- Տեղ, որտեղ կարող եք գրի առնել այն գործերը, որ պետք է կատարեք (հեռախոսազանգեր, մարդիկ, որոնց հետ պետք է կապ հաստատել, դասերի նախապատրաստություն, հետագա այցերը և այլն).




- Դատարկ տեղ, որտեղ դուք կարող եք գրի առնել այն, ինչ սովորում եք, երբ պատրաստվում եք ուսուցանմանը.
- Օրվա նպատակներ և փաստացի արդյունքներ ընտրված հիմնական ցուցանիշների համար:

**Միսիոների շաբաթվա հաշվետվություն.** Այս հաշվետվությունը ձեզ հնարավորություն է տալիս հաղորդել անմիջապես ձեր միսիայի նախագահին ձեր ջանքերի մասին կամ անձնական որևէ հարցի մասին, որով կցանկանայիք նրա հետ կիսվել: Այս նամակը գրելիս, եղեք կոնկրետ, ըստ թեմայի, մի մտածեք, որ պետք է լրացնեք ողջ տարածքը: Նա միակ մարդն է, որը կկարդա այս նամակը, եղեք ազատ ձեր նկատառումները գրելիս:



Նշումներ

## Ինչպնս նպատակննր դննլ

Նպատակները արտացոլում են ձեր սրտերի ցանկությունները և մեր հասկացողությունը, թե ինչին պետք է հասնենք: Նպատակների և ծրագրերի միջոցով, մեր հույսերը վեր են ածվում գործի: Նպատակներ դնելը և պլանավորումը հավատքի գործեր են: Աղոթքով նպատակներ դրեք, որոնք ներդաշնակ են Փրկչի կոչին. «Բոլոր ազգերը աշակերտեցեք, նորանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը» (Մատթեոս ԻԸ.19):

> «Ես լիովին համոզված եմ, որ, եթե մեր կյանքում նպատակներ չենք դնում և չենք սովորում այն եղանակները, որոնցով կարող ենք հասնել մեր նպատակներին, մենք կարող ենք հասնել խոր ծերության և հետ նայել մեր կյանքին, տեսնելով միայն, որ հասել ենք մեր ողջ ներուժի միայն մի փոքր մասին: Երբ մարդը սովորում է տիրապետել նպատակ դնելու սկզբունքներին, նա կարողանում է մեծ արդյունքների հասնել այս կյանքում»:
>
> - ԵՐԵՑ Մ. ՌԱՍԵԼ ԲԱԼԼԱՐԴ
> TALK GIVEN TO SALT LAKE AREA YOUNG ADULTS, OCT. 18, 1981

Նպատակներ դրեք հիմնական յուրաքանչյուր ցուցանիշի համար: Կարող եք նաև նպատակներ դնել ձեր անձնական զարգացման համար: Արեք հնարավոր ամեն ինչ այդ նպատակներին հասնելու համար, միևնույն ժամանակ հարգելով ուրիշների ընտրությունը: Հաջողության վերջնական չափանիշը նպատակներն իրականացնելու մեջ չէ միայն, այլ այն ծառայության մեջ, որը դուք մատուցում եք, ինչպես նաև մարդկանց հաջողության մեջ է: Նպատակները միջոցներ են, որոնք ձեզ օգնում են բարին գործել Երկնային Հոր զավակների մեջ: Դրանք չպետք է օգտագործվեն ճանաչում ստանալու համար:

Մանրամասն մշակված նպատակները ձեզ հստակ ուղղություն կտան և կօգնեն ձեր օրերը լցնել այնպիսի միջոցառումներով, որոնք մարդկանց կօգնեն ամարցնել Փրկչի հանդեպ իրենց հավատքը և առաջանալ դեպի մկրտությունը, հաստատումը և Եկեղեցում լիարժեք գործունեությունը: Բարդ նպատակները կօգնեն ձեզ ավելի արդյունավետ աշխատել և կտանեն ձեզ դեպի աճ և զարգացում: Նպատակներ դնելիս հետևեք ստորև տրված ցուցումներին.

- Հետևեք Հոգուն:
- Կենտրոնացեք հիմնական ցուցանիշների վրա:
- Կենտրոնացեք մարդկանց վրա: Թեև թվեր կօգտագործեք, կարողացեք հիմնավորել ձեր թվերը մարդկանց անուններով, եթե հնարավոր է:
- Եղեք կոնկրետ և իրատեսական, սակայն նպատակներ դրեք, որոնք կօգնեն ձեզ աճել:
- Շաբաթվա և օրվա նպատակներ դրեք:
- Նպատակներ դրեք անձնական և զուգընկերոջ հետ ուսուցման համար, ներառյալ լեզվի ուսուցումը, եթե մեկ այլ լեզու եք սովորում:
- Ամեն օր, ամեն շաբաթ և վեց շաբաթ հետո գնահատեք ձեր առաջընթացը: Երբ նպատակին դժվարանում եք հասնել, գնահատեք ձեր ջանքերը և ուղիներ գտեք նպատակն իրականացնելու համար: Անհրաժեշտության դեպքում, փոխեք ձեր ակնկալիքները:

Ժամանակի ընթացքում ձեր ղեկավարները կարող են բարձր չափանիշներ սահմանել ձեր հայացքներն ու հավատքը մեծացնելու համար: Շրջանի, տարածքի և միսիայի չափանիշները ձեզ կարող են օգնել աճել, ավելի արդյունավետ աշխատել և հասնել գործունեության ավելի բարձր մակարդակի: Դրանք չպետք է օգտագործվեն որպես միավորներ, որոնք ձեզ և ձեր զուգընկերոջը ստիպում են որոշակի նպատակներ իրականացնել:

Նշումներ

**Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Շաբաթվա նպատակներ դրեք յուրաքանչյուր ցուցանիշի համար: Յուրաքանչյուր նպատակի համար, հարցրեք ձեզ.

- Կա՞ն արդյոք այս թվի հետ կապված անուններ:
- Արդյո՞ք նպատակը որոշակի է:
- Արդյո՞ք նպատակը իրատեսական է:
- Արդյո՞ք այդ նպատակը կօգնի մեզ աճել:
- Արդյո՞ք մենք պարտավորված ենք մեզ համարում հասնել այդ նպատակին:

Քննարկեք յուրաքանչյուր նպատակը: Անհրաժեշտության դեպքում, մտածեք, թե ինչպես այն կարող եք փոփոխել և ինչու:

## Շաբաթվա պլանավորում

Նպատակներ դնելուց հետո, որոշեք, թե ինչպես եք դրանք իրականացնելու: Դուք և ձեր զուգընկերը պետք է շաբաթվա պլանավորման ժամեր որոշեք այն օրը և այն ժամերին, որոնք քիչ արդյունավետ են միսիոներական աշխատանք կատարելու համար, օրինակ հինգշաբթի կամ ուրբաթ առավոտյան: Ձեր միսիայի նախագահը կնշանակի օր և ժամ շաբաթվա ձեր պլանավորման համար: Շաբաթվա այդ պլանավորումը կարող է երկու-երեք ժամ տևել:

Ձեր քննարկումները պետք է կենտրոնացած լինեն մարդկանց կարիքների վրա և նրանց օգնեն առաջադիմել: Շաբաթվա այդ պլանավորման ժամանակ վերանայեք ձեր նախկին նպատակները և նոր նպատակներ դրեք գալիք շաբաթվա համար: Հաշվի առեք ձեր աշխատանքի բոլոր ուղղությունները:

Կիրակի երեկոյան խորհուրդ է տրվում պատրաստել շաբաթվա հեռաձայնման միջոցով կատարվող ամփոփ հաշվետվությունը: Կիրակի երեկոյան պատրաստած հաշվետվությունը առավել ճշգրիտ և նորացված ձևով կներկայացնի միսիան, քանի որ մկրտությունները ու հաստատումները հիմնականում տեղի են ունենում շաբաթ կամ կիրակի օրերին:

Քանի որ շաբաթվա ձեր պլանավորման օրը տարբերվելու է հաշվետվության ձեր օրից, շաբաթվա պլանավորման համար նախատեսեք տաս օր: Օրինակ, եթե շաբաթվա ձեր պլանավորման օրը հինգշաբթի է, դուք կվերանայեք ձեր նպատակները մինչև շաբաթվա այդ օրը, և դուք կպլանավորեք ձեր նպատակների իրականացումը մինչև կիրակի օրը: Ապա, նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք հաջորդ շաբաթվա համար, երկուշաբթի օրից մինչև կիրակի: Կիրակի երեկոյան դուք կամփոփեք անցած շաբաթվա արդյունքները, և կունենաք ձեր ծրագիրը հաջորդ շաբաթվա համար: Ստորև տրվում է շաբաթվա պլանավորմանը վերաբերվող հրահանգների կիրառման նկարագրությունը:

**1. Աղոթեք ոգեշնչման համար և փնտրեք այն:** Սկսելուց առաջ ձեռքի տակ ունեցեք Միսիոների Օրագիրը և տարածքի գիրքը: Ձեր պլանավորումը սկսեք աղոթքից: Ոգեշնչում փնտրեք, քննարկելով մարդկանց կարիքները և որոշելով, թե ինչպես կարող եք ծառայել և օգնել նրանց առաջադիմել ավետարանում: Հատուկ աղոթեք ձեր ունկնդիրների համար: Հավատքով Երկնային Հորը խնդրեք օրհնել նրանց, տալով նրանց աղոթքների պատասխանները, եկեղեցի հաճախելու ցանկություն և այլն:

**2. Նպատակներ դրեք և պլանավորեք հաջորդ շաբաթվա ունկնդիրների մկրտություններն ու հաստատումները:** Վերանայեք Ուսուցման Գրառումը յուրաքանչյուր անձի համար, որը պարտավորվել է մկրտվել և հաստատվել հաջորդ շաբաթ: Քննարկեք, թե ինչ պայմանավորվածություններ պետք է ձեռք բերեք մկրտության հարցազրույցի, ծառայությունների և հաստատումների համար: Օգտվելով Ուսուցման Գրառումից, քննարկեք այն որոշումները, որոնք այդ մարդկանց համար դժվար են, և մտածեք, թե ինչպես կարող եք օգնել նրանց: Պլանավորեք նրանց հետ ամեն օր

Նշումներ

կապ պահպանել: Քննարկեք, թե ինչպես կարող եք օգնել ծխի միսիայի ղեկավարին եպիսկոպոսի հետ համաձայնեցնել նրանց հաստատումները հաղորդության ժողովի ժամանակ:

**3.** **Նպատակներ դրեք և պլանավորեք մկրտության որոշակի ամսաթիվ ունեցող ուսկնդիրների հետ ձեր աշխատանքը:** Վերանայեք Ուսուցման Գրառումը յուրաքանչյուր անձի համար, որը պետք է մկրտվի հաջորդ շաբաթների ընթացքում: Խոսեք այն դասերի մասին, որոնք նրանց պետք է ուսուցանեք: Մտածեք, թե ինչպես կարող եք նրանց օգնել պատրաստվել մկրտությանն ու հաստատմանը: Քննարկեք այն ունկնդիրներին, որոնք չեն մկրտվել իրենց համար նշանակված օրը: Ուշադիր քննեք և քննարկեք նրանց կարիքները: Նոր նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք, որոնք կօգնեն նրանց հասնել այն օրվան և ժամին, երբ կկարողանան մտնել մկրտության ուխտի մեջ և ստանալ հաստատման արարողությունը: Ձեր Ուսուցման Գրառման մեջ մատիտով նշեք այն սկզբունքները, որոնք պատրաստվում եք նրանց սովորեցնել և պարտավորությունները, որոնք նրանք պետք է ընդունեն և պահեն: Մտածեք, թե ինչպես կարող եք նրանց օգնել ստանալ այդ դասերը և պահել այդ պարտավորությունները:

**4.** **Նպատակներ դրեք և ծրագրեք կազմեք, որոնք ունկնդիրներին կօգնեն հաճախել հաղորդության ժողովներին:** Վերանայեք Ուսուցման Գրառումը յուրաքանչյուր անձի համար, և քնարկեք նրա հաճախելիությունը հաղորդության ժողովին: Հաղորդության ժողովին կանոնավոր կերպով հաճախող ունկնդիրների համար քննարկեք, թե ինչ կարող եք անել, օգնելու համար նրանց շարունակ ունենալ հոգևոր և վեհ փորձառություն: Նրանց համար, ովքեր ընդհանրապես չեն հաճախել հաղորդության ժողովին, կամ հաճախել են միայն մեկ անգամ, կամ հաճախում են ժամանակ առ ժամանակ, քննարկեք, թե ինչը կարող է լինել նրանց չհաճախելու պատճառը: Օրինակ, մի գուցե նրանք տրանսպորտի կարիք ունեն, կամ վախենում են կամ անծանոթ են Վերջին Օրերի Սրբերի ծառայություններին, կամ անցյալում բացասական փորձ են ունեցել: Քննարկեք, թե ինչ կարող եք անել օգնելու համար նրանց հաղթահարել այդ խոչընդոտները: Նպատակներ դրեք, թե քանի նոր ունկնդիր եք դուք ցանկանում տեսնել հաղորդության հաջորդ ժողովին: Պլանավորեք, թե ովքեր են այդ մարդկանց բերելու եկեղեցի, ովքեր են դիմավորելու նրանց և ովքեր են նստելու նրանց կողքին ժողովների ժամանակ: Պլանավորեք խոսել քվորումի և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների և ուսուցիչների հետ, որոնք պատասխանատու են այն դասերի համար, որոնց պետք է ունկնդիրները մասնակցեն: Պլանավորեք տեղյակ պահել եպիսկոպոսին: Առաջադիմության Գրառման մեջ նշեք այն եղանակները, որոնցով կարող է օգնել ծխի խորհուրդը: Ծրագրեր կազմեք շաբաթվա ամեն օրվա ձեր անհրաժեշտ գործերի համար, որպեսզի պատրաստեք այդ մարդկանց եկեղեցի հաճախելուն:



**5.** **Նպատակներ դրեք և այն դասերի ծրագրերը կազմեք, որոնք պետք է ուսուցանվեն առաջադիմող ունկնդիրներին:** Վերանայեք Ուսուցման Գրառումը առաջադիմող յուրաքանչյուր ունկնդրի համար, որին սովորեցրել եք անդամի ներկայությամբ: Խոսեք այն մասին, թե ինչպես են, ըստ ձեզ, նրանք ընդունում ուղերձը: Վերանայեք Ուսուցման Գրառման մեջ նշված պարտավորություններն ու որոշումները, որոնք դժվար են նրանց համար: Քննարկեք, թե ինչպես կարող են նրանց օգնել ծխի անդամները և ծխի խորհուրդը, որպեսզի նրանք առաջադիմեն: Նպատակներ դրեք այն դասերի համար, որոնք պետք է ուսուցանեք, այն պարտավորությունների համար, որոնք նրանք

Նշումներ

պետք է պահեն, հատկապես եկեղեցի հաճախելու հետ կապված, ինչպես նաև կարևոր այն փորձառությունները, որոնք դուք կօգնեք նրանց ունենալ գալիք մի քանի շաբաթների ընթացքում:

Վերանայեք Ուսուցման Գրառումը յուրաքանչյուր առաջադիմող ունկնդրի համար, որին սովորեցրել եք առանց անդամի ներկայության: Դրանք կարող են լինել այն ունկնդիրները, որոնց դուք ինքներդ եք գտել: Քննարկեք, թե քահանայության կամ օժանդակ կազմակերպությունների որ նախագահները կարող են ընկերակցել նրանց հետ: Վերանայեք այն դասերը, որոնք դուք պետք է սովորեցնեք և պարտավորությունները, որոնք պետք է օգնեք նրանց պահել: Նպատակներ դրեք այն դասերի համար, որոնք պետք է սովորեցնեք, ինչպես պետք է ներգրավեք անդամներին և ինչպես պետք է այդ ունկնդիրներին օգնեք հաճախել հաղորդության ժողովին: Այդ նպատակները գրի առեք Ուսուցման Գրառման մեջ և անհրաժեշտ ծրագրեր կազմեք:

**6. Նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք այն դասերի համար, որոնք պետք է ուսուցանվեն բոլոր այլ ունկնդիրներին:** Վերանայեք Ուսուցման Գրառումը յուրաքանչյուր ունկնդրի համար, որը չի առաջադիմում: Քննարկեք, թե ինչու յուրաքանչյուր ունկնդիր չի պահում իր պարտավորությունները: Քննարկեք, թե ինչպես կարող եք ներգրավել քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին այդ ունկնդիրների հետ ընկերակցելու գործում: Քննարկեք, այն նույն հարցերը, որոնք տրվում են քայլ 5-ում: Նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք, որպեսզի օգնեք այդ մարդկանց առաջադիմել: Այդ նպատակները գրի առեք Ուսուցման Գրառման մեջ:

**7. Նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք, որոնք կօգնեն կապ հաստատել և ուսուցանել այն մարդկանց, որոնց անունները տվել են անդամները, ունկնդիրները, ուղանդամները և Եկեղեցու կենտրոնը:** Վերանայեք Հնարավոր Ունկնդիրներ ձևերը: Վերանայեք տրամադրված բոլոր անունները: Վերանայեք բոլոր ծանոթների անունները, որոնց հետ կապ դեռ չեք հաստատել: Նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք, որոնք ձեզ կօգնեն շաբաթվա ընթացքում որքան հնարավոր է շատ ծանոթների հետ կապվել, հնարավորության դեպքում, բոլորի հետ: Եկեղեցու կենտրոնից ստացած անունների դեպքում, պետք է անել հնարավոր ամեն ինչ նրանց հետ 24 ժամվա ընթացքում կապվելու համար: Քննարկեք, թե ինչպես կարող եք զրուցել յուրաքանչյուր անձի կամ ընտանիքի հետ, և ինչ ուղերձ կարող եք սովորեցնել: Եթե անունը ստացվել է Եկեղեցու կենտրոնից, քննարկեք, թե ինչպես կարող եք ուսուցանել ավետարանի ուղերձը, օգտագործելով տեսաֆիլմ, գիրք կամ որևէ այլ նյութ, որ նրանք խնդրել են: Հավաստիացեք, որ ունեք նրանց խնդրած նյութը: Եթե հարմար է, հեռազանգեք և հանդիպում նշանակեք: Քննարկեք ձեր հետագա քայլերը:

**8. Նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք անդամներից, ունկնդիրներից, ուղանդամներից ավելի շատ անուններ ստանալու համար:** Աղոթքով գտեք այլ անդամների և ունկնդիրների, որոնց կարող եք այցելել: Պլանավորեք, թե ինչպես կարող եք օգնել նրանց հրավիրել իրենց ընկերներին և ընտանիքի անդամներին վերականգնված ավետարանի մասին սովորելու համար: Քննարկեք, թե ինչպես կարող եք նրանց հրավիրել մասնակցել միսիոներական աշխատանքին: Հանդիպումներ նշանակեք և ծրագրեր կազմեք:

**9. Նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք այն դասերի համար, որոնք պետք է ուսուցանեք վերջերս մկրտվածներին և ոչ ակտիվ անդամներին:** Վերանայեք Ուսուցման Գրառումը յուրաքանչյուր վերջերս մկրտվածի և ոչ ակտիվ անդամի համար, որոնց ուսուցանում եք: Նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք այն դասերի համար, որոնք պետք է ուսուցանեք: Մտածեք, թե ինչպես կարող եք օգնել այդ մարդկանց հաճախել հաղորդության ժողովին և պահել պարտավորությունները:

**10. Նպատակներ դրեք և ծրագրեր կազմեք նոր ունկնդիրներ գտնելու համար:** Վերանայեք ծանոթների միջոցով նոր ունկնդիրներ գտնելու նախորդ շաբաթվա ջանքերը, ծառայության

Նշումներ

հնարավորությունները և անձամբ ունկնդիրներ գտնելու գործողությունները: Օգտագործեք ձեր տարածքի գրքի «Հնարավոր Ունկնդիրներ» բաժնի տեղեկությունը: Քննարկեք, ինչու են որոշ մարդիկ ունկնդիր դառնում, իսկ մյուսները՝ ոչ: Նպատակներ դրեք այս շաբաթ որոշակի թվով նոր ունկնդիրներ գտնելու համար: Գտեք այն մարդկանց, որոնք ունկնդիր դառնալու լավ հավանականություն ունեն: Գտեք նաև անդամների կամ մասնակի անդամությամբ ընտանիքների, որոնց ցանկանում եք այցելել, ծանոթներ կամ ծառայության հնարավորություններ: Պլանավորեք, թե գտնելու ինչ եղանակներ եք օգտագործելու, օրինակ փոխանցման քարտեր, տեսաերիզներ, DVD սկավառակներ, սուրբ գրություններ կամ գրքույկներ: Քննարկեք նաև, թե որտեղ եք գնալու մարդկանց հանդիպելու համար, քանի մարդու հետ եք կապվելու ամեն օր, որ ունկնդիրներին եք խնդրելու անուններ տրամադրել, նախկին որ ունկնդիրներին եք այցելելու, ինչպես կարող է օգնել ծխի խորհուրդը, և այլն: Հաջորդ օրվա համար կոնկրետ ծրագիր կազմեք: Մնացած ժամանակը լրացրեք փնտրելու գործողություններով, որոնք կօգնեն հասնել ձեր նպատակներին: Նպատակներ դրեք և պլանավորեք խոսել որքան հնարավոր է շատ մարդկանց հետ, որոնց Տերը կղնի ձեր ճանապարհին: Միշտ ձգտեք գտնել մարդկանց, ում կարող եք ուսուցանել:

**11. Պլանավորեք աշխատել ծխի խորհրդի հետ:** Եպիսկոպոսը նախագահող իշխանությունն է: Հարգեք և պատվեք նրա իշխանությունը: Նրա ղեկավարությամբ վերանայեք Առաջադիմության Գրառումը, որն օգտագործել եք միսիոներների աշխատանքը համակարգող նախորդ ժողովի կամ ծխի խորհրդի ժամանակ: Քննարկեք այն հանձնարարությունները, որոնք ստացել եք եպիսկոպոսից կամ ծխի միսիայի ղեկավարից, և զեկուցեք, թե արդյոք կատարել եք դրանք: Քննարկեք, թե ինչպես կարող եք ներգրավել մյուսներին օգնելու համար, օրինակ ծխի միսիայի ղեկավարին, քահանայության կամ օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին և մյուս անդամներին: Մանրամասն պատրաստեք Առաջադիմության Գրառումը ծխի խորհրդի գալիք ժողովների, քահանայության գործադիր կոմիտեի ժողովի կամ միսիոներների աշխատանքը համակարգող ժողովի համար: Ուշադիր եղեք, որ այն գրվի մաքուր և հստակ: Նպատակներ դրեք և պլանավորեք ծխի ղեկավարների հետ ներդաշնակության մեջ աշխատելու համար: Հնարավորության դեպքում, պատրաստեք Առաջադիմության Գրառման օրինակներ ծխի այն ղեկավարների համար, որոնք ներկա կլինեն:

**12. Պլանավորեք պարբերաբար տեղի ունեցող ժողովները:** Ձեր Միսիոների Օրագրի մեջ նշեք այն ժողովները, որոնք տեղի են ունենում պարբերաբար, օրինակ շրջանի ժողովները, տարածքային համաժողովները, հարցազրույցները և Եկեղեցու ժողովները: Քննարկեք այն հանձնարարությունները, որոնք պետք է կատարեք այդ ժողովներից առաջ, և դրանք ավելացրեք ձեր Նշումներ/Գործերի Ցանկ բաժնում:

**13. Զուգընկերոջ հետ հարաբերությունների վերանայում:** Շաբաթվա ձեր պլանավորման վերջում ձեր զուգընկերոջ հետ կիսվեք ձեր նպատակներով և խնդրեք նրա օգնությունը դրանք իրականացնելու գործում: Քննարկեք ձեր զուգընկերոջ հետ ձեր հարաբերությունների ամրության մասին: Քննարկեք այն խոչընդոտները, որոնք խանգարում են ձեր զուգընկերոջ հետ միասնական աշխատել կամ հնազանդ լինել: Լուծեք հակասությունները: Ձեր զուգընկերոջը ասացեք, թե որոնք են, ըստ ձեզ, նրա ուժեղ կողմերը: Խորհուրդներ հարցրեք, թե ինչպես կարող եք բարելավվել: Անհրաժեշտության դեպքում նպատակներ դրեք, որոնք կօգնեն բարելավել ձեր հարաբերությունները: Ավարտեք աղոթքով:

## Օրվա պլանավորում

Յուրաքանչյուր օրվա վերջում պլանավորում կատարեք: Եթե դուք դաս եք ուսուցանում, կարող եք դրսում լինել մինչև երեկոյան 9:30: Հակառակ դեպքում, վերադարձեք ձեր բնակարան մինչև երեկոյան 9:00 և օրվա պլանավորում կատարեք 9:00-ից մինչև 9:30: (Միսիայի նախագահները իրավունք ունեն այդ ժամանակը համապատասխանեցնել տեղական պայմաններին:) Օրվա

Նշումներ

պլանավորման ժամանակ կիրառեք այն նույն սկզբունքներն ու հրահանգները, որոնց հետևում եք շաբաթվա պլանավորման ժամանակ, սակայն ավելի պարզ տարբերակով: Աղոթեք, երբ քննարկում եք այն դասերը և թեմաները, որոնք ուսումնասիրում եք անհատական և զուգընկերոջ հետ պլանավորման ժամանակ, որոնք օգնում են ձեզ կատարել ձեր ծրագիրը: Այդ թեմաները գրի առեք օրվա ժամացուցակում հատկացված տեղում: Վերանայեք օրվա ձեր ծրագիրը: Օրվա բոլոր ժամերի համար իմաստալից գործողություններ պլանավորեք: Կիրակի օրվա երեկոյան պլանավորման ժամանակ, ամփոփեք և ներկայացրեք ձեր Ամփոփ Հաշվետվությունը, գրեք ձեր միսիայի նախագահին ուղղված շաբաթական նամակը և ամփոփեք գալիք շաբաթվա ձեր նպատակները:

Հաջորդ օրը, ձեր բնակարանից դուրս գալուց առաջ, վերանայեք ձեր նպատակները, ծրագրերը և ժամացուցակը: Կատարեք անհրաժեշտ փոփոխությունները: Միշտ աղոթեք բնակարանից դուրս գալուց առաջ: Դուք կարող եք տեսնել, թե որքան արդյունավետ են ձեր օրվա ծրագրերը, երբ կարիք չեք ունենում ուրիշներին հարցնել. «Հիմա ի՞նչ պետք է անեմ»:

## Հաշվետվություն

Հաշվետվության սկզբունքը շատ կարևոր է Աստծո հավերժական ծրագրում: Մենք բոլորս կկանգնենք Տիրոջ առաջ վերջին դատաստանի ժամանակ և հաշվետվություն կտանք այն ամենի համար, ինչ արել ենք այն ինքնարավորություննների սահմաններում, որոնք Նա տվել է մեզ (տե՛ս Ալմա 5.15–19; ՎևՈւ 137.9): Ձեր միսիայի ժամանակ հաշվետվության մասին շատ բան կա սովորելու, ինչը ձեզ կօգնի ողջ կյանքի ընթացքում: Հաշվետվության սկզբունքը ձեզ կօրհնի, եթե դուք.

> *«Երբ աշխատանքը գնահատվում է, այն բարելավվում է: Երբ աշխատանքը գնահատվում և զեկուցվում է, բարելավման արագությունը մեծանում է»:*
>
> - ԵՐԵՑ ԹՈՄԱՍ Ս. ՄՈՆՍՈՆ
>
> “THOU ART A TEACHER COME FROM GOD,” *IMPROVEMENT ERA*, DEC. 1970, 101

- Ձեր նպատակները սահմանելիս և պլանավորելիս, ձեր ջանքերի մասին զեկուցեք միսիայի ձեր ղեկավարներին և Տիրոջը աղոթքի միջոցով:
- Անձնական պատասխանատվություն զգաք այն սուրբ վստահության համար, որը Տերը տվել է ձեզ:
- Իմաստալից նպատակներ դնեք:
- Ինքներդ նախաձեռնեք հաշվետու լինել ձեր աշխատանքի համար Տիրոջը և ձեր միսիայի ղեկավարներին: Մի սպասեք, որ ձեզ խնդրեն դա անել: Թույլ մի տվեք, որ մյուսները ձեզանից հաճախ տեղեկություն պահանջեն: Պատրաստ եղեք զեկուցելու ձեր աշխատանքի մասին:
- Լիովին պատասխանատվություն կրեք ձեր ջանքերի համար: Երբեք մի մեղադրեք ուրիշներին բարդ իրավիճակների կամ առաջադիմության բացակայության համար:
- Աշխատեք սովորել ձեր ղեկավարներից և խնդրեք նրանց ձեզ բարելավման ճանապարհներ ցույց տալ:
- Մտադիր եղեք անելու լավագույնը:

Հաշվետվությունը չի արվում ձեր միսիայի վերջում միայն: Այդ սկզբունքը ազդում է նրա վրա, թե ինչպես եք դուք սկսում, ինչպես եք մտածում և զգում այն պատասխանատվության մասին, որը Տերը տվել է ձեզ, ինչպես եք մոտենում ձեր աշխատանքին և ինչպես եք համբերում: Ձեր միսիայի հանդեպ ունեցած մոտեցումը արտացոլում է ձեր սերը Երկնային Հոր և Նրա Որդու հանդեպ և քահանայության հանդեպ ձեր հարգանքը:

Նշումներ

Երբ առանձին կամ զուգընկերոջ հետ աղոթք եք ասում, ոգեշնչում փնտրեք այն մասին, թե ինչ պետք է անեք ամեն օր: Հետևելով ձեր ծրագրերին, աղոթեք և խնդրեք Տիրոջը առաջնորդել ձեզ: Օրվա ընթացքում ձեր սրտում աղոթք ունեցեք, որպեսզի Հոգին օգնի ձեզ իմանալ, թե ուր գնալ, ինչ անել և ինչ ասել: Հարցրեք ինքներդ ձեզ. «Էլ ի՞նչ ես կարող եմ անել»: Օրվա վերջում ձեր աղոթքում զեկուցեք ձեր աշխատանքների մասին:

Դուք ամեն շաբաթ հաշվետվություն կտաք ձեր միսիայի նախագահներին, օգտագործելով Ամփոփ Հաշվետվություն հեռաձայնման միջոցով ձևը: Եթե դուք միսիայի նախագահ եք, ապա կստանաք այս տեղեկությունը այլ միսիոներներից: Հետաքրքրվեք ոչ միայն թվերով, այլ նաև նրանց կյանքով, ինչպես նաև այն մարդկանց կյանքով, ում նրանք սովորեցնում են: Մի օգտագործեք այս եղանակները կամ ստացված տեղեկությունը ուրիշներին վերահսկելու կամ օգտագործելու համար: Այս եղանակներով ստացված տեղեկությունը ձեզ հնարավորություն կտա գովել միսիոներներին իրենց նվիրված աշխատանքի համար, և ապա ուսուցանման առիթներ տեսնել:

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչ է նշանակում հաշվետու լինել:**

ՎևՈւ 58.26–33 ՎևՈւ 101.78 Եզեկիել ԼԳ.16

**Ինչո՞ւ է ընտրության ազատությունը կարևոր հաշվետու լինելու գործում:**

2 Նեփի 2.26–29 Հելաման 14.30–31

**Ինչպե՞ս պետք է միսիոները և միսիայի նախագահը միասին աշխատեն:**

ՎևՈւ 38.23–25 Եբրայեցիս ԺԳ.17–18

## Հիշեք սա

- Ձեր ջանքերը կենտրոնացրեք ձեր նպատակի վրա:
- Նպատակներ դրեք համաձայն հիմնական ցուցանիշների:
- Ջանասիրաբար աղոթեք ձեր նպատակների և ծրագրերի համար:
- Օգտվեք տարածքի գրքից և Միսիոների Օրագրից օգնելու համար մարդկանց հավատք զարգացնել, ապաշխարել, մկրտվել, ստանալ Սուրբ Հոգու պարգևը և համբերել մինչև վերջ:
- Հիմնական ցուցանիշներից յուրաքանչյուրի համար նպատակներ դրեք, որոնք կօգնեն ձեզ աճել, հավատք գործադրել և արդյունավետ աշխատել:
- Կատարեք շաբաթվա և օրվա պլանավորում, որոնք կօգնեն ուրիշներին աճել ավետարանում:
- Ձեր ջանքերի մասին զեկուցեք Տիրոջն ու միսիայի ղեկավարներին:

# Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

Նշումներ

## Անհատական ուսումնասիրություն

- Ձեր աշխատանքային տետրում մեկ նախադասությամբ պատասխանեք «Մտածեք այս մասին» բաժնում տրված հարցերին:

- Մի քանի րոպե մտածեք միսիայի ձեր վերջին օրվա մասին: Երբ այդ օրը գա.
  - Ի՞նչ դուք կուզենաք ասել այն մասին, թե ինչ եք արել որպես միսիոներ:
  - Ի՞նչ եք դուք ուզում դառնալ:
  - Ի՞նչ տարբերություններ եք ուզում, որ ուրիշները նկատեն ձեր մեջ:

  Ձեր աշխատանքային տետրում գրեք այս հարցերից յուրաքանչյուրի պատասխանը: Մտածեք, թե ինչ պետք է դուք անեք այժմ այդ նպատակներին հասնելու համար: Գրի առեք այն ծրագրերը, որոնց մասին մտածում եք:

## Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Օգտվելով ձեր տարածքի գրքից, պատասխանեք ստորև տրված հարցերին.
  - Արդյո՞ք բոլոր գրառումները թարմ են, ճշգրիտ և ընթեռնելի:
  - Արդյո՞ք այն միսիոները, որը նոր է ձեր տարածքում, կկարողանա կարդալ տարածքի գիրքը և իմանալ, թե որ փուլում են մարդիկ իրենց հոգևոր զարգացման գործում, և ինչ պետք է արվի նրանց օգնելու համար:
  - Արդյո՞ք այն միսիոները, որը նոր է ձեր տարածքում, կկարողանա օգտվել նոր ունկնդիրներ փնտրելու ձեր արդեն իսկ կատարած ջանքերից:
  - Պատկերացրեք, թե դուք ներկայացնում եք տարածքի ձեր գիրքը Տիրոջը, հաշվետու լինելով այն մասին, թե ինչպես եք հոգ տարել ձեր տարածքի մարդկանց համար: Արդյո՞ք Տերը գոհ կլինի ձեր ներդրած ջանքերից:

- Քննարկեք ձեր նոր ունկնդիրներից մեկին: Միսիոների ձեր Օրագրում գտեք «Մկրտությանը, հաստատմանը և Եկեղեցում ակտիվ գործունեությանը նախորդող քայլեր» վերնագրով էջը: Ընտրեք որևէ իրադարձություն և մի ցանկ կազմեք այն ամենի համար, ինչ պետք է անեք, որպեսզի այդ իրադարձությունը տեղի ունենա: Քննարկեք, թե ինչպես կարող եք պլանավորել այդ գործերը, որպեսզի դա կատարվի մոտ ապագայում:

- Ձեր զուգընկերոջ հետ քննարկեք հետևյալ փոխաբերությունը: Գնահատեք, թե որքան երկար ժամանակ է ձեր «ուռկանը» ջրի մեջ լինում ամեն օր:

  «Ձեզանից ոչ մեկը չպետք է նմանվի այն ձկնորսին, որը մտածում է, թե ողջ օրը ձուկ է բռնել, մինչ, իրականում, իր ժամանակի մեծ մասը ծախսել է ջուր մտնելու և դուրս գալու, ճաշելու և ձկնորսական սարքերով զբաղվելու վրա: Ձկնորսի հաջողությունը կախված է նրանից, թե որքան երկար կլինի ուռկանը ջրի մեջ, ոչ թե նրանից, թե որքան երկար ժամանակ եք դուք բացակայում ձեր բնակարանից: Որոշ ձկնորսներ տնից բացակայում են տասներկու ժամ և իրենց ուռկանը ջրում լինում է տասն ժամ: Մյուս ձկնորսները տնից բացակայում են տասներկու ժամ, սակայն նրանց ուռկանը ջրում է լինում միայն երկու ժամ: Վերջինները կարող են զարմանալ, թե ինչու չեն ունենում նույն հաջողությունը, ինչպես մյուսները:

  Նույն սկզբունքը վերաբերվում է միսիոներներին, ում Վարդապետը կոչել է «մարդկանց որսորդներ: Միսիոները պետք է իր ուռկանը ջուրը գցի այն նույն պահից, երբ նա դուրս է գալիս իր բնակարանից» (Dallin H. Oaks, seminar for new mission presidents, June 20, 2000):

Նշումներ

### Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Միսիոներների համար կարդացեք հետևյալ իրավիճակներից որևէ մեկը: Միսիոներներին խնդրեք փոքր խմբերով քննարկել այն նպատակներն ու ծրագրերը, որոնք կօգնեն այս օրինակներում նկարագրված մարդկանց առաջադիմել դեպի մկրտություն և հաստատում: Յուրաքանչյուր խմբին խնդրեք կիսվել իրենց մտքերով:

  *Իրավիճակ առաջին.* Դուք հանդիպում եք Լարիին և Բեթին, երբ նրանք ծառայություն են մատուցում աղքատների ճաշարանի խոհանոցում: Դուք նրանց մեկ դաս եք սովորեցրել, իսկ այժմ նրանք ավելին են ուզում իմանալ: Նրանք չեն ճանաչում Եկեղեցու ոչ մի անդամի: Բեթը քրիստոնյա է, իսկ Լարին ոչ մի կրոնի չի դավանում: Նրանք ամուսնացած չեն, սակայն միասին են ապրում: Լարին աշխատում է երեկոյան 4:00-ից մինչև կեսօր: Բեթն աշխատում է ցերեկվա ժամերին:

  *Իրավիճակ երկրորդ.* Սթիվը ստացել է բոլոր դասերը և ամիսը առնվազն երկու անգամ հաճախում է Եկեղեցի: Նա հավատում է, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է և որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Նրա ընտանիքի անդամները նվիրված կաթոլիկներ են և հավանություն չեն տալիս միսիոներների հետ նրա հանդիպումներին:

  *Իրավիճակ երեք.* Ջիլը քոլեջի ուսանող է: Նա մի ընկեր ունի, որը Եկեղեցու անդամ է: Նրա այդ ընկերը նրան հրավիրել է հանդիպել ձեզ հետ: Դուք նրան երկու դաս եք սովորեցրել: Նրա ընկերը, որն Եկեղեցու անդամ է, ներկա է եղել: Նա դեռ չի հաճախել եկեղեցի և այնքան զբաղված է իր տնային աշխատանքներով, որ դժվարանում է կարդալ Մորմոնի Գիրքը:

- Միսիոներներին հրավիրեք կիսվել իրենց փորձով, երբ նպատակներ դնելով և ծրագրեր կազմելով, կարողացել են օգնել մարդկանց.
  - Ավելի խորը հավատք զարգացնել Փրկչի հանդեպ:
  - Ապաշխարել և փոփոխություններ կատարել, որոնք նրանց ավելի կմոտեցնեն Աստծուն:
  - Ստանալ մկրտության և հաստատման ուխտերը:
  - Վերադառնալ Եկեղեցի և նորացնել մկրտության ուխտերը:

- Միսիոներներին բաժանեք երեք խմբերի: Բացատրեք, որ յուրաքանչյուր խումբը մի կարևոր հանձնարարություն կստանա: Ապա յուրաքանչյուր խմբին հետևյալ հանձնարարություններից մեկը տվեք.
  - Նոր աշխատանքային տարածք բացեք:
  - Պատրաստեք տարածքի ուսուցման համաժողով, որի ժամանակ ունկնդիրներին կներկայացնեք Մորմոնի Գիրքը:
  - Ունկնդրի ընտանիքին օգնեք ինտեգրվել ծխի գործերին: Ընտանիքն ունի երեք զավակ. 8 տարեկան աղջիկ, 12 տարեկան աղջիկ և 16 տարեկան տղա:

  Միսիոներներին ասացեք, որ նրանք ունեն ութ րոպե ծրագիր կազմելու համար: Միսիոներներից մեկը պետք է գրի առնի ծրագիրը, ներառյալ օրվա գործերը:

  Յուրաքանչյուր խմբի խնդրեք ներկայացնել իր ծրագիրը: Ամեն ներկայացումից հետո հարցրեք.

  - Ի՞նչ պետք է իմանային միսիոներները յուրաքանչյուր իրավիճակի մասին:
  - Ինչպիսի՞ն կլինեն արդյունքը, եթե դուք չպլանավորեիք իմաստալից միջոցառումներ կամ ընդհանրապես ծրագիր չունենայիք:

  Բոլոր ծրագրերը ներկայացնելուց հետո հարցրեք.

  - Ինպե՞ս է պլանավորումը և նպատակներ դնելը սիրո/ հավատքի դրսևորում հանդիսանում:

Նշումներ

## Միսիայի Նախագահ

- Միսիոնարներին խնդրեք իրենց տարածքի գիրքը բերել տարածքային համաժողովին կամ հարցազրույցներին: Իրքներդ տարածքի գիրքը կարդալուց բացի, լավ կլինի, որ տարածքի գրքերը կարդան նաև միսիայի ղեկավարները կամ ձեր կինը:

- Ժամանակ առ ժամանակ ներկա եղեք միսիոնարների շաբաթվա կամ օրվա պլանավորմանը:

- Ժամանակ առ ժամանակ հարցազրույցներ անցկացրեք միսիոնարների բնակարաններում: Այդ ժամանակ, թող ձեր կինը կամ նախագահի օգնականները աչքի անցկացնեն միսիոնարների ձեռքի տակ եղած գրքերը և օրվա ծրագրերը:

- Հաճախակի աչքի անցկացրեք միսիոնարների օրվա ծրագրերը:

- Ժամանակ առ ժամանակ հաճախեք ծխի խորհրդի ժողովին:

Նշումներ



# Ինչպե՞ս ես կարող եմ գտնել մարդկանց, որոնց կարող եմ սովորեցնել

Նշումներ

## Մտածեք այս մասին

- Ի՞նչ է նշանակում գտնել նրանց, ովքեր կընդունեն ձեզ (ՎևՈւ 42.8):
- Ինչպե՞ս ես կարող եմ մեծացնել իմ հավատքը, որպեսզի գտնեմ մարդկանց, որոնց կուսուցանեմ:
- Ինչո՞ւ ես պետք է ներգրավեմ անդամներին իմ որոնումների մեջ:
- Ո՞րն է միջնորդների և Եկեղեցու կենտրոնի կողմից տրվող անունների դերը:
- Ո՞րն է կապը գտնելու և սովորեցնելու միջև:
- Ո՞րն է ծառայության դերը ուսուցանման համար մարդկանց գտնելու գործում:
- Որո՞նք են այն մտքերը, որոնք կօգնեն ուսուցանման համար մարդիկ գտնել, որոնք ես դեռ չեմ փորձել:

## Գտնելու հավատք զարգացնել

Այս գլխի վարդապետություններն ու սկզբունքները կամրացնեն ձեր հավատքը, որ Տերը պատրաստում է մարդկանց, որոնք կընդունեն ձեզ և վերականգնված ավետարանը: Նա ձեզ կտանի նրանց մոտ կամ նրանց կբերի ձեզ մոտ: Գտնելու գործընթացը տարբեր է տարբեր երկրներում: Միսիոներները և միսիայի նախագահները պետք է հարմարվեն պայմաններին: Անկախ տարբերություններից, ինչևէ, գտնելու սկզբունքները համընդհանուր են:

**Աստծո ընտանիքը.** Երկրի վրա բոլոր մարդիկ Աստծո ընտանիքի անդամներն են եղել նախաերկրային կյանքում (տե՛ս Գործք ԺԷ.26–29; Եբրայեցիս ԺԲ.9): Մենք Աստծո ընտանիքի մասն ենք այս կյանքում ևս և կարող ենք ավելի մեծ օրհնություններ վայելել որպես

© 1990 Del Parson. Մի բազմացրեք:

Նշումներ

Նրա ընտանիքի անդամներ գալիք կյանքում: Աստծո ընտանիքում մենք բոլորս եղբայրներ և քույրեր ենք: Այս գիտելիքը մեզ ինքնության և պատկանելիության զգացում է պարգևում: Այն մեզ Աստծո ներկայության մեջ հավերժական կյանքի հույս է տալիս: Այդ հիմնական ճշմարտությունները մենք հասկանում ենք Վերականգնման շնորհիվ: Վերականգնված ճշմարտությունները ձեր եղբայրներին և քույրերին սովորեցնելը ձեր պարտականությունն ու օրհնությունն է: Ալմայի նման, որը ցանկանում էր օգնել ուրացած զորամացիներին, դուք կարող եք աղոթել. «Ո՜վ Տեր, խնդրում եմ շնորհիր մեզ, որ մենք կարողանանք հաջողություն ունենալ՝ նրանց կրկին Քրիստոսով դեպի քեզ բերելու: Ահա, ո՜վ Տեր, նրանց հոգիներն արժեքավոր են, . . . հետևաբար, ո՜վ Տեր, տու՛ր մեզ զորություն և իմաստություն, որպեսզի մենք կարողանանք բերել սրանց՝ մեր եղբայրներին, կրկին դեպի քեզ» (Ալմա 31.34–35):

**Գտնք նրանց, ովքեր կրնդունենն ձեզ:** Դուք պետք է կառուցեք Եկեղեցին, գտնելով նրանց, ովքեր կընդունեն ձեզ (տե՛ս ՎևՈւ 42.8): Այդ մարդիկ կիասկանան, որ դուք Տիրոջ ծառաներն եք: Նրանք կցանկանան կիրառել ձեր ուղերձը: Այդ մարդկանցից շատերը հեռու են եղել ճշմարտությունից, քանզի չեն իմացել, որտեղ գտնել այն (տե՛ս ՎևՈւ 123.12):

Սովորաբար, դուք չեք իմանում, թե ովքեր են այդ մարդիկ: Նրանք, մի գուցե, անմիջապես չիասկանան, որ դուք Տիրոջ ծառաներն եք: Նրանք կարող է չիասկանան, որ կյանքում ավելի մեծ խաղաղություն, ուղղություն և նպատակ կարելի գտնել միայն վերականգնված ավետարանի միջոցով: Նրանք հաճախ չեն հասկանում, որ փնտրում են վերականգնված ավետարանը, քանի դեռ չեն գտել այն: Օրինակ, մի նորադարձ ասել է. «Երբ ես լսեցի ավետարանը, այն լցրեց իմ սրտի դատարկությունը, որի մասին ես չգիտեի»: Մեկ ուրիշն ասել է. «Ես ավարտեցի իմ որոնումները, չիմանալով, որ փնտրտուքների մեջ էի»:

Որտեղ էլ որ դուք նշանակված լինեք ծառայելու, հիշեք, որ Տերը «թույլ է տվել, որ դուք գաք այս վայրը. քանզի ինձ այդպես էր նպատակահարմար հոգիների փրկության համար»: Աշխատեք արդյունավետ, որպեսզի «բարձրացնեք ձեր ձայնը դեպի այս ժողովուրդը. ասեք այն մտքերը, որոնք ես կդնեմ ձեր սրտում, և դուք ամոթով չեք մնա մարդկանց առաջ»: Եթե անեք դա, կստանաք խոստումը, որ «դուք ամոթով չեք մնա մարդկանց առաջ» և «ձեզ կտրվի, թե ինչ պիտի ասեք» (ՎևՈւ 100.4–6): Հոգով գտնելը նույնքան կարևոր է, որքան Հոգով սովորեցնելը: Ինչպես և ուսուցանման ժամանակ, գտնելու ձեր ջանքերը հաջող կլինեն, եթե Հոգով առաջնորդվեք: Հավատք ունեցեք, որ կիմանաք, ինչ սովորեցնել և ինչ անել գտնելու համար նրանց, ովքեր կընդունեն ձեզ:

### Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Անդամներից շատերը, ում դուք այցելում եք, կարող են լինել Եկեղեցու նորադարձներ: Ընտրեք ժամանակ, երբ նրանց կարող եք հարցնել, թե ինչպես ծանոթացան Եկեղեցու հետ և ինչպես հասկացան, որ միսիոներները իրենց ճշմարտությունն են սովորեցնում: Նրանց փորձառությունները ամփոփեք ձեր աշխատանքային տետրում:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ինչպե՞ս են Աստծո զավակները պատրաստվել և առաջնորդվել դեպի վերականգնված ավետարանը:**

| | | |
|---|---|---|
| Ալմա 13.24 | ՎևՈւ 29.7 | ՎևՈւ 84.45–47, 88 |
| Ալմա 16.16–17 | ՎևՈւ 33.6 | ՎևՈւ 136.32–33 |

Նշումներ

## Խոսեք բոլորի հետ



Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը մի խումբ միսիոներների հետ ճամփորդում էր Միսսուրի գետով, Տերը հայտնեց, որ անհրաժեշտություն չկա, որ Իր երեցները արագ շարժվեն, քանի դեռ մյուս կողմի բնակիչները կորչում են անհավատության մեջ (տե՛ս ՎևՈւ 61.3): Երբ դուք արագ եք շարժվում, պլանավորված գործերը կատարելիս, աղոթեք չպլանավորված հնարավորություններ նկատելու ունակության համար, որոնք կօգնեն ծառայել և ուսուցանել նրանց, ովքեր անհավատության մեջ են: Աղոթեք հնարավորությունները տեսնելու հոգևոր զգայունության համար: Դուք կտեսնեք, թե ինչպես է Աստված ձեր ճանապարհին դնում Իր զավակներին, որոնք պատրաստվել են վերականգնված ավետարանը ստանալուն:

Ոչինչ տեղի չի ունենում միսիոներական աշխատանքում, մինչև դուք չեք գտնում որևէ մեկին, ում կարող եք սովորեցնել: Ամեն օր որքան հնարավոր է շատ մարդկանց հետ խոսեք: Բնական է, որ մարդկանց հետ խոսելիս փոքր-ինչ անհանգիստ եք լինում, սակայն դուք կարող եք աղոթել հավատքի և ուժի համար, որպեսզի ավելի համարձակ լինեք, երբ կբացեք ձեր բերանը վերականգնված ավետարանը հայտարարելու համար: Փորձեք կիրառել հետևյալ մտքերը, երբ խոսում եք ձեզ հանդիպած մարդկանց հետ.

- Խոսեք մարդկանց հետ նրանց ընտանիքների մասին: Նրանց օգնեք տեսնել, թե ինչպես կարող է վերականգնված ավետարանը օրհնություն լինել իրենց ընտանիքների համար:
- Գտեք հուշումներ, օրինակ՝ տանը կամ բակում առարկաներ, հագուստի վրա կարված տառեր կամ երեխաների առկայության մասին տեղեկություն, որոնք ձեզ կօգնեն սկսել մարդկանց հետ ձեր խոսակցությունը:
- Անկեղծորեն լսեք այն, ինչ մարդիկ ասում են ձեզ:
- Եղեք ջերմ, ընկերական և լավատես: Օգնություն առաջարկեք:
- Վստահեք Հոգուն, որը ձեր սրտին և մտքին կհաղորդի այն, ինչ պետք է սովորեցնեք:
- Բոլորին հրավիրեք սովորել վերականգնված ավետարանի մասին:
- Առաջարկեք փոխանցիկ քարտեր:
- Հարցրեք այն մարդկանց անունները, որոնք կհետաքրքրվեն ձեր ուղերձով:

Հետևյալ իրական պատմությունը կարդալիս, ուշադրություն դարձրեք, թե ինչպես էր այդ մարդն արդեն պատրաստ միսիոներներին ընդունելուն, և ինչպես միսիոներները օգտագործեցին չպլանավորված հնարավորությունը նրան ավետարանը սովորեցնելու համար:

> *Երեխա ժամանակ ինձ երբեք չեն սովորեցրել կարդալ Աստվածաշունչը: Կիրակի օրերը ես եկեղեցի էի գնում, սակայն ոչինչ չէի անում, և ոչինչ չէի ստանում: Ես հիասթափված էի իմ կրոնից: . . . Ես փնտրում էի . . . Աստծուն, ուզենալով իմանալ, թե արդյոք Նա գոյություն ունի: Ես ծարավ էի Նրա ու Նրա խոսքերն իմանալու համար: Սակայն, ես կարծես չէի գտնում, ինչ փնտրում էի:*
>
> *Կային պահեր, երբ ես մոտ էի ծարավ հագեցնելուն: Երբ առաջին անգամ ձեռքերում պահեցի իմ առաջին երեխային՝ աղջկա, ես զգացում ունեցա, որ Աստված խկապես գոյություն ունի: Շատ տարիներ անց, երբ ծնվեց նրա քույրը, ես ունեցա նույն զգացումը: . . . Սակայն, ժամանակի մեծ մասը, աննկարագրելի հոգնածությունն էր պատում հոգիս: Ես հոգևոր ծարավ էի զգում և չէի գտնում խմելու տեղը:*
>
> *1994 թվի ապրիլին ես ապրում էի Մեքսիկայում, Մոնտերեյ քաղաքում, և աշխատում էի որպես տաքսու վարորդ: Մի օր ժամեր շարունակ անձրև էր գալիս, ջուրը հոսում էր սարերից ներքև: Մի քանի ժամ անձրևի տակ մեքենա վարելուց հետո ես հայտնվեցի Մոնտերեյից ուր կիլոմետր հեռու մի փոքր քաղաքում: Արդեն . . . ժամանակն էր տուն գնալու: Հանկարծ ես տեսա երկու երիտասարդի, որոնք ոտքով*

Նշումներ

*էին քայլում: Նրանք մուգ տաբատներ և սպիտակ վերնաշապիկ էին հագել, և գլխից մինչև ոտքերի ծայրերը թրջվել էին:*

*Երբ ես մոտեցա նրանց, բացեցի մեքենայի դուռը և կանչեցի. «Նստեք, ես գնում եմ Մոնտերեյ»:*

*Նրանցից բարձրահասակը, շատ գեղեցիկ կառուցվածքով, պատասխանեց. «Մենք փող չունենք»:*

*«Անվճար է», - պատասխանեցի ես:*

*Նրանք արագ նստեցին:*

*Մինչ ես վարում էի, մենք խոսեցինք: Նրանք հարցրեցին, թե արդյոք կարող են ինձ հետ կիսվել Հիսուս Քրիստոսի մասին ուղերձով: Ես համաձայնվեցի և տվեցի նրանց իմ հասցեն:*

*Երբ ես հասա տուն, արթնացրեցի կնոջս և պատմեցի նրան այդ երկու երիտասարդների մասին: «Ինչպիսի զուգադիպություն», - ասացի ես: «Մեկը մեքսիկացի է, մյուսը՝ ամերիկացի, և երկուսի անունն էլ Երեց է»:*

*«Երեց նշանակում է միսիոներ», - ասաց կինս, որը մի փոքր գիտեր Եկեղեցու մասին:*

*Իմ ներսում ես ինչ-որ անհասկանալի զգացում ունեի: Այդ երկու երիտասարդները իմ սրտում ակնհայտ հրաշքի մի զգացում էին թողել: Ես զգում էի, որ մոտ եմ այն ջրին, որը փնտրել եմ ծարավս հագեցնելու համար, որը, կարծես, հասանելի էր:*

*Միսիոներները մեր տուն եկան հունիսի 5-ին և ես երջանկությամբ լսում էի նրանց: Երկու շաբաթ անց, հունիսի 19-ին ես մկրտվեցի: Կինս մկրտվեց չորս ամիս անց, հոկտեմբերին: Մեր ավագ դուստրը կրոնական կրթություն էր ստանում իր դպրոցում: Երբ նա առաջին անգամ գնաց եկեղեցի, բացականչեց. «Հայրիկ, սա շատ ավելի լավ է, քան այն, ինչ ես սովորում եմ դպրոցում»: Նա նույնպես մկրտվեց հոկտեմբերին:*


© 2001 Simon Dewey. Մի բազմացրեք:

*1995 թվի դեկտեմբերին մենք ընտանիքով կնքվեցինք Մեխիկո Սիթի Մեքսիկո Տաճարում այս կյանքի և հավերժության համար: Այժմ մենք ընտանիք ենք և վայելում ենք ներդաշնակություն, խաղաղություն և երջանկություն: Մենք գիտենք, ում ենք երկրպագում: Մենք գիտենք, թե որտեղից ենք եկել և ուր ենք գնում: Մենք սիրում ենք Աստծո խոսքը, հատկապես Մորմոնի Գիրքը, և մենք սիրում ենք Նրա Եկեղեցին՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Այդ պարգևների շնորհիվ մենք գտանք կենդանի ջրի այն ջրհորը, որի մասին Փրկիչը ասում էր Սամարացի կնոջը. «Ով որ խմե այն ջրիցը որ ես կտամ նորան, նա հավիտյան չի ծարավիլ: Այլ այն ջուրը, որ կտամ նորան , ջրի աղբյուր կլինի նորանում, որ հավիտենական կյանքի համար կբխե» (Հովհաննես Դ.14): [Victor Manuel Cabrera, “Thirsting for the Living Water,”* Ensign, *Aug. 2001, 60–61]*

## Վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Ինչպե՞ս էր մարդը պատրաստ վերականգնված ավետարանի համար:
- Ի՞նչ կպատահեր, եթե երեցները այդպես էլ չքացեին իրենց բերանները ավետարանի ուղերձով կիսվելու համար:
- Վերանայեք այն, ինչ արել եք երեկ: Արդյո՞ք դուք խոսել եք հնարավորին չափ շատ մարդկանց հետ: Եթե ոչ, պլանավորեք և նպատակ դրեք դա անել այսօր:

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչ է Տերն ասում ձեր բերանը բացելու մասին: Ի՞նչ դուք պետք է սովորեցնեք: Ի՞նչ է ձեզ խոստացված:**

ՎևՈւ 24.12
ՎևՈւ 28.16
ՎևՈւ 33.7–15
ՎևՈւ 60.2–3, 7–8

Նշումներ

## Սովորեցրեք, երբ գտնում եք, գտեք, երբ սովորեցնում եք

Գտնելն ու ուսուցանելը փոխկապակցված գործողություններ են: Երբ դուք հանդիպում եք մարդկանց, պատրաստ եղեք ամփոփ ձևով, համառոտակի սովորեցնել վերականգնված ճշմարտությունը, որպեսզի Սուրբ Հոգին վկայություն բերի այն մասին, որ դուք Տիրոջ ծառաներն եք: Շատ իրավիճակներում դուք կկարողանաք մեկ րոպեում կամ ավելի կարճ ժամանակահատվածում ներկայացնել ուղերձը: Մարդիկ սովոր են կարճ ու զորեղ պնդումների: Օրինակ, կարող եք վկայել Վերականգնման ուղերձի մասին միայն երկու-երեք նախադասությունով.

*Դարեր շարունակ կորած լինելուց հետո Աստծո սկզբնական ճշմարտությունները (Հիսուս Քրիստոսի ավետարանը) վերականգնվել են սիրող Աստծո կողմից կենդանի մարգարեի միջոցով: Մենք դրա վկայությունն ունենք, որը դուք կարող եք բռնել ձեր ձեռքում, կարդալ, խորհել ձեր սրտում և աղոթել, որպեսզի ինքներդ իմանաք ճշմարտությունը: Դուք թույլ կտա՞ք մեզ . . .*

Եթե ունեք մի փոքր ավել ժամանակ, կարող եք ավելին ասել.

*Մեր ուղերձը հասարակ է: Աստված մեր Հայրն է: Մենք Նրա զավակներն ենք: Մենք Նրա ընտանիքի մասն ենք: Նա սիրում է մեզ: Աշխարհի սկզբից Նա սեր և հոգատարություն է ցուցաբերել: Բազմաթիվ անգամ Նա դրսևորել է իր սերը, հայտնելով Հիսուս Քրիստոսի ավետարանը, որպեսզի Նրա զավակները կարողանան իմանալ, թե ինչպես վերադառնալ Իր մոտ: Նա այն հայտնել է մարգարեներին, ինչպիսին էին Ադամը, Նոյը, Աբրահամը և Մովսեսը: Սակայն շատ մարդիկ շարունակաբար մերժում էին ավետարանը: Երկու հազար տարի առաջ Հիսուս Քրիստոսն անձամբ սովորեցրեց Իր ավետարանը: Անհավատալի է, բայց մարդիկ մերժեցին անգամ Հիսուսին: Երբ մարդիկ անտեսում կամ աղավաղում են ճշմարիտ վարդապետությունները և արարողությունները, Աստված ետ է վերցնում Եկեղեցին կառավարելու Իր իշխանությունը:*

*Մեր հրավերն է ավելացնել ձեր արդեն իսկ ունեցած ճշմարտությունները, որոնք դուք ձեր գանձերի շարքում եք դասում: Մտածեք այն փաստի մասին, որ մեր Երկնային Հայրը կրկին մեկնեց Իր ձեռքն Իր զավակներին և հայտնեց ճշմարիտ վարդապետություններն ու արարողությունները մարգարեին: Այս մարգարեի անունն է Ջոզեֆ Սմիթ: Այս փառավոր ճշմարտության վկայությունը տրվում է Մորմոնի Գրքում: Դուք կարող եք բռնել այն ձեր ձեռքերում, կարդալ այն և ձեր մտքում ու սրտում խորհել դրա ճշմարտության մասին:*

Խուսափեք նման արտահայտություններ անելուց. «Դուք ունե՞ք մի քանի րոպե, որպեսզի մենք ձեզ սովորեցնենք .... մասին»: Փոխարենը, սովորություն զարգացրեք մարդկանց հանդիպելիս անմիջապես անցնել ուսուցանմանը և վկայելուն: Դուք ավելի շատ մարդիկ կգտնեք ուսուցանելու համար, եթե վկայեք և թույլ տաք, որ նրանք զգան Սուրբ Հոգու զորությունը:

Անկախ ձեր սկզբնական մոտեցումից, արագ և պարզ եղանակով խոսեք ավետարանի Վերականգնման մասին, քանզի սա է աշխարհին ուղղված մեր առանձնահատուկ ուղերձը: Նրանք, ում դուք սովորեցնում եք, հաճախ ունենում են ընկերներ կամ բարեկամներ, որոնք պատրաստ են ստանալու վերականգնված ավետարանը: Ուսուցանման բոլոր իրավիճակներում, օրինակ՝ մարդկանց գտնելու, ունկնդիրներին սովորեցնելու, անդամների հետ աշխատելու ժամանակ, հարցրեք. «Ձեզ ծանոթ մարդկանցից ո՞ւմ կհետաքրքրի դա և ովքե՞ր օգուտ կունենան այդ ուղերձից»: Անուն ստանալուց հետո հարցրեք. «Է՞լ ով կարող է օգուտ ստանալ այդ ուղերձից»: Մի վարանեք կրկին ու կրկին անդրադառնալ դրան ձեր հետագա ժողովների ժամանակ: Երբ նրանք, ում սովորեցնում եք, զգում են ավետարանի օրհնությունները, ավետարանով կիսվելու նրանց ցանկությունը մեծանում է (տե՛ս 1 Նեփի 8.12): Ավետարանը սովորելու ընթացքում նրանք հաճախ նոր ընկերներ ձեռք կբերեն: Այս սկզբունքը կիրառող միսիոներները սովորաբար շատ մարդկանց են գտնում սովորեցնելու համար:

Նշումներ

**Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

- Պատրաստեք մեկ րոպե տևողություն ունեցող ուղերձ, հիմնվելով դասերից մեկի վրա: Մտածեք, թե ինչպես կարող եք սովորեցնել այս դասը մարդկանց գտնելու ժամանակ:
- Մտածեք, թե ինչպես կարող եք արագ կապել այս ուղերձը Վերականգնման հետ:
- Ձեր ուղերձը կիսեք ձեր զուգընկերոջ հետ:
- Նպատակ դրեք այսօր հարմար պահին այս ուղերձը սովորեցնել ձեր ուսուցանման խմբին մեկ ունկնդիր ևս ավելացնելու համար:

---

- Վերանայեք այն մարդկանց ցուցակը, որոնց ներկայումս սովորեցնում եք: Կազմեք նրանց ցուցակը, որոնցից անուններ եք խնդրել, և նրանց, որոնցից անուններ չեք խնդրել: Պարապեք, թե ինչպես կխրախուսեիք յուրաքանչյուր խմբին անուններ տրամադրել: Ձեր ծրագրերի օրագրում նշում կատարեք ձեր հաջորդ այցերի ժամանակ խրախուսել անուններ տրամադրելու համար:

## Ընտանիքի կարևորությունը շեշտելը



Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը օրհնում է ընտանիքներին: Ապրելով վերականգնված ավետարանի սկզբունքներով, ընտանիքները կարող են ամրանալ և վայելել խաղաղություն, ուրախություն, պատկանելիության և նույնացման զգացում:

Ընտանիքի կարևորության մասին խոսելը նրանց հետ, ում ամեն օր հանդիպում եք, ձեզ կօգնի գտնել մարդկանց ուսուցանելու համար: Մարդկանց մեծ մասը բնական հետաքրքրություն է ցուցաբերում, երբ խոսքը ընտանիքին է վերաբերում: Ուսուցանման համար մարդկանց գտնելու շատ իրավիճակներում դուք արագորեն կարող եք Վերականգնման ուղերձի հետ կապել այն, ինչ մարդկանց մեծ մասը գիտի ընտանիքների մասին: Այդ ժամանակ կարող եք, օրինակ, ասել.

> *Մեզ համար չկա ավելի կարևոր բան, քան մեր ընտանիքները: Մեր ընտանիքը մեզ կապում է միմյանց հետ, մեզ անուն է տալիս և օգնում է զգալ հարկավոր և սիրված: Մեր ընտանիքներից մենք ժառանգել ենք անձնական հատկանիշներ, գծեր և ֆիզիկական հատկություններ, որոնք մեզ յուրահատուկ անհատականություն են պարգևում:*
>
> *Ամուր, երջանիկ ընտանիք ունենալը աշխարհի մարդկանց մեծամասնության համար ամենատառապնահերթ խնդիր է հանդիսանում: Այս նպատակին հասնելը հաճախ դժվար է: Այսօր աշխարհում երեխաներ մեծացնելը և ամուր ընտանիք ունենալը երբեմն անհնարին է թվում, հաշվի առնելով այն չարիքը, որը մեզ շրջապատում է:*

Ապա դուք կարող եք անցնել Վերականգնման ուղերձին.

> *Սիրո և հոգատարության զգացումը, որը մենք տածում ենք մեր ընտանիքների հանդեպ, հավերժական են, և արմատացած են մեր հոգիների մեջ: Դրանք կենտրոնացած են Աստծո հետ մեր հարաբերությունների շուրջ: Դեռ ծնվելուց առաջ դուք Աստծո ընտանիքի մասն էիք կազմում: Նա մեր Երկնային Հայրն է, մենք եղբայրներ և քույրեր ենք: Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք վերադառնանք և ապրենք Իր հետ որպես Իր ընտանիքի անդամներ: Այստեղ երկրի վրա ընտանիքները կապված են Աստծո ընտանիքին: Այս կյանքից հետո ընտանիքները կարող են ապրել միասին: Մենք դա գիտենք, որովհետև դարեր շարունակ*

Նշումներ

*կորսված լինելուց հետո ճշմարիտ վարդապետությունները և արարողությունները, ինչպիսին է մկրտությունը ընկղմամբ, վերականգնվել են երկրի վրա մեր սիրելի Երկնային Հոր կողմից, ապրող մարգարեի միջոցով: Այս վերականգնված ճշմարտությունները ոչ միայն օգնում են մեզ հասկանալ Աստծո ընտանիքում մեր տեղը, այլ դրանք մեծագույն հույսն են, որը մենք ունենք ամուր, երջանիկ ընտանիքների համար այս կյանքում: Կարո՞ղ ենք մենք ավելին ձեզ սովորեցնել . . . մասին:*

Նույն ձևով կարելի է խոսել այլ թեմաների շուրջ, օրինակ՝ երջանկության, դժվարության, կյանքի նպատակի կամ մահվան: Ինչպիսին էլ լինի մոտեցման ձեր եղանակը, հիշեք, որ այն անմիջապես պետք է կապվի աշխարհին ուղղված մեր առանձնահատուկ ուղերձի հետ:

## Անդամների կարևորությունը

Աշխատեք Եկեղեցու անդամների հետ, որպեսզի գտնեք մարդկանց և ուսուցանեք նրանց: Կատարյալ տարբերակ է, երբ անդամները հրավիրում են ուրիշներին ուսուցանում ստանալու համար և իրենք ներկա են լինում: Երբ անդամներն են անում դա, ավելի շատ մարդիկ են մկրտվում և ակտիվ են մնում Եկեղեցում: Անդամների հետ շփումը կարևոր է, որովհետև դա փափկացնում է մարդկանց սրտերը և հաճախ նպաստում, որ նրանք ուսումնասիրեն ավետարանը: Դա հաճախ նշանակում է, որ նրանք բերվում են Եկեղեցու անդամների ընկերների շրջապատ, ներառելով ակտիվ և ոչ ակտիվ անդամներին, նորադարձներին և մասամբ անդամությամբ ընտանիքներին:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին սովորեցրել է. «Մեզանից շատերը միսիոներներին պատկերացնում են որպես ավետարանի մասին անցորդների հետ պարզապես խոսակցողներ կամ նյութեր բաժանողներ: Յուրաքանչյուր անձ, ով ծանոթ է այս գործին, գիտի, որ կա ավելի լավ եղանակ: Դա Եկեղեցու անդամների միջոցով է: Երբ ունկնդրին ներկայացնում է Եկեղեցու անդամը, սկսում է աշխատել աջակցման համակարգը: Անդամը վկայություն է բերում աշխատանքի ճշմարտացիության մասին: Նա ոգևորված է իր ունկնդիր ընկերոջ երջանկությամբ: Նա ուրախանում է, երբ իր ընկերը առաջադիմում է ավետարանի ուսումնառության մեջ:

> *«Այն ամենից հետո, ինչ ասվեց, ամենամեծ և ամենակարևոր պարտականությունը Ավետարանը քարոզելն է»*
>
> – ՄԱՐԳԱՐԵ ՋՈԶԵՖ ՍՄԻԹ
> *TEACHINGS OF THE PROPHET JOSEPH SMITH,* 113

Լիաժամկետ միսիոներները կարող են կատարել անմիջական ուսուցումը, սակայն անդամը, հնարավորության դեպքում, կաջակցի այդ ուսուցմանը, առաջարկելով իր տունը որպես միսիոներական այդ ծառայության կատարման վայր: Նա անկեղծ վկայություն կբերի աշխատանքի աստվածային բնույթի մասին: Նա կպատասխանի հարցերին, երբ միսիոներները բացակայում են: Նա կլինի նորադարձի ընկերը, որը մեծ և հաճախ դժվար փոփոխություն է կատարում: . . . Եկեղեցի նոր մարդիկ բերելու գործընթացը միայն միսիոներների պատասխանատվությունը չէ: Նրանք հաջողության են հասնում, երբ անդամները դառնում են նոր ունկնդիրներ գտնելու միջոց» (*Ensign*, May 1999, 105–6):

Անդամների հետ ամուր հարաբերություններ հաստատելու գործը պետք է սկսել եպիսկոպոսից: Առաջարկեք օգնել և ծառայել ցանկացած արդար եղանակով, որը նա խնդրում է: Պարբերաբար ինքներդ ձեզ հարցրեք. «Ես օրհնությո՞ւն, թե բեռ եմ եպիսկոպոսի համար»: Զարգացրեք «Ինչպե՞ս ես կարող եմ օգնել» մոտեցումը: Եթե դուք փնտրեք սիրելու, ծառայելու և սովորեցնելու հնարավորություններ, եպիսկոպոսը և ծխի անդամները ավելի մեծ պատրաստակամությամբ ձեզ կվստահեն իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին:

Մտածեք հետևյալ քաղվածքի մասին, որը վերցված է իր միսիայի նախագահին ուղղված մի միսիոների նամակից.

Նշումներ

*Հարգելի Նախագահ,*

*Օգնականները այսօր զանգահարեցին, ասելով ինձ, որ ես տեղափոխվում եմ: Ես զգացի, որ պետք է գրեմ և շնորհակալություն հայտնեմ ձեզ ինձ այս տարածք ուղարկելու համար: Կարծես, թե երեկ էր, երբ դուք ինձ պատմում էիք առջևում երևացող խնդիրների մասին:*

*Մեր առաջին կիրակին հաստատեց այն, ինչ դուք ինձ ասում էիք: Մենք ջերմ ընդունելության արժանացանք ծխում: Այդ առաջին կիրակի օրը լույսի միակ շողը Աքոբն էր՝ ծխի միսիայի նոր ղեկավարը: Նա տեղափոխվել էր Օղային Ուժեր մեկ ամիս առաջ և ծառայում էր որպես ծխի միսիայի ղեկավար արդեն երկու շաբաթ: Առաջին կիրակի օրը Աքոբը մեզ հրավիրեց իր տուն ճաշի, որպեսզի մենք քննարկենք, թե ինչ կարելի էր անել, որ աշխատանքը տեղից շարժվի: Ճաշից հետո մենք աղոթքի համար ծնկի իջանք և Երկնային Հորը խնդրեցինք ուղղություն ցույց տալ մեզ: Աղոթելու ընթացքում մենք ունեցանք հանգստության և վճռականության զգացում: Մենք հասկացանք, որ աշխատանքն առաջ տանելու լավագույն ճանապարհը անդամների վստահությունը ձեռք բերելն էր: Մենք որոշեցինք հետևել Ամմոնի օրինակին և ծառայել նրանց:*

*Մենք սկսեցինք եպիսկոպոսից: Քանի որ տարածքում մկրտությունների թիվը պակասել էր և նախկին միսիոներների ջանքերը բավարար չէին, հասկանալի էր, թե ինչու նրան այդքան էլ չոգևորեց հանդիպելու մեր խնդրանքը: Ի վերջո, նա մեզ հրավիրեց իր տուն ճաշելու: Մենք իմացանք, որ եպիսկոպոսը պատրաստվում էր հանել իր հյուրասենյակի գորգը և վերականգներ դրա տակ գտնվող փայտե հատակը: Մենք պատրաստակամություն հայտնեցինք օգնելու և նա համաձայնվեց: Ծրագրի ավարտից հետո եպիսկոպոսը մեզ խնդրեց խոսել հաղորդության ժողովին: Մենք սա ընդունեցինք որպես վկայություն այն մասին, որ նա սկսում էր մեզ վստահել:*

*Ծառայության նույն բանաձևը մենք կիրառեցինք մյուս անդամներին հանդիպելիս: Մենք հնարավորություններ ունեցանք նրանց օգնելու զանազան պարզ եղանակներով: Երբ անդամների հետ չէինք, մենք թակում էինք դռները և խոսում էինք վերականգնված ավետարանի մասին որքան հնարավոր է շատ մարդկանց հետ: Մենք օրհնված էինք, ունենալով ուսուցանման համար մարդկանց, իսկ անդամները տեսան, որ մենք եկեղեցի ենք բերում մարդկանց, որոնց իրենք էին գտել: Ողջ ծխի վերաբերմունքը սկսվեց փոխվել: Անող հետաքրքրություն էր զգացվում միսիոներական աշխատանքի հանդեպ: Երբ անդամները վստահեցին մեզ, աշխատանքը արագություն ձեռք բերեց: Շատ մկրտություններ կատարվեցին:*



Եկեղեցու շատ անդամներ վախ ունեն միսիոներական աշխատանք կատարելու հանդեպ: Շատերը չգիտեն, թե որտեղից սկսեն կամ ինչ ասեն: Շատերը վախենում են, թե կկորցնեն մոտ ընկերներին, եթե փորձեն նրանց հետ կիսվել ավետարանով: Շատ եղանակներ կան անդամներին օգնելու համար: Օրինակ, օգնեք կառուցել նրանց հավատքը, ուսուցանելով Վերականգնման ավետարանը և դասերի մյուսը վարդապետությունները: Օգնեք նրանց զգալ Հոգին և մեր ուղերձի զորությունը: Քրիստոսի վարդապետության մասին նրանց հասկացողությունը խորացնելով, դուք կմեծացնեք ձեր հանդեպ նրանց վստահությունը և կոգևորեք նրանց միսիոներական աշխատանք կատարել ավելի շատ, քան որևէ այլ եղանակով: Նրանց օգնեք հասկանալ, որ վերականգնված ավետարանի մասին խոսելը բնականաբար կբխի իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին սիրելուց և ծառայելուց: Սովորեցրեք նրանց այս գլխի «Ման եկեք բարի անելով» բաժնից: Անդամներին խրախուսեք «միանան ծոմով ու զորավոր աղոթքով, այն հոգիների բարօրության համար, ովքեր չգիտեն Աստծուն» (Ալմա 6.6): Անդամների հետ ձեր բոլոր գործերում բարձրացրեք և կառուցեք նրանց հավատքը, օգնելով նրանց կատարել միսիոներական աշխատանք:

Նշումներ

Ակտիվ անդամների հետ աշխատելուց բացի, գտեք այն մարդկանց, որոնց կարելի է ուսուցանել ապագա երեցների, ոչ ակտիվ անդամների և նոր անդամների միջոցով: Այդ անդամները հավանաբար այլ հավատքների պատկանող շատ ընկերներ կունենան և կօրհնվեն, կիսվելով վերականգնված ավետարանով իրենց ընտանիքի անդամների և ընկերների հետ:

Անդամների հետ ձեր այցերի ժամանակ արեք հնարավորին ամեն ինչ նրանց խրախուսելու անել հետևյալը.

- Աղոթել և հետևել Հոգուն:
- Ծառայություն կատարել:
- Ընկերներ ձեռք բերել:
- Կիսվել վերականգնված ավետարանով:
- Հրավիրել ուրիշներին անել այնպիսի գործեր, որոնք կխորացնեն Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը:

Անդամների կողմից տրված անունները պետք է դիտվեն որպես թանկարժեք մարդիկ: Երբ անդամներից մեկը ձեզ տալիս է իր ընկերոջ անունը, որին դուք պետք է զանգահարեք կամ այցելեք, արագ պատասխանեք և արդյունքները հաղորդեք այդ անդամին:

### Մտքեր անդամներին օգնելու համար

Կան շատ եղանակներ անդամներին խրախուսելու ավելի շատ ընդգրկվել միսիոներական աշխատանքի մեջ: Մտածեք հետևյալ մտքերի մասին.

- Փտրեք եպիսկոպոսի և ծխի մյուս ղեկավարների առաջնորդությունը: Լրացուցիչ օգնության համար տե՛ս գլուխ 13-ը:
- Սովորեցրեք Եկեղեցու ղեկավարներին և անդամներին Վերականգնման ուղերձը և այլ դասեր:
- Նրանց սովորեցրեք սիրել և ծառայել իրենց հարևաններին ու ընկերներին:
- Նրանց խրախուսեք ծոմ պահել և աղոթել միսիոներական հնարավորությունների համար:
- Նրանց խրախուսեք այցելել իրենց ծանոթներին, որոնք ունեցել են կյանքը փոխող իրադարձություն (ծնունդ, մահ ընտանիքում, ամուսնություն, կամ տեղափոխություն):
- Նրանց խնդրեք օգնել ձեզ ուսուցանելու գործում: Կատարյալ տարբերակի դեպքում դուք կունենաք Եկեղեցու մի անդամ, որը նախկինում պատկանում էր նույն եկեղեցուն, որին պատկանում է ձեր ունկնդիրը:
- Նրանց օգնեք նշանակել ամսաթիվ, թե երբ կարող են հրավիրել իրենց ընկերներին Վերականգնման ուղերձի մասին սովորելու համար:
- Նրանց ցույց տվեք այն նյութերը, որ կարող են տալ ուրիշներին, օրինակ Մորմոնի Գիրքը, տեսաերիզներ և փոխանցիկ քարտեր:
- Նրանց խրախուսեք իրենց ընկերներին հրավիրել եկեղեցում տեղի ունեցող կամ ընտանեկան երեկոներին, Եկեղեցու տեսաֆիլմերի դիտմանը կամ մասնակցել ավետարանի շուրջ զրույցին:
- Նրանց օգնեք պատրաստվել ասելու այն, ինչ կարող են ասել իրենց ընկերներին:
- Նրանց սովորեցրեք, թե ինչու է այդքան թանկ ավետարանով կիսվելը, անկախ արդյունքից:

Կան շատ այլ ճանապարհներ, որոնք կարող են օգնել ներգրավել անդամներին: Ձեր միսիայի ընթացքում այս ցանկին կարող եք ավելացնել այլ կետեր ևս: Ձեր մտքերով կիսվեք մյուս միսիոներների հետ:

Նշումներ

**Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Ձեր զուգընկերոջ հետ միասին վերանայեք այն, ինչ արել եք ծառայելու համար և ձեր նախսկոպոսին, մյուս ղեկավարներին և անդամներին անցած ամիս օգնելու համար: Քննարկեք և պլանավորեք, թե ինչ դուք կարող եք անել գալիք ամիս նրանց հետ ավելի ամուր հարաբերություններ հաստատելու համար:

Վերանայեք «Մտքեր անդամներին օգնելու համար» վանդակում նշված մտքերը: Գտեք այն մտքերը, որոնք դեռ չեք փորձել: Ձեր օրվա ծրագրից օգտվելով ծրագիր կազմեք և հաջորդ շաբաթ փորձեք այդ մտքերից մի քանիսը:

## Լրատվական միջոցների և Եկեղեցու կենտրոնական գրասենյակի կողմից տրված անունները

Ծանոթները մեկ այլ աղբյուր են գտնելու համար նրանց, ովքեր պատրաստ են վերականգնված ավետարանի համար: Բացի անդամների կողմից տրված անուններից, Եկեղեցին ակտիվորեն գործելով տարբեր ճանապարհներով է հասնում Աստծո զավակներին: Եկեղեցին հետաքրքրություն է առաջացնում այնպիսի ջանքերի միջոցով, ինչպիսիք են՝ լրատվամիջոցներում տեղադրված գովազդները, այցելուների կենտրոնները, պատմական վայրերը, բարեգործությունը և մարդասիրական օգնությունը, և Ինտերնետը (www.mormon.org, www.lds.org, www.familysearch.org): Լրատվամիջոցներից և Եկեղեցու կենտրոնական գրասենյակից ստացված անունները ներկայացնում են այն մարդկանց, ովքեր համաձայնվել են հանդիպել Եկեղեցու ներկայացուցիչների հետ, որպեսզի վերջիններս նրանց տրամադրեն որևէ նյութ (օրինակ Սուրբ Աստվածաշունչը կամ Մորմոնի Գիրքը) և ուսուցանեն Եկեղեցու մասին: Ուսուցանելու այդ հնարավորությունները միսիոներների կողմից պետք է ընդունվեն որպես սուրբ պատասխանատվություն:

Նրանց հետ հանդիպելուց առաջ հավաստիացեք, որ ունեք այն նյութը, որը նրանք խնդրել են: Ծրագրեք մի փոքր դաս, որի միջոցով այդ նյութը տալուց հետո կարող եք անցում կատարել Վերականգնման ավետարանը ուսուցանելուն: Որոշ դեպքերում այդ մարդիկ ձեզ կտանեն ուրիշների մոտ, որոնց Աստված պատրաստում է: Եթե այն մարդիկ, որոնց հետ դուք կապ եք հաստատում, հետաքրքրված չեն, հարցրեք, թե արդյոք նրանք չեն ճանաչում որևէ մեկին, որը հետաքրքրված կլինի ավետարանով: Խոսեք նաև ընտանիքի մյուս անդամների և նրանց հարևանների հետ: Բոլորին հարցրեք, թե ով կարող է հետաքրքրված լինել ձեր ուղերձով: Մի գուցե դուք այդ մարդու մոտ եք եկել, որովհետև այդ տանը կամ հարևաններից մեկը պատրաստ է ավետարանը լսելուն:

Այդ մարդկանց հետ աշխատելիս հիշեք.

- Զանգահարեք նրանց 24 ժամվա ընթացքում:
- Հնարավորության դեպքում, զանգահարեք նախորոք հանդիպման համար պայմանավորվելու նպատակով: Եթե նրանք տանը չեն, փորձեք օրվա տարբեր ժամերին:
- Տվեք պահանջվող նյութը և հիշեցրեք, որ նրանք են խնդրել, որ իրենց այցելեք: Հավաքեք ընտանիքի բոլոր անդամներին, որ լսեն:
- Սովորեցրեք Վերականգնման ուղերձը:
- Խրախուսող խոսքեր ասեք, որը կկառուցի Քրիստոսի հանդեպ նրանց հավատքը:
- Խնդրեք անուններ տրամադրել:
- Պայմանավորվեք հաջորդ հանդիպման համար:
- Պլանավորեք աշխատել այդ տարածքում ձեր հանդիպումն ավարտելուց հետո:
- Եթե տվյալ անձը տանը չէ, խոսեք հարևանների հետ:

Նշումներ

**Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Պարզեք վերջին ամսվա ընթացքում ձեր տարածքում տրամադրված անունները: Պարզեք, թե նրանցից ում հետ կապ չի հաստատվել, և այցելեք նրանց: Որոշեք, թե ում պետք է նորից այցելեք:

## Ընտանեկան պատմություն

Ընտանեկան պատմությունը կամ տոհմաբանությունը ուսուցանման նպատակով մարդկանց գտնելու մեկ այլ եղանակ է: Ընտանեկան պատմությունը այսօր աշխարհում մեծ տարածում գտած զբաղմունքներից է: Եղիայի Հոգին ազդում է աշխարհում միլիոնավոր մարդկանց վրա և ստիպում գտնել իրենց նախնիներին: Շատերը ավելի ամուր կապեր են ուզում հաստատել իրենց հարազատների հետ: Սա կարող է տանել Աստծո ընտանիքի հետ նույնացման և կապի հայտնաբերման ցանկությանը:

Պարզեք, թե ընտանեկան պատմության ինչ միջոցներ են առկա ձեր տարածքում: Օրինակ, կարող եք մարդկանց հրավիրել ընտանեկան պատմության տեղական կենտրոն կամ ծանոթացնել նրանց այն անդամների հետ, ովքեր կարող են օգնել նախնական ուսումնասիրություն կատարել, գտնելով իրենց տոհմագիծը: Դուք կարիք չունեք շատ բան իմանալու ընտանիքի պատմության մասին այս ծառայությունը մատուցելու համար, եթե ունեք Եկեղեցու անդամների օգնությունը: Աշխարհի շատ մասերում կան անդամներ, որոնք կարող են ուրիշներին օգնել գտնելու իրենց ընտանեկան արմատները: Ներգրավեք անդամներին, որպեսզի ապագա ունկնդիրները հանդիպեն այն մարդկանց, ովքեր կարող են ընկերություն անել իրենց հետ: Բացատրեք, որ ընտանեկան պատմության կենտրոնների ծառայությունները անվճար են:

> *«Ես հուսով եմ, որ կտեսնեմ, թե ինչպես է անհետանում այն արհեստական սահմանը, որը մենք հաճախ դնում ենք միսիոներական աշխատանքի և տաճարային ու տոհմաբանական աշխատանքի միջև, քանզի դա նույն փրկագնող մեծ աշխատանքն է»:*
>
> – ՆԱԽԱԳԱՀ ՍՊԵՆՍԵՐ Վ. ՔԻՄԲԱԼ
> “THE THINGS OF ETERNITY—STAND WE IN JEOPARDY?” *ENSIGN*, JAN. 1977, 3

Մարդկանց գտնելու աշխատանքի ընթացքում նրանց կարող եք տալ ընտանեկան պատմության փոխանցիկ քարտերը, որոնց վրա գրված կլինեն ընտանեկան պատմության տեղական կենտրոնների հեռախոսահամարները, առաջարկելով ընտանեկան արմատների անվճար նախնական ուսումնասիրություն: Հաջորդ երկու օրերի ընթացքում հանդիպեք այն ընտանիքներին, որոնց մոտ թողել եք այդ քարտը: Այդ քարտերից բաժանեք այն ունկնդիրներին, որոնք կարող են դրանք փոխանցել իրենց ընկերներին և բարեկամներին: Լավ միտք է նաև միշտ ձեզ մոտ ունենալ չորս սերունդների անձնական սխեման որպես նմուշ և օրինակ հատկապես նրանց համար, ովքեր ունեն նույն ազգանունը:

Սկսելու համար մտածեք հետևյալի մասին.

- Այցելեք ընտանեկան պատմության կենտրոն, եթե ձեր տարածքում կա այդպիսինը:
- Եպիսկոպոսի կամ ծխի խորհրդի հետ քննարկեք, որ ցանկանում եք օգնել ընտանեկան պատմությամբ նրանց, ում ամեն օր հանդիպում եք:
- Ծխի ղեկավարների հետ քննարկեք, թե ինչպես կարող եք լավագույն ձևով կոորդինացնել ձեր ջանքերը.

Նշումներ

- Արդյո՞ք եպիսկոպոսը հավանություն է տալիս այն բանին, որ դուք առաջարկում եք ծխի անդամների օգնությունը:
- Ծխի ո՞ր անդամներն են ծառայում ընտանեկան պատմության կենտրոնում կամ ընտանեկան պատմության աշխատանքի փորձ ունեն:
- Ո՞րն է այդ անդամների օգնությունը խնդրելու լավագույն եղանակը:
- Ո՞վ կարող է ուղեկցել ձեզ, երբ դուք տալիս եք տոհմաբանական սխեմաները կամ ընտանեկան խմբերի գրառումները:

Կարդացեք մեծահասակ միսիոների կողմից տրամադրած հետևյալ պատմությունը: Ուշադրություն դարձրեք, թե ինչ դեր խաղաց ընտանեկան պատմությունը զույգերի զրույցի ժամանակ:

*Միլդրեդ Շուլցը իր եկեղեցու նվիրյալ անդամ էր: Զարմանալի չէ, որ երբ միսիոներները թակեցին նրա դուռը, նա ժամանակ չկորցրեց, նրանց ներս հրավիրելով, որպեսզի սովորեցնի «ճշմարտությունը»: Երբ սովորեցնում էին միսիոներները, նրան հուզեցին վերականգնված ավետարանի ճշմարտությունները և նա մկրտվեց: Ուսուցման ընթացքում նրա ամուսինը, Ֆրենկը, չէր մասնակցում:*

*Ահա այստեղ ես ընդգրկվեցի: Երեցները մեզ ներկայացրեցին Քույր Շուլցին: Մենք օգնեցինք նրան սկսել կազմել իր ընտանեկան ծառը և այնուհետև խնդրեցինք նրան հանդիպել մեզ հետ ընտանեկան պատմության կենտրոնում: Եկավ մեր հանդիպման օրը և Ֆրենկը հարցրեց, թե կարող է արդյոք նույնպես գալ իր նախնիների ուսումնասիրության համար: Իհարկե, նա ուրախացավ և նրանք երկուսով եկան կենտրոն:*

*Երեցները պլանավորել էին մեզ հետ հանդիպել այնտեղ օրվա ընթացքում: Նրանց գալուց առաջ մենք Ֆրենկին և Միլդրեդին ցույց տվեցինք գրադարանը և ծանոթացրեցինք Քույր Ռայթի հետ: Քույր Ռայթը ընտանեկան պատմության մասնագետ էր, և նա առաջարկեց օգնել տեղեկություն գտնել Ֆրենկի հոր մասին: Նա գրքում գտավ նրա անունը և Ֆրենկին տվեց Գերմանիայի քարտեզը, որտեղ ցույց տվեց նրա հոր ծննդավայրը: Նա այնքան ոգևորված էր այդ հայտնագործություններով, որ երբ երեցները ժամանեցին, նրանց հրավիրեց ճաշի, որպեսզի ցույց տա նկարները և պատմի ընտանիքի պատմությունը: Եղիայի Հոգին դիպչել էր նրան և փափկացրել նրա սիրտը, և բացել էր նաև դուռը, որպեսզի ավետարանը լցնի նրա կյանքը:*

*Այդ երեկո Միլդրեդը մտածեց այն մասին, թե ինչ կարող է անել, որպեսզի օգնի Ֆրենկին ավելի շատ հետաքրքրվել ավետարանով: Մի հարց ծագեց նրա մտքում: Նա ասաց. «Ֆրենկ, դու կցանկանայիր ինձ հետ լինել ընդմիշտ, անգամ այս կյանքից հետո: Դու կուզենայի՞ր հավերժական ընտանիք ունենալ»: Նա արագ ասաց. «Օ, Միլդրեդ, իհարկե, ուզում եմ: Ինչպե՞ս կարող եմ դա անել»: Սա այն հարցն էր, որի համար Միլդրեդը աղոթում էր: «Լսիր, թե ինչ կասեն միսիոներները», - պատասխանեց նա: Ֆրենկը համաձայնվեց: Երբ երեցները սովորեցնում էին, Վերականգնման ուղերձի ջերմությունը փարատեց նրա կասկածներն ու վախը: Նա պատրաստակամորեն ընդունեց այն ճշմարտությունները, որոնցով կիսվեցին միսիոներները: Նա ընդունեց մկրտվելու հրավերը: Այդ ժամանակից ի վեր Ֆրենկը և Միլդրեդը Եկեղեցու ակտիվ անդամներ են:*

*Ֆրենկը և Միլդրեդը շատ քրտնաջան աշխատեցին, որպեսզի վերջացնեն աշխատանքը, որով փրկող արարողությունները կարող էին կատարվել իրենց ընտանիքի համար: Մի ոգեշնչող օր էր, երբ նրանք կարողացան մկրտվել իրենց ընտանիքի անդամների համար: Տաճարային աշխատանքը կատարելու ընթացքում Եղբայր Շուլցը երազում տեսավ իր հորը: Հայրը գտնվում էր այն ֆերմայում, որտեղ անցել էր Ֆրենկի մանկությունը: Հայրը կանգնած էր իր ճոճվող բազկաթոռի ետևում, ճերմակ հագնված և ձեռքերը պարզած դեպի իր որդին: Ֆրենկը արթնացավ արցունքների մեջ: Նա գիտեր, որ իր հայրը ընդունել էր իր կատարած աշխատանքը:*

### Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Ինչի՞ ազդեցության տակ Ֆրենկը որոշեց ընդունել միսիոներների դասերը:
- Ինչպե՞ս դուք կարող եք ընտանեկան աշխատանքն ավելի լավ կապել ընտանիքների համար նախատեսված Աստծո ծրագրին:
- Ինչպե՞ս եք դուք օգտագործում ընտանեկան պատմությունը մարդկանց գտնելու համար: Ինչպե՞ս կարող եք օգտագործել ընտանեկան պատմությունը մարդկանց հետ ամեն օր հանդիպելու համար: Պլանավորեք սկսել ընտանեկան պատմությունն օգտագործելով որպես ավելի մշտական գործիք մարդկանց գտնելու ձեր ջանքերի ընթացքում:

Նշումներ

Ընտանեկան պատմությունը հզոր միջոց է գտնելու համար նրանց, ում Տերը պատրաստում է ընդունելու վերականգնված ավետարանը: Աղոթեք այն հնարավորությունների համար, որպեսզի կարողանաք օգտագործել ընտանեկան պատմությունը մարդկանց գտնելու ձեր ջանքերում: Ընտանիքների մասին խոսելիս մարդիկ սովորաբար հոգևոր զգացումներ են ունենում: Մարդիկ զգում են նաև Հոգին, երբ սովորում են վարդապետությունները ընտանեկան աշխատանք կատարելու անհրաժեշտության մասին: Բացի այդ, նորադարձներն ավելի կայուն են դառնում, երբ որպես նոր անդամներ կարողանում են ուսումնասիրել իրենց ընտանեկան արմատները և կատարել սուրբ արարողությունները իրենց նախնիների համար:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչը Տերը վերականգնեց երկրի վրա Եղիայի միջոցով:**

ՎևՈւ110.14–16
ՎևՈւ128.16–18
ՎևՈւ138.32–34
Մաղաքիա Դ.5–6

### Վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Պայմանավորվեք այցելել ընտանեկան պատմության տեղական կենտրոն ընտանեկան պատմության փորձ ունեցող անդամներից մեկի հետ: Շրջելով ընտանեկան պատմության կենտրոնում պարզեք, թե ինչ ծառայություններ են մատչելի: Պարզեք, թե ինչ այլ տեղեկություն օգտակար կլինի, օրինակ կենտրոնի աշխատանքային ժամերը, ով է այնտեղ աշխատում և ինչ կարող եք առաջարկել նրանց, ում հետ կապի մեջ եք ամեն օր:

Պարապեք, պատրաստվելով առաջարկել ընտանեկան պատմության ծառայությունները նրանց, ում հետ հանդիպում եք: Ծրագրեք օգտագործել ընտանեկան պատմությունը ուսուցանման համար մարդկանց գտնելու ձեր ջանքերում:

---

Կարդացեք և քննարկեք *Հավատքին Հավատարիմ* ձեռնարկի «Ընտանեկան պատմություն և տոհմաբանություն» թեման, որպեսզի ավելի լավ հասկանաք ընտանեկան պատմության աշխատանքի էությունը: Ձեր սովորածը գրի առեք ձեր աշխատանքային տետրում:

## Նախկին ունկնդիրներ

Նախկին ունկնդիրները արժեքավոր աղբյուր են հանդիսանում ուսուցանման համար մարդկանց գտնելու համար: Կան շատ պատճառներ Եկեղեցու հանդեպ հետաքրքրությունը կորցնելու համար: Դրանցից են տեղափոխվող միսիոներները, արձակուրդ գնացող ունկնդիրները, միսիոներների այցերի դադարեցումը, թեև ունկնդիրները դեռևս սպասում են այցելություններին, ինչպես նաև ունկնդիրների կարծիքն այն մասին, թե միսիոներները ոչ մի նոր բան չունեն սովորեցնելու: Նախկին ունկնդիրներից շատերն ասում են, որ կրկին կցանկանային հանդիպել միսիոներներին:



© 1990 Del Parson. Մի բազմացրեք

Վերանայեք ձեր տարածքի գիրքը՝ գտնելու համար նախկին ունկնդիրներին: Աղոթքով մտածեք տարածքի գրքի այն տեղեկության մասին, որը նկարագրում է, թե ինչպես ունկնդիրները առաջին անգամ ծանոթացան Եկեղեցու հետ, ինչ նրանց ուսուցանվեց, ինչպես նրանք արձագանքեցին և ինչու նրանք դադարեցին հետքրքրվել ավետարանով: Եթե ուսուցման ժամանակ ներգրավված են եղել անդամները, որոնք նաև ընկերություն են արել նախկին ունկնդիրների հետ, անդամներին խնդրեք պատմել իրենց փորձի մասին: Հիմնվելով այդ տեղեկության վրա ծրագրեք նորից հանդիպել այդ ունկնդիրների հետ:

Նշումներ

Եթե որևէ մեկը, ում դուք սովորեցնում եք, այլևս չի հետաքրքրվում ավետարանով, գրի առեք այդ տեղեկությունը տարածքի գրքում, ինչը օգտակար կլինի այն միսիոներների համար, որոնք ապագայում կցանկանան նրանց հետ կապ հաստատել:

Կարդալով հետևյալ պատմությունը, մտածեք նախկին ունկնդիրների հետ կապ հաստատելու զորության մասին:

*Ի զարմանս ինձ, ես կանչվեցի ծառայելու նույն միսիայում, ուր իմ ավագ քույրն էր ծառայել մեկ տարի առաջ: Միսիայի դաշտում մի քանի ամիս անցկացնելուց հետո, ինձ տեղափոխեցին այն տարածք, ուր ծառայել էր քույրս: Իմ տեղափոխության մասին իմանալով, քույրս ինձ գրեց, խնդրելով այցելել մի ընտանիքի, որին նա և նրա զուգընկերը ուսուցանում էին: Նա արտահայտեց այն սերն ու մտերմությունը, որը զգում էր Նորմանների ընտանիքի հանդեպ, և թե որքան հուսախաբված էր, երբ նրանք դադարեցին հետաքրքրվել Եկեղեցով:*

*Իմ զուգընկերը և ես գտանք Նորմաններին և ջերմ ընդունելության արժանացանք նրանց կողմից: Նրանք ընդունեցին վերականգնված ավետարանը կրկին լսելու մեր հրավերը: Ես չգիտեի, թե ինչ փոփոխություն էր տեղի ունեցել այդ ժամանակ, բայց նրանք լիովին պատրաստ էին ընդունելու մեր ուղերձը: Ամբողջ ընտանիքը մկրտվեց և հաստատվեց:*

*Այս փորձից հետո ես մտածեցի մյուս նախկին ունկնդիրների մասին, որոնց հետ աշխատել էր իմ քույրը: Ես մտածեցի. «Եթե հաջողվեց Նորմանների դեպքում, մի գուցե հաջողվի մյուսների հետ նույնպես, որոնց նա սովորեցրել է»: Ես որոշեցի գրել քրոջս նրա սովորեցրած մյուս մարդկանց հետ աշխատելու մտքի մասին: Նա զննեց իր տետրը և ուղարկեց ինձ տարածքի նախկին ունկնդիրների անունները:*

*Ես և զուգընկերս հաջորդ շաբաթվա ընթացքում կապվեցինք այդ մարդկանց հետ: Ի ուրախություն մեզ, նրանցից գրեթե կեսը ընդունեցին վերականգնված ավետարանի մասին կրկին լսելու մեր հրավերը: Այդ խմբից մի քանիսը մկրտվեցին և հաստատվեցին: Այդ նախկին ունկնդիրներին հանդիպելիս մենք նրանց խնդրեցինք տրամադրել նաև ծանոթների և ընկերների անունները, որոնք հետաքրքրված կլինեին մեր ուղերձով: Արդյունքում, մենք լրացուցիչ մարդիկ գտանք ուսուցանելու համար: Դա իմ միսիայի ամենազբաղված ժամանակներից էր:*

**Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

- Գտեք ձեր տարածքի գրքի միջից բոլոր նախկին ունկնդիրներին:
- Պլանավորեք 24 ժամվա ընթացքում զանգահարել որքան հնարավոր է շատ մարդկանց այդ ցուցակից:

## Գտնել ձեր սեփական ուժերով

Աշխատեք ամրացնել ձեր հավատքը, որ Աստված պատրաստում է Իր զավակներին ստանալու Վերականգնման ուղերձը: Սուրբ Հոգու առաջնորդությամբ, անելով այն ամենը, ինչ կարող եք որպեսզի ուսուցանման համար մարդկանց գտնեք, Տերը այդ մարդկանց կդնի ձեր ճանապարհին:

Կան բազմաթիվ ազդվաբարո ճանապարհներ գտնելու համար նրանց, ովքեր պատրաստված են վերականգնված ավետարանի համար: Դուք պետք է անեք հնարավորին ամեն ինչ, որպեսզի հայտնվեք այն մարդկանց ճանապարհին, ովքեր պատրաստված են: Միսիոներները գտնում են, որ հետևյալ մտքերն օգնել են իրենց ուժերով գտնել մարդկանց, որոնց կարող են ուսուցանել: Վերանայելով այս ցանկը, պլանավորեք փորձել այդ մտքերից մի քանիսը, որոնք ձեզ համար նոր են: Ցանկը ծառայում է նաև որպես սկզբնակետ ուսուցանման համար մարդկանց գտնելու ազդվաբարո այլ ճանապարհների մասին մտածելու համար:

- Աշխատեք եպիսկոպոսի և ծխի խորհրդի հետ, գտնելու և զանգահարելու համար այն մարդկանց, որոնք վերջերս երեխա են ունեցել, տեղափոխվել են ձեր տարածք կամ ընտանիքում որևէ մեկը մահացել է:

Նշումներ

- Փնտրեք հասարակ ծառայություն մատուցելու հնարավորություններ:
- Վերականգնման ուղերձը սովորեցրեք անդամներին, ներառյալ ակտիվ և ոչ ակտիվ անդամներին, նորադարձներին, և մասնակի անդամությամբ ընտանիքներին: Նրանց խնդրեք ներկայացնել ձեզ այն մարդկանց, ում կարող եք ուսուցանել:
- Պայմանավորվեք անցկացնելու հավաքույթ, որին անդամները կարող են հրավիրել իրենց ընկերներին կամ որի ժամանակ դուք կարող եք սովորեցնել ավետարանը և խնդրել անուններ տրամադրել:



- Առաջարկեք մարդկանց սովորեցնել ընտանեկան երեկոներ անցկացնելու մասին:
- Առաջարկեք նրանց, ում հանդիպում եք, շրջել տեղական հավաքատանը:
- Առաջարկեք հանդիպում կազմակերպել եպիսկոպոսի հետ:
- Մարդկանց հրավիրեք այցելել www.mormon.org ինտերնետային էջը:
- Կազմակերպեք սուրբ գրությունների ուսումնասիրության դասընթացներ:
- Ուսուցանեք անգլերենը որպես երկրորդ լեզու:
- Համապատասխան տարիքի մարդկանց հրավիրեք հաճախել սեմինարիա կամ ինստիտուտ:
- Գնացեք տնից տուն կամ խոսեք փողոցի մարդկանց հետ:
- Օգտագործեք փոխանցիկ քարտեր, թվային սկավառակներ (DVD), տեսաերիզներ և բրոշյուրներ:
- Անուններ խնդրեք նախկին ունկնդիրներից, ոչ ակտիվ անդամներից, ապագա երեցներից և ցանկացած մարդուց, ում հանդիպում եք:
- Համագործակցեք Եկեղեցու հասարակայնության հետ կապերի տեղական ներկայացուցիչների հետ տեղական թերթերում ձեր միսիոներական ծառայության մասին հոդվածներ տպագրելու համար:
- Մարդկանց հրավիրեք Եկեղեցու ժողովներին, միջոցառումներին և բաց դռների օրերին:
- Մարդկանց հրավիրեք մկրտության արարողություններին: Սա Եկեղեցին ներկայացնելու և ունկնդիրների համար Սուրբ Հոգին զգալու իդեալի հնարավորություն է:

## Ման եկեք բարի անելով

Ուսուցանման համար մարդկանց գտնելու հանդեպ ձեր հավատքը կարտահայտվի ձեր գործերի միջոցով: Իր մահկանացու ծառայության ժամանակ Փրկիչը «ծառայի կերպարանք առավ» (Փիլիպպեցիս Բ.7): Նա ման էր գալիս «բարի անելով» (Գործք Ժ.38) և «քարոզելով ավետարանը» (Մատթեոս Դ.23): Հետևելով այս օրինակին դուք կգտնեք նրանց, ովքեր կընդունեն ձեզ:

Ծառայության միջոցով դուք և նրանք, ովքեր պատրաստ են վերականգնված ավետարանը ստանալուն, կհանդիպեք մի զորեղ և ոգեշնչող ձևով: Ձեր լավ գործերը կօգնեն մարդկանց հասկանալ, որ դուք Աստծո ծառան եք, և հնարավորություններ կտան վերականգնված ավետարանն ուսուցանելու համար:

Նշումներ



Միսիայից առաջ շատ միսիոներների համար միսիոներական ծառայություն էր հանդիսանում այնպիսի պլանավորված «ծառայության ծրագրերը», ինչպիսիք են՝ օգնել որևէ մեկին տեղափոխվել նոր բնակավայր, ծառայել Եկեղեցու ֆերմայում, կամ մաքրել բակը: Որպես միսիոներ նման ծրագրավորված ծառայություն դուք կմատուցեք ամեն շաբաթ (լրացուցիչ տեղեկության համար տե՛ս *Missionary Handbook*):

Այս բաժնում նկարագրված ծառայության տեսակը կենտրոնացած է չպլանավորված հնարավորությունների վրա: Այս ծառայության համար անհրաժեշտ է լսել Սուրբ Հոգուն, որպեսզի գտնել փոքր և հասարակ բարի գործերի հնարավորությունները, որոնք դուք կարող եք առաջարկել Աստծո զավակներին: Աղոթեք և տեղյակ եղեք ամեն օր բարի գործ անելու հնարավորությունների մասին: Ջգտելով բարի գործ կատարել, դուք կտարվեք այն մարդկանց մոտ, որոնք պատրաստված են վերականգնված ավետարանը ստանալուն:

Հետևյալ պատմությունը կարդալիս, ուշադրություն դարձրեք, թե ինչպես միսիոներները բարի գործ կատարեցին և քարոզեցին ավետարանը:

*Փաբլոն կանոնավոր կերպով հաճախում էր մեր շաբաթական անգլերենի դասերին: Նա թոշակառու էր, որն անգլերեն էր սովորում, որպեսզի շեղեր միտքը իր հիվանդ կնոջ մասին մտածելուց: Մի օր նա դադարեց գալ: Ոչ ոք չէր հասկանում, թե ինչու: Մեկ ամիս անց նա նորից եկավ դասի: Նա փոխված էր: Նա նիհարել էր և ճնշված տեսք ուներ: Նա չէր մասնակցում, ինչպես նախկինում, և հեռացավ դասարանից, մինչ մենք կխոսեինք նրա հետ:*

*Հաջորդ շաբաթվա ընթացքում ես և իմ զուգընկերը աղոթում էինք, որ Փաբլոն նորից վերադառնա դասի, որպեսզի մենք կարողանայինք խոսել նրա հետ: Մեր աղոթքները ստացան իրենց պատասխանը և նա եկավ հաջորդ դասին: Դասից հետո մենք խոսեցինք նրա հետ և նա ասաց, որ կինը մահացել է: Նա մի փոքր պատմեց իր ապրումների մասին, իսկ մենք արտահայտեցինք մեր ցավակցությունը: Մենք նրան ասացինք, որ կուզենայինք նրան բացատրել, թե ինչպես նա կարող է նորից լինել իր կնոջ հետ: Նա բարձրացրեց գլուխը, նայեց աչքերիս մեջ և զայրույթի ու տխրության արցունքներով ասաց. «Եթե դուք իսկապես ուզում էիք ինձ օգնել, ապա կարող էիք գալ իմ տուն և օգնել, որ կյանքս նորից իր հունի մեջ ընկներ: Արդյո՞ք դա չպետք է անեն միսիոներները: Ես օգնության կարիք ունեմ, որպեսզի տունս և կյանքս նորից կարգավորվի»:*

> «Դուք ուզո՞ւմ եք լինել երջանիկ: Մոռացեք ինքներդ ձեզ և խորասուզվեք այս մեծ գործի մեջ: Ձեր ջանքերն ուղղեք մարդկանց օգնելուն: . . . Ավելի բարձրում կանգնեք, բարձրացրեք նրանց, ում ծնկները թուլացել են, պահեք նրանց ձեռքերը, ովքեր թևաթափ են եղել: Ապրեք Հիսուս Քրիստոսի ավետարանով»:
>
> – ՆԱԽԱԳԱՀ ԳՈՐԴՈՆ Բ. ՀԻՆՔԼԻ
> *TEACHINGS OF GORDON B. HINCKLEY*, 597

*Փաբլոյի դիտողությունը մեզ զարմացրեց և խոնարհեցրեց: Մենք առաջարկեցինք մեր օգնությունը: Կարծում եմ, դա այն պահն էր, երբ նա սկսեց վստահել մեր մտադրություններին: Նա մեզ ասաց, որ գնանք իր տուն հաջորդ օրը և օգնենք էտել ծառերը: Մենք նշանակված ժամին գնացինք նրա տուն և սկսեցինք աշխատել նրա հետ միասին: Ամիսներ շարունակ, թողնելով այգու ու տան հետ կապված բոլոր գործերը, նա հոգ էր տանում իր կնոջ համար: Կար բավականին գործ մեր երեքիս համար: Դա դարձավ նրա տանը շաբաթական ծառայության մի փորձառություն: Մենք էտում էինք ծառերը, հանում մոլախոտերը և հավաքում մրգերը: Մենք չէինք կարողանում ուսուցանել: Երբ մենք փորձում էինք սկսել, նա արագ փակում էր խոսակցությունը:*

Նշումներ

*Նա ավելի մեծ պատրաստակամությամբ խոսում էր իր կյանքի և ընտանիքի մասին: Հիմնականում, մենք միայն լսում էինք:*

*Մոտ մեկ ու կես ամիս հետո Փաբլոն մեզ զարմացրեց, երբ հարցրեց. «Ես խսկակե՞ս կարող եմ նորից տեսնել իմ կնոջը»: Մենք ուրախությամբ պատասխանեցինք, որ կարող է: Մենք վկայեցինք հավերժական ընտանիքների մասին և արեցինք ամեն հնարավոր բան, նրա հարցին պատասխանելու համար:.*

*Մենք Փաբլոյին սովորեցրեցինք փրկության ծրագիրը: Նրան հուզեց այդ վարդապետությունը: Հեռանալուց առաջ նա մի շարք հարցեր ուներ, որոնց պատասխանները ցանկանում էր ստանալ, օրինակ. «Ես և կինս կունենա՞նք արդյոք մարմին, երբ նորից հանդիպենք» և «Կլինե՞նք մենք ազատ հիվանդությունից և ցավից»: Մենք պատասխանեցինք նրա հարցերին և պայմանավորվեցինք հանդիպել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի սկզբունքները քննարկելու համար:*

*Դրանից ոչ շատ ժամանակ անց Փաբլոյի տեսքը լիովին փոխվեց: Նա ավելի հաճախակի էր ժպտում և կարծես թե ավելի խաղաղ էր: Նա, փաստորեն, «ավելի լավ աշխարհի հույս» ուներ (Եթեր 12.4): Մեր ծառայությունը նրան օգնեց վստահել այն ամենին, ինչ մենք սովորեցնում էինք:*

**Վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

- Ինչպե՞ս այս պատմության միսիոներները բարի գործ արեցին:
- Ի՞նչ դեր խաղաց ծառայությունը ավետարանը սովորելու Փաբլոյի որոշման մեջ:
- Դուք փնտրո՞ւմ եք ամեն օր բարի գործ կատարելու հնարավորություններ: Կարո՞ղ եք կատարելագործվել այդ բնագավառում:

Ձեր աշխատանքային տետրում գրեք կամ ձեր զուգընկերոջ հետ միասին քննարկեք, թե ինչպես կարող եք ամեն օր ավելի շատ բարի գործեր կատարել, որպեսզի ուսուցանման համար մարդիկ գտնեք:



Հավատացեք, որ Վերականգնման ուղերձի համար պատրաստ մարդիկ կդրվեն ձեր ճանապարհին: Աստված ձեզ կղնի նաև այնտեղ, որտեղ ձեր բարի գործերը և խոսքերը կպատրաստեն մարդկանց ընդունել միսիոներներին և Եկեղեցու անդամներին: Մարդկանց գտնելու ձեր բոլոր ջանքերում աղոթեք և փնտրեք ծառայելու, մյուսներին օգնելու և բարձրացնելու հնարավորություններ: Ծառայելիս, խոսեք ձեզ հանդիպած ցանկացած մարդու հետ: Հավատացեք, որ կարող եք կիսվել վերականգնված ավետարանով:

Ցանկացած տեսակի ծառայության ժամանակ դուք պետք է անեք այդպես, որովհետև սիրում եք ձեր եղբայրներին և քույրերին և, այդպիսով, պետք է հույս ունենաք, աղոթեք և ջանասիրաբար ցանկանաք սովորեցնել նրանց վերականգնված ավետարանը:

**Ուղեցույցներ**

**Աշխատելով բարի գործեր կատարել, հիշեք հետևյալ ուղեցույցները.**

- Մնացեք ձեր զուգընկերոջ հետ:
- Պահպանեք ձեր կոչման սուրբ էությունը:
- Պահեք միսիոներական կանոնները, մի նվիրաբերեք կամ ծախսեք ձեր դրամը:
- Շաբաթական համայնքային ծառայության հրահանգների համար տե՛ս *Missionary Handbook:*

Նշումներ

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ո՞րն էր ծառայության դերը Փրկչի կյանքում:**

3 Նեփի 17.7, 21 — Մատթեոս Ը.1–8 — Հովհաննես Դ.46–54
Մատթեոս Ը.1–4 — Մարկոս Ա.21–28

**Ո՞րն էր ծառայության դերը Ամմոնի և Ահարոնի միսիաների մեջ:**

Ալմա 17.19–25 — Ալմա 18.8–10 — Ալմա 22.3

**Ի՞նչ է Տերը ձեզանից պահանջում:**

3 Նեփի 27.21

## Ոչ մի ջանք կորած չէ

Երբ մարդիկ այլևս չեն հետաքրքրվում ավետարանով, դա չի նշանակում, որ ձեր աշխատանքը զուր էր: Որքան հնարավոր է շատ մարդկանց ծառայելու և ուսուցանելու ձեր շարունակ ջանքերը ճանապարհ է, որով Աստված Իր զավակներին պատրաստում է ի վերջո ընդունել Իր ծառաներին: Նա հաճախ Իր զավակներին է հասնում ձեր միջոցով: Անգամ եթե մարդիկ չեն ընդունում ավետարանը սովորելու հնարավորությունը, ձեր ծառայությունն ու խոսքերը նրանց հանդեպ Աստծո սիրո վկայություն են հաղիսանում և կարող են սերմեր ցանել, որոնց պտուղները կհավաքեն ապագա միսիոներները և Եկեղեցու անդամները:

Եթե մարդիկ չեն ընդունում ավետարանը, մի հուսահատվեք: Դուք բարձրացրել եք ձեր նախազգուշացնող ձայնը: Դուք նրանց հստակ ընտրություն եք առաջարկել: Քրիստոսի աշակերտները ափսոսում են, երբ մարդիկ որոշում են չապաշխարել, սակայն նրանք դեռ պարզ գիտակցում են, թե իրենք ովքեր են և ինչ են անում: Նրանք շարունակում են ջանասիրաբար առաջ ընթանալ:

### Հիշեք սա

- Կառուցեք Եկեղեցին, գտնելով նրանց, ովքեր կընդունեն ձեզ (տե՛ս ՎևՈւ 42.8):
- Փնտրեք Հոգին և հետևեք նրան ձեր որոնման ընթացքում:
- Ձեր տարածքի մարդիկ պատրաստվում են վերականգնված ավետարանը ստանալու համար:
- Եկեղեցու անդամները, ներառյալ ակտիվ, քիչ ակտիվ անդամները, ապագ ներցները, և նորադարձները, ուսուցանելու, մկրտելու և հաստատելու համար մարդկանց գտնելու ձեր լավագույն աղբյուրներն են:
- Ամուր հարաբերություններ հաստատեք եպիսկոպոսի և անդամների հետ:
- Սովորեցրեք, երբ գտնում եք, և գտեք, երբ սովորեցնում եք:
- Տեղյակ եղեք չպլանավորված հնարավորությունների մասին:
- Աղոթեք բարի գործեր կատարելու և Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման ուղերձը քարոզելու հնարավորությունների մասին:
- Կան ուսուցանման համար մարդկանց գտնելու շատ եղանակներ: Աշխատեք չկենտրոնանալ միայն մեկ կամ երկու մոտեցումների վրա:

## Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

Նշումներ

### Անհատական ուսումնասիրություն

- Կարդացեք ծնողներին ուղարկված միսիոների հետևյալ նամակը. «Ավտոբուսի մեջ ես մի հիանալի կնոջ էի ուսուցանում: Մենք վերադառնում էինք շրջանի ժողովից և գտնելով միակ ազատ նստատեղը, ես տեղավորվեցի և սկսեցի կարդալ նամակներս: Իհարկե, առաջինը, որ պետք է կարդարցվեր, ձերն էր, փոքրիկ Էվանի նկարներով: Ես նկատեցի, որ կողքս գտնվող աչքերը նույնպես նայում են նկարներին, և ես բարձրացրեցի աչքերս և հանդիպեցի մի ծեր կնոջ աչքերի: Նրա երեսին մի փոքր ժպիտ հայտնվեց, ապա նայեց պատուհանին: Այնուհետև նա փակեց աչքերը, կարծես պատրաստվում էր ննջել: Ես աղոթեցի. «Երկնային Հայր, ես ուզում եմ խոսել նրա հետ: Խնդրում եմ, օգնիր ինձ»: Մեկ րոպե անց նա բացեց աչքերը և ուղիղ նստեց, իսկ ես արագ ասացի. «Չե՞ք կարծում, որ նա լավիկն է»: Ես նրան ցույց տվեցի փոքրիկ Էվանի նկարները և սկսեցի խոսել ընտանիքների մասին: Ես նրան հարցրեցի իր երեխաների մասին և նրա աչքերը լցվեցին, երբ նա պատմում էր, թե ինչպես է իր աղջիկն ատում իրեն և չի ցանկանում ոչ մի կապ ունենալ իր հետ: Նա լաց էր լինում, իսկ ես լաց էի լինում նրա հետ: Ես նրան պատմեցի փրկության ծրագրի մասին և, որ Երկնային Հայրը ճանաչում է իրեն և գիտի, թե ինչ է նա ապրում: Ես լաց էի լինում և ասում, որ գիտեմ, որ դուստրը սիրում է իրեն, որովհետև ես էլ եմ մի մոր աղջիկ, որը սիրում է ինձ, իսկ ես սիրում եմ նրան: Ես բացատրեցի, որ մարդիկ, երբեմն, վատ որոշումներ են կայացնում և, որ իր դուստրը նույնպես ընտրելու իրավունք ունի: Նա ինձ ասաց, ժպտալով. «Ես վստահ եմ, քո մայրը իսկապես կարոտում է քեզ, և նա չի թողնի որ դու գնաս, երբ նորից տեսնի քեզ»: Նա շնորհակալություն հայտնեց իր հետ խոսելու համար և տվեց իր հասցեն, որպեսզի մենք կարողանանք կիսվել նրա հետ ավետարանով: Ավտոբուսից իջնելիս նա ասաց. «Ես սխալ ավտոբուս էի նստել, սակայն դուրս չեկա: Ոչ ոք չէր նստում իմ կողքին, մինչև որ դու չեկար. . . և տես, թե ինչ պատահեց»: Աստծո ծրագիրը կատարյալ է»:

  Այս գլխից ի՞նչ սկզբունքներ եք դուք տեսնում այս պատմության մեջ: Վերանայեք այս գլուխը և ցանկ գրեք ձեր աշխատանքային տետրում: Այդ սկզբունքներից որո՞նք դուք կարող եք կիրառել այսօր:

- Կարդացեք Հովհաննես ԺԵ.12–13; ԻԱ.15–17; Ա Թեսաղոնիկեցիս Բ և Մոսիա 18.8–0: Որքա՞ն լավ եք դուք կատարում մյուսներին սիրելու և ծառայելու ձեր պարտականությունը: Ինչպե՞ս կարող եք կատարելագործվել: Ձեր պատասխանները գրեք ձեր աշխատանքային տետրում:

- Ինչպե՞ս մարդիկ կարող են իմանալ, որ դուք Տիրոջ ծառան եք: Այս հարցի մասին մտածելիս կարդացեք Մորոնի 7.3–5; Մատթեոս Է.20; Հովհաննես ԺԳ.34–35: Ձեր մտքերը գրի առեք ձեր աշխատանքային տետրում:

- Կարդացեք 3 Նեփի 18.31–32; Ալմա 8.16; Ալմա 24.7–8; և Ալմա 32.41: Մտածեք, թե ինչ են այս հատվածները սովորեցնում նախկին ունկնդիրների հետ աշխատելու մասին: Ձեր սովորածը գրի առեք ձեր աշխատանքային տետրում և սովորեցրեք դրանք ձեր զուգընկերոջը:

### Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Օգտվելով ձեր օրագրից, պլանավորեք հանդիպել նորադարձների հետ: Նրանց խնդրեք պատմել, թե ինչպես են պատրաստվել ավետարանի համար: Տվեք հարցեր, օրինակ. Ե՞րբ դուք առաջին անգամ ծանոթացաք Եկեղեցու հետ: Ի՞նչը ձեզ վերջնականապես համոզեց հանդիպել միսիոներների հետ: Ձեր սովորածը գրի առեք ձեր աշխատանքային տետրում:

Նշումներ

- Վերանայեք հետևյալ թեմաներից յուրաքանչյուրը: Օգտվելով դասերից մշակեք մարդկանց գտնելու մի պարզ մոտեցում: Պարապեք, թե ինչպես կարող եք ուսուցանել այդ իրավիճակում և արագորեն անցնել Վերականգնման թեմային:
  - Զգալ առաջնորդության և կյանքի նպատակն իմանալու կարիք:
  - Ցանկանալ ավելի մոտենալ Աստծուն:
  - Օգնության կարիք զգալ կարևոր որոշումներ կայացնելիս:
- Կարդացեք *Our Search for Happiness*-ի 66–68 էջերը և *Հավատքին Հավատարիմ*-ի 59–64 էջերը, որպեսզի ավելի լավ հասկանաք ընտանեկան պատմության աշխատանքի վարդապետական հիմքը: Պատրաստվեք խոսել ընտանեկան պատմության մասին և կիսվել դրանով ձեր զուգընկերոջ հետ:
- Պատկերացրեք, որ դուք և ձեր զուգընկերը տեղափոխվում եք նոր տարածք: Դուք լավ վիճակում եք գտնում տարածքի գիրքը, սակայն չունեք ունկնդիրներ: Ի՞նչ դուք կանեիք, որպեսզի որքան հնարավոր է արագ նոր մարդկանց ավելացնեիք ուսուցման ձեր խմբին: Ծրագրեր կազմեք, որպեսզի իրականացնեք այդ մտքերից մի քանիսն այսօր:
- Հետևյալ միտքը հաջողություն է բերել շատ միսիոներներին և նրանց ընկերներին: Կարդացեք և ուսումնասիրեք այդ միտքը ձեր զուգընկերոջ հետ:
  - Անդամներին օգնեք կազմել իրենց ընկերների, բարեկամների և ծանոթների ցուցակը, որոնց հետ կցանկանային կիսվել ավետարանով: Վերանայեք այդ ցուցակը անդամների հետ և օգնեք նրանց աղոթքով ընտրել որևէ մեկին, որին կարող էին պատրաստել լսելու ավետարանը:
  - Նրանց օգնեք նշանակել մի օր և մինչև այդ օրը *(ա)* աշխատել այդ անձի կամ ընտանիքի հետ, նախապատրաստելով նրան իր տանը ուսուցանվելուն կամ *(բ)* ընկերակցելու որևէ այլ նախաձեռնությամբ հանդես եկեք նրանց պատրաստելու համար: Օր նշանակելը անդամների առաջ նպատակ է դնում և օգնում նրանց գործադրել իրենց հավատքը:
  - Նրանց օգնեք պլանավորել այն, ինչ անելու են այսօրվանից մինչև նշանակված օրը:
  - Ժամանակ առ ժամանակ հետաքրքրվեք և առաջարկեք ձեր աջակցությունն ու խրախուսանքը: Նրանց հրավիրեք կիսվել իրենց հաջողություններով և մտահոգություններով:

  Քննարկեք, թե ինչպես կարող եք կիրառել այդ միտքը այն տարածքում, որտեղ ծառայում եք:

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Կարդացեք և քննարկեք «Գտնել ձեր սեփական ուժերով» բաժինը:
  - Քննարկեք, թե ինչպես են այս մտքերը օգնել միսիոներներին ուսուցանման համար մարդիկ գտնել:
  - Գրատախտակին գրի առեք այլ մտքեր ուսուցանման համար մարդիկ գտնելու համար: Միսիոներներին հրավիրեք արտահայտել իրենց նտքերը:
  - Միսիոներներին հրավիրեք անձնական նպատակներ դնել մարդկանց գտնելու իրենց ունակությունները զարգացնելու համար:

Նշումներ

- Կազմեք գտնելու իրավիճակների ցուցակ:
  - Միսիոներներից յուրաքանչյուրին մի իրավիճակ տվեք: Յուրաքանչյուր միսիոների 5 րոպե տվեք՝ պատրաստվելու համար ուսուցանել Վերականգնման ուղերձը: Նրանց խնդրեք, անհրաժեշտության դեպքում, օգտվել «Հիսուս Քրիստոսի Ավետարանի Վերականգնման Ուղերձը» դասից:
  - Շեշտեք իրավիճակին համապատասխան ուղերձի տևողությունը հարմարեցնելու կարևորությունը: Օրինակ, միսիոներները ավելի շատ ժամանակ կարող են տրամադրել անդամի տանը ուսուցանելուն, քան խանութում որևէ մեկին ուսուցանելուն:
  - Եթե ժամանակը թույլ է տալիս, թող որքան հնարավոր է շատ միսիոներներ ուսուցանեն Վերականգնման ուղերձը իրենց հանձնարարված իրավիճակում:
- Ուսուցանեք «Ուսուցանեք, երբ գտնում եք, գտեք, երբ ուսուցանում եք» բաժնում տրված սկզբունքները:
  - Միսիոներներից յուրաքանչյուրին հանձնարարեք մեկ րոպե տևողությամբ ուղերձ պատրաստել, որը նա կարող է մատուցել մարդիկ գտնելու իրավիճակում: Այդ ուղերձները պետք է հիմնվեն միսիոներական դասերի վարդապետության վրա:
  - Միսիոներներին հրավիրեք պարապել, կիսվելով իրենց մեկ րոպեանոց ուղերձով միմյանց հետ: Կարող եք մարդիկ գտնելու տարբեր իրավիճակներ ներկայացնել, օրինակ ուսուցանում անդամի տանը, ուսուցանում դռան մոտ, ուսուցանում փողոցում, կամ զանգ որևէ մեկին, որի անունը տրամադրվել է մեկ ուրիշի կողմից: Միսիոներներին խնդրեք պարապել այս իրավիճակներից յուրաքանչյուրում:

## Միսիայի Նախագահ

- Օրինակ ծառայեք, կատարելով անդամ-միսիոների աշխատանք ձեր ընտանիքում: Ձեր փորձով կիսվեք միսիոներների և անդամների հետ:
- Խորհրդակցեք քահանայության ղեկավարների հետ, որպեսզի գտնեք ձեր միսիայում մարդկանց ուսուցանելու լավագույն եղանակը:
- Կազմակերպեք միսիոներական երեկո, որի ժամանակ դուք կարող եք խոսել ձեր միսիայի ունկնդիրների հետ: Համաձայնեցրեք ձեր տեղական քահանայության ղեկավարների հետ, որպեսզի անդամները կարողանան երեկոյին հրավիրել իրենց ընկերներին: Այս երեկոների ժամանակ ձեր ելույթից առաջ նորադարձներին խնդրեք բերել իրենց վկայությունները և պատմել դարձի գալու իրենց պատմությունները: Ձեր խոսքը կառուցեք Վերականգնման ուղերձի վրա:
- Միսիոներներին ցույց տվեք չորս սերունդ պարունակող ձեր սխեման և բացատրեք, թե ինչպես եք այն օգտագործում մարդիկ գտնելու ձեր աշխատանքում:
- Ժամանակ առ ժամանակ աշխատեք միսիոներների հետ, օգնելով նրանց գտնել ուսուցանման համար մարդկանց:

Նշումներ



# Ինչպե՞ս կարող եմ զարգացնել ուսուցման իմ հմտությունները

Նշումներ

**Մտածեք այս մասին**

- Ինչպե՞ս ես պետք է ուսուցանեմ սուրբ գրություններից:
- Ինչո՞ւ ես պետք է հարցեր տամ ուսուցանման ժամանակ:
- Ինչպիսի՞ հարցեր ես պետք է տամ:
- Ինչպե՞ս ես կարող եմ ավելի լավ լսել նրանց, ում սովորեցնում եմ, և Հոգուն:
- Ինչպե՞ս ես կարող եմ օգնել մարդկանց իրենց մտահոգությունները լուծելիս:
- Ինչպե՞ս ես կարող եմ օգնել մարդկանց հաղթահարել իրենց վատ սովորությունները և հակումները:

Դուք կանչվել եք սովորեցնելու վերականգնված ավետարանը այն բոլոր մարդկանց, ովքեր կլսեն ձեզ: Ուսուցումը ձեր բոլոր գործերից ամենակարևորն է: Դուք Քրիստոսանման արժանիքներ եք զարգացնում, սովորում եք միսիոներական դասերը, խորացնում եք ձեր միսիայի լեզվով խոսելու ձեր ունակությունները և ապավինում եք Հոգուն համոզիչ զորությամբ ուսուցանելու համար: Տերը այս ամենը պարզ ձևով արտահայտել է որպես խոստումով պատվիրան.

«Մի՛ փնտրիր հայտարարել իմ խոսքը, այլ, նախ փնտրիր ձեռք բերել իմ խոսքը, և հետո քո լեզուն պիտի արձակվի. հետո, եթե կամենաս, դու կունենաս իմ Հոգին և իմ խոսքը, այո՛, Աստծո զորությունը՝ մարդկանց համոզելու համար» (ՎևՈւ 11.21):

«Ոչ էլ նախօրոք հոգ արեք, թե ինչ եք ասելու. բայց շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին ձեզ կտրվի ամեն մարդու համար չափված բաժինը» (ՎևՈւ 84.85):

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը ասել են. «Մեր նպատակն է սովորեցնել վերականգնված ավետարանի ուղերձն այնպես, որպեսզի թույլ տանք, որ Սուրբ Հոգին ուղղություն ցույց տա և միսիոներներին և ուսուցանվողներին: Կարևոր է

Նշումներ

սովորել միսիոներական դասերը, սակայն դրանք չպետք է ուսուցանվեն զուտ դասախոսության տեսքով: Միսիոներները պետք է ազատորեն օգտագործեն իրենց սեփական խոսքերը, եթե հուշում են ստանում Հոգու կողմից: Նրանք չպետք է անգիր սովորած խոսքեր ասեն, այլ պետք է խոսեն իրենց սրտից իրենց խոսքերով: Նրանք կարող են շեղվել դասերի հերթականությունից, մատուցելով այն դասը, որը ոգեշնչմամբ զգում են, որ պետք է ուսուցանեն ունկնդրի հետաքրքրություններից և կարիքներից ելնելով: Արտահայտելով իրենց համոզմունքը իրենց իսկ խոսքերով, նրանք վկայություն կբերեն նրա ուսմունքների ճշմարտացիության մասին» (“Statement on Missionary Work,” First Presidency letter, 11 Dec. 2002):

Սովորեք ապավինել Հոգուն, որպեսզի նա ձեզ հուշի այն, ինչ պետք է ասեք և անեք: Սովորելով, զարգացնելով և օգտագործելով ուսուցանման հմտությունները, որոնք տրվում են այս գլխում, դուք ավելի ունակ գործիք կլինեք Տիրոջ ձեռքերում: Հոգին կհիշեցնի այն գիտելիքն ու ունակությունները, որոնք դուք զարգացրել եք, օգնելու համար ավելի մեծ զորությամբ ուսուցանելու համար: Ձեր ուսուցանման որակն ու զորությունը կօգնեն մյուսներին հասկանալ և զգալ վերականգնված ավետարանի կարևորությունը: Նրանց հասկացողությունը կբացվի ձեր անձնական արժանավորության շնորհիվ: Նրանց հասկացողությունը կբացվի նաև այն բանի շնորհիվ, թե որքանով եք դուք կենտրոնացնում ձեր ուշադրությունը իրենց վրա, որքան լավ եք բացատրում ավետարանը, օգտագործում սուրբ գրությունները, կիսվում ձեր վկայությամբ, հարցեր տալիս և կոչ անում ստանձնել և պահել պարտավորությունները:

## Հետևեք Հոգուն

«Հոգին ամենակարևոր ու եզակի տարրն է այս աշխատանքում: Հոգով մեծարելով ձեր կոչումը, դուք կարող եք Տիրոջ համար հրաշքներ գործել միսիայի դաշտում: Առանց Հոգու դուք երբեք հաջողության չեք հասնի, *անկախ* ձեր տաղանդներից և ունակություններից» (Ezra Taft Benson, seminar for new mission presidents, 25 June 1986):

## Հրավիրեք Հոգին

Հետևյալ առաջարկությունները ձեզ կօգնեն հրավիրել Հոգին ուսուցանելու ընթացքում.

- Աղոթեք:
- Օգտագործեք սուրբ գրությունները:
- Բերեք ձեր վկայությունը:
- Կիսվեք ձեր փորձառությամբ:
- Արտահայտեք Տիրոջ և մարդկանց հանդեպ ձեր սերը:

## Ինչպես սկսել ուսուցանելը

Ունկնդիրների հետ անցկացրած առաջին րոպեները շատ կարևոր են: Ունկնդիրները պետք է սովորեն վստահել ձեզ: Ձեր առաջին այցը սկսեք ջերմ, հարգալից և անկեղծ եղանակով: Մի քանի պարզ հարցեր տվեք, որոնք կօգնեն ձեզ հասկանալ նրանց կրոնական պատմությունը և այն, ինչ նրանք ակնկալում են ձեր այցերից: Օրինակ, հարցրեք. «Ի՞նչ դեր է ձեր կյանքում կատարում կրոնը»: Սակայն, մի տվեք անձնական հարցեր, որոնք նրանց անհարմար վիճակի մեջ կդնեն:

Սկսելուց առաջ բոլոր ներկա գտնվողներին խնդրեք միանալ լսելու ձեր դասը: Նրանց խրախուսեք անջատել հեռուստացույցը և հեռացնել այլ խանգարող պարագաները, որպեսզի Տիրոջ Հոգուն ոչինչ չխանգարի:

Բացատրեք, որ ցանկանում եք դասը սկսել և ավարտել աղոթքով: Առաջարկեք ասել բացիչ աղոթքը: Աղոթեք պարզ, սակայն եռանդուն, որպեսզի Տերը օրհնի այն մարդկանց, ում ուսուցանում եք, կյանքի բոլոր բնագավառներում, հատկապես, զգալու համար այն ճշմարտությունը, որը նրանց սովորեցնում եք:

Նշումներ

Անկեղծ հետաքրքրություն ցուցաբերեք և սեր արտահայտեք ունկնդիրների հանդեպ, ինչպես նաև հավատք արտահայտեք դարձի բերելու ավետարանի զորության հանդեպ (տե՛ս Մորոնի 7.43–48)։ Առաջնորդվելով Հոգով, ձեր ունկնդիրներին կարող եք արտահայտել ձեր մտքերը ստորև տրված օրինակների տեսքով.

- Քանի որ Աստված մեր Երկնային Հայրն է, մենք բոլորս եղբայրներ և քույրեր ենք։ Մենք կուզենայինք ձեզ դիմել որպես եղբայրներ և քույրեր։
- Յուրաքանչյուր անձ, ում մենք սովորեցնում ենք, ունի իր խնդիրներն ու մտահոգությունները։ Անկախ ձեր խնդիրներից և մտահոգություններից Փրկիչը և Նրա ուսմունքները` ավետարանը, կօգնեն ձեզ։
- Մեր ուղերձը ձեզ հնարավորություն կտա բարձրացնել ձեր կյանքի որակը։ Այն ձեզ կօգնի պայքարել այն խնդիրների և դժվարությունների դեմ, որոնց հանդիպում եք կյանքում։
- Մեր ուղերձը, որը կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի վրա, մեծ արժեք և կարևորություն է ներկայացնում։
- Մենք բոլորս սխալներ ենք կատարում կյանքում և այդ սխալները մեղքի և ամոթի զգացում են մեզ մոտ առաջացնում։ Այդ զգացումները չեն կարող վերանալ առանց ապաշխարության և ներման։ Դրանք ամբողջովին կարող են վերականգնվել Քրիստոսի Քավության միջոցով։
- Մեր ուղերձը հնարավոր չէ սովորել մեկ անգամից։ Ըմբռնումը ժամանակի ընթացքում կգա աղոթքի, ուսումնասիրության, փորձառությունների և Աստծո պատվիրանները պահելու միջոցով։
- Մենք ունենք թուլություններ, ինչպես յուրաքանչյուրն ունի։ Մենք մի գուցե լավ չենք խոսում ձեր լեզվով կամ ի վիճակի չենք պատասխանելու ձեր բոլոր հարցերին։ Սակայն մենք կանչվել ենք Աստծո մարգարեի կողմից կիսվելու նրանով, ինչ գիտենք։ Մենք գիտենք, որ մեր ուղերձը ճշմարիտ է։
- Մենք ձեզ համար ուղեկիցներ կլինենք, որպեսզի դուք ինքներդ կարողանաք իմանալ մեր ուղերձի ճշմարտությունը։ Ձեր որոշումն է ընդունել ուղերձը և գործել ըստ դրա։ Այդ պատճառով, դուք ազատ կարող եք հարցեր տալ։
- Մինչ դուք անկեղծորեն ձգտում եք հասկանալ մեր ուղերձը, դուք կարող եք դժվարությունների հանդիպել, սակայն Աստված կօգնի ձեզ։
- Ընդունելով մեր ուղերձը, դուք կսովորեք, թե ինչպես Աստծո հետ ուխտեր կամ խոստումներ կապել։ Դուք կսովորեք, թե ինչպես փոխել ձեր կյանքը, որպեսզի այն ներդաշնակ լինի Նրա ուսմունքների հետ։ Դուք կարող եք հետևել Հիսուս Քրիստոսի ուսմունքներին և մկրտվել համապատասխան իշխանության կողմից (տե՛ս Հովհաննես Գ.5)։

Դասի ժամանակ վարդապետությունները սովորեցնելուց առաջ կարող եք մի փոքր ակնարկ անել, բացատրելով, թե ինչ եք պատրաստվում ուսուցանել։ Մարդկանց օգնեք տեսնել, որ այն վերաբերվում է անձամբ իրենց։ Ունկնդիրներից շատերը, ում դուք սովորեցնում եք, պատրաստվել են Տիրոջ կողմից (տե՛ս Ալմա 16.16–17)։ Առաջին հանդիպման ժամանակ, երբ դուք միասին հոգևոր փորձառություններով կիսվեք, նրանք կհասկանան, որ դուք Տիրոջ ծառաներն եք։

**վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Ձեր զուգընկերոջ հետ աշխատեք մի քանի նպատակների վրա, որոնցով կարող եք սկսել դասը այս առաջարկություններից օգտվելով։

Նշումներ

## Ձեր ուսուցանումը հարմարեցրեք որոշակի կարիքներին



Յուրաքանչյուր անձ կամ ընտանիք, որին դուք սովորեցնում եք, յուրահատուկ է: Թեև դուք չեք հասկանա նրանց բոլոր հետաքրքրությունները, նվաճումները, կարիքները և մտահոգությունները, դուք պետք է զգայուն լինեք նրանց պայմանների հանդեպ: Անկախ իրենց կարիքներից և խնդիրներից, մարդկանց համար ամենամեծ օգնությունը կլինի այն, եթե նրանք ընդունեն և ապրեն ավետարանով: Դուք ի վիճակի կլինեք հարմարեցնել ձեր ուսուցանումը, եթե լսեք Հոգու հուշումներին:

Դուք կարող եք փոխել դասերի հերթականությունը, եթե ոգեշնչվում եք հարմարեցնել դրանք ունկնդիրների հետաքրքրություններին և կարիքներին: Դուք կարող եք մեկ դասի սկզբունքները սովորեցնելու համար մեկից ավելի հանդիպումներ օգտագործել, երբեմն կարող եք երկու դասերի նյութը մեկ հանդիպման ժամանակ սովորեցնել: Երկնային Հայրը ճանաչում է Իր զավակներին, դուք կարող եք վստահել ոգեշնչմանը ուսուցանելիս որոշումներ կայացնելու համար: Աղոթեք տարբերելու պարգևի համար և ուշադրություն դարձրեք ձեր ստացած մտքերին և զգացողություններին ուսուցանման առարկայի վերաբերյալ:

Դուք կարիք կզգաք փոփոխելու ձեր ուսուցանումը՝ ավելի շատ ուշադրություն հատկացնելով այն պարտավորություններին, որոնք ունկնդիրը դժվարանում է պահել: Օրինակ, մեկը կարող է հեշտությամբ ընդունել, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, մինչդեռ մյուսը կարող է դժվարությամբ ընդունել Աստվածաշնչից բացի մեկ ուրիշ գիրք: Մեկը կարող է դժվարություններ ունենալ ծխելը թողնելու հետ կապված, սակայն պատրաստակամորեն կարող է ընդունել տասանորդի օրենքը:

Երբ պլանավորում եք, թե երբ ուսուցանեք որոշակի վարդապետություններ, զգայուն եղեք, մտածելով, թե որքան տեղեկությամբ կարող եք կիսվել: Ուսուցանեք այնպիսի արագությամբ, որպեսզի այն մատչելի լինի ունկնդիրների համար: Ոմանք ավելի արագ կառաջադիմեն, մյուսները՝ ավելի դանդաղ: Բավական հարցեր տվեք և ուշադիր լսեք նրանց պատասխանները, որպեսզի հստակ հասկանաք, թե որքան արագ և խորն է ունկնդիրը սովորում և կիրառում ձեր ներկայացրած վարդապետությունները:

Մտածեք ժամանակի մասին: Ուսուցանման հանդիպումների մեծ մասը չպետք է տևեն 45 րոպեից ավել: Սակայն, անհրաժեշտության դեպքում, ուսուցանման այցը կարելի է ավարտել 15 կամ 20 րոպեում: Եթե անձը ձեզ հետ հանդիպելու համար միայն 15 րոպե ժամանակ ունի, ձեր ուսուցումը հարմարեցրեք այդ սահմանափակ ժամանակին:

Վստահեք այն խոստմանը, որ Հոգին անհրաժեշտ ժամին, անհրաժեշտ պահին ձեզ կտա այն, ինչ պետք է ասեք (ՎևՈւ 100.6):

### Վարժություն. անհատական ուսումնասիրություն

Պատկերացրեք, թե դուք քայլում եք փողոցով և նկատում եք մի ծեր մարդու, որը չի կարողանում ծանր պարկերը դնել աղբարկղի մեջ: Դուք և ձեր զուգընկերը օգնում եք նրան, և նա, ի պատասխան, հարցնում է, թե ով եք դուք: Մի փոքր զրույցից հետո նա ձեզ իր տուն է հրավիրում և համաձայնվում է լսել ձեր ուղերձը: Առաջին զրույցի ժամանակ նա ձեզ ասում է, որ.

Նշումներ

- Իր կինը մահացել է մեկ տարի առաջ, և նա շատ է նրան կարոտում:
- Նա շուտ է հոգնում սրտի թուլության պատճառով:
- Նա այժմ ավելի շատ է մտածում, քան անցյալում, թե արդյոք Աստված գոյություն ունի:

Ի՞նչ դուք կարող եք նրան սովորեցնել: Ինչպե՞ս կարող եք հարմարեցնել ձեր ուսուցանումը նրա կարիքներին և մտահոգություններին:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ի՞նչ է նշանակում տալ «ամեն մարդու համար չափված բաժինը»:**

Ալմա 29.8 ВևՈւ 84.85

**Ի՞նչ է Տերը խոստացել հավատարիմ միսիոներներին:**

ՎևՈւ 68.2–4 ՎևՈւ 100.5–8 Մաթևոս ժ.19–20

## Ձեր զուգընկերոջ հետ ուսուցանեք միասնության մեջ



Տերը պատվիրել է. «Դուք առաջ պիտի գնաք իմ Հոգու զորությամբ, քարոզելով իմ ավետարանը, երկու-երկու» (ՎևՈւ 42.6): Ձեր ուսուցանումն ավելի զորեղ և հետաքրքիր կլինի, եթե դուք և ձեր զուգընկերը միասնական աշխատեք: Ամեն օր սովորելով և պլանավորելով, քննարկեք, ինչպես պետք է սովորեցնեք, որպեսզի միասնական լինեք և մեկ ձայնով սովորեցնեք:

Ձեր ուսուցանումն էլ ավելի զորեղ կլինի, եթե դուք և ձեր զուգընկերը հերթով մատուցեք ձեր դասի տարբեր հատվածները: Խուսափեք մեխանիկորեն դասը մատուցելուց: Աջակցեք ձեր զուգընկերոջը, լինելով երկրորդ վկան այն ճշմարտությունների, որի մասին նա վկայում է: Հետևեք ձեր տպավորություններին, երբ Սուրբ Հոգին ձեզ հուշում է ասել որևէ բան: Որպես զուգընկերներ պատրաստ եղեք զիջելու միմյանց, որպեսզի չվանեք Հոգու առաջնորդությունը: Խոսելիս ունկնդիրների հետ աչքերի շփում պահպանեք: Երբ չեք խոսում, աղոթեք ձեր զուգընկերոջ համար և ուշադրությամբ հետևեք, թե ինչպես է արձագանքում ունկնդիրը:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ինչպե՞ս են զուգընկերները աջակցում միմյանց:**

Ալմա 12.1 ՎևՈւ 42.6 ՎևՈւ 52.9–10

## Հրավիրեք անդամներին օգնել ձեզ ուսուցանել

Հնարավորության դեպքում հրավիրեք անդամներին, նախընտրելի է վերջերս մկրտված նորադարձներին, օգնել ձեզ ուսուցանելիս: Կատարյալ տարբերակ կլինի ընդգրկել Եկեղեցու այն անդամներին, որոնք անցյալում նույն եկեղեցին են այցելել, ինչ ներկա ունկնդիրները: Անդամներին ցույց տվեք դասը և քննարկեք, թե ինչ եք ուզում, որ նրանք ուսուցանեն: Քննարկեք, ինչպես կարող եք միասին աշխատել: Օրինակ, եթե հարմար է, անդամներին

Նշումներ

խնդրեք պատմել, թե ինչպես են իրենք սովորել, ընդունել դասի որոշակի սկզբունքը և ապրել ըստ դրա: Նրանց խնդրեք բացատրել, թե ինչպես են Եկեղեցուն միանալու որոշում կայացրել: Երբ անդամները մասնակցում են ուսուցմանը, նրանք հնարավորություն են ունենում զգալու միսիոներական աշխատանքի ուրախությունը: Դա նաև ունկնդրին ընկերակցելու հնարավորություն է տալիս: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը սովորեցրել է.

> *Ուսուցանման ընթացքում ունկնդիրները օգուտ կքաղեն անդամ զույգերի վկայության զորությունից, որոնք վերջին տարիների ընթացքում քայլ են կատարել դեպի մկրտություն և Եկեղեցու անդամություն: Կանադական Միսիայում՝ Օնտարիոյում և Քվեբեքում, որտեղ ապրում էր իմ ընտանիքը մինչ ես նախագահում էի միսիայում, մենք բացահայտեցինք, որ բնակչության մեծ մասը պատկանում էր երեք գերիշխող հավատքների՝ Հռոմի Կաթոլիկ, Անգլիկանական և Կանադայի Միացյալ Եկեղեցուն: Միսիայի բոլոր քաղաքներում մենք այնպես էինք անում, որպեսզի այդ հավատքներից վերջերս մկրտված ընտանիքները կարողանային միսիոներների հետ մասնակցել նոր ունկնդիրների ուսուցանմանը, և որպեսզի անդամ զույգերը կարողանային միսիոներների հետ կատարել, մի գուցե, երկրորդ կամ երրորդ այցը:*
>
> *Օրինակ, երբ միսիոներները, որոնք աշխատում են Կանադայի Միացյալ Եկեղեցուն պատկանող անձանց հետ, որքան զորեղ կինչեր Եղբայր և Քույր Սթոունմենների վկայությունը, որոնք նույն եկեղեցուց են եկել: Եղբայր Սթոունմենը, որը տպագրիչ էր, ասում էր. «Երբ ես միացա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն, ես Միացյալ Եկեղեցու առաջատար տպագրիչն էի: Ես կորցրեցի իմ աշխատանքը, սակայն ավելի լավ աշխատանք գտա: Ավելին, ես գտա ճշմարտությունն իր հավերժության մեջ: Դուք նույնպես կարող եք նման փոփոխություն կատարել: Թույլ տվեք ձեզ տանել մեզ հետ կիրակի առավոտյան, որպեսզի մենք եկեղեցում միասին նստենք: Այդ ժամանակ դուք կարող եք ինքներդ լսել և զգալ: Մենք կլինենք ձեր կողքին»:*
>
> *Էնթոնի և Եդիթ Բելֆիգլիոները մեծ ընկերներ դարձան Հռոմի Կաթլիկ Եկեղեցում արմատներ ունեցող մարդկանց հետ: Արդյունքը նույնն էր: Դա հնարավոր է: Այդ նորադարձները մնում են դարձի մեջ: Բացի դա, այս հանձնարարությունը կատարելու համաձայնություն տված զույգերը ավելի խորն են զգում իրենց արմատները ավետարանի հարուստ հողի մեջ: Եվ Եղբայր Սթոունմենը, և Եղբայր Բելֆիգլիոն դարձան կարգված հայրապետներ: Միսիոներների և անդամների միացյալ ջանքերը այնպիսի համագործակցություն ստեղծեցին, որը հավաքեց թանկարժեք հոգիների առատ բազմություն (missionary training satellite broadcast, 25 Apr. 2003):*

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Պատկերացրեք, որ դուք անց եք կացնում անդամի տանը որևէ ընտանիքի առաջին դասը: Որոշեք, թե ինչպես կպատրաստեիք հետևյալ անդամներից յուրաքանչյուրին ուսուցանման մեջ ձեզ օգնելու համար.

- Ծեր միսիոներ, որը վերջերս է վերադարձել լիաժամկետ միսիայից
- Քահանա
- Վերջերս մկրտված նորադարձ
- Եպիսկոպոս

## Օգտագործեք սուրբ գրությունները

Եկեղեցու կանոնիկ աշխատանքները ձեր հիմնական աղբյուրն են Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը ուսուցանելու համար: Դուք կարող եք նաև օգտագործել ապրող մարգարեների խոսքերը: Կան շատ պատճառներ սուրբ գրությունները որպես ձեր ուսուցանման հիմք օգտագործելու համար: Օրինակ.

- Տերը և Նրա մարգարեները մեզ հրահանգել են դա անել (տե՛ս ՎևՈւ 42.12, 56–58; 71.1): Վերջին օրերի մարգարեներից մեկը խորհուրդ է տվել. «Մորմոնի Գրքում Տիրոջ խոսքերը և դրանց օգտագործման ձևերը . . . պետք է օգտագործվեն մեր կողմից ավետարանի

Նշումներ

սկզբունքները սովորեցնելիս» (Ezra Taft Benson, “The Book of Mormon and the Doctrine and Covenants,” *Ensign,* May 1987, 84):

- Սուրբ գրությունները հրավիրում են Սուրբ Հոգին ձեր ուսուցանման ժամանակ: Դրանք սովորեցնում են Աստծո խոսքը զորությամբ (տե՛ս Ալմա 31.5):
- Սուրբ գրությունները պատասխանում են հոգու մեծ հարցերին (տե՛ս 2 Նեփի 32.3; Հակոբ 2.8):
- Սուրբ գրությունները իշխանություն են տալիս ձեր ուսուցմանը և հիմնավոր են դարձնում այն, անգամ քրիստոնեությանը չվերաբերվող բնագավառներում:



© Greg K. Olsen: Մի բազմացնեք:

Սուրբ գրությունները զորությամբ ուսուցանելու ձեր ունակությունը հիմնականում կախված է այն ժամաքանակից, որը դուք ծախսում եք անձամբ դրանք ուսումնասիրելու վրա: Ամեն օր խոսքով սնվելով, դուք կզարգացնեք սուրբ գրությունները ուսուցանելու ձեր ունակությունը: Բացի դա, սուրբ գրությունները ուսումնասիրելու և դրանց մասին խորհելու ձեր կոչերը ավելի զորեղ կհնչեն, եթե դուք անեք այդ նույնը ձեր կյանքում: Մարդկանց օգնեք հավատք զարգացնել սուրբ գրութունների, հատկապես՝ Մորմոնի Գրքի հանդեպ, որոնք հայտնված ճշմարտության աղբյուրներ են: Երբ մարդիկ սկսում են հավատալ սուրբ գրություններին, դուք ավելի հեշտությամբ կկարողանաք օգնել նրանց ճիշտ հասկանալ վարդապետությունները: Հետևյալ առաջարկությունները նույնպես կարող են ձեզ օգնել:

**Ներկայացրեք սուրբ գրությունը:** Համառոտ տվեք հատվածի մասին հայտնի տեղեկությունը և դրա բովանդակությունը: Ունկնդրին հրավիրեք ուշադրություն դարձնել հատվածի որոշակի մտքերին: Սուրբ գրությունների սահմանափակ գիտելիք ունեցող մարդկանց ուսուցանելիս, կարող եք սկսել, նկարագրելով հատվածի բովանդակությունը, օգտագործելով այնպիսի լեզու, որպեսզի նրանք հասկանան: Ստորև տրվում են սուրբ գրությունը ներկայացնելու օրինակներ.

- «Ահա Ջոզեֆ Սմիթի պատմության մեջ մենք ունենք Ջոզեֆի սեփական խոսքերն այն մասին, թե ինչ պատահեց նրա հետ, երբ նա գնաց պուրակ աղոթելու: Նա ասում է. «Ես տեսա լույսի մի սյուն …» »:
- «Այս հատվածում Ալմա մարգարեն աղքատ մարդկանց սովորեցնում է կիրառել Աստծո խոսքի հանդեպ իրենց հավատքը: Աստծո խոսքը նա համեմատում է սերմի հետ, որը կարող է ցանվել մեր սրտում: Դուք կարող եք սկսել կարդալ հատվածը . . . »:

**Կարդացեք հատվածը:** Բարձրաձայն կարդացեք հատվածները կամ խնդրեք ունկնդրին բարձրաձայն կարդալ այն: Հասկացողություն ցուցաբերեք կարդալու հետ դժվարություններ ունեցող մարդկանց հանդեպ: Եթե նրանք դժվարանում են հասկանալ հատվածը, դանդաղ կարդացեք նրանց հետ և օգնեք հասկանալ առավել դժվար պահերը: Կամ նրանց ավելի պարզ հատված տվեք կարդալու: Կարող եք նաև տալ դժվար բառերի և արտահայտությունների սահմանումը.

- «Թող խնդրի Աստուածանից, որ ամենին տալիս է առատությամբ և չէ նախատում [չի նախատում նշանակում է, որ Աստված չի մեղադրում] ևկտրվի նրան» (Հակոբոս Ա.5):

Նշումներ

Սուրբ գրությունների որոշ հատվածներ պարզ են և բացատրության կարիք չունեն: Մյուսներին պետք է ավելի շատ ժամանակ տրամադրեք, կարդացածը բացատրելու համար:

**Կիրառեք սուրբ գրությունները:** Սուրբ գրությունները «վերագրեք» ձեզ և ունկնդիրներին, ցույց տալով, թե որքան արդի են այդ սկզբունքներն այսօր (տե՛ս 1 Նեփի 19.23): Ունկնդիրներին ցույց տվեք, թե ինչպես կարող են կիրառել սկզբունքներն իրենց կյանքում: Այդ դեպքում, նրանք կիմանան, որ այդ վարդապետությունը ճշմարիտ է: Բերեք ձեր վկայությունը տվյալ սկզբունքի մասին և խոստացեք օրհնություններ: Օրինակ.

- «Ալմայի ժողովուրդը, ինչպես դուք, ծանր բեռներ ունեին իրենց վրա, ավելի, քան կարող էին կրել: Սակայն նրանք հավատք գործադրեցին և աղերսեցին ամենազոր Աստծուն: Նա ուժ տվեց նրանց, որպեսզի կարողանային տանել իրենց դժվարությունները, իսկ հետո ազատեց նրանց իրենց փորձություններից: Ինչպես նա արեց այդ մարդկանց համար, ես գիտեմ, որ Աստված ձեզ նույնպես կօգնի ձեր փորձությունների մեջ: . . . »:
- «Մորմոնի ջրերի մոտ մարդկանց տրված Ալմայի հրահանգը վերաբերվում է և մեզ այսօր: Չոն, դուք կանե՞ք . . . »:

Մարդիկ, որոնց դուք ուսուցանում եք, շատ տարբեր հայացքներ ունեն սուրբ գրությունների վերաբերյալ, տարբեր աստիճանի են ծանոթ Աստվածաշնչի հետ, տարբեր խորությամբ են հասկանում սուրբ գրությունների լեզուն և հավատում, որ Աստվածաշունչը պարունակում է Աստծո խոսքը: Բոլոր ունկնդիրներին օգնեք գնահատել սուրբ գրությունները: Ձեր ուսուցանման մեջ հաջողությամբ սուրբ գրություններն օգտագործելիս, դուք կարող եք ունկնդիրներին օգնել ինքնուրույն սկսել ուսումնասիրել սուրբ գրությունները: Յուրաքանչյուր այցից հետո որոշակի գլուխներ կամ հատվածներ առաջարկեք, որ նրանք կարդան: Կարող եք հարցեր տալ նրանց, որոնց մասին նրանք կմտածեն կարդալիս և, որոնք կարող եք քննարկել հաջորդ հանդիպման ժամանակ: Սա նրանց կխրախուսի ամեն օր տանը ուսումնասիրել սուրբ գրությունները և մասնակցել Եկեղեցու ժողովներին և դասերին, որոնց ժամանակ օգտագործվում են սուրբ գրությունները:

### Սուրբ գրությունների ըմբռնումը տարբեր երկրներում

Կրոնների մեծ մասը սուրբ տեքստեր կամ սուրբ գրքեր ունեն, սակայն դրանց օգտագործումն ու ըմբռնումը տարբերվում է նրանից, թե ինչպես են անդամները մեր Եկեղեցում ըմբռնում սուրբ գրությունները: Օրինակ, դուք կարող եք բացատրել, որ նշելով սուրբ գրությունների որոշակի տողերը, դուք ցանկանում եք ավելի լավ հասկանալ և կիրառել սուրբ գրությունների ուսմունքները: Դա անհարգալից վերաբերմունք չէ սուրբ գրքերի հանդեպ: Նրանց, ում սովորեցնում եք, օգնեք հասկանալ, որ կանոնիկ աշխատանքները կարևոր են, որովհետև պարունակում են Տիրոջ խոսքն այն տեսքով, ինչպես գրվել է Աստծո մարգարեների կողմից, և մենք ընդունում ենք դա որպես ճշմարտություն:

### Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

**Վերանայեք հետևյալ հատվածներից մեկը: Որոշեք, ինչպես դուք.**

- Կներկայացնեիք այդ հատվածը:
- Տեղեկություն և բովանդակություն կտայիք:
- Կկարդայիք հատվածը և կբացատրեիք դրա իմաստը:
- Կբացատրեիք դժվար խոսքերը:
- Կօգնեիք ունկնդիրներին կիրառել դրանք իրենց կյանքում:

Մորմոնի Գրքի Տիտղոսաթերթ, 3 Նեփի 11; Մորոնի 10.3–8; Հովհաննես ԺԵ.3; Հռովմայեցիս Ը.16–17; Ա Կորնթացիս ԺԵ.29; Հակոբոս Ա.5; Ա Պետրոս Գ.19–20; Ամովս Գ.7

Նշումներ

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ինչո՞ւ է կարևոր ուսուցանել սուրբ գրությունները:**

1 Նեփի 19.23 | ՎևՈւ 20.7–12 | Բ Տիմոթեոս Գ.15–17
2 Նեփի 4.15–16

## Սովորեցրեք հասկանալի ձևով

> «Իրական խելամտություն է պահանջվում մարդուց վերցնել մի խորհրդավոր ու նշանավոր թեմա և բացել այն ու պարզեցնել այնպես, որպեսզի երեխան կարողանա հասկանալ այն»
>
> – ՆԱԽԱԳԱՀ ՋՈՆ ԹԵՅԼՈՐ
> *THE GOSPEL KINGDOM,* SEL. G. HOMER DURHAM (1943), 270

Մարդիկ ավելի հակված կլինեն հավատալու ավետարանի Վերականգնման ուղերձին, եթե հասկանան ուղերձը: Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստն ասել է. «Ուսումնասիրեք, խորհեք և սովորեցրեք սուրբ գրություններից, հատկապես Մորմոնի Գրքից և Նոր Կտակարանից: Իմացեք ճշմարտությունը այնքան լավ, որպեսզի կարողանաք հստակ ներկայացնել այն: Բ. Հ. Ռոբերտսը գրել է. «Որպեսզի իմացվի, ճշմարտությունը պետք է ներկայացվի, և որքան հստակ և ամբողջովին այն ներկայացվի, այնքան ավելի մեծ հնարավորություն կունենա Սուրբ Հոգին մարդկանց հոգիներին վկայելու, որ այդ աշխատանքը ճշմարիտ է» [*New Witnesses for God,* 3 vols. (1909), 2:vii]: Դուք չեք կարող դարձի բերել ուրիշներին, եթե դուք դարձի չեք եկել» (“What I Want My Son to Know before He Leaves on His Mission,” *Ensign*, May 1996, 41):

Ձեզ պատվիրված է հիմնավորել և բացատրել այն սուրբ գրությունները, որոնք սովորեցնում եք (տե՛ս ՎևՈւ 68.1): *Բացատրել* նշանակում է ներկայացնել ավելի պարզ: Դա նշանակում է, որ դուք բացատրում եք վարդապետությունների և սուրբ գրությունների հատվածների իմաստը պարզ և հստակ, ապավինելով Սուրբ Հոգուն, որը կհուշի ձեզ այն, ինչ պետք է ասեք: Դուք օգտագործում եք հարցալից, սակայն խոսակցական լեզուն օգնելու համար մարդկանց հասկանալ վարդապետության սկզբունքը: Դուք հարցեր եք տալիս օգնելու նրանց մտածել սկզբունքների մասին և տեսնելու, թե արդյոք նրանք հասկանում և ընդունում են այն, ինչ դուք սովորեցնում եք:

Գլուխ 3-ի առաջին երեք դասերի վերջում տրվում է բառերի ցանկը, որոնք անծանոթ կլինեն նրանց համար, ում սովորեցնում եք: Հասկանալի ձևով ուսուցանել նշանակում է նաև բացատրել բառերը, արտահայտությունները և մտքերը, որպեսզի մարդիկ ավելի լավ հասկանան դրանք: Դուք կարող եք մեծացնել ավետարանը բացատրելու ձեր ունակությունը, եթե.

- Հասկանաք այն բառերը, որոնք օգտագործում եք:
- Սահմանեք բառերը, որպեսզի ուրիշները ևս հասկանան: Շատ բառեր, որոնք հատուկ նշանակություն ունեն Եկեղեցու անդամների համար, պարզ սահմանված են Սուրբ Գրքերի Ուղեցույցում և *Հավատքին Հավատարիմ* ձեռնարկում:
- Հարցեր տաք, օրինակ. «Դուք գիտե՞ք, թե ինչ մենք ի նկատի ունենք, երբ ասում ենք . . . » կամ «Դուք կարո՞ղ եք ձեր խոսքերով ասել այն, ինչի մասին մենք նոր խոսեցինք»:

Գլուխ 3-ի վարդապետությունն ուսումնասիրելիս գտեք այն բառերը, որոնք, ձեր կարծիքով, դժվար են ունկնդրին հասկանալ: Գլուխ 3-ի վարդապետությունն ուսուցանելիս գրի առեք այն բառերը, արտահայտությունները և մտքերը, որոնք ունկնդիրների համար դժվար է հասկանալ:

Նշումներ

Սահմանեք բառերը, օգտվելով վերը նշված աղբյուրները: Ձեր սահմանումները ստուգեք ունկնդիրների և վերջերս մկրտված նորադարձների հետ:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Ինչո՞ւ մենք պետք է պարզեցնենք կամ մանրամասն բացատրենք վարդապետությունները:**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 8.3 | Ալմա 12.1 | ՎևՈւ 68.1–5 |
| Մոսիա 27.35 | 3 Նեփի 26.1 | ՎևՈւ 71.1 |

**Ինչպե՞ս ենք մենք սովորում: Ինչո՞ւ է կարևոր բացել կամ աստիճանաբար մեկնաբանել տեղեկությունը:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 28.30 | Մոսիա 2.9 | ՎևՈւ 98.11–12 |
| Հակոբ 4.13 | | |

**Ինչո՞ւ է պարզությունը կարևոր:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 25.4, 7, 28 | Ալմա 13.23 | Ննեմիա Ը.8 |
| 2 Նեփի 32.7 | | |

**Ինչպե՞ս է Տերը հաղորդակցվում Իր զավակների հետ:**

| | |
|---|---|
| 2 Նեփի 31.3 | ՎևՈւ 1.24 |

## Հարցեր տվեք



Հիսուս Քրիստոսը հաճախ հարցեր էր տալիս օգնելու համար մարդկանց խորհել և կիրառել սկզբունքները: Նրա հարցերը մտածելու, հոգին քննելու և պարտավորվելու առիթ էին տալիս:

Լավ հարցերը ձեզ կօգնեն հասկանալ մյուսների հետաքրքրությունները, մտահոգությունները կամ նրանց հարցերը: Դրանք կարող են խորացնել ձեր ուսուցանումը, հրավիրել Հոգին և ձեր ունկնդիրներին օգնել սովորել:

Վատ հարցերը կարող են անհարմար վիճակի մեջ դնել, նյարդայնացնել կամ վիրավորել ունկնդիրներին: Դրանք կարող են պատճառ հանդիսանալ, որ դուք կորցնեք ուսուցանման իրավիճակի վերահսկումը: Աշխատեք այնպիսի հարցեր տալ, որոնք.

- Պարզ են և հեշտ են հասկացվում:
- Օգնում են մարդկանց մտածել այն մասին, ինչ դուք ուսուցանում եք:
- Օգնում են ձեզ հասկանալ, թե որքանով է ունկնդիրը հասկանում այն, ինչ սովորեցնում եք:
- Օգնում են մարդկանց կիրառել այն, ինչ սովորում են:

Պատասխանելով այս տեսակի հարցերին, մարդիկ կզգան, որ կարող են բաց խոսել: Լավ հարցերը ունկնդիրներին կարող են օգնել ձեզ նույնպես հարցեր տալ, երբ չեն հասկանում, մտահոգված են կամ ուզում են իմանալ, թե ինչ անել: Լավ հարցերը կարող են օգնել նրանց կիսվել իրենց զգացողություններով և դա անելով մեծացնել իրենց վկայությունը: Արդյունավետ հարցերի օրինակներ կարող են լինել.

Նշումներ

- Ի՞նչ հարցեր դուք ունեք մեր ուսուցանածի վերաբերյալ:
- Դուք հավատո՞ւմ եք, որ Երկնային Հայրը սիրում է ձեզ: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս ենք մենք երբեմն նույն սխալը կատարում, ինչպես այս պատմվածքի հերոսները:

Օգնելու համար նրանց, ում ուսուցանում եք, պատրաստվելով հարցերին պատասխանելուն, կարող եք ասել. «Երբ ես բացատրեմ Կիրակին սուրբ պահելու կարևորության մասին, ինքներդ ձեզ հարցրեք. «Ի՞նչ նշանակություն ունի այս պատվիրանն ինձ համար»»: Խուսափեք այնպիսի հարցեր տալուց, որոնք.

- Ներառում են մեկից ավելի միտք:
- Վերաբերվում են այնպիսի վարդապետություններին, որոնք դուք դեռևս չեք սովորեցրել:
- Չունեն հստակ նպատակ:
- Անտեղի կամ անիմաստ տեղեկություն են պահանջում:

Շատ հարցեր տալը, հատկապես առաջին այցի ժամանակ, տպավորություն է ստեղծում, որ դուք հարցաքննում եք կատարում: Ունկնդիրներին մի խնդրեք կոնկրետ պատասխաններ տալ անկարևոր կամ ակնհայտ մանրամասների մասին: Դա ուսուցանման լավ միջավայրը վեր է ածում գուշակելով խաղի: Երբ ձեզ կոնկրետ պատասխան է հարկավոր, ավելի լավ է որևէ փաստի վերաբերյալ հարց տաք կամ տեղեկությունը մատուցեք մեկ այլ ձևով: Խուսափեք այնպիսի հարցերից, որոնք կարող են շփոթեցնել մարդկանց, եթե չգիտեն պատասխանը: Հարցերն առավել օգտակար են լինում, երբ տրվում են ուսուցանելուց և հիմնական սկզբունքների մասին վկայելուց հետո: Ստորև տրվում են ոչ արդյունավետ հարցերի օրինակներ.

- Ո՞վ էր առաջին մարգարեն: (Երբ տրվում է ժամանակաշրջանների մասին ուսուցանելուց առաջ:)
- Ինչպե՞ս մեր մարմինը մաքուր պահելը կօգնի ունենալ Սուրբ Հոգին մեզ հետ և ցույց տալ, որ պատրաստ ենք հետևելու Աստծո մարգարեին: (Մեկից ավելի միտք:)
- Արդյո՞ք կարևոր է իմանալ Աստծո պատվիրանների մասին: (Այո-ոչ պահանջող և շատ ակնհայտ պատասխան:)
- Ի՞նչ եք դուք զգում Մորմոնի Գրքի մասին: (Նրանք դեռ չեն կարդացել այն:)
- Ի՞նչ մենք կարող ենք անել ամեն օր, որպեսզի ավելի մոտ մեզ զգանք Աստծուն: (Ընդհանուր հարց, որով ակնկալվում է կոնկրետ պատասխան. աղոթել:)
- Ո՞վ էր Նոյից հետո հաջորդ մարգարեն: (Կռահելու առիթ է տալիս:)

Սովորեք տալ այնպիսի հարցեր, որոնք հուշում է Հոգին: Ճիշտ պահին տրված ճիշտ հարցը մեծապես կարող է օգնել նրանց, ում դուք սովորեցնում եք, սովորել ավետարանը և զգալ Հոգին: Նմանապես, սխալ հարցը կամ սխալ պահին տրված հարցը կարող է խանգարել ուսուցմանը: Ճիշտ պահին ճիշտ հարց տալու համար պահանջվում է, որպեսզի դուք ներդաշնակության մեջ գտնվեք Հոգու հետ, որ լսեք նրանց, ում սովորեցնում եք, և որ դուք կենտրոնանաք ձեր ուսուցանման առարկայի վրա: Արդյունավետ ուսուցանումը դժվար աշխատանք է, այն ձեր և ձեր զուգընկերոջ կողմից կենտրոնացում և ջանք է պահանջում:



© 1985 Robert T. Barrett. Մի բազմացրեք:

Նշումներ

**Վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Ի՞նչ կարող է պատահել ունկնդրի առաջադիմության առումով, եթե նա հայտնվի հետևյալ իրավիճակներում, իսկ դուք ներքը դրանց մասին չիմանաք:

- Աշխատակիցներ, որոնք շարունակ կատակում են հոգևոր թեմաներով:
- Ընտանիքի անդամներ, որոնք մեկ այլ եկեղեցու նվիրյալ անդամներ են:
- Ընկերներ, որոնք հավատում են, որ Մորմոնները ոչ-քրիստոնեա աղանդ են:
- Հոգևոր ապրումներ՝ Մորմոնի Գրքի ընթերցանության արդյունքում:

Մտածեք, թե ինչ հարց կտայիք, վերը նշված իրավիճակներից յուրաքանչյուրի մասին ավելի շատ իմանալու համար: Ձեր հարցերը գրի առեք ձեր աշխատանքային տետրում: Ձեր զուգընկերոջ հետ քննարկեք, թե ինչպես կարող եք ձեր գրած հարցերն էլ ավելի բարելավել:

## Լսեք

Երբ դուք ուշադրությամբ լսում եք ուրիշներին, դուք նրանց ավելի լավ եք հասկանում: Երբ նրանք տեսնում են, որ իրենց մտքերն ու զգացմունքները կարևոր են ձեզ համար, նրանք ավելի պատրաստակամորեն են ընդունում ձեր ուսմունքները, կիսվում անձնական փորձով և պարտավորություններ ստանձնում: Եթե լսեք, ապա կկարողանաք ավելի մեծ հաջողությամբ հարմարեցնել ձեր ուսուցանումը նրանց կարիքներին ու հետաքրքրություններին:

Հատկապես ուշադիր լսեք Հոգու հուշումները: Երբ ուրիշները ձեզ հետ կիսվում են իրենց զգացմունքներով, ձեզ մոտ մտքեր և ներշնչումներ կարող են առաջանալ, որոնք գալիս են Հոգու կողմից: Դուք նաև կկարողանաք հասկանալ, թե ինչ են ուրիշները փորձում արտահայտել:

Մինչ ուրիշները ձեզ հետ խոսում են, աշխատեք մտածել այն մասին, թե ինչ եք պատրաստվում ասել: Ուշադիր եղեք, որպեսզի իրոք կենտրոնանաք խոսող անձի վրա, ոչ թե մտածեք ձեր պատասխանի մասին: Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը սովորեցրել է. «Խոսելուց շատ ավելի կարևոր է լսելը: Այս մարդիկ մկրտության վիճակագրությունը կազմող անշունչ առարկաներ չեն: Նրանք Աստծո զավակներն են, մեր եղբայրներն ու քույրերը, և նրանք ունեն նրա կարիքը, ինչ մենք ունենք: Եղեք անկեղծ: Անկեղծորեն օգնեք: Այդ ընկերներին հարցրեք, թե ինչն է *նրանց* համար առավել կարևոր: Ի՞նչ են *նրանք* փայփայում, ի՞նչ են արժեքավոր համարում: Այնուհետև լսեք: Եթե հանգամանքները թույլ են տալիս, նրանց կարող եք հարցնել, թե ինչից են վախենում, ինչ են փափագում, ինչի պակաս ունեն իրենց կյանքում: Ես խոստանում եմ, որ նրանց ասածների մեջ *ինչ-որ* բան *անպայման* կընդգծի ավետարանական որևէ ճշմարտություն, որի մասին դուք կարող եք վկայություն բերել և, որի մասին դուք կարող եք առաջարկել ավելի շատ իմանալ: . . . Եթե մենք սիրով լսենք, մենք չենք մտածի այն մասին, թե ինչ պետք է ասենք: Դա կտրվի մեզ՝ Հոգու և մեր ընկերների միջոցով» (“Witnesses Unto Me,” *Ensign*, May 2001, 15; շեղատառը բնագրում):

Մարդիկ հաղորդակցվում են նաև իրենց նստելու ձևով, դեմքի արտահայտությամբ, ձեռքի շարժումներով, ձայնի բարձրությամբ և աչքերի շարժումներով: Ուշադրությամբ հետևեք այդ անխոս ուղերձներին, դրանք ձեզ կօգնեն հասկանալ նրանց զգացմունքները, ում սովորեցնում եք: Ուշադիր լսելով արտահայտեք ձեր հետաքրքրությունն ու ոգևորությունը:

Մի վախեցեք լռությունից: Մարդիկ հաճախ ժամանակի կարիք ունեն մտածելու և հարցերին պատասխանելու կամ իրենց զգացմունքներն արտահայտելու համար: Դուք կարող եք մի պահ սպասել հարցը տալուց, հոգևոր փորձով կիսվելուց հետո կամ, երբ մարդիկ դժվարանում են արտահայտվել: Մարդկանց ժամանակ տվեք ավարտելու իրենց մտքերը ձեր պատասխանից առաջ, և մի ընդհատեք, երբ նրանք խոսում են:

Երբ զգում եք, որ հասկանում եք այն, ինչի մասին ասվում է, արձագանքեք , որով իմաց կտաք, որ հասկանում եք, օրինակ. «Այսպիսով, դուք ասում եք, որ __________: Այդպե՞ս է» կամ

Նշումներ

«Եթե ես ճիշտ եմ հասկանում, դուք զգում եք, որ __________»: Եթե վստահ չեք, որ հասկանում եք, խնդրեք, որ խոսողը պարզաբանի:

Որոշ մարդիկ հակված են իշխել խոսակցության ընթացքում և դրանով թույլ չտալ ձեզ ուսուցանել վերականգնված ավետարանը: Դուք պետք է սովորեք անճկատ վերահսկել նման իրավիճակները: Օրինակ. «Մենք շնորհակալ ենք, որ դուք կիսվում եք մեզ հետ, սակայն այդ հարցը մենք կուզենայինք քննարկել ավելի ուշ: Ես իմ զուգընկերոջը կխնդրեմ գրի առնել դա, որպեսզի մենք չմոռանանք անդրադառնալ դրան մեր հետագա այցերի ժամանակ»: Հիշեք, որ ամենից շատ դուք կօգնեք մարդկանց, եթե սովորեցնեք նրանց Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Եթե ուշադիր լսեք, Հոգին ձեզ կօգնի իմանալ, թե ինչ պետք է ասեք: Լսելը ջանք և կենտրոնացում է պահանջում: Մի միսիոներ պատմում է հետևյալ իրական պատմությունը (անունները փոխվել են).

*Ես և իմ զուգընկերը ուսուցանում էինք Սանչեսի ընտանիքին: Շոգ էր և երեխաները մեծ աղմուկ էին բարձրացրել: Ես Քույր Սանչեսին հարցրեցի Մորմոնի Գիրքը կարդալու մասին: Երբ նա սկսեց բացատրել, ես նկատեցի, որ նրանց որդին փախցրել էր զուգընկերոջս տետրը և սենյակով վազում էր, թափահարելով այն օդի մեջ: Թեև ես նայում էի Քույր Սանչեսին, միտքս այլ տեղ էր: Ես մտածեցի. «Այնքան շոգ է, և ես ուզում եմ, որ նրանց փոքր տղան խաղաղվի: Այսպես անհնարին է աշխատել»: Մինչ միտքս թափառում էր, ես նկատեցի, որ Քույր Սանչեսը դժվարանում է արտահայտվել: Զգացի, որ պետք է լսեմ: Ես աշխատեցի չմտածել շոգի ու աղմուկի մասին: Ես ուշադիր նայում էի նրա դեմքին, մինչ նա խոսում էր: Նա հայացքը գցեց հատակին, այնուհետև նայեց զուգընկերոջս և ինձ: Նրա ամուսինը ամեն կերպ աշխատում էր հանգստացնել երեխաներին: Մի պահ լռություն տիրեց, ապա դողացող ձայնով նա ասաց. «Ես արեցի այն, ինչ դուք խնդրել էիք: Ես կարդացի այն գլուխները, որոնք դուք ասացիք, որ կարդամ, և ես աղոթեցի»: Նա կրկին կանգ առավ և նայեց հատակին: Նա նայեց իր երեխաներին, հետո աչքերը ուղղվեցին դեպի իմ աչքերը: «Ես պատասխան ստացա», - ասաց նա ժպիտով և արցունքով լի աչքերով: «Այն ճշմարիտ է, ես գիտեմ, որ այն ճշմարիտ է»: Հոգին լցրեց սենյակը: Երախտագիտությամբ լի սրտով, որ լսեցի, ես ժպտացի և ասացի. «Այո, դա այդպես է»:*

### Վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Վերը նշված պատմությունը վերանայելուց հետո, ձեր աշխատանքային տետրում գրեք ստորև տրված հարցերի պատասխանը կամ քննարկեք դրանք ձեր զուգընկերոջ հետ:

- Ի՞նչ տեղի կունենար, եթե միսիոները ավելի շատ մտահոգվեր իր անձնական հարմարության կամ իր զուգընկերոջ տետրի մասին:
- Ինչպե՞ս օրհնվեց այդ ունկնդիրը, երբ միսիոները լսեց նրան:

---

Պատասխանեք ստորև տրված հարցերին.

Ա = Երբեք ճիշտ չէ իմ մասին　　Գ = Սովորաբար ճիշտ է իմ մասին
Բ = Երբեմն ճիշտ է իմ մասին　　Դ = միշտ ճիշտ է իմ մասին

- Երբ խոսում եմ ուրիշների հետ, մտածում եմ նմանատիպ դեպքերի մասին, որոնցով կարող եմ կիսվել, ուշադիր լսելու փոխարեն:
- Երբ մյուսները ինձ պատմում են իրենց զգացմունքների մասին, ես փորձում եմ ինձ դնել նրանց փոխարեն, որպեսզի իմանամ, թե ինչպես ես կզգայի:
- Երբ սովորեցնում եմ ունկնդիրներին, ես անհանգստանում եմ այն մասին, թե ինչ եմ ասելու կամ ուսուցանելու:
- Ես նյարդայնանում եմ, երբ ունկնդիրները շատ են խոսում:
- Ես դժվարությամբ եմ հասկանում, թե ինչ են ուզում ուրիշները ինձ ասել:
- Իմ միտքը հաճախ թափառում է, երբ ուսուցանում է զուգընկերս:
- Ես բարկանում եմ, երբ որևէ մեկը խոսում է ինձ հետ, իսկ ուրիշները միջամտում կամ շեղում են ուշադրությունս:

Նշումներ

- Ես հոգևոր հուշումներ եմ ստանում որոշակի բան անելու կամ անելու վերաբերյալ, սակայն անտեսում եմ դրանք:

Որոշեք, ինչ կարող եք անել լսելու ձեր ունակությունը զարգացնելու համար:

**Լավ հարաբերություններ հաստատեք ունկնդիրների հետ**

Անհարմար զգալուց խուսափելու համար, որոշ մարդիկ ոչ թե կիսվում են իրենց զգացմունքներով, այլ հարցերին պատասխանում են այնպես, ինչպես, իրենց կարծիքով, դուք կցանկանայիք, որ պատասխանեին: Աշխատեք այնպիսի հարաբերություններ հաստատել, որոնք նրանց հնարավորություն կտան ազատ զգալ ձեզ հետ իրենց անկեղծ զգացմունքները կիսելուց:

## Օգնեք մարդկանց ազատվել մտահոգություններից



Մի սառցալեռը:

Ձեր ունկնդիրներից ոմանք բավական հավատք չեն ունենա պարտավորությունները պահելու համար, մյուսները հակահարվածի կհանդիպեն, կլինեն այնպիսիները, որոնք միշտ չէ, որ կընդունեն այն ամենը, ինչ դուք սովորեցնում եք: Նրանք պետք է իրենց ընտրությունը կատարեն, սակայն դուք պետք է անեք հնարավոր ամեն ինչ նրանց հարցերին պատասխանելու և օգնելու ազատվել մտահոգություններից և հաղթահարել հակառակությունները:

Մարդկանց մտահոգությունները երբեմն այսբերգի են նման: Միայն մի փոքր մասն է երևում մակերեսի վրա: Այդ մտահոգությունները կարող են բարդ և դժվար լինել հաղթահարելու համար: Այդ պատճառով դուք պետք է հետևեք Հոգուն և պատասխանեք այնպես, ինչպես թելադրում է իրավիճակը: Աղոթեք տարբերելու պարգևի համար և հետևեք ձեր զգացմունքներին: Երկնային Հայրը գիտի բոլոր մարդկանց սրտերն ու ապրումները (ողջ այսբերգը) և կօգնի ձեզ իմանալ, թե որն է յուրաքանչյուր անձի համար լավագույն տարբերակը:

Երբ դուք օգնում եք ուրիշներին ազատվել իրենց մտահոգություններից, նախ աշխատեք հասկանալ նրանց մտահոգությունները հարցեր տալով և լսելով: Ապավինեք Հոգուն, որը ձեզ կօգնի իմանալ, թե ինչպես կարող եք լուծել այդ խնդիրները: Օրինակ, դուք կարող եք օգտագործել սուրբ գրությունները, երբ նրանք մտահոգություն են արտահայտում մկրտության անհրաժեշտության մասին, կամ կարող եք կիսվել Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին ձեր վկայությամբ:

Հաճախ մտահոգությունները ավելի շատ հասարակական բնույթ են կրում, քան վարդապետության հետ են կապված: Օրինակ, ունկնդիրները կարող են վախենալ ընտանիքի անդամների ընդդիմությունից, եթե միանան Եկեղեցուն: Կամ կարող են վախենալ աշխատանքային իրենց ընկերների կողմից մերժված լինելուց: Անկախ մտահոգությունից, ձեր ունկնդիրները կարող են անցյալի հետ կապված մտահոգություններ կամ խանգարող այլ հանգամանքներ ունենալ, որոնք դուք հնարավոր է չհասկանաք: Շատ դեպքերում անդամները կարող են ձեզ օգնել հասկանալ և օգնել ազատվել այդ մտահոգություններից:

Նշումներ

Ինչպես դուք կմոտենաք ունկնդրի մտահոգությանը, կախված է խնդրի բնույթից: Պարզեք, թե որն է մտահոգության պատճառը, արդյոք դա նրանից է, որ անձը չունի Վերականգնման ճշմարտության մասին հոգևոր համոզմունք, թե չի ցանկանում պարտավորվել ապրել ճշմարիտ սկզբունքով: Խնդրի պատճառը հասկանալը կօգնի ձեզ իմանալ, թե ինչի վրա կարող եք կենտրոնանալ՝ վկայության, թե պարտավորության:

**վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Ընտրեք մեկ պարտավորություն, որը կխնդրեք ստանձնել դասընը ուսուցանելիս: Ապա մտածեք, թե ինչ մտահոգություններ կարող են խանգարել մարդուն ընդունել կամ պահել այդ պարտավորությունը: Քննարկեք և պարապեք, որպեսզի կարողանաք լավագույնս օգնել մարդկանց ազատվել իրենց մտահոգություններից:

## Ապաշխարություն և ապաքինում հակումից ազատվելուց հետո

Ապաշխարությունը հոգևոր ընթացք է, որը պահանջում է խոնարհություն, խոստովանություն, հատուցում և հեռացում մեղքից: Դա մտքի ու գործի մշտական փոփոխություն է: Կատարյալ տարբերակի դեպքում, որևէ մեղքի ապաշխարությունը պետք է արվի միայն մեկ անգամ: Սակայն, եթե մեղքը կրկնվում է, ապաշխարությունը հանդիսանում է բուժման միջոց (տե՛ս Մոսիա 26.30; Մորոնի 6.8; ՎևՈւ 1.31–32):

Ապաշխարությունը էմոցիոնալ և ֆիզիկական պրոցես է: Մարդիկ պետք է թողնեն ոչպատշաճ գործելու շարունակ և հաստատուն ուղին: Ոչ ցանկալի գործողությունները կարող են փոխարինվել առողջ և պատշաճ գործերով:

Այսպիսով, և ապաշխարությունը, և ապաքինումը, ժամանակ են պահանջում: Երբեմն, անգամ լավագույն միտում ունեցող նորադարձները, շարժվելով դեպի ինքնակարգապահություն տրվում են գայթակղությանը: Նման դեպքերում, նորադարձները աշխատում են իրենց քահանայության ղեկավարների հետ, ոչ թե միսիոներների, աշխատելով հաղթահարել գայթակղությունը և ամբողջովին ապաշխարել:

Մկրտության և հաստատման միջոցով մարդիկ ստանում են Սուրբ Հոգու պարգևը, որն ամրապնդում է այդ խնդիրները հաղթահարելու նրանց ունակությունը: Սակայն մկրտությունն ու հաստատումը ամբողջովին չեն վերացնի մեր էմոցիոնալ և ֆիզիկական ցանկությունները և դրանց հետ կապված մեր վարքը: Թեև անձը կարող է որոշակի նախնական հաջողություն ունենալ, հետագա էմոցիոնալ ապաքինում է պահանջվում՝ լիովին ապաշխարելու և վերականգնվելու համար:

**վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

- Մտածեք ունկնդրի, վերջերս մկրտված նորադարձի կամ ոչ ակտիվ անդամի մասին, որը փորձում է ազատվել հակումից:
- Կրկնեք «Հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ» և «Ապաշխարություն» բաժինները «Հիսուս Քրիստոսի Ավետարանը» դասից, գլուխ 3:
- Ի՞նչ դուք կարող եք սովորեցնել այդ դասից և այդ գլխից տվյալ անձնավորությանը, որը կօգնի նրան հաղթահարել հակումը:
- Դասի պլան մշակեք այդ անձնավորությանը օգնելու համար:

Նշումներ

## Օգնել ունկնդիրներին և վերջերս մկրտված նորադարձներին հասկանալ ինչ է ապաշխարությունը և հակումից ազատվելուց հետո վերականգնումը

Ձեզ կարող են հարցեր տալ հակումների վերաբերյալ: Դուք հավանաբար կցանկանաք օգնել մարդկանց նման խնդիրների հետ կապված դժվար հարցերին պատասխաններ գտնելու համար: Հետևյալ մտքերը օգտակար կլինեն.


© 2000 Simon Dewey. Մի պատճենեք:

- Կիսվեք ավետարանի բուժող զորության, օրինակ Քավության մասին ձեր վկայությամբ (տե՛ս Ալմա 7.11–13):
- Վկայեք, որ միայն Աստված կարող է իրականացնել հոգևոր բուժման հրաշքը (տե՛ս Սաղմոս ՃԽԷ.3):
- Բացատրեք, որ բուժման պարգևը վերաբերվում է և մարմնին, և հոգուն:

Հիմնական քայլերը, որոնք մարդկանց օգնում են էմոցիոնալ բուժման ընթացքում, ներառում են.

- Գտնել և հասկանալ խնդիրը: Սա պահանջում է ուշադիր և ազնիվ ինքնաքննում:
- Հասկանալ, որ տվյալ վարքը վնասակար է: Այն ազդում է ուրիշների վրա և փոփոխություն է պահանջում:
- Լինել խոնարհ և զղջալ:
- Ներում խնդրել նրանցից, ովքեր տուժել են, և սովորել ներել ինքներդ ձեզ:
- Դադարեցնել հակման հետ կապված գործողությունները և սկսել առողջ ապրելակերպ:
- Մնալ հավատարիմ՝ պահել մկրտության ուխտերը, ծառայություն մատուցել, աղոթել Սուրբ Հոգու օգնության համար, և ցանկություն ցուցաբերել պահելու Աստծո պատվիրանները:
- Հասկանալ, որ Տերը միշտ կսիրի Իր զավակներին, անգամ, երբ նրանք սխալներ են կատարում կամ տրվում հին սովորություններին: Ապաշխարությունը և ապաքինման ճանապարհը միշտ մատչելի է:

## Հակումը հաղթահարելու ծրագիր

Ունկնդիրները և նոր ու ոչ ակտիվ անդամները կարող են հարցնել, թե ինչ կարող են անել հակումը հաղթահարելու համար: Նրանք վստահում են ուղղություն տալու և աջակցություն ցուցաբերելու ձեր ունակությանը: Հետևյալ առաջարկությունները կարող են օգնել.

- Նրանց խնդրեք նշել ժամանակը, վայրերը և մարդկանց, որոնք նպաստում են նման վարքին: Ապա այդ ցանկը քննարկեք ամուսնու, եպիսկոպոսի, ծխի միսիոների կամ վստահելի ընկերոջ հետ: Խոսեք այն մասին, թե ինչ նրանք պետք է անեն փոխելու ցանկում նշված արարքները կամ խուսափելու դրանցից:
- Նրանց խնդրեք գրի առնել այն, ինչ այդ պահվածքի հետևանքով նրանք չունեն այսօր, և եթե չուղղվեն, ինչ կկորցնեն ապագայում:
- Նրանց խնդրեք գրի առնել այն, ինչ կարող են անել խուսափելու համար անպատշաճ վարքից: Դա կարող է լինել անձի ամուսնու հետ խոսելը, եպիսկոպոսի կամ ընկերոջ օգնությունը փնտրելը, կամ որևէ այլ բան ձեռնարկելը, ինչը նրանց կօգնի հեռու մնալ գայթակղությունից:

- Նրանց խրախուսեք անընդհատ աղոթել, ուսումնասիրել սուրբ գրությունները, ունկնդրել վեհացնող երաժշտություն և կարդալ լավ գրքեր:
- Նրանց խրախուսեք քահանայության օրհնություն փնտրել:
- Նրանց խրախուսեք շարունակել ակտիվ մնալ եկեղեցում, որը նրանց միշտ կօգնի հաղթահարել իրենց խնդիրները և ավելի մոտենալ Տիրոջը:
- Նրանց խրախուսեք այցելել համապատասխան աջակցման խմբի հավաքներին կամ մասնագիտական օգնություն փնտրել: Որոշ վայրերում մատչելի են LDS Family Services (ՎՕՍ-ի Ընտանեկան Ծառայությունները):
- Նրանց խրախուսեք երբեք չհուսահատվել: Տերը կօգնի, անգամ, եթե դա որոշ ժամանակ պահանջի:



Վերջին Օրերի ակտիվ Սրբերը, լինելով ընկերներ, լավագույն օգնությունն են հանդիսանում նոր անդամների համար, որպեսզի վերջիններս ակտիվ մնան: Անդամները պետք է մոտենան ունկնդիրներին և նոր անդամներին ջերմ, դրական վերաբերմունք ցուցաբերելով: Ունկնդիրները և նորադարձները ջերմ են արձագանքում, երբ նրանց դիմավորում են ժպիտով, երբ անկեղծորեն հարցնում են, թե ինչպես են, երբ մյուսները նստում են իրենց կողքին, երբ հրավիրվում են ընտանեկան ճաշի կամ ընտանեկան երեկոյի:

Թեև հնարավոր է, որ որոշ մարդիկ կարող են վերադառնալ իրենց հին հակումներին, քահանայության ղեկավարները և անդամները չպետք է զարմանան կամ հուսահատվեն, երբ լսում են, որ ունկնդիրը կամ նոր անդամը պայքարում է նմանատիպ խնդիրների դեմ: Նրանք պետք է վստահություն ցուցաբերեն այդ անձի հանդեպ և դատապարտող դիրք չգրավեն, եթե անձը տեղի է տալիս հին սովորություններին: Նրանք այդ երևույթին պետք է վերաբերվեն որպես ժամանակավոր և հասկանալի նահանջի: Հակում ունեցող ունկնդրին կամ նորադարձին մեղադրելը երբեք չի օգնի, այլ ավելի շուտ կտանի դեպի հուսահատություն, անկում և պասիվ դիրքի: Նորադարձը, որը հանկարծակի դադարում է գալ Եկեղեցի, կարող է վերադարձած լինել իր հին հակումներին և իրեն անարժան զգալ կամ հուսահատված: Խրախուսանք և աջակցություն առաջարկող արագ այցը կարող է օգնել այդ անձին հաջողություն ապրել: Անդամները խոսքով և գործով պետք է ցույց տան, որ ընդունում են նորադարձներին (տե՛ս 3 Նեփի 18.32):

Եկեղեցում ակտիվ մնալը և հավատքով ապրելը ամենակարևոր բաներն են, որ անհատը կարող է անել հակման հետ կապված խնդիրները հաղթահարելու համար:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Մտածեք որևէ սովորության մասին, որ դուք ունեք, մի բան, որը դուք հաճախ անում եք, առանց մտածելու, օրինակ մատներով կրճտացնել, ուղղել ակնոցները, շատ ուտել, կամ ուշ քնել: Ապա աշխատեք մի օր չանել դրանցից որևէ մեկը: Եթե հաջողվի, աշխատեք մեկ շաբաթ դա չանել: Ձեր փորձը քննարկեք ձեր զուգընկերոջ հետ: Ապա աշխատեք պատկերացնել, թե որքան դժվար է ունկնդրի համար պայքարել ծխախոտի կամ ալկոհոլի չարաշահման դեմ:

Նշումներ

Նշումներ

## Ինչ-որ բան նտևում թողեք

Ուսուցման բոլոր այցերի վերջում ունկնդրին որևէ բան տվեք կարդալու հաջորդ հանդիպմանը պատրաստվելու համար: Կարող եք հանձնարարել Մորմոնի Գրքի գլուխներից: Կարող եք գրքույկ տալ, որը ներկայացնում է այն, ինչ սովորեցրել եք կամ պատրաստվում եք սովորեցնել հաջորդ այցի ժամանակ, տվեք որևէ այլ գրականություն, տեսագրություն կամ ձայնագրություն: Եթե նրանք կարող են օգտվել ինտերնետից, ապա խրախուսեք այցելել www.mormon.org ինտերնետային էջը: Նրանց միշտ պետք է ինչ-որ բան տալ, որի մասին կարող են մտածել, խորհել և աղոթել: Սա կարող է լինել ձեր հաջորդ հանդիպման բացող թեման:

### Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Վերանայեք այն, ինչ կարող եք թողնել ունկնդիրներին, ներառյալ գրքույկները և տեսագրություններն ու ձայնագրությունները: Կա՞ն այնպիսի նյութեր, որոնք պետք է ձեռք բերեք ունկնդիրներին տալու համար: Ձեր օրագրում գրեք այն առարկաների ցանկը, որոնք պետք է պատվիրեք:

Մտածեք բոլոր ունկնդիրների մասին, որոնց պլանավորել եք ուսուցանել այս շաբաթ: Մորմոնի Գրքի ո՞ր գլուխներն առավել օգտակար կլինեն նրանց համար: Ի՞նչ այլ առարկաներ կօգնեն նրանց: Ձեր օրագրում Գրառումներ/Գործերի Ցանկ վերնագրի տակ գրեք, թե ինչ եք պատրաստվում տալ յուրաքանչյուր ունկնդրին և ինչ եք պատրաստվում անել հաջորդ ձեր այցի ժամանակ:

## Վերականգնված Ավետարանը սովորեցրեք նրանց, ում անցյալը կապված չէ Քրիստոնեության հետ

Որոշ մարդիկ, որոնց դուք կսովորեցնեք, հնարավոր է չհավատան Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին կամ չհարեն Քրիստոնեական ավանդույթներին: Սակայն, այդ մարդկանցից շատերը միևնույն է, կունենան համոզմունքներ, գործունեություն կամ վայրեր, որոնք նրանց համար սուրբ են: Որպես Աստծո ծառա, կարևոր է, որ դուք պատշաճ հարգանք ցուցաբերեք նրանց կրոնական համոզմունքների և ավանդույթների հանդեպ: Մի արեք որևէ բան, ինչը անհարգալից վերաբերմունք կլինի այն ամենի հանդեպ, ինչը կարևոր է նրանց համար:

Դուք կարող եք մտածել, թե ինչպես պետք է հարմարեցնեք ուսուցանման ձեր մոտեցումները այդ մարդկանց: Օգտակար կլինի հիշելը, որ դարձի գալու համար Աստծո բոլոր զավակները, անկախ անցյալից, պետք է հավատ զարգացնեն Հիսուս Քրիստոսի հանդեպ, ապաշխարեն, ստանան մկրտության և հաստատման արարողությունները և համբերեն մինչև վերջ, պահելով պատվիրանները և ծառայելով մարդկանց: Սկզբունքները, որ օգնում են մարդկանց հավատք զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ, նույնն են բոլոր մշակույթներում:

Դուք կարող եք մարդկանց օգնել ճիշտ պատկերացում կազմել Աստծո որպես մեր Երկնային Հոր մասին և հավատք զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ, օգնելով նրանց անձնական հոգևոր փորձառություններ ունենալ, ոչ թե պարզապես պատմել Աստծո էության մասին: Օրինակ, դուք կարող եք օգնել մարդկանց գալ այդ հասկացողությանը, եթե նրանք.

- Հոգևոր համոզմունք են ստանում այն մասին, որ Հայր Աստված և Նրա Որդի Հիսուս Քրիստոսը հայտնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթին:
- Լսեն ձեր անկեղծ ուսուցանումը և վկայությունը ավետարանի մասին, ներառյալ այն, թե ինչպես եք դուք որոշել հետևել Հիսուս Քրիստոսին:
- Հաճախ լսեն, թե ինչպես եք դուք և այլ անդամները Երկնային Հոր հետ խոսում հասարակ, սրտից բխող աղոթքով:
- Լսեն ձեր զորեղ վկայությունը:

Նշումներ

- Աղոթեն ձեզ հետ, ինչպես նաև առանձին:
- Իմանան, թե ինչ եք դուք զգում սուրբ գրությունների վերաբերյալ, երբ կարդում և քննարկում եք դրանք:
- Ամեն օր կարդան Աստծո խոսքը սուրբ գրություններից (հատկապես Մորմոնի Գրքից):
- Հաճախեն եկեղեցի, որպեսզի տեսնեն, թե ինչպես ենք մենք երկրպագում Տիրոջը:
- Հանդիպեն Եկեղեցու անդամներին, որոնք կարող են բացատրել, թե ինչպես են հավատացել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:
- Պահեն պատվիրանները:

Այս ամենը օգտակար կլինի այն բոլոր մարդկանց համար, ում դուք ուսուցանում եք, սակայն դրանք կարևոր են նաև, երբ սովորեցնում եք Քրիստոնեությանը չհարող մարդկանց, քանի որ նրանք նախկինում նման փորձառությունների ավելի քիչ հնարավորություններ են ունեցել:

Քրիստոնեական անցյալ չունեցող շատ նորադարձներ ասում են, որ միսիոներների սովորեցրածից շատ բաներ չէին հասկանում, սակայն զգում էին Հոգին և ցանկություն էին ունենում անելու այն, ինչ խնդրում էին միսիոներները: Դուք պետք է անեք հնարավոր ամեն ինչ օգնելու համար ունկնդիրներին հասկանալ ավետարանի վարդապետությունները: Եղեք համբերատար և օգնող, քանի որ դա ժամանակ է պահանջում, որպեսզի մարդիկ սովորեն հասկանալ և արտահայտել իրենց ներքին զգացողությունները: Դուք, հավանաբար, կարիք կունենաք փոխելու ուսուցմանն արագությունը և խորությունը, որպեսզի նրանց օգնեք ավելի լավ հասկանալ: Պատրաստվելով ուսուցանելու Քրիստոնեական անցյալ չունեցող մարդկանց, հետևեք ստորև տրված առաջարկություններին, որոնք կօգնեն.

- Տվեք յուրաքանչյուր դասի պարզ ակնարկն ու կրկնությունը:
- Խնդրեք նրանց ասել, թե ինչ են հասկացել և ինչ են զգացել:
- Ժամանակ տրամադրեք կարևոր բառերի և սկզբունքների բացատրությանը: Նրանք, ում ուսուցանում եք, կարող են անծանոթ լինել շատ բառերի հետ, որոնք դուք օգտագործում եք ուսուցանման ընթացքում:
- Վերադարձեք նախկին դասին վարդապետությունն ավելի հստակ սովորեցնելու նպատակով: Սա անհրաժեշտ կլինի անել ուսուցանման ցանկացած պահի:

**Օրինակներ սուրբ գրություններից**

Սուրբ գրությունները միսիոներների օրինակներ են պարունակում, ովքեր սովորեցնում էին նրանց, որոնք չէին հավատում Աստծուն կամ չէին հասկանում Նրա իրական էությունը: Ուսումնասիրեք ստորև տրված սուրբ գրությունները և ձեր զուգընկերոջը բացատրեք կամ ձեր աշխատանքային տետրում գրեք, թե ինչպես էին այդ միսիոներները օգնում մարդկանց վկայություն ձեռք բերել Աստծո գոյության մասին:

- Ալմա և Ամուղեկ (Ալմա 9–12; 15)
- Ամմոն և Ահարոն (Ալմա 17–22)
- Ալմա (Ալմա 30)
- Ալմա և ուրիշներ (Ալմա 31–35)
- Պողոս (Գործք Ժէ.16–34)

Նշումներ

### Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Հնարավորության դեպքում, գտեք մի ունկնդրի, որը միսիոներներին հանդիպելուց առաջ չէր հարում Քրիստոնեական ավանդույթներին: Պայմանավորվեք հանդիպելու նրա հետ և հարցնելու նրա դարձի գալու փորձառության մասին: Օրինակ, կարող եք հարցնել, թե ինչու նա սկսեց հավատալ Աստծուն, ինչպես առաջին անգամ աղոթեց, զգաց իր աղոթքի պատասխանը, որն է սուրբ գրությունների դերը իր դարձի ընթացքում և ինչ է մտածում Կիրակնօրյա ծառայությունների մասին: Ձեր սովորածը գրի առեք ձեր աշխատանքային տետրում:

### Հիշեք սա

- Երբ մարդկանց ուսուցանում են վերականգնված ավետարանը և նրանք ապրում են ըստ դրա, նրանց կարիքները բավարարվում են:
- Ամեն օր պլանավորեք և սովորեք ձեր զուգընկերոջ հետ, որպեսզի միասնական ուսուցանեք՝ մեկ ձայնով:
- Հաճախ կիսվեք ձեր վկայությամբ:
- Սուրբ գրությունները, հատկապես Մորմոնի Գիրքը, ուսուցանման ձեր հիմնական աղբյուրներն են:
- Աղոթեք տարբերելու պարգևի համար, որպեսզի իմանաք, թե ինչպես օգտագործեք այս բաժնում նկարագրված հմտությունները:

# Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

Նշումներ

## Անհատական ուսումնասիրություն

- Պատկերացրեք, թե դուք գտնվում եք հետևյալ իրավիճակներում: Ինչպես կարող եք օգտագործել այս գլխի սկզբունքներն ու հմտությունները օգնելու համար այդ մարդկանց առաջընթաց ապրել: Մտածեք, թե ինչպես կարող եք դրանք կիրառել յուրաքանչյուր իրավիճակում:
  - Այգում զբոսնելու ժամանակ դուք նկատում եք մի կնոջ և մի փոքր տղայի, որոնք միայնակ նստած են նստարանին: Կինը լալիս է:
  - Դուք գալիս եք ունկնդիրների տուն, որոնք պատրաստվում են մկրտության, իսկ նրանք ձեզ հայտնում են, որ այլևս չեն ուզում հանդիպել ձեզ հետ:
  - Դուք յոթերորդ անգամ հանդիպում եք մի ունկնդրի հետ, որին երկու տարվա ընթացքում ուսուցանել են մի քանի միսիոներ: Չկա գրեթե առաջընթացի որևէ նշան:
  - Դուք անդամի ընտանիքին սկսում եք սովորեցնել ավետարանի ուղերձը, իսկ նրանք ասում են. «Մենք արդեն բոլորին, ում ճանաչում ենք, խնդրել ենք հանդիպել միսիոներների հետ, սակայն նրանք չեն համաձայնվել»:

- Ընտրեք միսիոներական դասերից որևէ մեկը: Գտեք մեկ կամ երկու սուրբ գրությունների հատվածներ հիմնական յուրաքանչյուր սկզբունքի համար: Վարժվեք ուսուցանել այդ հատվածներից, ինչպես տրված է այս գլխի «Օգտագործեք սուրբ գրությունները» բաժնում:

- Մի քանի շաբաթվա ընթացքում վերանայեք Փրկչի ուսմունքները Ավետարաններում (Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես) և 3 Նեփի: Ձեր աշխատանքային տետրում կազմեք Նրա տված հարցերի ցանկը: Համեմատեք այդ հարցերը այն հարցերի հետ, որոնք դուք եք սովորաբար տալիս:

- Ալմա 18-ում կարդացեք Ամմոնի և Լամոնի Թագավորի մասին պատմությունը, իսկ Ալմա 22.4–18-ում Ահարոնի մասին պատմությունը: Կարդալիս, գտեք և նկարագրեք, ինչպես էին Ամմոնը և Ահարոնը.
  - Հետևում Հոգուն և սովորեցնում սիրով:
  - Սկսում սովորեցնել:
  - Հարմարեցնում իրենց ուսուցանումը ուրիշների կարիքներին:
  - Վկայություն բերում:
  - Օգտագործում սուրբ գրությունները:
  - Հարցեր տալիս, լսում և լուծում խնդիրները:
  - Նրանց, ում սովորեցնում էին, կոչ էին անում պարտավորություններ ստանձնել:

- Խորհեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի հետևյալ ուսմունքի շուրջ, որը հասկանալի ձևով ուսուցանելու մասին է: Գնահատեք, թե որքան հստակ եք դուք սովորեցնում ավետարանի վարդապետությունները: Ձեր սովորածը գրի առեք ձեր աշխատանքային տետրում:

  «Մնացեք սուրբ գրությունների ենթատեքստում և պարզեցրեք այն մինչև հասկանալի աստիճանը» (*The Teachings of Harold B. Lee,* sel. Clyde J. Williams [1996], 444):

  «Այժմ, դուք, որպես ուսուցիչներ, չեք ուղարկվում նոր վարդապետություն սովորեցնելու: Դուք պետք է սովորեցնեք հին վարդապետությունները, ոչ այնքան պարզ, որ նրանք հենց այնպես հասկանան, այլ դուք պետք է սովորեցնեք Եկեղեցու վարդապետությունները այնքան պարզ, որպեսզի ոչ ոք սխալ չհասկանա» (*The Teachings of Harold B. Lee,* 458):

Նշումներ

## Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Վերանայեք ձեր սովորեցրած վերջին դասի պլանը: Ձեր պլանի յուրաքանչյուր հիմնական սկզբունքի համար մեկ հարց գրեք: Ապա վերանայեք ձեր հարցերը, տեսնելու համար, թե արդյոք դրանք ներդաշնակ են այդ գլխում ուսուցանվածի հետ: Ապա պատասխանեք յուրաքանչյուր հարցին, կարծես թե դուք եք ունկնդիր: Վերանայեք ձեր հարցերը, եթե անհրաժեշտ է: Ձեր հարցերով կիսվեք ձեր զուգընկերոջ հետ: Միասին գնահատեք ձեր հարցերը:

  Մտածեք այն ունկնդրի կարիքների մասին, ում սովորեցնում եք: Քննարկեք, թե ինչպես նա կարող է պատասխանել ձեր հարցերին: Քննարկեք նաև, թե ինչպես այդ հարցերը կարող են հրավիրել Հոգին և ունկնդրին օգնել սովորել ավետարանը:

- Մտածեք ձեր ունկնդիրներից յուրաքանչյուրի մասին: Քննարկեք, թե ինչ կարող եք անել օգնելու համար նրանց դառնալ առաջադիմող ունկնդիր: Ձեր մտքերը գրեք ձեր աշխատանքային տետրում և ձեր ծրագիրը գրեք ձեր օրագրում:

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Անդամներին և ունկնդիրներին հրավիրեք ձեր ժողովին: Խմբին բացատրեք, որ դուք ցանկանում եք, որ միսիոներները խորացնեն իրենց կարևոր ուղերձով կիսվելու իրենց ունակությունը: Ընտրեք որևէ դաս և ունակություն: Միսիոներներին խնդրեք անդամներին կամ ունկնդիրներին սովորեցնել ձեր ընտրած դասը 20 րոպեի ընթացքում, կենտրոնանալով ձեր ընտրած ունակության վրա: 20 րոպե անց նրանց խնդրեք փոխվել: Դրանից հետո, երբ միսիոներները հնարավորություն ունեցան սովորեցնելու, խումբը միասին հավաքեք և անդամներին ու ունկնդիրներին խնդրեք միսիոներներին ասել, թե որն էր առավել արդյունավետը, իսկ որը բարելավման կարիք ունի:

- Որպես օրինակ, թե ինչպես են միսիոներները սովորեցնում կամ կապ հաստատում մարդկանց հետ, ցուցադրեք մի տեսանյութ: Ընտրեք որևէ ունակություն և խմբով քննարկեք, թե որքան լավ են միսիոներներն այդ տեսանյութում կիրառում այդ ունակությանը վերաբերվող սկզբունքները:

- Ընտրեք ունակություն կամ դրա կարևոր կողմերից մեկը, և գտեք այն վարդապետությունը կամ սուրբ գրությունների հատվածները, որոնք նպաստում են այդ ունակության զարգացմանը: Միսիոներներին ուսուցանեք այդ ունակության վարդապետական հիմքը:

## Միսիայի Նախագահ

- Ժամանակ առ ժամանակ միսիոներներին ուղեկցեք, երբ նրանք գնում են ուսուցանելու: Դրանից հետո պլանավորեք, թե ինչպես կարող եք մասնակցել ուսուցմանը:

- Քահանայության ղեկավարներին խրախուսեք ուղեկցել միսիոներներին ուսուցանման նրանց այցերի ժամանակ և փոխադարձ տեղեկություն տալ այդ այցերի վերաբերյալ:

- Սուրբ գրություններն օգտագործելու, հարցեր տալու և լսելու լավ օրինակ հանդիսացեք, երբ միսիոներներին ուսուցանում եք տարածքային համաժողովների և հարցազրույցների ժամանակ:



# Ինչպե՞ս եմ ես օգնում մարդկանց պահել իրենց պարտավորությունները

Նշումներ

**Մտածեք այս մասին**

- Ինչո՞ւ ես պետք է ճգտեմ հրավիրել մարդկանց պարտավորություն ստանձնել:
- Ինչպե՞ս են պարտավորությունները կապված դարձի գալու հետ:
- Ինչպե՞ս ես կարող եմ խոնարհ վկայություն բերել:
- Ի՞նչ օրհնություններ ես կարող եմ խոստանալ:
- Ինչո՞ւ է ինձ համար կարևոր հետևողական լինել այն մարդկանց հետ, ովքեր պարտավորություններ են վերցնում:

## Առաջարկեք պարտավորություններ ստանձնել

Որպես միսիոներ դուք ցանկանում եք հոգիներ փրկել (տե՛ս Մոսիա 28.3): Դուք գիտեք, որ մարդիկ կարող են գալ դեպի Քրիստոսը և փրկվել միայն ապաշխարության պայմաններով (տե՛ս ՎևՈւ 18.10–16): Ձեր ցանկությունները կատարելու եղանակներից է ապաշխարության կանչելը (տե՛ս Ալմա 5.49; ՎևՈւ 15.6; 16.6) և համարձակորեն մարդկանց հրավիրել գործածել իրենց հավատքը ապաշխարության համար, մկրտվել ջրով և Սուրբ Հոգով, և հավատարմորեն համբերել մինչև վերջ (տե՛ս 3 Նեփի 27.16–20; Մորոնի 7.10):

Պարտավորությունը ապաշխարության կարևոր մասն է կազմում: Դրանով անձը պարտավորվում է որդեգրել մի ուղի և ապա ջանասիրաբար գնալ դրանով համաձայն իր որոշման: Երբ մարդիկ անկեղծորեն պարտավորվում են, նրանք իսկապես մտադրություն են ունենում անել այն, ինչ պարտավորվել են: Նրանք կայացնում են փոխվելու անսասան և հաստատուն որոշում: Նրանք նվիրվում են Քրիստոսին և Նրա ավետարանին: Իրենց պարտավորությունը պահելը ճշմարտապես արտահայտվում է իրենց գործերով, որոնք ցույց են տալիս, որ նրանք ստացել են մեղքերի թողությունը Քրիստոսի Հոգու միջոցով (տե՛ս ՎևՈւ 20.37): Երբ ձեր

© 2002 Del Parson. Մի բազմացրեք:

Նշումներ

ուսուցման ընթացքում դուք խնդրում եք պարտավորություն ստանձնել, դուք ունկնդրին հրավիրում եք ապաշխարել:

Լավագույն եղանակը, որով կարելի է մարդկանց օգնել պարտավորություններ ստանձնել և պահել, դա պարտավորություն ստանձնելու հրավերն է: Պարտավորություն ստանձնելու և դրան հետևելու հրավերները շատ կարևոր են, քանի որ.

- Մարդիկ դարձի են գալիս, երբ ապրում են այն սկզբունքներով, որոնք սովորում են (տե՛ս Հովհաննես Է.17) և զգում են, թե ինչպես է Հոգին հաստատում, որ այն, ինչ նրանք անում են, հաճելի է Երկնային Հորը:


© 2001 Simon Dewey. Մի բազմացրեք:

- Ապաշխարությունն ու փոփոխությունը մարդկանց կօգնի հաղթահարել դժվարությունները, ազատվել ամոթի և մեղքի զգացումից և վայելել Աստծո ներման խաղաղությունն ու ուրախությունը:
- Պարտավորությունները պահելը մարդկանց օգնում է կապել և պահել սուրբ ուխտերը:

Դուք կարող եք ցույց տալ ձեր սերը մարդկանց հանդեպ և ձեր հավատքը Աստծո խոստումներին, հետևողական լինելով և օգնելով նրանց ապաշխարել և պահել իրենց պարտավորությունները:

Մկրտության համար անհրաժեշտ պարտավորությունները տրված են առաջին չորս դասերում: Մկրտությունից և հաստատումից հետո հոգևոր զարգացմանը վերաբերող պարտավորությունները թվարկված են դաս 5-ում: Միշտ հիշեք, որ անհրաժեշտ է մարդկանց հրավիրել անել այնպիսի գործեր, որոնք կամրացնեն Քրիստոսի հանդեպ նրանց հավատքը: Հիշեք հետևյալ սկզբունքները.

- Անդամների, ծանոթների միջոցով տրամադրված անունները կամ անձնական ծանոթությունները, այսինքն մարդկանց գտնելու ցանկացած հնարավորություն պետք է հանգեցնի ինչ-որ քայլ կատարելու հրավերի, սովորաբար Վերականգնման ուղերձի մասին ավելի շատ սովորելուն:
- Երբեմն, շատ հազվադեպ դեպքերում, դուք պետք է խոսեք մարդկանց հետ կամ սովորեցնեք նրանց առանց հրավիրելու անել ինչ-որ բան, որը կամրացնի նրանց հավատքը Քրիստոսի հանդեպ:
- Երբ սովորեցնում եք, կենտրոնացեք մեկ-երկու պարտավորությունների վրա: Եթե մարդկանց չհրավիրեք այդ պարտավորությունները ստանձնել, ապա չեք խնդրի նրանց ապաշխարել և գալ դեպի Քրիստոսը:
- Պատրաստվելով զուգընկերոջ հետ ուսուցման ժամանակ դաս մատուցելուն, մտածեք յուրաքանչյուր ունկնդրի կարիքների ու կարգավիճակի մասին և դասի ձեր ծրագրի մեջ ներառեք մեկ կամ ավելի պարտավորություններ:
- Դասի ընթացքում դուք կարող եք ոգեշնչվել տալու այլ պարտավորությունների հրավերներ, որոնք չէիք պլանավորել: Միշտ մարդկանց հրավիրեք ապաշխարելու:
- Եղեք համարձակ և վստահ, երբ մարդկանց հրավիրում եք պարտավորություններ ստանձնել (տե՛ս Ալմա 38.12): Համարձակությունը ցույց է տալիս ձեր հավատքն առ այն, որ Տիրոջ պատվիրաններին հնազանդվելը օրհնություններ է բերում:
- Մարդիկ սովորաբար չեն փոխվում, մինչև որ հրավեր չեն ստանում դա անելու:

Նշումներ

## Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ինչո՞ւ է այդքան կարևոր կոչ անելը:**

Ալմա 5.62 Մորոնի 7.13

**Ինչո՞ւ են պարտավորություններն այդքան կարևոր:**

2 Նեփի 31 Ալմա 32.27 ՎևՈւ 20.37
Մոսիա 2.41 ՎևՈւ 14.7 Հովհաննես է.17
Ալմա 7.14–16

## Ուղղակի հարցեր տվեք

Պարտավորություն ստանձնելու հրավերը հաճախ ընդունում է «դուք կկատարե՞ք» հարցի տեսք, որը պահանջում է *այո* կամ *ոչ* պատասխան: Հրավերները պետք է լինեն կոնկրետ, ուղղակի և հստակ: Դրանք մարդկանց հրավիրում են կամ օգնում են գործելու որոշակի ուղի ընտրել: Դրանք նրանցից պահանջում են պարտավորություն ստանձնել և գործուն հավատք ցուցաբերել այն սկզբունքների հանդեպ, որոնք դուք իրենց սովորեցրել եք:

Ստորև տրվում են լավ արված հրավերների օրինակներ, որոնց հետևում են խոստումը և վկայությունը.

- Դուք կկարդա՞ք [3 Նեփի 11, Մորոնի 10.3–5, այս գրքույկը] վաղը ժամը 7:00-ի մեր այցից առաջ: Ես գիտեմ, որ դա անելով, դուք. . . . Ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը . . .
- Դուք կաղոթե՞ք և կհարցնեք Աստծուն, թե արդյոք Ջոզեֆ Սմիթը մարգարե էր: Ես գիտեմ, որ եթե աղոթեք, Աստված . . . ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր . . . :
- Դուք կհաճախե՞ք մեզ հետ եկեղեցի այս կիրակի ժամը 9:00-ին: Եթե գաք, դուք . . . : Ես գիտեմ, որ Քրիստոսի Եկեղեցին վերականգնվել է . . . :
- Դուք կսկսե՞ք ապրել առաքինության օրենքով, ինչպես մենք բացատրեցինք: Այդ օրենքով ապրելը . . . : Որպես Տիրոջ ծառա ես վկայում եմ, որ առաքինի կյանքով ապրելը . . . :
- Դուք կհրավիրե՞ք [անուն] մինչև ուրբաթ, որպեսզի նա հանդիպի մեզ հետ և սկսի սովորել ավետարանի մասին: Հոգին կօգնի ձեզ . . . : Ավետարանով կիսվելը կօրհնի ձեր կյանքը . . . :
- Մենք կարո՞ղ ենք գալ ձեր տուն և ավելի շատ ձեզ պատմել այն մասին, թե ինչպես է Աստված մեր օրերում մարգարե կանչել, ինչպես հին ժամանակներում: Ավելի բարձր նպատակ, ուղղություն և խաղաղություն կունենաք ձեր կյանքում, երբ դուք ավելի լավ սկսեք հասկանալ . . . : Ես վկայում եմ, որ Աստված նորից է կանչել . . . :

## Վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

Ձեր աշխատանքային տետրում դասի յուրաքանչյուր պարտավորության համար մի հրավեր գրեք, որը կլինի հասարակ, ուղղակի և հստակ: Եթե դուք այս վարժությունը նախկինում կատարել եք, կրկնեք այն և համեմատեք ձեր նոր հրավերները նախկին տարբերակների հետ: Ինքներդ ձեզ հարցրեք, թե արդյոք հրավեր առաջարկելու ձեր ունակությունը զարգացել է:

Ձեր զուգընկերոջ հետ վերանայեք ձեր գրած հրավերները: Յուրաքանչյուր հրավերի համար քննարկեք հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք ես բացատրում եմ Տիրոջ խոստացած օրհնությունները հրավերը կատարելիս: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

Նշումներ

- Արդյո՞ք ես խոսափում եմ այս հրավերը տալուց: Եթե այո, ապա ինչո՞ւ:
- Արդյո՞ք ես ինձ անհարմար եմ զգում, երբ առաջարկում եմ այս հրավերը: Ինչպե՞ս ես կարող եմ բարելավվել:
- Որքա՞ն կարևոր է այս հրավերը անձամբ ինձ համար:
- Որքա՞ն հաճախ եմ ես հիշում հետևել, թե արդյոք իմ տված հրավերը կատարվում է: Ինչպե՞ս ես կարող եմ բարելավվել:

Մտածեք ծանոթ ունկնդիրների կամ ոչ ակտիվ անդամների մասին, և պարապեք, պատկերացնելով, որ նրանց եք տալիս այդ հրավերները:

Անհրաժեշտության դեպքում վերանայեք ձեր դասի ծրագրի հրավերները: Կոնկրետ նպատակներ դրեք, որոնք ձեզ կօգնեն հրավերներ տալ օրվա և շաբաթվա ընթացքում:

## Մարդկանց օրհնություններ խոստացեք

Մարդիկ պետք է պատճառ ունենան իրենց մտքերն ու գործերը փոխելու համար: Խոստացված օրհնությունները հաճախ զորեղ խրախուսանք են հանդիսանում Աստծուն հնազանդվելու համար: Երբ Տերը պատվիրան է տալիս, նա հաճախ օրհնություններ է խոստանում այդ պատվիրանը պահելու դիմաց (տե՛ս ՎևՈւ 130.20–21): Երբ մարդկանց պատրաստում եք որևէ պատվիրանի հնազանդվել, նրանց սովորեցրեք, որ.

- Պատվիրաններով ապրելը ցույց է տալիս Աստծո և Նրա Որդու հանդեպ սերը:
- Հնազանդվելով Նրա պատվիրաններին, նրանք դրսևորում են Աստծո հանդեպ իրենց վստահությունը:
- Դրա դիմաց նրանք կստանան օրհնություններ, որոնք Նա խոստացել է:

Վկայելով որևէ պատվիրանի մասին, խոսեք այն օրհնությունների մասին, որոնք կարելի է ստանալ այդ պատվիրանին հնազանդվելու արդյունքում: Նրանց, ում սովորեցնում եք, խոստացեք, որ նրանք կարող են վայելել նմանատիպ օրհնություններ:

Երբ մարդիկ փորձում են պահել որևէ պատվիրան, նրանց խնդրեք խոսել այն օրհնությունների մասին, որոնք Երկնային Հայրը տվել է իրենց: Նրանց հավաստիացրեք, որ թեև իրենց կյանքում դժվարություններ ի հայտ կգան, Նրա օրհնությունները կշարունակվեն, քանի դեռ նրանք հնազանդվում են Նրա կամքին:

### Սուրբ գրությունների ուսումնասիրություն

**Ի՞նչ է Տերն ասում մեզ օրհնելու Իր ցանկության մասին:**

| | | |
|---|---|---|
| Ալմա 37.17 | ՎևՈւ 1.37 | ՎևՈւ 76.5–10 |

### Վարժություն. անհատական ուսումնասիրություն

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 82.10 և 130.20–21: Այնուհետև ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները: Ձեր աշխատանքային տետրում երկու սյունակ գծեք: Մի կողմում գրեք յուրաքանչյուր հատվածում գտած պատվիրանը: Մյուս կողմում գրեք այդ պատվիրանը պահելու արդյունքում տրվող խոստումը:

| | | |
|---|---|---|
| ՎևՈւ 11.21 | ՎևՈւ 89.18–21 | ՎևՈւ 100.5–8 |
| ՎևՈւ 84.85 | ՎևՈւ 95.8–9 | Մաղաքիա Գ.10–12 |

Վերանայեք միսիոներական դասերից մեկում տրված պարտավորությունները: Յուրաքանչյուր պարտավորության համար պատասխանեք հետևյալ հարցերին.

Նշումներ

- Ի՞նչ օրհնություններ է խոստացել Տերը նրանց, ովքեր պահում են այդ պարտավորությունը:
- Այս սկզբունքին հնազանդվելը ինչպե՞ս կարող է մարդկանց օգնել հավատք ու վկայություն ձեռք բերել:
- Ինչպե՞ս կարող է այս պարտավորությունն օգնել մարդկանց ապաշխարել և ավելի զգայուն լինել Հոգու հանդեպ:

## Հաճախակի վկայություն բերեք

Վկայությունը հոգևոր համոզմունք կամ հավաստիացում է, որը տրվում է Սուրբ Հոգու կողմից: Վկայություն բերել նշանակում է կատարել պարզ, ուղղակի հայտարարություն հավատքի մասին, որը զգացողություն, հավաստիացում կամ համոզմունք է ավետարանի ճշմարտության վերաբերյալ: Ձեր վկայությամբ կիսվելը հաճախ ամենազորեղ եղանակներից է, որով կարելի է հրավիրել Հոգին և օգնել ուրիշներին զգալ Հոգին: Այն ավելացնում է անձնական վկայությունը այն ճշմարտություններին, որոնք դուք սովորեցրել եք սուրբ գրություններից: Հաջողակ միսիոները սովորեցնում, վկայում և հրավիրում է ուրիշներին անել այնպիսի բաներ, որոնք հավատք են կառուցում Հիսուս Քրիստոսի հանդեպ: Սա ներառում է խոստումները, որոնք գալիս են ճշմարիտ սկզբունքներով ապրելու արդյունքում: Օրինակ, միսիոները կարող է ասել. «Ես գիտեմ, որ Կիրակին սուրբ պահելով, դուք ձեր սրտում ավելի մեծ խաղաղություն կգտնեք»:

> *«Վկայության վերաբերյալ հիշեք, որ նա, ով պատրաստակամորեն կիսվում է, պահպանում է այն, մինչդեռ նա, ով եսասիրաբար պահում է, կորցնում է այն . . . : Ուսուցանեք և վկայեք: Չկա ավելի լավ համակցում»:*
>
> - ԵՐԵՑ ԹՈՄԱՍ Ս. ՄՈՆՍՈՆ
> *PATHWAYS TO PERFECTION* [1973], 100–101

Որպեսզի ձեր վկայությունը համոզիչ զորություն ունենա, դուք պետք է անկեղծ լինեք: Զորեղ վկայությունը կախված է ոչ թե ձեր ձայնի հզորությունից կամ բարձրությունից, այլ ձեր սրտի համոզմունքից: Աշխատեք ամեն օր ամրացնել այն վարդապետությունների և սկզբունքների ձեր հասկացողությունն ու համոզմունքը, որոնք սովորեցնում եք: Հաճախակի բերեք ձեր վկայությունը, որպեսզի կնքեք այն սկզբունքների կամ վարդապետության ճշմարտությունը, որոնք սովորեցնում եք: Որքան հնարավոր է հաճախ ուսուցանեք, ապա վկայեք, և վկայեք, երբ սովորեցնում եք:



Ձեր վկայությունը կարող է լինել այնքան պարզ, ինչպես օրինակ «Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է» կամ «Ես ինքս եմ իմացել, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»: Կարող եք նաև հակիրճ կիսվել ձեր փորձով այն մասին, թե ինչպես եք ձեռք բերել այդ գիտելիքը: Ամեն դասի ժամանակ մի քանի անգամ բերեք ձեր վկայությունը, ոչ թե միայն դասի վերջում: Վկայություն բերեք այն մասին, որ այն, ինչ սովորեցրեց ձեր զուգընկերը, Աստծուց է: Վկայություն բերեք, որ այն սկզբունքը, որը դուք պատրաստվում եք սովորեցնել, կօրհնի ունկնդիրների կյանքը, եթե նրանք հետևեն դրան: Խոսեք այն մասին, թե ինչպես է որևէ սկզբունքով ապրելն օրհնում ձեր կյանքը:

Նշումներ

Մարդիկ երբեմն կփորձեն խելամտորեն հարցականի տակ դնել այն, ինչ դուք սովորեցնում եք, սակայն դժվար է հարցականի տակ դնել սրտից բխող, անկեղծ վկայությունը: Երբ դուք վկայում եք, աղոթեք, որպեսզի նրանք, ում սովորեցնում եք, զգան Սուրբ Հոգու հաստատող վկայությունը: Երբ դուք վկայում եք, դուք օգնում եք ստեղծել մի միջավայր, որտեղ ունկնդիրները կարող են զգալ ճշմարտության Սուրբ Հոգու հաստատող վկայությունը: Սա նրանց օգնում է պատրաստ լինել ընդունելու այն պարտավորությունները, որոնք դուք պատրաստվում եք նրանց առաջարկել:

Բրիգամ Յանգը, երբ առաջին տարին էր սովորում վերականգնված ավետարանի մասին, չմկրտվեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Սակայն իր դարձի մասին նա ասում է. «Եթե Մորմոնի Գրքի հետ միասին ինձ ուղարկվեր աշխարհի ողջ տաղանդը, դատողությունը և իմաստությունը, և երկրի ամենաբաձրաճաշակ պերճախոսությամբ հայտարարվեր դրա ճշմարտացիության մասին, ապացուցելով դա աշխարհիկ գիտելիքով և իմաստությամբ, դա ինձ համար կլիներ միայն ծուխ, որն առաջանում է միայն անհետանալու համար: Սակայն, երբ ես տեսա մի մարդու, որը զուրկ էր հրապարակախոսական տաղանդներից կամ պերճախոսությունից, որը կարող էր միայն ասել. «Ես գիտեմ Սուրբ Հոգու ուժով, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, որ Ջոզեֆ Սմիթը Տիրոջ Մարգարեն է», այդ անձից փոխանցվող Սուրբ Հոգին լուսավորեց իմ հասկացողությունը, և լույսը, փառքն ու հավերժությունը բացվեցին իմ առջև: Ես պարուրվեցի դրանցով, լցվեցի դրանցով, և ինքս իմացա, որ այդ մարդու վկայությունը ճշմարիտ է» (in *Journal of Discourses*, 1:90):

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Ստորև տրված հատվածները վկայություն բերելու օրինակներ են: Կարդացեք հարցերից և սուրբ գրություններից յուրաքանչյուրը: Ձեր պատասխանները գրեք ձեր աշխատանքային տետրում:

- Այս տողերում, ինչի՞ մասին են վկայում առաքյալներն ու մարգարեները:
- Որքա՞ն խորն են նրանք հավատում նրան, ինչ ասում են: Ինչպե՞ս կարող եք ասել, որ նրանք համոզված են ճշմարտության մեջ:
- Երբ դուք ասում եք «Ես գիտեմ, որ __________ ճշմարիտ է», ի՞նչ դուք ի նկատի ունեք: Էլ ի՞նչ բառերով կարող եք արտահայտել ձեր համոզմունքները:

| | | |
|---|---|---|
| Հակոբ 7.7–12 | ՎևՈւ 76.22–24 | Գործք Բ.14–38 |
| Ալմա 5.45–48 | Հովհաննես Ե.3–11 | Գործք Ժ.34–44 |
| Ալմա 34.1, 8 | | |

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Որո՞նք են վկայություն բերելու սկզբունքներից և խոստումներից մի քանիսը:**

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 33.1 | ՎևՈւ 84.61 | Հովհաննես ԺԵ.26 |
| ՎևՈւ 62.3 | ՎևՈւ 100.5–8 | |

## Հետևեք ընթացքին

Հրավեր տալը առանց հետագա ընթացքին հետևելու նման է անավարտ ճանապարհորդության կամ համերգի տոմս գնելուն առանց համերգի գնալու: Առանց կատարված գործողության պարտավորությունը զուր է:

Փոփոխությունը կարող է դժվար լինել: Ձեր դերն է օգնել զորացնել մարդկանց՝ փոխվելու իրենց որոշման մեջ: Դուք պետք է անեք ամեն հնարավորը օգնելու համար մարդկանց պահել իրենց պարտավորությունները:

Նշումներ

Անկեղծ ապաշխարությունը լավագույնս դրսևորվում է ժամանակի ընթացքում արդար գործերի միջոցով, հատկապես այնպիսի պատվիրանների պահպանման մեջ, ինչպիսիք են՝ առաքինությունը, Իմաստության Խոսքը և տասանորդը: Երբ դուք և ծխի ղեկավարները աշխատում եք մարդկանց հետ, օգնելով նրանց պահել իրենց պարտավորությունները, հասկացողություն ցուցաբերեք: Եղեք համբերատար, սակայն հետևողական: Դուք չեք ավարտել ձեր առաքելությունը քանի դեռ մարդիկ չեն ապրում ըստ այդ պարտավորությունների կամ, այլ խոսքով, քանի դեռ նրանք չեն ապաշխարել (տե՛ս 3 Նեփի 18.32): Երբեմն մի քանի այց կպահանջվի, որպեսզի դուք կարողանաք օգնել մարդկանց բավականին ամուր հավատք զարգացնել այն սկզբունքի հանդեպ, որը տանում է դեպի ապաշխարություն:

Հետևելը սկսում է ձեր առաջին այցից և մարդկանց սովորեցնելուց.

- Թող նրանք գրեն իրենց պարտավորությունը որևէ բանի վրա, որը կմնա իրենց հետ, օրինակ գրքույկի կամ քարտի, որի վրա կան ձեր անունները և հեռախոսահամարը:
- Հետևեք, որ մարդիկ իմանան, որ ուսուցանման հանդիպումների միջև դուք նրանց ամեն օր կարճատև այցեր կկատարեք: Բացատրեք, որ ձեր նպատակն է աջակցել և օգնել իրենց: Նրանց բացատրեք, թե ինչ եք անելու այդ այցերի ժամանակ:
- Հատուկ նկատառումներ գրի առեք ձեր օրագրի Գրառումներ/Գործերի ցանկ բաժնում, որպեսզի վաղը հետևեք այսօր կատարված բոլոր պարտավորությունների ընթացքին:

Հաճախակի կապվեք, հնարավորության դեպքում, ամեն օր, որպեսզի պարզեք, թե ինչպես են մարդիկ առաջադիմում իրենց պարտավորությունները կատարելիս, պատասխանեք հարցերին, ուսուցանեք լրացուցիչ դասեր, միասին ընթերցեք Մորմոնի Գիրքը, կիսվեք սուրբ գրությունների հատվածներով կամ օգտվեք տեսագրված, ձայնագրված նյութերից: Մարդկանց հաճախակի այցելելով դուք կամրացնեք նրանց հոգևոր զգացողությունները, որոնք առաջ են գալիս, երբ ուսուցանում եք Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման ուղերձը: Հոգու այս պահպանողական ազդեցությունը շատ կարևոր է: Կլինեն ժամանակներ, երբ դուք կզանգահարեք ունկնդիրներին հիշեցնելու և խրախուսելու նրանց պահել պարտավորությունը:

Ունկնդիրներին օգնեք տարբերել այն օրհնությունները, որոնք նրանք ստանում են իրենց պարտավորությունները պահելու արդյունքում: Հատկապես օգնեք նրանց արտահայտել իրենց զգացմունքները, որոնք ունենում են այն ժամանակ, երբ Հոգին վկայում է այդ ուղերձի ճշմարտացիության մասին:

Գովեք և խրախուսեք մարդկանց, որոնք հաջողությամբ պահում են իրենց պարտավորությունները: Ունկնդիրները փոխում են իրենց կյանքը: Նրանք շատ բան ունեն սովորելու և անելու: Հաճախակի անկեղծորեն գովեք նրանց: Արտահայտեք ձեր երախտագիտությունը իրենց առաջադիմության համար և հայտնեք ձեր վստահությունը, որ նրանք կառաջադիմեն: Խրախուսեք նրանց, երբ էլ որ լինում եք նրանց հետ:

Արտահայտեք ձեր մտահոգությունն ու հիասթափությունը, երբ մարդիկ չեն պահում իրենց պարտավորությունները և այդպիսով չեն ստանում օրհնությունները:

**Վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Ձեր օրագրի մեջ գրի առեք յուրաքանչյուր ունկնդրի հետ ամենօրյա հանդիպման ձեր ծրագրերը: Մի քանի օր առաջ պլանավորեք այն, ինչ պետք է անեք հետևելու համար ունկնդիրների առաջադիմությանը:

Ընտրեք մեկ պարտավորություն, որը կառաջարկեք, երբ ուսուցանեք դասերը: Այնուհետև պարզեք, թե ինչ մտահոգություններ կարող են որևէ մեկին խանգարել այդ պարտավորությունն ընդունելու կամ պահելու համար: Քննարկեք և պարապեք, թե ինչպես կարող եք լավագույն ձևով օգնել մարդկանց մինչ նրանք փորձում են լուծել իրենց խնդիրները:

Նշումներ

### Հիշեք սա

- Աշխատեք որոնման կամ ուսուցանման ցանկացած իրավիճակում մարդկանց՝ և Եկեղեցու անդամներին և ոչ անդամներին, հրավիրել պարտավորություններ ստանձնել:
- Պարտավորություն ստանձնելու հրավեր ներկայացրեք օգնելու համար մարդկանց զգալ դարձի ընթացքը:
- Օրհնություններ խոստացեք:
- Վկայություն բերեք:
- Հետևեք ընթացքին օգնելու համար մարդկանց պահել պարտավորությունները:

# Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

Նշումներ

## Անհատական ուսումնասիրություն

- Ընտրեք որևէ պատվիրան 4-րդ կամ 5-րդ դասերից: Մտածեք այն օրհնությունների մասին, որոնք ստացել եք այդ պատվիրանին հնազանդվելու արդյունքում և գրեք դրանք ձեր տետրում:
- Նամակ գրեք ձեր ընտանիքի անդամներին, խնդրելով նրանց կիսվել, թե ինչպես են օրհնվել որևէ պատվիրանին հնազանդվելու արդյունքում (օրինակ, տասանորդը):
- Գրեք ձեր զգացողությունների մասին, երբ հրավիրում եք պարտավորություններ ստանձնել: Դուք համարձա՞կ եք, թե տատանվող: Դուք վստա՞հ եք, որ մարդիկ կօրհնվեն, թե դուք կասկածում եք: Դուք հետևողակա՞ն եք, համբերատար և օժանդակող, երբ կատարում եք ձեր ամենօրյա այցերը: Մարդիկ գիտե՞ն, որ դուք սիրում եք իրենց: Ինչպե՞ս կարող եք ուղղել այն թերությունները, որ գտնում եք ձեր հրավերների մեջ:
- Վերանայեք յուրաքանչյուր դասի համար ձեր կազմած պլանը: Դուք ներառե՞լ եք հատուկ պարտավորություններ: Ձեր դասի պլանը թո՞ւյլ է տալիս պարտավորություններ ստանձնելու հրավեր անել:

## Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Ձեր օրագրից օգտվելով, կազմեք այն մարդկանց ցուցակը, որոնց զանգահարել եք վերջին երկու օրերի ընթացքում, ներառյալ ունկնդիրներին և անդամներին: Յուրաքանչյուր անձի համար գրեք նրա ստանձնած պարտավորությունը և այլ հրավերներ, որոնք կարող եք կամ պետք է առաջարկեք: Քննարկեք, թե ինչպես է եղել, որ մարդիկ կատարել են ստանձնած պարտավորությունները, և ինչն է խանգարել մյուսներին պարտավորություններ ստանձնել: Ի՞նչ դուք պետք է անեք այդ պարտավորությունների կատարման ընթացքին հետևելու համար:
- Ձեր օրագրից օգտվելով, գրի առեք այն ունկնդիրների անունները, որոնց դուք պատրաստվում եք ուսուցանել հաջորդ երկու օրերի ընթացքում: Մտածեք, թե 4 և 5 դասերում նշված որ պարտավորությունն եք դուք նրանց առաջարկելու ստանձնել: Քննարկեք, թե ինչպես եք առաջարկելու ստանձնել այդ պարտավորությունը և ինչ հատուկ օրհնություններ կարող եք խոստանալ հնազանդության դիմաց:
- Կարող եք Ուսուցման Գրառումը ցույց տալ ունկնդիրներին, որպեսզի նրանք իմանան, թե ինչ ակնկալեն: Եթե հարմար եք գտնում, կարող եք մեկ օրինակ տալ նրանց:
- Վերանայեք ձեր օրագրի Գրառումներ/Գործերի Ցանկ բաժինը անցած երեք օրերի համար տեսնելու, թե արդյոք գրի եք առել ձեր տված յուրաքանչյուր հրավերի կատարմանը հետևելու հանձնարարությունը:

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Քննարկեք արդյունավետ և ստեղծարար մտքեր ունկնդիրների հետ ամենօրյա կապ հաստատելու համար: Ինչպե՞ս են միսիոներները արդյունավետ աշխատել անդամների հետ: Ինչպիսի՞ տպագրված, տեսագրված կամ ձայնագրված նյութեր կարող են օգտակար լինել: Ի՞նչ դուք կարող եք անել, երբ մարդիկ տանը չեն կամ չափազանց զբաղված են ձեզ հետ հանդիպելու համար:

Նշումներ

- Քննարկենք, ինչ ճանապարհներով են միսիոներները արդյունավետ սովորեցրել 4-րդ և 5-րդ դասերում տրված պատվիրանները:

- Քննարկենք այն որոշակի մտահոգությունները, որոնք ունեն ձեր ներկա ունկնդիրները: Ո՞րն է այդ մտահոգությունների էությունը: Ի՞նչ կարող են միսիոներները անել այդ մտահոգությունները փարատելու համար:

### Միսիայի Նախագահ

- Ժամանակ առ ժամանակ միսիոներների հետ գնացեք ուսուցանման: Նրանց օգնեք հիմնականում օգնել մարդկանց պարտավորություններ ստանձնել և պահել դրանք:

- Քահանայության ղեկավարներին և անդամներին խրախուսեք ունկնդիրների հետ ամենօրյա կապի մեջ գտնվել:

- Միսիոներական ձեր ջանքերում հրավեր ներկայացնելու օրինակ ծառայեք այն միսիոներների համար, ում ծառայում եք:



# Ինչպե՞ս ես կարող եմ պատրաստել մարդկանց մկրտությանը և հաստատմանը

Նշումներ

**Մտածեք այս մասին**

- Ի՞նչ պետք է ես անեմ մարդկանց օգնելու համար պատրաստվել մկրտությանը և հաստատմանը:
- Ինչպե՞ս ես կարող եմ արդյունավետ մկրտության հարցազրույց անցկացնել:
- Ինչպե՞ս է պլանավորվում և անցկացվում հոգևոր մկրտության ծառայությունը:
- Ինչպե՞ս ես կարող եմ սերտորեն աշխատել եպիսկոպոսի հետ, որպեսզի հավաստիանամ, որ նորադարձները կհաստատվեն:
- Ինչո՞ւ է կարևոր լրացնել մկրտության և հաստատման ձևերը:

## Պատրաստել մարդկանց մկրտությանը և հաստատմանը

Ձեր ուսուցանման նպատակն է օգնել մարդկանց հավատք զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ և ապաշխարել իրենց մեղքերից: Ինչպես սովորեցրել է Մորմոնը «ապաշխարության առաջին պտուղները` մկրտությունն է» (Մորոնի 8.25): Մկրտության հարցազրույցը Եկեղեցու կողմից հաստատված եղանակ է հետևելու համար, որ յուրաքանչյուր թեկնածու համապատասխանում է մկրտության համար Տիրոջ կողմից տրված չափանիշներին և պատրաստ է ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Այս հարցազրույցի միջոցով մկրտության թեկնածուները կատարում են սուրբ գրքերի պահանջը, որով վկայում են Եկեղեցու լիազորված ներկայացուցչի առաջ, որ իսկապես ապաշխարել են իրենց մեղքերից (տե՛ս ՎևՈւ 20.37):

© 1988 Greg K. Olsen. Courtesy Mill Pond Press and Dr. Gerry Hooper. Մի բազմացրեք:

Նշումներ

Ունկնդիրների ստանձնած պարտավորությունները իրենց օգնում են պատրաստվել կապելու և պահպանելու մկրտության ուխտը: Մարդիկ, որոնք պահում են այն պարտավորությունները, որոնք դուք նրանց կոչ եք արել վերցնելու իրենց վրա, լավ պատրաստված կլինեն հարցազրույցի և Եկեղեցում անդամության ու ակտիվ գործունեության համար:

Ունկնդիրներին ուսուցանելով և նախապատրաստելով մկրտությանն ու հաստատմանը, հետևեք, որպեսզի նրանք բավարարեն մկրտության պահանջները:

**Մկրտության պահանջները**

**Վարդապետություն և Ուխտեր 20.37**

- Խոնարհեցնել իրենց Աստծո առաջ:
- Ցանկություն ունենալ մկրտվելու:
- Առաջ գալ կոտրված սրտով և փշրված հոգով:
- Ապաշխարել բոլոր մեղքերից:
- Պատրաստակամորեն իրենց վրա վերցնել Քրիստոսի անունը:
- Վճռականություն ունենալ ծառայելու Քրիստոսին մինչև վերջ:
- Իրենց գործերով ցույց տալ, որ ստացել են Քրիստոսի Հոգին իրենց մեղքերի թողության համար:

**Առաջին Նախագահություն և Տասներկուսի Քվորում.**

- Բավականին փոփոխություններ կատարել կյանքում, որպեսզի արժանի լինել Վարդապետություն և Ուխտեր 20.37-ում տրված պահանջներին:
- Հավատք զարգացնել Քրիստոսի հանդեպ:
- Ապաշխարել մեղսագործություններից:
- Ապրել բարոյական արժանավորության սկզբունքներով:
- Ապրել Իմաստության Խոսքով:
- Պարտավորվել տասանորդ վճարել:
- Ստանալ միսիոներական բոլոր դասերը [դասեր 1–4՝ Ուսուցման Գրառման մեջ և դրանց հետ կապված պարտավորությունները]:
- Հանդիպել եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ:
- Հաճախել մի քանի հաղորդության ժողովների:

(“Statement on Missionary Work,” First Presidency letter, 11 Dec. 2002)

Երբ ունկնդիրը մկրտության կոնկրետ ամսաթիվ է նշանակել, պլանավորեք այն բոլոր գործերը, որոնք պետք է կատարել մկրտությունից և հաստատումից առաջ, ինչպես գրված է ձեր օրագրում: Ուշադիր վերանայեք Ուսուցման Գրառումը, հավաստիանալու համար, որ սովորեցրել եք հիմնական վարդապետությունները և, որ թեկնածուն պատրաստ է պատասխանելու մկրտության հարցազրույցի բոլոր հարցերին: Այդ անձի հետ վերանայեք ձեր ծրագիրը հաջորդ հանդիպման ժամանակ: Հնարավորության դեպքում, անձը պետք է ներկա լինի որևէ մեկի մկրտության արարողությանը իր մկրտությունից առաջ:

Եթե զգում եք, որ անձը, որին դուք սովորեցնում եք, լրացուցիչ պատրաստման կարիք ունի, մի նշանակեք հարցազրույց, մինչև որ թեկնածուն չհամապատասխանի բոլոր չափանիշներին: Եթե թեկնածուն անչափահաս է, հավաստիացեք, որ ծնողները կամ խնամակալները տվել են իրենց համաձայնությունը նրա մկրտվելու համար, նախընտրելի է գրավոր տեսքով:

Մարդկանց օգնելով պատրաստվել իրենց մկրտության հարցազրույցին, նրանց հետ խոսեք հարցազրույցի նպատակի մասին: Նրանց սովորեցրեք և բերեք ձեր վկայությունը մկրտության

Նշումներ

և Սուրբ Հոգու պարգևի սրբության մասին: Բացատրեք, որ դուք ուզում եք հավաստիանալ, որ իրենք հասկանում են ձեր սովորեցրած սկզբունքները և այն ուխտերը, որ կկապեն: Բացատրեք նաև, որ հարցազրույցը իրենց հնարավորություն է տալիս վկայել Տիրոջ ներկայացուցչի առջև, որ իրենք պատրաստ են սուրբ արարողություններին: Պահելով մկրտության և հաստատման իրենց ուխտերը, նրանք կստանան իրենց մեղքերի թողությունը: Կիսվեք այն հարցերով, որոնք հարցազրույց վարողը կտա կարևոր վարդապետություններին հավատալու, անցած մեղքերից ապաշխարելու և իրենց կյանքի ընթացքում Հիսուս Քրիստոսին հնազանդվելու ուխտը պահելու վերաբերյալ: Շեշտեք, որ ջրով մկրտությունն անավարտ է առանց հաստատման և Սուրբ Հոգու պարգևի:

**Վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

- Կարդացեք հետևյալ հատվածներից յուրաքանչյուրը և ամփոփ ցանկ կազմեք մկրտության և հաստատման համար անհրաժեշտ հատկանիշներ ունենալու համար:

| | | |
|---|---|---|
| 2 Նեփի 9.23; 31.4–13 | 3 Նեփի 27.13–21 | ՎնՈւ 20.37 |
| Մոսիա 18.8–10 | Մորոնի 6.1–4 | ՎնՈւ 22 |
| Ալմա 7.14–15 | Մորոնի 8.25–26 | Գործք Բ.37–39 |

- Մկրտության հարցազրույցի ժամանակ թեկնածուներին հարցնում են, թե արդյոք նրանք պատրաստ են իրենց վրա վերցնել Քրիստոսի անունը: Ի՞նչ դուք կարող եք անել, որպեսզի օգնեք նրանց հասկանալ այդ հարցը: Այս հարցի շուրջ խորհելիս, ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

| | | |
|---|---|---|
| Մոսիա 4–5 | Մոսիա 26.18, 21–27 | 3 Նեփի 27.1–10 |
| Մոսիա 18.1–11 | | |

Դուք կարող եք նաև կարդալ այլ հատվածներ, որոնք ձեզ կօգնեն հասկանալ այս սկզբունքը:

## Ինչպե՞ս վարել հարցազրույցը

Հարցազրույց վարող անձը պետք է օգտագործի մկրտության հարցազրույցի հարցերը Հոգու առաջնորդությամբ որոշելու համար, թե արդյոք մկրտության թեկնածուն բավարարում է Վարդապետություն և Ուխտեր 20.37-ում տրված պահանջներին: Նա նաև պետք է հարմարեցնի հարցերը թեկնածուի տարիքին և հասունության աստիճանին:

Եթե թեկնածուն չի բավարարում մկրտության պահանջներին ըստ մկրտության հարցերի, ապա մկրտությունն ու հաստատումը պետք է հետաձգվեն: Ունկնդիրը պետք է լրացուցիչ ուսուցում ստանա լիաժամկետ միսիոներների կողմից, ինչպես նաև եղբայրական աջակցություն ծխի անդամների կողմից:

Շրջանի կամ տարածքի ղեկավարը, որը վարում է հարցազրույցը, պետք է.

- Հարցրազրույց անցկացնի հարմար և առանձնացված վայրում, որտեղ կարող է ներկա լինել Տիրոջ Հոգին: Հարցազրույց անցկացնողի զուգընկերը պետք է մոտ լինի:
- Բացեք աղոթքով:
- Թեկնածուին խնդրեք իրեն հարմարավետ զգալ:
- Հարցրազրույցը հոգեպես վեհացնող փորձառություն դարձրեք:
- Հավաստիացեք, որ թեկնածուն հասկանում է հարցազրույցի նպատակը:
- Տվեք մկրտության հարցազրույցի հարցերը: Օգտագործեք պարզաբանումներ մտցնող հարցեր, որպեսզի զգաք անձի վկայության զորությունը և նրա ապաշխարության անկեղծությունը:

Նշումներ

- Պատասխանեք թեկնածուի հարցերին:
- Անձին հրավիրեք վկայություն բերել և արտահայտել իր զգացմունքները:
- Եթե անձը դժվարություններ ունի վկայության կամ արժանավորության հետ կապված, բացատրեք, որ լավագույն տարբերակն է հետաձգել մկրտությունը մինչև նա ավելի լավ պատրաստ կլինի:

### Մկրտության հարցազրույցի հարցերը

1. Դուք հավատո՞ւմ եք, որ Աստված մեր Երկնային Հայրն է: Դուք հավատո՞ւմ եք, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, աշխարհի Փրկիչը և Քավիչը:
2. Դուք հավատո՞ւմ եք, որ այս Եկեղեցին և Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Դուք հավատո՞ւմ եք, որ [Եկեղեցու ներկա Նախագահը] Աստծո մարգարեն է: Ի՞նչ է դա նշանակում ձեզ համար:
3. Ի՞նչ է ձեզ համար նշանակում ապաշխարելը: Դուք զգո՞ւմ եք, որ ապաշխարել եք ձեր անցյալ մեղսագործություններից:
4. Դուք երբևէ կատարե՞լ եք որևէ լուրջ հանցագործություն: Եթե այո, ապա արդյո՞ք այժմ պատժամիջոցների ենթարկման տակ չեք: Դուք երբևէ մասնակցե՞լ եք արհեստական վիժեցման պրոցեսին; միասեռական հարաբերություններին:
5. Ձեզ ուսուցանվե՞լ է, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն անդամակցելը ներառում է ավետարանի չափանիշներով ապրելը: Ինչպե՞ս եք դուք հասկանում հետևյալ չափանիշները: Դուք պատրա՞ստ եք հնազանդվել դրանց:
   - ա. Առաքինության օրենքը, որն արգելում է տղամարդու և կնոջ միջև սեռական հարաբերություններն օրինական ամուսնական կապերից դուրս:
   - բ. Տասանորդի օրենքը:
   - գ. Իմաստության Խոսքը
   - դ. Կիրակին պահելը, ներառյալ ամեն շաբաթ հաղորդություն ընդունելը և անդամներին ծառայություն մատուցելը:
6. Երբ դուք մկրտվում եք, դուք ուխտ եք կապում Աստծո հետ, որ պատրաստ եք ձեզ վրա վերցնել Քրիստոսի անունը և պահել Նրա պատվիրանները ձեր ողջ կյանքի ընթացքում: Դուք պատրա՞ստ եք կապել այդ ուխտը և հավատարիմ մնալ դրան:

Հաջող հարցազրույցի վերջում շնորհավորեք թեկնածուին: Միացեք մյուս միսիոներներին և բացատրեք, թե ինչպես է տեղի ունենում մկրտության արարողությունը:

Բացատրեք, որ հաստատումը տեղի կունենա եպիսկոպոսի ղեկավարության ներքո հաղորդության ժողովի ժամանակ այն ծխում, որտեղ իրենք բնակվում են:

Եթե անհրաժեշտ է հետաձգել մկրտությունը, շրջանի ղեկավարը կամ տարածքի ղեկավարը և մյուս միսիոներները պետք է զգուշորեն և պահպանելով գաղտնիությունը աշխատեն այդ հարցի շուրջ: Թեկնածուին հավաստիացրեք, որ նա կարող է առաջադիմել, և բացատրեք, որ որոշ մեղսագործությունների լիակատար ապաշխարության համար ավելի երկար ժամանակ է պահանջվում: Բացատրեք, որ արարողության սրբազան բնույթը պահանջում է արժանավորության բարձր չափանիշներ: Թեկնածուին հավաստիացրեք, որ դուք և մյուսները կանեք այն ամենը, ինչ կարող եք նրան աջակցելու համար: Այնուհետև հավատարմորեն կատարեք ձեր խոստումը:

Նշումներ

## Մկրտություն և հաստատում. հարց ու պատասխան

**Ո՞վ է վարում մկրտության և հաստատման հարցազրույցը:**

Սովորաբար շրջանի ղեկավարն է հարցազրույց անցկացնում մկրտության թեկնածուների հետ, որոնց ուսուցանել են իր շրջանի միսիոներները, ներառյալ այն թեկնածուներին, որոնք սովորեցրել են իր տարածքի ղեկավարները: Տարածքի ղեկավարը հարցազրույց է անցկացնում այն թեկնածուների հետ, որոնց ուսուցանել է շրջանի ղեկավարը: Միսիայի նախագահը կամ նրա կողմից նշանակված որևէ մեկը պետք է հարցազրույց անցկացնի այն անձանց հետ, ովքեր լուրջ մեղք են գործել: Շրջանի կամ տարածքի ղեկավարները հարցազրույց չեն անցկացնում այն թեկնածուների հետ, որոնք իրենց շրջանից կամ տարածքից դուրս են, եթե միսիայի նախագահը իրենց չի հանձնարարել դա անել:

**Ո՞րն է նորադարձի մկրտության սահմանումը:**

Նորադարձի մկրտություն է համարվում այն մկրտությունը, որը կատարվում է.

- Ինը տարեկան և բարձր տարիքի անձանց համար, ովքեր նախկինում մկրտված և հաստատված չեն եղել որպես Եկեղեցու անդամներ:
- Ութ տարեկան երեխաների համար, ում ծնողներն անդամներ չեն կամ ում ծնողները մկրտվում և հաստատվում են իրենց երեխայի հետ միևնույն ժամանակ:

**Արդյո՞ք ես պետք է թույլտվություն ստանամ փոքր երեխային մկրտելու համար:**

Նախքան չափահաս տարիքից ցածր ունկնդիրներին ուսուցանելն ու մկրտելը, դուք պետք է ձեռք բերեք նրա ծնողների կամ օրինական խնամակալների թույլտվությունը, նախընտրելի է, գրավոր տեսքով: Բացի դա, դուք պետք է համոզված լինեք, որ երեխան հասկանում է մկրտության ուխտը և ամեն ջանք կգործադրի այն պահելու համար՝ ավետարանին հնազանդվելով, ներառյալ Եկեղեցու հավաքներին հավատարմորեն հաճախելով:

**Արդյո՞ք ես պետք է ստանամ ամուսնու կամ կնոջ թույլտվությունը կնոջը կամ ամուսնուն մկրտելու համար:**

Այո: Մի մկրտեք ամուսնացած անձնավորության առանց նրա կնոջ կամ ամուսնու համաձայնության:

**Եթե ընտանիքի հայրը պատրաստ չէ մկրտվելու, պե՞տք է ես մկրտեմ ընտանիքին, թե՞ պետք է սպասեմ մինչև հայրը պատրաստ լինի:**

Եթե ընտանիքի հայրը պատրաստ չէ մկրտվելու և հաստատվելու, սակայն ընտանիքի մյուս անդամները պատրաստ են, դուք հորը կարող եք ասել, որ նախընտրում եք չմկրտել ընտանիքին առանց նրա, քանի որ Եկեղեցին հարգում է տան ղեկավարին և, քանի որ ընտանիքի անդամները ավելի լավ կառաջադիմեն ավետարանում որպես ընտանեկան միավոր: Սակայն, եթե հայրը շարունակում է մերժել, դուք կարող եք մկրտել և հաստատել ընտանիքի անդամներին նրա համաձայնությամբ:

**Արդյո՞ք լավ միտք է կարգել հորը Ահարոնյան Քահանայության նրա մկրտությունից անմիջապես հետո, որպեսզի նա կարողանա մկրտել իր ընտանիքի մյուս անդամներին:**

Ոչ: Հայրը պետք է հաստատվի հաղորդության ժողովի ժամանակ և եպիսկոպոսի հետ հարցազրույցից հետո միայն հաստատվի Ահարոնյան Քահանայություն ստանալու համար: Ընտանիքի անդամների մկրտությունը չպետք է հետաձգվի հոր կողմից մկրտությունը կատարվելու նպատակով:

**Կարո՞ղ եմ ես ուսուցանել և մկրտել մի անձի, որը հեռացվել էր Եկեղեցուց:**

Հեռացված անձանց մկրտությունը համարվում է ոչ նորադարձի մկրտություն, և միսիոներները հարցազրույց չեն անցկացնում նման անձանց հետ: Դուք այդ անձանց հետ կարող եք աշխատել միայն միսիայի նախագահի և եպիսկոպոսի խիստ ղեկավարության ներքո:

Նշումներ

**Ի՞նչ է պետք անել, եթե անձը ունի մկրտության նշանակված օր, սակայն չի պահում իր բոլոր պարտավորությունները:**

Եթե դուք զգում եք, որ անձը, որին դուք ուսուցանում եք, լրացուցիչ նախապատրաստության կարիք ունի, մի պլանավորեք մկրտության հարցազրույց անցկացնել, մինչև որ ունկնդիրը չպահի իր պարտավորությունները և չբավարարի չափանիշներին:

**Ի՞նչ պետք է ես անեմ, եթե մարդիկ ցանկանում են մկրտվել, սակայն միասին են ապրում առանց ամուսնանալու:**

Մկրտության թեկնածուները, որոնք առանց ամուսնանալու ապրում են հակառակ սեռի ներկայացուցչի հետ, պետք է կամ ամուսնանան կամ դադարեն միասին ապրել, եթե ուզում են մկրտվել:

**Մկրտության հարցազրույցի 4-րդ հարցը վերաբերվում է այն անձանց, որոնք ներքաշված են եղել լուրջ մեղքի մեջ, օրինակ արհեստական վիժեցում, միասեռական հարաբերություններ, կամ լուրջ հանցագործություն: Ի՞նչ ես պետք է անեմ, եթե որևէ մեկը խոստովանում է նման մեղքը:**

1. *Հրահանգներ միսիոներներին սովորեցնելու համար:* Երբեմն ունկնդիրները կամավոր պատմում են այդ մեղքերի մասին, երբ դուք նրանց սովորեցնում եք պատվիրանները և հրավիրում եք պարտականություններ ստանձնել: Սակայն, եթե նրանք ոչինչ չեն ասում, բայց դուք կարծում եք, որ խնդիր ունեն, նախապատրաստեք նրանց մկրտության հարցազրույցին, հարցնելով նրանց, թե արդյո՞ք ներքաշված չեն եղել նման մեղքերի մեջ: Եթե դուք իմանում եք որևէ լուրջ մեղքի մասին, մի հարցրեք նրանց մեղքի մանրամասների մասին: Մի պլանավորեք մկրտության օրը, ոչ էլ խոստումներ տվեք, թե երբ հնարավոր կլինի մկրտվել և հաստատվել: Արտահայտեք ձեր սերը և կրկնեք ապաշխարության սկզբունքը: Բարյացկամորեն բացատրեք, որ այդ մեղքերը լուրջ են և, որ ավելի հասուն և փորձված անձ (ձեր միսիայի նախագահը կամ նրա կողմից նշանակված որևէ մեկը) կգրուցի նրանց հետ և կօգնի այդ հարցում: Ապա մկրտության հարցազրույցի խնդրանքով դիմեք անմիջապես միսիայի նախագահին:
2. *Հրահանգներ այն անձանց համար, ովքեր հարցազրույց են անցկացնում մկրտության հաստատման համար:* Եթե միսիոներները պատշաճ ձևով սովորեցրել են թեկնածուին մինչև մկրտության հարցազրույցը, ապա եթե նման խնդիրներ գոյություն ունեն, պետք է դիմել միսիայի նախագահին: Եթե դրանք ի հայտ են գալիս, արտահայտեք ձեր սերը և վերանայեք պատվիրանները և ապաշխարության սկզբունքը: Բարյացկամորեն բացատրեք, որ այդ մեղքերը լուրջ են և, որ ավելի հասուն և փորձված անձ (ձեր միսիայի նախագահը կամ նրա կողմից նշանակված որևէ մեկը) կգրուցի նրանց հետ և կօգնի այդ հարցում: Ապա մկրտության հարցազրույցի խնդրանքով դիմեք անմիջապես միսիայի նախագահին:

**Վարժություն. անհատական ուսումնասիրություն**

Մտածեք այն մասին, թե ինչպես ձեզ կզգայիք, եթե հարցազրույց անցնեիք: Մտածեք հետևյալ հարցերի շուրջ.

- Հարցազրույցի ո՞ր կողմերը ձեզ տարօրինակ կթվային: Ի՞նչ կարող է անել կամ ասել հարցազրույց վարողը, որպեսզի ձեզ համար ավելի հեշտ լինի:
- Ինչպե՞ս կցանկանայիք, որ հարցազրույց վարողը վերաբերվեր ձեզ:
- Ինչպե՞ս կցանկանայիք, որ հարցազրույց վարողը արձագանքեր, եթե դուք կասկած, շփոթմունք արտահայտեիք, կամ լուրջ մեղքեր խոստովանեիք:

Այս հարցերի ձեր պատասխանները գրեք ձեր աշխատանքային տետրում:

Նշումներ

## Լրացրեք Մկրտության և Հաստատման Ձևերը

Հարցազրույց վարող միսիոները պետք է լրացնի մկրտության գրառման ընթացիկ ձևը: Նա պետք է բացատրի, որ անդամնության գրառումը կատարվում է մկրտության գրանցման հիման վրա և պարունակում է կարևոր տեղեկություն նոր անդամների և նրանց ստացած արարողությունների մասին: Երբ անդամները տեղափոխվում են, անդամության գրառումը ուղարկվում է նոր միավոր, որպեսզի նոր եպիսկոպոսը ընկերակցի և աջակցություն ցուցաբերի: Միսիոները պետք է խնդրի թեկնածուին հարցազրույցի ժամանակ ստուգել ձևի վրա գրանցված տեղեկությունը: Առանց անդամության գրառման անձը չի կարող տաճարային երաշխավորագիր ստանալ:

Եպիսկոպոսը պետք է հավաստիանա, որ հաստատման ձևը լրացվել է յուրաքանչյուր թեկնածուի համար՝ ըստ ձևում տրված հրահանգների:

**վարժություն. անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Ուսումնասիրեք Մոսիա 6.1–3 և Մորոնի 6.1–4: Ինչպե՞ս են այդ հատվածները կապված մկրտության և հաստատման եշգրիտ գրառումներ կատարելու ձեր պարտականության հետ:

## Մկրտության ծառայություն

Հոգին շատ ուժեղ ազդեցություն է գործում, երբ կատարվում են մկրտության և հաստատման սուրբ արարողությունները: Մկրտության արարողությունը և հաջորդող հաստատումը պետք է հոգևոր ներշնչում լինեն նորադարձների համար: Դուք և ծխի միսիայի ղեկավարը պետք է անեք հնարավորին ամեն ինչ, որպեսզի մկրտության ծառայությունը անցնի կազմակերպված, ոգեշնչված և հիշարժան ձևով: Այդ ծառայությունները պետք է ամրացնեն նորադարձներին ակտիվ մնալու իրենց որոշման մեջ:



Հրավիրեք եպիսկոպոսությանը, քվորումին և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին, տնային և այցելող ուսուցիչներին (եթե հանձնարարված է), այցելել մկրտության ծառայությանը: Նորադարձների ընկերներն ու բարեկամները և ձեր բոլոր ներկա ուսկնդիրները պետք է հրավիրված լինեն այցելելու մկրտության ծառայությանը և հաղորդության ժողովին, որի ժամանակ տեղի է ունենում հաստատումը: Այս փորձառությունը նրանց կօգնի զգալ Հոգին և պատրաստ լինել ընդունելու ավետարանի մասին ավելի շատ սովորելու հրավերը: Աշխատեք մկրտության թեկնածուի և ծխի միսիայի ղեկավարի հետ թեկնածուների ընկերներին և բարեկամներին հրավիրելու համար: Ապա այդ ծառայությունից հետո քննարկեք նրանց փորձառությունները և հրավիրեք լսելու, թե ինչու իրենց ընկերը որոշեց մկրտվել:

Մկրտության թեկնածուին սովորեցրած միսիոներները պետք է համաձայնեցնեն միսիայի ղեկավարի հետ այդ ծառայությունը կատարելու համար: Բացատրեք մկրտության թեկնածուին, թե ինչ է ծրագրված և ինչու: Քննարկեք պատշաճ հագնվելու կարգը, ներառյալ այն սպիտակ հագուստը, որը կտրվի թեկնածուին մկրտության համար: Պայմանավորվեք մկրտության ժամի և վայրի մասին: Ծառայությունը սովորաբար վարում է եպիսկոպոսության

Նշումներ

անդամը կամ ծխի միսիայի ղեկավարը: Ստորև տրվում են պլանավորման և կազմակերպչական կարևոր հարցերը:

Մկրտության ծառայությունը կարող է ընդգրկել.

1. Ողջունող երաժշտություն:
2. Կարճ ողջույնի խոսք ծառայությունը վարող քահանայություն կրողի կողմից (եպիսկոպոսության անդամը պետք է նախագահի):
3. Բացող օրհներգ և աղոթք:
4. Մեկ կամ երկու կարճ ելույթ ավետարանի թեմաներով, օրինակ մկրտության և Սուրբ Հոգու պարգևի մասին:
5. Երաժշտական համար:
6. Մկրտության արարողություն:
7. Ակնածանքի ժամ, երբ մարդիկ, որոնք մասնակցել են մկրտությանը, փոխում են հագուստը: Այդ ժամանակ կարելի է ունկնդրել երաժշտություն, երգել ծանոթ օրհներգեր և Երեխաների Խմբի երգեր, դիտել Եկեղեցու տեսաերիզ, կամ վկայություն բերել:
8. Հնարավորություն նորադարձների համար իրենց վկայությունը բերելու, եթե ունեն այդ ցանկությունը:
9. Փակող օրհներգ և աղոթք:
10. Ավարտական երաժշտություն:

## Հաստատում



Անձը ստանում է հաստատման արարողությունը մկրտվելուց հետո (տե՛ս ՎևՈւ 20.41): Նորադարձը համարվում է Եկեղեցու անդամ մկրտության և հաստատման արարողությունների կատարումից հետո (տե՛ս Հովհաննես Գ.5; ՎևՈւ 33.11): Նորադարձները հաստատվում են հաղորդության ժողովի ժամանակ այն ծխում, որտեղ բնակվում են, ոչ թե մկրտության ծառայության ժամանակ: Եպիսկոպոսը պատասխանատու է հետևելու, որպեսզի այդ հաստատումը տեղի ունենա մկրտությունից հետո որքան հնարավոր է շուտ: Եպիսկոպոսը կամ նրա խորհրդականներից որևէ մեկը մասնակցում է հաստատմանը: Եպիսկոպոսը կարող է հրավիրել միսիոներ երեցներին, որոնք օգնել են ուսուցանել նորադարձին հաստատմանը մասնակցելու համար: Սերտորեն աշխատեք եպիսկոպոսի և ծխի միսիայի ղեկավարի հետ հավաստիանալու համար, որ այս կարևոր արարողությունը կատարվել է:

## Մկրտությունից և հաստատումից հետո

Եպիսկոպոսի ղեկավարությամբ միսիոներները կարող են շարունակել ընկերակցել նոր անդամների հետ: Շարունակեք նրանց սովորեցնել և վերանայեք այն, ինչ սովորեցվել է: Նրանց խրախուսեք և աջակցեք, նրանց հետ կարդացեք Մորմոնի Գիրքը և օգնեք կիսվել ավետարանով ընտանիքի անդամների և ընկերների հետ: Եթե հարմար է, ձեր կյանքի ընթացքում շարունակեք շփվել նրանց հետ, ում սովորեցրել եք, խրախուսեք և աջակցեք նրանց:

Նշումներ

Հաստատումից հետո շարունակեք օգտագործել Ուսուցման Գրառումը ձեր 1–4 և 5 դասերը ուսուցանելիս ձեր առաջադիմությունը գրի առնելու համար: Սերտորեն աշխատեք ծխի միսիայի ղեկավարի և ծխի ղեկավարության հետ օգնելու համար նորադարձին ակտիվ մնալ և ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության բոլոր օրհնությունները:

**Հիշեք սա**

- Պատշաճ ձևով պատրաստեք մկրտության թեկնածուին մկրտության և հաստատման հարցազրույցին:
- Հավաստիացեք, որ թեկնածուները բավարարում են մկրտության և հաստատման պահանջներին:
- Օգնեք, որպեսզի մկրտության ծառայությունները հոգևպես վեհացնող լինեն:
- Օգտագործեք մկրտության ծառայությունները և հաստատումները ձեր որոնման ջանքերում:
- Ճշգրտորեն լրացրեք մկրտության և հաստատման ձևերը:

Նշումներ

## Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

### Անհատական ուսումնասիրություն

- Կազմեք այն խնդիրների ցանկը, որոնց կարող է հանդիպել մկրտության թեկնածուն: Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի թեկնածուները սեր և ջերմություն զգան Եկեղեցու անդամների կողմից:

- Ուսումնասիրեք Մորոնի 6 և Վարդապետություն և Ուխտեր 20.68–69: Ի՞նչ եք դուք սովորում այս հատվածներից այն մասին, թե ինչպես նախապատրաստել մարդկանց մկրտությանը և հաստատմանը: Գրեք ձեր սովորածը և կիսվեք ձեր մտքերով ձեր զուգընկերոջ հետ՝ զուգընկերոջ հետ ուսումնասիրության ժամանակ:

### Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Երեց Հենրի Բ. Այրինգը բացատրել է, թե ինչու են կարևոր բարձր չափանիշները: Ձեր զուգընկերոջ հետ քննարկեք այս խորհուրդը և գնահատեք, թե ինչպես եք ձեզ զգում այդ չափանիշները բավարարելու գործում մարդկանց օգնելու վերաբերյալ: «Տերը սահմանում է Իր չափանիշները, որպեսզի կարողանա օրհնել մեզ: Մտածեք այդ օրհնությունների մասին. Նա Սուրբ Հոգու օգնությունն է խոստանում նրանց, ովքեր բավարարում են այդ չափանիշներին: Նա անձնական խաղաղություն է խոստանում: Նա խոստանում է Իր տանը սուրբ ծեսերը ստանալու հնարավորություն: Եվ նրանց, ովքեր մինչև վերջ ապրում են Իր չափանիշներով, Նա խոստանում է հավերժական կյանք: . . . Որովհետև մենք սիրում ենք այն մարդկանց, ում ծառայում ենք, մենք բոլորս ցանկանում ենք ավելի լավն անել, բարձրացնելով մեր Երկնային Հոր զավակների հավատարմությունը և մաքրությունը, որի կարիքը նրանք ունեն Տիրոջ բոլոր օրհնություններն ունենալու համար: . . . Դուք պետք է սկսեք պահելով Տիրոջ չափանիշները հստակորեն և առանց զոջանքի: Եվ որքան շատ աշխարհը հեռանա դրանցից և ծաղրի դրանց, այնքան ավելի համարձակ մենք պետք է լինենք դրանք կատարելիս» (“Standards of Worthiness,” *First Worldwide Leadership Training Meeting,* Jan. 2003, 10–11):

- Ձեր զուգընկերոջ հետ կիսվեք այս գլխից մկրտությանը և հաստատմանը մարդկանց պատրաստելու մասին ձեր սովորածով:

- Վերհիշեք ձեր վերջին այցելած մկրտության ծառայությունը: Այն համեմատեք «Մկրտության ծառայություն» վերնագրով բաժնի հրահանգների հետ: Ի՞նչը հաջողվեց: Ի՞նչը կարելի էր ավելի լավ անել: Քննարկեք, թե ինչպես դուք կաշխատեք, որ ձեր պլանավորած ծառայությունները լինեն հոգևոր և վեհացնող:

- Պարապեք, թե ինչպես կարող եք որևէ ունկնդրի պատրաստել մկրտության հարցազրույցին:

- Կրկնեք մկրտության հարցազրույցի հարցերը: Մտածեք, թե ինչպես կվարվեք տարբեր իրավիճակներում, օրինակ.
  - Թեկնածուն ձեզ չի ասել, որ գտնվում է փորձնական շրջանում նախկինում կատարված հանցանքի համար:
  - Անձը չի ստացել զորեղ պատասխան Ջոզեֆ Սմիթի մարգարե լինելու մասին իր աղոթքի համար:
  - Թեկնածուն երկու օր առաջ ծխախոտ էր օգտագործում:
  - Թեկնածուն վստահ չէ, թե ստացել է արդյոք իր աղոթքների պատասխանը:
  - Ընտանիքը ենշման է ենթարկվում ընկերների կողմից, որոնք վստահ չեն, թե արդյոք պատրաստ են մկրտությանը:

Նշումներ

- Վերանայեք Մկրտության Գրառում և Հաստատման Գրառում ձևերը և Մկրտության և Հաստատման Վկայական ձևը: Ինչպե՞ս կարող եք վստահ լինել, որ ձեր տրամադրած տեղեկությունը ճիշտ և լիարժեք է:

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Վերհիշեք մկրտության հարցազրույցի կարևորությունը: Քննարկեք, թե ինչպես միսիոներները պետք է պատրաստեն ունկնդիրներին հարցազրույցին:

- Քննարկեք, թե ինչպես կարող եք օգտագործել մկրտության ծառայությունները և հաստատումները ձեր որոնման ջանքերում:

## Միսիայի Նախագահ

- Աշխատեք տեղական քահանայության ղեկավարների հետ Առաջադիմության Գրառումը արդյունավետ օգտագործելու համար:

- Ժամանակ առ ժամանակ վարեք մկրտության առաջին հարցազրույցը:

- Սովորեցրեք շրջանի և տարածքի ղեկավարներին ինչպես վարել մկրտության հարցազրույցները:

- Միսիայի նախագահության անդամներին և քահանայության ղեկավարներին սովորեցրեք ինչպես վարել մկրտության հարցազրույցները մկրտության այն թեկնածուների հետ, ովքեր լուրջ մեղքեր են գործել:

Նշումներ



# Ինչպե՞ս ես պետք է աշխատեմ ցցի և ծխի ղեկավարների հետ

Նշումներ

**Մտածեք այս մասին**

- Ի՞նչ է պետք նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին Եկեղեցու ակտիվ անդամներ դառնալու համար:
- Որո՞նք են ցցի և ծխի ղեկավարների պատասխանատվությունները միսիոներական աշխատանքի, անդամներին Եկեղեցում պահելու և ակտիվացնելու գործում:
- Ինչպե՞ս ես կարող եմ օգնել ծխի ղեկավարներին ամրապնդել Եկեղեցին:
- Ի՞նչ է տեղի ունենում ծխի միսիայի ղեկավարի հետ անցկացվող շաբաթական համաձայնեցման ժողովի ժամանակ:

Դուք մեծ հնարավորություն ունեք աշխատելու շատ ղեկավարների և անդամների հետ ձեր միսիայի ընթացքում: Միասին դուք կամրացնեք և կփմնեք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Եկեղեցու ղեկավարների հետ հաստատված հարաբերությունները կօրհնեն ձեր կյանքը: Դրանք կարևոր հարաբերություններ են, որոնք օգնում են ձեզ և Եկեղեցու անդամներին վերականգնված ավետարանը հասցնել Երկնային Հոր զավակներին: Ծխի կազմակերպության մեջ աշխատելու հիմունքները հասկանալը կօգնի ձեզ առաջ գնալ ավելի մեծ կենտրոնացմամբ և զորությամբ:

## Ամրացնել նոր և ոչ ակտիվ անդամներին

Երբ նորադարձները մկրտվում և հաստատվում են, նրանք իրենց ողջ կյանքում Աստծուն և մյուսներին հնազանդվելու և ծառայելու սուրբ խոստումներ են տալիս: Նրանք դառնում են սելեստիալ արքայության մեջ փրկության թեկնածուներ: Խոստացված օրհնությունները ստանալու համար նրանք պետք է համբերեն մինչև վերջ` Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով: Եկեղեցու անդամները մեծ դեր են խաղում, օգնելով նորադարձներին մնալ ակտիվ և հավատարիմ:

© 2000 Simon Dewey. Մի բազմացրեք:

Նշումներ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Ամենևին իմաստ չկա կատարելու միսիոներական աշխատանք, եթե մենք չենք ստանում այդ ջանքերի պտուղները: Այդ երկուսը պետք է անբաժանելի լինեն: . . . Յուրաքանչյուր նորադարձ մեծ և լուրջ պատասխանատվություն է» (“Find the Lambs, Feed the Sheep,” *Ensign*, May 1999, 108):

Եպիսկոպոսի ղեկավարությամբ ծխի խորհուրդը առաջնային պատասխանատվություն է կրում նոր անդամների և ոչ ակտիվ անդամներին ամրացնելու համար: Նրանք հետևում են, որպեսզի նորադարձները և ոչ ակտիվ անդամները ընկերներ ունենան, սնուցվեն Աստծո խոսքով և կոչումներ ու պատասխանատվություն ստանան: Նրանք կարող են պահանջել, որպեսզի լիաժամկետ միսիոներները օգնեն տնային ուսուցման գործում (իսկ թույլ միսիոներների դեպքում այցելող ուսուցման գործում) և այցելեն նոր անդամներին, ոչ ակտիվ անդամներին և ապագա երեցներին: Հավանաբար, այդ այցերի համար ձեզ կկցեն որևէ անդամի:

Դուք նույնպես պատասխանատու եք այդ մարդկանց համար: Նախագահ Հինքլին ասել է. «Դուք՝ միսիոներներդ . . . ձեր նորադարձներին Եկեղեցու հետ կապելու այս պատասխանատվության մի մասն եք: Դուք, մի գուցե, չկարողանաք այցելել նրանց: Սակայն ժամանակ առ ժամանակ կարող եք գրել և խրախուսել նրանց: . . . Երբ տուն եք վերադառնում, մի մոռացեք նրանց: Միշտ ապրեք այնպես, որպեսզի արժանի լինեք նրանց վստահությանը: Երբեմն գրեք նրանց, արտահայտելով նրանց հանդեպ ձեր սերը» (*Ensign*, May 1999, 109):



Եկեղեցու ժողովներին հաճախելիս դուք և ձեր զուգընկերը պետք է նստեք ձեր ունկնդրի կողքին կամ այն անդամների կողքին, ում հետ ընկերակցում եք նրանց աջակցելու և ամրացնելու համար: Դուք չպետք է նստեք մյուս միսիոներների հետ մեկ խմբով:

Ձեր միսիայի կարևոր մասն է հիմնել Եկեղեցին և ամրացնել այն միավորը, որտեղ ծառայում եք: Դա դուք անում եք, մասամբ օգնելով նորադարձներին ակտիվ մնալ և օգնելով ոչ ակտիվ անդամներին կրկին ակտիվ դառնալ: Ձեր պարտականություններից մեկը ծխի միսիոներներին միանալն է նորից առաջին չորս դասերը և 5-րդ դասն ուսուցանելու համար: Ծխի միսիոներները, տնային ուսուցիչները և այցելող ուսուցիչները նույնպես կարող են օգնել ուսուցանել այդ սկզբունքները:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին պատմում է հետևյալ պատմությունն այն խնդիրների մասին, որոնց հանդիպում են նորադարձներից շատերը.

*Մի օր ես մի շատ հետաքրքիր նամակ ստացա: Գրել էր մի կին, որը Եկեղեցուն էր միացել մեկ տարի առաջ: Նա գրում էր.*

*«Դեպի Եկեղեցի իմ ճանապարհորդությունը յուրահատուկ և բավականին դժվար էր: Այս վերջին տարին իմ կյանքի ամենադժվար տարին էր: Այն նաև ամենավարձահատույց տարին էր: Որպես նոր անդամ ես շարունակում էի դժվարությունների հանդիպել ամեն օր»:*

*Նա շարունակում է, պատմելով, որ միանալով Եկեղեցուն Նա չէր զգում իր ծխի ղեկավարության աջակցությունը: Նրա եպիսկոպոսը կարծես անտարբեր էր նրա հանդեպ: Իրեն չընդունված զգալով, նա դիմեց նորից իր միսիայի նախագահին, որը նրա համար հնարավորություններ բացեց:*

*Նա պատմում է, որ «Եկեղեցու անդամները չեն հասկանում, թե ինչ է նշանակում նոր անդամ լինել: . . . Այդպիսով, նրանք չեն կարող իմանալ, թե ինչպես աջակցել մեզ»:*

*Ես ձեզ կոչ եմ անում, իմ եղբայրներ և քույրեր, որ եթե դուք չգիտեք, թե ինչ է նշանակում այս կամ այն բանը, աշխատեք պատկերացնել, թե ինչ է դա նշանակում: Դա կարող է լինել ահավոր միայնակությունը: Դա կարող է լինել հուսահատությունը: Դա կարող է լինել վախեցնող զգացողությունը: Այս Եկեղեցում մենք շատ ավելի տարբեր ենք, քան մտածում ենք: Այդ կինը շարունակում է. «Երբ մենք՝ ունկնդիրներս դառնում ենք Եկեղեցու անդամներ, մենք զարմանում ենք, երբ բացահայտում ենք, որ մուտք ենք գործել լիովին այլ աշխարհ , աշխարհ իր ուրույն ավանդույթներով, մշակույթով և լեզվով: Մենք բացահայտում ենք, որ չկա ոչ մի անձ կամ ուղեցույց, որին մենք կարող ենք դիմել այս նոր աշխարհ կատարած մեր*

Նշումներ

*ուղևորության ընթացքում օգնություն ստանալու համար: Սկզբում, ճանապարհորդությունը հետաքրքիր է, մեր սխալները զվարճացնող, սակայն ժամանակի ընթացքում այն վախեցնող է դառնում, իսկ վախը ի վերջո վեր է ածվում զայրույթի: Եվ վախի ու զայրույթի այդ փուլում է, որ մենք հեռանում ենք: Մենք վերադառնում ենք այն աշխարհ, որտեղից եկել ենք, որտեղ գիտեինք, թե ով էինք, որտեղ մեր ներդրումն էինք կատարում և մեր լեզվով խոսում»* [Ensign, *May 1999, 108]:*

**վարժություն. անհատական կամ զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Կարդացեք նախորդ պատմությունը: Ձեր աշխատանքային տետրում գրեք հետևյալ հարցերի պատասխանները կամ քննարկեք դրանք ձեր զուգընկերոջ հետ: Համապատասխան նպատակներ և ծրագրեր կազմեք:

- Համաձայն այս պատմության, որո՞նք են այն գործոնները, որ դժվարություն են ստեղծում նոր անդամների համար ակտիվ մնալ:
- Ինչպե՞ս կարելի է հաղթահարել այս դժվարությունները, ներգրավվելով անդամներին ուսուցման ընթացքի ամենասկզբնական փուլում:
- Մտածեք նրանց մասին, ում սովորեցնում եք: Ինչպե՞ս կարող եք ավելի լավ ներգրավվել անդամներին օգնելու համար նորդարձներին ավելի հեշտությամբ կատարել դեպի Եկեղեցի այդ անցումը:

## Տնային և այցելող ուսուցում

Ցցերի նախագահները և եպիսկոպոսները միսիայի նախագահի հետ համաձայնեցնելով, կարող են օգտագործել միսիոներներին ոչ ակտիվ և մասամբ անդամություն ունեցող ընտանիքներին այցելելու համար: Հարմար պարագաներում, նրանք կարող են լիաժամկետ միսիոներներին խնդրել մասնակցել տնային և այցելող ուսուցմանը: Ուսուցման այդ հնարավորությունները պետք է ամրացնեն անդամներին, մեծացնեն միսիոներների ուսուցանելու ունակությունները և օգնեն միսիոներներին նոր անուններ տրամադրելով (see “Statement on Missionary Work,” First Presidency letter, 11 Dec. 2002):

## Աշխատեք ծխի խորհրդի հետ նոր և ոչ ակտիվ անդամներին ամրացնելու համար

Ունկնդիրներին սովորեցնելն ու մկրտելը կատարվում է ձեր միսիայի նախագահի ղեկավարության ներքո: Ինչևէ, ավետարանը քարոզելու աշխատանքը ավելի ուժեղ առաջ կընթանա, երբ լիաժամկետ միսիոներները և անդամները համաձայնեցնեն իրենց ջանքերը և միասնականորեն աշխատեն: Ձեզ հաճախ կհրավիրեն ներկա լինել ծխի խորհուրդներին և քահանայության գործադիր հանձնաժողովների ժողովներին: Ձեր առաջին գործը պետք է լինի հետևելը, որպեսզի ձեր ունկնդիրները Եկեղեցու հետ լինեն: Հաճախ սա կնշանակի նրանց ուղեկցելը: Եթե պետք է ընտրություն կատարեք ծխի խորհրդի ժողովին մասնակցելու և որևէ մեկին եկեղեցի բերելու միջև, ապա արեք վերջինը: Այդ դեպքում, ծխի միսիայի նախագահին տրամադրեք Առաջադիմության Գրառման մեկ օրինակ և հավաստիացեք, որ նա ունի անհրաժեշտ ողջ տեղեկությունը ծխի խորհրդի կամ քահանայության գործադիր հանձնաժողովի համար:



© 1999 Greg K. Olen. Courtesy Mill Pond Press. Չի բազմացվում:

Նշումներ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

«Ցանկացած նորադարձ երեք տեսակի կարիք ունի.

1. Ընկերոջ Եկեղեցում, որին նա միշտ կարող է դիմել, որը կքայլի նրա կողքին, որը կպատասխանի նրա հարցերին, որը կհասկանա նրա խնդիրները:

2. Հանձնարարության: Գործունեությունն այս Եկեղեցու տարբերակիչ հատկանիշներից մեկն է: Դա այն ընթացքն է, որով մենք աճում ենք: Տիրոջ հանդեպ հավատքն ու սերը նման են իմ թևի մկաններին: Եթե ես օգտագործեմ դրանք, ապա դրանք ավելի ամուր կլինեն: Եթե կախեմ, կդառնան ավելի թույլ: Ցանկացած նորադարձ արժանի է ստանալու պատասխանատվություն: . . .

3. Յուրաքանչյուր նորադարձ պետք է «սնուցվի Աստծո բարի խոսքով» (Մորոնի 6.4): Շատ կարևոր է, որ նա շփվի քահանայության քվորումի կամ Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց, Երիտասարդ Տղամարդկանց, Կիրակնօրյա Դպրոցի կամ Երեխաների Խմբի հետ: Նա պետք է խրախուսվի գալու հաղորդության ժողովի ընդունելու հաղորդությունը, թարմացնելու մկրտության ուխտերը» (*Ensign*, May 1999, 106):

Ծխի խորհուրդը պետք է նախաձեռնություն ստանձնի նորադարձներին ընկերով, պատասխանատվությամբ և հոգևոր սնուցմամբ ապահովելու համար: Քահանայության ղեկավարները և անդամները ծեր օգնությամբ ընկերություն կանեն:

### Ընկերություն



- Մկրտությունից և հաստատումից առաջ հավաստիացեք, որ անդամները ներկա են ամեն մի դասին, եթե հնարավոր է: Այդ անդամները պետք է հաճախ ուսնկնդիրների հետ լինեն նրանց հարցերին պատասխանելու, նրանց խնդիրները հասկանալու և նրանց խրախուսելու համար:
- Անդամներին հրավիրեք ներկա լինել մկրտության ծառայությանը և ողջունել նորադարձներին ծխում: Անդամները նորադարձներին օգնում են հարմարավետ զգալ Եկեղեցու տարբեր ժողովների ժամանակ: Նրանք պետք է նաև ներկայացնեն նրանց մյուս անդամներին:
- Որքան հնարավոր է շուտ նորադարձներին ներկայացրեք եպիսկոպոսին, նրա խորհրդականներին, երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահներին, ինչպես նաև ծխի այլ ղեկավարներին: Բացատրեք եպիսկոպոսի և ծխի մյուս ղեկավարների դերը:

### Ծառայելու հնարավորություններ

- Տղամարդ նորադարձներին օգնեք հասկանալ, թե ինչ է Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունը, և պատրաստվել ստանալ դրանք: Բացատրեք, որ քահանայության քվորումները հնարավորություններ են տալիս սովորելու, երկրպագելու և միասին ծառայելու համար:
- Ներգրավեք նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին ծառայության հնարավորությունների մեջ, օրինակ օգնության կարիք ունեցող այրի կնոջը կամ որևէ մեկին օգնելու մեջ, կամ բարեգործական որևէ ծրագրին մասնակցելու մեջ:
- Նորադարձներին կցեք ընտանեկան պատմության խորհրդատուներին, որպեսզի նրանք կարողանան լրացնել ընտանեկան խմբի գրառումը և տոհմաբանական աղյուսակը: Եթե պայմանները թույլ են տալիս, նրանց օգնեք մկրտվել տաճարում իրենց մահացած նախնիների համար:

Նշումներ

- Նորադարձներին խնդրեք ընտանիքի անդամներին և ընկերներին պատրաստել միսիոներների կողմից ուսուցանվելուն: Միսիոներները պետք է նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին խնդրեն մարդկանց անուններ տրամադրել:

**Աստծո խոսքով սնուցել**

- Ավարտեք դաս 5՝ «Օրենքներ և Արարողություններ»-ում տրված սկզբունքների ուսուցումը:
- Նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին հիշեցրեք այն պարտավորությունները, որոնք նրանք վերցնում են մկրտությունից առաջ և այն ուխտերը, որոնք նրանք կապում են մկրտության և հաստատման ժամանակ:
- Նրանց խրախուսեք ամեն օր աղոթել անհատապես և ընտանիքով:
- Նրանց խրախուսեք ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները, հատկապես Մորմոնի Գիրքը:
- Ամրացրեք նորադարձների վկայությունները Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման մասին: Կրկնեք այն դասերը, որոնք ուսուցանել եք մկրտությունից և հաստատումից առաջ, հարմարեցնելով պարտավորությունները նրանց ներկա կարիքներին:
- Շարունակեք ուսուցանել ամեն Կիրակի եկեղեցի հաճախելու և հաղորդությունը արժանի ձևով ընդունելու կարևորությունը: Հաճախեք և նստեք նորադարձների կամ ոչ ակտիվ անդամների կողքին:
- Նրանց հրավիրեք հաճախել Ավետարանի Սկզբունքների դասերին Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ:
- Նրանց սովորեցրեք, թե ինչպես անցկացնել ընտանեկան երեկոները Երկուշաբթի երեկոյան, օգտվելով *Family Home Evening Resource Book-ից:*
- Նրանց խրախուսեք ուրիշների հետ կիսվել վերականգնված ավետարանով:
- Նրանց օգնեք հաճախել սեմինարիայի կամ ինստիտուտի դասերին:
- Նրանց տեղյակ պահեք Եկեղեցու նյութերի մասին, ինչպիսին են՝ www.mormon.org, www.lds.org, և www.familysearch.org ինտերնետային էջերը:

**Սուրբ գրությունների ուսումնասիրություն**

**Սնուցել Աստծո խոսքով**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 18.18–20 | Ալմա 31.5 | Մորոնի 6.4 |

**Ծառայություն**

| | | |
|---|---|---|
| Մոսիա 2.17 | Մատթեոս ԻԵ.40 | Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Ծառայություն» |

## Ո՞րն է լիաժամկետ միսիայի նախագահի դերը:

Լիաժամկետ միսիայի նախագահը կրում է նորադարձների մկրտությունների բանալիները: Նրա ղեկավարությամբ լիաժամկետ միսիոներները առաջնային պարտականություն են կրում ունկնդիրներին ուսուցանելու համար: Ինչևէ, եպիսկոպոսը վերահսկում է ունկնդիրների առաջադիմության և ուրիշների հետ ընկերակցելու ընթացքը: Ծխի միսիայի ծրագիրը իրականացվում է եպիսկոպոսի նախագահող իշխանությամբ: Միսիայի նախագահը պարբերաբար հանդիպում է ցցերի նախագահների հետ հավաստիանալու համար, որ լիաժամկետ միսիոներները համագործակցում են տեղական քահանայության ղեկավարների հետ: Նա համաձայնեցնում է միսիոներական ջանքերը և օգնություն է առաջարկում ցցի նախագահին միսիոներական աշխատանքի կիրառման և սկզբունքների վերաբերյալ հրահանգներ տալով:

Նշումներ

## Որո՞նք են ցցերի և ծխերի ղեկավարների պատասխանատվությունները:

Եկեղեցու տեղական ղեկավարները և անդամները ձեր ամենալավ գործընկերներն են: Հարգեք նրանց և աշխատեք լավ հարաբերություններ կառուցել նրանց հետ: Այդ ղեկավարների հետ աշխատելիս հիշեք, որ նրանք այլ պատասխանատվություններ ևս ունեն իրենց կոչումների բերումով: Աշխատեք լինել ոչ թե բեռ, այլ օրհնություն ձեր ցցի կամ ծխի ղեկավարների համար: Ձեր մոտեցումը պետք է լինի «Ինչպե՞ս կարող եմ ձեզ օգնել»: Խորհրդակցեք եպիսկոպոսի և ծխի միսիայի ղեկավարի հետ ձեր ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ: Հետևեք, որպեսզի այն, ինչ դուք անում եք, նպաստի ծխի միսիայի ծրագրի իրականացմանը:

Տեղական քահանայության ղեկավարության դերը միսիոներական աշխատանքի մեջ նկարագրված է ստորև: Նրանց դերը հասկանալը ձեզ կօգնի ավելի լավ աշխատել նրանց հետ:

### Ցցի նախագահ

Ցցի նախագահը ղեկավարում է եպիսկոպոսների աշխատանքը՝ միսիոներական, անդամներին եկեղեցում պահելու և ակտիվացնելու իրենց պարտականությունները կատարելիս: Եպիսկոպոսների հետ իր ամենամսյա հարցազրույցների ժամանակ նա քննարկում է որոշակի ունկնդիրների և անդամների վերաբերյալ ծրագրերը և առաջադիմությունը: Նա հետևում է, որպեսզի միսիոներական աշխատանքին վերաբերվող վարդապետությունը կանոնավոր կերպով ուսուցանվի ցցի և ծխի ժողովների ժամանակ, և որ քահանայության ղեկավարները և մյուսները ուսուցանվեն իրենց միսիոներական պարտականությունների վերաբերյալ:

Ցցի նախագահը պարբերաբար հանդիպում է նաև միսիայի նախագահի հետ միսիոներական աշխատանքը համաձայնեցնելու նպատակով, ներառյալ ղեկավարների և անդամների ուսուցման, լիաժամկետ միսիոներներին օգտագործման ու տեղավորման, և ակտիվացման ջանքերում օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

### Բարձրագույն խորհրդական

Բարձրագույն խորհրդականը նշանակվում է ցցի նախագահության կողմից ցցում միսիոներական աշխատանքը, անդամներին պահելու և ակտիվացնելու ջանքերն առաջ տանելու համար: Նա կանոնավորապես իր աշխատանքի առաջադիմության մասին հաղորդում է ցցի նախագահությանը: Նա նաև հետևում է, որ ծխի միսիայի ղեկավարները համապատասխան ուսուցում ստանան իրենց պարտականությունների, ներառյալ ծխի միսիայի ծրագրի նախապատրաստման վերաբերյալ:

### Եպիսկոպոս



Եպիսկոպոսը պատասխանատու է ծխի միսիոներական աշխատանքի, անդամներին եկեղեցում պահելու և ակտիվացնելու ջանքերի համար: Նրա անձնական մասնակցությունն ու ղեկավարումը շատ կարևոր են: Այս աշխատանքը կատարելու համար որպես օգնություն եպիսկոպոսը կանչում է արժանի Մելքիսեդեկյան Քահանայություն կրողի ծառայելու որպես ծխի միսիայի ղեկավար: Նա կանչում է նաև ծխի բավականին թվով միսիոներներ ծխի կարիքները հոգալու համար:

Եպիսկոպոսն օգտագործում է քահանայության գործադիր խորհուրդը և ծխի խորհուրդը համաձայնեցնելու համար միսիոներական, անդամներին եկեղեցում պահելու և ակտիվացնելու ջանքերը: Նա ուղղություն է տալիս ծխի միսիայի ծրագիրը մշակելու և իրականացնելու համար:

Նշումներ

**Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն**

Ժամանակ տրամադրեք եպիսկոպոսի հետ հանդիպելու համար: Փնտրեք նրա առաջնորդությունը, որպեսզի ավելի լավ կարողանաք ծառայել ծխում:

### Քահանայություն և օժանդակ կազմակերպություններ

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները պետք է պարբերաբար վերանայեն նոր և ոչ ակտիվ անդամների կարգավիճակը և պլանավորեն, թե ինչպես կարելի է լավագույն եղանակով ընկերակցել և ամրացնել նրանց: Նրանք պետք է նաև սերտորեն համագործակցեն ծխի միսիայի ղեկավարի հետ ծխի միսիոներների և լիաժամկետ միսիոներների հետ միսիոներական, անդամներին եկեղեցում պահելու և ակտիվացնելու ջանքերը համաձայնեցնելու համար:

### Ծխի միսիայի ղեկավար

Եպիսկոպոսի ղեկավարությամբ ծխի միսիայի ղեկավարը.

- Օրինակ է ծառայում ուրիշների հետ ավետարանով կիսվելու, ուսյկնդիրների, նորադարձների և ոչ ակտիվ անդամների հետ ընկերակցելու համար:
- Համաձայնեցնում է ծխի միսիոներների և լիաժամկետ միսիոներների աշխատանքը քահանայության ղեկավարների, օժանդակների ղեկավարների և անդամների հետ:
- Օգտագործում է Առաջադիմության Գրառումը, Նորադարձի Գործողության Թերթիկը, Եպիսկոպոսության Գործողության և Հարցազրույցի Թերթիկը քահանայության գործադիր խորհրդի և ծխի խորհրդի ժողովների ժամանակ ունկնդիրների, նորադարձների և ոչ ակտիվ անդամների առաջադիմությունը վերանայելու համար:
- Վարում է միսիոներկան համաձայնեցման շաբաթական ժողովները:
- Լիաժամկետ միսիոներների հետ համագործակցելով կազմակերպում է ծխի մկրտության ծառայությունները նորադարձների համար: Այս ծառայությունները սովորաբար վարում է եպիսկոպոսության անդամը կամ ծխի միսիայի ղեկավարը:

Ծխի միսիայի ղեկավարը ծառայում է նաև ծխի քահանայության գործադիր խորհրդի, ծխի խորհրդի և ծխի բարօրության խորհրդի կազմում, և հաճախում է ցցի քահանայության ղեկավարման ժողովներին:

### Ծխի միսիոներներ

Համապատասխան որակավորում ունեցող եղբայրներն ու քույրերը կանչվում են ծառայելու որպես ծխի միսիոներներ: Նրանց վերահսկում է ծխի միսիայի ղեկավարը:

Ծխի միսիոներները գտնում, ընկերակցում և ուսուցանում են ունկնդիրներին: Նրանք նաև հրահանգում և ընկերակցում են նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին:

Մելքիսեդեկյան Քահանայություն կրող ծխի միսիոները կարող է կանչվել ծառայելու որպես ծխի միսիայի ղեկավարի օգնական:

### Միսիոներական աշխատանքի համակարգում

Ծխի միսիոներական աշխատանքը սովորաբար համակարգվում է քահանայության գործադիր խորհրդի և ծխի խորհրդի ժողովների ժամանակ օգտագործելով Առաջադիմության Գրառումը, որը տրամադրում են լիաժամկետ միսիոներները: Այս ժողովների միսիոներական նպատակներն են զեկուցելը, պլանավորելը և գտնելու, ուսուցանելու, ընկերակցելու և ակտիվացնելու հանձնարարությունները համակարգելը, ինչպես տրված է հետևյալ պարբերություններում:

Նշումներ

*Գտնել ուսուցանման համար մարդկանց:* Քահանայության գործադիր խորհուրդը և ծխի խորհուրդը քննարկում են այն ծրագրերը, որոնք ուղղված են լիաժամկետ միսիոներների կողմից որոշակի մարդկանց ուսուցանելուն: Քննարկվում է անհատներին և ընտանիքներին միսիոներական դասերին պատրաստելու գործում ծխի որոշակի անդամների ունեցած առաջադիմությունը:

*Ուսուցանել և մկրտել:* Քահանայության գործադիր խորհուրդը և ծխի խորհուրդը ամեն շաբաթ վերանայում են Առաջադիմության Գրառումը, որը տալիս է լիաժամկետ միսիոներների կողմից ուսուցանվող յուրաքանչյուր անդամի առաջադիմությունը: Նրանք նաև համաձայնեցնում են այն ծրագրերը, որոնց նպատակն է անդամներին տներում սովորեցնելը, ունկնդիրներին ընկերակցելը և մկրտության ծառայությանը անդամի մասնակցությունը:

*Ընկերակցել և սովորեցնել նոր անդամներին:* Քահանայության գործադիր խորհուրդը և ծխի խորհուրդը վերանայում են Նորադարձի Գործողությունների Թերթիկը յուրաքանչյուր նոր անդամի առաջադիմությունը ստուգելու համար: Նրանք նաև քննարկում են, թե ինչպես կարելի է ընկերակցել նոր անդամներին: Եպիսկոպոսի խնդրանքով, նրանք առաջարկում են հնարավոր ծառայություններ նորադարձների համար:

*Ընկերակցել և սովորեցնել ոչ ակտիվ անդամներին:* Քահանայության գործադիր խորհուրդը և ծխի խորհուրդը համաձայնեցնում են անդամներին ակտիվացնելու քահանայության քվորումների և լիաժամկետ միսիոներների ջանքերը: Նրանք նաև պլանավորում են, թե ինչպես կարելի է ընկերակցել ոչ ակտիվ անդամներին, հատկապես հրավիրելով նրանց Եկեղեցու ժողովներին և միջոցառումներին:

### Լրացուցիչ համակարգում ծխի միսիայի ղեկավարի հետ

Ծխում միսիոներական աշխատանքը սովորաբար համակարգվում է քահանայության գործադիր խորհրդի և ծխի խորհրդի ժողովների ժամանակ: Եթե կա լրացուցիչ համակարգման անհրաժեշտություն, ապա ծխի միսիայի ղեկավարը կարող է անցկացնել միսիոներների աշխատանքի համակարգման ժողովներ լիաժամկետ միսիոներների մասնակցությամբ: Այդ ժողովներին կարող են հրավիրվել ծխի միսիոներները, քահանայապետերի խմբի ղեկավարության օգնականը, երեցների քվորումի նախագահության խորհրդականը և Սփոփող Միության նախագահության խորհրդականը:

Ժողովի մասնակիցները կարող են վերանայել նախորդ ժողովների հանձնարարությունները և նպատակները, և զեկուցել դրանց վերաբերյալ, ինչպես նաև քննարկել հաջորդ շաբաթվա ծրագրերը: Անհրաժեշտության դեպքում, նրանք կարող են համաձայնեցնել նաև ծխի միսիոներների հանձնարարությունները լիաժամկետ միսիոներների հետ աշխատելու նպատակով, և քննարկել, թե ինչպես բարձրացնել ծխի միսիոներների և լիաժամկետ միսիոներների միասնական ջանքերի արդյունավետությունը:

### Ծխի միսիայի ծրագիր

Շատ ծխեր գտնում են, որ ծխի միսիայի ծրագիր մշակելը նպաստում է ծխում միսիոներական աշխատանքի կատարմանը: Այդ ծրագիրը կարող է ներառել նպատակներ, նախաձեռնություններ և միջոցառումներ, որոնք ծխի անդամներին օգնում են մարդկանց հրավիրել լսելու ավետարանը: Անհատները և ընտանիքները նույնպես օգուտ են քաղում նման ծրագրից, որն օգնում է ուղղություն գտնել իրենց միսիոներական ջանքերում:

Անդամները պետք է օգտագործեն ազնվաբարո ցանկացած միջոց մարդկանց գտնելու համար, որոնք պատրաստ են լսելու Վերականգնման ուղերձը: Նրանք պետք է հատկապես աշխատեն գտնել հայրերին, մայրերին և երեխաներին, որոնք կարող են Եկեղեցի գալ որպես ընտանիքներ: Ստորև տրվում են մի քանի առաջարկություններ միսիոներական ծրագիր մշակելու համար:

Նշումներ

- Աղոթեք, որպեսզի Տերը նախապատրաստի որոշակի մարդկանց ավետարանը լսելու համար: Աղոթեք նաև, որպեսզի կարողանաք լավ հասկանալ նրանց, ում Նա նախապատրաստում է (տե՛ս Ալմա 6.6): Նախագահ Գորդոն Բ. Հինքլին սովորեցրել է. «Դա կլինի մի մեծ օր, երբ մեր մարդիկ ոչ միայն կաղոթեն աշխարհով մեկ գտնվող միսիոներների համար, այլ Տիրոջը կխնդրեն օգնել իրենց օժանդակել միսիոներներին, որոնք աշխատում են իրենց ծխում» («Միսիոներական Ծառայություն», Ամբողջ աշխարհում ղեկավարներին վերապատրաստելու հավաք, հունվ. 2003թ, 19):
- Ուշադիր եղեք բաց չթողնելու այն հնարավորությունները, որոնցով կարող եք գտնել մարդկանց: Շփվեք հարևանների հետ և սիրով վերաբերվեք բոլոր մարդկանց:
- Ընկերներին և հարևաններին խնդրեք ծառայել անդամներին, կատարելով համայնքային ծառայություն, սնունդ տրամադրելով կարիքավորներին, ուսուցանելով Սփոփող Միության ժողովների փոքր դասարաններում, օգնելով ծխի գործերում, օգնելով մարդկանց տեղափոխվել, աշխատելով Սքաուտների կազմակերպությունում, օգնելով ընտանեկան պատմության կամ բարօրության ծրագրերում:
- Հրավիրեք ոչ-անդամ բարեկամներին, ընկերներին և հարևաններին մկրտություններին, հաստատումներին և քահանայության արարողություններին:
- Հրավիրեք ոչ-անդամներին աջակցելու հատուկ իրադարձությունների ժամանակ, օրինակ՝ տոն օրերին նախաճաշ պատրաստելիս:
- Ծխի ժողովները, միջոցառումները, հավաքույթները և բաց դռների օրերը այնպիսի մակարդակով կազմակերպեք, որպեսզի անդամները ցանկանան հրավիրել իրենց ծանոթներին:
- Մարդկանց հրավիրեք ընտանեկան երեկոներին:
- Այցելեք մարդկանց, ովքեր փոփոխություններ են կրում իրենց կյանքում, օրինակ ամուսնություն, ծնունդ կամ մահ:
- Այցելեք և օգնեք մարդկանց, ովքեր տեղափոխվում են ձեր շրջան: Պատմեք համայնքի, հարևանների և Եկեղեցու մասին:
- Օգտագործեք ամեն հնարավորություն ավետարանի մասին խոսելու համար: Քննարկեք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ Փրկիչը, Մորմոնի Գիրքը, Աստվածաշունչը, կյանքի նպատակը, ընտանիքը և ընտանեկան պատմությունը:
- Երիտասարդներին խրախուսեք ընկերություն անել այլ երիտասարդների հետ և հրավիրել նրանց Եկեղեցու ժողովներին և միջոցառումներին:
- Աշխատեք մասամբ անդամությամբ ընտանիքների հետ:
- Պլանավորեք հաղորդության ժողովները հոգեպես ավելի վեհացնող դարձնել:

Նշումներ

### Վարժություն. զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Ձեր զուգընկերոջ հետ միասին կարդացեք և քննարկեք *Հավատքին Հավատարիմ* գրքույկը, «Եկեղեցու Կառավարում», էջեր 34–37:
- Ձեր սովորածով կիսվեք ձեր զուգընկերոջ հետ և ձեր աշխատանքային տետրում գրի առեք այն ամենը, ինչ սովորել եք:
- Քննարկեք, թե ինչպես կարող են ձեր մտքերը փոխել Եկեղեցու ղեկավարների հետ աշխատելու ձեր մոտեցումները:

## Եկեղեցում ակտիվ մնալու պարտավորությունը

Միսիոներական աշխատանքն առավել մեծ ազդեցություն է ունենում, երբ մարդիկ ստանձնում և պահում են իրենց կյանքի բոլոր օրերում Եկեղեցում ակտիվ մնալու պարտավորությունը: Բավական չէ, որպեսզի մարդիկ պարզապես գան Եկեղեցի: Նրանք պետք է գան մնալու համար: Ձեր ողջ ուսուցանումն ու կոչերը պետք է ուղղված լինեն այդ նպատակին: Ստանալու համար այն բոլոր օրհնությունները, որոնք մեր Երկնային Հայրը պահել է իրենց համար, անդամները պետք է շարունակեն ապրել ավետարանով և ակտիվ լինել Եկեղեցում:

Նեփին սովորեցնում էր. «Եվ այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ, հետո, երբ դուք ներս եք մտել այս նեղ և անձուկ արահետը, ես կհարցնեի, թե արդյո՞ք ամեն ինչ արված է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. . . . դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ . . . և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենա՛ք հավերժական կյանք» (2 Նեփի 31.19–20):

Ձեր լավագույն ջանքերն ուղղեք օգնելու մարդկանց արժանանալու հավերժական կյանքին, որն ամենամեծն է Աստծո բոլոր պարգևներից (տե՛ս ՎևՈւ 14.7):

### Հիշեք սա

- Ամուր հարաբերություններ հաստատեք եպիսկոպոսի և ծխի խորհրդի անդամների հետ:
- Եթե նպատակահարմար է, մասնակցեք քահանայության գործադիր խորհրդի և ծխի խորհրդի ժողովներին:
- Ծառայություն առաջարկեք ծխի խորհրդին: Եթե խորհրդի անդամները ձեզ դիմում են օգնության համար.
  - Պատրաստ եղեք ընկերակցել նորադարձներին և ոչ ակտիվ անդամներին, աջակցել նրանց իրենց կոչումների և ծառայության հնարավորությունների մեջ, վերանայեք նրանց հետ միսիոներական դասերը:
  - Անդամների հետ միասին նորադարձներին ուսուցանեք «Օրենքներ և Արարողություններ» դասը:

Նշումներ

## Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար

### Անհատական ուսումնասիրություն

- Օգտվելով ձեր օրագրից, պլանավորեք զրուցել նորադարձների և վերջերս ակտիվացած անդամների հետ իրենց կյանքը փոխելու և եկեղեցի հաճախելու մասին: Ի՞նչը նրանց առավել շատ օգնեց: Ձեր աշխատանքային տետրում գրի առեք ձեր մտքերը նրանց փորձառությունների մասին: Ի՞նչ դուք սովորեցիք և ինչպե՞ս դա ձեզ օգնեց ձեր ներկա ունկնդիրների հետ աշխատանքի ընթացքում:

- Ուսումնասիրեք 2 Նեփի 31.18–20; Ալմա 26.1–7 և 32.32–43; և Մորոնի 6: Գրեք, թե ինչ սովորեցիք այս հատվածներից նորադարձներին ամրացնելու մասին:

### Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն

- Ծխի խորհրդի ժողովի ժամանակ եպիսկոպոսին հարցրեք, թե ձեր տարածքում կան արդյոք ոչ ակտիվ անդամներ, որոնց նա կցանկանար, որ դուք այցելեիք այս շաբաթ: Այդ ոչ ակտիվ անդամներին այցելելիս աշխատեք զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ նրանց հավատքը: Նրանց խնդրեք անուններ տրամադրել:

- Ուսումնասիրեք Ա Կորնթացիս Գ.2; Եբրայեցիս Ե.12; և Վարդապետություն և Ուխտեր 19.22: Ո՞րն է կաթը, որի մասին խոսվում է: Ո՞րն է միսը: Ձեր պատասխանները համեմատեք «Ի՞նչ եմ ես սովորում և սովորեցնում» գլխում տրված վարդապետությունների հետ: Ինչո՞ւ դուք պետք է կաթը և միսը ճիշտ հերթականությամբ և քանակությամբ մատուցեք: Ինչպե՞ս եք դուք դա անում:

- Կարդացեք հետևյալ մեջբերումը, որում Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը նկարագրում է իր մկրտության ժամանակ ապրած իր զգացումները.

  «Ինձ վրա իջած զգացումը մաքուր խաղաղություն, սեր և լույս էր: Իմ հոգում ես զգում էի, որ, եթե մեղք եմ գործել, իսկ ես անկասկած առանց մեղքի չէի, այն ներվել է, որ ես իսկապես մաքրվել եմ մեղքից, իմ սիրտը հուզված էր, և ես զգում էի, որ ոտքիս տակի ամենափոքր միջատին անգամ չեմ վնասի: Ես զգում էի, որ միայն բարին եմ ուզում գործել ամեն տեղ, բոլորի համար և ամեն ինչում: Ես զգում էի կյանքի թարմությունը, ճիշտը գործելու ցանկության թարմությունը: Իմ հոգում չկար չարիք գործելու ցանկության անգամ մի մասնիկ: . . . Սա էր այն զգացումը, որն իջավ ինձ վրա, և ես գիտեմ, որ այն Աստծուց էր, և միշտ եղել է Տիրոջն ընդունելու իմ կենդանի վկայությունը» (*Gospel Doctrine*, 5th ed. [1939], 96):

  Այժմ կարդացեք Նախագահ Սմիթի զգացումների մասին մկրտությունից բավականին ժամանակ անց.

  «Օհ, եթե ես իմ սրտում կարողանայի պահպանել այդ նույն ոգին և այդ նույն խորը ցանկությունը կյանքիս ամեն մի պահ [իմ մկրտության օրվանից] մինչև հիմա: Սակայն, մեզանից շատերը, որոնք ստացել են այդ վկայությունը, այդ նոր ծնունդը, սրտի այդ փոփոխությունը, թեև սխալվում են դատողության մեջ և շատ սխալներ են կատարում, և հաճախ, մի գուցե, կյանքում մոռանում են նրբեմն եզմարիտ չափանիշը, ապաշխարել են չարից, և ժամանակ առ ժամանակ ներում են փնտրել Տիրոջ ձեռքից. թող որ մինչև այս օրը նույն ցանկությունն ու նպատակը, որն իշխում էր մեր սրտերում, երբ մկրտվում էինք և ստանում մեր մեղքերի թողությունը, դեռ պահպանվի մեր սրտերում և լինի մեր հոգիները ղեկավարող զգացողությունն ու իղձը» (*Gospel Doctrine,* 96):

  – Ի՞նչ դուք անձամբ սովորեցիք Նախագահ Սմիթից ձեր սեփական վկայության և ավետարանով ապրելու պարտավորության մասին:

  – Ի՞նչ դուք սովորեցիք այն դժվարությունների մասին, որոնց նորադարձները, անգամ ապագա մարգարեները, հանդիպում են մկրտությունից հետո:

Նշումներ

– Մտածելով նորադարձների և ոչ ակտիվ անդամների մասին, ի՞նչ դուք կարող եք անել օգնելու համար նրանց կրկին ունենալ «ցանկություն և նպատակ», որն ունեին անցյալում:

## Շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ

- Եպիսկոպոսին հրավիրեք խոսել ոչ ակտիվ անդամների և նորադարձների հետ աշխատելու խնդիրների մասին: Նրան խնդրեք շեշտել, թե ինչպես կարող են միսիոներներն օգնել հաղթահարել այդ խնդիրները:
- Քննարկեք կորած ոչխարի, կորած մետաղադրամի և անառակ որդու մասին առակները (տե՛ս Ղուկաս ԺԵ):

## Միսիայի Նախագահ

- Աշխատեք տեղական քահանայության ղեկավարների հետ, խրախուսելով նրանց օգնել նորադարձներին.
  - Կարգվել քահանայությանը:
  - Ընդունել տնային ուսուցիչներին:
  - Պատրաստել նախնիներից մեկի անունը տաճարի համար և մկրտություն կատարել մահացածի համար:
  - Ստանալ «Օրենքներ և արարողություններ» դասը տնային ուսուցիչների ներկայությամբ:
- Տեղական ղեկավարներին սովորեցրեք, թե ինչպես կարելի է օգտագործել միսիոներներին ծխի խորհրդի ժամանակ:
- Տեղական ղեկավարներին սովորեցրեք Առաջադիմության Գրառման նպատակներն ու օգտագործման ձևը:
- Ժամանակ առ ժամանակ միսիոներներին խնդրեք ձեզ ցույց տալ իրենց Առաջադիմության Գրառումը:
- Ժամանակ առ ժամանակ հետաքրքրվեք նորադարձներից, թե ինչպես են գործերը և ինչով կարող են օգնել միսիոներները և անդամները:
- Հրավիրեք ցցի կամ ծխի ղեկավարներին ձեր միսիոներների հետ խոսելու և բացատրելու, թե ինչպիսի մեծ օգնություն կարող են ցուցաբերել միսիոներները:
- Նորադարձներին հրավիրեք խոսել միսիոներների հետ և պատմել որպես Եկեղեցու նոր անդամների իրենց փորձառությունները:
- Ժամանակ առ ժամանակ նորադարձ անդամներին խնդրեք կիսվել իրենց դարձի գալու փորձով տարածքային համաժողովի ժամանակ:

## Ա

Ադամի և Եվայի Անկումը, 53–54
 սահմանում, 64
Ազատ ընտրություն, 52, 53
Ահարոնյան Քահանայություն, վերականգնված, 40
Աղոթք, պատվիրան, 81
 և հավատք, դարձի մեջ, 104–106
 գնահատման սանդղակ, 105
 ինչպես ասել, 42
 նշանակում է իմանալ ճշմարտությունը, 42
 դերը, 43
 առաջարկություններ, 104–105
Ամրապնդել Եկեղեցին, 176
Ամփոփ հաշվետվություն հեռաձայնման միջոցով, նկարագրված ձևը, 161
Այսբերգ, մտահոգությունները նման են, 210
Այցելությամբ ուսուցանում, 243
Անգլերեն, անհրաժեշտ է սովորել, 144
Անմահություն, սահմանում, 64
 բացատրություն, 57
Անդամներ, վախենալ միսիոներական գործ կատարել, 182
 օգնել գտնել ունկնդիրներ, 181–183
 ինչպես օգնել միսիոներական աշխատանքում, 183
Անձնական հայտնություն, 99–100
Անհատական ուսումնասիրություն, նպատակը, viii–ix
 ռեժիմ, viii
Աշխատանքային տետր, բացատրություն, x
Ապաքինում հակումից ազատվելուց հետո, 211–214
Ապագա երեցներ, ունկնդիրներ գտնելու միջոց, 183
Ապաշխարություն, 68–69, 211–214
 և պարտավորություն, 219
Առաջին Նախագահության ուղերձ, v
Առաջին Նախագահությունը միսիոներական աշխատանքի վերաբերյալ, 32
Առաջադիմության Գրառում, նկարագրված ձևը, 159
Աստվածաշունչ, լրացնում է Մորմոնի Գրքին, 118
Աստվածություն, պատշաճ երկրպագություն, 86
Աստված, մեր Երկնային Հայրը, 33–34, 52
Աստված, ուսուցանել ոչ-քրիստոնյաներին, 34
Ավետարան, 66–73
 օրհնում է ընտանիքները, 3, 34
 սահմանում, 6, 77
 բավարարում է մարդկանց կարիքները, 1–2
 նպատակը, 6
 Վերականգնումը, 39–40
Արհեստական վիժեցում, և մկրտության համար արժանավորություն, 234
Արարում, երկրի, 53
Արարողություն, սահմանում, 69
Արժանիք, 132–133

## Բ

Բալլարդ, Մ. Ռասել, նպատակների մասին, 164
 Հոգու զորության մասին, 103
Բարեփոխում, 37
Բարեփոխողներ, 49–50
Բարին անել, 189–190
Բենսոն, Էզրա Թաֆթ, պատասխանում է Մորմոնի Գրքի վերաբերյալ հարցերին, 119–120
 Մորմոնի Գիրքը որպես պորտաքար, 116
 հոգու մեծ հարցերի մասին, 119
 Հոգու կարևորության մասին, 198
 ավետարանը աշխարհին տանելու մասին, 2
 աշխատանքի մասին, 136
Բուդդա (Գոթամա), 50

## Գ

Գթասրտություն, 132
Գթասրտություն, օրենքը, 86
Գիտելիք, 133
Գտնել ունկնդիրներ, առաջարկություններ, 188–189
Գտնել մարդկանց ուսուցանելու համար, 175
Գտնել, և ուսուցանել, 179–180
 Հոգով, 177
 անդամների հետ, 181–182
Գրառումներ, մկրտության և հաստատման համար, 235

## Դ

Դարձ, միսիոների դերը, 102
 Հոգու դերը, 102
Դասեր, նոր անդամների համար, 31
 ունկնդիրներին սովորեցնելու համար, 31
 օգտագործել ուսումնասիրության և ուսուցանման համար, 31
Դատաստան, սահմանում, 64
 վերջին, 57

## Ե

Եդեմի պարտեզ, 53
Երկնային Հայր, 33–34
Եկեղեցու Նախագահները, միսիոներական աշխատանքի մասին, 13–14
Եկեղեցու վարչությունների կողմից տրված անուններ, 184
Եղիայի Հոգին, 185–186
Երեխաների խումբ, կազմակերպություն, 93
Երիտասարդ Տղամարդիկ, կազմակերպություն, 93
Երիտասարդ Կանայք, կազմակերպություն, 93
Եպիսկոպոս, 168–169
 և միսիոներական աշխատանք, 181–182
 ուղղորդում է ծխի միսիոներական ջանքերը, 236
 միսիոների պարտականությունները, 246

## Զ

Զգուշացում, հայտնություն ստանալիս, 109–110
Զրուցել, մտքեր, ուրիշների հետ, 177
 ուսուցանելու համար մարդկանց գտնելու գործիք, 176–178
Զուգընկերոջ հետ ուսումնասիրություն, նպատակը, ix
 օրվա ռեժիմ, viii
Զուգընկերոջ հետ հարաբերությունների վերանայում, 168

## Ը

Ընտանիք, Աստծո, 34, 175–176
Ընտանիք, նպատակը, 94
«Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», 3, 94
Ընտանիքներ, ավետարանով օրհնված, 34
 վերականգնված ավետարանը օրհնում է, 3
 ուսուցանում դրա կարևորության մասին, 180–181
Ընտանեկան պատմության աշխատանք, 96
Ընտանեկան պատմություն, որպես ունկնդիրներ գտնելու միջոց, 184–186
Ընտանեկան պատմության կենտրոններ, որպես ունկնդիրներ գտնելու միջոց, 185
Ընտանեկան երեկո, 95
Ընկերակցել, նոր անդամներին, 236

**Թ**

- Թեյլոր, Ջոն, հասկանալի ձևով ուսուցանելու մասին, 205
- Թելեստիալ արքայություն, 58
- Թերեստրյալ արքայություն, 58
- Թինդեյլ, Ուիլյամ, 49

**Ժ**

- Ժամանակաշրջաններ, 35–36
- Ժամանակաշրջան, սահմանում, 35
- Ժամանակը օգտագործել, արդյունավետ, 153

**Ի**

- Իմաստության Խոսք, 86–87
- Իշխանություն, միսիոների, 4–5
  - Քահանայության, կորսված, 37
  - Վերականգնված, 39

**Լ**

- Լեզուներ, պարգև, 149
- Լեզուների պարգև, 149
- Լեզու սովորել, և քերականություն, 146
  - և մտապահել, 145–146
  - նպատակներ, 145
  - սկզբունքներ, 144–145
  - ուսումնական ծրագիր, 145–146
  - գործիքներ, 145
  - զուգընկերների հետ, 148–149
- Լի, Հարոլդ Բ., ընտանիքների կարևորության մասին, 3
  - ուսուցանել հասկացնելու նպատակով, 232
- Լյութեր, Մարտին, 49
- Լսել, բարելավել լեզվական հմտությունները, 146
  - կիրառումը, ուսուցանելիս, 208–209
- Լուրջ հանցագործություն, և մկրտության համար արժանավորություն, 232–233

**Խ**

- Խոստումի Սուրբ Հոգի, 101
- Խոնարհություն, 135

**Ծ**

- Ծառայություն, որպես Եկեղեցու անդամ, 96
  - որպես ունկնդիրներ գտնելու միջոց, 190–191
- Ծխի խորհուրդ, 168–169, 243–245
  - և նորադարձների ընկերակցություն, 244
  - և օգնել նորադարձներին ծառայել իրենց կոչումներում, 244
  - և խոսքով սնուցել նորադարձներին, 245
  - ընկերակցելու պատասխանատվություն, 242
- Ծխի ղեկավարներ, և միսիոներական աշխատանք, 241
  - պարտականություններ, 245
- Ծխի միսիայի ղեկավար, պարտականություններ, 247
- Ծխի միսիայի ծրագիր, 248
- Ծխի միսիոներներ, պարտականություններ, 247
  - ինչպես օգտագործել *«Քարոզիր Իմ Ավետարանը»*, xi
- Ծոմ, օրենքը, 88–89

**Կ**

- Կաբրերա, Վիկտոր Մանուել, դարձի պատմություն, 177–178
- Կալվին, Ջոն, 49
- Կիրակի, պահել, սուրբ, 82
- Կյանք երկրի վրա, 54
- Կյանքի ծառ, վարժություն, 3
- Կուռքեր, 85
- Կոչում, Եկեղեցում, 96
  - *Տես նաև* Միսիոներական կոչում
- Կոնֆուցի, 50

**Հ**

- Հաղորդություն, 70
- Հավատք, և գտնել մարդկանց ուսուցանելու համար, 175
  - և աղոթք, 104–106
  - Հիսուս Քրիստոսի հանդեպ, 67–68, 130–131
- *Հավատքին Հավատարիմ*, 24
- Հակաճառություններ, ինչպես պատասխանել, Մորմոնի Գրքի վերաբերյալ, 121
- Հայր Աստված, հայտնվեց Ջոզեֆ Սմիթին, 40
- Հայր Երկնային, 52
- Հայրեր, պարտականություն, 94
- Հայտնություն, անձնական, 99–100
- Համբերություն, 134
- Համբերել մինչև վերջ, 72, 97
  - սահմանում, 77
- Հանձնարարություն, ուսուցանել վերականգնված ավետարանը, 1
- Հավերժական կյանք, սահմանում, 77
- Հավերժական ամուսնություն, 94
- Հատկանիշի վարժություն, ինքնագնահատում, 141
- Հատկանիշներ, ինչպես ուսումնասիրել, 130
  - Քրիստոսի հատկանիշները, 129
- Հաստատում, 71
  - սահմանում, 77
  - ինչպես կատարել, 236
  - պատրաստվել դրան, 229–230
  - *Տես նաև* Մկրտություն և հաստատում
- Հանթեր, Հովարդ Վ., Հոգին ճանաչելու մասին, 109
- Հարցեր, և պարտավորություն, 221
  - ինչպես պատասխանել, Մորմոնի Գրքով, 121
  - կիրառումը, ուսուցման ընթացքում, 206–207
- Հաջողություն, սահմանում, 11
- Հարություն, 57–58
  - սահմանում, 55, 64
- Հետևել, և պարտավորություն, 224-225
- Հետևել մարգարեին, 84
- Հեռացված անդամներ, կարելի է արդյոք մկրտել, 233
- Հիմնել Եկեղեցին, 11
- Հինքլի, Գորդոն Բ., միսիոներները պետք է նորադարձներին կապեն Եկեղեցուն, 244
  - նորադարձներին պահելու մասին, 242
  - հավատքի և աղոթքի մասին, 104–105
  - միսիոներներին օգնող անդամների մասին, 181
  - միսիոների աղոթքների մասին, 105
  - նորադարձների կարիքները, 242–243
  - Մորմոնի Գիրքը աղոթքով կարդալու մասին, 121
  - Հոգին ճանաչելու մասին, 108
  - ծառայության մասին, 190
- Հիսուս Քրիստոս, հայտնվեց Ջոզեֆ Սմիթին, 40
  - որպես Քավիչ, 55–56, 66–67
  - Քավություն. *Տես* Քավություն
  - երկրային ծառայությունը, 36
  - օգնել մարդկանց սովորել, 51–52
- Հիսուս Քրիստոսի ավետարան. *Տես* Ավետարան
- Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստ, 40
- Հիմնական ցուցանիշներ, սահմանում, 154–155
  - դարձի համար, 154–155
  - նպատակներ դնել, 164
- Հուսահատություն, 11
- Հույս, 131

Հոգու հարցերը, և Մորմոնի Գիրքը, 119–120
Հոգու պարգևներ, 101
Հոգևոր աշխարհ, 57
Հոլանդ, Ջեֆրի Ռ., լեզուն սովորելու մասին, 144
լսելու մասին, 208
զորությամբ ուսուցանելու մասին, 9
Հնազանդություն, 137
պատվիրան, 80
Հնարավոր ունկնդիրներ, նկարագրված ձևը, 160
Հոգի, զորություն դարձի ժամանակ, 102–103
հուշումներ, 106–107
պետք է ուղղորդի ուսուցումը, 198
դրանով սովորեցնել, 4
Հոգևոր մահ, սահմանում, 64

## Ճ

Ճկունություն, ուսումնասիրելիս, vii
ուսուցանելիս, vii

## Մ

Մաքրվել մեղքից, 2, 6–7, 66–67
Մաքսվել, Նիլ Ա., հույսի մասին, 131
Մահկանացու կյանք, 54
սահմանում, 64
նպատակը, 33–34
Մայրեր, պարտականությունը, 94
Մարգարեական սահմանումը միսիոներական աշխատանքի վերաբերյալ, 13–14
Մարգարեներ, բացատրություն, 36
դերը, 35–36
Մելքիսեդեկյան Քահանայություն, վերականգնված, 40
Մեղք, ինչպես է դիտվում տարբեր մշակույթներում, 67
Միասեռական հարաբերություններ, և մկրտության արժանավորություն, 232
Միջնորդների կողմից տրվող անուններ, 184
Միսիայի լեզու, և մայրենի լեզու, 143
պատրաստվել սովորելու, 143
նվիրում է պահանջվում, 144
Միսիայի նախագահ, պարտականությունները, 245
Միսիոներական կոչում, և պատասխանատվություն, 4
զորություն և իշխանություն, 4–5
ուսուցանել վերականգնված ավետարանը, 197
Միսիոներական աշխատանքի համակարգում, 247–248
Միսիոների օրագիր, նկարագրություն, 161–162
Միսիոների օրվա ռեժիմ, viii
Միսիոների գրադարան, ix
Միսիոների նպատակ, ներկայացնել Հիսուս Քրիստոսին, 2
Միսիոների հաջողություն, 11
Միսիոների շաբաթվա հաշվետվություն, նկարագրված ձևը, 163
Միսիոներական աշխատանք, անդամները պետք է կատարեն, 93
Միսիոների դերը դարձի գալու ժամանակ, 104
Մկրտություն և հաստատում, 9–10, 83
հարցեր և պատասխաններ, 233–234
գրառումներ, 235
Մկրտություն, հրավեր, 43, 73
Եկեղեցու անդամության համար անհրաժեշտություն, 70
անհրաժեշտ չէ փոքր երեխաների համար, 70
կրակով, 71
անպատրաստ թեկնածուներ, 233–234
մեր առաջին ուխտը, 69–70
նախապատրաստություն, 229–230
բավարարող պահանջները, 230
Մկրտության հարցազրույց, ինչպես վարել, 231–234
ունկնդիրներին պատրաստել, 229–230
հարցեր, 232
ով է վարում, 232
Մկրտության ծառայություն, ինչպես կատարել, 235–236
Մկրտություն մահացածների համար, 95–96
Մորմոնի Գիրքը, պատասխանում է հոգու հարցերին, 119–120
որպես պորտաքար, 115–116
մարդկանց մոտեցնում է Աստծուն, 120
Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին վկայություն, 115
Վերականգնման մասին վկայություն, 7–8, 41–42, 117
ինչպես կարդալ, ունկնդիրների հետ, 122–123
ինչպես օգտագործել, 122–123
նպատակը, 41
կարդալ, սովորել միսիայի լեզուն, 146–147
լրացնում է Աստվածաշնչին, 118
վկայում է Հիսուս Քրիստոսի մասին, 117
Մտահոգություններ, օգնել ունկնդիրներին ազատվել դրանցից, 211
Մտքեր ուսումնասիրության և կիրառման համար, ինչպես օգտագործել, xi
Մտապահում, և ուսուցում, vii
Մոնսոն, Թոմաս Ս., վկայություն բերելու մասին, 223
Հոգու լեզվի մասին, 149
կատարման գնահատում, 169
համբերության մասին, 134
անդամների հետ ուսուցման մասին, 202
Մուհամեդ, 50
Մշակույթ, սովորելու անհրաժեշտություն, 149

## Յ

Յանգ, Բրիգամ, վկայություն ստանալու մասին, 224

## Ն

Նախաերկրային կյանք, 52
սահմանում, 64
Նախամահականացու կյանք, սահմանում, 64
Նախկին ունկնդիրներ, որպես ուսուցանելու նպատակով մարդկանց գտնելու միջոց, 187–188
Նորադարձի մկրտություն, սահմանում, 233–234
Նոր անդամներ, ունկնդիրներ գտնելու միջոց, 183
միսիոներները պետք է ընկերակցեն, 236
դասեր ուսուցանվեն, 31
ամրապնդվեն, 241–242
պետք է կրկին դասեր ուսուցանվեն, 236
Նպատակ դնել, 164
Նպատակ, որպես միսիոներ, 1
Նպատակներ, շաբաթվա պլանավորում, 165–168
ինչպես նպատակներ դնել, 164
Նշել սուրբ գրությունները, 25

## Շ

Շաբաթվա պլանավորում, ինչպես կատարել, 165–168
Շնայդերներ, պատմություն, 126
Շնորհ, սահմանում, 77
Շրջանի ժողով, և ուսումնասիրություն, viii
նպատակը, ix
Շուլց, Ֆրանկ և Միլդրեդ, դարձի պատմություն, 186

## Ո

Ոչ ակտիվ անդամներ, ունկնդիրներ գտնելու
միջոց, 183
ամրապնդել, 241–242
Ողորմածություն, սահմանում, 77
Ոչ քրիստոնյա անցյալ, ուսուցանել ավետարանը
մարդկանց, 214–215

## Պ

Պատասխանատվություն, 168–169
Պատվիրաններ, 79–89
ինչպես ուսումնասիրել, 80
ինչպես ուսուցանել դրանք, 79–80
Պարտավորություններ ստանձնելու հրավերներ,
219–220
Պարտավորություն, և օրհնություններ, 221–222
և ուղղակի հարցեր, 221
և հետևել, 224
ավելացնում է հավատքը, 220
ապաշխարության անհրաժեշտ մաս, 219
Պարտավորություններ, նպատակը, 9

## Ջ

Ջանասիրություն, 136

## Ռ

Ռեժիմ. *Տես* Միսիոների օրվա ռեժիմ

## Ս

Սահմանումներ, անհասկանալի բառեր, 24
Սելեստիալ արքայություն, 58
Սեր, 132
Սմիթ, Հայրում, առաջին սկզբունքներն ուսուցանելու
մասին, 6
Սմիթ, Ջոզեֆ, և Առաջին Տեսիլքը, 40
և Վերականգնում, 39–40
ջրով և Հոգով մկրտության մասին, 10
Մորմոնի Գիրքը որպես պորտաքար, 115
ավետարանը քարոզելու մասին, 181
Հոգուն ապավինելու մասին, 108
մատչելի ամեն բան ուսուցանելու մասին, 177
Սուրբ Հոգու պարգևի մասին, 101
հայտնության անհրաժեշտության մասին, 99
Սմիթ, Ջոզեֆ Ֆ., մկրտության ժամանակ ունեցած
զգացումների մասին, 251
Սովորել, հայտնություն ստանալու ընթացք, 20
որպես Եկեղեցու անդամ, 97
Սուրբ Հոգով, 20
Սովորեցնել, հարմարեցնել կարիքներին, 200–201
և գտնել, 175–176
և լսել, 208–209
և մտապահում, vii
Հոգով, 4
Առաջին Նախագահության խորհուրդը, 197–198
ինչպես սկսել, 198–199
Եկեղեցու կոչում, 96
հանդիպումների տևողությունը, 200
դասերի տևողությունը, vii
ոչ քրիստոնյա անցյալով մարդիկ, 214–215
ավետարանը՝ որպես միսիոներ, 197
զուգընկերոջ հետ, 201
անդամների հետ, 201–202
հարցեր տալով, 206–207
սուրբ գրություններով, 202–204
Սուրբ Հոգու Պարգև 76, 101
Սուրբ Հոգին, պարգև, 101
սովորել, 20
անձնավորություն, 100
զորություն, 101
Սփոփող Միություն, 93
Սուրբ գրությունների ուսումնասիրություն,
պատվիրան, 82
Սուրբ գրքեր, նշել, 25
գործածել, ուսուցանելիս, 202–204

## Վ

Վեհացում, 58
սահմանում, 64
Վերականգնման ուղերձ, 33
և ընտանիքներ, 180–181
բացատրություն, 7–8
Վերամարմնավորում, և հարություն, 58
Վերահաստատում, սահմանում, 78
Վերականգնում, ուղերձը, բացատրություն, 7–8
ավետարանի, 39–40
Վիրթլին, Ջոզեֆ Բ., Մորմոնի Գիրքը օգտագործելու
մասին, 123
Վկայություն, հաճախակի վկայել, 223–224

## Տ

Տարածքի գիրք, բացատրություն, 156–158
օգտագործվում է նախկին ունկնդիրներին գտնելու
համար, 187–188
Տարածքային համաժողով, և ուսումնասիրություն, viii
Տաս Պատվիրաններ, հնազանդություն, 85–86
Տասանորդներ և նվիրատվություններ, նվիրաբերել, 89
Տասանորդ, օրենք, 89
Տաճարներ, երկրպագություն, 95
Տեղեկության վանդակներ, «*Քարոզիր Իմ
Ավետարանը*» ձեռնարկում, x–xi
Տեղեկության դասակարգում, 156
Տնային ուսուցում, 243
Տոհմաբանություն, ունկնդիրներին գտնելու միջոց,
185–187
Տրված անուններ, ուղեցույցներ այդ ուղղությամբ
աշխատելու համար, 184

## Ց

Ցցի բարձրագույն խորհուրդ, պարտականություններ,
246–247
Ցցի ղեկավարներ, և միսիոներական աշխատանք, 241
պարտականություններ, 246
Ցցի նախագահ, պարտականություններ, 246

## Ու

Ուիկլիֆ, Ջոն, 49
Ուխտ, սահմանում, 78
բացատրություն, 69–70
Ունկնդիրներ, միսիոներները պատրաստում են,
մկրտության հարցազրույցի համար, 230–231
նպատակներ դնել, 165–168
կարդալ Մորմոնի Գիրքը, 122–123
Ուսումնասիրություն, հաստատված աղբյուրներ, 26
որպես պատրաստություն՝ ուսուցանելու համար,
21–25
սկսեք աղոթքով, 19, 24
արդյունավետ, 19
ուղեցույցներ, 22–23
բարելավող առաջարկություններ, 24–26
Ուսուցման Գրառում, նկարագրված ձևը, 158–159
Ուրացություն, սահմանում, 36
Մեծ, 37–38

**Փ**

Փառքի արքայություններ, 58
Փաբլո, ծառայության միջոցով դարձի պատմություն, 190–191
Փաքեր, Բոյդ Ք., ջրով և կրակով մկրտության մասին, 10
   հոգևոր բաները ստիպելու մասին, 113
   Հոգին ճանաչելու մասին, 106, 110
   դարձի ընթացքում Հոգու ազդեցության մասին, 102
   հոգևոր փորձառությունների մասին, 110
   ինչպես ուսումնասիրել վարքի փոփոխությունները, 21
   Մորմոնի Գրքի սնուցող զորության մասին, 120
   Քրիստոսի լույսի մասին, 100
Փերի, Լ. Թոմ, հնազանդության մասին, 137
Փոքր երեխաներ, և մկրտություն, 233
Փրկության ծրագիր, 51–59
   սխեմա, 59
Փրկագնում, սահմանում, 64
Փրկություն, բոլորին հասանելի, 95
   սահմանում, 64
   ծրագիր, 51–59

**Ք**

Քահանայություն, Ահարոնյան, 92
   սահմանում, 35
   Մելքիսեդեկյան, 92
   վերականգնումը, 40, 92
Քահանայություն և օժանդակ կազմակերպություններ, 92–93
Քահանայության ղեկավարներ, պարտավորությունները, 247
Քաղաքացիական օրենք, հնազանդվել և հարգել, 90
Քավություն, 33–35, 36, 52, 55-56, 62–63
   սահմանում, 65
«*Քարոզիր Իմ Ավետարանը*», պետք է օգտագործեն ծխի միսիոներները և ղեկավարները, xi
   ինչպես օգտագործել, vii
Քիմբալ, Սպենսեր Վ., միսիոներական և տաճարային աշխատանքի մասին, 185
   ձեռնադրելու մասին, 4
Քրիստոս. *Տես* Հիսուս Քրիստոս
Քրիստոս, Լույս, *Տես* Քրիստոսի Լույսը
Քրիստոսի լույսը, 100
Քրիստոսանման հատկանիշներ, Աստծո պարգևներ, 129
   ինչպես զարգացնել, 137–138
   զարգացնելու անհրաժեշտություն, 129

**Օ**

Օժանդակ կազմակերպությունների ղեկավարներ, պարտականությունները, 247
Օժտում, 95
Օրհնություններ, և պարտավորություններ, 221–222
Օրվա պլանավորում, 168–169
Օրենք, հնազանդվել և հարգել, 90
Օրենքներ և արարողություններ, մկրտությանը հետևող, 91–97
   ինչպես ուսումնասիրել, 92
   ինչպես ուսուցանել, 91
Օուքս, Դալին Հ., հրավիրել ուրիշներին գալ դեպի Քրիստոսը, 9

**Ֆ**

Ֆաուստ, Ջեյմս Ի., հույսի վերաբերյալ, 131–132
   պարզորոշ ուսուցանելու վերաբերյալ, 205
Ֆիզիկական մահ, սահմանում, 65

## *Հիշեք սա . . .*

- Ձեր նպատակն է հոգիներ բերել դեպի Քրիստոսը:
- Պատրաստել մարդկանց բավարարել Վարդապետություն և Ուխտեր 20.37 հատվածում մկրտության համար տրված պահանջներին և մկրտության հարցազրույցի հարցերին:

- Հաճախ աղոթել ձեր և ուրիշների համար:
- Ապավինել Հոգուն, որը ցույց կտա ձեզ, թե ուր գնաք, ինչ անեք և ինչ ասեք:
- Ճշգրտությամբ հետևեք միսիայի կանոններին:
- Ամեն օր սովորեք ձեր միսիայի լեզուն:

- Ամեն օր պլանավորեք և կենտրոնացեք հիմնական ցուցանիշների վրա:
- Արդյունավետ աշխատեք ամեն օր, ամբողջ օրը:

- ***Բոլորին*** խնդրեք անուններ տրամադրել:
- Սովորեցրեք, երբ գտնում եք, գտեք, երբ սովորեցնում եք:

- Կարդացեք Մորմոնի Գիրքը նրանց հետ, ում ուսուցանում եք:
- Սովորեցրեք մարդկանց, որ եթե ցանկանում են իմանալ, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է, ապա լավագույն եղանակը Մորմոնի Գիրքը կարդալն է և կարդացածի մասին աղոթելը:
- Ամեն օր հանդիպեք ունդիրներներին:
- Հաճախակի վկայություն բերեք:
- Խնդրեք որևէ անդամի ամեն դասին ներկա գտնվել:
- Ամեն անգամ որոշակի օր և ժամ նշանակեք հաջորդ դասի համար:
- Բոլոր ունկնդիրներին հրավիրեք մկրտության ծառայություններին:
- Ամեն դասից հետո, հաջորդ հանդիպմանը պատրաստվելու համար ունկնդիրներին կարդալու կամ խորհելու ինչ-որ բան տվեք:

- Անդամների հետ կապ պահպանեք նրանց ծառայելով և ծխի ղեկավարության հետ աշխատելով:
- Օգնեք ծխի ղեկավարներին` անդամներին պահելու և ակտիվացնելու իրենց գործում:

- Օգնեք պարտավորություններ ստանձնել նրանց, ում ուսուցանում եք: Դա նրանց կբերի դեպի ապաշխարություն և կամրապնդի Փրկչի հանդեպ հավատքը:
- Սիրեք Տիրոջը և լավագույն ձևով ծառայեք Նրան:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02366 17201 6
36617 201